Ajrarat

bnašharh Hajataneajc̣ tełagreaç

Leuond W. M. Ališan

Ališan, Ġewond

urn:nbn:de:hbz:5:1-9201

ԱՅՐԱՐԱՏ

ԲՆԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՏԵՂԱԳՐԵԱՑ

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

Մ· ՄԽԻԹԱՐԵԱՆ



Ի ՆԱԻԱՍԱՐԴՍ Դ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԿԻՆ

ՎԵՆԵՏԻԿ — Ս· ՂԱԶԱՐ

ՏՋՂՐ = 1890 = ՌՃՂՔ

2950

ՅԱՌԱՋԱԲԱՆ



ԱՏ կամ սակաւ Թերեւս անագանեալ քան զակնկալութիւն սպասողացն, աճաւադիկ ընծայի ի լոյս տեղագրութեամբ եւ պատկերածեւութեամբ՝ բնաշխարհն համօրէն Հայոց, Աշխարհս· այլ ոչ իբրեւ բոլորածոյլ մենագրութիւն՝ ընտրեալ եւ զատուցեալ ի միջի այլոցն, որպէս տային արդեօք կարծել լրագիրք ոմանք՝ կանխեալք ի ծանուցանել զպատրաստութիւն գործոյս. եւ ոչ՝ որպէս այլք համբաւեցին՝ ճնունդ քառասնամեայ երկանց. զի եթէ այնպիսի ինչ Թեւակոխեալ էր առնել, ապաքէն արժան էր եւ մեծագոյն եւս ինչ ծայրագիր արտադրել. ընդարձակօրէն եւ մանրամասին եւս ճառելով զտարերաց, գրուսոց եւ գրերոց երկրին, գշինուածոց նախնեաց եւ յետնոց, զկիսակնդան աւերակաց, ոչ զարտաքինն եւեթ երեւոյթ սոցին յանդիման առնելով, այլ եւ զմասանցն, զսփի եւ զարուեստ զարդուց եւ քանդակաց, եւ որ այլն եւս, հանդերձ ազգաբանութեամբ բնակչացն, եւ բարուց, կրօնից եւ քաղաքավարութեան նոցին, եւ զանցս անցս դիպաց պատահելոց անդէն ի հեղինակեալ ընծայս յորնաթիւ դարուց· Աչսոցիկ եւ որ ըստ սոցին՝ Թէպէտ եւ իցեն ոչ սակաւ չիշատակք եւ կերպարանք ի մատենիս յայսմիկ, այլ ոչ լիապատում· զի ոչ ՅԱյրարատ միայն կամ յայլ մի մասն դէտ ակն եդեալ էր իմ, այլ ի բովանդակն ըղձակերտ եղեալ, ի քանեսին Աշխարհս Հայաստանեայց·

Փափագողք եւ խրախուսիչք հրատարակութեան մատենիս՝ քանզի յաւէտ յորդորեցան ի ճաշակէ անտի ինգիւք ամօք կանխագոյն երեւեցելոյն Նշոյլ Աստուածոյ, գիտեն կամ գտցեն ի յառաջաբանի նորին՝ զդիտումն իմ, ապա եւ զնարկ՝ առ ժլատութեան ժամանակի եւ պիտոյից, եւ ի ստիպմանէ ձաղկեալ ծերութեան, նախ քան զակամայն՝ կամովին հրաժարելոյ ի յուսոյ բովանդակութեան ըղձացելոյս, շատանալով զմտան ինչ կամ մասունս ի բոլորէն ողջ բերել, իբրու, ըստ առածի Ս. Գրոց, անդամս ինչ Թափելով զգայլատար գառին· յորում՝ գուցէ եւ բարերաղդ հաւաքեցայց, զի ոչ բլթակ մի ունկան կամ աքեացս երկուս, այսինքն անշան մասունս ինչ ի կազմակերպ մարմնոյն, այլ զգլուխն իսկ աջողեցայ կորզել (զՅԱյրարատ աշխարհն Հայոց Մեծաց)· զոր եւ յառաջ քան զՅիսուսեան յօրինեալ էր իմ ի միջոցի 1878–80 ամաց, եւ յոր՝ ցկէտ տպագրութեանն յաւելի զոր նոր ինչ գտի·

Քննողաց գրոցս է դատել զբարին եւ զՓերին· այլ կանխեմ եւ իմովսանն նշանակել երկուս ի յետնոյն· մի, զերկբայութիւն եւ զանստուգութիւն վիճակազրութեան կամ զաշխարհաճամարի բնակչաց, մանաւանդ փոքունց տեղեաց, այլ եւ միահամուռ գաւառաց եւ դիւից, որք եւ յար ի փոփոխման կան, յաւելմամբ եւ նուազմամբ· եւ միւս, որ առաւել խէթ է ինձ, զանշշդութիւն դրից (գուցէ եւ զկրկնութիւն) տեղեաց ոմանց· եւ այս յաւէտ յանճշդութենէ տեղացոյց տախտակաց եւ տեղագրողաց· Ամենազդիր լիցին բնակիչք կողմանցն· զի զոր գտի՝ զայն աւանդեցի· հարցանել գիւրաքանչիւր հայրենեաց եւ տեղեաց՝ գործ ծանր եւ յերկար էր, Թող զի եւ բազմաց գիտելով զվէտս եւ զփափագ իմ՝ ոչ ոք ծանոյց ինչ բնաւ զայսպիսեաց· Մարթ էր առ ի զերծ լինել ի բասրանաց՝ չառնել իսկ բնաւ յիշատակ մանուանց շինից, եւ գլխաւորացն միայն ունել ուշ· այլ իմ կամք էին զամենայն անուն ծանուցեալ՝ նշանակել ի գրքիս, ըստ իմում կարի քննութեան· յայտ է Թէ եւ ոչ ի բարւոյն, զի զայս՝ ոչ շատ բնդարձակել ներէին պէտք յօրինուածոյ նորին, եւ ոչ ի չափաւորին յայնմ ներմուծանել զայն ամենայն (իբրեւ 2500) անուանս՝ բնական եւ շինական տեղեաց· եւ որ աւաղելի եւս է, բազմաց ինն եւ հայրենասուշ անուանց՝ ի սպառ անծանօթացեալ են ցանկալի նիստք եւ նիշք· բայց ջան եդի չառնել զյայտնեօքն զանց, մանաւանդ զորոց երկարօրէն ճառեալս եմ· ոչ խնայելով աշխատ առնել եւ զճայրոտեալ ծրագ շիշելափառ աչացս՝ յերկար ԹարԹափմամբ ի քարտէնս· նպատակ ինձ եդեալ, որպէս եւ այլուր ծանուցի, ոչ այնքան տեղաբանել բնագրութեամբ, որքան պատմաբանել իրագրութեամբ· առաւել քան ի վայրն՝ ի վայրաբնակն յառեալ, ի մարդն, եւ յաւէտ ի Հայ մարդ, յայն՝ որ նախ եկաց, գործեաց եւ էանց, կամ դեռ եւս կայ առ ետեղ ի բնին իւրում երկրի· զորոյ նախընծայ ժառանգական եւ նուիրական անուն՝ անհնար է ջնջել ի մտաց եւ ի գրոց՝ երիկամնօք ոմամբք եւ եկամուտ օտարոտեօք· ցայս սակս իսկ ուր եւ ուրեք ի սաղապաՀեմ տեղաբնութեանս՝ ընդ առաջ ել ինձ՝ որպէս ի մառախլապատ ամայութեանց եւ ի գերեզմանաց անյուսից՝ ոգետեսակ սօսափմամբ՝ վեհակերպ ոմն եւ մեծագործ անձն, (օրինակ իմն երէցն այն Վանանդացի, կամ անդրանիկն առաջնորդաց քրիստոսադրօշ խմբից՝ անհամեմատն Ցրդատ), բուռն էր անդամօր զկայ առնուլ, եւ յերկարել նուագս եւ դրուագս ի վեհակերպ մեծութիւնս ոարանց եւ նախնեաց՝ փոքրկացելոցս յայժմուս եւ յետնելոց Հայկազանց· Ա յսպէս եւ ուր կարեւոր պատմական անցից կամ կարգաց մեծութիւն էր եւ պահանջ յայտնութեան· Ա յլ զի՞նչ իցեն այսքան յայտնաբանեալքս առ յինէն՝ առ այսքան թաքնութեամբք՝ որ պատեալ պաշարեալ կան զՀայաստանեօքս·

Ա՛ս այս՝ ինքնին վկայեն վերծանողք, քանի՛ սատարութիւն մատուցանեն մեզ բազմերախտ Պատմիչք մեր, Թէ եւ ոչ ըստ ըղձից մերոց Ճոխարանք, եւ ցիշատակարանք գրչագիր մատենից, յորոց մարթ էր բազում ինչ օգտել եւ յաւելուլ կարեւոր գիտելիս, եԹէ դիւրամուտք էին հաւաքարանք նոցին որ ի կայս եւ ի կոյս, եւ դիւրագիւտ՝ բանիբուն ընդօրինակողք· այլ յորոց ի մեր ձեռս էին՝ ոչ միայն բանքն յեռան ի մատենիս, այլ եւ ձեռք գրուածոցն Ճշգրիտ նոհանատպութեամբ· որպէս է տեսանել (յէջս 42. 56. 64. 66. 69. 76. 117. 149. 430. 473. 498)· երկրորդ աղբերք պիտանիք՝ Ճանապարհագրութիւնքն եւ տեղացոյցք եւրոպէացի գիտնոց, որոց գլխաւորացն անուանք եւ խորագիրք՝ կարգեալ են ի վերջ կոյս մատենիս, զանց եւ զբազմօք արարեալ· եւ քանզի շատք ի մատենից անտի սակաւագիւտք են եւ բազմաց անձեռնհասք, հատուածք ի բնագրէ նոցին ըստ իւրաքանչիւր լեզուաց եդան ի ստորեւ իջից ուր բանքն կիշեալ կամ Թարգմանեալ էին, ի վկայութիւն վաւերականի եւ ոչ առ ի ցոյց պերճութեան· ի յիշելն զօտարազգիս՝ անհնար է ինձ ի մոռացօնս արկանել զվերազնեայս, որք երբեմն, եւ արդ յաճախագոյն, հրատարակեն զ*Ամսագրութիւնս եկեղեցական* իւրեանց, որպէս սովորեցան անուանել· յորոց՝ զի սակաւք կամ սակաւ ինչ գրեալ էին զԱյրարատայ, սակաւիկ եւ ես շահեցայ· բայց ոչ փոքր օժանդակութիւն մատոյց՝ գրեաԹէ արդ հնացեալ այլ արդիւնական Ստորագրութիւն Շ ա հ ա թ ա հ ե ա ն եպիսկոպոսին Էջմիածնի, կարգեալ ի ցանկի անդ վերոյիշեալ ճանապարհագրացն· Ինչ ինչ եւ լրագիրք ազգային, յաւէտ հրատարակեալք ի Տփղիս, այլ եւ օտարք, մատուցին տեղեկութիւնս ի պէտս գործոյս·

Եթէ պիտանիք եղեն ինձ այսգունակ սոցին վաստակք, հաճոյագոյն եւս եւ արգոյ՝ տենչ ազգասի-

բաց եւ ջան բարեսիրաց· որք եւ ինքնայօժար յորդորակօք, (յորս յառաջադէմ գտաւ Պր· Գրիգոր Խալաթեան գիմնական վարժապետ հայ լեզուի ի Լազարեան Ճեմարանի), կամեցան հայթհայթել ինձ ծանօթութիւնս եւ տեսարանս տեղեաց եւ անձանց· ոչ երկբայիմ կրկին վկայել ջանից եւ սիրոյ նոցին, որ մեծագոյն է ի ստացուածս· այլ եւ ոչ զանգիտեմ ասել՝ զի ոչ ըստ ըղձից ի գլուխ ելին արդիւնք· ոչ յանկամութենէ, այլ յանկարութենէ կամ առ ի չգոյէ· հազիւ ուր կամ տան անձինք նշմարս ինչ ընծայեցին, որոց եւ կէս չեղեն ինձ ի պէտս, եւ կամ զի արդէն իսկ ունէի զնաւասար նոցին· այլ ամենեցուն նոցա շնորհ ունիմ սրտի մտօք· եւ առանձինն սիրեմ յիշել յանուանէ զերկոսին հօրամոյն հարազատս **Կոստանեան**, զԿարապետ եւ զՅովհաննէս· սա դեռ ուսանող ի համալսարանի ուրեք ի Գուսաց, միւսն՝ յիջմիածին՝ որպէս կարծեմ ուսուցիչ, զի մտադիւր գուն գործեցին՝ յոր ինչ եւ ձեռնհաս էին, առաքել ինձ լուսատիպ տեսարանս, յիշատակարանս եւ ծանօթութիւնս ինչ· այսպէս եւ Պր· *Աղեքսանդր Գաբրիելեան*՝ առաքելով զանուանս բուսոց ինչ Ալրագած լերին, որպէս տեսանի ի ճառելոցն գրոցս· իսկ ի վեհագունից, պատուեալն եւ սիրեցեալն ի հօտէն իւրմէ եւ այն ինչ հրաժարեալ՝ Տէր Ալեքս· Սեդրակեան եպիսկոպոս Վրաստանեայց, խնամով հոգացաւ հայթհայթել լուսագիր տեսարանս ինչ, եւ զգեղեցիկ տապանագիրն գտեալ ի հայրենիս իւր (տես յէջ 125)· Գիտելով իմ եթէ գտանի ի Պետրպուրկ՝ ի վաճառ՝ հաւաքածոյ այդպիսի պատկերաց, քառասնիւ չափ նշանակեալ խնդրեցի եւ ընկալայ ի քաջածանօթ օժանդակէ ազգայնոյ բանասիրաց՝ ի Մ· Սահակեանց Տեառնէ, ի ձեռն հաճարգւոյ նորին Պր· Կարապետի Եքսեան, որոց յայսմհետ եւ աստէն զշնորհակալիս·

Մեծագոյն եւ մեծագունից կամ յոլովից հաս պարտիմ շնորհս, նաեւ ի դիմաց Ուխտիս եւ վերատեսչաց Տպագրատանս, հարիւրաւոր ազգասիրացն եւ բարեսիրաց, որք յօժարեցան կանխել՝ զոգջիր ամաւ եւ կիսով՝ բաժանագրիլ եւ հատուցանել զգինս միոյ կամ աւելի օրինակի գրոցս, ի դիւրութիւն ծախուց պատրաստութեան պէսպէս պատկերացն եւ աշխարհացոյց տախտակին· զորոց հանգանակութիւն յանձին կալեալ գլխաւորն Կենդրոնական գրավաճառութեան Տփղեաց՝ Պր· *Նիկ· Տէր Զաւռնդեանց*, մի ըստ միոջէ հրատարակեաց յԱրձագանգ օրագրի՝ զթիւ եւ զանուանս նոցին· որոց հետեւողք գտան ոչ սակաւք եւ այլք՝ անդ եւ յայլեւայլ կողմանս· յորոց կարդի պարտ վարկանիմ յիշել ուրոյն զվաղեմի բարեկամ արհիասլատիւ առաջնորդ Թեմին Շամախեայ՝ Տէր Մեսրոպ Սարաստեան, որ հաւսոյց 20 բաժինս· Եթէ այսքանեաւ առատամիտ օժանդակութեամբ դիւր եղեւ հրատարակութեանս, եղեն եւ ինձ պարտք, եւ առաւել եւս խնդութիւն՝ ընդ յօժարութիւն օժանդակացն, եւ տիրապէս ընդ հայրենասիրութիւն նոցին· զի զսոյս իսկ գիտեմ՝ որպէս գրողիս նոյն եւ ընծերցասիրացն յորդորիչ· եւ ընդ այս ոչ միայն խնդալ՝ այլ իրաւունս համարիմ եւ պարծել·

Այլ յո՞չ աստանօր բարեկամաց եւ ոչ բարեկամաց, զի իմ միտք եւ բարք՝ որպէս եւ վիճակ եւ կնիք՝ հայրենասիրութիւն խնդրեն զեաղաղականն, այնպէս սիրեմ եւ հաճրուրեմ զհայրենիս՝ որպէս ի մանկութեանս զհայր եւ զմայր· եւ ո՞եւ որպիսի՞ ոք ըստգիւտ լիցի այսպիսւոյ սիրելութեան· եւ ոչ գիտեմ որպիսի՞ ինչ մտօք կամ կարծեօք՝ վայրապար կասկածանս եւ խծրիծս յուզիցէ յանձին յիւրում եւ յօտարս, մինչեւ յաւագամեծար առեանս· որոց պատկառ կալ եւ յարդել՝ պարտք են մեր· Սակայն, եթէ կրօնական եւ քաղաքական օրէնք ուսուցանեն ինձ եւ ամենայն զգաստից՝ տալ զկայսերն՝ կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ, ոչ եւ ընդարձոյս ազդումն ողջախոհիակ՝ Թելադրիցէ հատուցանել զՀայրենեացն՝ Հայրենեաց· Այսու անաւասիկ եւ ես աւանդեմ Նմին՝ զայս որ զիարդ եւ է վաստակ,


Ի ՅԻՇԱՏԱԿ ՁՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԿԻՆ·

յորոյ եւ ի մուտս իսկ (յամի Տեառն 1888) սկիզբն եղեւ տպագրութեան Տեղագրութեանս Այրարատայ·

Եւ ՈՐ Էն գարուց յարդարիչ, ժտիմ երկրպագութեամբ, ուղղեսցէ զնոլովումն սորին եւ պսակեսցէ գբոլորումնն, ի փառս իւր, եւ ի բարեբաստութիւն Ազգի՝ որում ժառանգեցոյց յերկրի զԿատարն ընկալուչ պաճարանի նորոց նախաճնողաց մարդկան· Տայր Թէ եւ սա, ըղձագրեալս առ յինէն, լինէր ինձ եւ յոլովից իմայնոցս՝ աստիճան մի եւս վերամբառնալոյ մտօք եւ հոգւով՝ ի գերունական

եւ ի մշտնջենաւոր լերինս յարակայ յաւիտենին· յորոց զագաթանց, յետ վայրկենի կենաց եւ ժամանակաց, մինչ ոչ եւս իցեն ոչ շրջանք Հայկին եւ ոչ անիւք դարուց, եթէ արկից զակն ի խոնարհ՝ որոնել զպանծալիդ ինձ յայժմուս, Աշրարատ, իբրեւ զինչ մի երեւիցիս ի համասփիւռ հիւլեայս ստորանկելոցն այնոցիկ եւ ստուերացելոց աշխարհաց, ի խաժամուժ խառնի վերստին ի թոռն եւ ի բոն լուծելոց տարերաց՝ երբեմն եղելոց երկրագնտիս այսորիկ,... Թաքերո՛ւք, երկինք, առ վայր մի, ի ցառելս եւ ի փարելս մերում՝ գորովանօք՝ զերկրաւս· — նա՛ մանաւանդ յայմնեցարո՛ւք եւ եւս առաւել· որպէս զի ի նշուլից անտի ձերոց առ սակաւ մի փայլատակելոց զսովաւ, յորդորագոյնս եւս կառուսցուք զաչս եւ զլոյս՝ ի վեր, ի վեր անդր· — Ո՜հ, եթէ չէր ի շողոյ եւ ի ցօղոյ գերերկրեայ կայանիցն ոեղեալ եւ խառնեալ յարիւն եւ յոսկերս Նահատակաց, յարտասուս ցգնազգեցից, ի քրտունս տարապարհակ տաժանելոցն եւ յարդիւնս առաքինեաց մերոց Նախընթացից, զի՞ փոյթ ո՛ր շահ էր յառնել եւ պշնուլ, ծող թէ դեգերել պարագայք ամօք՝ յանկայունն եւ յանմնացականս, թէպէտ ի ծաղկեալ ծնօտս դաշտաց երկրի, եւ թէպէտ ի խոժոռ եւ ի խոշոր կոճակս եւ անդունդս նորին· Եւ դարձեալ, եթէ ամենաբաւ Բարձրեան ինքն՝ աճող իւր քարոզչով զերկինս, ոչ գարշի եւ պատուանդան ոտից՝ հռչակել զերկիրս զայս, միթէ օտար եւ վնաս ինչ իցէ երկրաճնացս՝ ոհտազօտել եւ ոիանալ ընդ աստուածակոխ կնիքսն ի սմա, ուր գոյացաքս եւ եղաք որ ինչ եմքս, եւ ուստի կայ մնայ եւ անկ է մեզ յետ պէսպէս պանդխտօրէն տարադիմութեանցս եւ տարադիպութեանց, օ՜ն առեալ խոյանալ հոլաթեւել ի վերնախորանն հանդերձեալս ի յաւիտենից, յիսկաձեմ եւ ի համաշխարհական եւ յանկողոպտելի հայրենիս՝ արժանացելոցն արութեամբ սրբութեամբ եւ սիրով·





ԱՅՐԱՐԱՏ անպրա-
նիկ է այնարհպրական անուանց
երկրի վերածնելոյ մահաբեր և կեն-
սաւէտ վկրատքեամբ Յրհեղեղին, եթէ
իցէ օբէն այսպէս ասել, զոր առաջինն
'ի Դրոց Աբրոյ մանուցոյց սրսրեալ ա-
մենայն հաւատացեալոց' 'ի յառաջաբանի
պատմութեան համօբէն ազգաց և ա-
զանց, և հաստատեալ վկայութեամբ
յետագային առուածաշունչ հեղինա-
կաց հնոյ կտակարանին և թարգմանչաց
նորին եւ մեկնչաց, հաւանեցուցանէ
զողջամիտս 'ի յարգական և 'ի վեհա-
կան խնացուած. արդարև առաւել ըզ-
վիճակեալն անփակաւն ազգաբնակու-
թեամբ յերկրին' որ 'ի սկզբանց անտի
առագապատում գտաւ' կրէ զոյս ա-
նուն երկիցս և երիցս սրբագոն, և ո-
րում համանիշ է Երիվրն Հայոց,

Զէ մարթ սրդարև ասել, եթէ Ա-
Գիրք' միայն գոի 'ի հնգեւառաան աշ-
խարհացոյն Հայոց Մեծաց, որ յատկա-
բար 'ի մեզ կոչի Այրարատ. համա-
րիցին նշանակել այնու անուամբ,
այլ Այրարատեան երկիր, Լերինք,
և Ագգ և Գաւեզ

COLUMBO INC

իմանան զերկիր, որոյ բնիկ և իրր հարազատ ծանուցեալ Հայն յամենայն ժամանակս, և յորում առաջին և պատուականագոյն վիճակ՝ էր Աչխարհս այս Այրարատ, ի միջի յոգւոյն աչխարհաց կամ նահանգաց Հայաստանեայց։

Զանգի և առ մերայինս իսկ պէտս էիմանի Այրարատեան կամ Այրարատ անուն, է զի նշանակէ զրոմանգակ երկիրն Հայոց, է զի զմի՝ ի հնգետասանից մեծամեծ մասանց նորին, և է զի զսեփական կալուած և վիճակ արքունի, որ յաճախակի ևս նշանակ կամ Գաւառս սպասեալ կոչի. և երբեմն անձնագոյն ևս՝ զՊատուճն, այսինքն զաշխարհս մայրաքաղաքին, իրրև զմի՝ ի գաւառաց նորին Այրարատոյ կամ այլոց աչխարհաց Հայոց։ Բայց եթէ ընդարձակ և եթէ անձնագոյն առնուին՝ միշտ վերադոյն հասարի և անուանի հանապազ մասանց և վիճակաց հայկազանց, մինչեւ Ջիհանեանական աչխարհ կոչել Մոլսիսի Կազանկատացւոյ պատմի՝ ի կարգի բանիցն, զոր՝ զոր՝ ի խորագրին Այրարատեան կոչէր գաւառս։ Իսկ մեզ աստանօր կայ նկատել զԱյրարատ՝ իրրև զմի՝ ի հնգետասան բաժնից Հայոց Մեծաց, որք՝ զի հաւասարապէս Աչխարհ կոչին՝ արժան էր զԱյրարատեանս զայս Բնաչխարհ կոչել՝ ի միջի այլոցն ամենեցուն։



1. Գաւառագոյզ Այրարատ Աչխարհի

ԲՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻՆ ԱՅՐԱՐԱՏԱՅ

Ա.ՀՄԱՆՔ. — Ըստ բանից հին աշխարհագրին մերոյ, « Այրարատ 'ի մէջ կայ յատաչատացեալ աշխարհացդ », այսինքն է այլօրն ևս չօրեքտասանից մեծամեծ բաժնից երկրին, զորս նախ քան զամ ասացագրէր. իսկ Բուզանդ՝ ճահապէս կոչէ « Միջնաշխարհն Հայոց, գաւառ Այրարատու », իբրու զկենդրոնականն ունելով տեղի։ Եւ արդարև իսկ 'ի միջակի կայ երկայնութեան երկրին, որ յարևմտեան ծագաց Ցոփոյ՝ ցարևելեան սահմանս Ուտիոյ, իսկ ըստ լայնութեանն՝ յաւէտ հիւսիսային վիճակեալ է, յայնմ կողմանէ միայն զԳուգարս ունելով անջրպետ 'ի վերաց աշխարհէ, և կից նմին զԱբինխ. 'ի հարաւոյ՝ զՎասպուրական և զՏուրուբերան, յարևմտից զՏայս և զԱրտազ Հայս. ամենեքին աշխարհք նշանագրով և առանձնակ ցեղից սեփականք 'ի հնումն։

Եւ որպէս անկ էր Թագաւորական վիճակի՝ ընդարձակագոյն է Այրարատ քան զայլ ամենայն աշխարհս Հայոց, իբրև 160 մղոն ընդ երկայնն, 'ի ծագաց վերին Բասենոյ ցլերինս Գեղաքունեաց, և իբր 120 ընդ լայնն, յԱշտոյ՝ ցլեառնագօտին որ բաժանէ ընդ Ծոփական և ընդ Աղիովիտ գաւառս Վասպուրականի։ Ըստ ընդարձակութեանն և 'ի բազմութիւն մասանց տրուհել է քան զայլ աշխարհս մեր, 'ի քանի Գաւառս. և այս յաւէտ յետ բարձման հարստութեան Արշակունեաց, զի առ սովոք գլխովս յատանձնակ գաւառացդ՝ մի միայն գաւառ մեծ կամ արքունի նահանգն Այրարատ՝ բովանդակէր. վասն որոյ յորինակս հինս Աշխարհագրութեան Խորենացւոյն՝ վերտառն գաւառք գրին Այրարատայ. զորեսին կամ գՆիգեսին համարելով միակ և սեփական Այրարատեան երկիր, բնակութիւն հին Հայկազանց յԱրմենակայ և անդր, և ապա Ասաւ եղեալ արշակունի Թագաւորաց։ Այս նահանգ կամ բուն Այրարատեան երկիր՝ է միջոց երկոցուն բարձրագոյն լերանց Հայոց, Մասեաց և Արագածու, տարածեալ 'ի Հր. ընդ Հս. և 'ի սահմանաց Շիրակայ կամ յԱխուրեան գետոյ՝ ցլերինս Գեղաքունեաց։

Երկուց հարազատ հայկական գետակտրատաց վիճակ է Այրարատ, Երասխայ և Արածանւոյ. վարչագարգի և եկամուտ իմն գոլով Աշօցք գաւառի՝ որ 'ի հիւսիսային ծագս, 'ի հովտի Կուր գետոյ, զոր՝ քանզի և բնութեամբ Գուգարաց աշխարհի պատշաճի, 'ի բաց Թողուք 'ի տեզագրութենէս, մինչև առաւգագոյն ծանիցին սահմանքն։

Ցերկոցուն գետակտրատաց ասի՝ առաջինն է ընդարձակագոյն. քանզի երասխ յականց խրոց, այսինքն է յաբեմտից Բասենոյ՝ գրեաթէ ուղղակի ընթացեալ ընդ արևելս՝ կարէ զբովանդակ երկայնութիւն աշխարհին, մինչև 'ի գաւան մեծ՝ որ ընդ մէջ Շարուրոյ և Նախճաւանայ, ուր յանգի արևելեանն Նորին սահման, ոչ այնքան բնական դրից օրոշակի զատացմամբ՝ որքան պայմանական իմն սրինաց։ Մեծագոյն մասն երկրին յահեկէ Երասխոյ է, այսինքն 'ի հիւսիսակողմն, և յայսմ կողմանէ են ամենայն արքունական քաղաքք և ասացիք։ Իսկ Արածանի փոքր ինչ մասն ունի յԱրարատեան բաժնից, այլ զգեղեցիկ գաւառս Վաղարշապատ և Բագրեւանդայ. յիսոյնս ոչ կարի ընդարձակ է, և կղզորդելով առաջնոյն՝ թաւ 'ի սկզբանն առանձին ինչ սահմիկամ նահապետութեան վիճակեալ, և յետոյ յարքունիս գրաւեալ։

2. Լերինք. — Ջերկոսին գետակտրատաց յայսմ մասին Այրարատայ անջրպետն Աղրի անասնելով լերինք, որ 'ի Մասեաց սկսեալ ձգին ընդ արևմուտս ցլեառն Նուկաւոտ (Ջէօսէ տաղ), և անտի ևս (ոչ քաջերով գաւառս լերանց) ընդ Մա. Հր. ցլայնանիստ լեառն Արմանց (Պինկէօլ), ընդ մէջ Բարձր Հայոց և Տուրուբերանց. որով գրեաթէ ընդ բովանդակ երկայնութիւն Երասխոյ յաջմէն կամ 'ի հարաւակողմանէ՝ տարածանի լեառնապատ մի երկայնատար. Աստ Աղրի լերանց համարի 'ի Թուրքական կոչմանէ Մեծին Մասեաց՝ Աղրը կամ Աղրը տաղ. յորում լերինք գլխաւորք մի ըստ միոջէ են, սկսեալ յարևելեան կողմանէն, նախ Փոքր և Մեծ Մասիք, զորոց երկաթորէն ճահեցեալք 'ի գաւառի Մասեաց – ասին. յարեւիկ Մեծին՝ յարևմտից՝ փառկուզ կամ փառկուղ, որ և Խալկետուկ, Գարագուռնակ, Սըլտաղը (Մկնատ), Այրըլան 9650', Սիմկ, Շիրխփե որ և Ջօր, իբր 12,000', յարոյ անուն կոչին և մերձակայքն, Փիրիկի կամ Ագ տաղ (Այկատակ լ.) զի գրեաթէ զմեծ մասն տարուց ձիւնապատ երեւի, 10,650'. Ջեօր օղլու, 8320'. բուն Աղրի-տաղ, 9054'. Մասատաղ?, Հիմաղ, Պոզ-տաղ, բարձրն Նուկաւոտ (Ջէօսէ տաղ) 11,726'։ — Իսկ արևմտեան մասին Այրարատայ՝ անջրպետ կրկին գետակտրատայ այլ իմն պարք են հարաւագոյնք, և ոչ միանշաք որպէս զվերինն. զի Մուրց գետ (Պինկէօլ սու) եկեալ 'ի հարաւոյ կուսէ՝ կարէ զնոսին, և խազալով ընդ հիւսիս անկանի 'ի դեւսբուզին

Երասխ, 'ի գաւառին Բասենոյ. և են լերինքն՝ յորմէն յարևելից՝ Շէխաւ, ստուեք իրարք. յահեկէն՝ Թօփ տաղ և այլք, մինչև 'ի լերինս արեւելակողմանն Կարնոյ, որ ըստ նախնեաց Թափն կոչեցեալ Մեղեդուխ (թէ ոչ Մեղբաւխ) լեառն. զորոց լիցին ուրոյն բանք 'ի տեղագրի իւրաքանչիւր գաւառաց՝ որոյ և պատշաճիցն. որպէս և զլերանց որ 'ի մէջերկրեայս աշխարհին Ա.յրարատեայ են. այսինքն են, լայնանիստն Մօղունք՝ լերինք Բասենոյ և Վանանդայ, որք չարախօսեալ ընդ այլոց՝ ձգելով ընդ Հս. կս. անջրպետեն 'ի Մ. Հր. զգեստաւորիա Կըրի և Երասխայ, և այլ առանձնակ անկապ լերինք յայսմ կողմանն. որպէս, Ագրակ, Ագ-մէգրի, Ջաւար 9222', Մ. Խալ 9562', առ Մժնկերտաւ, և այլն, ամենեքին յընդարձակն Բասէն. իսկ 'ի սահմանակցի Նորին 'ի Վանանդ' չիան բարձր բարձր լերինք, այլ լեռնակք անչափք. բայց 'ի սահմանակցութեան Շիրակայ՝ կանգնին և չափաւոր բարձունք, որպէս ,('ի Հր. ընդ Հս. երթալով) Լոպրքա 9752', Քադուր 9145', Հաճի Թաղիլ 9130', և այլն։ — Իսկ յԱ.րարատեան Նահանգի' գլխաւոր լեառն է և առաջին 'ի բարձրութեան յեա Մասեաց՝ լայնատարած և ըստ նագագաթն Ա.րագած, 12,606', և 'ի նմին գաչաի' անջատ. Ա.րայի յ. (Գաւիթ-ևարրգ), Շամիրամայ յ. (Հատիս) և Քէօրան տաղ. Ձանիկ, որ 'ի Հս. կուսէ Ա.րագածու՝ կցորդիլ իմն է Նորին ընդ պարս Խամբակի լերանց Գառգարայ։ — Ցարևմտից Հս. Ա.րագածու՝ կան առանձնակ կատարք 'ի լեռնուտն Վարաժնունեաց, որպէս, Միսխանայք կամ Բլնոյ լեառն, Լոռիքիւր, Գուրու-պօղազ, և այլն. թազ գլխիւնն սահմանակիցս և անջրպետս Տաշրայ և Հովասայ Կուր գետոյ։ Իսկ արևելակողմն Ա.րագածոյ մինչև յարևելեան սահմանս աշխարհին, այսինքն գլխիւնս Ախնեաց՝ գաչապին է համակ, միայն գյիչեալ մեկնակ լերինգ ունելով. վասն որոյ և հասարակաբերն Ա.բարաւեան գաչս կոչի, փոխանակ Նահանգ կամ գաւառ ասելոյ։ — Մարթ է և գրաբարեալ աշխարհն իսկ Ա.րարատայ՝ դաչապին ասել, որպէս և 'ի վաղուց իսկ կոչէր Երասխեան գաչս. քանզի բաց 'ի պարուէ Ա.ղրի լերանց' որ և չին չափանիշաւք, չիան այլ ապառաժեալ լերինք, այլ կամ ընդլանն և մեկնակք են, և կամ կոհակացեալ ալէձև երկիր, որպէս գաւառք Գաբելեղենից, Վարաժնունեաց և այլ բիչ կազմունք. իսկ մեծագոյն մասն երկրին' 'ի նախնեաց այ անտի գաչս անուամբ կնքեալ' գրեաթէ Ծագէ 'ի Ծագ չարունակ է տարածութեամբ գաւառաց կրկին Բասենոյ, Վանանդայ, Շիրակայ և Ա.րարատեան Նահանգի, որ է ինքն բաժանգակ երկայնութիւն աշխարհին, և 'ի փարս մասին անդ գետահովին Ա.րածանոյ քաչ քնդարձակ գաչս է Բագրեւանդ, ըստ Պատմչին վկայելոյ։

3. Գ.ՆՅՒ. — Չայս մասն, այսինքն զերկոսին գաւառս ա.չերասխեանս՝ արբուցանէ արևելեանն այն Եփրատ, որ է Ա.րածանի (Մուրատ չայ Թարգոյ), բազմաթուիւ աղբերաց առատաբեր և անպակաս, և քաչ արգիւնաբեր առնելով զերկիրն։ Իսկ վերնոյ և մեծի մասին Ա.ղրատասի' մասամբ է սեփական գետն այն Հայոց երասխ, ոչ յայժ բազմութիւ այլ և ոչ նուազ ժամանգակօք իւրովք. որոց առաջին և եկամուտ իմն յԱ.ղրատաս' Մուրդն վերոյիչեալ, զի յառաջ նահանգէ գոյ, որպէս հին աչխահագիրն միր ասէ, գետացուցանել զերասխ Նորընծայ, զրգիսեան 'ի Թիկանց լերանց Կարնոյ, 'ի գոգս Բասենոյ, զորոյ բնիկ ազբերակունս 'ի դէպ է խնդրել և քննել 'ի առաջագրութեան այնր գաւառի. Թէպէտ և յորդաձիր և հզօրագոն իցէ Մուրդ քան զերասխ' 'ի խառնուրդն անդ. 'ի հարաւոյ կասէ գիմելով ոչ փոխէ զընթացս սարին մտելով ընդ հիւսիս, այլ ըստ առաջնոյ ուղղութեանն խաղոյ երասխ զուգելով և վաղարեալ, փոքուս ինչ վտակս ընդունելով յահեկէն' 'ի հարաւոյ. քանզի լերինք անջրպետք Նորին և Ա.րածանւոյ' մերձք կան և չիք սահման ընդարձակելոյ ջուրց. այլ յահեկէն, զի դաչտային է երկիրն, ընդունի ոչ սակաւ ժամանգակս. նախ զիջևանն 'ի Թիկանց լերանց Կարնոյ և Տայոց, յորոց տասնիս չափ ընկալեալ, ապա ընդունի մեծագոյնս ևս, որպէս զԱ.ղասպ առ. Ա.ղասպ չայ, Խանի չայ, Սարիգաղիչ որ 'ի Սօղանլու լերանց, յորոց առաջինոյ և այլ տասնիս չափ վտակս, յետ որոց զՊայազատ առ (?) Կաղզուանայ, և այլս փոքունս ինչ և անհնչեալ վտակս մինչև ցԱխուրեան։ Ասս հզօրագոն քան զամենայն ժամանգակս Երասխայ' ընդմիջելով զՇիրակ 'ի սահմանակցութեան Նորին և Ա.ղաբաւնեայց և Ճակատայ' Թափի 'ի գետն մեծ, հասանելով 'ի հիւսիսոյ գամենայն ջուրս որք իջանեն 'ի կողոպ լերանց Տայոց և Գուգարաց. և ոչ սակաւ հզօր ժամանգակք են Նորա. բայց անտանդ նոցին չիթոթափիճն իմն երևի առ նախնիս, կամ Թէ մեք ոչ քաչ իմանամք. Գետս այս Ա.խուրեան, որ 'ի Թուրքայ Ա.րփա-չայի կոչի, չայն անուն լնակէ բղխելով 'ի հիւսիսոյ' 'ի սահմանակցութեան Գուգարաց աչխարհի, և ուղղակի իջանէ 'ի հարաւ, գէթ երկուց գետոց խառնուրդ է. և որպէս յառաջին առաջագրութեան Շիրակայ ցուցի' ոչ բոլանդակի միայն ուղղագիծ ընթացիւքն որ 'ի լճակէն (Ա.րփայ) ցԵրասխ, այլ և ժամանգակութեամբ այժմեան գետոյն Կարսայ (Ղարս-չայի). և այն իսկ գետս Կարսոյ, գէթ բան վերինն մասին, որ չարևելից քաղաքին և որ 'ի Շիրակ' Ա.խուրեան է. իսկ առաջին մասն Նորին, այսինքն որ չարդերացն 'ի առաջագիս Սօղանլուի և չայոց լերանց Բասենոյ և Տայոց' մինչև 'ի քաղաքն 'ի Կարս, ոչ գիտեմ Թէ կոչէր և այն 'ի հնումն Ա.խուրեան, եԹէ այլ ազգ. բան մի պատմութեան Խորենացւոյ Թուեցուցանէ Մօր-մեծ կոչիլ նաև միջամասին գետոյն, քանզի ասէ վասն Վաղարշակայ, երեալ 'ի Կողոպ գաւառէ' գալ 'ի Վանանդ, և առաջ « իջանէ 'ի Դաչան Մեծ. և անդ գա» փամբք Մօրին մեծի բանակի 'ի տեղւոջ ուր գետն Մեծ' » 'ի ծովակէն Հիւսիսոյ սկիզբն առեալ' իջանէ և խառնի » 'ի Մօրն մեծ »։ Այդ Ծովակն Հիւսիսոյ չայս է կոչեցեալն և Պազակացիս և այժմ Զրլոբր-կիւլի, չորել երանէ արդարև համանուն գետակ և իջանէ 'ի գետն Կարսայ, և ըստ այսմ լինի Մօր Մեծ, և Ջուրն Զրլոբրոյ Մեծ գետ. իսկ Մեծ գաչս պատչաճի անհնչաւոր' Ջրլոբրոյ վիճակին, զի Ջուրն այն Զրլոբրոյ կոչէ գետս ընդ բանդակ չայնութիւնն 'ի հիւսիսոյ ընդ հարաւ։ Սակայն Թափ ինձ Մեծ կամ Մեծագոյն անուն' պատչաճագոյն վերին կիսոյ մասին այժմեանս Ա.րփոյ չայի, այսինքն ցհատնուրդս Կարսոյ գետոյն ընդ նա. քանզի ճոխագոյն օրինակ մի աչխարհագրութեան Նորին Խոր-

նացեց, յիշելով զգաւառան « Վանանդ և Շիրակ, (յարե
» ’ի Նոյն), յորոց եկեալ գետն Ախուրեան, հանդերձ
» Մեծագետովն, անցանելով յելից կուսէ Մաւրիկոպոլսի
» այսինքն Շիրակաւանի և Մրենոյ և Երասնդաշատ
» քաղաքի, իջանէ յերասխ »։ Ակդ· քանզի առասպել
որոշակի ցուցանի Ախուրենի գալ ’ի Վանանդայ և ’ի Շի-
րակայ՝ ճանկերձ Մեծագետովն պատչառագոյն թուի այս
անուն՝ Արփայի, քան Զրկաբրայն՝ որ փոքրիկ ինչ է առ
միւսոյն. եթէ ոչ ’ի բանս պատմչին այլայլութիւն ինչ
գոյւցէ, կամ ’ի դիպս երկրին և լճին և գետոցն. զոր օրի-
նակ յայտնապէս և վկայութեամբ իսկ եղեալ է յայնկոյս
Ախուրենոյ և յերասխ և յօժանդակս իւր, որպէս տեսցի
ընդ հետոյ։ Ակդ այս գիտելի և է, ’ի տեղագրութեանս
Նոյն համարեցայց զՄեծագետն և զԱրփայ – չայ ցնոսա-
նուրդս սորին ընդ գետոյն կարաւց, և անտի և ’ի վայր
ցերասխ՝ լիցի Ախուրեան. նոյնպէս Ախուրեան համա-
բեաց, որպէս և է իսկ, գետն Կարաւց՝ ’ի քաղաքէն և
այսր ’ի խառնուրդսն. իսկ զառաջին մասն կոչեցից յա-
նուն քաղաքին՝ գետ Կարաւց, (Դարա չայը), մինչև առա-
գագոյն ևս ինչ գիտացի լինել Մօր կամ Մօր Մեծ կամ
ոչ[1]. միայն ոչ հաւանիմ զՄեծագետն այն կոչեցեալն
մասն Արփայ չայի՝ լինել Ոսո գետ, որպէս համարեցան
ոմանք յարդեացս[2]։ — ի բազում վտակաց սկզբնաւորի
գետս այս Կարաւց, ’ի Մ· և ’ի Հր· քաղաքին՝ ’ի տարա-
տսից Սօղանլու լերանց իջնելոց, յորոց ոչ գիտեմ սր իցէ
բուն առաջն կամ սկիզբն գետոյն. այլ Թուի ինձ կոչե-
ցեալն Գարիպլը–առ ’ի Հս· , զի հզօրագոյն է, և զի առ-
նուազ է Պաշ–քէոյ, իբր գլուխ կամ առաջին չէն Վա-
նանդայ. զայս այսպէս համարիլով, ապա յոյժն, որ է
’ի Հր· Մ· ընդունի այլ և այլ վտակս զուգընթացս, յորս
մեծագոյն Աւրիպտմիչ–առ. և գետակցութեամբ նոցին
յօրացեալ դիմէ ընդ Հս· ե· ’ի կուս, իբրև ընդ 15 մղոն.
ընդունելով յոյնմ միջոցի յահկէն՝ յարևմտից՝ ոչ սա-
կաւ վտակս. սուղ ինչ ’ի վերոյ քաղաքին գառնայ ընդ
արևելս, և ապա ընդ Հր· ել· Հր· մինչև ’ի խառնուրդսն
ընդ Մեծագետն, ընդունելով ’ի Զարիչաս տասներս
չափ գետակս, որոց գլխաւոր՝ երևան այն ’ի Գոլակէն
Հիսխոյ։ Բազումս և ինքն Մեծագետ (Արփա) ժո-
ղովէ վտակս յաջմէ և յահկէ, յերկոցունս մասանց
Շիրակայ, մինչև ’ի նշանակեալ գետախառնուրդսն. իսկ
յետ այնր մինչև ’ի մուտս յերասխ՝ սակաւս և նիւազս,
յորս գլխաւոր մարթի է առել յարեւմտեանն Շիրակ՝ զՑի-
կորոյ գետակն։

Ցելից կողմանէ Խառնոյ գրեաթէ ցայսմայր խառ-
նեսման Ախուրենոյ՝ երկայնաձգ զսպեալ երասխոյ ’ի լե-
բանց՝ ընթանայ ընդ անձուկ հովիտ, վասն որոյ և երկիրն
այն կոչէր երասխաձոր. իսկ յետ ընդունելոյ զՀախուրեան՝
փոքր մի ևս գնալով ընդ նեղուցս ընդ մէջ յետին հարա-
ւային բլրակաց Շիրակայ և հիւսիսոյ ձախակողմ գետափ՝
եւանէ ընդ հարաւ ’ի լայնածաւալ դաշտն Ախթամարեան,
և ուղղակի խաղայ ընդ Եւ· գրեթէ կէտս ցհարաւակողմն
Լջմիածնի, և անտուստ խոտորեալ առ սակաւ սակաւ
ընդ Հր·, նովին ուղղութեամբ Հր· Եւ· Հր· յառաջէ մին-
չեւ անդր քան զԱխթամարեան և զՋուղա։ Բայց ’ի մեծի
դաշտագետնէն անդ Ախթամարայ և ’ի յարակից նորին ’ի
Շարուրեայն, մեծաւ իմն համաձայնութեամբ և յախուռն
խազալով յերկուց և յերից հազար ամաց հետէ՝ ոչ սա-
կաւ տեղափոխեալ է, և Թուիլ գինն հունն՝ բացեալ
նոր յատակ, որով և զդիպս կամ զթերանս ժամանակաց
իւրոց գետոց՝ մեծապէս սլայլեալ. ասաի ոչ փոքր չխոթ
և մթութիւն ’ի պատմութեան մերում, որ յառաջ և յետ
ժամանակի առաջին մատենագրաց մերոց Դ և Ե դարուց
մինչև ցայժմ. Եւ այսմ պատճառաք՝ նախ անտրտկել և ան-
պարիսպ տարածութիւն դաշտագետնոյն, և մանաւանդ
կակուղ և տաղտախիր բնութիւն նորին, ուր դիւրաս տա-
զանդին և ասպետքն տաղտապաձեմ ջուրք և երկրորդ,
Թուի, թուան տատանութիւնք երկրի, յորոց և լերինք
փլուզուք՝ փոխեալ են դէմս գետոյն մեծի։ Եւ դի-
տելի աներկբայ ’ի պատմութենէ, այլ և ’ի քննութենէ
գետանցն, զի Երասխ բազում մղանօք ’ի հիւսիսոյ խոտո-
րեալ է ընդ հարաւ, և հեռացեալ յԱյրմաբրայ, ’ի վա-
զարշապատայ, յԱրտաշատայ, ’ի հին մայրաքաղաքացն
Հայոց, զորմէ քերբէր և փարէր երբեմն, և կամարջս
կրէր ըստ պիտոյից բազմամարդ բնակութեանցն· յոր
տակս երկիցս և երիցս տոկացան ազատշահեալք մեր
փոխել զարգանիս իւրեանց և հաստատել դրամնալ յե-
զերս գետոյն կամ այլոց ջրոց։ Վասն այսորիկ անմոքի և
անդէպ է ըստ այժմեան ընթացից նորին և ըստ զրից
մեռացեալ հին քաղաքաց կամ աւերակաց նոցին՝ հաստա-
տել զրանս առաջին պատմչաց մերոց, զԱգաթանգե-
ղեայ, զԿորեան, զԹորնեացւոյ և զՂազարայ։ Ոչ միայն
ինքն Խորենացի երկից՝ վկայէ դյատակափոխութիւն Ե-
րասխոյ ’ի յիշեալն գպատճառս չինութեան Երուանդաշա-
տի՝ յելս կոյս Ա. Դարու, և զԱռնոյ՝ ’ի կէս Դ դարու[3],
(որ ասկաւաք յետոյ քան զԵրուանդաշատ չինեալ էր, և
’ի միջոց ժամանակի երկուց և կէս դարուց այնքան հե-
ռացեալ էր անտի գետն՝ մինչև ջրակարաս լինել Թագաւո-
րանիստ քաղաքին), այլ և յատուկ նորին Պատմի ցկար-
հասեալ և ժամանակ՝ դարձեալ հեռացեալ գառնէր գետն·
մինչ զի հարկ լինել գրչի Ն դարու (որպէս համարիմ)
նշանակել զայս յարիմնիի աչխարհագրութեան նորին
Թորնեացւոյ. և գետինն ինքնին ցուցանէ սրդ գնոյնն
ընդ որ անհնարագ մասաւանկն այն Ագրարատայ՝ սահեալ
անցեալ է անգորձորէն, և սրդ յայլագետաց կոչի Գոր-
յու–Ագաց (Ցամաքեալ երասխ)· բայց ոչ որպէս զբնա-
կեալսն յատուկս իւր՝ անցեալ գնացեալ անհետացեալ և
ինքն· այլ սակաւուք մնդնագ տարակայեալ՝ հասէ անսպաս
որպէս ’ի սկզբանէն։

Ցետ Ախուրեան գետոյ ընդունի երասխ յահկէն յԱ-
րարատեան դաշտի՝ գնուրս արձակեալս ’ի յուսքի կողից

1 Փասա մի հաւանութեան եա Մոչ համարելոյ զայս գետ՝ է գիրք և մեծութիւն կամ յորդութիւն նորին՝ համեմատութեամբ այլոց գետոց կոզմանցս· որում վկայէ և հաստատ մի բանի կրօնասէր Պատմչի մերոյ Հայոց (Սահմանաւք)։ « Գետոցն հաստկացութեամբ ծա-
վանոյ երասխ, նոցինգնակ և Մոր „ և. գիտելոգոյն է բանս գե-
տոյ կոչմանս քան Մեծամորի Աբրաժատան։

2 Տէր Սարգիս Զալալեան և Շահէն։

3 Խորենացի, Բ· Լթ· և Գ· Ը։

Արագածա, քէպէտ և չառք յայնցանէ առաջախիր լեալ՝ ոչ ժամանեն 'ի ծոց Նորին. և է առաջին գետ յայսմ կողմանէ հարաւակուռն և գառականն Մեծամօր, ի հարաւային սառոյցից լերինն 'ի հնգիէ միջէ կամ 'ի մերձաւոր առմամբ հեղն (Ախցս-կէօլ) բղխեալ, և այժմ կոչեցեալ Սնաւ ջուր (Գառա առ) կամ Շամբի ջուր, և ուղղակի իջեալ ընդ հարաւ յերասխ՝ առաւել ճանապարհաւ. քանզի 'ի հնումն յոժ այլ ազգ երևի եղեալ ընթացից Նորին, որպէս և որ յահեկէն կամ յելից Նորին գետացն, որք առ մինչեւքին Թաւին փոխանակ ուղղակի 'ի հիւսիսոյ ընդ հարաւ իջանէին՝ յարևմտից ընդ եղ. կայս խոտորեալ. մինչ Նաւանդ եթէ այն առ իսկ Մեծամօրն՝ որ խոյացեալ յաբևելս անցանէր առ Արաքսատաւ, և ոչ որպէս ամենայն քեւ եթէ Ազատ, որ արդ մերձ է աւերակաց մեծին այնմ մայրաքաղաքի՝ կրկնանուն եղեալ և Մեծամօր կոչեցեալ իցէ. քանզի զարգիս մարդ է անբաւ ասել զհեռաւորութիւն բերանոյ կրկին գետոցն, զՄեծամօրին և զԱզատոյ, կամ զԱրտաշատայ աւերակացն 'ի Մեծամօրէ։ Սակայն հին աշխարհագիրն բացայայտաւին ասէ 'ի յիշելն զընթացս Ազատոյ, անցանելով ընդ Դաւին անկանել ընդ հարաւ յերասխ. « յորոց 'ի միջի, ասէ, չինեալ է » Արտաշատ քաղաք, ուր յառաջին ժամանակին խոտո- « նուրդ Մեծամօրի [1]. իսկ այժմ փոխեալ զընթացսն » Մեծամօրոյ՝ խոտնի 'ի մոխ կուտ »։ Զայսոսիսի նախնական դիրս գետոցդ Թաւ ինձ նշանակել և նկարագիրս Արտաշատան գաւառին 'ի պատմութեան Խորենացւոյ՝ անդրադարձ յաւուրց Արմենակայ. « Դաշտասիայր մի 'ի բար- « ձրագագաթանց պարապեալ լերանց, գետոց կարկաչա- « տահիւ՝ յարևմտից ընդ միջ անցանելով »։ Անհատապէս կամ ափչեցուցիչ իմն Թուխին բանս յայժմեան աշխարհացոյցս հայելով. սակայն ոչ վայրապար առացեալ է յաւրէն քերթողին (Քէպէտ և անգիտանալոյր զայս), անժամ և ըմբռատ 'ի կամիչսց գերասխ. ոչ է գիւրին մարդոյ առ կատակեցի՝ 'ի վերայ հատանել պատկերի՝ զոր բնութիւն գծէ և ընկէ յերկուս երկրի։ — Ի հարաւոյ կուսէ լերին Արագածա և 'ի Վիգ գառատէ բղխէ գարասխ կամ փառատ գետ և գարձեալ ատաւ մի յարևելս՝ ուղղակի իջանէ 'ի հարաւ յերասխ, անցեալ 'ի մոխ կուսէ վաղարշապատ, ոչ կարի հեռի 'ի բերանոյ Մեծամօրի, ընդունելով յաջմէն՝ յարևմտից՝ 'ի նոյն Արագածոյ. վտակս ինչ կոչեցեալս յանուն Ագարան, Աքորգ, Փարպի, Լազրեան գիւղից, և ինքն կոչի այժմ կարսոյ ջուր, յանուն աւանին՝ որ 'ի միջին գաւս չէն էր Նշանաւոր։

Հարկ էր առաւօտ խնդրել զգետն զայն Ոսկի, զոր Կորիւն յիշէ 'ի վարս Ս. Մեսրոպայ, և ցաւին Նորին ընդ առաջ երեալ Նմա ասէ զիագագարն վաւրիպագուհ և զմեծն Սահակ, 'ի բերել Նորա զաւազաշնարհ տառս հայկական լեզուիս՝ յարևմտից Հայոց, և հարկ է քէ չէր հեռի 'ի վաղարշապատ քաղաքէ, վասն որոյ ոմանք զՄեծամօրն ինքն կարծեցին զայն. լաւ ևս էր զհատաղ ասել. սակայն անմոռաց Թուխ հաւատակաց ծանօթ գետացս ոչ ոսոցիկ ոչ յոլով իմն (Ոսկ) անուամբ կոչել. վասն որոյ յայսպիսի յեղյեղուկ յառաջի երեսեսեան գաւրս՝ մարթ է և անեղեւս թացեալ ասել զգետն, որ հարկ է քէ նաւազաւոր վտակ մի էր. փաստ ինձ առ այս ունելով բազմակնեւս այլայլութեանց երկրին և ջրոցն, նաև զվկայութիւն հին աշխարհագրին մերոյ՝ զոյլոց ևս մերձաւոր առցին գետակաց, որոց և անուն և գոյութիւն իսկ անծանօթ է և անհետացեալ. քանզի ասէ զերասխայ, « անցանէ յելից կուսէ վաղարշապատ քաղաքի, (մօտ ա- « բեղիս քերէր առ նովաս), յորմէ մոյր եկեղեցեաց (Եջ- « միածին) և Պատմութիւն (Ս. Հոիփսիմեանց). յորոց « եւից բղխեն ագրիւրք Ազատենի գետոյ, որ է խոզմոր, « և խոռնի 'ի Մեծամօր ». աւագիկ երկոտասն գետակ (քեւրևս և երկու վտակք), որոց և ոչ մին լսի այլուր, իսկ այժմ և ոչ անգամ նշմարի. և գուշակի ըստ բանիցն՝ յաբևմտեան իմն ունել զգաբձաւածն՝ զի խոռնեսցի 'ի Մեծամօր։

Գիտելի է զուգահեռական ընթացս ընդ գետաղոյց ունի յարևելից Նորին և Հոյզման կամ Հոռոստան գետ, այժմ Զևնկի կոչեցեալ, որ և Երևանայ չուր, զի անցանէ յարևմտից քաղաքին, և Թափի Ջերասխ ասկաւաք հեռի յելից բերանոյ գետոյդ. իսկ աղբերք Նորին են 'ի լեռ- Նավսյրս Նգայ և Վարաժնանից. բայց են Նորա միւս ևս արևելեան առաջք, 'ի Գեղամայ Ծովէն եղեալ կամ հանեալ և հան բացեալ ընդ արեւմտեան, և այս ոչ 'ի բնէ՝ այլ յարուեստ մարդկան համարի. Զարմանք են զի աշխարհագիրս մեր որ զվիրապգրեալ գետոց ծանուցանէր՝ ոչ յիչէ զՀրազդան. իսկ յետին ասի աշխարհագիր, որ միայն զգետոց ծագումն գրէ, զորպես 'ի Գեղազունջ կամ 'ի Գեղամայ ասէ. զարևելեան ուրեմն զայս վտակ՝ գլխաւոր համարեալ, և ոչ զմիւսն՝ գհիւսիսայինն, եթէ ոչ չփոթիցէ ընդ Ազատ գետոյ, որ արդարև յելից Հրազդանոյ բղխէ 'ի լերանց Գեղամայ, և անցեալ առ Գառնեաս, յորոյ անուն արդ Գառնոյ չուր (Գառնի չայ) կոչի, առ աւերակաւքն Գառնոյ և Արտաշատայ՝ ասկաւաք հեռի 'ի բերանոյ Հրազդանոյ՝ Թափի յԵրասխ։

Ասյսպիսկ չորք կամ հինգ գետք 'ի բուն Արտաշատեան նահանգին ժամանակին գերասխ յահեկէն. իսկ արտաքոյ նահանգին՝ այլ 'ի նմին աշխարհի Արտաշատայ և 'ի միմի երկարաձիգ գաշտին որ 'ի Գառնոյ մինչև 'ի սպառատ աշխարհին՝ 'ի լեռնակողմանոյ Մխենեաց եկեալ և հատեալ զգաչան՝ անկանին յերասխ, մի ըստ միոջէ՝ յետ Ազատոյ, Վեհ, Ախին?, որ 'ի յորոգութենան միայն ժամանէ մինչև գերասխ, Զարան-արքին կամ Զանախաի այլ և այլ ժամանակք. և Թաւ կոչեցեալ 'ի հնումն յաշխարհագրէն մերմէ՝ Արտանկեան կամ Արտաւանական գետ.—Արխա, գետ Սիւնեաց, որոյ ստորին հոսանք են 'ի գաշտին Շարուրոյ, ուր և մատչի յերասխ. և այս վերջին գետ է յահեկէ երասխոյ յԱրտաշատ աշխարհի. զի տաճ և անդր Նախճաւանու տահմանք են, Սիւնեաց և վաղարշականի պատշաճեալք.— Իսկ յահեկէն, որպէս կանխաւ ասացաք, յաշխարհս Արտաշատայ՝ երասխ մանուսն ինչ և անհնաւս ընդունի գետակս, Արշրաւանիս, 'ի Գաբելեան (Կաղզուան) և 'ի Ձակատս. և ևս յարևելեան կամ 'ի բնիկ Արտաշատեան

1 Արդէն ասէ և Խորենացի, 'ի պատմութեան, Բ. խթ. և որպէս Թուխ 'ի նմանէ ասեալ երկրորդէ գիտի և Թովմա Արծրունի։

սահմանս՝ զԴարասու գետակս Մասեաց Ոտին, որց գլխաւորին՝ վերին կամ Մեծ կոչեցելոյ, ժողանդակ է և գետակն Ալյասուց՝ զոր հինքն կոչէին Դիմիգոյն գետ.

4. Թէպէտ այսպան գետք և գետակք են յաշխարհին Աղբատասց, բաւականք յոգոցումն երկրի արեւմտեան մասինն, այլ անբաւականք արեւելեանն և բնիկ Աղբատասեան երկրի կամ Նահանդի, վասն նախայիշեալ սաստկութիւն և փոշիասեակ բնութեան հողոյն և լանջից լեռանցն, որք ծակոտկէնք և փոսաւորք գոլով ընկլուզանեն զջուրս ի խորս իւրեանց. այլ և կլիմայ երկրին ցամաք և չոր է, ժակաւանդրև և սակաւաձիւն. և թէպէտ ամենայն լերանց հալին ձիւնք ամպարանի, բայ ՅԱւազ Մաւեաց, այլ վասն սասպեալ պատճառացդ ոչ բաւեն ընդ զգէտս երկրագործութեան, մինչև թէ ոչ խնամով հատցին և հանցին առաք ի գետոց ընդ ագռգոյս. որովք արաւեան և հնարք ի վաղեմի գործուց անտի քաջ յարդարեալ են զոգոցումն երկրի, որպիսի սակաւ ուրեք է տեսանել յայլ աշխարհս, և ասիկանք ջրարաշխք կարգեալ են հին օրինօք ըստ գեհից գեհից և ըստ գիւղից. այլ սակաւին բազում անգամ կամ առ անգործութեան նոցին և կամ ագահութեան, յանախ լսի կաթսութիւն ջրոյ և երաշտ. թաւ թէ ի հնումն առասել էր խնամ, կամ հասատանն և արգտարաշխ օրէնք լաւագոյն անտեսէին և մտաւաւակէին, որպէս զի և յառակս իմն համբաւէր և առ օտարս՝ արգաւանդութիւն և գալստեգեղ տեսիլ Եբասխեան գաշտի, իբրև գրախտական վայրի, այնքան մերձ իսկ գոլով անապատաց եւ գաշտաց Միջագետաց և Ասորեստանի.

5. ԲՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՒ· ԿԼԻՄԱՑ· ԲՈՒՍԱՔԵՐՈՒԹԻՒՆ.· — Բայ ի գետոց են յԱղբատաս և յանկ, այլ ոչ մեծամեծք, բայ ի միոց, որ յելից հարաւոյ Երասխայ՝ ի կողմէ գաւառի, անուանեալ Շամր Նորին որ և Ջրովակ Գայլուսոյ, այժմ Պայազ կոչի (Զկնալիճ), զի կարի շատ ձկնաբեր է· են և մերձս կամ ճախճախուտս վայրք ի գաշտին Բասենոյ, որպէս և յեզերս Երասխոյ յարեւելեան մասին աշխարհին· Թերևս ի հնումն յոլովագոյն ևս էին ճախճախուտք կազմանցն Բասենոյ, որք և յիշին ուրեմն ի Բիւզանդացի պատմէ ի Զ գարս. և ոչ անճահ թուի՝ սակնևին հարթածաւալ գետնոյ նորին երբեմն յատակ գոլ ծաւալական ջրոյ, և յաւէտ ջրային ունել կազմութիւն, որում նշանակ իցէ արդեօք և անուն գետոյն Մօր մեծ, զոր վերագրեցուց եղեալ Խորենացի ի վաղնանդ կամ ի Զարիշատ· Էէմիլդըն Ազդիացի նկատեալ զմնանուտ տափարակ կազմանս Խորասանոյ՝ ի Բասենոյ, ուր ժամանակ երբորգակ հողոց գետնին յընդարձակ սահմանս, և զգեղնորակ աւազախիր գետին ի Հ. Աղոյ առ Մաւրիկոպօլիս, ուր նոյնպէս գետնին խեփորք ժամանակաց, ոչ միայն գլրևղէն կազմածն հաւատալ, այլ և համարի հետս համախարհական ջրհեղեղին, մանաւանդ առ կատն ունելով զԱղբատասեան լերինս[1]· Բայց ընդհանուր բնութիւն երկրին, մանաւանդ՝ արևելեան մասին և բնոյն Աղբատասց՝ հրաղանդուած կամ պղտուռնային է, որում ակներև հակայաշափ վկայք են երեքին բարձրագոյնք լերանց համարէն Հայոց աշխարհի՝ Մասիք Մեծ և Փոքր և Ագրագած, և որ չորք գնաքօք լերինք Կոգովիտ և Ագրագծատան, և սահմանակից լերինքն Գեղամայ, ընդ սահեղագոյն երբեմն հրաբուղխս երկրի հանդիսացեալք, և յետ չիշման կատարարեալ վառարանացն, անդադարք ի ներքին ներգործութեանց և ի սակալի սասանութեանց, հանդերձ պատահմամբ կողից և ժայթմամբ սկզ և ոտմց և մեծամեծ քարանց թռուցմամբ, և ամենայն ազետալի արգասիօք և պղպղութեամբք երեսաց գետնոյ, որպիսիք լեալ իցեն յայլ կողմանս երկրի. և այս նաև ի պատմական ժամանակս, և յառաջ քան մեր, որպէս յիշեցաք ի տեղագրութեան նոցին լերանց. և զգալի նշանակք նոցին ոչ միայն կան առ եւս՝ ըստ բնական արտադրութեանցն, կարկառակոյս հեղուկք սառեմ, զուշակի, խանձից և մոխրոյ և պէսպէս հրային նիւթոց, այլ և արուեստակեալքն հրաքղխային քարինք պէսպէս գունովքն հարտարապետեալք ի տաճարս աղօթից և յերկնակառոյց կաթողիկէս. յորս ակնարկողք և աղօթողք՝ ընդ արշաւից բնութեան զոյգ պաշտից են և զվերին խնամն, որով նոյն նիւթք ազատարերք՝ յատուցուր բանին փոխին ի բեմ և ի սեղան կենսատէս.

Կազմած կամ բնութիւն հողոյն, մանաւանդութիւն ջրոյ, բարեխառնութիւն կլիմայի՝ ըստ աշխարհագրացն դրից, այլ և ի հակառակէն բարձրութիւն երկրին յ'2500 ոտից յ6000', և անպատապար ի լերանց և յանտառաց տարածութիւնն, զանազան գործեն զկերպարանս և զդէմս. կամ հակառակք իրերաց առաջին յատկութիւնք՝ վերջնոցն, զիրար չափաւորեն. զի ըստ առաջնոցն հարկ էր Աղբատասց ընդ բարեխառնագոյն վիճակս երկրագնեաս լինել, և ըստ երկրորդացն՝ ընդ ոչ նոյնպիսիս. և ի տակս սոցին՝ նախ զուրկ է ի մեծէ իմն վայելչութենէ, որ և միայն պակաս գոանի ի գովութիւնս՝ զոր սովնոյն մատուցք ընծայեն նմա նախնիք մեր, այն ինքն է ի ճոխութենէ ծառոց և անտառաց, զի զոյս չյիշեն և նոքա. և երկրորդ՝ ցրտութիւնն, զոր յայտնապէս խառնուիանի հին աշխարհագիր մեր յետ գովեստին և բարութեանցն յիշեցելոց, յաւելլով [2], « բայց ցրտային է յոյժ »· Բայց ուրեմն զի և անտառացն նուազութիւն լանչեանց վկայի և յայնժամ. որում միւս ևս վկայ, Խոսրովաս Բ' ի կէս Գ դարու անկեալ անտառս ընդ մէջ Գառնոյ և Գառնոյ, որպէս յատացն երբեմն Երևանդայ, առ իւրով դաստակերտաք ի սահմանս խառնդոյ Ախուրենոյ և Երասխոյ. Թողից գքաջ ի բաց հին ասսան Արմատաց, զոր Աբասենական որդւոյ նախնեացն մեր Հայկայ հասանի անկեալ, և որոց կարծին մեծամեծ կռէզք երևել ի լրեին գհող երկրին· կենդանի անտառ ոչ ուրեք երևի ի բնին Աղբատաս, բայ ի պուրակէն Թըխտենեաց ընդ մէջ երկոցուն Մասեաց· այլ յորմէտեան մասի աշխարհին են հանդատանօք մայրիք Մեծ բայ (Ո-

1 « As there is no raison to suppose that these elevated plains have ever been subsequently flooted, it does not seem presumptuous to imagine that this shell-bed was the result of the Noachian Deluge, and was deposited during the period when the accumulated waters remained in this portion of the World ». HAMILTON, Researches, etc, II. 387.

2 Թէ և ոչ յամենայն օրինակս Աշխարհագրութեան Խորենացւոյն գտանի այս վկայութիւն·

զանլու լերանց), 'ի վանդագ և 'ի Բասէն. որք յայտ է թէ ընդարձակագոյնք ևս էին 'ի հնումն, և 'ի հետաւոր կողմանց գային հասանել անտի փայտ 'ի պէտս շինութեան· որպէս և յ'ԺԴ դարս Հուլագու-գան առաքեաց անդր զՄմբատ Օրպելեան « վասն անտառի փայտից, զի չինէին « զմեծ արքունիսն՝ որ 'ի Դաւան գաշտին »։ Աղգ ազգ առնուաց են անդ և կազմածեալաց, զորս յիշէ և Դաւանըֆար, որ ('ի 26 օգոստ. 1701) էանց ընդ այն՝ 'ի Պարսս գնալով 'ի Կարին [1]. և զորս յայնկան գարուց հետէ մինչև յաւուրս մեր հասանելով անհմտապէս և ոչ փոխանակ անկելով կամ թողլով բարունակս յաճումն, տակաւին անապատ է տեսանել, և յատպի է յայմհետէ տալուել և յապահովել զնոսին խնամով Աստուծոյ, որոց երբեմն յատաջնումն մասին՝ մատակարարեալ էին մայրիքդ՝ զհիմունս բերդին Ագէքսանդրապոլեայ.

ԵՒԷ չար և եթէ տակաւ սերևագարգութիւն տեսանէին նախնիք մեր յԱՅրարատ, տակայն ոչ ինչ պակաս 'ի պիտանեացն և 'ի գեղեցկէն՝ նմանբերէին 'ի նմա, յաստիճանն անտի պատմչաց մերոց մինչեւ ցյաւրինն (Զաքարիա Սարկաւագ), զնոյն վկայելով բերանագիր. և նախ աշխարհագիր մեր՝ յետ զընդհանուր մատանեալ բնութեան երկրին ցուցանելոյ, եթէ « ունի Ա յրարատ « բաս յերինս և ('ի նոսին) բերդս ամուրս և անառիկս, « և գետս և ցուրս պիտանիս », յաւելու, « և զանհնայն « պատարագուիս », կամ՝ քան այլ օրինակաց « զանազ « նայն բարութիւնս »։ Եւ զոր միով բառիւ բանդակեին հանճարաւորքն օրինակիւ, այլք առ ի ինչ մանրամասն յընչեն զգլխաւորս 'ի բերոյն, կոչելով զերկիրն՝ « ագնիս, « հացաբեր և խոտաբեր ». և առանձինն խոտելով զբերան. « Եւ յինի 'ի նմա արչաւս բազումս և ոչխարս. ունի և « երես յոլով, և ձուս պիտանիս և տյգաւնս սիգարբե « բեալս 'ի զարդ կարմրութեան գործոյ ». կամ քան այլ օրինակաց « և զոր ցարմատոյ սիզոյ, առ 'ի զարդ կարմրութեան գործոյ ». որ է ախարշամանօք Ոյրդի կարմիոյ կամ Ոյրդանի կարմիր, որ գոյանի յաւէտ 'ի կնիգրանագոյն վայրս բնիկ նահանգին Ա յրարատոյ. քան նոքին օրինակի և յոլովք 'ի բերոյ, զոր 'ի տարեգ յիշելոյ եմք, այսմ նահանգի պատշաճին, քան բանից նախնեաց· բայց զի միայն զայսմ մասնէ հասանն նոքա յերկարօրէն՝ չէ ինչ անգէպ պատմեցուցանել և այլոց կողմանց նորին. որոց՝ և յայլոց բանից նոցին և յակներև արդեանցն իսկ՝ յայտ է քաջարերութիւն. զոր օրինակ Շիրակայ և Վանանդոյ, Բասենոյ և Բագրեւանդոյ, և այլն։ Բայց զի յաւելիկայ տարաբերութեան ախարհիս, քան խրթնանչիւր գտանելոց եմք ուրոյն, հարկ է առաւել միանգամ կարգել որ ինչ զամենայնի պատմութիւնէ կամ գրութենէ նոցին ախտական արգասեաց նահանգին ասի բան, և տիրապէս 'ի Պազաբոյ փաթաթ-

ցոյց. որ զի և այնքան արտաքուստ և կենդանատիպ իմն հանէ, ախտժելի լիցի որպէս ինձ՝ և այլոց ընթեռնուլ զբանս նորին միանգամ, զիսակաց թողլով զատել և դասակարգել զերբան բնականս, բուսականս և կենդանականս, եթէ այնպէս ինչ հանդ թուիցի· զի և զերից ազգաց բնութեան յիշէ նա զնոխութիւնս, թէպէտ, ասէ, ոչ մանրաբանն և քան տեսակաց ցուցանել զրատականն, յորմէ մարթ էր մեզ ասանել զանուանս բազմագի անկոցն և ծաղկանց· և 'ի տեսանելն զհանճարեալս նոցին՝ թերևս և արտաքուստ առգանել· զի և ոչ անմասն աշաց մարթ է ազգանախանձ հայկազին նշմարել և 'ի գրի գնկարագրեալ նահանգին այնորիկ, 'ի յոչ սահելով զդէպն՝ յոր սակս գրեցանն, և յանդիման մատցն աչաց նկատել զԱրչակ Գ, դյնտեղ միագնա երկրի Հարց իրոց, որոց տեսեալ յոյնժամ, « թէ խոխառնել և քաղքայեալ մատանեցաւ 'ի բաժանումն (ընդ Պարսիկն և ընդ Հոյն) մեծ « իշխանութիւն Թագաւորութեան ազգին իւրեանց, մեծ « ծաւ տրամանութեամբ խոտվեալ տարակուսէր յանձն իւր· « տեսանէր զմեծ մասն, զյառն և զոչխարսին և զարգանս « տանցն աշխարհիս Հայոց՝ անկել 'ի բաժին արքային Պարսից· « սկս· քանզի թէպէտ և հասեալ (էին) բազում գաւառք « այլ՝ 'ի ժառանգութիւն մասին Թագաւորին Քաջաց, « սակայն համեմատէին այն միայն Ա յրարատեան գաւառաւն· Թարհարդ բազմաժամ հանդերձ իւրով սիրեցեալ « կոք 'ի մէջ արկեալ Թագաւոր Ա յրակ... (տայտ կամ « մայ անասայ յանձն առնոյր և ասէր). Ընտրելագոյն « յիցի ինձ Թագալ զանձկալի և զամենատնէ վայրս Ա յրատոյ, զրնիկ և զանպհական տեղիս նախնեացդ իմոց, և գնալ ինձ ազգատութեան և կենալ բազձալի « կարօտանաք... Եւ խորհելով զայս ամենայն... լքեալ « մերժեալ Թագոյր զյարի և զրնիկ ժառանգութիւն նախնեացդ իմոց՝ զգաւառն Ա յրարատոյ, զնոյսկատն և զդաշտս Նախճաւանայ և զանձաւորն և զանձաւորն, զամենայրան, զամենատեսիլ, զամենաբերութիւն, զամենագիտուն 'ի չարս և 'ի զարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սքանչելութեան, Զդաշտս մեծատարած և արտալիցս, զերբինս չորքոտանի գեղեցկանիստս և պարարտս, զտաս, զհաժեալսն էրէմիքն կնդակարաժնիւք և որձոյք· Նոքա՝ [2], և այլոք ևս բազմք ընդ նոսին. յորոց 'ի վերս ասացաք 'ի կատարացն՝ ըստ հասանիք անկարօտ ատգման, արբուցանելով զդաշտս մատակարարել անքաթ թագմութեամբ յատանն, կանամիք, արտիք և ընտանեաք, զանազանութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմիգրաշամ քաղցրութիւն բանջարացն և զպանազան· Նոսա իշտարտին սերմանցն· Իսկ 'ի լանջակողմանեան կամ 'ի տարահարթ տեղիս՝ յոր գիպեցուցեալ զՀայկ· « ցած նորագտանելիս մարգոց, հանդերձս ինչ և ոչ ծաղ· « կատոյս գոյնս կարծեցուցանեն տեսանելքս պարարտա-

1 * On passa sur une des plus hautes montagnes du pays couverte de pins, de peupliers noirs et de trembles „. — Tournefort. Lett. XIX.

2 Զմանրամասն 'ի Փարպեցւոյն, գկարևարագոյնն 'ի տեսս կնճռանեաց և գկերևագոյն, իբրև ընդարտյս իմն Թեւագրութենեամբ բնծայէ' յետ գարս միոյ' յոյն պատմիչն Պռոկոպիոս, ընդ ազնատութեան ազգ և չրոց սահմանաց Դաւանոյ կարգեալ և գդաչտան չէ-թիչն։ Աստղ խրխատագրած երիվարին' – որ, ըստ Պերոյ վկայասոց, * Աիտա է Թագաւորաց, և պարեալ ամրութեան հնձելատրաց „ – անմարթ է յանդիման առնել գՀոյ' յաւուրս Ներսիանեան Թերոյ, և ոչ գտասակեր գոյս Ա յրարատոյ լրացուցանել։

"Εστι δὲ τὸ ἀοῦρες χῆρα τις τῶ τε ἄλλα ἀγαθὴ καὶ ἀέρων τε καὶ ὑδάτων ἀνέζιαν τινὰ διαρκῶς ἔχουσα. Ἄεζία μὲν ἀντῶνδα ἐπηλατὰ ἐστί. — Procop. Pers. II. 25.

» քրդք և պարթևատարազ, պարթևաշահաճք. որոց Թան-
» դիբախտ անմահք խառնեն՝ զանթիւ սրսուականս բի-
» զանի իշանց և զանհամբոյր բոյս վայրենի երբեմն յա-
» գեցուցեալ, Թանձրաթաւզանիս, առագաստակս, սան-
» քացեալս գիրութեամբ գինւոյ մարմինն ցուցանեն։ Իսկ
» սատակարարումն անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն
» քաշաց սրսուէր նեռազան և գհօտարած բացօթեայսն
» ընձեռելով առողջութիւն, զօրացուցանեն զզգայութիւն
» խելացն և նեռգեն։ Այդ գառնին և ազգի ազգի Ար-
» մատք բուսոց ՚ի պէտս սգակարութեան գիզոց, ըստ
» հարատագէտ հանուշզութեան ոտանգահմտաւ թժըշ-
» կացն յօրինուածոց, երագահաս սրատաշափած ապեզա-
» նիք, և կամ արբամբք՝ յերկարելոցն ՚ի ցաւս՝ պատա-
» հացուցանեն առողջութիւն։

» Իսկ գաղտից ամենայարութիւն՝ զկամս սրխատա-
» սիրացն կորգելով յինքեանց՝ իրրև բանիւ, և առյեալ
» որ գինւ և է բարով, և առաւել փութանակի ըզ-
» գարձն առ ինքեանս հրատիրէ միանգամայն. որք ու
» միոյն երևելութեամն ցուցանեն վերաբերեալ գշա-
» հաւորութիւն սգոից մարդկան, այլ առաւել յորդորա-
» խոց սչխատասէրացն զառ ընդ երկրաւ ծաժկեալ սգուտս,
» ուսուցանեն գանձել անձանց գշահս և գվայելս սյսր
» սչխարհիս ՚ի մեծաւթիւն թագաւորաց, և ՚ի հաստա-
» տութիւն հարկահանաց, զՄսկի և զՊղինձ և գերկաթ և
» զպատուական Քարինս. զոր ընկալեալ արուեստող ձե-
» ռաց՝ զարդարեն զթագաւորս, մեծատեսիլ զարդուքն.
» յօրինուածովքն, զոր ՚ի խորան և ՚ի թագան և ՚ի հան-
» դերձան ականհատս պատուհեսաս ընդելուզանեն։ Այլ
» և մածմամբ ջրոց ? համամբին անուշութիւնս մատուցա-
» նեն զթաթրակացն որուտիւնս. Նաև զարմանս էջից-
» նաստր բուսոցն՝ ոչ ընդունայն անուցանէ յինքեան ամե-
» նազաղձ գաշտն Ադրբատական. այլ և ՚ի նմանէ ծնեալ
» Որդուն ՚ի զարդ կարմրատեսիլ գունոց բնծայէ սգատա-
» սիրացն շահս և չքեղութիւնս։ Եւս և գեւացն գնացք
» բազմակերպ Զկամբք մեծամեծօք և փոքուիքք, զանա-
» զանեալ հասմբք և այլ և այլ տեսմբք, սրբախացուցեալ
» լցուցանէ զշնորհս ընչից, և յոգւոյդ սրտխայնից ժրա-
» ցելոցն և անվհեհեր ջանացողացն։

» Անուցանէ յինքեան երկիրն՝ չրոմբ սրաւետսիւք՝ և
» զառատելութիւն Հասոյն յուրախութիւն և ՚ի սքա-
» փանչ սրսատանել սղատացն. զկրկնածայն քաղցրա-
» ձայն առատպրատակր վիմատղդ սօրամատս երանի էա-
» քատացն և Ադարտիացն [1], և կամ զեղգնաբնակ թփա-
» մատ մացառազոզ պարարատմոքմին զանուշահամ
» ազգ Ազքատացն փայտենից. այլ և զքրատզակ մանուա-
» խնդիր խոզակեր մեծանձանձք և յօդթ ամբոխիկք հաս-

[1] Ադարտք կամ Ադալ՚, որ և Դահաճ կոչի բան Պարսից Տէ-
րեց. ﺩﺮﻭﻳﺶ. և Francolin բան փառաւկաց։ Բնչկարան մեր գրէ.
“ Տեհաճ, որ հայերէն Ադարտ ասեն. ինքն ՚ի Զէլ կու նմանի. և
» ինքին ներքեւն սպիտակ և սեւ կու լինի. և ԹԷ քաջահասկ եփեն
» և ուտեն՝ սպառ լուծման. և լաւն այն է որ գէր լինի և ածան ա-
» մեան պատան. և որ ՚ի հեռացութենէ յոտն նշնէ. և կամ սչխա-
» տասէր մարդ լինի՝ զեր հերթան եփեն և ուտեն. սպառ Ադատա-
» ծով ,, ։ Զինի յիշեալ՝ ապդ է կոչատաս։ — վայրենի Ադաբդն են
Ադարդք բան ռամկաց, նոյն կամ ապդակից Bécassine և Coq de
bruyère հասաց։ — Փոքր՝ նոյն է ընդ կաչաղ, սպիտակփոսս Թա-
ղատար կամ Թագուհի Հրատիր հասաց։ — Թռչնէրն է Otis, ևԹԷ
սաղպ և բնեհրդուածն. սպա ԹԷ Թռչնի իցէ՝ Հաւասատան է. Pélican.

[2] Երբեմն ՚ի միում բանի պարբերութենէ հանդիպի գործածել մակ-
դեր երկրին, որ զամենայնն բովանդակէ. վասն որոյ հանապազ և
այլ Պատմիչ (Մխոտվով) զոյդ միասին փոխանակ ամենայնի ասէ,
“ Ադրատատան յամենայնի գաւառին ,, ։ Թարգմ. և. զոյդ Հինս՝
յեռին պատմչացս Զորբրիա Աորկատաց ասէ և կրկնէ. “ Երկիրն
» Ադրատատան պարարտ է և առատ ամենայն իրաց և թևթևա-
» դիւ, վասն որոյ յամենայն կողմանց գան յէրևան և գնեն զոր

» հիմնարկութիւնն արդ տանն Աստուծոյ՝ մեծի եկեղե-
» ցւոյն (Էջմիածնի), և զայնց վկայարանաց նգնազգեցիկ
» երանելի կաւանացն.... քեռայ գլխոյ Ժառանգութիւն
» զնախնեաց իւրոց, գնայր ՚ի ծառայութիւն Թագաւո-
» րին Յունաց »։

Աբժանի մատենագիրն է և յիշատակ անթիւ բար-
ձրաբերձ ապտրանիցն այնր ժամու Յատանին Հայոց, և
եկեղեցւոյն մեծի, որ հարկ է թէ յայժ մեծավայելուչ էր
հոթութեամբ. զի և աչխարհագիրն յետ համառօտ յիչա-
տակի բերեցն՝ իբրև նչանաւոր ինչ ՚ի նմին, ընդ անառիկ
բերդին՝ յաւելու և « զմայր եկեղեցեացն ՚ի Թագաւո-
րարնակ և յարքայանիստ վաղարչապատ քաղաքի »։

Ընդ բնականին և անքան սեռից, Պատմիչն՝ որոյ
և հայրենիք իսկ ՚ի սմին նահանգի էին, ՚ի Փարպի,
հարևանցի իմն նչանակէ և զպանծալի հրաշանգս ինչ
անձնականս, զագաւաց և զնախարարագանց և զանե-
կանց նոցին, զորոդոց և զձկնորսաց և զձարձակ [1] կո-
րովածիգ արանց. բայց աչխարհագիր մեր՝ իբրև պատկ
արգասեաց և գլուխ քաջերութեանց երկրին՝ չմոռա-
նայ համառօտել և գյաւէս պանծալին և զնազելին, եթէ
« ճաջ մուրացանելով զՔրս, եւ ուժաւորս առնելով.
» և կանայս՝ գեղեցկագեղս, բարձրայօնս եւ ցար-
» տարանս »։ Այնպիսւոց թագաւոր՝ այսպիսիք արդարև
արժանաւոր հանդիսականք. այլ հարազատքն ծնունդք և
ոչ աստրախարքիք։

6. Այեսաւ Հայոց ասէ. — Բայց մեր թագեալ՝ ըստ
խառնման մերում՝ զայլ ինչ գիտելիս ՚ի ատորագրութեան
իւրաքանչիւր գաւառաց աչխարհին, անցցուք յաչխար-
հագրութիւն Հայաստանեայն. յորում՝ հարկաւ առաջին ՚ի քննութիւն
պահանջի անուն և ծագումն Այրարատայ. Քայամիկ՝ նախ
զայս յիչեցուցանել պարտ վարկանիմ, զի անուանս որ և
՚ի հին Աստր Գիրս լսի առ երրայեցիս, և անտի ՚ի Թարգ-
մանութիւնս նոցին, և ապա ՚ի նոր լեզուս Եւրոպեա-
ցւոց, Ararat գրի և լսի. իսկ առ մերայինս երբեմն
այսպէս և երբեմն յաւելմամբ ՚ի տառի Այրարատ, և փո-
փոխմամբ վերջին տառին ՚ի դ՝ Այրարատ, և հոլովի այս-
պէս, Այրարատայ, Այրարատոյ և Այրարատս։ Եւ եր-
կրորդ, զի առ մեզ յանախ ևս յատկական ձև յանգեալ՝
Այրարատեան, այլ և այլ տեղանիւք գոյականաք վարի-
պէս՝ Այրարատեան աչխարհ [2], և այսու ըստ նախա-
գրեցելոցս՝ սովորաբար բովանդակ քան գաւառաք եր-
կիրն իմանի, և երբեմն արքունի կալուածն։ — Երկիր Այ-
րարատեան [3], որով մերթ բովանդակ երկիրն Հայոց
իմացեալ լինի, և մերթ բնիկ աչխարհն. Հնագոյնք վա-
խճանակ այսր՝ յանախ գոյականագործին, Երկիր Այրարա-
տայ ասելով [4], որպէս նախ ՚ի հայ Թարգմանութեան մե-
ծում Ս. Գրոց, « Ձերծան (որդիքն Աննեքերիմայ) յեր-
կիրն Ararատայ ». զոր այլուր (Եսայի. ԼԷ. 38) պար-
զապէս ասէ. « յԵրկիրն Հայոց ». խակ առ Լատինս՝ ներ-
հակաբար՝ յառաջնումն տեղւոջ Երկիր Հայոց ասի, յեր-
կրորդումն՝ Երկիր Ararատայ [5], — Տուն Այրարա-
տեան [6], որպէս գրի ՚ի մէջին կամ յետին դարուց յիչա-
տակս, և որպէս ասէ գինքն՝ Ջաքարիա առաջնորդ Քա-
ղհանանավանից, ՚ի կէս ԻՎ. դարու, « ի Տանէս արարա-
տեան ՚ի վաղարչապատ չորակաթիկ սուրբ աթոռոյս »։
— Դուն արդք և Այրարատեան կողմն [7], որպէս հա-
հազակի կոչեցաւ յետ Դ. դարու, ՚ի բաժանելն յերկուս
պետութեանն Հայոց, և նախարարք յատնական մտոքն
գրէին առ իշխող մերս, « Տէտան մերում խորովս,
արքայի կողմանն Ararատայ »։

Անփական կալուածն արքունի, այսինքն արևելեան
մասն աչխարհին, որպէս ՚ի սկզբան ակնարկեցաք, առ
հին նախնիս մեր և գրիչս Դ և Ե դարուց՝ սահ և սահ-
մանաւ Այրարատեան գաւառ կամ Այրարատ գա-
ւառ, կամ Գաւառ Այրարատու կոչի. ըստ որոյ և
յետագայ պատմիչք, այլ սոքա ընդարձակագրէն և առ-
նեան զաշխարհն կամ գինուած գաւառին [8]; իսկ Նահանգ
Այրարատեան սովորաբար ըստ եկեղեցական բաժնից
կամ թեմից իմանի. որպէս գրի ՚ի յիչատակարանս, յա-
մի 1267, « Գրիգոր արքեպիսկոպոս Այրարատեան Նա-
հանգի... ՚ի Բջնի ». յամի 1444, Սիմէոն վարժապետ
նորագէ գմանաւոյս Այրարատեան Նահանգի. — 1447,
« Յաթոռ Էջմիածնի վաղարչապատ Այրարատեան Նա-
» հանգին ». — Մովսէս վարդապետ յամի 1666 կոչի « արք-
» եպիսկոպոս Բջնւոյ մեծ Նահանգի Այրարատեան
» երկրին »։ Բազում անգք ևս յիչի Այրարատ սոակ
միայնակ առանց յարադրութեան այլոց տեղանիւ ա-
նուանն, և նչանակէ զարգանի կալուածն, կամ գԱս-
տանն, որպէս, յորինողքին Ագաթանգեղոսի [9], « ոչ կեալ
(արքայազանց) յԱյրարատ, ՚ի բնակութիւն արքայի [10] ».

[1] Ընդ միւսոյ արձնակի (վաթսիկանեան)։

[2] Ռուսագ. Գ. ԱՒՐ. « Հասանէր յԱյրարատեան աչխարհն »։ Խոր. Հնբրն. « ի ծագս հիւսիսոյ յաչխարհն Այրարատոյ »։ Ասողկ. ԽԱ. « Ագաթանգեղոսն աչխարհս... մանաւանդ աչխարհն Այ-
» րարատոյ »։

[3] Խորեն. Պատ. Հնբրն. « Գնալ ՚ի Հայք յերկիրն Այրարա-
» տեան »։ Ցիշատակարան յամի 1382. « ՚ի յերկիրս Այրարատեան,
» յանապատս Աբշուառեկ »։ և այլն։ — Ասողկ. Ջաքարիա. Ա-
բրահամ կրետացի. և այլք. բազում անգամ այսպէս կոչեն։

[4] Խոր. Ա. գ. «Գնաց (Հայկ) յերկիրն Ararատայ »։ — Նոյնպէս և Սեբէոս. և այլք։

[5] In terram Armeniorum. — In terram Ararat.

[6] Ցիշատակարան 1458 ամի. « ՑԱյրարատեան տանէն Հայոց մինչև յերկնկոյն »։

[7] Կաթողիկոս. ԻԲ. ԻԳ. « ՑԱյրարատեան կոզմանցն և ՚ի վ.բոց
» աչխարհէն »։

ումիւնքն. «վասն որոյ, ասէ, համբառ հաճոյական վա-
» րուց նորա եղ առ հեռաւորս և առ մերձաւորս։ Քան-
» զի էր հասարակաւն վայելուչ, տեղեանքն գեղեցիկ, և մը-
» տաքն ընտրագ, բարուքն հանգարտ, վարուք հղնազ,
» խարհրդովքն վեհ, հաւատովքն ուղղափառ, յուսովքն կա-
» տարեալ, սիրովքն անկեղծաւոր, մարմնովքն կորովի, հո-
» գւովքն առոյգ և խոնարհ, և պտուղն սուրբ։ Այս անցու-
» ցանէր զամենեքումբք որ յաւուրս նորա էին սուրբք և
» առաքինիք»։ — Ընթերցիր և զպանդխտեան զոր գոր-
ծեաց Գետարդել նշանաւն, ի Հաւսմոսի վանս, ի տե-
զագրութեան Շիրակոյ գաւառի։

Դէսիե (Texier) որ յամի 1839 էանց ընդ գետոյն Գա-
բախանք և գիշերօթեաց (21–22 սեպտեմբ.), եգիտ ի
նմա յիանիւ չափ կաւակերտ անկանս. նշանակէ և զեկե-
զեցին կոփած ոչ քարամբք շինեալ, որովհ պղնձութիւնն հե-
տագնելի։ Նոյն ինքն, ասէ ընդ Հր· Մ· գնալով ի
Բագրեւանդ կոյս, էանց ընդ լերինս անմարդեաս Երասխայ
և Եփրատայ, զորս Ա-պուլայ կոչէ, այլ հասարակօրէն
Շահ-ևոլ լերինք, և զկատար նոցին հայկական իմն կոչ-
ւմամբ՝ Արծուտի կամ Արդրատի, զոր այլ ուղեւոր (Քոխ
բրաւսիայի)[1] սուտդ լինել Արսի-հարբ, այսինքն բնակ-
եալ Արսի տոհմի Քրդաց, որ ի հիւսիսային լանջս անդ
Շահեօլի օթևանան։ Երկիր լեռնակողմանցս հրային է, այլ
կատարս այս՝ հերձաքարաւտ և խայտ օձաքարաւտ (ser-
pentine)։ Բազում գետոց լքեալք և անբնակք են յԱր-
ծուտւտ լերինս՝ իխզտուց հետ, որպէս ասեն բնակքն մեր.
ձակալ վայրացն և չէ ուրեք քննեալ զորպէսն և զերբն.
այլ Թուխ ինձ ի սկիզբն ծիլ գարու և յետոյ ևս, նախ
յարշաւանս Շահաբասայ, զորմէ ասէ Աւանքել Պատմիչ
(Գ), «Եւ զՔորն Կաղզուանու բնակին» ամայացու-
ցեալ ի գաղթ տանելով զբնակիչսն. և թէ Ճագին ո-
մանք, յետ ոչ բազմոց՝ ըստ այլոց պատմի (Զաքարիա
Սարկաւագի) Թահմազգուլի խանն Երևանոյ ապատա-
կեալ ի Կաղզուան՝ «զամենայն վայրան գերեալ և տե-
ղեաց»։ Յետ գարու միոյ նոյնպէս ապար և համանուն
խանին բռնաւոր Շահն Պարսից՝ Նադիր, ըստ վկայու-
թեան գրեաթէ ականատես կաթողիկոսի Աբրահամա.
Թող զհին ապատակ և զգերութիւն յայլազգեաց՝ որ
առ բազատանեօք և որ գինի. վասն որոյ չեն զարմանք
լինել անդ բազում աւերակաց քննութեան արժանեաց.
այլ ասէին մերձաւորացքն զանգիտել յահէ եղիտեաց գե-
գերելոց ի կողմանան։ Նոյն Ճանապարհորդ (Դէսիե)
նշանակէ ընդ մէջ Արծուտւտ լերին և Գարավանից
գետոց մի ևս Շիքոյտո?, որ անծանօթ է մեզ այլուստ[2]։

42. Յարևելից ցայսմկողմ նշանակեալ ձորակաց խան-
տուտոյ և խաւարձորոյ, կայ ընդարձակագոյնն և գըլ-
խաւոր համօրէն վիճակին և բնիկ Ջորն Կաղզուանայ,
համանուն առնուն, թէպէտ և որ ի վերոյիշեալ պատ-
մըչացդ կոչի Ջոր Կաղզուանայ՝ իմանալի է վասն բուսա-
դակ վիճակին։ Համանուն գետակն որ և Շուտակի կոչի
յետոպէտացի ճանապարհորդաց[3], յայլևայլ լերանց աղբե-
բաց ժողովակեալ և յօրոցեալ՝ իքանէ կարկաչուտակ ի
հիւսիսոյ կողմանէ յԵրասխ, պատեալ գառնաւն յա-
րևելից կուսէ, որ կառուցեալ կայ ի բլրակոյրի 1532 Ձ·
բարձու, իբրու փարախաւոր հեռի յԵրասխայ։ Ի գրիցն
և ի գլխաւորութենէն գուշակի չէն վաղեմի լինել, և
ըստ անուանն կաղազուանն, որպէս գրի ի հին Պատմու-
թեան Ս· Թաթևոյ, կապագի կամ կադեզի ուրումն կամ
խիմք՝ ասան, զոր Թուրքք Գաղզման قاغزمان կոչեն.
ի հին պատմութեան անդ Գադաքացեզ վկայի, և բաւա-
կան բարգաւած, զի ուխտեաց Հարիկ վանայ Թաթևոյ՝
100 վիցկիս և 200 այր. յետ այնր գան ուրեք յիշատակի
ի գիրս, և այն յետ Թ դարու, և երևի ի բազում ապա-
տակութեանց անշքացեալ. վասն որոյ մերս քննիչ Հ·
Ներս· Ստրգիսեան այսպէս անդադրէ. «Կաղզուան, թէ-
» պէտ և ասան Համարի ի գաւառի ասա, այլ ի հնոյ և
» ի նորոյ չունի ինչ արժանաւորս ասկաւաթիս ասելոյն ոչ
» ինչ ընդհատ ի գեղկականաց, և չուկայն իրր քան կըր-
» պակաք ասհմանի. Նորաչէն եկեղեցին անչուք է· և ապ-
» գայինք ասկա, զի բազում գաղթեցան առ Ռուս։ Ա-
» կայն հանդերձ այգու ամենայնիւ անուանի եղեալ է նա
» այգեստանաքն և մեծամեծ պտղաբերք պտղատուծառոց,
» յորոց գործ են ամենևին սահմանակից գաւառքն· Շի-
» րակ և Վանանդ և Բասէն· որոց մասնակարաբ լինի ա-
» գիներաւ և պտղովք, մասնաւորեալ և ինքն նոյնն ցորե-
» նով։ Այգեստանաք և պարտէզք կազդուանոյ զոր ասա-
» ցաք՝ հանդերձ աւանաւն ի բարձր և ի լայնածաւալ դաշ-
» տավայրս կան մեծաւ մասամբ և չորքանակի զգիւղաքա-
» ղաքաւն, մանաւանդ ի հիւսիսոյ նորա որ փորք մի զառ
» ի վայր է. և հարաւակողմեանքն մտ ի սարերաս կան
» բարձրաբերձ տղմաղեխալ լերանց. զաւարտալի են առհաս
» տարակ ամենայն վայրքն, որք տեղւոյն բարձրաբերձմանն
» և չրջահայեաց տեսարանաւ լերանցն և պտղատիպց լայ-
» նածաւալ տարածութեամբք, հանդերձ կանաչագեղ սի-
» զարոյս հարթ յատակօքն՝ մասայագանեն խոպան զա-
» մենայն անչքաբեխն աւանին, զոչխոյժ հիւրոյն վա-
» ռեալ մեծապէս, որ գժուարաւ մեկնի ի ցանկալի վայ-
» բացն։ Հիւսիսային և արևմտեան եզերք կամ ափունք
» որ սահմանն հասանեն այգեացն և պտղատիպց, գարա-
» փոք են, որոց առաջի չառաչմամբ անցանէ Երասխ։
» Թարմ լայնածիգ և ուժիգ ի հիւսիսոյ աւանին յերկուս
» մասունս բաժանէ զայգիս և զպտղաբերս. մի ծայր իր-
» բամին է անդ ուր աւարտի չէն աւանին, և միւսն միշտ
» ցգետն կամ ցեզերս ափանցն զոր ասացաք, այլուստ
» գետակի անցեալ ընդ ձորդ և խառնեալ յԵրասխ,
» չուրջանակի զգետակաւգ լինելով այլ ևս այգեաց ընդ
» մէջ խրամիցն»։ — Թէ հայ բնակչաց Կաղզուանայ
զարգիս աւելի է քան զ'2000. յորս 100 տուն նոր
գաղթականք, և մեծաւ մասամբ պտղապերոյք ի դար-
ման պատրիզաց և ի վաճառ արգեանց նոցին։ — Ոչ
նուազ քան զքաղաքերութիւնն նշանաւոր է ի Կաղզուան
և գաւառն, զոր Թեղեա մարթ իսկ արևմտեան եզր ասել
գերահռչակ աղհանից Կողբաց. բայց այլևայլ երկրաքանա-
կան զանգուածովք խառն երևի. յիկագոյն մասն աղային

1 Koch, Reise in Grusien, etc. II, 450.

2 Դէսիե չգիտէ զանուն ընդ Ախուրգեաց, և համարի տասէն
գնասս քնակել, իբրու զի գտանի ազանգատուրք Եղեխէ։

3 Bluhm, Routen in Türkische Armenien, etc. 358.

'ի ներքոյ սրձաքար ձուլակոյս պղտիրի և գեղին տափ, և 'ի վերոյ սորին տոլերիա զոգակ։ Բուն քարայն Կազգաւանայ 'ի կղզուս քյոբայիի բարակ տագռելաւ՝ 'ի մինակ գոյն կաւի կայ, սեպաձև կառուցիկք ձուլեալ. մէն Քերթ կամ շերտ ապի 1½ կամ 2՝ Քանձր է. կոպիճքն խոշոր, բիւրզակերպ, Ծամածուռ խորանարդ իմն ձևով. իսկ տախտք քարայրին զատուցեալ են յիրերաց կանաչորակ նաւրբ Քերթիւք գոճի։

Առաջին և յաջող յիշատակ Կազգուանայ յանուանէ՝ յետ կիսոյ Թ դարու գտանեմք առ Ասողկոյ, յամի 863. յորում Ջահակ կամ Շահակ որդի Սևադայ Կայսիկ այլազգոյ՝ այլ 'ի մօրէ (Աբուսեակ) Բագրատունոյ, « ամ- » բախտաւոր զօրու..... եկեալ յԱշշարաւնիս գաւառ, » իջանէ յեգերս Երասխոյ 'ի հարաւոյ կուսէ, 'ի տեղի » որ այժմ ասի Քառասունք։ Իսկ մանուկն Աբու- » սպարապետն Հայոց (որդի Աշոտոյ՝ յետոյ Ա. Թագաւորի » Բագրատունեաց) եկեալ 'ի Կազգուան առանէ 40,000 » արամբք՝ ամենայն Հայոց զօրուն, քաջք և մրցողք, » զոյ հասանէ 'ի վերոյ նորա. զրոյր բանակն ցիր և ցան » վայրացն ընկեցեալ, սրախաղիալ և գետավէժ զամե- » նեսեան առնելով. ապա որոյ և անուն տեղւոյն, ըստ » Թուոյ մանկանցն Սերբատաւ, մինչև ցայսօր կոչի Քա- » ռասունք։ Իսկ Ջահապոյ վերստաւն արամբք մնաց- » պարտ պրծեալ՝ անցեալ գնայր ամօթալից »։ Ոչ գիտեմ Թէ լրիւք այժմ պահծալի անուանդ Քառասնից, որոյ վայր յայս է հաւս լինել յառաջն. այլ ոչ յորմէր Թուի ինձ ըստ Թուոյ Քառասնից Սերբատիոյ անուանիլ տեղւոյդ. դիպուածոյն էր կարծել յաղագս Քառասնից նահատակացոյ Ս. Հմայեկոյ եղբօր մեծին Վարդանոյ, զորոյ Նշխարս և զընկերացն՝ որդի Նորա Գրիգոր Մամիկոնեան բերեալ 'ի տեղւոջէ նահատակութեան նոցին՝ 'ի Պարխար լերանց, հանգոյց 'ի լերինս Կապուտոյ, ընդ Խաչին Ս. Նշանէն։ Բայց գրեալ վկայութիւն ոչ անիմ հաւատանութեան, և փափագեալ միամ յայտանութեան վկայաբանութեան Արբոյն, զոր յ'Թ դարու նորագիւտ համաքէր և Հայրն Ակոան Վանանդեցի՝ – Միւս ևս քաջնչան և ազախաւն դէպք պատմին գկղմանց Կազգուանայ, յԼը ՖԱ. դարս, (1099), յորժամ Սէլճուկեանք բանանային 'ի վերոյ երկրիս մերոյ, և էլշլգազի Օրթոք Թուրք առ- պատակէր 'ի կողմանս Աղձոյ. իսկ « Գրիգոր Կուրապա- » զան[1] յաթելիք, եղբայր Տեառն Բարսղի Հայոց կա- » թողիկոսի, գնացեալ 'ի վերոյ Թուրք բանակին, 'ի » գաւառն Աշրնէք, վասն զի էր այր քաջ և հզոր և պա- » տերազմող, գնացեալ զօրօքն իւրովք 'ի գեղն որ ասի » Կաղեզուան, և հասեալ 'ի վերոյ Թուրքին, և պատեր- » բազմաւ հարեալ զնոսա, և սրոք հալածականս, և » զրազուսս 'ի նոցանէ սրով առատակեաց. և գարձաւ, » գնալով 'ի քաղաքն Անի։ (Ալ. ուսող.) յայնժամ մի » ամն 'ի գարանի կայր 'ի Թուրք զօրացն ընդ Ծառով » միով, և գաղտ նետիւ հարեալ զնա 'ի բերանն, և 'ի » սառաւիկ խոցոյն յերկիր անկեալ և առանգեալ զհոգին. » և եղև սաստ մեծ Շիրակայ և ամենայն տանն Հայոց։ » Եւ տարեալ Թագեցին գնա 'ի Կեչառաւս. և Մանու- » չէ (ամիրային Անւոյ) և ամենայն զօր բանակին Հայոց՝ » զկնի գնոյն »։

Նման այսմ գործոյ են և դէպք Ծառաքարայ զօր վերագրոյդ յիշեցաք յառաջս միասոյ Բարսղի եպիսկոպոսի Անւոյ՝ կաթողիկոս կոչեցելոյ. առ որոյ ժամանակաք 'ի Թագաւորութեան վերոյ Թամարայ դչիսայի՝ Զաքարէ և Իւանէ քաջք՝ հանգերձ այլովք Թափեցին և զգաւառն Կազգուանայ յայլազգեաց անտի։

Ի վիճակէն Կազգուանայ Քերևս (և 'ի հռչակաւոր ախթից նորին) յիշին երկու անուանի վարդապետք յամի 1332, Կոստանդին և Յովհաննէս, որք գոան 'ի ժողովն Քոնայ, եւ 'ի վերջ անցելոյ դարուն նշանաւոր եղև յիկեղեցական դէպս ազգիս՝ Զաքարիայ Կազգուանեցի, որ երկար ամս եկաց պատրիարգ Կ. Պոլսի (1772—1799), և մեռաւ յիշխանութենան (մերա 11–22)։

Ի վերջնում պատերազմի Ռուս–Թուրքայ յամի 1877, Ռուք առանց կռուոյ տիրացան Կազգուանայ (6 մայիս), յորում էին յայնժամ 8000 ոգիք, Թուրք և Հայք։

43. Ի հարաւոյ Կազգուանայ և ընդ Ձորաշէնեան 'ի վեր նշանակին գետք Լմիրլէր, Ոստրդ, և վերագոյն ևս հին անունն Մանաւազ, որ սոյ յիշեցուցանել գծագումն Նահապետութեան Որդանեայ և Մանուագեանց, որպէս նշանակեցաք 'ի տեղագրին Բասենոյ, և հաստատել գկարծիս. Հասպ Նմին 'ի առագաս Ընկուզակի լերին նշանակին 'ի քարտս, Աչտիր, Փիճճիկ? որ Թուի փանիկ յիշեալ յԱրտաւազ օրագրի [2], բայց 'ի քարտս Դաւիթանակ գրի անուն գեղջս։ — Գեղիս սոցին և իրր փարախաւ հեռի 'ի Կազգուանայ (ըստ տեղագրութեան աշխարհացոյց քարտեսի) և յայլում գետառորակի՝ Զաքի կամ Զաքիրի գիւղ։

Յայլում արևելագոյն գետառորակի Պուլանըգ կոչեցեալ և միւռ յԷրասխ, նշանակի Աղաղրիւր, այսինքն հանգստաւոր ազբիւր, և ոչ է անճաշ, զի 'ի սահմանակցութեան Քեան Ճակատաց գտանին են տեղիք, յորում հռչակաւոր Աշտհանքն կողոպ։

Ի միջակայմանս Ձորակին Նշանակի Գոլղ գիւիսակ գետ, որ Թուի աւերակ։ — Գետին արևելագոյն ևս գետառաբակ՝ կոչի Ագ–առ, առ որով ամրաւանան լինանակ Աշխատաղ? 'ի հարաւոյ, Քիւռաղաշ? 'ի Հո. Նորին. Նը. Հանակին և աւերակք գիւղոցոյիկ, այլ չէն ոչ. որոյ ոչ միոյն տեղիք այլ և անուանք տագաբերեան կարաճին։

Ա. Նախնիս յիշատակի 'ի Գաբեղեանս գտանի՝ գիւղ մի եւս, այն է Սիւնձեղուն[3] կամ Սիւնձեղնոյ նա և Մնձեղուան անուանեալ, յորմէ էր Յովհաննէս Բ. Երբեմն վանական Թաթիոյ վանից և ապա կաթողիկոս, յերրորդ քառորդի Զ. դարու, վասն որոյ և Գաբեղինացի կոչի. այլ այժմ չէ յայս տեղի գեղջն։

1 Որոյ Վստակոյ. որդւոյ Ապիրատոյ, որդւոյ Հասանոյ Պահլաւունւոյ, որոյ սակաւուք յառաջ ազանեալ էր զգոգիագանման հզօրսն Իշխագեայ. 'ի կողմանս Անւոյ։ — ՄԱՏԹ. ՈՒՌՀ. ՀՀԲ.

2 Ի հատ. 1867, էջ 125. յիշելով գմաւ Մաթեթոսի Տէր Յովհաննէսեանց սարկաւագի յԱշմիածին, ծննդեամբ յայսմ գեղջէ։

3 Մխիթ. Այր. և Գնդ. չիսատոյ նշանակիցէ անուանդ։

Զ

ԱՐՇԱՐՈՒՆԻՔ=ԵՐԱՍԽԱԶՈՐ

ՐՈՇԵՑԱՒ կանխաւ հաւանաբէն իմն համարիլ զարևելեան և զանձկագոյն մասն Երասխաձորոյ՝ յանուն Աշտարունեաց. զի ոչ է մեզ յայտ սահմանս ց'որ վայր ձգեր 'ի հնումն անուն ձորոյդ. զբաւէր զոլշոյն իակ զԿաթնեղէնս՝ որպէս 'ի յետին գաւս, եթէ ոչ. կամ եթէ Գաթնեղանգի՝ յաւել քան զակիզն Դ դարու՝ ց'որ վայր ժառանգէին զերկիրն ընդ արևելս. և պարզաբար ևս ասել, որմէ գաւառի՝ բան քաղաքական տեսչութեան՝ վիճակեալ էր բնական մասնդ այդ Երասխաձորոյ, և գիտիդ կոչէր, Թուի ինձ եթէ յ'Ր դարէ հետէ արքունի սեփականութիւնք էին կողմանցս, և թերևս յանուն Երասխաձորոյ կոչէին Երասխանդունիք, (որիշ 'ի գաւառէն որ 'ի հարաւային Հայս). որպէս և Շիրակ ինքնին գաւառն մեծ, զոր Տրդատ ետ կամաւոյ որդւոյ Պէրոզամատի կաբէնեանն Պահլաւի. և 'ի փախանակել նորա՝ յետ եօթն աւուրց, « Տրդատայ մխիթարել զդլուխ որդւոյն կամաւոյ՝ « զԱՐՇԱՒԻՐ, զինքն փոխանակ ծնողին ահմանելով, ազգ « զնա սիրելով յանուն հօրն, և կարգէ 'ի թիւ նախա« րարութեանց. յաւելու և այլ պարգևս, զքաղաքն Ե« րասխաձոր և զնորին գաւառն մինչև ցկատար Ջորոյն « մեծի... իակ Աշտարի սիրեալ զգաւառն՝ յիւր անունն « անուանէր ԱՇՏԱՐԱՏՈՒՆՔ քանզի յառաջ Երասխա« ձոր կոչիւր »։ Այլ զի արքային Տրդատ յանուն հօր նորա կոչեաց զնախարարութիւնն, 'ի նոյն և ասէին կոչեցաւ ԱՇՏԱՐԱՏՈՒՆՔ, և նշանաւոր եղև ընդ դարս հինգ 'ի Հայս, և արտաքոյ՝ 'ի ապառս կայսերաց, բազում գործովք արութեան՝ 'ի Ցոյնս, յԱսորիս և յԱիփրիկէ. վասն որոյ և նախարարքն կամ Նահապետք՝ թէպէտ կոչէին տէրք Շիրակայ և Աշտարունեաց, այլ Հայրանուն նորաբար միշտ կամաւորական. և ոչ միայն ընդ արևելս և ընդ արևմտեան բնիկ սահմանին իւրեանց (զորինքն ընդ Շիրակ և ընդ Գաթնեղէնս), այլ թուի և ընդ հարաւ տարածեալ կամաւորական տէրմի և իշխանութեան. քանզի երբեմն՝ ըստ ակնհայեցական վարչութեան՝ Բագրեւանդ գաւառ ևս վիճակ էր Կամսարականաց կամ Աշտարունեաց հսկականացն, որում և Շիրակ գլխովին. զի ոչ բոլոր յիշի Շիրակայ հսկականս յաւագին դարս, այլ յետ մահուան Մամիսի Թորենացւոյ ասի բաժանեալ բազմանդամ վիճակին Աշտարունեաց անտի. Այսպէս և միակի տէր կոչի երբեմն երկոցուն գաւառացն, Բագրեւանդայ և Աշտարունեաց, որպէս վարազտիրոց յիւր կոչս ե դարու, Աղոտ որդի Սմբատայ 'ի կէս Զ^ի։

Զպայազատս մեծի նախարարութեանս, որ գրեաթէ հուսկ բնաւին ետուն 'ի շարս գահոյից Հայոց, այլ բարձրագահ քան զյոլովս կարգեցաւ, և գործովք և չինութեամբք յոյժ հռչակեցաւ, արժան համարեցայ յիշել 'ի տեղագրութեան գաւառին Շիրակայ, քանզի այն եղեւ նախկին ազգայատուր կալուած նոցին և ընդարձակագոյն մասն ժառանգութեան. զայս միայն յիշեցից սահմանօք, զի 'ի խառնակութեան ժամանակին՝ յետ նահատակութեան Վարդանանց և ցրուելոյ իշխանացն, ասի Գրիգորի որդւոյ Հմայեկայ եղբօր Մեծին Վարդանայ առնել առ ժամանակ մի զԳԱՒԱՌՆ ՏՐԱԶԱՏԱՆ և զկաղզուան, որպէս և զվանանդ և զԲասենն. այլ 'ի յաջողչն վաշտայ՝ միւսոյ եղբարդւոյն՝ Ներսեհի կամաւորական և եղբարքն կալան զմիաժառանգութիւն իւրեանց, յոր և հաստատեցան արքունի հրամանաւ Պարսից, և պահեցին յաջողութեամբ ցվերջ Ը դարու. յորում ժամանակի նահապետն Բագրատունեաց Աշոտ Մսակեր՝ « զանձագին սպառ զգաւառն Աշ« տարունեաց յազգէն Կամսարականաց, և զարքունիան « 'ի կոգովսէ Աշտարունիս փոխեաց ». յայտ է զի նաւագեալ էր յայնժամ տոհմի հինգհարիւրամեան, զի և 'ի պատմութեան լռէ այնուհետև անուն նորին։ Ընդ Աշտարունեաց՝ իմանալի է և գՇիրակ գնեալ, քանզի որպէս այն էր գլխաւոր վիճակ Կամսարականաց, անդ և

Բագրատունիք հաստատեցին զոտան իւրեանց, վասն որոյ բնիկն Աբշարունիք կամ Երասխաձոր՝ չէր մեծապատիւ ինչ տեղի, և ոչ խնամեալ իրրև այնպիսի. յորմէ ասկս և իշխեաց հանճարեակ ձեռնամուխ լինել Ջահայն այն կայսիկ՝ զորէ վերագոյնդ հառնցաք (լէՀ 54), իբրու փեսայ Բագրատունեանց, կին ունելով յայնմ առհասկ՝ զԱբասեանակ զուստր Մուշեղի. այլ հարեալ հալածեցաւ 'ի ձեռն բնիկ պայազատացն, յորոց կապուիլն յիշխանութենէ և 'ի թագաւորութենէն՝ անդէն մատ գոհն և յայս գաւառս Սկիւթացիքն Ակրուկեանք աւերածուք, յամի 1048, և յետոյ. այլ 'ի սկիզբն ԺԲ դարու 'ի զօրանալ Վրաց՝ Դաւիթ Թագաւոր նոցին, յամի 1119, յայսմ գաւառի չարաչար «եհար զբանակս Թուրքացն, մինչև չհնալ սպացող 'ի բանակս նոցա». այլ յետ սակաւուց զարձեալ բռնացան նոքա, կամ նոցին ժառանգակութեամբ (Շահ-Արմէնի՝ թոռնէ տեառնն) Թիրքաշ՝ որդի Խանէի որդւոյ Աղուղիի՝ որ գրկեալն էր 'ի Թագաւորէն Վրաց՝ Եսա զԱբշարունիս և աւերէր զտիմանս Վրաց (1132). Ցկէս կամ այնր գարու (ԺԲ) Զաքարեանք հաստատեցին և սոա զիշխանութիւն իւրեանց։

44. Այնուհետև գաւառիս ծագիլ յԱբշարայ, որպէս 'ի վերդ տեսաք, պէտպէտս գրի 'ի յետնոց, սպասպելով ըստ տաճմապետին հարկ էր Աբշարունիս կոչել, այլ հնագոյնք միշտ ԱԲԵԱԲՈՒՆԻՍ գրեն. յետնագոյնք Թողեալ երբեմն զառաջինն ը տառ ԱԵԱԲՈՒՆԻՍ գրեն, որպէս Յոհաննէս Կամրջաձորեցի [1]. իսկ յետ այնր յԺԴ դարու 'ի յոգունց ոտանաւորէն իմն Աշորնիք գրի. Թէ կամաս և Թէ վիպական՝ անունք կոչեն և Աբշակունիս, որպէս և Ռոմանդ [2] (Գ. ԹԵ), գուցէ դի և չէնքն որ անդ յիշին և ազգն իսկ գաւառն՝ Աբշակունեաց արքայից սեփականատիրն էր, նաև կամաբակունքն իսկ՝ Աբշակունիք էին 'ի Կաբենեանն Պահլաւէ։ Գրի ուրեք և ԱԲԵՈՒՆԻՔ. Թէ բևս և սխալմամբ կարծեմ գրեալ և ԱԵՈՏԱՆ ՍԻՒՆԻՔ փոխանակ Աղշօրաց, և այլուր ԱԵԱՎՍՐՏԵՍԱՑ ՍԻՒՆԻՔ։ Կոչի դարձեալ և ըստ բնական դրիցն՝ փոխանակ Երասխայ՝ Աշորնեաց Ձոր։

Իսկ ըստ այժմեան քաղաքական վարչութեան՝ մասն մի գաւառիս՝ կազմուանայ վիճակէր, և մասն մի՝ Շօրեկէղի՝ յահեկէ Երասխայ, ցխառնուրդս Ախուրենի. իսկ յայմէն անձկագոյն սահմանն ձորախոյր՝ 'ի Ռուսոց բաժնէ էր և խառն ընդ վիճակաց Ճակատուց գաւառի. երկոքին կազմունք Ախուրենին ստէպ և անտի խառնրդոցն՝ յառաձնձակ գհՀ մի գրէին սակաւութիւ գիւղորայիք, մեծ մասն Ռուսոց վիճակեալ՝ Սիսեանցու կոչեցեալ 'ի Թուրքաց, և Սահակայ երկիր 'ի մերոցս յետին պատմչաց, որպէս Թուխ յանուն Սահաքի Թուրքման իշխեցողի կազմանցս և Ճակատուց, յառաջ արշաւանաց Լենկ-Թիմուրի։ Առաքէլ պատմիչ երկրիցս ևս 'ի յիշելն «յայնկոյս գետոյն Երասխայ», ասէ, զայն կամ զհարաւակողմն իմանալով. (զի ինքն ինչմիանդ յահեկէ և 'ի Հնկոյր), և 'ի միում նուագի սրոշակի ևս «'ի կողմն Կողբոյ», ասէ. այլ այժմ հիւսիսակողմեան գեօղքն յաւէտ Համարին այսմ փոքու գաւառի սեփական, որպէս 'ի տաբրեւդ կարգեցաք։ — Եւ քանզի զանձուկ և զիրար մանս այս արևելեան Երասխաձորոյ՝ կայ մեզ տեղագրել առաւմբ Աբշարունեաց գաւառի, չանիմք ինչ յուցանել նշանաւոր ըստ բնական հանգամանաց երկրին, զոր ընդ մէջ կաղզուանայ և Ախուրեան գետոյ՝ պարագրեն լեռնադաշտք Գարամատաղ կոչեցեալք, սակս մղձաւք հեռից 'ի գետոյն, վասն այնորիկ և արդարև ձորացուցանեն զնա. նոյնպէս և 'ի հարաւոյ աննշան ինչ բարձունք զառուցանէն 'ի ձակատուց կամ 'ի կողբոյ գաւառէն։

45. Ցեկեղեցական տեսչութեան՝ ըստ բախտի գաւառիս կանոնագիրս ուրեք նշանակեալ զեպիսկոպոսունս գաւառիս յ'Ը դար, այսպէս ունելով.

« Լեպիսկոպոսք կամաբական տանն.

« Ի օրդոյն Գրիգորէ՝ Բագրեւանդ և Աբշարունիք՝ միոյ » եպիսկոպոսի վիճակ կարգեալ էին, մինչև ցվախճան » Քերդոզահօրն երանելոյն Մովսէսի եպիսկոպոսի. ապա » զառուցեալ, Աբշարունեաց և տան կամաբականացն՝ » նախ եկաց եպիսկոպոս,

Կնդակ կամ Թնդակ տան		46
Ցովհան		11
Թաթեւ		9
Թովմաս	20 կամ	40
Հաւուկն	11 կամ	16
Թովմաս	10 կամ	16
Մովսէս	10 կամ	15
Ցոյս		1
Թէոփիլոս		36
Մովսէս	13 կամ	12
Ղազար		37
Գրիգորիս		23

» մինչև ց'ձՄԵ Թուականն Նոյոյ տուաբիս լինի այս. յո» բում սրաբզնաւակատիս եկեղեցւոյն Վարդանակեր» տի՝ Գագիկ Կամսարական. և եհաս լար աւետեաց, Թէ » Շուշան Կամսարական գուստր Վահանայ Պատրկին՝ » գխոստովանող անուն Ժառանգեաց վասն Քրիստոսի » Աստուծոյ, չարշարեալ 'ի Թուական Մինչգհառայ — Գրի» գորիս նոյն ևս այլ ամս եօթն »։

Այս Գրիգորիս է որ Քեռեպիսկոպոս յորջորջի և Աբշարունեաց մականուանի, քանզի գրիչ և մեկնիչ Ընթերցուածոց, 'ի խնդրոյ յիշելոյ Վահանայ Կամսարական Պատրկին 'ի կանոնագիրս՝ 'ի ժողովին Դաւնայ առ Ղեբսեսիս յամի 645 յիշատակի և այլ Գրիգոր եպիսկոպոս Աբշարունեաց՝ որ 'ի գաւազանագրիդ պակասէ. իսկ յետ գտցեն յիշին Ցովհաննէս 'ի կէս Ժ Դարու [3],

Թայիկ որ եղեւ կաթողիկոս	965–72
Սահակ	992
Անանիա	1012

Ցետինս այս յարձանագրի ուրեք [4] կոչէ զինքն եպիսկոպոս Աբշարունեաց, Ճակատուց և Աբթարատեան գաւառին. յետ նորա ոչ ևս գտանիմք եպիսկոպոս յանուն գաւառացդ այդոցիկ։ Ուխտանէս Պատմիչ Հակառակ կա-

1 Որոյ դրատոհմ է ստ. մեզ սրինակ Ծագիր։
2 ԵՒս յատկն 'ի Գէ. ԺԲ. Աբշարունիս գրէ։
3 Ստորիկ. Գ. ԳՀ. Ը։
4 Ի Ս. Գէորգ Ակոց, 'ի Հանգաստարանի Բագրատունեաց։

նանագրական բանիցդ ասէ. զի ՚ի Թիւս երեսուն աթոռ-
ընկալ եպիսկոպոսաց՝ զոր Հաւաքի այնպէս կարգեալ ՚ի
Լաւասարչէ, ուրոյն գրին՝ ԺԹ. եպիսկոպոս Բագրեւան-
դայ, ԺԱ. Աշտարունեաց։ Ի սկզբան բաժանման աշխար-
հին Հայոց ընդ երկու ինքնակալութեամբք, յանուկան
բաժնին գլխաւոր՝ Բասենոյ եպիսկոպոսն էր, այլ ՚ի Ժ
դարու զԱշտարունեացն գտանեմք. որպէս զԱհակեայ
յայտնապէս ասէ Ասողիկ (Գ. ԼՐ)։ Նոյն և զԴաւիթի յու-
ցանէ գլուխ կացեալ յաթոռելոյն ՚ի վերայ Վահանայ
կաթողիկոսի (Գ. Ը)։

46. Ա՛ ՚ի Նախնեաց Հայիս տառիս չափ անուանք տե-
ղեաց գտանին հաւանել առ մեզ յԱշտարունեաց գաւառիս,
զոր յայնցանէն զոր ՚ի Գաբեղենս յիշեցաք, և զի երբ-
կոքեան եւս երասխաձորոյ հաւասարակ են, և այժմ յայս-
վից յիշեցելոց անցեալ են տեղիք, ապա կարգեմք ասաս-
նոր զնոսին՝ յանուանէ, և ոչ ըստ գրից՝ զոր անգիտա-
նամք. և մարթ է՝ եթէ զոր ասէիցես տեղագրելիք՝ պատ-
շաճիցին արեւմտեան մասին Երասխաձորոյ, Կէշուան և
Կազդուան վիճակաց՝ զոր կանխեցաք ստորագրել, իբրև
սեփականս Գաբեղենից, և երբեմն հարկ լինի մեզ ընդ
կրունկն գառնալ և անդր համարել զյետագոյսս. վասն
որոյ անմեղադիր լինել ազգիդ ընթերցողաց, մինչև ա-
կանատես քննութեամբ ստուգեսցին երկրացքն և ան-
ցեալք։

Առաջին հետութեամբ, ծանօթութեամբ և առ սրատ-
քինն՝ նշանաւոր պատմական գիրքք տեղի՛ է Արտա-
գերս կամ Բերդն Արտագերից, որ ՚ի մերոյսդ նախ
յիշի ՚ի Բուզանդայ, այլ յատարաց անդստին ՚ի սկզբանէ
փրկչական թուականին. ՚ի Ճառնայՙ Արտάγερα կամ Ἀρτα-
γῆρα կոչմամբ, և ՚ի Լատինոյս՝ Artagera, կամ Artoge-
rassa,[1] և քան զամենայն նոյն կոչեցեալն ՚ի Պատմիչսն (ԺԹ.
ԽՌ) Ἀρτακήκηρα Ἀρταγάρτα. քանզի ՚ի Նուաճել Հաւա-
մայեցւոց զաշխարհս մեր, յերկրորդում ամի փրկչին, Ա-
տոր կամ Ատոմն [2] իշխան կամ պահապան բերդին
զգէմ ունէր, և ոչ ուրեմն մատնեցաւ ՚ի ձեռս նոցա, և
պարիսպքն քանդեցան. այլ ծանրակշիռ տուգանաւք Հա-
ռումոյ. քանզի Գայիոս կեսար՝ սիրելի Թոռն և յոյս Օ-
գոստոսի ախոյեանական, անդ հարեալ ՚ի Հայոց անթըշ-
կելի վիրաւք՝ մեռանէր, ՚ի տուգ մեծ կայսերական տահ-
կելի վիրաւք՝ մեռանէր, ՚ի տուգ մեծ կայսերական տահ-
մին։ Որպէս յայնժամ և մեռ ՚ի Գ դար՝ ՚ի յամրագոյն
բերդսբերից Հայոց էր Արտագերս, համարձեալ գաւառաւն
վիճակեալ կամաւրականաց՝ յարքայէն Տրդատայ. այլ
անարժան Թագաւորի նորա Արշակ Բ վասն ամբարձմանն
և գրից, Թերևս և վասն հոգակալ չինուածոց, հանդերձ
այլովք՝ « չարակենդանի ազահեալ յանձնէ Կամսարականաց,
ազգաս սրտի գաւառս նոցին գաւիճն Կամսարականաց,
յորոց գերծաւ մանուկն Պապեգաբատ, հայր սպարապ-
պայազատացն. և եա արքայավայել յարդարել զանգին.
վասն որոյ իբրև նոր չինութիւն համարեալ՝ ասէ Բուզանդ.
« Թագաւորն Արշակ հրաման տայր յԱշտարունեաց գա-

1 Ամմիանոս Մարկէլլինոս։

2 Ագաթագեղ է անուն հոգեկան, զոր այլազգ եա գրեն Հո-
ռումՙ Ատաս կամ Պաճէս։

3 Լաւթն Ամմիանոս (ԻՀ. ԺՌ) զԲերկաբն գաւառակըչէ. Բուզանդ՝
զՁիկ և զԿաղբէն իշխանս Պարսից. իսկ Խորենացի (Գ. ԼԲ.) զԲեր-

« տառին չինել իւր բերդ մի ամուր, Արտագերս անուն. և
» զգաւառն՝ յանուանէ ՚ի պատրաստութիւն համարեալ
» Թագոյր բերդին. վասն զի կարի ամուր էր բերդն
» այն »։ Վկայէ և Խորենացի (Գ. ԼԲ) « վասն անմատչե-
լի ամրութեանն »։ այլ և ժամանակակից յատին պատմիչն
Ամմիանոս Մարկէլլինոս, որ ըստ երկոցուն մերոցս պատ-
մչաց մանրագոյնս պատմէ զպաշտօնի դէպս պաշար-
ման բերդին ՚ի Պարսից, յետ ըմբռնմանն Արշակայ և
արգելանաց Աիւնեաց բերդին Խաժտառանի. քանզի կին
Նորա Փառանձեմ տղայ մանկտին Պապա և 11,000
արամբք և 6000 կանամբք և արքունի ապրանս՝ անկեալ ա-
պարիսէբ անդր, և ամենայն բռնութիւն և արուեստ բիւ-
բուտուցն Պարսից ոչ բաւէր առնուլ տեղւոյն զամուր
չարքաշառան. յորում ժամանակի և գլխաւորք ՚ի Հայոց
ոչք ՚ի ծառայութեան Պարսից, զոր առաջ Պատմիչն՝
Գողակ Ներքինի նախարար, և Արտաւան պետ զօրաց
կոչէ [3], ախորժեալք ընդ ժամկալութիւն պաշարելոյն՝
գաղտ բանագնաց եղեալ մտին ՚ի ներքս, և գաւառանու-
թեամբ կատարեալ զՊարսիկս, առեալ զԱրտ արքայար-
դին զերծուցին ՚ի դառն կացութ, ուստի և խռատանային
ածել զօրս յօգնութիւն, զնպատակ առեալ զաքին, որք
« ընդ գաղտնի գառն ուրեմն մեքենաւորութեամբ ՚ի բեր-
» դըն մտանէին, ապին քաջալերս տիկնոջն... զի ժա-
» կսկ լինելի բերդին, և մի ձեռս առցէ ՚ի Պարսիկս »։
Այլ ՚ի յաճել ակնկալեալ օգնականացն և ՚ի հարանել
պատերազմի ՚ի ներքս, մինչև՝ ըստ ասելոյ Բուզանդայ՝
որ ըստ օրէ մեռանել հարիւր և երկու հարիւր և հինգ
հարիւր ազգս, և յանդուգն պնդել պաշարեան Պարսից,
« ասկաքն ապրեալք ոչ անասցին միայ հանդերձն Պա-
» պայ, այլ անձնատուրք եղեն՝ ՚ի կամաց և ոչ ՚ի բռնու-
» թենէ »։ զի գան զինեցան բռնագոյն էր հարկ ասոյն և
պատերազմեան [4], « էր եկին, կարան զսիկինն և իջուցին
» ՚ի բերդէն. ելանէին ՚ի բերդն ՚ի վեր զօրավարքն Պար-
» սից, գնէին գաւառս Թագաւորին Հայոց, որ կային
» ՚ի բերդին.... զինն տիս և զինն գիշեր հանակ իջուցին
» զոր գոն ». գրեցին հրով խանդավառեցին. ասկայն վազ
նորոգեցաւ ՚ի Հայոց. զի իբրև զմի յարքունի զօրանիստ
ամրոցաց յիշի յաւուրս Վարդանանց, վերստին թափեալ
՚ի ձեռաց Պարսից և նոցին համախոհից։

Ցիչի և յետ կիսոյ Ը դարու բերդն Արտագերից, ուր
ամրացեալ կայր Մուշեղն Մամիկոնեան որդին Հրահա-
տայ, զոր վերագոյն յիշեցաք հարկանել զԱրտաշիս
յայգեստանն Խոր գեղջ (48)։ Ոչ յիշի այնուհետև ա-
նուն Արտագերից, ոչ չինութիւն, ոչ աւերումն, այլ յե-
տին պատմիչք յիշեն անգամս զբերդն Կասպից, զոր
աշխարհագիրն Վարդան նոյն ասէ լինել ընդ Արտագերից.
բայց գի առ եզիլեալ ընդ Արտագերից առանձինն յիշի
և կապեալ բերդ, (թէպէտ չասի ուրն ոչ միոյն և ոչ մի-
ւսոյն, այլ միոյն իբրև արքունի տեղի), հաւանական թուի
հասս առ հասս լինել, կամ թէ երկուց գոլով ընդհա-

Գրոսին ուրացողսն զվաչան և զՎիրաժան։

4 Բուզանդ զգրաժութիւն ասէ պատեալ մանաւանդ թերդին.
Ամմիանոս զպատեալ զգրականսն ՚ի ատեչ և չերկար պատերազ-
մաց. իսկ Մ. Խորէն. (Գ. ԼԲ) զի « բարկութիւն Աստուծոյ էր ՚ի
վերայ Արշակայ », վասն որոյ ոչ երկայնամտեցին պահապանքն։

Նաւր անուամբ Կապոյտ կոչիլ, և առանձինն միայն՝ Արտագերս. յայս կրթի ըստ իս և բան Ցովհաննու կաթողիկոսի, որ ասէ վասն Սմբատայ Ա. « Երթեալ յամրոցս քաջանձա-
» ւին 'ի Կապուտայ, որ 'ի Ջորն էրասխայ, անդ դարեալ
» դագաղէր, վասն զի անառիկ էր 'ի մարդկանէ ». և այլուր· « Երթեալ զողէր յամրոց վայրս էրասխաձորոյ ». և
յառաջ քան զնա եղիչէ (Ի)· « Թագուհին 'ի միջոց աշ-
» խարհին, մարտ եգեալ կռուէին ընդ մեծ ամուրս կա-
» պոյտ լերինն ». Եւ որպէս այսոցմանց բանք ցուցանեն՝ 'ի լերինս և 'ի քաջանձաւս անդեացն էին բազում բրնական ամրոցք և ևս ամրացեալք յայսուհետէ։ Ժամանակէ այսմ և յետին պատմչաց Կապուտաքար կոչել զմեծ վանան՝ որ անդ յԱրշարունիս չինեցաւ. վկայէ և յաւելն պատմիչն Ամմիանոս վասն Արտագերից՝ լինել 'ի քաջաժայռ լեառնավայրի '։ — Արդ եթէ նոյն և եթէ մեր Նմին՝ Կապոյտ հաշակի ամրութեամբ յամրոցս էրասխաձորոյ 'ի Եղ դարէ և այսր, և ընդ Արտագերից նաւ-
ձեալ վկայի յաւետապահ գնդէն Հայոց յաւուրս վարդա-
նանց. յետ նահատակութեան նոցին պաշարեցին վաս-
կեանք· այլ « որ 'ի ներքս էին՝ քաջութեամբ մարտու-
» եալ հարկանէին զթագուհս 'ի գնդէն Պարսից, և
» զմեացեալսն՝ փախուցանեն 'ի բանակն սրկանէին ». բայց միայն անանց յաւաքմանեացն՝ հաւատացեալ սատ երդմանց ազատելոյն՝ իջին առ նա ընդ Արշնի երիցս, և մատնեցան 'ի գերութիւն։ — Ցետ այնորիկ միայր թերդն 'ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի՝ եղբօրորդւոյն Վարդանայ, որ զհաշակաւոր խալն Ղաւնայ՝ (զոր երա-
նելի տիկինն Շուշանիկ դաւաճ Վարդանայ, մինչ 'ի կա-
պանս էր, առաքեաց առ տոհմայինն), բերեալ 'ի կազ-
մանց Սպերից, պահեաց յամրի անդ յապահովի, ուր մեացեալ տակաւ ժամանակս՝ փախուցեալ 'ի վանանդ։

Առաւել նշանաւոր եղև բերդս այս 'ի սկիզբն Ժ. դարու՝ զժգոհ դիպուք պաշարմանն և առաքինութիւնն մատնու-
Քեան Սմբատայ Ա. Թագաւորի, որոյ անգամ հալածեալ 'ի Ցաւսեփայ և լքեալ յազգայնոցն՝ հաւուկ ապաստանեալ էր յանառս այս ամրոց քաջանձաւեայ, ժամկալեալ տա-
բեկան ժամանակաւք ամենայն հնարից պաշարմանն. քանզի հաւատարիմք իւր « մարդիկ ամրոցին» անձնընտրք
» լեալք, և կարաւթեամբ կշռեալ զնկատմն մեքենայից
» և զենատեիցս՝ 'ի լայնալիճ ազեղանց, և զքարինս 'ի
» պարատակաց, յաւէտ իմն և անհնարին խորհրդաւմն
» 'ի վերոյ մարտիկ զօրացն հատուցանէին։ Եւ վասն
» զի ընդ ձեռամբ Հպատրացւոյն բազումք էին գի-
» նուրեալ 'ի հաւատացելոց Քրիստոսի, զնաս միշտ
» դիպել ոստր ընդդէմ պատերազմի ամրոցին, յիւրան
» խնայելով։ Իսկ զայն ոչիրս տեսեալ արքային Սմբատայ
» և զկարատարքիսանէիցն, որ իրրև մատաղատ իմն գահ-
» ոյս լինէին խորհրդակալք, այնուհետև զմահ մարմնոյն
» նպատակ ինքեան հոգւոյն առաքի գնէր, և անձամբ
» անձին վճիռ հատանել, և փրկութեան այլոց հոգացող
» գտեալ՝ գիր փրկութիւնն անտես արար։ Եւ... յետոյ
» երդման ուխտ յատիկանէն խնդրեալ՝ զէմ եդեալ
» էջս առ նա առնէ, և այնպէս փրկէ առ հատարակ
» զքրիստոսապրոյմ ժողովուրդն », որք յամրոցին և որք արտաքոյ, ի վերոյ սպոյի և միանգամայն սերալի գի-
պուածոյս՝ ծածկել Թաի պատմութեան և մատուցանել զանազն անմահանալի, զի ոչ ևս յիշի 'ի գիրս, և ոչ յա-
միքէ ցարդ յայտնեցաւ տեղի կամ անուն՝ ոչ սորա և ոչ Արտագերից։ Այլ ես կարծեմ եթէ զկէս անուանչանոյս՝ յայտնիցէ Ծանեթ գեղն Գերս կամ Քեաս զոր կանխա-
գոյն անդրապրեցաք 'ի վիճակին Կէշտանայ (48). այն զի իրրև փարատաւս և կիսով ևեթ հետ է 'ի Թորայ՝ յոր յաթանկեցաւն Մուշեղ Մամիկոն՝ եկեալ յԱրտագերից. և մարթ է 'ի հիւսիսոյ գեղջն լինել Ճաղատածոյ հանա-
նատան բերդին, յայժմեան Գաղա տաղ անուանեալ լերինն՝ որք 'ի հիւսիսոյ պարապին զՋորն էրասխայ ասեաս մեղ-
նոք բացագոյն իսկ Կապոյտ բերդն Թաի ինձ հատանէն ատեսակ բերդն Մանահր գաւիսի գրեալ 'ի Ռաս տիսար-
հայոցն, 'ի խաղ մի տղրերականց գետոյն Կաղզուանոյ, զոր և գերմանացի ուղեցոյն Քոխ՝ յանուանէ իսկ կապոյտ գետ լատ և կոչէ, և զժանգակ մի նորին՝ վանք-առ, վասն ատերեալ վանից որ առ նովաս, և անշուշտ կապոյտ-
ագարակ է։ — Ի գալ Ցուսոյ և Հայոց անանց հալածե-
լոց 'ի կայսերէ Թէոդոսեդիոյ՝ յաւագին կէս ժ. դարու, ընդ այլոց երևելի վանորէից՝ չինեցաւ « և վանեցչազարդ
» տեղին՝ որ Կապուտաքարն անուանի, յԱրշարունեաց
» գաւառի »։ Գետակն Կապոյտ յ'ոփոյ ասատք, այսինքն յատագանաձև խոր ձորակէ փոքրիկ հեղեղէ, և ընկղմեալ գետ 'ի վերոյիշեալ վտակէն և այլ վտակ՝ անցեալ ընդ Կաղզուան՝ Թաի յերասխ. Այլ պատուոյ կոչէ զվտակս զոյս ժամանակիս՝ նոյն գերմանացի, իսկ 'ի Ռաւսոյ աշ-
խարհացուցի զուգընթաց գետոյն Կաղզուանոյ և որիշ գետ նշանակի Ագ-չայ անուն։ Նոյն այր զլեառն ընդ մէջ Կապոյտ գետոյ և երասխոյ՝ Գզլ-կիտիք կոչէ. և զլեառն մի ևս ականջ կապուտոյ 'ի հիւսիսային էջս Շահէազ անուցիչ՝ ճիմանաշ։

47. Ճիշտացաք ևս առաջ զմիս զ'եւ ևս հաշակաւոր մինասական գաւառս, զԿամրջաձոր, որոյ անուն ասի իմն կարծել ևս կամրջով սրեմն երասխոյ կամ մանա-
ւանդ միոյ յաժանգակաց նորին չինեալ, զի և Կամրջաց-
ձոր կոչէ զանդին՝ պատմիչն Արիստակէս. և զի ընդ իշ-
խանութեամբ կապուտ Թագաւորին էին անդիքն, Արտաշ այրպայի չինեալ հանարի զայն Կիրակոս Պատմիչ, զոր ա-
ռաջին յիշատակողն Ասողիկ վերագասելով սյլոց՝ ասէ.
« Նախ առաջին մեծահռչակ ասխան Կամրջաձոր 'ի գա-
» ւառին Արշարունեաց, որոյ առաջնորդ կայր Հայր Յով-
» հաննէս, որ հալածեալ յարևմտեան աշխարհէն եգե-
» բացաց գաւառէն... բերեալ ընդ իւր զՀրագին Նշանն
» տէրանական, և ընդ որ անցանէր' բազում գթանելիք
» և նշանք և բժշկութիւնք լինէին 'ի ձեռն պատուական
» խաչին, որպէս և 'ի մերում ժամանակիս այնք մերալք
» տեսաք, զի բազում հիւանդք և ախտաժետք առաջնա-
» ցան. և հանապազ կայ և կատարէ գիւր հրաշագործու-
» թիւնն.... Կանան կարգի ունելով զառիմանագրու-
» թիւնն Ա· Խորոյն... յոր ժողովեալ սրք ճգնազգեացք
» Թուով երեք հարիւր· Եւ զկնի նորա նոյն ասխան առա-

(48) Oppidum muris et viribus validum... Munimentum positum in asperitate montana. — AMMIAN. MARCEL. XXVII. 12.

» Ընդդէմ եղեալ և հաւատաւի կրօնիցն պահպանն այրեաց
» Պօղիկարպաս [1]. և զկնի նորա իմաստասին Սամուէլ՝
» բազմաշնորհ ՚ի գիտութիւնս Գրոց սրբոց և յերգս և
» բաժշտութեանց »: Այս յատկապէս Կամրջաձորեցի
կոչի և գովի, և է իսկ գովելի, թէ ոչ աստուածաբանական
իմաստիւքն, այլ հնոտիքեամբ, չափաւոր և ընտիր շարա-
բանութեամբ, որպէս երևի ՚ի Տօնապատառաց բանեն:
Մերձակից նմին ժամանակաւ և յերկարակեաց լեալ մե-
ռաւ և թաղեցաւ անդ յամի 1092–3, Գէորգ վարդապետ
Թառիճեցի, զորմէ ժամանակակիցն Մատ. Ուռհայեցի
ասէ. « Էր լուսաւորիչ ամենայն Հայոց, և ապրեալ մինչեւ-
» բազում վտակաց և լեզու հրեղէն հրոյն ներկեալ, զի
» լցեալ էր աստուածային շնորհօք, և էր հաւատարեալ
» գիտութեամբն իւրով՝ առաջին աստուածախօս տէր
» վարդապետացն... պանդխտի վարուք կատարեալ ըղ-
» կեանս իւր, և էր ամաց հարիւրից, և թաղեցաւ ՚ի մեծ
» յանապատն ՚ի Կարմնջաձոր, մեծ ՚ի գերեզման Սա-
» մաւելի վարդապետին և ՚ի Թաչկայ, որ էր երաժիշտ ՚ի
» վերոյ ձայնաւոր եղանակսդ. և եղև սուգ ՚ի վերոյ ամե-
» նայն երկիրզաձոյ Աստուծոյ, զի զրկեալ եղեն յայն-
» պիսի լուսաւոր վարդապետէն »: — Ցետ գրեաթէ ութ
հարիւրամեայ անյիշատակութեան՝ առ մեզ հասկնալու
յայտնութիւն լքեալ վանացս, առ Ջոր գիւղիս Սուրմա-
ւոյ, վանն սրոյ և Ջօրաւանք կոչի, ոչ գիտեմ որպիսի
փոստիս. որ եթէ արդարև նոյն իցէ, հարկ է թէ ՚ի Ճա-
կատուց գաւառի եղեալ իցէ Կամրջավանգդ, կամ ցոյն
վայր հարկ է ընդարձակել զԱրշարունիս, որ անհնար և-
բևի, այլ մարթ է իշխանութեան տերանց նորին ձգել
անդր ևս:

Անծանօթք մեզ գրիք՝ յիշատակին «Արշարունիս՝
՚ի նախնեաց, կալոց գիւղ, յորմէ էր Տեառնմագ յա-
ւուրս պատերազմաց Վահանայ Մամիկոնենի, և նահա-
տակեցաւ քաջութեամբ ՚ի Ջաւախիս Հայոց պատե-
բամարտ Պարսից. Քաւ ՚ի տաճկանս Աղթամարեան գա-
ւառի, ուր անկան ՚ի մարտի և երկու քաջ սեպուհք, բայց
զսա ոչ յիշէ ժամանակակից պատմիչն Ղազար. և թաւ
անկեալ ՚ի բառն Պարակին և խոտովանաթար վկայեալ,
վանն սրոյ նշխարք նորին հանգուցան ՚ի Բեռնաւս գիւղ
Շիրակոյ և չինեցաւ եկեղեցի յանուն նորա:

Միւս ևս տէր Եփրեմաւրդ՝ Ագրցկոյս, գաստակերտ
Ամթատայ Խոտովանոցի, զոր չինեաց յաջորին տրձակ-
մանն ՚ի բռնութենէ Աբասայ, յամի 836, «Արշարու-
նեաց գաւառիս և այսպէս անուանեաց, եթէ չիցէ խան-
գարեալ անուանդ, զոր միայն Աստղին յիշէ:

Յայսմ գաւառի և մերձաւոր Փեռապ Քաւ ինձ և
Գազկմնք (Թերևս Գագկաւան), այգեձէս, որ յարձանի
միւսմ Թէոդոսիոյ եկեղեցւոյ Ս. Սարգսի՝ յիշի տուեալ ՚ի
ժառանգութիւն վանացն Տեկորոյ, յորդւոց Լազաւս ա-
բուաին, որք գրեն՝ կատեցեալ յամի 1033, « տալ զմեր
» արկեալ էգին որ ՚ի Գագկաւան՝ յեզերն Երասխայ՝
» ՚ի վանքս »:

ԵՐՈՒԱԶԴԱՑ ԳԱՒԱՌ· = ՍԱՀԱՔՈՒ ԵՐԿԻՐ

48. Ահեղեան մասն Երասխաձորոյ՝ ՚ի տեղագրելացս
ցարդ վայրաց մինչև յընդարձակել հովտին ՚ի տահմանս
Սաբանաց, և յատկ ձախակողմեան կամ հիւսիսային
անձուկ ձորերքն՝ կոչին (որպէս ՚ի սկզբան տացաք)
Սահաձոյ երկիրք, ՚ի վերջոյ ԺԴ գաւառ և այսր, և
գետոց սակաւս ունին, բայց այժմեան իմացութեամբ. զի
ըստ առաջնոյն՝ գոյր և ՚ի հարաւակողմն գետոյն մասն երկ-
կրին Սահաթոյ: Այդ սակաւարանակ գետոցդն, յարևմը-
տից սկսեալ՝ ՚ի հիւսիսոյ խառնըրդոյ Ջաղարան վտակի
յԵրասխ, (զոր տահմանաժէղ համարիմք Կաղզուանայ և
Ճակատուց), և յաջմէն Ախուրենի՝ են. Գառակիւնի վի-
րին և Սաորին, որպէս նշանակին յոյժաբհաստեցս, Ցալ-
չար, Գարագալ, Սագանձա, Աղտալը, Թեփէպաշի, Ար-
տաւար ?, Ճորխոր կամ Ջրրտխոյս, Հիւսէինքենտ, Հէյիմ-
չան և խոյի դիշդոր յարևմտեան անկեան խառնըրդոյ
Ախուրենի յԵրասխ, ուր և Գզըլբէփէ, զորմէ ընդ հառ մի-
ցին քանք: Իսկ յարևելից և յահնկէ Ախուրենի՝ Չամի
պայրաղը, յարմըկան անդ խառնըրդոյն, մինչ ևս թէ-
փէ-պաշի, Թէրպէկիի, Հիսար, Շամվարտան:

Կացմուած գետոյդ ձորերքս այսորիկ Երասխայ՝ ՚ի
հասարակի կրանիթ է և խոտ ՚ի խոտ նատիք. ՚ի նմին
գանգուածոյ կուտակեալ է լայնանիստ և ափափուկ բլուրն
այն Գզըլբէփէ՝ յարևմտեան անկեան խառնըրդոյդ Ա-
խուրենի յԵրասխ. զոր վայր երթալն նկատեալ միակ բլու-
նակոյն ՚ի չարս թագաւորաց մերոց Արշակունեաց, այն է
Երուանդ Բ, ընտրեաց և կառոյց քաղաք և ամրոց յիւր
անուն ԵՐՈՒԱԶԴԱՑՑ [2], զորոյ զպատճառս և զձև չինու-
թեան այսպէս ստորագրէ Խորենացի (Բ. ւԽ). « Յաւուրս
» որս փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյն.
» քանզի էր հեռացեալ գետն Երասխ, և յերկարել ձմե-
» րայնոյն, և ՚ի դառնանալ հնձմանէ հիւսիսոյ՝ պատա-
» ճեալ ձուլեալ վտակն, ոչ ուսանէք արբուցանել բուս-
» կան թագաւորականին գտանէր տեղւոյ: Ընդ որ նե-
» ղեալ երուանդայ, նաև ամրագունի ևս տեղւոյ եղեալ
» ՚ի խնդիր, փոխէ զարքունական յարևմտեաս կոյս՝ ՚ի քա-
» րակառ մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ ընդ-
» գէմ Ախուրենան հասի գետ: Պարագէ զբլուրն, և ՚ի
» ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կրա-
» ծեալ զքարինան մինչև յատակս բլրոյն հաւասար գե-
» տոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ՚ի փորատէն, յըմ-
» պեղեալ պատրաստութիւն: Եւ զմիջնաբերդին ամրացու-
» ցանէր բարձր պատրաստ, և դրունս պղնձիս կանգնէր ՚ի
» միջոցի պատրսին, և ելանելիս երկաթիս ՚ի ներքուստ
» ՚ի վեր մինչև ցդրանն. և ՚ի նմա որոգայթս իմն ծածու-
» կըս ընդ մէջ ատիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ թէ ոք

[1] Ցէրի սա յամին 966, ՚ի ժողովի Անոյ, յորում ընկէրկէ արարին
զվաճան կաթողիկոս:

[2] Ներկայացաւէս յայսմ կոչման էր Երասխագաւառ, զի յընդ-
արձակել սրինակի ազխարհագրութեան խորենացւոյ որպիսի ասի
վասն Ախուրեան գետոյ անցանել Արևելս կուսէ Մբենոյ և Երասխ-
գաւառ քաղաքի:

» գաղտ եւանելով դաւել կամիցի զարքայն։ Եւ էր, ասէն, » երկդիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորացն արքունի » և ամենայն եղեւմեից հանապարհ տուընկինացին, իսկ » միւսն գիչերացին և մարդադաւաց »։ Այլ այս ամենայն ամրութիւնք և մեքենայք ոչ բաւեցին զերծուցանել զնա ինքն Երուանդ՝ 'ի ձեռաց օրինաւոր պապազաւի Թագին՝ Արտաչիսի Բ, որ առաջնորդութեամբ Աքրոպաչն Սմբատայ՝ նախ հարեալ զրանակ բանաւորին յԵրուանդոպանն կոչեցեալ տեղւոջ, հալածական վարեաց զնա 'ի քաղաք իւր։ և » Սմբատայ գիչերոյն զհետ Երուանդայ եկեալ՝ » տակաւ վաչականաւ, զդուռն քաղաքին պահէր մինչև » 'ի գայն Արտաչիսի և զորացն առնելոյն։ Եւ 'ի մար- » տընելոյ քաջացն ընդ ամրոցին, անձնատուրք եղեն մար- » զիկ ամրոցին, և բացին զդուռն քաղաքին։ Իսկ մի ոմն » 'ի զինաւորացն մոռացեալ նշոյր վազերք զդէմսին Երուան- » դայ, և զգրուելոյ զոյիցն 'ի յատակս տանն։ և այսպիսի » Հնարամտի վախճանեցաւ, կալեալ զիագաւորութիւնն » ամս քսան։ Բայց Արտաչիսի յիչեալ՝ թէ խաղնուած » արշակունեաց է Երուանդ, հրամայէ զնի նորա թաղել » մեհարձանաց »։ Յետ չինեալեան Արտաչատայ՝ անդր փոխադրեաց Արտաչէս զարքունի վայելչութիւնան Երուանդալատի, հանդերձ կարեւոր բնակչաւք, յորս և Հրեայք բազումք։

Յայս է թէ անդիս այս անձկավոյր այժմ Գղըլթէփէ կոչեցեալ՝ միայն բերդ և կիւղրան էր Երուանդաշատ քաղաքի, այլ արուարձանքն կամ բնակութիւն քաղաքացոց սփռեալ էին 'ի միւս և կողմն՝ յարեւելեան անկեան խառնըրդոց գետոցն, ուր այժմ կոյ գետոյն Հաճի Պայրամի, իբր 75 Պարսիկ տամբք. ըստ որժանի Թագաւորանիստ մայրաքաղաք լինելոյ՝ կարի ընդարձակ և բազմաբնակ լեալ 'ի հնումն. յոր սակս Քաղաք մեծ կոչէ զայն Բուզանդ՝ նաև յետ երից դարուց, յորում Ժամանակի չհաւուն հազար երդ միայն գերի վարեցան անտի 'ի Պարսից, եթէ չիցէ վրիպակ 'ի Թուիդ։ — Զայս քա-



22. Երուանդաշատ.

զաք հանդերձ ոյլովք զաւառակերտաք Երուանդայ և համարձեն նահանգաւն և Երասխաձորով, իբրև յարքունի սեփականութենէ պարգեւեաց Տրդատ՝ Արշաւիր որդւոյ Կամսարայ, և եղև այնուհետև Քաղաք ստացուի Կամսարականաց. զոր տա վայր մի ազատեալ՝ յարքունեաց գրաւեաց Արշակ Բ, այլ ոչ ընդելոյր վայելեաց. ինքն գերեցաւ, և քաղաքն յատար և յաւեր մնանեցաւ 'ի հրամանէ հակառակորդի իւրոյ Շապհոյ Պարսից արքայի. և յայնժամ ըստ վերոյգրեալ ասից Բուզանդայ՝ « խաղացաւ » ցանէքեան անտի երդս քսան հազար Հոյ և երդս երեսուն

» հազար Հրեայ [1], և գերազքն 'ի հիմանց տապալեալ ըն- » դել յատակէին »։ Հաւանելի է յայնմ ժամանակէ հետէ ասել մեալ բազմաթուեաց բերդին, զի ոչ ևս յիշի ընդ այլ ամուրս և զօրանիստս Հայոց. տակայն քաղաքն վերընշին չինեցաւ և եկաց որպէս յատակն ասառն Կամսարականաց ց'Ը դար, նոր անուամբ Մարմէտ [2], Ծագեալ 'ի Մար-առատ պարսիկ ձայնէ, որպէս հրամայեացն գոչել Աքաչէս՝ 'ի հասանելն 'ի դուռն քաղաքին, բաբելով զԵրուանդ զի Մար կոչէր զնա, և արդ իմայուցանէր թէ նոյն Մարն այն. յայս անուն երկիցս յիշէ Անանիա Շիրա-

1 Մեծ յոյժ թուոմբերն Հրէից գոլթինալ կամաւ կամ քանի ածեալ երեք յԱղատաս Հայոց, զի նոքա յԱրմատիր էին, և անտի փոխեաց զնոսա Երուանդ յիւր քաղաքն. իսկ Աքաչէս փոխադրեաց յԱքաչատա. ոմանք Ասորւոցդ գտանեալ երեսին ամենեցուն յոյժ, թէ՝ նոքա հանդերձ նկուղ յաբեղցիւղ 'ի նոսին։

2 Ի պատմութենան պատերազմի Արտաչխի և Երուանդայ. Խոբենացի (Բ. ԽԵ) առնէ յիչելով զքաղաք և զգաւառակերտ ասորա չիմի արկանէ, և Խուիցյանէ զԵրուանդաշատիս կոչել Մարմէտ, որպէս խնամոց և մեծ խնդիրեան. այլ զի ոտանէն կամարաձև-

նաց Երուանդաշատ էր, և ոտ էր քաղաք, և զի Անանիա Շիրակացի գոտանան նոցին Մարմէտ կոչէ, հաւանելով իմ նիմէ Երուանդաշատ ինքն է Մարմէտ. այն զի ոմն 'ի դէպ էր' իբր 'ի քան սիմոտ Երուանդայ' ազգագրիկ գրուռն. Մոլ ոմոտ, քան 'ի գաւառակերտն, որ զրասանաց տեղի հնի Երուանդ։ — Իսկ քանք Անանիայի այս հն.

[1] Նա 'ի Մարմէտ էր, յոտանեի կամարաձևանաց, և երբեմն յիչէր " գետոյն, որում Աքաչէսեան կոչեն, տեսի Երասխ Հիանց " ։ — Պարս. Ձեռ. յայլում տառիճ տան. [2] Լոկ (Ձեռին մի) մեծ կոլոն 'ի Մարմէտ' 'ի գետ Երասխ " և այլն։

կացի՝ ի համարգահականան. բայց յաճախ ևս ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ ՔԱՂԱՔ կոչի՝ ի նմին իսկ ի Խորենացւոյ (Բ. ԽՁ. ԽԸ. Գ.) և յայլոց. և վասն բնաթեան և գրից ամրոցին՝ այլք ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ կոչեն զնոյն։ Մարմէտ անուամբ յիշի յաթաբան Բագնայրի. ՝ի սկիզբն ԺԳ. դարու յամի 1209 Խաչերես անի Լաւեցի որդի Աբրահամու շնորհէ վանաց Ս. Աստուածածնի զոյգի իւր. և անի Սարգիս ՝ի մերձաւոր ամս՝ գիւր « այգին որ ՝ի Մարմէտ՝ ՝ի վերայ Երասխայ » և յաթաբան Մարմաչինի՝ յամի 1215, այլ այգիք շնորհելոյ վանացն ՝ի Գրիգորէ Աղուզամրենց յարքեպիսկոպոսէ Անւոյ։ — Երբ խոպան անշքեցաւ քաղաքս այս՝ ոչ գիտեմ, այլ թէ ՝ի յետին դարս, ՝ի ժամանակի պատերազմաց Թուրքաց և Պարսից։

Առաջին խնամով քննող վայրացս Յէրթոլիացւոց՝ Տիպաւս Հելուետ, յամի 1834, յ՚17 մարտի, (որ չիմոթէ միայն զանուանեն՝ Երուանդակերտ կոչելով զաս և Ներ-Հակաբատ զվիան Երուանդաշատ), չնայ ինչ ասէ յատեղեակաց ամրոցին, զորոյ և զպատկեր ընծայէ, բայց հաստատ ինչ պարագայ, նորանէ, իմն կատուցելոց եռաշար կարգաւ կոփածոյ կարմիր քարանց և միջոցաս խառնարդ սեաւ քարամբք զուզակի, յորոց միջի երեք բացուած գետնափ՝ ընդ որ իջանէին առնուլ ջուր Երասխայ՝ մոտելոյ ընդ ստորերկրեայ անցս։ Աստանօր արկեալ էր և կամուրջ ՝ի վերայ Երասխայ, որոյ ՁՏան միայն չորք մոյթք խարխափելոք ՝ի կարմիր կրաքարանց. և ՝ի գլուխ կամրջոյն հետք գետզերեայ բնակարանաց։ Կից ՝ի քարաբլուր բերդին և մերձ ՝ի քարահատս երկանի՝ կոյ այլ բլրակ, յորում գերեզմանք անապատք ՝ի սեաւ զուզակէ[1], ուր և բազմախազ գրաւագիրք ստացանաքար մի, վեց սանաչափ յերկայնութիւն, հանդիպատ ուրուն Մարտիրոսի, յամի 1424, յորմէ և գուշակի ցայնժամ հայրապետակ լինել սեզոյն. որոյ Ձեռագրաւք հոգւոկերպ որոյ ընդարձակել ձգին ցՄխաբեան գետ, ընդ որոյ հատ էանց ուղևորն. զոր ոչ միայն յոյժ սրընթաց ասէ անդ, այլ գժուարին և զհնձան, մեծամեծ հրաբղխեալ քարամբք. ասկայն գրաւեալ հատանցն յոգւոյ արկեալ բնակչաց գեղջն (Հատի Պայրամլը) ջրատուցս յոլովս հաստատեալ են անդանօր։ Են նորա և պարսէզք և այգիք բարեբուսիք. քանզի և պահանջատ Պաղատ զօրականի Ռուսաց հաստատեալ էր անդ, սահմանաւորս գոլով յոյնժամ բաժնի Ռուսաց և Թուրքաց։ — Բէր Բարդըր անգղիացի որ յամի 1829 (31 հնկտ.) գիշերօթեալ ՝ի գեղջս, յոյժ նկարագիր գիրս բերաց և ձորահովտաց ասէ լինել ՝ի խորի անգ կցուածոյ գետոց, և ՝ի գեղեցկագունի տեղեան զգիւղն ՝ի Թաւուսս նշենեաց և արքակաղնեաց, յորոց ականակիս ջրոց խորաձոր Ախալենի, ուր քաղցր յոյժ Թուեցաւ նմա և ընկերացն՝ հանդիսատ գիշերոյն։ Ի մերոց ունի ընկոյզ և ծիրան, և այլս. այլ գիտաւոր բերք կոզմանցս են բամբակ, ցորեան և բրինձ։ — Շահխաթանեանն՝ ՝ի վերոյ ՝ի հիւսիսոյ այժմ բնակարանաց գեղջն յիշէ և լքեալ հին բնակարանս, յորոց միջի և ամրոց մի ուրեքակ այլ կիսականգուն բրգաձև, ունելով յարևմտեան հակատսն արձանագիր հայերէն, զոր վասն բարեբեթեան գրիցն և կիսեզծ տառիցն չկարաց ընթեռնուլ։ Թերևս այս իսկ է կամ այլ ՝ի նմին չինուածի ընդօրինակեալ ՝ի Գերմանացի պատկերահանէ, Թուականաւ 1201 ամի (կամ 1210) հակիրճ յիշատակ Կոստերի ուրուն, նորանէ տառիւք։ Յարևելից նորին քարընկէցիս հեռի կոյ կիսաւեր մատուռն փոքր կոթմրապար կոփածոյ, և յորմն հիւսիսային ՝ի ներքուստ արձանագիրս այս.

« ԹՎ. ՈԿԷ. Շնորհիւն ամենակալին Քրիստոսի Տեառն Աստուծոյ այս մեր դիր յիշատակի է վասն երկ(ար կենդան)ութեան մեծ պարոնին մերոյ Շահնշահի. Եւ Սարգիս որդի Գրիգոր աւագերէց քահանայի չինեցի զիմ հայրենի զատրը Աստուածածին Էկեղեցիս... ի հիմանէ մինչեւ ի կատարումն եհաս յիմոյ արդեանց եւ որդւո իմո Գորգիանն եւ որդոյ նորա Սարքսի. որ չկայ այլ որ հակառ ոչ ի մերոց եւ ոչ յաւտարաց. եւ եդի լուծ ի վերա սպասաւորաց սորա որ ի տարին Գ աւր ժամ կատարեն ինձ զՅայտնութիւնն զԱւագ եւ շարաթին եւ ըՁատիկն. որ զգրեալս առնէ աւրհնեալն Աստուածոյ եւ որ խափանէ գասի ի Տեառնէ »։

Աստաքատա ՝ի հիւսիսային արմն կոյ արձանագիրս 1299 ամի.

« ՁԹԸ. կամաւքս Աստուծոյ Բեստաին հրամանաւն արձանագիր եղեւ որ զՁիթին հարին ի տուրս Աստուածածինս տան անխափան. եթէ որ հակառակ կա բանիս մի առցէ զիմոզութիւն ի Քրիստոսէ. Կատարիչքն աւրհնին Աստուծոյ. Ամիրսթեանն Պարոն Շահն...

[1] Խորհրդաւէտ ասասանար հանապարհագիրն. « Le temps, les « guerres, les tremblements de terre, ont tout ravagé, nivelé « en Arménie; les tombeaux seuls sont restés intacts, et bravent l'oubli ». Իսկ Քէ Ա պղտիկ Ասիոյն անհգէ։

Ի սմին իսկ կարծեմ մատան յորմէ հարաւային է արձանս (Թիւ. 25) ձեւագրեալ ՚ի հարաւոյ գերեզմանացի նը-

կարչէ (Գէորգեր) Քէպեան յանգիտակէ մերոյ լեզուս, զոր և ընդօրինակեմք ՚ի դիւրութիւն ընթերցանելոց.

Ի Թուա. ՈՃԵ եւ ի թագաւորութեան Լատյային յամիր սպասալարութեան—անն Ջաբարէի եւ որդւոյ իւրոյ Շահնշահի եւ եղբաւր իւրոյ Յով—անէ նեսի Հայր Սամուէլ եւ այլ մի—արանքս չիներեցաք զնկեղեցիս վասն յիրկար կենդան—ութեան Պատրոնացս մերոց ի յիշատակ հոգւոց մերոց եւ—ծնող զաց մերոց. որք երկրպագէք մեզ յաղաւթս յիշեսջիք։

Ի նոյն կողմանս գտանի և մահարձան այս կանգնեալ յամի 1425, ՚ի յիշատակ քահանայի միոց, որպէս կարծեմ ՚ի յետին տառէ արձանագրին, որոյ հետեւորդ բանք խնդրելի են ՚ի կատ արձանին իսկ ար տեսանիդ՝ ասէ.

ԹՎ· ՊՀԴ· Այս է հանգիստ Տէտուն։

49. Ի գէպ և վայելուչ է առ երուանդաշատի կարգել և զծանօթն ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏԵՑ զգեղեցիկ զուգակից անգիտաց հեղինակի նոցին, որպէս և Պատմիչն (Թորենացի) առանց հչդրտելոյ զդիր սորին, արտաքոյ պատմականն ոճոյ՝ ազատաբար իմն ստորագրէ գՀէնն, գուցէ ՚ի վիպասանութեանց Արտաչէսի վերառեալ, այսպէս ունելով բանին. « Քաղցր է ինձ » ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուան» գակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ, » գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Ռանգի գմիջոց » հովին մեծի ընդ մարդկութեամբ և պայծառ չի» նաւածովք, լաւաւոր որպէս ական բիր. իսկ շուրջ » զմարգութեամբն՝ ծաղկոցաց և հատարանաց կազ» մութիւն, որպէս շուրջ զրրոցն զոյլ բոլորակութիւն » ական։ Իսկ գրագմութիւն այգեստանոյ, իբր զար» ուեստաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսուածին » կազմանն գիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կա» պից յանից գարեւանդաց Համեմատ։ Իսկ ՚ի հարա» ւոյ հարթութիւն գաշտաց, ծնօթից պտղութեանն » գեղեցկութիւն. իսկ գետն բերանացեալ գարա» ւանդաք ափանցն՝ զերկիրերթիան նշանակէ շրթու» նըս։ Եւ այսպիսի գեղեցկութեան գիր՝ անգթելի » իմն գազես ՚ի բարձրաւանդակ թագաւորանիստն » գհայեցուածան ունի. և արգարև բերրի և թագաւո» րական գաստակերտն »։

Որպէս ՚ի նկարագրէգ քաղուածոյս երևի, երուանդակերտ հռետորեալ էր գեղեցկութեամբ և ոչ մարութեամբ, վասն որոյ և գիւրաթուռամ եղև գեղեցիկն քան զՀզօրն, և բարձաւ նշան նորին, զի ոչ ևս յիշի ՚ի պատմութեան, և յայն ասկս ընդ երկրայութեամբ անկեալ է տեղին. գորմէ Թորենացի այսչափ տայ գուշակել ՚ի նկարագրին, եթէ մերձ էր ՚ի քաղաքն և յերասս, ՚ի հարաւոյ սորին անելով զդաչտագեաձին, և ՚ի հիւսիսոյ՝ գարեւանդս, և շուրջ բնակութիւնս և այգեստանս։ Ասացեալ Պատմիչ միայն յիշէ (գ) գտեղիս զայս և ասէ. « Երուանդակերտն՝ որ այժմ ասի Աղջաղալայ ». քան զնմանէ և Բաղրամ յաղաթարհագրութեան, և Գէորգ յՕմանեան պատմութեան. յայտ է թէ




23. Մահարձան յերուանդաշատ.

չէ այս Աղջաղալայ բերդն հանանուն վիճակին, և ոչ միւս գեօղն հպագոյն ՚ի Կէչուան. զի կարի հեռի են ոտքս յերասոյ, և ոչ ունին գհայեցուածն ՚ի թագաւորանիստն. և զի յիշեալ Ագճագալէ երևի բերդ ամուր լինել, իսկ և

բուանգակերտ չէր այնպիսի։ Զարդին, սնանք փոխանակ Աքճագալէի՝ Գաբագայի կոչեն և համարին զայն՝ որ ի հարաւոյ կող Սիւրմէլիի յելից կողքոյ, հեռագոյն և յաջմէ եկեսիոյ. այլ ինձ հեռի թուի և այդ տեղի և արուագոյ իսկ ընկի եկեսիոյ. հաւանական՝ Հէրեւտոյի ճանապարհագրին նշանակեալն է [1], հուպ ի քաղաքն Եբուանգոյ, յահեկէ, այսինքն յելից Ախուրենի, ի հարաւոյ Հաճի Պայրամլուի, և սակաւ հեռի ի նմանէ, կամ ընդ մէջ նորա և խարպէկլի գեղջ, ուր յընդարձակ ախարհացուցի Ուռւսոց նշանակի Գրքոյ գոյա տեղի. և աւագագրութիւնն իսկ զոր ասէն՝ համաձայնի Թորնեացոյն. քանզի յարևելեան անկեան անդ գեւտակցացն գը-

նէ մեծաւարած ուերակս միմեանսյսի սեռեալ ընդ արեւելս ի վերոյ բարձրաւանդակ գաշտակի առ Եբուանգոյ, (որ ի գէպ գոյ ի հարաւոյ՝ հարթութեան գաշտացն Թորնեացոյն), ունելով ի հիւսիսոյ երկար շարս չերտաձև կաւուտ բլրոյ՝ յորոյ վերոյ հասուածք զոզակի. և այս ի գէպ գոյ հիւսիսային կոյսանն կարակնաձև [2] դրից, և յոնակերպն դարևանդացս Աբդ գի առ հինան յետ չինութեան Երուանդակերտի ոչ ևս յիշի անուն նորա, և առ նորս ոչ Երուանդաւան, ես հաւանեալ եմ եթէ ամենայն մնացորդքն որ ի Հաճի Պայրամլու և որ ի հարաւոյ նորին, միոյ մեծի քաղաքի մասն են, և նոյն իսկն Դաւանակերտն՝ մասն ևեթ է համարելի Քաղաքին Երուանդայ, որ միոյնկամ



24. Նշխարք Երուանդակերտի.

բացն և գկարևոր չինուածս կառոյց յարևմտեան անկեան գետակցացն, և յարևելակողմն զընակարանս մարդկութեանն, որ տակաւ առեալ՝ ի կէս անդ Դ դարու առաւելոյր քան զ50, 000 երդ։ —ի գերբուխս ասերակացն՝ որոշեն երկու հնկզեցիք հիմնատաւակք ի սահմանութենէ երկրի, առ որով և հնագ փողոցաց. այլ յարևելից կողմն նորն ի սահմանս հասանաց գտուցին՝ սեռեալ կան գերեզմանք բազումք պէսպէս ձևով և անեղծ մնացեալք. չատք յայնցանէ մեծամեծ տապանաքարերինք են տափակք կամ

կանգունք ի սնու հրապոյխ քարէ. ի միումն գրեալ է « Ի Թվ. ՉԽԱ (1292) էս Թաչատուր կանգնեցի զիաչս բարեխաչս առ Աստուած վասն իմ եւ հոգւոյ իմոց »[3].

Եթէ արդարև զայս տեղի Ծանեան և վերոյիշեալքն յետին պատմիչք մեր՝ Երուանդակերտ, ապա ի լըս կիպրն Ֆ½ գաւս Աքճագալ կոչէր, և ունէր ինչ տմրոց, և չէն մեծ. զի ոչ վայրապար ասէ Առաքել եկեալ անդր գԵսահաքան, ի լսելն գհամբաւ գաւառին Ձէլայողլի Սինան փաշայի սպարապետի Օսմանեանոց, և անդ յայտնել

1 Շփոթելով գանան, որպէս վերագոյն ազգեցաք, այլ ոչ սրչափ Յակոբ Դաւեան՝ որ գԵրեան քաղաք համարի Երուանդայաս։

2 Յորինակի մեում գրէ. Հիւսիսային կողմն Նկարագիր։

3 Թարգմանեցաս արձանս ի փառն Թարգմանութենէ։

խորհրդակցացն զոր » առնէր ՚ի մոի, զքեզն ոգոյն քրիս-
տանէից և զաւերեցն աշխարհին Հայոց » . զնոյն յայտնեաց
կեղծաւորաբար և աւազակ Հայոց, « որոց գլխաւորի ա-
նունն էր Տէր Յովանէս, որ պերճական մականբ ամ
անուանէին Աղա Տէրտէր. և նոքա ծանեան զդաւաճա-
նեալ նենգութիւնն » , այլ ոչ կարացին զերծանել. զի
մինչ գեռ ևս անդ նստէր Շահաթաս՝ սկսան վաթել զՀայս
՚ի Պարսս, և ՚ի հասանել զօրացն Թուրքաց ՚ի Կարս, ա-
պա մեկնեցան և ինքն գնաց դարձականին, իսկ զաւգիս
այս Աղճագալէ՝ յաւուրսդոյն նուաճեալ էր ՚ի ձեռն Ա-
միրգունայ խանի կուսակալին Երևանայ, որպէս ասէ
Պատմիչն Թուրքաց, պատերամբք և ահաբեկով չրկակա-
յիցն վայրաց, և վարելով զՀայ բնակիչն ըստ վերոյգրելո-
ցըն, և զքեզնեան-սիկի՝ վերակացու կոչմանցն՝ կալեալ ա-
ռաքեալ առ Շահաթաս, իսկ սա ՚ի բերան հրամանաց ե-
գեալ գնա՝ առաջի բերդին Երևանայ՝ մանրակատար պարս

Փարամխառ կամ Ժամուռ հեռի ՚ի Հաճի Պայրամլը գեղ-
ջէ ՚ի Հա. Ե. Նորին և յարեւելագոյն մասին Ախուրեան
գետոյ՝ ուրանօր արմատն իմն գտնէ, կոյ սրատաքուստ,
այսինքն յահեակ գետափին՝ Աշրիսլխատ գիւղ փոքր,
ուր պահանջիտ Յատաց էր (Ղազարեայ) ։ Ի Հա. Նորին
նոյնպան և ուխտի հեռագոյն, ուր տանի քարուտ ճանա-
պարհ գժուարակոխ, կոյ Մխրզա-խան տեղի և անցք
ընդ հուն Ախուրեան գետոյ, որ և համարի սպատաւած
Սահաթայ երկրին։

Յայս կողմանս՝ ուր ընդարձակագոյն է Ձորաձովիտ Ե-
րասխոյ քան յաղկոյնն Ախուրենի, թէպ եղեալ և
Աւտառն Ծննդոց, միւս ևս կազմած բազմայարգար
բանաւորին Երուանդայ, զորմէ այսպէս գրէ Խորենացի,
(Բ. ԽԱ)· « Տնկէ և մայրի մեծ ՚ի հիւսիսոյ կողմանէ գե-
» ղոյն, և որմունք ամրացուցանէ· արգելով ՚ի ներքս այ-
» ծեմունս երազանս և գեղանց և գեղջերաւոյ ազգ, և
» ցեաս և վարազս· որք ՚ի բազմութիւն աճեցեալ լցին
» զանտառն, որոյ սրտիանայր թագաւորն յատուս
» սրոց » ։ — Անանիա Շիրակացի՝ որ որպէս ասացաք՝
յիշէ յաւելուածան թուաբանականս այլ և այլ տեղիս
Արշակունեաց, յիշէ և սրոյ տեղի մի. « Որս էր Կամսա-
» րականացն ՚ի Գէն, և կալեալ երէ բազում, և ինձ որ-
» ոտման հատն բերել վարազ մի », և այլն։ Զիւէ ան-
դէպ համարիլ զայն ՚ի տեղւոջս Աղտատի Ծննդոց, մա-
նաւանդ զի ուր կարծեցուք զսա, յերի Մխրզախան գեղջ,
նշանակի յաչխարհացոյց քարտս և փոքր տեղի մի Գիհնոյ
կամ Գիհնոս գրեալ, որ հոլովական Գէն անուան երևի։

30. Ի փոխադրել հնարագիտին Երուանդայ զարքու-
նիսն յԱրմաւիրայ յիւրաչէն քաղաքն, հարկ էր ընդ ո-
ստանիկ բնակչացն և այլոց արքունական պերճանաց՝ և
զկրօնական պաշտամանցն տաճիս և հանդէսս անդր ա-
ծել. այլ մխանգամանցն և զանձին զգուշութիւն հոգալով,
« ոչ օգուտ իւր համարեալ յիւրն փոխել քաղաք (զկուռ-
» սըն), զի մի ՚ի գալն և ՚ի գոհել անդ աչխարհն, ոչ
» զգուշութեամբ պահեսցի քաղաքն· այլ հնագոյն ՚ի
» նմանէ իքր քառասուն ասպարիզաս գհիւսիսոյ՝ նման
» իւր քաղաքին չինեաց քաղաք փոքր ՚ի վերայ գետոյն
» Ախուրենայ, և անուանեաց Բագաւան, որ ինքն թէ ՚ի
» նմա յօրինեալ է զկազմութիւն տաճարացն. և փոխեաց
» անդր զամենայն գկուռսն որ յԱրմաւիր։ Եւ մեհեանս

25. Արձանագիր յեկեղեցւոյ Ախուր Վանդակ. (Տես յէջ 63).

» չինեալ, զեզբայր իւր զերուազ քրմապետ կացուցա-
» նէր » : Որպէս ոչ երկար վայելեաց Երուանդ ՚ի թա-
գաւորութեանն՝ և ոչ Երուազ ՚ի քրմապետութեանն.
քանզի ՚ի նուաճելն Ախոյեան զաթոռն, » հրաման տայ
» Սմբատայ՝ երթալ յանուն Բագրատեան, որ հասեալ ՚ի քա-
» զաքն Երուանդայ ՚ի վերայ Ախուրեան գետոյ, զի սպան-
» ցէ զերուազ եղբայր Երուանդայ : Զոր կալեալ Սմբա-
» տայ՝ երկան զուլանէ հրամայէ կապել, և ընկենուլ ՚ի
» պատյա մի գետոյն. եւ ՚ի տեղի նորա ՚ի վերայ բա-
» դնացն կացուցանէ զընտանեաւն Ախոյեան, աշակերտս մե-
» ղի ուրումն երազահանի, որ յայն ասկս և Մոգպաշտ
» անուն կարդացին, եւ ապա ասար առեալ զդանձան ե-
» րուազայ, և ծառայս անձինս հինգհարիւր, նա և զըն-
» տիր ընտիր գանձուցն մեհենից, բերէ Ախոյեան։ եւ
» Ախոյէն պարգեւէ Սմբատայ զծառայսն Երուազայ.
» բայց զդանձան հրամայէ տանել Դարեհի Պարսից ար-
» քայի » : — Ցեղիս այս քաջանշան՝ յայնժամ իբր գլուխ
հեթանոսական պաշտօնատեղեաց Հայոց, և ՚ի միջին
դարս՝ աւերք կրօնից պաշտամանց և Բագրատունեաց
բնակութեամբ և չինութեամբք, քաջայայտ յերեւանի
կայ ցարդ և անուանին և նշանակեալ գրիչք և չափով հե-
ռաւորութեան. քան. ՚ի ցանկալի կենդանութենէն։ Ո-
զիղ գծաւ յամրոցէն Երուանդաշատի մինչև ՚ի Բագա-
րան՝ իբրև հինգ մղանք են, որ է հնգերիւր 40 (փոքր) ա-
պարէգ Հայկական[1]. և կայ գրեաթէ ՚ի սպառած Զո-
բոյն Երասխայ ՚ի Հա- Ելից, ՚ի հարաւոյ օժանդակաց Ա-
խուրենոյ, վասն որոյ և պատշաճեալ Աշխարհնեայ՝ քան
Շիրակայ։ Զայժմեան հանգամանս Բագարանայ հան-
դերձ բազմաունաշէն մեացուածոցք՝ այսպէս առաջա-
գրէ քաջ քննող վայրացս Հ. Ղևոնդ Սարգիսեան. « Ի
» մէջ խորաձորոյն՝ ընդ որ Ախուրեանն հոսի գնա, չի-
» նեալ է քաղաքս այս Երուանդայ Բ. դիւրաւս ՚ի



26. Զոր Ախոյեան գետոյ.

» հարաւոյ կուսէ՝ ընդ որ երկայնեալ ձգի լայնատարած
» ձորն, դժուարամուտ է յոյլ կողմանց, սակս լեռնա-
» ցեալ քարակարկառ վախիցն և բարձր ափանց ձորոյն,
» սակայն երկարութեամբ ժամանակաց յանձանձիր աշ-
» խատութենէ մարդկանն, օժանդակելով և աւերակա-
» ցըն՝ դիւրամուտ գործեալ է և ՚ի կոչմանցն։ Ընդ հա-
» նանել յատն ձորոյն՝ երեւութանայ վայրն առ հասարակ
» հիմնայատակ եղեալ. այնպէս զի՝ ոչ միայն նախնի չի-
» նուածոցն հաչակելեաց, այլ և ոչ օրինցն հետք երեւին.
» օրինակ իմն իրրև ՚ի յանկարծաւորեալ հրաւիրիչ կամ
» ՚ի առաւելութենէ մեծէ հիմն ՚ի վեր տապալեալ՝ չէ մնա-
» ցեալ քար ՚ի քարի վերայ։ Եւ գուցէ այդ ազէտք ան-
» ցեալ իցեն ընդ նա. քանզի և քարանցն կոյսք առհա-
» ապակ սևացեալք իրրև ՚ի հնոյէ բորբոքելոյ՝ վկայ լի-
» նին արդեաք տեսողացն. և չիք զի որ հաւաստիանէ
» մեզ թէ երբ և որպէս կործանեալ է քաղաքդ։ Ցառակ
» քաղաքին թէպէտ և գաչտավայր ըստ հարաւոյ կողման
» ձորոյն, այլ ըստ հիւսիսոյ դարափոս է. ամենայն վայրն
» քրտնէև բարձունք են մինչև ցվերին ծայր քաղաքին յա-
» հեղ բարձրութեան. և է անդ դոյզն մեացորդ բերդին,
» զոր ոչ կարծեմ չինուած հեթանոսութեան ժամանա-
գիւք ոտպոյց ՚ի մարտս 1854-5 ամաց, և ևս առաւել յետ այնր ՚ի 1865 ամէ և անդր մինչև ՚ի յետին պատերազմն 1877 ամի. յորում ժամանակի զակիչ մեծ կամ պատնէշ ամեր պարսպէր զբերդաքաղաքն, ընդարձակեալ ՚ի հարաւակողմանն, երկատասան մօրակոցօք (բաստիս բան Թուրքաց). որոց՝ յաջմէ գետոյն առաջին ՚ի Հս. Ելից՝ Ալտաղ-բաշիա կամ Գարս-փարլաղ, յոսա մի Գաբատաղ լեռնաբլրոց, 2130 Ջ. հեռի ՚ի միջնաբերդէն, ուստանց խրամց, զի ՚ի բնէ քաջամեր էր տեղին, և յարտեւակ յաւելեալ ՚ի նոյն բազում ջանիւ. քանզի սահմանք կարսոյ քարուտ են, և հարկ եղև ՚ի հեռուստ բերել գհող և գնիւթ ամրութեանցն, զոմն ձիգս կատարեալ աշխատութեամբ. — Ի Հր. Ե. օրա և հեռի 1200 Ջ., ամրացեալ Գարատաղ մօրակոց հզօր ՚ի համանուն լեռնակին, և սա անխրամ, վասն անմատոյց գրիցն. — 1720 Ջ. հեռի յերկրորդէն՝ Հաճըղ փաշա մօրակոց ուղղանկիւնի ձևով և յատաջմատոյց կառուցանաւ 70 Ջ. լայնութեամբ. — հեռի աստի 2740 Ջ. և կրկին ՚ի Հր. քաղաքին՝ Գանլը, երկու ակառամիք և լուսնաձեւով, և վեց ռանեաշափ խոր խրամով. — 1850 Ջ. հեռի ՚ի Մ. Հր. Մուհտրի փոքր մօրակոց, ուր և Անգղիացւոց յառաջագոյն կառուցեալ էր, իսկ յայնկոյս գետոյն՝ յահեկէն, Նախ Ջիմ կամ Թէզ-խարապ հազարկերտ, ՚ի Հր. Մ. ծայր բերդաքաղաքին, ՚ի պաշտպանութիւն ձորոյ գետոյն. — հեռի անտի 1130 Ջ. և 885 ՚ի ներքնաբերդէն ՚ի Հս. Մ. կայմն քաղաքին՝ ալէյի փաշա, 21՛ լոյն և 7՛ խոր խրամով, յարգարեալ ՚ի պէտս հետևակազօրս, ուր յամի 1855 Ռուսիւմ հրամանատար և պաշտպանող Կարսոյ՝ հաստատեալ էր ամրոց. — 1700 Ջ. հեռի ընդ արևելս և 1300 Ա. մօրակոցք՝ կայ Խնկիլիզ բապիա, վասն և սոա չինելոց Անգղիացւոց ամրոց մի, 21՛ լոյն և 7՛ խոր խրամով, միայն հետևակաց պետանի. — Ի Հս. Ե. օրա

1100 Ձ. հեռի և 1080 յԱրապոյ՝ Մուխիս, Նորոդ չի-Նեալ 'ի պաշտպանութիւն ձորագետացն ընդ կողմն Ջախ-մախ գեղջ, յոր սակս հանդերձէին կանդնել միւս ևս ամ-րոց Փիորուկ կոչեցեալ՝ 'ի վերոյ բլրի միոյ 230 Ձ. 'ի բա-ցեայ: Յարևմտեան հիւսիսային կողմն հեռագոյն 'ի ա-ցանէ կայ Լագ բէփէսի կամ Ջախանա՝ երբեակ բաղխոցաք, և 1200 Ձ. հեռի 'ի Հր. Նորին՝ Ցիք բէփէսի 9' լայն և 7' խոր խրամով, և 62 Ձ. լայն բաղխոցաւ որ կոչէր Ալ բա-պիա: — 530 Ձ. 'ի Հր. Նորին՝ Թաճուզ, երկկարգեան ամրութեամբ: Միահամուռ չրջապատ այս ամենայն ամ-րոցաց էր ասելի քան ութհետասան հազարչափ. որոց բա-ւական հրաշօքիւ և պէտք պատերազմականաք հանդերձ պահպանեաք և մարտկաք՝ դժուարին յոյժ գործէին զա-ռաջի քաղաքին և Թերևս անառիկ, եթէ և քաջ հազոր-գակցութիւն հասատասել էր ամրոցացն ընդ իրեար, և զամենեսեան ևս խրամաւք զատացեալ, և 'ի կարկա-տաջի ասերանացն՝ հող առնեալ պատրաստ կատեալ, միանգամայն և զգետս ջրոյ հոգացեալ. և այսպիսի պա-կասէին 'ի յետին պատերազմին, այլով ամենայնիւ քաջ պատապարեալ էր տեղին:

Ի ներքնաբերդին կայր մզկիթ մի Թիւրքաձև, մեծա-նոցք գինուց և վաճառոց, և հին ջրամբարն (հրամայուլոյ) յարկածածուկ 300 քարակոփ սասիճանաք՝ այլ այժմ խորխորատել, և ապարանք սահկանին: — Քաղաքն՝ նախ քան զառաջին պատերազմն Թուսաց՝ բաժանեալ էր յեօթնեւտասն թաղս, իւրաքանչիւր ունելով մզկիթ, 126 կրպակս, երկուս բաղանիս, եկեղեցի մի Հայոց, Պուրր Ղառաւաժային, յիշատակեալ յամի 1670, առ գրան քաղաք-քին [1], և Նորոգեալ կամ վերաշինեալ յամին 1810. կարա-ւանատուն մի և 850 տուներս. յարուարձանսն Հարաւային և յարևելեան՝ մեծատան Թադ և մզկիթք էին Թուրքաց և Թաթարաց, զորովք՝ յոլովութիւն գերեզմանաց նոցին և մահարձանք կանգնուք. եկեղեցի մի, չորս կարաւանա-տունք, 1800 տունք, 430 կրպակք: — Յարևմտակողմն գե-տոյն էր Թաղ Հայոց Ջուղայի մանալի կոչեցեալ, 600 տունք, եկեղեցեաւ, բաղանեաք, գործարանաք ոստայն-անկաց և ներկարարաց և ազօրեաք. և առևտուր յաջո-ղակ վասն բազմութեան եկաց 'ի Պարսից, 'ի վրաց և յամենայն կողմանէ: Լինէր և ծանաչաճառ 'ի Կարս յամենայն մայիսի 'ի Շէյտանցոյ Թաղի: — Բայց չէաք գե-ղեցիկք պակասեն 'ի քաղաքին, տունք մեծաւ մասամբ հողաշէնք են, քառակուսիք, կրկնայարկք, գոն և քարա-շէնք ոչ սակաւ: Յառաջ քան զվերջին պատերազմն 2000-չափ էին տունք բնակելոք. սակս ինչ պակասի և զարդոյ, յորս 800 են Հայոց, ևս և 80 տուն կաթոլիկաց, Նոյնքան և Ասուաց, 130 տուն Յունաց, 350 տուն Թուրքաց, Պարսից և այլոց:

Ի հին և յազգային շինուածոց Հայոց տակաւին ինչ ինչ. որպէս Ս. Նշանի մատուռն փոքրիկ Նորոգեալ յամի 1883, Թերևս և այլք ևս 'ի յայտ գայցեն առ Նորով իշխանաս-

[1] Ի Կարս անուն լաւ քաղաքին,
Ընդ հովանեաւ Ղառաւաժային,
Շատ է կարգեալ 'ի գուբս քաղաքին,
Փոքրիկ մատուռն քաւարանին.
Վասըն խնդրոյ խոհուն փիլոսո-

թեամբն: Խոտալեցի ասէ ժամանակակից Նորոգութեան Ղարսոյ և պատմագիս, յամս 1578-9, Թէ և անչքեցեալ՝ այլ ցարդ, ասէ, են անդ 60 եկեղեցիք. գուցէ և զմկիթ-սըն ընդ եկեղեցիս իմանայ [2]:

57. Ի պատմութեան մերում, որպէս յառաջն յիշեցաք, քաղաքս կամ բերդս Կարսոյ ոչ յիշի յառաջ քան զԿէս Թ դարս. յետ որոյ Թուխ առ վայր մի տասն կացեալ իշխա-նապետին Հայոց Աշոտոյ Ողորմածասիրոյ, որ Նորոգեաց զԹագաւորութիւն տանն Հայոց, և չև ևս էր ընտրեալ իւր Հատատուն աթոռ արքայական. իսկ եղբայր Նորա Աբաս ապարատիս տուգապէս տուն Հատատեաց զբը-նակութիւն իւր և արքայորէն վարեր առ Թագաւորա-քեամբ եղբօրորդւոյ իւրոյ Սմբատայ Ա. և զչքագիր Նորա Աղրներահ իշխանն Վրաց՝ կոչեալ կապակ եզ 'ի բեր-դին, ընդ որ զչարեալ Նորընծայ Թագաւորին՝ պաշարեաց, այլ ոչ կարաց առնուլ ամրութեան տեղւոյն, զոր այս-պէս ցուցանէ ժամանակակից Պատմիչն. Աբաս «եր-» քեալ մնալ գագարէր ընդ ամրոցաւ պարսպին 'ի ներ-» քոյ պատուարին. ապա այնուհետև Սմբատայ զոր մեծ » գումարակ արարեալ՝ ապատակ սփռէր 'ի վերոյ » աշխարհակալս չհնիցն Աբասայ, չարչ զամրոցսն, ուր » գաղութ գտանին զոդեալ դադարէր, յաւարի առեալ » զդէնս որի որանց և զքաջ երիվարաց», և այլն. բայց ապա պայմանագրութեամբ գիշան 'ի հաշտութիւն: Եւ յետ ամսոցուց (902) վախճանեալ Աբասայ, Հանդերձ այլովք և Կարս եմասա 'ի սեփականութիւն արքունի. յոր և յաջաշխեալ Սմբատ զդէմս իւր և զնու՝ զդատաւոր Թագաւորին Եգերաց, յարշաւանս Ախլնի ասիկանի, պահապան բերդին կարգեալ զՀասան գՆթանի. «եւ » գանձ ևս և կարասիս բազում արքայի 'ի ցանձարանս » ամրոցին պահելոյ ... (վասն որոյ Ախլին) մատեհամս » և պատանէշ պաշարմամբ պատէր զամրոցն». յորմէ զանդիտեալ Հասանայ՝ խնդրէաց յետոյր ազատութեան և զերծոյց զամենայն արդելեալսն, և ետ զբերդն և զան-ձըն իւր հանդերձ տիկնոջն և կարասեաք, որովք մեկնե-ցաւ բանաւորն 'ի Դաւին. «Իսկ արքայ Սմբատ գարձեալ » եկեալ յամրոցն Կարսոյ և տեսեալ Թէ այն ինչ յափըշ-» տակեալ էր 'ի Քշնամեացն ... և վասն զի ըստ ձմե-» բային ժամանակին ոչ կարաց անդ արշել կայանս, գե-» նոյ անտի յամառս Եղրախաձորոյ 'ի գեղն Կաղ-» զուան». և փրկանս առեալ Թափէ զտիկնոջն: — Յետ նահատակութեանն Սմբատայ և մահուան անդրանկան իւրոյ Աշոտոյ Երկաթի, երկրորդ որդի Նորա Աբաս ժա-ռանգ Թագաւորութեան Նատէր 'ի Կարս. զոր և ժա-ռանգեաց որդի Նորա կրտսեր Մուշեղ, յորժամ երեցն Ա-շոտ Գ. Հատատատեաց զաթոռ Թագաւորութեանն յԱնի. այս Մուշեղ Թագ կապեաց և կոչեցաւ Թագաւոր յամի 961, վասն որոյ և Կարս՝ մայրաքաղաք. որում յետ քանի և չորից ամաց Թագաւորութեան յաղորդեաց որդի իւր Աբաս, զոմն քառատուն և հինգ. և ամս՝ որդի իւր


եւ Խաչատուր որդի Նորին», և այլն:

Գրագ բանիս Թուրս ամի է չեզոքնակաց Մաշտոց գրոց:

[2] Anticamente era città de' Cristiani, e fin ora ancora vi si trovano de' sessanta chiese; ed era grande, ma rovinata. — Անանուն հեղինակ վիճակագրի:

Գագիկ՝ ամս երեսուն և հինգ, յամի 1064, այսպէս տեւեալ այսր փոքու թագաւորութեան աւելի քան զար մի։

Նախնին սոցա՝ Ա. Աբաս՝ որ յարդարեաց զԿարս յիւր ատեան, հիմն արկ առ ստորոտամբ բերդին՝ հոչակաւոր եկեղեցւոյ յամին 930, յանուն Ս. Աստուածածնի երկոտասանից, և աւարտեաց զշինուածքիւնն յամի 942։ ցարդ կանգուն կայ հազարամեայ հնութեամբ, փոխեալ յայլազգեաց՝ ի մզկիթ, և յետ բազում դարուց՝ ի յետնում առման քաղաքին՝ ի Ռուսաց՝ վերստեալ անդէն՝ ի պաշտօն Քրիստոսի։ Մեծ էր հռչակ գեղեցկութեան և պայծառաւթեան եկեղեցւոյս՝ ի ժամանակէ անտի շինութեանն, որում յետ ոմանց ականատես եղեալ Աստղիկ՝ ասէ. «Շինեալ թագաւորին զկաթողիկէն սուրբ՝ ի քաղաքին Կարուց՝ վիմափղէնն արձանօք, որձաքար, պատզամատաշ վիմօք, բոլորապէս գմբեթաւորեալ, պայծառ զարդուք, երկնանման խորան»։ զոր այլ պատմիչ համառօտիւ ասէ, «գեղեցիկ յօրինուածով»։ Եւ է արդարև բոլորի, ութանկիւնի արտաքուստ, քառաթև՝ ի ներքուստ, բարձր և արկաւոր գմբեթիւ, ամբարձեալ առանց սեան՝ ի վերոյ ութեցուն կողմանցն, յերկոտասան երեսս բաժանեալ, մէն մի կրելով զնկարէն պատկեր միոյ առաքելոյ։ Զայս եկեղեցի յաշաղելով Աբիսա-



34. Ս. Աստուածածին եւ Բերդի Կարուց.

զաց թագաւորին Բնի կամ Թևդաս կոչեցելոյ, երդիծաձեռ գրեր առ Աբաս, մի փութալ՝ ի Նուաստիս, մինչև եկեսցէ ինքն իրով ծախս օծանել. և խաղայր զօրաւ ծանուս՝ ի վերոյ նորս մինչև՝ ի Կարս գեա. իսկ Աբասայ առհասարեալ՝ յարձակեր վանէր զբանակն, և զթագաւորն ձերբակալ արարեալ ածէր մեծաձեռն յեկեղեցին, և ցուցեալ զվայելչութիւնն՝ ասէր. Քանչ տես, զի ոչ ևս այլ տեսցես. և խաւարեցուցեալ զաչս նորա՝ արձակէր առ իւրան, առեալ փրկանս վասն կենացն։ Ցարդ չէ յայտնեալ արձանագիր եկեղեցւոյն, Ընդեալ՝ ի մահմետականացն, կամ ոչ քանչ հետազոտեալ, որպէս արժանն էր, զի մի է՝ ի սակաւուց հայկական ընտիր շինուածոց կանգուն մնացելոց՝ ի հազարամեայ գաբէ։ — Բերի նմին և նոքին ձևով՝ ի Հր. Եւ. կայ խորխորատալ մատուռն հին և փոքրիկ։ Են և այլ երկու հին եկեղեցիք, մին կամարակապ ագաչէն յԱղ. կաթողիկէին, ՝ի մզկիթ փոխեալ և Գիշիկ ձամի կոչեցեալ, և ՝ի Ռուսաց՝ յատման քաղաքին (1878) ՝ի զինարան առաժամանակեալ. Միւսն ցարդ խաչվէրք յորմունս նորին. — միւսն գմբեթաւոր, փոքր, ՝ի մզկիթ փոխեալ։ Կայր և յայլում մզկիթի գերեզմանն նահատակի միոյ. Իսկ ՝ի միջնաբերդին էր Ս. Աստուածածնի եկեղեցի, զոր ՝ի սպառ քանդեցին Թուրքք ՝ի վերջին ամս սերմութեան իրանց (1873-4)։ Միւս ևս եկեղեցեակ էր ՝ի Հր. միջնաբերդին, ՝ի դառապանի Թուրքաց, նոյնպէս ՝ի մզկիթ փոխեալ։ Արտաքոյ քաղաքին յամէն գեաղն Ոսպոյ ութանկիւնի եկեղեցւոյ. առ ս. բուսմ և այլ Ոսպոյաձեք կոթող եղեալ վասնց։ Իսկ ՝ի հիւսիսակողմն քաղաքին արտաքոյ կան աւերակք եկեղե-

ցույց՝ խորապես գիլիսէ կոչնցեալ ՚ի Թուրքաց. և մեր՛ն նմին քարայր մի Մխանձունք անուանեալ ՚ի Հայոց, Շխի պուռնարի (Քաջաց–ադբիւր) ՚ի Թուրքաց։ Երեին և այլ ուրեք ուրեք գոյն Ճաշուածոյ հին չինուածոց, որք Թուրեւս ՚ի սպառ քանդեցան ՚ի ժամանակս յետին պատերազմաց. Այժմեան եկեղեցի Հայոց կոչ յարուարձանին ՚ի բարձրաւանդակ տեղւոջ։

Շինութիւնք եկեղեցեաց և վանօրէից և այլ ինչ յիշատակք ցուցանեն զընդարձակութիւն Թագաւորութեան Կարուց, զի ոչ միայն Վանանդայ իշխէին, այլ և մերձակայ գաւառացն, որպէս՝ Ճակատուց, յորում՝ իրրև զՇատիկ բերդ էառ Ամիրա Տիեզերակալն, Մուշեղ Հօրեղբայրն Նորա և որդի Աբասայ՝ Թագաւոր Կարուց՝ Քափենայ գայն օգնութեամբ Կիւրապաղատին Տայոց. և չբաւեալ վրէժխնդրութեամբ եւս զօրավարի միոյ Պարսից առնել զահնմանս Ամրատայ։ — Որդի Նորա Աբաս յ՚երկար ամս Թագաւորութեան իւրոյ՝ որար բազում աղղութիւնս և շինութիւնս, որոց Ճաշուածք գոյին անչուշտ ՚ի բարենաճանձ խաւարկուաց. յորոց յիշեցուք զմին ՚ի Շերիմն գեղջ Աբլաբանեաց (էջ 40). ընդ այլոց Թագաւորազանց առաքեաց սա զօրս յօգնականութիւն ընդդէմ Մամլանաց, գեղեցիկ ձեավ զգեցուցեալ զիւրան. և ՚ի գալ կայսեր Վասլի (1001) ՚ի Հայս՝ մերձ ՚ի առնմանս իւր, « Եկն առ նա Թագաւորն Վանանդայ մանուկն Ա-
» բաս, ՚ի ձիավարելն ունելով գնչան քաղութեան արիա-
» կանաւ զարգարեալ գեղս. ընդ որս առաւել ուրախ
» եղև Թագաւորն Վասիլ », և այլն։ Հօրմանցն զգօնութեամբն Թագաւորեաց և որդի Նորա Գագիկ ՚ի չար և բազմամեայ ժամանակի կիսոյ ԺԱ. գարու, յորում բարձաւ Թագաւորութիւնն Բագրատունեաց Հայոց. այլ և յետ քան ամի նուաճման սյոր քաղաքի ՚ի ցունաց՝ առՔառն Կարուց կոյր ՚ի կոյր, Քէպէտ և ոչ աներկեւան յահէ աչխարհակալ Թուրքացն Սէլճուկեանց, որք յամի 1053 յետ սյոց գաւառաց՝ մերձն և ՚ի վանանդ և յարձակեցան ՚ի Կարս, յանկարծակի և յանպատրաստից. զորմէ ասէ ժամանակակից պատմիչն. « Պաղատս սյս ՚ի
» բազում ժամանակաց հետէ չէր զիտէ չարեաց ա-
» ռեալ, վասն որոյ յանհոգս և յանկասկածի էին, հարիւ-
» տասնեակք բազում ընչեղութեամբ ՚ի ծավէ և ՚ի ցանաքէ
» ամբարեալ։ Աբդ ՚ի գալ մեծի Յայտնութեան Տեառն
» մերոյ, ՚ի գիշերին յորում ուրախական ձայնիւք զաւք
» քաշանայից հանդերձ բազմամբոխ ժողովրդոյն զպաշ-
» տան աստուն կատարէին, յանկարծակի ՚ի վերայ հասին
» զօրք անօրինացն. և քանզի առանց զիշերապահաց էր
» քաղաքն, մնալով ՚ի ներքս, սար ՚ի վերայ առն եդեալ՝
» անզգօրէմ կոտորեցին զամենեսեան ... Մեծաշարիկ և
» պատուական վանքս սկսան՝ չարաչար մնհնամբ սպա-
» նեալք. երիտասարդք և ըմբիշմարտք ՚ի փողոցան սրա-
» կոտորք. պատուական ոսկիք ծիրացն սրինաշաղախ առ
» նոքօք անկեալ », և այլն։ — Արժան է յոգոյի նկարագրիս միտ դնել երկից և երից յիշատակի հեղինակին քաղաքին և վանականացն և մեծերից ՚ի ծովէ և ՚ի ցանաքէ, վասն որոյ և ՚ի խորագրի գլխոյ բանին՝ քաղաքն յղփացեալ կոչէ զկարս, և յայտնէ մեծ շահատան կամ կենդրան մի վանականութեան լինել, որպէս էր յետալի յարգարել զայն՝ երկոցուն զգօն և չինարար յերկարակաց Թագաւորացն։ — Թուրքք յորդորեալք ՚ի պարարտութենէ քաղաքին՝ գարձան ՚ի միւսում ամի աւերնորոգութեամբ նորին իսկ մեծի Ցուղրիլ Սելճանի. այլ ոչ անպատրաստ գտան զոյս նուագ և Հայք, Քէպէտ և ոչ բառնցին բեկանել զզօրութիւն բազմութեան բարբարոսացն. և սաստ առաքինացաւ Թաթուլ այրն հզօր և պատերազմաւէր։ Հնարագիտութեան Գագկայ և փարթամութեանն նշանակ մի ևս տան պատմիչք՝ զընդունելութիւն զոր արար Ալփարսլան Սելճանի և ամենայն բանակի նորին. զի իրրև ՚ի սուգ մեռանել մնհու եղբօր նորա Ցուղրիլայ՝ ուսոգգեաց նաեւր յանշուք սեռնկի, և առ ինքն ձգեր զահեղ ատիճանացն և զատիճարեւրոյն, և ՚ի միւսմ նուագի ամենայն բանակի նորա տեղան կոպէր 100,000 գահեկանաց ակուց։

Ցետ մեկնելոյ Գագկայ՝ կայսրն վերադարձաւ կարգեաց և Ուխտանայ՝ գլխաւոն Գրիգոր որդի Բակուրեանց. որպ նեղեալ յանդուլ հինէ Ակնթացացն և ոչ վըրատահացեալ ՚ի հեռաւոր օգնութիւն ցունաց, եռ գնացս ՚ի Գեորգի Բ Թագաւոր վրաց (1084), և նա ատիկանս կացոյց յազատացն Ջաւախայ. այլ յետ սակաւուց Ահմէտ կամ Բաժդուր ամն զօրավար Թուրք սիրեաց քաղաքին. յորմէ Թափեալ առ վայր մի և Սուքմանն ամիրայ (1092) Նեղէր գրիտաուենայան. յիշի և այլ ամիրայ յամի 1124, որ գնել կամէր գԱնի յԱպլ–Ասարայ։ Իրրև դար մի Ճնայ Կարս ՚ի ձեռս Թուրքաց. յորում ժամանակի Շնորհալի Հայրապետան մեր առաքէր գնորհակալ օրհնաբեր եպիսկոպոսն Թաչատուր, չրջաթղթական կանգառս, « յանմատոյց գղեակդ և ՚ի հոյակապ քաղաքս
» Կարս, և որ ընդ նովաւ նահանգք գիւղորէից, վանա-
» բէից և ագարակաց... մեծագործք իշխանաց, քրիստոսա-
» սէր զինուորաց, արգասաւ վաճառականաց, պատուա-
» ւոր տանուտերանց, աշխատասէր երկրագործաց, ձե-
» ռնհմուտ արուեստագործաց », և այլն. որովք յայտ առնէ յանդորրու և բարգաւաճ լինել գքաղաքն. բայց յայնմհետէ յիւր կոյս ԺԲ գարու և ՚ի սկիզբն յաջորդին՝ մերթ ՚ի Թուրքաց և մերթ ՚ի Վրաց բռնաբարեալ լինէր. և ստէպ բռնակոծեալ պարսպացն՝ վերանորոգէին, և յաւելուին ՚ի նոսա աշտարակք ցարդ ևս կանգնեալք՝ հայաձեր արձանօք և խաչվիմօք՝ յաշտարակս ներքնապարսպին, է որ անթերի և է որ թերացեալ և թաթափեալ. որպէս վրացի արձանագիր մի պակասաւոր, և ՚ի տարն գրեալ հայերէն,

Կատարեցաւ Բրջներս ձ (եաւթ)...

ՈՁԵ (1236) որ . . բրշներս երկ—բորդ . . . հրամանաւ . . . խս Աչիր Մուչ—րիս Աբրէհմայ . . . յց սրբոյին Լինջնա—կալ ըսս . . . յն որ ագաւվի

թագ — աւորի որ այսմ ամին . . . գաւորութիւն իւր. Մխիթար գրիչ եւ նկարիչ։

ՈՉԳ (1234) ՏԻՐ Աստուած զաւր (այս) . . . պիտգաւոր—ն մեր . . . լեր ալաղդեց կատ—արեցաւ բրչներս ձեռամբ—Ընձիւանն Գազնին եւ Ղասին

Շնորհիւն Աստուծոյ եւ ողորմութեամբ թագաւորին մերոյ—Ըռուսուդանայ մեք Կարուց քրիստոնեայքս—մեծ եւ փոքր չինեցաք գրչներս ի յիշատակ—մեզ եւ պատրոնին մերոյ.

ԹՎին ՈՉԳ ի թագաւորութեանն Ըռուսուդանա—յաթապէկութենն Խանէի մեք Կարուց քրիս—տոնէքս չինեցաք գրչներս ի հալալ արդեանց մերոց.

Ի վերայ բարձու աշտարակի միոյ ներքնաբերդին, առ որով դուռն փոքրիկ իջուցանէ՝ ի ձորագնեան խորանգուռդ, թերահատար արձանս.

. . . Շինեց (աւ) բուրջ . . . ի թէ—տո—ան . . . ա . . . ի ար . . . ձել առ. (ապաս) ալար Թաղիադին ճա . . . ոգ . . . յոզութիս (յաղաչիս)

Ցայլում աշտարակի առ դրան չափային, հնագոյն թուականաւ (1184).

Ի ՈԼԳ թուին չինեցաւ բուրջն . . .

Ի վերայ այսր դրան կայ միւս ևս հայ արձանագիր, այլ վէմն յերկուս խորտակեալ և ապուշեալ է այլուր՝ ի բարձու, վասն որոյ և ցարդ անվերծանելի մնացեալ։ Երևի յարձանացդ զի գրեաթէ առհասարակ նշանակք են չինութեան աշտարակաց՝ զոր բուրջ կոչեն, յաւուրս Իւաւագունայ Թագուհւոյ Վրաց, յամս 1234–6. յորմէն միայն 50 ամաք յառաջ, յորում ժամանակի գործեալ՝ ի ձեռն հզօրացեալ թագաւորացն Վրաց Թուի եղեալ. որպէս և յամս 1198–9 առեն նուաճեալ առ Թամարաւ դշխոյիս, որ յանձնեալ գքաղաքն՝ ի Քսիհան Ախալցխեցի. և յետ սակաւուց միւռանգամ նուաճեալ՝ ի քաղցն Զաքարիայ սպասալարէ և իւանէ աթաբէկէ յամի 1208, և յայնժամ առեն Վիրք՝ յանձնեալ գքաղաքն՝ ի Լաչա յորդի և ժառանգ Թամարայ. յորոյ անուն Թերևս կոչեցեալ են նախայիշեալ գեօղքն Թամրա և Լաչակերտ (էջ 78)։

Երիւք ամաք զկնի վերջին Թուոյ արձանագրին, յառնուլ Թաթարաց զԱնի՝ առաջնորդութեամբ Զարմագանայ, խարհեցան Կարսեցիք հնարագիտութեամբ իմն Գագկայ զերծանել՝ ի սրոյ նոցին։ «Փութացան և աճապարեալ տարան զրաճոյի քաղաքին առաջի նոցա, զի թերևս խնայեսցեն՝ ի նմանէ. իսկ նոքա քանդի խանձել էին առարս, և ոչ յումեքէ անէին երկիւղ... յափշտակութեամբ ընչից և առացուածոց և կատարմանէ բնակչաց, և աւերմամբ քաղաքին անզարգացուցեալ գվայելչութիւն նորա և գերի վարեալ զբնակիչսն, թողեալ գնացին՝ ի բաց։ Զոր յետոյ եկեալ զօրք սուլտանին Չառմայ՝ զերծեալսն՝ ի Թաթարէն մատնեցին՝ ի գերութիւն և՝ սար անաղօրմարար»։ Աստ նշանէր մեծ կողմնակալն և զօրավար նոցա Բայու Նոյին յամի 1254, յորժամ Հեթում սպասս յերթայն առ գանն Բաքու, եկն՝ ի կարս՝ յայլոյն նմին։ Ընդ իշխանութեամբ գանիցն և սերտալեալ Պարսից և Հայոց՝ մեաց քաղաքս այս ամաւք. զոր պաշարեալ Լէնկիմուրայ յամի 1394 ոչ կարաց առնուլ բռնութեամբ. այլ փիրուզպահի բերդակալ կամաւ անձնատուր եղև, և բռնաւորն ևս առեալ զամսուրան։ Ի ժե դարս մերում՝ ի ձեռս Թուրքման իշխեցողաց և մերում՝ ի վրաց անկեալ, ի ԺՉ սակս բռնաթարեալ լինէր՝ ի Պարսից և յՕսմանեանց. յորոց զառաջինն Մուրատ Սիւլէյման ևս նորոգել զբերդն յամի 1548. այլ յետ երից ամաց էառ Թահմազ Շահ Պարսից և աւերեաց. երկրորդ անգամ էառ Սիւլէյման և նորոգեաց յամի 1556. երկիցս էառ և Թահմազ՝ ի ձեռն արդոյ իրոյ խանգելի, նախքան մեծ գործեալ՝ ի Քշնամեան. գործեալ երրորդ անգամ կորգնցին յիրերաց, և՝ յետնումն նուազի՝ Թահմազայ առաւել ևս աւերածս գործեալ՝ եթող յՕսմանեանս, պայմանն եղեալ զի մի ևս չինեսցին զամսուրան. սակայն նորա մեծաւ խնամով վերըստին չինեցին հրամանաւ Սուլ. Մուրատայ (1579), ի ձեռն Մուսափա փաշայի, որ չինեաց մարտկոցս չորս և խրամատ գրեթէ. ի պեզածի անդ, ասեն, գաւաւ վէմ՝ յորում արձանագրեալ էր յառաջ քան զամս հինգհարիւր ճզեալ չինութեան բերդին, և ապուշին զոյն՝ ի վերայ

հարաւային դրան քաղաքին, որ եթէ ասացք իցէ՝ ժամուն Նահապետ Գագիկ վերջին Թագաւորի՝ ի դէպ գայ. և են իսկ արձանագիրք առ ներքոյ գրոնցն որ չէ և ևս են հրատարակեալ։ Բայց՝ ժամանակի գաղթականս՝ ի Հայոց Երևանայ բերեալ բնակեցուցին՝ ի Կարս։ — Ընչատակագիր մի յամի 1586, ասէ. « ած ամաւ յաւասղ (1579) » եկաւ վազիր մի յարևմտից երկաւ հարիւր հազար զօրագ, » եկաւ զէմ յարևելս, և չինեաց բերդն Կարսոց, որ կոչի » Ղարս. եկ և գնաց և էառ զտունս Շրվանայ ... և յե- » տոյ զարձաւ զօրագն եկաւ Ղարս. յետոյ տարին գերե- » ցին Աբեւանայ յերկիրն 60,000 այր ու կին, և այլ » Թիւն ոչ գիտեմք մեծին և փոքու, մեռաւծին և կարա- » ծին, բայց միայն Հայոն գիտէ » ։ Ի սկիզբն ԺԼ դարու (1603) Շահաբաս պաշարեաց, այլ ոչ կարաց առնուլ զքաղաքն. յետ որոյ Օսմանեանք յաւելին՝ ի նորոգութիւնս քաղաքին (1615-6). ոչ կարաց առանձել քաղաքին և Թահմազ Ղուլի բանաւորն յամի 1735, որ եկեալ էր հընգոր պատրաստութեամբ, որոյ հետք ասեն երևէին ցաւուրս մեր. Թոդումի Երևանայ՝ ի ձեռս Նորա՝ շատացոյց զնա և զարձաւ յետս։

58. Իսկ՝ ի մերում գարուս Թիրախ եղև Կարս յարձակման և փլուս Ռուսաց, որք զառաջինն յամի 1807 պաշարեալ զայն՝ զարձան ձեռնունայն. յերկրորդում Նուագին՝ ի մեծ պշուառնս իւրեանց և՝ ի գրաւել զնոսա աշխարհս Հայոց, եռաբեաց բառն պաշարմամբ՝ ի ձեռն յաջողելոյն Բասգևիչոյ առիպեցին անձնատուր լինել (՝ի



35. — Կարս. Ցեսիլ Միչնաթերպին յարևանց գետոյն.

23 յունիսի, 1828)։ Թէպէտ և քաջիկ ամրացուցեալ էր զայն Օսմանեանց՝ ի ներքոյ, և արտաքոյ զրկեալոյ բլուրսն՝ մարտկոցաք և 151 հրանօթովք, բայց՝ ի միոյ կողմանէ արևելեան հարաւոյ, յորմէ յարձակեցան նախ Ռուսք բանակ հարեալ առ Ֆիւշիկ գեօղս. և՝ ի կիզել հարստաթեանն (1829) բազում ինչ բարձեալ՝ ի քաղաքէն և՝ ի բերդէն, եղև զեղծ Թոդմին և գնացին. արտաստեալ ասեն Բասգևիչոյ՝ ի լսել գդալինան՝ որ Թոդմին անգէն զկարս յՕսմանեանս։ Այլ ոսցա հարկ եղև դարձեալ նորագել զբերդն, մանաւանդ՝ ի ծագել միւսանգամ Թշնամութեան, և յերրորդ Նուագի յարձակմանն Ռուսաց յամի 1855, յորում և յաջողեցան, սպառապատ կարգելով զԱնգղիացին Ուիլիամս, որ բազում գիտուն սպայիք մարտկոցս չուրջ զբերդապաշտպան կանգնեաց, որպէս նշանակեցաք վերագոյն, և առաւել յարևելեան հարաւային կողմանն՝ որ տեղապոյնն էր, և անդ հաստատեաց գդակիչ բանակի իւրոյ պատապահակ արարեալ. իսկ բուն բանակի սպառապետին Ռուսաց Մուրաւիէֆի՝ ՝ի հարաւային արևմտեան կողմն կայր. ՝ի կիսոյ յունիս ամսեան ցվերջ նոյեմբերի տեւեաց պաշարումն. բազում

անգամ յարձակեալ վանեցան Թուրք, և ՚ի միում նուագի իբրև 7,000 ոգիք անկան ՚ի նոցանէ. վասն որոյ անյոյս լեալ ՚ի բռնի առնանէ՝ պնդեցին զպաշարումն առ վաղուցեալ գթազոյն, ուր հարակէր և մաղձախառն յամառ հետէ, և 1000 ոգիք մեռան։ վասն որոյ ստիպեցան պաշարեալքն անձնատուր լինել (՚ի 28 Նոեմբ.) այլ երկարաւոր տակ կարծ զերծոյց գկարին և զփոքր Աբիա. զերծաւ ապա և կարս ՚ի նուազել բազդին Ռուսաց ՚ի Ղրիմ. բայց յառաջ քան զԹողուլ ասցա գքաղաքն (՚ի 6 օգոստ. 1856), քան առաջնոյ նուագին հրով խանգարեցին զգլխաւոր ամրութիւնսն, և զառաձիգաիր արձանան բարձեալ ագուցին ՚ի պարիսպս բերդաքաղաքին իբրեւանց կիւմրոյ՝ հակառակորդին կարծց. և ՚ի պահել զգետինն՝ գոն անօթ բրտեալ հարիւրով պղնձեայ դրամք Ռուսաւգունոյ թագուհւոյ, առ որով տեսաք նորոգեալ զաշտարակս քաղաքին։

Իսկ ՚ի վերջնում նուագի պատերազմի Ռուս-Թուրքաց, յամի 1877, կարս ամրագոյն էր որպէս թէ ոչ երբեք, զոր օրինակ նշանակեցաք վերագոյն, երկոտասան արտաքին ամրակոցօքն, և իբր 300 հրանօթիւք. և Ռուսք զառաջինն ՚ի կէս մայիս ամսոյ մերձեցեալ բաղխեցան միանգամ ընդ Թուրքաց և մեկնեցան. ապարատեան հայոգոյի Լօռիս Մելիքով՝ հրաման եւս ՚ի հետուստ իբր 45 հազարշափով շրջապատառ պաշարել գքաղաքն, եդեալ զբուն բանակին ՚ի Մեծ Մէկրէ գեղ ՚ի սահմանս Ջարիշատաց. ուր եկեալ և կայսրեղբայրն Միքայէլ ընդհանուր հրամանատար ռազմական բանակին, ՚ի սկիզբն յունիսի՝ եւս սկսանել զռմբակոծութիւն քաղաքին։ Բայց յառաջ քան զայն (յ'30 մայիսի) գունդ մի Ռուսաց՝ գիշերայն պաշարեալ զՊԷՆԿԻՔ Ահմէտ գեղ, կոտորեալ և հալածեալ էին զԼեզկերացի զօրս Թուրքաց։ Զառաջինն ՚ի մարտկոցն Գաբատաղ՝ որ իբրև բանի քաղաքին համարեալ էր՝ ուղղէին Ռուսք զռմբաձիգսն մեծամեծս բերեալս ՚ի Կիւմրոյ, և ՚ի Թաշմազ մարտկոց արևմտակողմանին, յորում ՚ի 14 յունիսի հաւրան Թուրքք ՚ի բարձունս Ձիֆուլիկ գեղի, և կորուսին իբր 500 արս։ Ի 23 ամսոյն երկիցս յարձակեցան Ռուսք բուռն զօրութեամբ ՚ի գրաւել զԳաբատաղ, այլ վանեցան մեծաւ կորստեամբ, և յետ երկուց աւուրց, Թաւլայացուցեալ զպաշտպանսն, առ փոքր փոքր մեկնեցան ՚ի սահմանաց քաղաքին, զգացեալ զհասանել Մուխթար փաշայի յողջական զօրաւ ՚ի Կարս։ — Յետ իբր երկուց ամսոյ վերագարձան Ռուսք ՚ի սահմանս Թուրքաց, և զառաջինն յ'8 օգոստոսի բաղխեցան ստիպուք ՚ի լեառն Եաշնի, և ոչ յաջողեցան. ՚ի 25 ամսոյն՝ Թուրքք գիշերայն յարձակեալ առին զԳզըլԹէփէ կոնաձև լեառն հրաւրոյթս չիշեալ՝ ՚ի սահմանս Շիրակայ. վանեալ անտի զՌուսս չարաչար հարուածոք, և բազում ճգամբ հանին մեծամեծ հրանօթս ՚ի կատար սակ և ապառաժ կարմրասեակ լերինն, ար ՚ի սակս գանցն այդպէս կոչի. ՚ի վառիլն մեծաւ ճգամբ և բուռն զօրութեամբ յարձակեցան Ռուսք Թափել ՚ի Թուրքաց գքաջամարտ տեղին, անհնարին հրաձգութեամբ, որով հրաւրեան չիշեալ վերստին Թուէր հուր ժայթքել, ասեն ականատեսք. այլ արիական ժուժկալութիւն Թուրքաց ՚ի դերև եհան զամենայն հնարս նաթս նոցա, որոց կորուսեալ անդ 3000 ոգիս, յետս ընկրկեցան. ՚ի Թուրքաց անկան արք 400, և 1200 վիրաւորք։ Վասն այսր գործոյ յաջողութեան՝ Մուխթար փաշայ անուանեցաւ Ցայծող (Ղազի)։ — Ի սկիզբն հոկտեմբեր ամսոյ վերագարձան Ռուսք ՚ի կռիս, գոն գործեալ զայս նուագ սիրաձայ էաշնէի լերանց, յորոց մեծն իբր 200 Ձ. բարձր յերեսաց կոչնակաձև բարձրանգակ դաշտին՝ ամրացեալ էր պատուարօք, և փոքրն ՚ի բնէ զբաժանատացեալ ևս էր, սակայն ոչ ունէին պահակս և մարարիկս ըստ բաւականի. վասն որոյ Ռուսք առաջնորդութեամբ Լօռիս Մելիքովի՝ սիրեցին նախ (2 հոկտ.) մեծն, կատարեալ զգուշդ Թուրքաց զօրք մնհաչափ յամառեալ մարանչէին. այլ ոչ կարացին առնուլ փոքուն, զոր պաշպանէր արևելագոյն մարտկոց զակրին կարուց. ՚ի նմին պահս և Բնհրուգ Շելկովնիկով հայ զօրավար վերջին գնգից ձախոյ թևի Ռուսաց՝ պատեալ զԱլաճա լեռամբք՝ յարձակէր ՚ի վերայ ոչոչ թևի Թուրքաց, ժամ հինգ ժուժկալեալ, մինչև զերծոյց գնա լապտէֆ ընդհանուր զօրավար այնր թևի. բայց այս գործ բնհրուգի խաթեալ զՄուխթար՝ յաջողեաց Ռուսաց զառաջին լեռնեայ մեծի. 13 ժամ տեւեաց այս պատերազմն հզօր, յորում ՚ի միոյ միոյ երկոցուն կողմանց անկան ընդ մեռանել և վիրաւոր առնլի քան 3000 արք։ Ի վաղիւն (3 հոկտ.) Մուխթար չանեացաւ նուաճել անդրէն զեաշնի, այլ ոչ յաջողեաց, և կորոյս իբր 2000 ոգիս. բայց և Ռուսք տեսեալ զանհնարին ընդդիմամարտութիւն Թուրքաց և զամբարիւթն փոքու լերինն, գիշերայն լքին և զմեծն իբրև տնկուար, և տեղի տուին, Ալլ իբրև նլիք զնոսին և Մուխթար յետ աւուրց, և փոխանց զբուն բանակին յԱվլիար և յԱլաճա լերինս, վերագարձան կոյսն Ռուսք (18 հոկտ.) զայն և զԳզըլԹէփէ։ Ի 14 ամսոյն Լազարէֆ զօրավար կոյսն զՇաքըր-աղլու լեառն, և Բնհրուգ զայլ լեառն (Օրլոք?) ՚ի հիւսիսոյ նորին բազում ճգամբ և աւրութեամբ, որ յաջողեաց Ռուսաց գվաղուի կոխն և գյաղթութիւն, յորում առաջնորդէին ինքնին Մեծ զօքն Մխայէլ և Լօռիս Մելիքով. Հայտնի զօրավար ազգի Թուրք

մեծ յաղթանակ եղև Ռուսաց 'ի Հայս՝ յայսմ չորրորդ յեզդանակի Ռուս-Թուրք պատերազմից. վասն որոյ կացարն ընդհեաց Միքայէլի դքսի՝ զԱ. սատիճան կարգի Ս. Գէորգայ, և Լաթխ Մելիքովի վերկրօրգն, որ մեծագոյն 'ի չքանչանս նոցա համարին, Լազարէֆի և Բեհբուդի գնաչ Գ կարգի, և այլոց ըստ պատշաճի.

Զհետ յաղթութեանն Ռուք հասատատեցին զբանակ իւրեանց 'ի Տիվէ (էջ 78), ուստի առաքեցաւ Լազարէֆ 'ի 22 մանուն հզօր գնդաւ 'ի պաշարումն Կարուց, յորում պաշտպանէր Հիւսէին Աշխի փաշա, և ոչ կամեցաւ անձնատուր լինել ըստ թևդրութեան Լօռխայ։ Ի Ն նոյեմբ. յարձակեցան Թուրքք 'ի վերայ Ռուսաց, և վանեցան. հետամուտքն մինչև մինչև 'ի մարակոյն Հաքըզ փաշա, այլ ոտիպեցան Թողուլ և գառնալ յետս. յիսն ամանոյն ակաո Ռուք զհրաձիգ ամրակածութիւն. այլ խորհեցան գիշերային յարձակմամբ առնուլ զքաղաքն, որպէս և արարին յ'17–8 նոյեմբ. յանկարծակի գոլով Թուրքաց. և նախ սեպհն Մելիքով ազգական զօրապետին Լամատ 'ի Աւվարի մարակոց. ապա գունդն Կրապոյ (Grabbe) 'ի Գանձը, որ և անդ 'ի կռուին մեռաւ. 'ի Նմին պահ. այլ գունդք յարձակեցան և առին զՀաքըզ փաշա մարտկոց և զմեծամուրն Գարատաղ, որոյ պահապանաց կէս կատարեցաւ անգէն և կէս փախուստ յԱրտակ մարտկոց. յորմէ վանեցին զյարձակեալսն և անդր. և այսպէս մի ըստ միոջէ ամենայն մարտկոցք ասկայսման գնացին նաւանեցան 'ի Ռուսաց. բայց ոչ նոյնպէս յաղթութեաց առցա 'ի Հախակոյմն գնացին, ուր մեծ կռուրած եղև 'ի նոսա առ Թահմազ և Ջիմ մարտկոցաք. այլ առումն Ա. բայ մարտկոցի, և յետոյ ներքնաբերդին՝ երաց նոցա զգրաւնս կարաց, յորմէ խոյս ետ հրամանատարն Հիւսէին Աշխի, ասկառաք ոմամբք, քանզի շատք և 'ի փախստեանն կոտորեցան 'ի հետամուխն Ռուսաց. և ամենայն անկեալք և վիրաւորք նոցա համարեցան ասելի քան զ'6000, իսկ Ռուսաց իբր 500 մեռեալ և 1800 վիրաւոր. ամենայն զբաւականն 'ի քաղաքին, 17,000, գերի անկան 800 ոգւովք և 5 փաշայիւք, 303 հրանօթովք և ամենայն զինուք և համբարով։ Ի լուանալ առաւոտուն (18 նոյեմբ.) դրօշն առաւական ծածանէր 'ի վերայ ամենայն ամրոցաց քաղաքին։

Ձառումն Կարուց ոչ միայն յաւարտ հասոյց զարևելեան պատերազմն Ռուսաց և Թուրքաց, այլ թևրևս և զայլ գայան կանխեալ կարծեաց. քանզի բուն բանալի Օսմանեան տէրութեան անկաւ 'ի ձեռս քշնամւոյն, և համբաւ նուաճմանն նորին ափըեցոյց զարհուրս. ուր՝ անաւրէնք անմասոյց իրրև կոյս անպատասխանելի համբրիր, որպէս Մէջ Փառնկաց, և վէնետիկ Խոտիոյ, զոր ասկառ ամք յառաջ գնդն առին փորձ, գյաւաշնդիմութեան պատերազմական հրաձիգ արուեստի և հարկի տեղի տալոյ բռնութեանն զօրութեան – Գրեալքէ 'ի հազար ամաւ յառաջ սկսեալ յիշատակոյ քաղաքին և բերդին Կարուց առ Աշտով (Ա) յ'Թ դարս, 'ի նոյեմբ. Նիս ամաց ԹԹ դարուս այսպէս լրանայ 'ի ձեռն Հայ զօրավարի վերագարձեալ յիշխանութիւն քրիստոնէից. Նորոյ բաղդի թևրևս սկիզբն պատրաստական, փոխանակ այնքան արեան հնապատից և անհամար դիահանց լայնատարր դամբանարան լինելոյ, յղփանալ ըստ երբեմն ժամանակի՝ արգասեաց վաճառականութեան և արուեստից, և յղկակ նահանգին՝ բազմաբնակուն մշակութեամբ, որով բարգաւաճէր գաւառն 'ի հնումն և 'ի նորումն 'ի ժամանակի խաղաղութեան։ — Աղդիպային Քէր Բորդըր որ յամի 1819 էանց ընդ այն, գամբեամբ յիշէ զրազմութիւն գիւղորայից, գճարտարութիւն և գաջողութիւն երկրագործաց [1]։ Ի միով բանիւ ազնուական կամ պատուական հովիտ կոչէ (this noble vale), որպէս հայրենակից նորին Աստղիկ և նախորդ (1812) ազնիւ դաշտ (this fine plain)։ — Ոչ սակաւ գաղթականք առաքեցան 'ի մարզից Ռուսաց 'ի լնուլ բնակութեամբ և շինութեամբ գահմանս Կարուց, յոր ըղձակերտ լինին և Հայք Շիրակացիք։ – Ի դէպս յետին անաց նշանակելի է ապիտաթէր ոգոզումն ըրոց 'ի քաղաքին 'ի սկիզբն գարնանոյ 1887 ամի (6 ապրիլ)։

59. Ցիշին յայժմուս 'ի գաւառս Վանանդայ և գեօղքս. Ոչ-եար, հին խաչվիմաք գերեզմանաց. Գարախաչ, Լուսապատ, Լոյ-կիլիզ (Աշանց), Խաղցեղ, Խաղալիկ, Խաշա-պուհար. Քիրդիկ, Մահմուտաղա, Պիրտիկ, Տիւրկ, Քեօրանլու, որոց գիրք անծանօթք ինձ։ Իսկ 'ի սակաւուց տեղեաց վանանդայ առ 'ի նախնեաց յիշատակելոց, զբոց զգիրս անգիտանամք, մերձագոյն 'ի կարս Թուխ Խասչի վանքն, այսպէս կոչեցեալ յանուն Խաչին Նունեայ, որ 'ի Կապադովկիոյ բերդէ Էրասխաձորոյ փոխագրեցաւ այսր, և չինեցաւ 'ի տեղւոջս. ուր և մեռաւ տղոյն գարս, և մեծացաւ վանքն նոյնքան սիրասարաց. վասն որոյ ազգն սահմանեան Աղի կամ Աղի յիշ Թ գարս, որ կոզոզաւեաց բազում հարուստ վանականս, եկն և գաս կոզոզաւել, այլ « զօրութեամբ Ս. Խաչին ոչ կարաց ինչ յափըշ » տակել 'ի նմանէ. իսկ յետ ասուրց այլ ազի՝ Աղգման » անուն ամիրայ եկեալ 'ի Կարս, և երկու արս 'ի գլխաւ » որաց քաղաքին նահատակեաց հրով, և զեպիսկոպոսն » և երէց մի Մատթէոս անուն եդ 'ի բանտի, և ապա » նայր չարաչար տանջել զնոսա և ապանձնել ևթէ ոչ » ուրանան զՔրիստոս. յորմէ զանգիտեալ ասրացան ըզ » Քրիստոս՝ եպիսկոպոսն և երէցն Մատթէոս ... և ար » կին ձեռս 'ի Ս. Խաչն տէրունական, և ընկեցին յաս » ձիոցն և ջորւոցն զաւարս երեսուն. իսկ Ս. Խաչն պատ » չեալագոծ որ բազում պանչելիս եցոյց առ Աղի և առ » Աղիր Մահմետ, այսօր յայսմ վայրի ասրաւ նախա » տառաս այսմ ամենայնի, վասն անցոյս և անգէղ ե » պիսկոպոսին և երիցան. Ջոյս ամենայն չարիս եառս » և լուաս Տէր Բարսեղ կաթողիկոսն ՀԱՅոց, և առ ա » ռեալ անմխիթար լսոյին ազիազոյնն և գառնագոյն. և » առաքեցին զանձս 'ի մէր սրանց գազատագոյն և բե » րին զՍ. Խաչն ՀԱՅոց, 'ի Թուականիս Հայոց ՇԼԹ.»[2].

1 Marks of industry were seen every where, and innumerable villages studded the ground, to the most distant parts of the landscape. Ի խոն մի յառաջ ասէ. It lay rich in cultivation to a vast extent. և յետոյ. The fertile populous plain. — Ker Porter, I. 652.

2 Յիշատակարք. Արեգի 60 (Տարօն 50)։

(1034). ուր և մեռցեալ սակ մինչև ցառումն քաղաքին
'ի Թաթարաց, և յայնժամ անհետ եղեալ։

Մի 'ի հնագոյն յիշատակելոց տեղեաց 'ի գաւառին
Վանանդայ՝ է երևեալ ուր, ասէ Բուզանդ, պատերազմ
մղեալ Վասակայ սպարապետի Արշակայ Բ., և հարեալ
զՀազարաւանեան զօրավար Պարսից և զփախստեացն,
Թուփելով « աւար բազում և զփիղսն »։ Տեղին Թուխ դիւ-
ղան լինել հակառակ, զի յետ ոչ բազում ժամանակի
յելս Նորին Գ. գարու՝ Արշակ Գ. և Խոսրով Գ. « պատահեն
» միմեանց 'ի գաշտին որ կոչի Երիւել, և տան պատե-
» բազմ ընդ միմեանս սաստիկ յոյժ. Հարկանի զօրն Ար-
» շակայ, մեռանի և սպարապետն Նորա Դաթա Միհրն 'ի
» պատերազմին, և փախստական լինի Արշակ ասկա-
» ւուք »։ Այս ըստ Մ. Խորենացւոյ։

Ոճմոսու կամ Ուճմոսու կամ Օճմոսոյ գիւղ, 'ի գաւա-
ռին Վանանդայ, ուր Գիւտ կաթողիկոս վախճանեալ՝ «ե-
դաւ 'ի դիւրս հարց իւրոց խաղաղութեամբ», ասէ Ժամա-
նակակիցն Ղազար Փարպեցի, յելս կոյս Ե գարու. և զի
յատաջագոյն ասէ զնա լինել յԱյրահեզ գիւղէ Տայոց՝
Թուխ և գիւղ հանգստեանն 'ի սահմանս Նորին, այսինքն
է 'ի հիւս. արևմտեան ծագ Վանանդայ։ Ուղղական ա-
նուն տեղւոյս է Ոճմուս, կամ Ոճմուզ, զի այսպէս գրի



36. Կոմս Լօռիս Մելիքով։

'ի հին գաւազանագիրս կաթողիկոսաց. և տեղին Նշա-
նաւոր իմն՝ մեծութեամբ կամ վարդապետարանաւ,
զի և այլ կաթողիկոսունք ընծայեան յայսմ գեղջէ. և նոյնպ
յետ յաղօրդին Գիւտայ (Յամ. Մանդակ.) Բարգէն, Տէր
Իսրայէլ 'ի կէս Ը գարու, և Տէր Տրդատ Ա. 'ի կէս Ը
գարու։ Ապատաւր 'ի ժամանակի վարդանեան Հա-
յոց 'ի Պարսից 'ի ձեռն Բ Վարդանայ՝ յամս 574–5, փի-
լիսպոս Տէր Սիւնեաց հաւատարիմ կալով Խոսրովու ար-
քայի Պարսից և զօրավար 'ի նմանէ կարգեալ՝ արար
կռիւ ընդ Հայոց և Քաղնց և պատեցաւ։

Դրաշխան գիւղ, ուր Հայք Թօխափեալ զծանր լուծ
Հազարայոց՝ օգնութեամբ Քաղնց և առաջնորդու-
թեամբ Ամրատայ Կիւրապաղատի, յամի 703, մարտեան
ընդ Մահմետի զօրավարի. այլ « բարկութիւն 'ի վերայ
» հասեալ, ասէ պատմիչն, լքաւ սիրտ պատերազմողաց
» տրանց Քաղնց. 'ի փախուստ դարձեալ անկան յամրոց
» բանակին իւրեանց. և զօրացեալ Թշնամեացն՝ հարին
» զրաղումն կոտորմամբ սրոյ. զորոց ասեն լինել զՔիւ-
» անկելոցն՝ աւելի քան զհինգ բիւր արանց առանձա-
» կրաց. և զանակաւ Քնացօրդան փախստական առնէր յաչ
» խարհէս »։

Կաճկաքար գիւղ, ուր յամի իբր 830, ասէ Ասողիկ՝ և-

կեալ գՀաւատիդի կոչեցեալսն, որք կատարեցան անդ՝ ՚ի Աահակայ որդւոյ Խոսրովայ։— Ըստ մեծաւսրութեան ինչ ձայնի անուանն՝ ընդ կարճ ասէ ումն լինել Թերևս զայժմու Քէքէճն անուանեալ գիւղ (էջ 61)։

Տեղի մի ևս երկրագելի անուամբ գրի յարձանս եկեղեցւոյ Ս. Գրիգոր վանից Աշուց, « խուզած Մանուկից ՚ի Կարուց յերկիրն », չէն կամ ագարակ, զոր Տիգրան պաշտաւնեայ Զաքարիայ սպասաւորի՝ յամի 1215 շնորհէ այնր եկեղեցւոյ կամ վանից Լուսաւորչի։

60. Յանկալի էր առաւել քան զասա և քան զյոլովս ՚ի տեղեաց՝ գտանել զտեղի Իջևանից գեղջ Վանանդայ, որ յետ Դ դարու ընծայեաց զայր մի մեծագործ, պայծառացեալ ՚ի կէս երից ամենայն վսեմական ձիրք մարդկութեանս, արութեամբ, խնամոտութեամբ, արհեստիւք և հայրենասիրութեամբ, որովք անմահ անուն եՔող յեկեղեցւոջ և ՚ի պատմութեան մերում. երէցն Դևոնդ. այն՝ որ յետ մահուան վարդապետացն իւրոց Աահակայ և Մեսրովպայ՝ առաջին անձն վեհ հանդիսացեալ ՚ի Հայս, միանգամայն զօրութիւն և քահանայական Նին և գինուորականն գաւազ։ Բարեբաստիկ համարիմք զի յայնմիջէ զծննդեան տեղի՝ այնքանով առն, ուխտադիման խանձարուրք, ՚ի միջի անհուն չտեսմարանաց մահու և անգերեզման վհից, որք զբիւրս բիւրուց մարտկաց յոգնաթիթ ազանց արեւելից և հիւսիսոյ՝ ընկղմեցին ՚ի գաւառի սաս վանանդայ. որում նահ իմն զարմանալի Թուի սահմանեալ, 2000 ամաց յառաջ սարմատական տոհմի միոյ լինել ասպնջական (Վնդաց կամ Բուլգարաց), և յետ այնքան ամաց՝ այլում՝ յայժմուս հզօրագունի համառօտ տոհմի (Ռուսաց) լինել սիրազութեան մեսամբ վիճակ, անջինջ պահելով գրնիկ հայկականն յիշատակ։— Մինչև ՚ի ցանկալի յայտնութիւն տեղւոյ գեղջըն Իջևանից, արգահատանօք փոքր ՚ի չատէ ծանօթութեամբ մեծի անձինն՝ ՚ի նմանէ ընծայելոյ, որով յաւէտ պատուական և փափագելի մեզ Թուի ընծայաբանն, խակապէս չունելով ինչ նորա առելի քան զհամավիճակ գեղջեանն կամ զառերակ Վանանդայ, բայց եթէ արգեօք գծագուկ մնացուածս մեծագոյն ազգատոհմի սրոյ երիցան այնորիկ։

ԴՐՈՒՍԴ

Ի Ս. ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ ՎԱՆԱՆԴԱՑԻ

Ի բազմակերպ ձրից և շնորհաց՝ որովք պարգևեցաւ մարդս յԱյրարչէն, երիւք յատէտ մեծ և հրաշանշան հանդիսանայ յաշս համառեալիցն, և զհաստատակաց սահմանաւ մահկանացու ասպարիսին անդրադարձեալ՝ յափշտակիչն կրքէ զազգս և զդարս։ Ձիշտասակ, գիւանք, արձանք՝ վեհագոյն գրեն և սիրեն զառաքինացեալսն իակապէս զօրութեամբ սրտի, մտաց և հոգւոյ։ Եթէ զազնիւ ինչ և զօրինաւոր և ոչ դիւրահաս՝ կէս նպատակի եդեալ՝ ուժգնակի առ այն գիմիցէ՝ իրագործել, Քէպէս հասցէ ՚ի կատարուԹիւն և Քէպէս խոչընդոտանեցի մահաւորմ, քաշ և արի վկայի, դրուատի և պատուի սիրան այն.— եԹէ զԹանձրուԹիւն և զհամրուԹիւն տարերց՝ որովք չուրջ պատեալ է, նա և ինքն իակ ՚ի նոցունց կազմեալ, կամ գներքին զանաբարական բնուԹեանն արկնս և զօրուԹիս՝ երդմնեցուցանելով իմն նկրաԹիցի հերձել և Թափ անցանել ընդ զգայիս և ընդ իմանալիս, և նորանոր ինչ յերեւան հանցէ, կամ գյաճախագունիցն քան զինքն յայտնեալս՝ յաչ իւր ամրարիցէ հոխապէս, գիտաւն և իմաստուն համարի և մեծարի միաքն այն.— իակ որ յայտնիկ զօրացեալ կամ ոչ, բայց գերագոյն իմն բաղձմամբ և բերմամբ՝ ՚ի սկիզբն էուԹեան իւրոյ և յէացացուցիչն վերբերիցի, ՚ի հրաշափառն յարակրԹեալ նմանողուԹիւն առաւաժուԹեան, ըստ առնելոյ հոգւոյնման հաստատածոյն, ագնիւ և սուրբ խոստովանի և պաշտի հոգին այն։— Աիրա, Միսք և Հոգի առաքինիք. կամ ԱրիուԹիւն, ԽնամոտուԹիւն և ՍրբուԹիւն. երրեակ գերապհրաշ սքանչիք ՚ի մարդում և ՚ի մարդիկ. որոց երկիր պատանդան լինի, երկինք՝ օԹևան։ Զարիացեալսն՝ մանառանդ յոգուս հայրենեաց, հաչակին կիրՔք և անկիրՔ ազինք՝ պէսպէս օրինակօք, որպէս ամենեցուն է յայտ. ընդ խնամոտուԹիւն՝ աքանչանան և պարծին՝ որոց միանգամ զիմաստուԹեան առեալ իցէ ճաշակ. զՄորբս՝ ազնուագոյնք ՚ի մարդկանէ և եկեղեցի և երկինք՝ ոտնեն, և ոտնեացն՝ և ՚ի լռել քնարաց, ՚ի փշրել աբձանաց, սի նա և ՚ի գագարել գարուց ամանակաց։

Աայլ, ո՜ն անդր, համախմբեսցին երեքին ևս գագք ըղմայլազաց՝ ՚ի պանչանալ ընդ անձինս յատեսնորհս, ընդ անձինս գոյզնագիւտս չնաչխարհիկս, որք միանգամայն երրեկի հրաչալի ձրիւք՝ արիուԹեան, խնամոտուԹեան և սրբուԹեան՝ գերազանցեալք գան և վեհագոյնք ՚ի վեհագոյնս անգամ։ Եւ զի մի իրր վայրապատք ընդ երբեսս երկրի գանդաչիցիմք ՚ի տոհմս ազգաց, յանգիման կացցէ մեզ և կաց իակ ՚ի տեղւոջս հայրենեաց մերոց՝ Եբեց մի վանանդացի, երէցն Դևոնդ։ Վասն իակ եկեղեցիս Հայաստանեայց ընդ կատարել Սրբոցն իւր ոտնէ գնա, ազգայինքն ընդ գերագոյնս ազգասիրաց իւրեանց և արի արանց. այլ եԹէ գպիր՝ ոչ այնքանով մեծի զօրուԹեան արտին և հոգւոյն հաւատարեալ և զմիսան կարծէր, ծանիցէ գնա այսուհետև գերազանցիկ և յայտ մասին. և Թերևս ոչ զոք այլ գտցէ յիւրում տոհմի, (զի Թպդուք զօսարս), հաւատար և նման ամէն չծորդեալ, նոխացեալ և ծայրացեալ միանգամայն երեքումքս ևս բարեփառ, դրուատելի և գերաւնակ վիճակօք։

Ըղձալի էր յոյժ արգարեւ ինձ, առաւել քան գնահատակութեանն,— որ երկարատատում հաւանեալ է յերկոցուն ժամանակակցաց,— գնախկին կենացն և վարուց Ղևոնդեայ գիտել գՀանգամանս. զորմէ սակաւ ինչ

---

1 ՚ի Հր. Մա. մասին Սարբ-գամըշ հովսի կամ մեղ ՚ի մերձակայիցն՝ պատշաճի Պափլիկա-Վէլէ գեղ. (Աչքարատա օրագիր. ՃԻՏ. 350). զոր ոչ տեսի ՚ի տարեսակ աշխարհացոյցս, և ըստ առասին (Աչք վաճառականաց) գտագրէ ինի է իմիվանից, և ոչ անդեպ ՚ի քննութիւն. մանաւանդ զի ասի լինել անդ և ուխտակոց մեծի եկեղեցւոյ։

աւանդեն մի 'ի նոցանէ, և երկուք կամ երեք ևս այլք երիցագոյնք[1], որք յառաջ քան զնահատակութիւնն նորին գրեալ էին զգիրս իւրեանց, և ոչ յայնքան բարձրութիւն կարծէին զնա յետոյ վերանալ։ Բայց և 'ի սակաւուց կայծից անտի բանից հնգեցան ականատեսքն և մերձաւոր գրչաց[2], և յիմացուածոյ յետագոյիցն՝ մարթ է նշմարել զնշոյլս հարաւտա հրատի հոչուց նորին, եռաւհրաշ յառաւելեալն, զոր բերանն ընդհարաւղիս կնքեաց 'ի մի բան հաւատոյ համառօտելով, Լուսաւորիչ ասելնիցն։

Լոյս անճառագ և Լուսաւորիչ խաւարելոց, կոչէր ոմն 'ի զգոնէից իշխանաց ժամանակին՝ զերանելին Մովսէս Խորենացի, և փափագէր ցնծալ փոքր մի 'ի ցնծալոյ լուսոյն, գասանելով զնա՝ առեալ « մեզ երկրորդ Սահակ և Մեսրովպ, յետ գնալոյ նոցա առ Աստուած »։ Այլ եթէ գրուածքն Ծանօթք մեզ այժմիկ' իցեն ապերջ լուսոյ Մովսիսի, սակաւին չէին բաւականք 'ի հաւատոյ' իւ և որմէ էր նա երկրորդ Սահակ և Մեսրովպ. և եթէ իմաստասիրութեամն և պէսպէս գիտութեամբք հրաշացուցանէր նա զԱթթրուանին Սահակ և զնմանիսն՝ յառաւրան յայնոսիկ, 'ի գալ յետ սակաւուց այլոց աւուրց Նեզութեանց և տառապանաց, ոչ ևս երևի Մովսէս 'ի մէջի, և ոչ այլ ոք յիմաստասէրց և յահկիզիր Թարգմանչաց անտի, 'ի տագնապ ժամուն՝ որ եհաս ազգիս և եկեղեցւոյս Հայոց, յետ տասն ամի գնալոյ առ Աստուած երկոցուն վեհից վարդապետացն այնոցիկ, Սահակայ և Մեսրոպայ։ Այլ 'ի մէջ և 'ի չուրջ անցանէ ահաւոր հանդիպ՝ պարագլուխն աշակերտաց նոցին և Թարգմանչաց՝ Կիրեցս այս Վանանդացի, որ հրաշացոյցն և հրաւոյց զգերփառաւնական ամենայն իշխանաց ժամանակին՝ զՄամիկոնեանն Վասրգան, և զվեց բիւրս քրիստոսազգեաց բանակին՝ յանմահանալի հակառամարտին, 'ի մեծի աւուր սերտագոյն գաշնակցութեան խաչի և Նիզակի Հայաստանեայց. և յետ կատարման նորին՝ գյաւաչադէմն և զգօնագոյն ճեպընդոյ նախարարացն՝ զհամարականն Աբրուխր, որ փղձկերն և ոչ յագենալոյ « յամենայն ժամու 'ի տուէ և 'ի գիչերի »։ Յիշատակ և յեղյեղմամբ հոգեպղուխ խօսից և խրատուց նորուն, և « այն էր Նորա հոգւոյն կերակուր և որճանի քաղցր »[3]։ Թնդակցիմ Սահակայ՝ զուարճանալովք 'ի լոյս Խորենացւոյն, այլ Վանանդացւոյն բանիք հրաչափառագոյնք՝ թէպէ ընդ Աբրուխր անցեալք և ընդ այնքան դարս, խորագոյնս յիս ինքն ազդեն, քան այլոյ ուրուք յոսկեգնիկ պարուէն. որոյ և փափկագոյն բանահիւս՝ անուշակն Եղիշէ՝ ոչ առանիկ ամենաբանութեամբք Ղեւոնդեայ պերճանոյ և եռանգնանոյ. և ոչ քաղցրագոյն ևս լոի մեզ մեղմիկ աւուշ Նոնոնոյ, և ամենայն ընդ բարձրաբարբառ փանդռան Վանանդացւոյն, եթէ արէն իցէ այսպէս համաձայնել։

Համահաւաքեալ 'ի մի տեղւոյն զորեար նշանաւոր՝ որ 'ի կէս կէ գարուն երևեցան և գործեցին յերկրի մեր բում, 'ի ագոյի և 'ի սերալի ժամանակին, յորում դեռ այն ինչ բարձեալ էր անտի « թագաւորն Քաճառայ »[4], և դեռ բազումք էին ականատեսք և Ծանօթք՝ ոչ միայն պարթեւական քահանայապետին, այլ և յետին վաստակաղիկ Աբրահամեան, և յամենեսին միանգամայն անդ արկեալ, յիշեաւնք՝ սակաւին մեծագահս, 'ի զօրավարս քաջամարտիկս, 'ի Թարգմանիչն հարաւարագետս, 'ի հոգեառնեան պաշտամնեայս եկեղեցւոյն, ոչ լոկ երկրորդ՝ այլ և առաջին յետ գնացելոցն և հրաժարելոց յաշխարհէս, հանգիսանալ ինձ Եղիշէն Ղեւոնդ' 'ի համարէն Հայաստեան ժամուն, և ընդ առաջինս յամենայն ժամանակի՝ բազմագաւիկ ընծրհօքն, որոց մէն բաղխեալ յայլ և այլ անձինս՝ գիւրաքանչիւր զբաւէր նշանաւոր երևեցուցանել. զոմն՝ արդութեամբ, զոմն գիտութեամբ, զայլ ոմն՝ քաջաբանութեամբ, և զիւս՝ արիական համարձակութեամբ, և զայլ զգարձեալ հայրենանախանձ զօրծով և գործով։ Իսկ սահմանօր այս ամենայն հանդիսաւնեալ արտաքոյչ 'ի միւսմ յայսմ անձին. և այնքան յաւէտ՝ որքան զի ըստ իւրաւմ նախ ընտրութեան վիճակի՝ զհոնարհականն զաշխարհիկ երիցութեան առեալ էր կարգ, հաւատար հազարատարագ նմանեալ 'ի սիրաւագեղջէից Հայոց, և 'ի դէպ թուէր կալ միալ նմա յանձնան ինչ սահմանի, կամ զէթ զառաջնաւորագոյն իւրոց՝ Աբրնի և Մուշէի. եթէ, որ 'ի նմանի յաւթիւն շնորհաց՝ ոչ վերածէր զնա կալ 'ի զարմանալի իմն աւանձնագութիւն եկեղեցական և քաղաքական, այլ և գինուորական գաւազ. որպէս գիտէ ամենայն Հայ հրմատ պատմութեան ազգի իւրոյ։ Այլ ասեմ զնա և յիմաստասիրութեան գերազանցեալ քան զյագունս, և քան զընաւս, բանիւք' յեկեղեցւոջ և յատեանս, 'ի գաւառս, և 'ի բանակի, 'ի խնջոյս և 'ի բանտի. և քան զլսելիս՝ յինքն ձգեալ զսրտս ամենեցուն և գիանդգատանան, գխոհականութիւն և գհնութիւն, գաւազագ և գանաւագոց. իրրու այն թէ 'ի յաւիտենից հակատագրեալ առ 'ի հովանանալ հայկական հրազարակաց' 'ի մրրկաբեր պահուն, որպէս կազնի մի հինաւուրց 'ի մէջ մատռաւտանի և զագիպարիսն ծառոց։

Գործանաց և սրոց որ 'ի նմանէն և առ նայն ընծայեալոյ՝ նշանակ համարիմ զկերպակերպ յեղանակութիւն անուանն, աւանդեալ 'ի գիրս, Ղեւոնդ, Ղեւոնդիոս, Ղեւոնդէս, Ղեւոնդիոս, և անաւորս ևս՝ Ղեւոնդիէ, գոլ 'ի առէպ կոչելոյ և կարգալոյ զնա, Ջէր Ղեւոնդիէ։ Այլ սերալի ինձ յաւէտ մակակոչութիւնքն, ձրիդ և բարւոյ Նորին յայտարարք, և առաւելութեանն 'ի համաշնորհսն. որպէս, խոնեմ 'ի միջի խոհականաց, Գերակայ[5] 'ի միջի գերազանցելոց, Այդպար և Այր Աստուծոյ, որպէս յառաջ անուանէ զնա Փարպեցին. Մարդ՝ 'ի միջի սրբազանից, և Ամենասուրբ[6] 'ի միջի սրբոց. « Ընտրեալ և շնորհեալ 'ի գործ միակութեան Աստուծոյ »[7]. և 'ի լսելն և հանգարտելն անգամ՝ բացափայլեալ 'ի հանուրց ակընդրի՝ « տեսակութեամբ հրեշտականման երեսաց կերպարանի »[8], եւ այսոքիկ և այսպիսիք՝ ոչ 'ի յետին գաւթոց մարդկանէ, որք սովոր են մեծացուցանել գրուա-

1 Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի և Կորիւն։
2 Կորիւն։ Եղիկ, Եղիշէ։ Մ. Խորենացի, Ղ. Փարպեցի։
3 Ղազար Փարպեցի, էջ 316 (տպագրութեան 1878 ամի)։
4 Աբասեաց վերջին Ա. Ա. Սահակ, ըստ Ագաթոց Խորենացւոյն։
5 Գահնաման։ 6 Փարպեցի։
7 Եղիկի։ 8 Փարպեցի, 203։

տեաք և պերճաբանութեամբ զհետաւոր նախահարսն առաքինիս՝ ասացեալք, այլ ՚ի կենակցաց նորուն և ՚ի մերձաւորաց կոթողմանաց։ Ցորոց ամենայնէ յայտ լինի մտառուցս, զի ըստ սղոմանեան պատեհութեան և ըստ փարպեցւոյն յայտնաբանութեան, շնորհեալ էր նմա առ ՚ի վերուստ՝ « Լուսաճառանչ պայծառութիւն ներքին մարդոյն »։ միաք և սիրտ մաքրեք։ յորս իրրև ՚ի պատկան նախատաբեր՝ համարձակ ներգործէին շնորհք Հոգւոյն Սրբոյ, երկնատրոյս լցեալ խնամոյթեամբ և երկրաւորս։ և զոյգ նոցին և առ ՚ի նոցան ծնեալ՝ անվեհեր սրինթիան ոգւոց։ և յերկոցունս միանգամայն հետեւացեալ՝ առատ և հզօր բղխումն բանի, ՚ի պանդուցումն, ՚ի վառումն և ՚ի յորդոր համբոյր լսելեաց, ՚ի հերքումն և յապաստանութիւն հակառակացն ճշմարտութեան։ Եւ ՚ի վերոյ այսոցիկ՝ ժերտիր և անվհատ գործունէութիւն՝ մինչև յալեւոյթ հասակին, մինչև ՚ի շարալուծ խաչատանգանս վաստակաբեկ մարմնոյն, մինչև ՚ի չունչն յետին։

Ընդարձակ կամ երկնատոր բնաւորութեան հոգւոյն՝ նախկին օժանդակք եղեն ապագին ընտանեկան հրահանգք, թերևս յիւրանման օժեալ ծնողաց ընկալեալ, և աւանդական ոճմոյին պնդութիւն սրտի, քան յոգւոյ « աւազակութեան, զոր իրր գործ մեծ՝ ցանկութեամբ » գործէին Վանանդացիք, ասէր պատմիչն, և որպէս « ուղիղ իրք ախորժելի թուէին նոցա »։ — Գոյր սրտիւք և ՚ի սէս սիրտ սրբազան աւազակութեան հոգեօրսակին Պօղոսի, օրաւմ բազում մտառիք նման հանդիպոցաւ, եառնդեամբն, համարձակութեամբն, հաստատութեամբ, հնարագիտութեամբ, այլոքն հանդերձ, այլ և բանաիւ և գանիւ, և հուսկ՝ սրամտութեամբ։ Ի հակ պատահեաց նմա և ժամանակ գալոց իւրոց յաշխարհ և առաքին սիրոյն, ՚ի խազազական վերջալոյս հայկական հարաւութեան, յաւուրս խաշեմազարդ թագաւորութեան Վառաչակայ, յոր վայելէր հանդարտն ՚ի վիճակի ծննդեանն իւրոյ, ՚ի գեղջն Խիւանից։ և յառաջ քան զգիւտ հայերէն գպրութեան՝ հարկ է թէ ըստ պահանջելոց քահանայական կարգին, — զոր և հաւանիմ ընկալեալ նորա յառաջ քան զգիւտն, — վարժեալ իցէ յաւորի կամ ՚ի յոյն լեզու, առ ՚ի կատարելոյ գպաչութեանն եկեղեցւոյ, ընծայելով նմին զնախընծայ խոյրիս հոգւոյն, և զկայսառ կոչմանացն եառնդնաշարժ սրբոյն՝ ծաւալելով յոգիս ոչ անեռանդն հայրենակցացն, հայրաբար գրգռելով զնոքոք, որպէս կարգն պահանջէր, և պաթկեչաակրօն ամենանութիւնն ուսուցանէր, իրրև փորձով՝ արգահատել կարեաց և կրից հասարակաց մարդկութեանս, զորով և առ յապա այնքան զուարթառատ խնամով փաթէր՝ զամենայն աւուրս կենաց իւրոց։ Ոչ վարկպարագի համարիմ և զայս փաստ մի ՚ի փաստից չքնաղ քաղաքավարութեան Նորին ընդ ամենեսեան, որով և գերազանցեցան քան զերիցակից իւր և քան զեպիսկոպոսանս։

Խակ ՚ի հնչել աւետեաց յանկարծագիւտ հայերէն տառից և գպրութեան, որք կարապետ լինէին գիւտից, մանաւանդ եկեղեցական և վարդապետական ուսմանց, մ արգելոք այնքան խայտայր ցնծութեամբ՝ քան երէցս այս երիտասարդ, որոյ ոչխոյժ մտաց և սրտի՝ ոչ հավանան երբէք հաւակս, և ոչ ՚ի միւմ մտին լաւութեանց։ Ոչ երկրպիմ, զի զերկոսին ևս ընտանեական՝ գմարմնաւոր և գհոգեւոր՝ յանձն արարեալ առ վայր մի ՚ի խնամս հաւատարիմ մերձաւորաց, և ոչ ածեալ անկն ՚ի զաւարթածաղիկ մարտացն, յորսիրթի մտավարժ, փութայր՝ որպէս Պետրոս առն աւարտահատակ ընդ Քաղհանեաց զեռահասակի՝ հակաչար մրցութեամբ ընթանալ ՚ի առնար մտաւորն յաւութեան, և ներքաղցրն քան զանփորձ մանկտին մխել ՚ի խոր խնամոյ և մտաներից, և առաւելուլ քան զնոսին՝ հասանացեալ խերքն։ Քաղցր է ինձ հաւատալ և խնդալ ընդ այս մեծապէս. քանզի արդարև խակ առաքեալ զառաջինն յերեան գայ Պետրոս՝ ՚ի պրակս պատմութեան, և անդամին զառաջնութիւն առացեալ առեալի ՚ի նախակազմեալն վարժարանի քաջխմացին Մեսրովպայ, ոչ այնքան արդեօք չնորհիւ հաւատկին՝ որքան վարուցն և մտաց. պարագլուխ կալով պանծալոյն քան զամենայն պարու հայութեան, ընտրելոյն այնոցիկ պարմանեաց, ուշեղացն և մտացեաց, երկարօգեաց և փութկաձայնից, որպիսիս գիտէք ընտրել յամենայն ահմանաց Հայոց՝ մեծ հայրապետն Խահակ, գերազանգեալն հմտութեամբ հեղինակութեան, համանմանս ինքեան ախոյեանս անկաղիս և պատկառելիս լեզուաներացն Յունաց՝ խրախուսելով առաքել համարակս ՚ի հրոչակաւոր յարանեաց և հետաքրքրաց նոցին և ՚ի հարուստ մատենագրութիւս։ Ոչ փոքր էր պարծանք Պետրոսեայ ոչգիսիկաց շահատակաց վարժարանիս նախագահ լինել, և յետ Յահակայ և Մեսրովպայ՝ առաջին գոլ հրահանգիչ, Թերևս և Թարգմանիչ։ Ոչ փոքր նմա շնորհ և աշակերտակիցս ինքեան ունել զԵզնիկն և զԿորիւն և զՅովսէփ Պաղնացի։

Այլ ևս մեծագոյն՝ նախ և միակ յամենեցուն՝ անուանիլ վարպապետ, և աշակերտս ունել ընդ ձեռամբ՝ զգերազահմտաւեսան ՚ի մեզ, եթէ ոչ զնոյն ինքն զպատմահոյսն Մովսէս Խորենացի, այլ զհետաւորն կամ Վերծանող Մաշ րէ՝ զնորին եղբայր, և զբերգողն Թէոդորոս, որպէս վկայէ պատմիչն պատմագրին Աբծրաճեանց. նաև իւր խակ աշակերտակիցն (Կորիւն) և գլուխն աշակերտաց (Մովսէս Խորենացի [1],) պատմեն, զի ՚ի տանել Մեսրովպայ զընտրեալսն յատաւմն և ՚ի Թարգմանութիւն՝ ՚ի վարժարանս Ցունաց, հասեալ նմա հրաւէր ՚ի կայսերական քաղաքէն, « զրգռմութիւն աշակերտացն » տարեալ ՚ի քաղաքն Մելիտինացւոց, յանձն առնէր ե» պիսկոպոսի քաղաքին, որ Ակոին կոչէին, և գլխաւոր » աշակերտացն Թարգոյ գոյն՝ որում Դևւոնկեան կոչէին, » այր հաւատարիմ և ձշմարտապաշտ »[2]։ Զքնար վկայութիւն անհնարանձ ուսումնասիրին, որ և քաջիկ յայտ առնէ զառաւելութիւն մտաց և հասակի և զգծութեան Աբանի, որ չէր հաւազեալ ՚ի քաջառաւ կարգաւորութենէն, խակ տենչանօքն առաւելեալ ևս յոյժ։ Որպէս զի և յետ ատաց, մինչ երկրորդ անգամ կարգեալ լինէր ՚ի Մեսրովպայ՝ վերահասու գառաւ միոյ աշակերտաց, յանկոյթ

1 Մովսէս Խորենացի. Գ. ԽԶ։

2 Կորիւն։

և 'ի հովանաւոր պրակս Շաղագոմից վիճակի առնմանա-
կըցութեան կարեաց [1], բազձանաք ուսման՝ զուսուցողու-
թեանն մերժէը զպատիւ. և 'ի լսելն՝ զի որ երբեմն ա-
շակերտակից իւր կրօնիւք՝ Յովսէփն և Եզնիկ՝ գեղերին
'ի դիւանս Եղեսիոյ և 'ի մեծն Բիւզանդիան, 'ի ներ-
կուս հմուտքիւն հելլենականին, 'ի խոյզ ևխնդիր օրինա-
կագիր մատենից և 'ի թարգմանութիւնս, թողոյր զվար-
դապետականն գաւազան, և զաղերսի առեալ ցուց՝ գո-
տեպնդէր միւս անգամ անդրէն հաստատել, մինչ յամ-
բարս մեկուսութեանց. ոչ այնքան գյաղթողանալն սի-
րելով՝ որքան գյղփանալն նպատիք. և զվկայն հաւատա-
մուրհակ իւրոյ հաստատիմ իւր գտեալ՝ զկորիւն, միա-
բան փութային հետէին, և վազագոյն քան զնախ քան
զինքեանս ուղևորեալն 'ի Բիւզանդիոն կոյս, զԱբձանն
Աբթրաւնի և զՅովհան Եկեղեցացի, ժամանէին անգր. և
մեծարեալք լինէին հանդերձ սլլովքն՝ յեպիսկոպոսա-
պետ մայրաքաղաքին, և յարէին 'ի քաղաքիքն և 'ի
յառակաբանն « Եզնիկ, իբր առ ընտանի և անդգակից
» իւրեանց եղբայրութեանն, և անդրէն միաբանեալ՝
» զհոգևոր պիտոյիցն խնդիր վճարէին [2] » : — Այս բոլո-
զակ պատրաստեցան ուսումնասէրքն անյագք 'ի ճոխագոյն
քաղաքաց՝ գրաւոր գանձուք, ոչ միայն յիմաստասիրա-
կանն, այլ և յաստուածաբանականս. առ որս՝ և գԵպ բա-
րի եղև յայնմ ժամանակի՝ մատչել նոցա 'ի կենդանի աղ-
բերս. այն է, 'ի քաղաքն Հայոց պատմութեան Ղեւոնդեայ,
Թուարիչ քրիստոսասիրտ մեղրութեանն Ղեւոնդի,
յեփեսոսեան սինհոդոս, 'ի մեծն Կիւրեղ աղեքսանդրա-
ցի, 'ի Յոհնաղ, 'ի Թէոդիտոս անկիւրացի, և յայլս: Եթէ
անձամբ իսկ գոան 'ի ժողովի անդ Թարգմանիչքս մեր՝
իրրև լսողք կամ նաւիրակք, աստուածեաման ոչ անխիմ
ասել, այլ հաւանութեամբ. և ոչ զայն ևս՝ եթէ 'ի գալ
հասանել Ղեւոնդի և Կորեան՝ կատարեալ արձակեալ էր
ժողովն, որպէս ասց կարծել ընդունելութիւնն՝ զոր ա-
րար նոցա Մաքսիմոս, զի յետ տարաժամութեան Ղեւոնդի՝
կարգեցաւ ա յաթոռն Կ. Պոլսի. և եղև այս յամենան
հակաեմբերի սմին 431. իսկ գարձ Թարգմանչացս միոյց
'ի Հայս՝ եղև յաւուրս հայրապետութեան Պրոկլի, որ յետ
երկուց և կիսոյ ամից յաշխարհս գՄաքսիմոս [3]:

Յայնմ ամի (434), թէ ոչ և յետոյ, գոանացեր Ղեւոնդ-
դիոս պարագլուխ գրասէր և գրաբեր Թարգմանչաց, յե-
տաւուրս իմն բերելով լծակաւ կշռոց ընտրութեան՝ 'ի
լրտեսել երկրէն աւետեաց՝ զպարարտագոյնս 'ի բերոց,
զերս եկեղեցականս և կանոնականս, զկենսաբոյն և վեր-
կոցան յառաջ քան զայն եղելոց ժողովոյ. և 'ի վեր քան
զամենայն՝ զոգևորսն մեծ և պատուական՝ գոտոյգ և հաս-
տատուն օրինակս Աստուածաշունչ Գրոց. հանդերձ ո-
րովք, գտեալ զվարդապետս իւրեանց՝ » զՄեծն Մահակ
» և զՄեսրովպ յԱշիշատ Տարօնոյ, մատուցին և ըզ-
» Թուղթսն (Պրոկլի և Կիւրղի) և զկանոնս ժողովոյն [4]. և
» առաջի դնէին Ս. Հայրանցն՝ զբերեալ կատարեալս ե-
» կեղեցւոյ սրբոյ » [5]. – Քանի՛ մեծ և պատուական էր այս
ընծայ, կամ՝ թէ հանդոյ իցէ ասել՝ աստ հելլենական, քան

զհրաշակերտ ասկիպազած անդրիս ձուլեալս 'ի հարստա-
յըն Ակիլլեայ և Դիոդինոսի [6], զորս աշխարհակալք մեր
Աբտաշէս և Տիգրան՝ 550 ամաք յառաջ՝ գերելով գեր-
փելով գնկղտագս, փոխադրեցին 'ի Հայս. զոյն անկո-
րուստ հարստութիւն առացաք գպրութիւն մեր՝ չքնաղ և
անհամեմատ թարգմանութեամբ Աստուածաշունչ գրոց՝
յընտիր և 'ի ստոյգ յօրինակաց անտի էօթանասնից.
և որպիսի՛ անհոգ առաքին սրբոյն պատմանաց կանոնե-
ցաւ հայերէն լեզուիս. — վաղու և 'ի բազմից վկայեալ է
այս յամենեցունց՝ որ գամ մի պարապեալ իցեն 'ի տես-
մայինս մերս մատենագրութիւն, 'ի բնոյս և յօտարաց,
և ասելի ինձ երկրորդելն: Բայց կամ է ինձ յաժարա-
կամ յիշեցուցանել, զի և այսմ մեծի ընծայարերու-
թեան՝ առաջնորդ և նախաձեռնակատար եկաց Ղեւոնդ, որ-
պէս էր զուշակել յատագութենէ նորին. այլ և յանուանէ
վկայեալ է 'ի մէջ 'ի մերոց պատմչաց մերոց, եթէ յի-
շեալ սրինակդ Ս. Գրոց՝ բերեալ եղեն « 'ի Սրբոյն Ղե-
» ւոնդէ, և յայլոցն՝ 'ի Կաստանդիական քաղաքէն » [7]. և
մատուցան յոյժ պիտոյի պաշտելի ձեռաց, թերևս յետին
հանճարական նուէր, առ երկասեան նահապետս դպրու-
թեանդ տանս Թարգմանչաց. որք ալեւոտեալք և ծայրա-
ցեալք հասակաւ և վաստակօք, ոչ ինչ գանգատէալ՝
» զարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն՝
» փութանակի, հանդերձ նոքօք՝ վերստին յօրինել նո-
» րագմամբ [8] » . և ապա այնուհետև կարէին գոհութեամբ
ժամ 'ի ձեռանէ զմահ-ականացուդ 'ի խաղա-
զութիւն յաւիտենից. մանաւանդ զի, – թէպէտև առ ա-
մենակատար յարգարել զայնպիսի կարեւոր գործ՝ դաս
մի և ժրագոյն պատանեաց գումարեցին, առաքել « Ա-
» զգաւանդրիա, 'ի լեզու պանծալի, 'ի ստոյգ յօգտանալ
» ճեմարանին վերծանութեան » [9], – սակայն թերևս ոչ
ունելով ակն՝ բաւել սակս մինչև 'ի գարձ նոցին, 'ի հար-
տարգոյն ձեռս յանձն առնէին զձեռնարկեալն իւ-
րեանց, և 'ի վաստագոյն առաջնորդ, յերթեցն Ղեւոնդ:

Ոչ վոյրապար պարծանաք յառաջ ձգեմ և առա զա-
զգ հաւատարիմ վկայութեամբ, և ոչ միոյ՝ այլ յոգունց
խոկ. զի տեսաք գնա նախ գտանել 'ի գլուխ գրաբերացն,
ապա վկայեաց անաչառ յօրինացին, զի ճոխագ եղեւ
թարգմանութիւնն, այսինքն գրաբերեցն. և թէպէտ
Կորիւն ասիցէ գլխատար ձեռնտու Ս. Սահակայ յայս վե-
րադարձութիւն թարգմանութեան Ս. Գրոց՝ զնշնիկն,
այլ սա ինքն եղնիկ յիշելով և իւրովհանն զակղձնատրա-
թիւն գպրութեանց և թարգմանութեանց Հայոց, և զա-
մինայն կարգն յատուցագիրատրեան, որպէս ասէն, 'ի ձեռն
Ս. Մեսրովպայ և Սահակայ, անդէն 'ի նոյն յարեալ յա-
ւելու, « Եւ նոցան աշակերտ՝ Ղեւոնդ, այր ատոր և
բնութիւ » . և ապա յետ նորա կարգէ զսլլն և զինքն,
« և Աբձան և Կորիւն և Եզնիկ, և այլք անհնակ նոցուն
» լաւագոյն հանդիսից, և ձեռնադրելոք 'ի նոյն սրբոյ
» կաթողիկոսէ » : — Այլ պարզապար ևս և առանց ինչ
ճգնութեան բանից և ջանից՝ վկայ կացցէ մեզ միւս ամն՝
հետևող Թարգմանչաց և ոչ շատ հետէ ժամանակաւ,

1 Խոբենացի. Գ. ԿԱ:
2 Կորիւն:
3 Մաքսիմոս † յ' 12 ապրիլի. 434 ամի:
4 Խոբենացի. Գ. ԿԱ:
5 Կորիւն:
6 Խոբենացի. Բ. ԱԲ:
7 Ասողիկ:
8 Խոբենացի. Գ. ԿԱ:
9 Խոբենացի. Գ. ԿԱ:

և առեալ յերիցագունէ քան զինքն պատմագրէ· զի հա-
մառատելով զվարս Ս· Թաթիոյ հզնաւորի և գովաբանե-
լով, ասէ· « Էր փոխանորդ վարդապետութեան՝ Թա-
նուանս պիտանի կամ գեղանի բուսոց, յորոց է ինչ անծանօթ մեզ, որպէս. Ձիկ. Շահնիկ. Ալուզին. Գէշէր. Գըբա. Ծոխ ագ. Բալի. Շեռքիկ. զարձակ. ի ծանօթագուսիոյ՝ Թրմենիակ. Գազ-
պիկոբ. Գիմ. Սիճ. Ռոխ. Մանգակ. և. Ագրեցոց սրիւն. Ռոխ. Ծիճեքիկ. Լալագար. Ուրց. և այլն: ի հասց ազգէ յիշէ անգ գրոցն գՅաւէհ. գկոքաս. գՄոխակ. և Գըզըլըխ:

սկզբանն՝ երկու մղձաւ հեռի յելից Գազրքքօփաբանայ՝ ունելով զՕղրուձա գիւղ յահեկէն, և մերձ նմին զԳառաջուր առ համանուն հերձակատար լերամբ, և զկիլիսամբա կամ կրոմբա Սարին և վերին. որում հասեալ ի հարաւոյ և յաջմէ գետակին՝ Ալյանվիրտի խարաւպա, և ի ստորա Էր. և հասեալ՝ Գարաչա. որոյ յելից կուսէ բացագոյն չո-

բիւք մղձեալ՝ էջմայրդ. յորմէ և անդր փարախաւս յաբեւելս՝ խառնի գետակն ընդ Գարապալդ գետակի։ Ստ յարևելեայ Թեզ Փերլի լերին իջեալ խառնի ընդ Էր. ընդ հրամս հրաբղխի զուգակի, յորոյ կոհակս կառուցեալ են գեղջն Գամ-օղլու, Քան-տէրեսի կամ Քանտէրվիչ. յորոյ յե. երկու մղձաւ հեռի Սուղ-պուլաղ



42. Գարագաչ լեառն.

a. Նշաքարեայ և Ափխա խարիք. — b. Սիմակիր. — c. Երկաթաժանդ կաւ և աւազաքար. — d. Մառն-և-գուարց.

գիւղ։ — Ի Էր. և յահեկէ գետակին՝ Ազտիզ կամ Ազտին. երկոքին ևս ձայնիւղ հնաբիւն հնչեն, իբր Ազոք կամ Ազոխ՝ ի սակս ազոյին և հանգոյին նիւթոց, կամ պարզ կային գնեի ինչ պաշտամանց։ Յելից հիւսիսոյ սորին և յաջմէ գետակին կոչ Քիլլաքլը? գիւղ, և հասեալ նմին Զիչակը (Ջադգաւա). և ի նորին Էր. եւ Սարը Ալկատ. յորմէ և անդր ցեառնադարս գետակացն չիք այլ գիւղ. իսկ ի միջոցի երկոցուն նոցին՝ են գեօղքն Գրդզ պուլաղ և Գառմ պուլաղ։ Ըստ անուանն ծագիկատա և գեղեցիկ է հովիտն Զիչակլի, յորում բազում ագրերք սահանաբար վիժին ընդ զուգակաս կոշկոռս։

Սակ մի ի ստորև խառնըրդոց գետակացս, որ որպէս ասացաք ի սկզբան, գործէ զվարդևմարգ գետ, կոչ յաջմէ նորին հին գեօղատանն Քաղին, որ թուի և գլխաւոր չինից կոչմանցս ի հնումն. ուր զոչ ընդ կաղրոյ և թալ-նոյ՝ ատաքատութիւն և կատարած մեծ և ազեատալի գործեցին Աբարացիք եկեալք ի Դառնոյ յամին 774, որպէս զի էանց լիշատակն ի շարս գժբաղդ գիպուց ժամանակագրութեանց։ — Հանդէպ և հասեալ Քաղինոյ յայնկոյս գետոյն կոչ Գիւնեմիր գետիկ։ Քելլից հարաւոյ Քաղինոյ ի միջոցս վարդևմարգոյ և Ագտարակոյ կոչ խառիճի գեօղ, և վերագոյն ի Էր. նորին ի լեռնատին՝ խառիճի-պաշի բերդ, որպէս թուին աւերակք։ — Այսմ վիճակի պատկան թուի Քիւօր լեառն, իբր 8000՝ բարձր։

Բ. ԲԱՐՁԵՆԻՍ = ԿՈՂԲ

67. Հարաւագոյն ծայր արևմտեան մասին Ճակատուց՝ պարպեալ Ազրի լերամբք յարևմտից, և չրթամբք տաշտին Գայլատուց, ի բարձր Սիմակ լեռնէ իջուցանէ զազրեալ Ազտակ գետոյ, որ ստոր ի սկզբան յանուն լերինն Սիմակ կոչի. և տարաբարձր գետինն արտասվայր է թաթարաց, որոց հանգրուանք են ի Գարա-ձիրան գեղջ, մերձ ի հանգոյին ջուրս, և ի պահակատուն մի։

Սակաւուք հեռի յելից սորին Գարա-խաչտպա գետակ և յելից սորա Գայա-գազաֆսար. յորոյ հարաւոյ ի հիւսիսային ծայր Ծովակին Գայլատուց՝ ամբառնայ Քեչլուպաշ (Նոխազպլուխ?) լեառն 2630 Զ. բարձր։ — Իբր փարախաւս ի Էր. եւ Գարախարապոյ գեղջ յահեկէ գետացն կոչ Տէմիր-խան կամ Տէմիրտրքան, յորմէ կիսով փարախաւս ստորև ի նմին կողմն Գառուս ագած. և ևս խառնաբեհագոյն զոյգ հոսանուն գեօղք, Գանձակ վերին և Սարին։ — Հանդէպ Գառու-ագաճոյ յաջմէ գետակին կոչ խառիրքևան կամ գրաան, և հասեալ նմին յե. և Էր. երկու գեօղքն Բարչենիս Գարաչա և Բարչենիս խառապա, յորոց՝ և կոչումն վիճակին. անունն հայկական յայս առնէ նշանաւոր իմն չէն կամ տումն, այլ անչիշատակ է ի Յանոթ գիրս Նախնեաց։ — Ի Էր. սոցին և հանդէպ Սարին Գանձակոյ՝ ի միջոցի խառնըրդոց գետակին Անոնակոյ ընդ միասոյ վտակի՝ կոչ Գարա-գրշոյ գեօղ։ — Միջագետք Անոնակոյ և Գրդգպուլաղոյ՝ բարձրաւան-

գակ վայրք են, և երեք լճակք նշանակին անդանօր։

Երկրորդն այն գետակ օժանդակ Ագարակայ՝ հանդոյն Ամենակայ բղխէ ի հարաւոյ, յելից կողմանէ գլխոյ ծովակին Գոլչաւազ ի Թաչուձան լեռնէ. ա. որով ա. ագին գիւղ Ագպաւկիոյ հայաբնակ, Ս. Աստիւածածնայ եկեղեցեաւ. և է ա. նմին լճակ մի հանդանաւ, և պահակատունք Թուսայ ի Հս. և ի Հր. յորմէ կիսով փարախաւ հեռի ի Հս. Մ. Թաչուձան գիւղ յահեկէ գետոյն. և ի սմանէ փարախաւ ի ստորեւ. Գարագոյունիս գիւղ. ս. բուժ մերձ ի հարաւոյ հանգրուանն Էյրէրք-գոլորայք։ Յարեւմտից հիւսիսոյ սոքա հեռի ի գետոյն՝ Ալիջլուղ. մերձագոյն՝ Ալիգեա, և ա. եզերբն՝ Խնձէ։— Ի կողմանս յայսոսիկ յայտնեցաւ ընծիր Ա. դահանք (իբրև յամի 1868), զոր և բրեն։

Իբր երկու մղոնաք ի ստորեւ, այն է ի Հս. խառնուրդոյ երկուցուն գետակացն Ամենակայ և Թաչուձանոյ, յահեկէն՝ կայ Ագարակ, յոր անուն կոչի այնուհետեւ գետն մինչև ցխառնուրդն՝ յահեկէն՝ ընդ վաղեմմարգոյ. և ա. նուամբն և համեմատական բազմութեամբ բնակչացն՝ յայտնի մի ի գլխաւոր չինից վիճակիս լինել ի հնումն. ասն մի ևս Հայոց էր ի նմա ի ժամանակի վիճակագրութեան կազմանցս, յամի 1850։ Հայանիչ լսի և որ իբր մղոնաւ ևս. Հս. յաջմէ գետոյն կայ Սուղի գիւղ։ Իսկ ի Մ. Հս. նոյնպէս հեռի՝ ուերակ գիւղ մի Հասանձան անուն։ Ի ստորև քան զոսա մինչև ի վերոյիշեալ գետակիցն չիք այլ չէն, բայց միայն յարևելակողմն իբր կիսով փարախաւ հեռի Ագարակ գետոյ, և փարախաւ ի խառնըրդոցն Գամրջը գիւղ։—Բնակ խառնըրդոցն գետն կոչի վաղեմարգ, կամ Ջիլաւազ՝ յանուն գրեթէ միակ եղելոյ գեղջ ա. սմին՝ յահեկէ կողմանէն, և կիսավ փարախաւ ի ստորեւ գետակցութեանն, յ'3612' բարձու, և բնակիչ է ի Թաթարաց որպէս և այլք։



43. Կողբ.

68. Ի մահց հիւսիսոյ Ջնշաւազոյ կիսով փարախաւ հեռի և իբր փարախաւ և կիսով յերասխոյ՝ ի գոգաձեւ վայրի կաւային գետնի, շրջապատելոյ հրաբխային բլրոք, ա. խաղիւք ինչ վաղեմարգոյ՝ կոյ հաչակագոյն չէն գաւառին Ձակատաց, Կողբ գեօղաւան, ընդերաբոյս Ագահանիւքն և հայրենիք գոլով յատակագոյն գրչի և թարգմանչի հայերէն լեզուիս՝ եզնայ կամ եզնիկն կոչեցելոյ, յաւելին կէս և գարու. որոյ աղագաւ և նախ ասացին նաւագ յիշի գեղջն, որ յոյս է քէ և հազարաւոյ գարու յաւել ծանօթ էր վասն ոյին։ Նշանական իմն Թուխ Կողբ կոչումն, ղի գտանի յայն անուն և գաւառ մի ի Գաւգարա։— Աժմեան գեօղն կամ ասանն բնակեալ ի Հայոց իբրև 400 տանց՝[1] Թաւերաձև կառուցեալ է ի ստորոտս բլրոց, կաւակերտ տամբք և անձուկ փողոցօք, նշանաւոր ձեւ ունելով զխիտ ու խիտ աշտարակն բլրոյիս՝ ապաստանարանս ապաստակաց. այլ ի հնումն վայելչագոյն և մեծաշէն ևս յայնի գոլ, ղի և քաղաքացիոյ կոչի, և ուերակք ինչ երևին տակաւին. որպէս, երեք եկեղեցիք, մին մեծագոյն և հաւատոյ հեղոյս կաթողիկէ, հայկական ոճով, կարմիր կնճռոյտ վիմաք. և մին Թուխ կառուցեալ յատուկ կայսեր Հերակլի և Եղբի կաթողիկոսի, որ ընդ Ագահանիցն ժառանգեաց ի Նմանէ և զերրորդ մանն Կողբոյ, ըստ պատմչաց մերոց։ Մատուռն մի ևս ցուցանեն արդ[2] յանուն քաղխմասան և քաղաքանին Եզնըկոյ, որում արժան իսկ էր նոխրել անդ յիշատակարան վայելուչ։ Աժմեան եկեղեցին անչուք է և անգմբէթ.— Ձիշատակի առ հինս ընդ նշանաւոր կամ նշանագործ խաչից և կողբոյ Ս. Նշան։ Թուխ հին եկեղեցւոյն ուերակ յԱբարայ յամի 774, յորում և գիշաղէն և գԹաղին ուերացին, կատարմամբ բըռնակչացն։ Իսկ մեծագործ եկեղեցին այն որ արդ երևի ուեր՝ Թուխ կառուցեալն ի ստորագրեալէն Աբասոյ յերր

1 Ի տոգիբս 1887 ամի՝ 370 տանք նշանակին կողբոյ։

2 Աբարան տոգիբ. Բ. 249։

Թ դարու, «բազմաժամ փարթամութեամբ», որպէս ա-
սէ պատմիչն Ցովհ. կաթողիկոս. և յայս է ի արքունի
կալուած էր, որպէս վասնզ էր լինել, ի սակս ազահանիցն.
այլ ի չիմաթութեան ժամանակին՝ ի դառնալ Աշտա-
երկաթի ի Բիւզանդիոնէ «և մեծ դասակերան Կողբ
» գիմագրաւ ընդդէմ նորա գասանէին չարութեամբ, ոչ
» երբեք հաւանական միաս ի հնազանդութեան առի-
» ասացեալ, վասն այնորիկ իակ ի գերութիւն ցառնակա-
» նացն զնաս մնաներ »: Բայց զի անդրէն յարգանս
գրաւեցաւ տէրին, ասց գուչակել և արձանագիր Ցով-
հաննու արքայի յամի 1038, որ և զպգի մի իւր ի Կողբ՝
պարգևէ Հառնուի վանաց, որպէս և այլք սակաւանք
նուիրեալ են գկալուածս իւրեանց որ ի Կողբ՝ ուխտա-
տեղեաց կամ եկեղեցեաց. և այս նշանակ քաջասիրու-
թեան և մխակութեան Կողբայ՝ ցորոց մի և Ոլոմիկ և-
բէց որդի Դաւթի, Թառն Պառաւ երիցս, զայրին իւր
Պառաւենց և զգասակերս տան իւր՝ պարգևեալ Ար-
ջայ-առնի վանաց յամի 1288։ – Պարարատութիւն երկրին ի
հողոյ և յայէ, յորմէ և բարեկեցութիւն բնակչացն, ա-
ւիթ եղև բազում անգամ և վտանգաց նոցին, որպէս
անդ ուրեմն առ Աբաթացւովք, և յետ վեց հարիւր և ա-
ւելի ամաց յետ ԺԴ դարու, առ Լենկթիմուրա - ասպա-
տակք սորա երիցս սփռեցան ի կողմանս, նախ յամի
1387, զՍուրմաղ աւերելով, այլ Կողբայ ոչ կարելով
առնուել, վասն քաղաքիս պաշտպանելոյ Մարթիրոսի
ի Բարդոզ լերին, որպէս ի վերդ յիշեցաք. և երկրորդ
անգամ յամի 1393, յորում կողոպտեցին և զԿողբ, բայց
բնակչացն նախատես լեալ՝ փախստեամբ զերծան ի կո-
տորածէ։ Ի սկիզբն ԺԼ դարու նոյն արիւնակ ասպատակ
ձէլալեաց եհաս և ի սահմանս Կողբայ։ Ցայսմ ամե-
նայնի հարկ էր տապալել և անհետանալ հին և հոյակապ
շինուածոց աւանին և վիճակին, այլ ոչ ի սպառ անջր-
նալ և աղբատանալ տեզոյն, վասն նոխութեան ագրեր-
ցըն, որոնք ազահանից՝ որ առ երի կային. և արժանի
է ուշոյ, զի ի Կողբ՝ յետ այնքան անցից և հարուածոց՝
հառաստան մնացին բնիկքն, մինչ գրեաթէ համօրէն
գեօղք վիճակին՝ անխառն քաթարտնակք են այժմ,
որպէս թուի յառուրց Լենկթիմուրի սկիզբն առեալ ան-
ման ասյա. այլ և ի ԺԵ դարու տակաւին ոչ սակաւ բը-
նիկ Հայս լինել ի գոմմանս՝ գուչակէ եպիսկոպոսն
Կողբայ Յակովբ, զոր Լիժոփեցին յիշէ։ — Ա. տա-
բեալ եկեղեցեաքն՝ են և խաչարձան գերեզմանք, յորոց
Նշանակի մին Գաւթի որդւոյ Խոճամիրայ † յամի 1580,
և միւս Պարոն Բաշայի, որդւոյ Պր. Թաճարի, զոր
նախանձեալ այլազգիքն վասն քաղքենեանն՝ սպանին ի
Ներակերտ կամ Ջորակերտ, որպէս թուի ի Ջ Թաճին
(1451)[1]։ — Երկու եկեղեցիք են այժմ Հայոց ի Կողբ,
Ս. Գէորգ և Ս. Աստուածածին։

Ի սահմանս Կողբայ՝ առ եզերբք գետոյն Վարդանդայ
կամ Ջնջուտի չիք այլ գեօղ կամ չէն մինչև յանկաւմն
Նորին յԱրտոս՝ ի Մ. կուռ Սուրմաղ, բայց միայն
յանկեան անդ երկոցուն ջուրցն՝ գետոյն Թուրապի։

Իրրեւ զուգահեռական կամ նշանակիչ ուղղութեան
Ագարակ գետոյ՝ գետակ մի ևս՝ ի Նոյն՝ ի հարաւային
սահմանոյ գաւառիս իջանէ՝ ի հիւսիս, և ընդ մէջ բերա-
նոյ Վարդանդայ և Սուրմաղ, գոյիր սահմանք նո-
ցին Թափի յԱրտոս։ Ա. սովաւ և յելից սորին մինչև՝ ի
սահմանս բնիկ վիճակին Սուրմաղ՝ գետոյդ և չէնք սկը-
սեալ՝ ի հարաւոյ, են, Այտան հանդրուան, Գղզղպուղայ
հանդրուան յաջմէ գետոյն, յորոյ յարեւելից էջոյր գիւղ-
՝ի Հս. սորա Հիւսիսքեանս հանդրուան՝ ի սորա Հս. եր-
կու գեօղք Մեծ և Փոքր Գաբրդոյ. յորոց մերկ առ գետ
եզերբք՝ Թառուղ-կիւղ գեօղ, և ի Հս. սորա յաջմէ ջրոյն՝
Կիւղիձ, և սակաւուք հեռի՝ Մոլլա-գամիր. յորմէ հինգ
մղոնաք սորին յահեկէ գետոյն՝ փիրամի գեօղ. և ևս
խոնարհագոյն յելից ազահանիցն՝ փիրալի գիւղ. ասի և
անդր չիք այլ չէն։ Բայց մերձ ի սահմանս Սուրմաղ
վիճակին՝ ընդ մէջ սորա և գետահովիտ՝ ամրաւանդ Ո.
յուղու լեռնակ 1630 Ձ. բարձր. յորոյ հարաւոյ չորիւք
մղոնաք՝ կայ Մարգսան Հանդրուան կամ ձմերոց. և ի
սորա Հր. երկու մղոնաւ ի բացեայ՝ կիւղ Ալիհա գիւղ։

69. Բազում անգամ յիշատակեալ Աղաճանք կամ Ա-
զահաւոք Կողբայ և Ագարք քան նախնեաց[2], է լեառն
կաւոտ, յերից կողմանց զառիթափ, յերի ստանին յե-
լից կաւէ, իրրև կէս մղոնաչափ երկայնեալ ի կողմն Ջրն
չաւազոյ. ի գագաթանն կայ կիսակործան մատուռն
մի յանուն Ս. Գէորգայ. Երիք կարմրագոյն կարգք կամ
նիստք են ապին՝ հարիզոնական գրիւք, գաւազակաձև յի-
րերաց մանաւուտ և գաճաւոտ զանգուածով. իրրև 300
ոտնաչափ բարձր ի գետնոյ յարեւմտից և ի հարաւոյ[3],
յորում կողման է տանն։ Ստորին կարգ ապին քանձր
է իրրև քան կամ 25 ոտնաչափ, և գաւանի ի միջնոյն՝
կարմիր և կապտագոյն կարծր մանրիւ. հաւասար նմին
է քանձրութեամբ և միջինն, իսկ ի խոտ ի կէս ոտնա-
չափ ցերկու աս, և ի միջի նոցին նորբ խոտ կանաչ-
գոյն գաճային կաւոյ։ Վերին կարգն գաւանի ի միջ-
նոյն կանաչագոյն գաճաւոտ խոտ ի խոտ մանրիւ, յորում
ցրաւեալ են գաճային կարծր բիւրեղք, մինչև բաւական
լինել ի գործ չինութեան։ — Հասանք Վարդանդայ գե-
տոյ և սահմանութեան գետնի ի սկզբան գաւառ՝ զկէս լե-
րինն քարայեալ են, և կատարքն հերձակատարք սպառ-
նան մատուռս կործանումն. այլ մասամբ անհարթ և
անհեղեղ երևոյթ կերպարանոյ լերինն՝ ի ձեռագրի
փոքածոյ ապիցն եգեալ է, որ Թուի սկսեալ յաւուրց նա-
հապետական գաւառիս. որում վկայ գտանին քարակերտ
կացինք կամ հատիչք՝ միացեալք ի վաղնջուց ժամանա-
կաց, քան զնեաքօրիք, յաւազ քան զքիւս և զկիրառու-
թիւն երկաթեղէն գործոց։ Վասն անարտեսս և ան-
սն փոքածոյն՝ արեւմտեան մասն կամ երես լերինն այդ
անմատոյց է. ի հարաւային են այժմ ազահանքն.
որոց մեծագոյնն երկայն է 150 կամ 160 ոտք. ի սորին
կարգին՝ յաւազ քան զկէս գաւառ՝ ց'80 ոտնաչափ ի


1 Այս քան Տիրատոյ (Գ. 428) փոխանակ Թարգմանութեան որ-
Հանագրին՝ որ երկոցունքն է. մանաւանդ Թուտկանն։

2 Ներքոս նոյնպէս յիշատակեալ Ժառանգութեան Երէր կո-
թողիկոսի՝ պարզապէս Աղ կոչեալ գոյնոյ կոչի գոյնհանան։

3 Ըստ Տիրատոյ (Գ. 429)։ որոյ գիտելի և գոհագրելի է
գԱգահանան, քան պատկերիկ՝ որ ամառոցիկ տաղնի կոչ։



Տեսիլ Բարդող լերին յԱղաւանից Կողբայ



Աղաբլուր Կողբայ

խոր խազացեալ էր կամ հատեալ ակն, (զի ահն կոչեն նախնիք զվէն մի 'ի փոքրածոյ ապին)։ — Աղբանի սեփհականութիւն էին ազահանքն և 'ի հնումն, գէթ ըստ մեծի մասին, որպէս յայտ է 'ի տրից Հերակլի կոյսեր առ կաթողիկոսն Եզր. զորմէ ասեն պատմիչք մեր՝ առեալ 'ի պարգեւ գրավանդակ ազն կամ զազան, իսկ զգեղջ կողբոյ գերիր մասն միայն. և Թաթարք, ըստ պատմչաց մերոց, յ'ԱԳ դարու 'ի Նուաձէն զաչխարհս մեր, « զա » մենայն Աղահանս առին որ 'ի կողբ, և որ յայլ կողմանս կողմանս »[1]։ Ցիչէ ասե զի առ Եզրիս՝ հասք կամ շահ ազահատից էր 12,000 դահեկան, իմա ասկ. իսկ յամի 1834 ասե 'ի մերազգեաց վարձեալ էր զազահանսն 'ի պետութենէ Ռուսաց 12,000 արծաթ բուղեաց. խոհր 1200 ամաց ցուցանէ զի 'ի հնումն անդ կամ խնամով ևս հատանէր ազն և առաւագոյն չափ, կամ զի մեծագին ևս էր. քանզի 12,000 դահեկանքն որպիսիք և իցեն՝ ըստ արժէից ժամանակիս՝ բազմապատիկ ասելի են։ Ի վերոյգրեալ թուականիդ՝ վասն 32 դիր կամ հատ ազի որք կշռեն իրր 1000 հազարգրամ, ասկ արքունի էր $3\,^1/_2$ բուղ արծաթ, $1\,^1/_3$ վարձք գործաւորի։ Ի վերջին ամքս (1885–8) Ջաֆարիա Ջամիթպատեանց ասե 'ի վարձառատեալ էր չարքունւոյս 36,000 բուղեաց։ — Աղիւսաձեւ հատանեն զազն, և մէն դիր՝ զոր Հայք քար կամ խալքար կոչեն, կշռէ իրր 33 հազարգրամ։ Սովորաբար վաճառականք Հայք և Վիրք՝ առ տեղւոյն գնեալ զազն և բարձեալ ուղտուց և եզանց՝ տանին յա և կամին։ Բազում արիք յիշեն բժշկարանք մեր զկողբացի ազ։ — Ցարևմտեան դիմի աղպերիքն կոչ պատուաւոյ գազաւոր կամ անձաւ, յոր 'ի վաղուց ժամանակի ապրատանէին գործաւորքն և բնակիչք ասենին, զի աշտարակօք և որմովք ամրացուցեալ էր զոյն։ Ցայլում կողմն կոչ գծած հիւղ մի իրրև մատուռն ուխտաւորի Ա. Գևորգեայ, յոր ասէպ դիմեն ուխտաւորք նուիրելով կանթեղս, որոց բնկորք ծածկեն զչրջավայրն։ — Մերձաւոր ասկմանք աղպերիքն բերեն բոյս կծուաշամն և ազուսա, պէսպէս էրգնախապն (Halostachys) և Աղտատոտիկ (Salsola), և այլս նմանեալ ազանիչ կոչմանց, Halimocnemon և Halogeton, էրասխեան և կոպրացի մականուանեալք. զորս ոչ միայն ջուրցն ազրութեան ընծայեն ասենք այլ և հրաբղխի բնութեան երկրին. իսկ ջուրգ ազիք՝ ոչ լոկ 'ի հիւթոյ գետոյն են այլ և 'ի կաթուածոյ անձրևաց և ձեան յազահանան. զի ոչ է քալ ծածկեալ տեղի ազահանիցն, և յաձախ ժողովեալ կաթուածոյն յակուռան՝ գործեն չրչեղջս։ Ջաս յաղայնոյն բուսոց և զայլ ինչ ազգս զանազանեալս տեսակաւ յայլոց համասեռիցն Էրասխեան դաշտին՝ նշանակէ բրուսիոյն բուսաբանն Ռոխ[2]։

Գ. ՍՈՒՐՄԱՒԻ

70. Այս վիճակ կամ մասն՝ հնոյ գաւառին Ճակատուց պատկանեալ, կայ ընդ մէջ Երասխայ և Նախագրեալ վիճակին Կողբոյ կամ Բարչնիսայ. և զի ոչ ևս բևեռն 'ի սմա որպէս 'ի նախագրեալքս՝ հովիւք գետոց, այլ վայրք ամուխք 'ի մեծ կէս երկրին 'ի հիւսիսակողմն, ըստ ընթացից Երասխայ կոյ մեզ խազալ 'ի նշանակել զսակաւ ինչ չհնս որ գտանին 'ի խազս նորին, և իմանալ 'ի հարաւակողմն 'ի լեռնատան, ուր առաւել երևին ցնծութիւնք։ Ի պէտս բուսաբերութեան ասկի վայրացն՝ բնակիչք կողմանցն բազում խնամով առաւս հատեալ արբուսանեն զարտարոյս բրձոյ և բամբակի և սրսնդոց (Ricinus), որք առաւել չրահարտոք են։ Ի խոպան վայրսն ասե առատութեամբ սէզն կատուտան (Aeluropus levis, Trin.), յոր կաւին Ըղտաք կարմիրք։ Ժրութիւն բնակչացն մերազգեաց օժանդակութեամբ չրոց և մեզմ կլիմայի՝ արդիւնական գործք զերկիրն, յոր և յաւելին յամս 1876–80, ցամաքեցուցեալ զԳարա–կէօլ լիճ՝ որ ընդ մէջ էր Խզմիր Մաւոյ, Պահարլուի և Աքհաձայ։ Ի բերս երկրին ընտրելագոյն են պատուգն, դեղձ, չղջ, սեխենիք, և 'ի սահն Գռոդմա կոչեցեալ տեսակն. բերէ և կնճիթ և ծխախոտ. իսկ ցորեան՝ թեպետ և համեղ՝ սեւագոյն է. խաղող առատ, այլ գինի ոչ ազնիւ։ — Բնակեն 'ի վիճակիս և Պարսք և Քուրդք և Եզիտիք, յետինքդ ընտելագոյնք են Հայոց, իսկ առաջինք՝ առելիք քան զայլս։

Գխաւոր չէն վիճակին և համանուն՝ է Սուրմաւի, որ և Սուրբ Մարի ըստ նախնեաց, և Միհրմահի ըստ Թուրքաց և ըստ արդի կոչման, և կայ 'ի գլուխ վիճակի իւրոյ 'ի վերոյ Երասխայ, մերձ 'ի խառնաւարդս վարդամարգ գետոյ և 'ի Թուրապի գիւղ, 'ի հարաւային ստորոտս խայբախի լերին, զորմէ քերէ Երասխ խոխոջանաք, 'ի հրաբղխային հերձակատար խանձագոյր երկրի։ Ի վերջ կոյս Բագրատունեաց հարստութեան, որ է 'ի սկիզբն ԺԱ. դարու, յիշեան գայ տեղիս 'ի պատմութեան, զոր հեղինակք ԺԳ դարու և Մխոփեցին 'ի ԺԵ՝ կոչեն

1 Կիրակոս պատմիչ։ ՀՒ։

2 Շոսին քառատէզ (Spinacia tetrandra), Կրաքին, Կատուտխոտ (Valerianella oxyrrhyncha), Խոշգոտ գետնախ, Վիրոնիկ սատմոնեան, Վչխնիկ հոգիկան, (Linaria armeniaca), Խոխ ծովիցեան (Ferula szovitsiana), Մամիրա հզկերատար և հատգոյն (Glaucium corniculatum), Աշեղեղ կամ Մանիճ հասարակ, և այլք ևս բուսաբերաց քննելիք. Hippophaë rhamnoides L. — H. macrostachys, Koch, – Halostachys caspia, F. et M., – Charadinia xeranthemoides, Desf., — Callipeltis cucullaris, Stev., — Lycopsis picta, Lehm., — Phelypaea cœrulea C. et Mey., — Phel. flava., — Isatis costata C. et Mey., — Is. Iberica, Stev., — Ceratocarpus arenarius, D. C. (Եղէրամիրզ սատզուս), – Amberboa odorata DC, Ephedra monostachya, — Cnicus benedictus L., — Linum annotinum C. Koch.

Սուրբ] Մարի, համարելով յանուն սրբոյ միոյ Մարեայ կամ Մարինոսի. սակայն հնագոյն յիշատակող Լատիվերաբերին, որպէս և յանախ սովորութիւն՝ կոչէ Սուրբ մատեն, զոր և բերդաքաղաք վկայէ լինել, ուր ամրացաւ Վեհան Սարգիս յամի 1042, յորժամ սահմանեցաւ Թագուհի զամրոցն Աղոց. և անդ 'ի բանակի և 'ի խորանի իւրում՝ Գագիկ Նորընծայ Թագաւորն « ձերբակալ արարեալ զԵա՝ » մանեէ 'ի քաղաք Թագաւորութեան իւրոյ. և զոր » պարտ էր զապատանին բառնալ 'ի կենաց, նա զԱաւա» զայն խորհեցաւ, զերկրորդ Ագաղ խնայեալ՝ընդ իւր 'ի » կառան նստուցանէր » . ասէ նոյն յիշեալ պատմիչ[1] — Յետ բարձման Թագաւորութեան Հայոց և 'ի տիրել Թուրքաց Սելճուկեանց՝ մի յամաւր և յիշատանիսիա տեզեաց նոցին եղև Սուրմաւր, յորոց՝ հանդերձ այլովք՝ 'ի սկիզբն ԺԳ դարու Թաֆեայ զայն քաղ ապատարան Զաքարիա. այլ արդէն ամեհեալ էր անդ բնակութիւն



44. Շիրիմ 'ի սամսոնս Զաղկերայ.


այլազգիներն, զի և 'ի կէս այնր գարու ընդ մեծարոյ անձինս այրաբատեան կոմսանց՝ կարգի Շեխն Սուրմաւոյ[2]. բայց զի և Հայոց ոչ էր յայնժամ լքեալ զտեղին՝ յայտ է 'ի յիշատակէ արքեպիսկոպոսի գաւառին՝ Մարկոսի, ար յառաման տեղւոյն 'ի Թաթարաց՝ յամի 1238, « մատ» նեալ եղեւ 'ի ձեռս անօրինաց, նա և եղբարք իւր և » ազգատոհմ իւր. և ոչ ուստեք կայր օգնական գերե» լոցն... Չեպիսկոպոսս զայս՝ իշխան ոմն 'ի գերեվարէն՝ » ար անունն Քուրդ ասի, (Հայ ազգաւ կամ կրօնիւք), » յիշատակ նորա օրհնութեամբ, ազատեալ յանօրէն » նացն »[2], և գնաց 'ի Հռոմկլայ, վկայէ և Կիրակոս պատմիչ, զի « սակաւ ամաց յառաջ առեալ էր գնա 'ի » Տանկայ՝ Շահնշահի և Աչափին (որդւոց Զաքարիայ և » Իւանէի), և գնա ևս կարկառեալ էին. յանկարծակի » եհաս 'ի վերայ նոցա մի ոմն յաւազացն զօրաց բազ» մաց, որում անուն էր Գաբա Բահատուր. և վազվա» զակի սա նա, և զոր ինչ եգիտ 'ի նմա յափշտակեաց » : Յետ ամաց հարիւր և յիսնից (1387) աշխարհատէրն Թիմուր՝ յԵրնջակայ եկեալ « 'ի վերայ երկրին Գնակաւոյ՝ » Եաս գրաւեալ Սուրբ Մարի, և 'ի հիմանց ապա» կալեալ զամարն մեր, զոր էր ամրախարհակալ պատուա» կան ազգին Բագրատունեաց, և գերեաց զամենայն » քաղաքն և զշրջակայ գեղօրայն »[3], — ի հարաւոյ կողմանէ Հիւսէին Աղոյ, այլ 'ի պատերազմին Պաւայ և Պարսից աւերեցաւ և տեղիս այս, և Հիւսէին անցեալ գնաց 'ի Պարսս.

71. Միւս ևս տեղի ամուր և նշանաւոր Թևրևա քան զՍուրմաւր, և 'ի նման գիրս առ Երասխայ, երկու մղոնաւոր աւորեւ քան գնա, և 'ի գժուարագոյն ևս կոյս, յանկեան հրաշակոյսին հիւսիսակողմն՝ է անառա. Նեայն Գարագաղ՝ վասն անառիութեան քարանց չինուածոյն. բերդ չափաւոր մեծութեամբ կառուցեալ 'ի գլուխ խանձակոյս բլրակի 'ի խառն Երասխայ, ուր ձիգ սիւնաձեւ երեսին պատալոք, և անձուկ ցանապար 'ի հարաւոյ կուսկոյն ընդ քաղաքաւանին, ուրանօր և երկու հզօր աշտարակք կառուցեալ էին 'ի պաշտպանութիւն. կան բազում աշտարակք և զպարսպօքն, այլ արձանագիր կամ այլ ինչ չիմասած երեսին ոչ գտաւ: Երասխ և խորագորգ յերից կողմանց պատապարէին զբերդն, և յանձուկ ցամուրքակողմանէն պարիսպք, չինեալք կոփածոյ չիշտ կարմրագոյն պորփիւր քարամբք և սեաւ խանձաքարիւ, կարի վայելուչ և ճարտար, յոր գան ուրեք ուրեք և խաչվէմք: Ասան մի պարապոյն նորոգեալ է 'ի յետին ժամանակս՝ խոշոր քառակուսի սեաւ խանձաքարամբք, զուրկք 'ի վայելչութենէ հին չինուածոյն: Ի սաւրեւ ասանին երեսին տեղիք այգեաց և հնձանաց լքելոց 'ի վաղուց. թէպէտ և մինչև 'ի ժամանակս պատերազմին Պատաց ընդ Պարսից՝ յետնիգդ բնակէին անդ. որոց վկայեն և արձանագիրք գերեզմանաց նոցին, առ երի հին գերեզմանաց Հայոց խոյանեւից և այլոց տարազաց, յորոց միջի և երկաստանակոփ չիրիմ սրագմբէթ (թ. 44) կարմրախաչս քարամբք կոփածոյիւք: Ի քննել Տիպատոյ Հանդարձագրի[4] գիւղս (յ'18 մարտի 1834), գերդաստանք ինչ Հայոց դեռ այն ինչ մնալ էին բնակել առ 'ի առնս լքեալս 'ի Պարսից. յիշէ և ազատական իմն, զի ցային նմա ծառ մի' ընդ սրազ առէին նստել Ցմրոյ' 'ի գալ առ նա բարեկամանց. — Ա. երի աւերակաց բերդատանիս յերդ Երասխայ, նշմարին և մնացք

1 Մատթէոս Օրղեւեան. կե՛:
2 Ասոգէս պատմէ բնագրիկակող. ոմն Դաստատանագրոց:
3 Թովմա Մետոփեցի:
4 Dubois de Montpérieux, etc. IV, 446.

կամըրջի արկելոյ անդ 'ի վաղնջուց ժամանակաց հետէ։

Այս ամենայն ճշմարտութիք և. Նիչք հոյակապ, հզօր և ընդարձակ չինուածոց՝ յայս առնեն զի հին և մեծ չէն էր տեղին, զոր՝ արդ յիշեալ ուզևորդ՝ ոչ գիտեմ ուսոի ազդ առեալ՝ Տիգրանակերտ քաղաք առէ անուանիկքայաքար. այլ ասն համարի կամ զԱրտագերից բերդ կամ զԱրշատ յիշեալ 'ի Սոփռոնէ. և այլք համարին զաստակերտ մի Երուանդայ, զի մերձ կան ասուպատես չինուածոց նորին 'ի հանգիպոյ կողման Երասխայ. իսկ ես հաւատամ համարիմ զՉողկերտ ասան, զոր ընդ արքունի ձմերոցս և կայանս զօրաց Այրարատեանց մերոց թագաւորաց՝ թուէ երկիչ ընդ առևտրան և ուղևորաց յուրացելոցն գնդէ 'ի վաստականց։ Ի բժկութեանս մեր, և յառաջագիտութեան պատմութեան Հայոց ծագման՝ Զորկերտ կոչի, ուր և ասի վասն այնր ծագման, (որոյ սերականագոյն վայր ցուցաւ ՀԱՅԳՈՐԴՆ Բասենոյ էջ 18), ևթէ, « Եւ այլք ասացին՝ թէ գառնի ծագիկն 'ի Սոր» մորի, 'ի գետն որ կոչի Զորկերտ. ԵՒթէ, փորեա չափ » տեղի և գտանես գնա » ... և յաւելու բանահիւան, 'ի պիտոյ մեծի Հայոցն Շիրակունւոց, ևթէ « Զոյց Ա» նահէ. Եւ գոյց 'ի Զողկերտ, և չորն փորձեցի. երա» նէ է նմա որ [գրարին գործէ (փորձէ) » ։ Բառարանք գոին և նշանակին 'ի կողմանս յայսոսիկ զՀամասպրամն Lychnis (Թիւ 46). Նոյն այս իսկ արդեօք հրաշակերտն այն Համասպեան։ —Զի 'ի Սոբմաւի քան զայս տեղի պատչան և բան մերձաւորութեան և ըստ ամրութեան՝



45. Զողկերտ = Գարագալի.

լինելոյ յիշեալդ Զողկերտի. որում միւս ևս վասն հաստատի ընծայէ յառաջ յիշեալ ստորնագիր Պարոն Փաշայի որ 'ի Կոզր (էջ 120), որոյ վիմագիրի է բուն հայերէն և ստոյգ ընթերցուածն, յորում ասի գնմանէ ևթէ ընդ հնոյ իւրում խորհրդոյ խաթաւնի գնաց 'ի Նորակերտ և ապանաւ 'ի գառանամոխ. Թագուհանդն ստորակոտ վասն տաճ Թաւականին Կ իցէ ևթէ Ն, և ևս ընդ վերծանութիւն սկզբնատառի անուան տեղւոյդ երկմտեալ՝ ընթեռնում Զորակերտ. ոչ միայն գի չիք Նորակերտ տեղի նշանաւոր 'ի Հայս, բայց յանդման գեղջ միոջ երկնչակաց, այլ գի՝ և որպէս երևի՝ կողացին երկայր առ իչխան ոք այլազգեաց, և հարկ էր նմա առ մերձաւորն երթալ. և նոյն իսկ Թագուհի Նորա 'ի Կոզր' ցուցանէ գի ոչ 'ի հեռի ուրեք վայրի ապանաւ։ Ա յսքան շատ լիցի առ 'ի մէնջ վասն տեղւոյդ. պատուհասեցան Նմին Թագուով ոչ միայն առաքել զոյս, այլ և յիշատակս հնութեանց վերայայտնել. գի ոչ միայն 'ի վերոյիշեալ նշանակացդ յուցանի տեղւոյն մեծաշնորհութիւն, այլ և 'ի պատուոյ պատչացոյց Զողկերտի. քանզի ընդ բարձակալ իչխանս կամ տոհմս Թագաւորութեան Հայոց՝ յիշին և Զողկերտաւայք, և ոչ ընդ յետնագոյնս. Թերևս զոյս նշանակիցէ և որ յարքունի զօրաբանակին Յողկեպան գրեալ է,

և բաժին նորա է 100 այր. որ թէպէտ նուագ թաւալ, այլ յառաջադէմ կամ ընդ յառաջադէմն ցուցանի 'ի գաւառս ձակատուց, և միակ յիշատակեալ նահապետութիւն 'ի սմա [1];

Ա. Սարմանեայ և Զոզկերթի արժան է յիշել և զմիւս և զմիակ ևս չէն նշանաւոր 'ի գաւառս, որոց դիրք և տեղին որպէս և անուն՝ այժմ անյայտ է, և է Շատիկ բերդ. զոր նախ Սմբատ Բ (Տիեզերակալ) գրաւեաց 'ի բաժնէ ժառանգութեան հօրեղբօրն իւրոյ Մաչէզոյ՝ Թագաւորի Կարուց [2], այլ 'ի գալ սորա 'ի վերոյ իւր՝ նենգակից թութեամբ և բազմութեամբ զօրաց Դաւթի Կիւրապալատի Տայոց, « զամրոցն անդրէն 'ի ձեռս նոցա



46. Հաւատպրամ ծաղիկ. — Lychnis.

առեալ՝ խաղաղութիւն հաստատեն » : Երկրորդ անգամ Սմբատ Գ (Յովհաննէս) նոյնպէս գրաւեալ էր 'ի քթիկ ժառանգէն, որ բողոքեաց առ Գէորգի Թագաւոր Աբխազաց, « Քէ Շատիկ իմ բնական տեղի է՝ զոր անիրաւապար տարաւ յինէն Սմբատ » . և Գէորգի զօրս առաքեալ յանկարծուստ 'ի վերոյ նորա՝ ըմբռնեաց և « եհան « առնել 'ի պահեստի. և ապա առեալ երիս բերդս՝ որ« ձակեաց գնա » : Յայս ուրեմն է զի Շատիկ առհասա-

նակից էր Շիրակոյ կամ 'ի սահմանս Երասխաձորոյ. ուրանօր կշիռ 'ի Հռ. Սարմատոյ և Հայիւ իրր փարատեաւ հնոյ, և մերձագոյն 'ի խալ-տալ՝ նշանակի բարձրաւանդակ մի Դևատիկ-բլուր [3] անուն, որ մերձաւորութեամբ կոչմանն և գրիցն՝ թուեցուցանէ և զնոյնութիւն Շատկոյ:

72. Իրր փարատեաւ 'ի տոհմէ Գարագոլէի սկսանի հզօրիկ Երասխ՝ 'ի գաշտավայր Հարթ ընթանալով. և

1 Ա. Մխոբովոյ երիցս 'ի Խ. բոբնի գտանել է Զոզկերտաձին՝ 'ի Քիւս Հարիւր և Լեռնին:

2 Սահմանս Աղուիկ. Գ. ԺԲ:

3 Այսպես նշանակի լերնագագաթ առաւ աշխարհացոյցս:

անգ առաջին գիւղ է Գոբի. և մի ըստ միոջէ գեղք՝ շատքն Թուրքարնակք, Աւրթկիրի Հին և Նոր, ի միջի վերատակոյ գետոյն. Նոյնպէս և Գիւղիւռէք, Մօղու Ալմա, Այ Ալմա, Սարը չոպան, Գաւզուկիւռէն, Գասխման, Օյուրպա, Զարուխի, Հասանքնտ, Էյմէի, Ալիքեմերիւ կամ Ալիպանար՝ 150 տանիք Հայոց, Խոշխապէր, 100 տուն Հայոց, Խաղիպուռ կամ Գայֆպուռ 100 տանիք Հայոց, առաջուն Այգատ-ագա բերդ, Գարագույռ աւերակ։ — Ի ժամանակի յետին պատերազմից Ռուսաց և Թուրքաց, յամի 1877, դէպք ինչ անցին և ի սահմանս գիւղապետիս. զի Թուրքք մերն ի վիճակս յոյս՝ գիմելով յԷրզրում Ցէր Վահանայ (յետ կիսոյ օգոստոսի) բանակեցան ի Մօլա-գամար և ի Զարուխի, իսկ զօրավարն Թուրքաց Խամսիլ Հագգի փաշա մերձ ի Գալֆալու, զոր և փոքրեաց առնուլ (18 սեպտ.) այլ ոչ կարաց. Նոյնպէս և յայլում նուագի և երրորդ անգամ (ի 14 հոկտ.), և լուեալ յայնժամ զպարտութիւն Մուխթար պատրպետի յԱլաճա, հարատութեամբ հազարեաց զրանակ իւր, և ընկրկեցաւ ի կողմն Կարնոյ։

Ի վերջին յիշատակել գիւղն (Գալֆալու) յայտնեցան յայլևայլ ժամանակս մեացուածք վաղեմի չինութեանց և անօթոց, ընդ որս և տապանագիրս այս.

ԹՎ... ԼԱ. Շնորհիւն Աստուծոյ.
Ես վաներամ կսկծալի
Որ եւ գնաչս կանգնեցի
Նիւորկաւին եւ Թաւամի
Տղայ եղեալք յայսմ աշխարհի.
Կսկիծ թողին անմոռանալի
Հաւրն եւ մաւրն Աճառատի.
Ով կարդացողք այսմ գրի
Ձմեզ յիշեցեք, Տէրն ողորմի
Յահեղ աւուրն դատաստանի։

Ձօրինակ պատմական յիշատակիս նախնեաց՝ առաքեաց մեզ ի սկզբան տպագրութեան մատենիս յայսմ ամի (1888) Գերապ. աստիճանաւոր Հայոց Վրաստանի Տէր Աբիստակէս եպիսկոպոս Սեդրպեան, յաւելեալ և զայս կարևոր ծանօթութիւն. « Այս տապանագիր գտաւ 14 « ամիք յառաջ (1874), յիմում Ծննդավայրի, ի թաղիս « յս գեղջ Սուրմալու գտաւոի, հեռի յԻգդիր աւանէ 8 « վերստ., ի փոքրէն գերեզմանաց՝ գիւղի նզատակաւ « գհողակոյտս ընդարձակ անդրէջ միոյ ի հարաւակողմն « գեղջ՝ այժմ ի բնակչաց վանքատուէ անուանելոյ։ « Պատահմամբ ի յոյտ եկեալ յաղագմանէ անդունդ ի « ջուրց՝ արծաթեայ և պղնձեայ դրամք՝ գրգիռ նոտն « գիւղակացեայ փորփռելոյ զանդրէն. և աշխատութիւն « նոցա երբեմն զպահեստ արծաթի գրամոց, երբեմն զմե- « ծամեծ կարաստ գինւոյ և գայլ անօթս ի յոյս ածելով, « ի վերջոյ ած յերեսան ի փոխարէն հազարատէրն « գհինանս փոքրիկ եկեղեցւոյ միոյ ի տաշեալ քարանց, « և ընդ քանի մի կիսաբեկ խաչքարանց՝ զքարն ան- « խաչ, յորոյ վերայ տապանագիրն է վերոյիշեալ, որ եւ « բեւի լինել պատասանգան խաչքարի։ Թէպէտև Թուա- « կան տապանագրոյն որպէս եգեալն է՝ կրէ այժմ միայն « զկ և Ա տառս, սակայն յանդգնաբեմնէ և ի ձեւոյ տա- « ռիցն՝ մարթ է կասկածել վասն այդչափ Հնութեան. և « հաւանելի է թէ յառաջ քան զառնան գոյնասիկ լեալ « իցէ Զ գիր, որպ հադիւ իսկ ազատ նշմարելի հետս՝ հա- « ւանեալ եմ ընդունել։ ... Գիւղացիք զքանի մի խաչ- « քարինս տարեալ եգեալ են ի վերայ գերեզմանաց « ննջեցելոց իւրեանց. քանզակաք նոցին մեացեալք ըստ « մասին՝ երևին նաբր և հին »[1],

Աբեմատակոյմն գիւղապետիս, որպէս ի վերդ յիշեցաք, ամայի և անջրդի երկիր է, և ամառանի առատանման փշեաւ ծփի, վասն որոյ տապնապ յոյժ հասոյց Ռուսաց ի խաղալ նոցա ի վերայ Թուրքաց և ի բանակին, մինչդեռ նոքա զլեռնակողմանան ունէին։ Բայց հանապարհ վարան չկրասխոյ առ Զարուխի գեօղիս սկսեալ՝ կարէ զամսոյս թիւնս այս ձգեալ ընդ Մ. Հր. մինչև ի լերինս անջրդեաս հոխոյց կրասխոյ և կիփրասոյ, և անցանէ յայս կոյս. մեծ մասն երկրին ի հարաւակողմն լեռնային է. և է անդ կիրճն Քէրփաճևսրայ՝ յանուն հանգրուանի միոյ մեծի, ուր գոյ և քարաչէն իշևան հին, ի վերայ արքունի ճանապարհին։ Յաջմէ Նորին, որ է յարևմտից և ի Հս. Մ. կրճին՝ կայ Գարատաստար գիւղ ի ստէմնոս Բաբչինիս վիճակի, և ըստ հարաւոյ Նորին ի լեռնատինն Դաշլըճա, Գղղկայա, Աքչակը, Օտնա, և հանգրուանն փիրախանիյ. իսկ յահեկէ հանդէպ կրճին՝ Գղղկայէ և Գաւրու՝ ամայացեալ չէնք. յորոց հարաւոյ ամբառնան Զարատա և Զարապի և Գարաչուռնախ լերինք, յիշատակելոք ի յետին պատերազմանս, և ի տարատաս նոցին Թայլայա, Մէգրէ և Գարա Մէգրէ, ուր և ամանր պահակատան Ռուսաց, որպէս և այլ պահակք մերձ ի լերինս անջրդեաս հոխոյց և կիփրասոյ, յորոց իջանէք գետակ մի ընդ Հս. կարեալ գլերինն. և յաջմէ Նորին կան (ի Հր. ընդ Հս. գնալով), գեօղքն Ջօր, Օրուշիչ, Մօղու իսդրանիմ, Գիւնէ Մաւրատ, Ալիգօլագ, Փիրմատ ?։

Մերձ ի Ջօր կամ Ջօռ գիւղ քրդապնակ՝ երևին աւերակք վանից որ Ջօրավանք կոչին, և կարծեցան կամրջաձորոյ վանքն (էջ 58), ուշ գիտեմ յարձանագ թէ յաւանդութենէ. և առաքեցաք յամի 1873 ի կաթողիկոսէն Էջմիածնի Հմայեակ Վ. Աբրահամեան, նորոգել զանձրևն և զարոյս հաստատել. ապա և Տէր Մեսրովբ եպիսկոպոս Սմբատեան եկեալ (15–27 յուլ.) կատարեաց ըստ կանոն սրբոյդ տաճարի, նորոգեալ յանուն Ս. Աստուածածնի, և ամն ի տանուտերանց մերձակայ Աղեքսանդրապատ գեղջ (Աղեքսանդր Մելիք Վրթանէսեան) նուիրեաց հող ի կալուած նմին։ Ի տանի վաթգավառի գիմեն այսր ուխտաւորք մերձաւոր գիւղորէից Հայոց։

1 Հաւանեալ եմ և ես գի հարիւրաւոր թիւն եգիտալ կամ անկեալ է յարձանէդ, և ի գեղ է համարել ՃԴ կամ ՃԻ գարաւանաձև։ Հաւանեալ եմ և ես գի հարիւրաւոր թիւն եգիտալ կամ անկեալ է յարձանէդ, և ի գեղ է համարել ՃԴ կամ ՃԻ գարաւանաձև։

Ա. Օրուշիլ գեօղիւ գոյ լճակ մի փոքրիկ իսկ անուն, որպէս և յայնկոյս գետակին մերձ 'ի Զօր՝ այլ լճակ փոքր Մաղկէ կիւղ, որ 'ի ժամանակի յետին պատերազմացն որոյ զրանակն Թուրքաց. զի ընդ այս կողմանս էանոյ նա ընդ լերինն՝ (5 օգոս. 1877), ընդ կիրճ Քէբլանոզբասի և Զօրայ, առաջնորդութեամբ Խանսիկի և եմուտ 'ի բաժին Ռուսաց՝ գիմել յԻկոփր և յԷրեան, յառաջապահ գնդաւն, ուրկէսով և պրէլով գգեօղեանն՝ եհաս և էառ զԱլի-գօշագ։



47. վէմ բեւեռանիգակ գտեալ 'ի Ղազանչի գեղէ.

73. Յարեւելեան մասին ձգտեալ խաղիս ելեսխայ, իբր վեց մղոնաւ յելից Գալթալու գեղէ կայ բարգաւառագոյն չէն կոզմանցըս և համբէն գաւառս, Իկտիր կամ Իղտիր, որոյ ուրոյն մասն է Իղտիր Մաւս յելից կուսէ, ուստի Չոլոյ 550 մանր և 70 մանր Պարսից. թուի 'ի հնումն սեփական Աշրարատեան գաւառաց վիճակեալ։ Գըլխաւոր կենդրան է ասի և արի և ժրաքեան մերազնեայց, միանգամայն և քաղաքական տեսչութեան, և 'ի վերջին պատերազմունս (1877) գինուորական չարժմանց. յոր ակն եդեալ էր Թուրքաց՝ ձեռն արկանել յետ յաղթութեան իւրեանց 'ի Տաղար, այլ ոչ ամաչապարտեցին. և զօրավարն Տէր Ղուկասով՝ ճարտարութեամբ ձաղարկեաց և զգունդ իւր և զգաղթականն Հայոց, և հասցէ այար ('ի 5 յուլ. 1877), և արծարծեալ զզօրն և յաւելեալ 'ի նոյն նոր գունդս՝ յետ սակաւ աւուրց (8 յուլ.) մեկնեցաւ փութալ թափել զգաշարեսցն 'ի բերդին Պայէզիտայ։ Եկեղեցի Խոտրէայ կոչի յանուն Ս. Աստնակոյ. իսկ Խոտր-Վաւոյ՝ Ս. Գէորգ։

Ա. ընթեր Խոտր-Վաւոյ 'ի Հա. կուսէ կայ Գանարչու գիւղ. և 'ի Մ. Հա. սորա մղոնաւ 'ի Հր. Օյուզոյ Ախմէյիս, յորում 120 տունք են Հայոց. 'ի սորա Հա. երկու մղոնաւ հեռի՝ Բլուր գիւղ մեծ, 200 տամբք Հայոց. յելից Նորին Գիւղ-Ջաքիր կամ Ջաքիրլու. 'ի սորա Հա. առ կուսէ հեռի՝ Բանիկ. և 'ի սորա Հա. Ոլէրլու, և 'ի Մ. Հա. Գագանձի կամ Ղազանչի պատկառնակ, ի գիւղս յոյժմիկ գտաւ յամին 1886 բեւեռանիգակ արձանագիր 'ի բոլորակ վիմի, զոր է տեսանել 'ի պատկերիդ (Թիւ 47)։ Գտաւեալ և սակաւուք հեռի յԻկոփրոյ (2 վերստ) ընդ կողմն Մաստոց՝ գտեալ էին յառաջն յամի 1881 բեւեռագանգակ արձանագիրք մեծ, և հին գրանք։

Աղտիկ Թեւրա՝ 'ի հնումն վիճակէին Աշտածի և կամ Մաստոց Ոտին գաւառաց Աշրարատայ, հանդերձ այլով մերձաւորաք, որք յելից կուսէ ասցին, ընդ մէջ այժմեան Վաղարշապատ վիճակի և հիւսիսային արեւմտեան Ոտից Մաստոց. ուր երկայն լիճ մի կամ երկու ճահճաձեւ փոք միացեալք՝ ընդունին առուակս մանունս՝ յարեւմտից կուսէ գաւառիս. որոց 'ի Հա. մերձաւորագոյն գիւղ մի է մեծ և այգեվէտ, Մալաքլը, և Նոյեանուն պահակատուն Ռուսաց՝ յարեւելից կուսէ 'ի առաջաս մեծի լերին։ Ի Հա. Եղ. Նորին Գատարգոյեանց գիւղ փոքր, այլ մեծաւաբած այգեօք և պարտիզօք և պահակատամբ։ Ի Հա. Մալաքլոյ՝ Թեմիրլու, և հետ նմին 'ի Մ.-կուսէ Լօնիքլը, երկոքին ևս բազմաբնակք են 'ի Հայոց. Նոյնպէս և Ղամաքլը. յորոց երից մինչև ցերասխ՝ կան Թուրքմանակք Զիլիքլար, Կէմաճո?, Շիրազա, Քանաղատաս, Թոխանլուձոր Գաձար, և Թոխանլուձոր – Պայազատ սակաւ ևս 'ի ներքոյ Դամուրլու անուանեալ հողմրլի գաւ. (յամի 1886) բեւեռագանգակ արձանագիր մի[1]; Ի հիւսիսոյ սոցին Աչիրազ, Հիւսէինքէնտ, Մաղարգուղու, փոքր գեօղք. մերձ նոցին մեծագոյնն Մուչուտ-Ալի-ղլուղր, որպիսի է և հայաբնակն Ալէնան մերձ Բերախ. և համանուն նմին Հանդրաւան առ գետակերբն, ուր և միւս Հանդրաւան՝ Աստոն անուն. և բացագոյն իբր չորիք մղոնաք՝ Թիզա՝ կամ Միւէյհանաձոր։

1 Հրատարակեալ 'ի Տէր Մկրտովպոյ Սմբատեանց եպիսկոպոսէ՝ յԱրարատ ամսագրի. (ՃԹ. 495). ուր և վերադրանակեալ վէմն, և այլք ևս յայնմանէ. ամս և թերեւս այնր ամսագրի. յորոց գտանեն ընդօրինակեալ մասնք 'ի մատենիս, և գոյլովք գանց արարաք. ոչ չհաշեալք վարկաբարի վերծանութեամբ և մեկնութեամբք նոցին, քան վարկածի բանասիրաց ամանց։

Յ

Ա Ե Ո Յ Ք



պատմութեան փոքր ’ի շատէ ծանօթ, այլ յաշխարհագրութեան՝ ’ի ղեպ է անծանօթ ասել զԱշոյք գաւառ. զի քէպէտ և վեր ’ի վերոյ յայտնի դիրքն այլ ոչ օրալեին, վասն ոչ յիշելոյ ’ի նմին և ոչ միոյ չինի կամ գեղջ առ պատմիչս. որ և ոչ փոքր զարմանաց է. քանզի առ երի և ’ի միջի ասխարհածանօթ գաւառաց Այրարատայ և Գուգարաց զետեղեալ է. հարկ է ապա ասել, եթէ ’ի սկզբանն որիշ և ուրոյն ելով՝ յետոյ միոյ ’ի մերձակայիցն գաւառաց վիճակեալ կամ խառնեալ իցէ ընդ նոսին: Յամենայն յիշատակս պատմութեան մերոց և ոչ այլ՝ յայտնի միջաւայման լինել աշխարհացն Այրարատայ և Գուգարաց, և յետոյս առաւել յանկագոյն թուի ինձ քան Այրարատայ, թէ և ընդ գաւառս սորա դասիցի. բայց և յօրինակս ինչ ասխարհագրութեան Թորնեցւոյն՝ պակասէ և անունն իսկ ’ի թուոյ նոցին. իսկ յորս յիշի՝ նախակարգի ’ի չարի սրեւելեան գաւառաց ասխարհին, այսինքն ’ի հիւսիսոյ նոցին, իմն Ներոյ և սրոց ’ի Հարաւոյ սորին. յայտ է և յայլոց պատմական յիշատակաց՝ զի կոյ յարեւմտից և ’ի հարաւոյ կուսէ Տարօնոյ, ընդ սրոց և զոյգ յիշի, և ’ի հիւսիսակողմն Շիրակայ, ’ի հարաւոյ Կանգարայ և Ջաւախոյ, թերևս յարևելս Ծովուն հիւսիսոյ. կամ թէ նոյն ինքն իսկ Աշոց է, վիճակ ծանօթ ’ի պատմութեան վերոյ, որոյ փոխան ’ի հայերէն թարգմանութեանն ըստ Ջուանշիրոյ՝ Աշոցք գրի, և առհմանակից Տարօնոյ նշանակի:


Վկայի և ’ի պատմութենէ, զի բնիկք երկրին սեռանդգ էին Հայկազնեան Շարոյի, յորմէ Շիրակն կոչեցաւ ծանօթ գաւառ, օրումն հարկ է թէ յորակից էր ’ի Հս. կողմանէ և ’ի Մ. Հս. քանզի վաղարշակ՝ որ ետ Գուշարայ ’ի զարմէ Շարոյի՝ զնեռակոզմանս Գուգարաց, զհնգետին գաւառան ’ի Կանգարայց մինչև ’ի Զարեփոր և ’ի Հունաստակերտ քաղաք, այլոց գաւառաց նորին մատուցանէ «զՀերարիւնն Աշոցոյ և զսեպհականութիւնն Տարոյ», քան թարգմանչացն (Բ. ը.). զոր բան ամփոփեալ Անեցւոյն (Ասմանկի) ասէ. «Եւ Գուշարայ որ յորդւոցն Շարոյի՝ ժառանգեցուցանէ զԿանգարա և զՋաւախ, զՀերութիւնն Տարոյ և զԱշոցոյ»: — Վարդան պատմիչ յիշէ ուրեք զսա, այսպիսի կարգաւ գաւառաց. Շիրակ, Աշոցք և գաւառն Տայոց. և այլուր (զո) վասն Ա. Գագկայ ասէ, ’ի մահուն կամակալ անգրանական իւրում Յովհաննու Թագաւորի՝ զԱնի և զՇիրակ և զՄ. Գրիգոր՝ Զորովմն Աշոցայ և զԱրծրուկ, և այլն, Տայսմ ամենայնիւ և յայլ հատուածս՝ Աշոցոց լինել ոչ միայն երկուց ասխարհաց մերոց միջաւահման, այլ և երկուցուն ազգաց և պետութեանց, Հայոց ասեմ և Վրաց, և մերթ միոց և մերթ միւսոյ նուաճեալ. քանզի Վիրք՝ և յատուկ քան զժամանակս վաղարշակայ առնին յիշատակ գաւառիս, առ հաչակեալն իւրեանց Փառնաւազաւ՝ որ սակաւուք զկնի Աղէքսանդրի Մեծի, և առեն առանձին կոզմնակալ կարգեալ նորա ’ի Շամշղտէ, և վիճակ նմա ’ի Սակասրենոյ կամ Շվիրեթոյ մինչև ցՏայիր և ցԱշոց: Յիշեն նոքա և առ Բ Արատիսիոս, յետ Ա. դարու, մարտուցեալ ընդ Հայս «առ «գեառնն Նաւասէ? և առ Պարխարաւ՝ որ են Տայք, և «առ հանապարհն Աշոցոց»: Դարձեալ, յետ մահուան Մհերդատայ՝ առաջնոյ քրիստոնեայ Թագաւորի իւրեանց, որ առ մերովս Տրդատայ, բահքար սրդի Նորա, ասեն, առ ’ի Քիկանոս իւր առնել ընդդէմ Հայոց զՊարսս, տայ ոգա «’ի Շամշղտեայ մինչև ’ի գլուխ Աշոցոց»: — Դարձեալ յետ մահուան Մհերդատայ՝ յայտ առնեն գեռաշխիտ մի լինել գաւառին. զոր առկայն չկարեմ հնգրտել, արդեաք հաւմնան բառիցակ գեղոյն իցէ՝ որ և Հարաւային Տարիր, եթէ հիւսիսագոյն ժամանակ Ախուրեան գետոյ, կամ նախայիշեալն արևելեան առհման Ջղջղոյ՝ Աղոցն գաւառ. այլ հատանողքն ոչ մի միայն յայտնեն, այլ գէթ մեծ մասն ասին. քանզի յիշատակութիւն իշխանաց երկրին՝ ցուցանէ և զընդգրկակութիւն նորին, որ և առանձինն իմն երևիլ ունել վարչութիւն, քան ոչ սովորականի այլոց գաւառաց. զի կոյ Տէրութիւնն Աշոցայ, հանգոյն առհմանորդին իւրում Տարոյն անփոփանաւորեալ, գայլ զի ’ի վերայ բաժնէ հանեալ էր զայն Հայոց: Մեծ սութեան գաւառին կամ իշխանութեան տեառն նորին՝ վկայէ և

գոթաբաժին արքունական բանակին, որում տայր 500 մարտիկս, հաւատար Բասենաց և առաւել քան զամենայնիցս Նոցին՝ Հաւատնիս, Աբեղեանս և Գաբելեանս, և՝ ի Գահնամակին Սահակայ՝ Լդ կարգի՝ ի թոռնս իշխանաց [1]։

Ի տերանց Աշոցայ որ մերք յեզական և մերք՝ ի յոգնական գրի Աշոց կամ Աշոցք, և յորինակի միամ աշխարհագրութեան Թորնեացւոյ՝ Աշուանք, ևս և Աշոցան, յետ Գուշարայ, որ առ Վաղարշակաւ, ՝ի Նորին զարմէ յելս կոյս Գ դարու Ժանօթ է Տաճատ, որ՝ ի ազգնագ Ժամանակի հալածանաց նախարարացն Հայոց յերեսաց Արտաշրի Սասանեանց՝ ՝ի կոտորել նորա զտհմին Արտաւազդայ Մանդակունւոց գայեկին Տրդատայ, զերծոյց զմի՝ ի քերց նորա և էառ՝ ի կնութիւն. և իբրև նախասարի ետ նմա յետոյ Տրդատ՝ զտէրութիւն երկրին. սա էր որ Ժանոյց Տրդատոյ զԳրիգոր լինել որդի Անակայ. այլ յետոյ ուրեմն ինքն իսկ ընդ երկոց սյլոց առաջնոյ նախարարաց՝ առաքեցաւ ՝ի Կեսարիա ՝ի խնդիր որգւոց նորին Գրիգորի Մեծի, յորում ժամանակի հարկ է նմա լինել ՝ի բարւոք ծերութեան։ — Քեա նորա յիշի Հմայեակ Աշոցայ Տէր, յետ բարձման Թագաւորութեանն Հայոց։ — Հրաման, յաւուրս վարդանանց, և Թուի նոյն որ յետ նահատակութեան նոցին վարեցաւ ՝ի Գաբաս ՝ի կամաւոր գերութիւն՝ ընդ այլոց նախարարացն։ — Քեա սոցա՝ ընդ գաբս երիս ոչ գտանեմ ՝ի պատմութեան գլխաւոր իշխանաց Աշոցայ, այլ յերբորդ գաւառդի Ը դարու ՝ի Ժողովի Սիւնեաց կաթողիկոսի յԱղուանս՝ գտանի և Արտաւազդ Աշոցայ տէր։ — Ա՛նեալին ժամանակագ կամ աւոյ գինի՝ Աշտա և Շապուհ եղբարք Բագրատունիք Թափեցին յԱրտաշատ՝ ընդ Շիրակայ և գԱշոցս և գՏայս։ Քայնմ հետէ ընդ Շիրակայ զտգաւորեալ Թուի երկրին բուս վարչութեան, զի ոչ ևս յիշին առանձինն իշխանք կամ տեարք նմին. այլ երկիրն յիշատակի և առանձինն, որպէս տեառք ՝ի վերոյ յըլկիցն ԺԱ. դարս կամ յելս Ժ՝, յանուանէ մտան ժառանգութեան հանել զայն Գագկայ՝ որդւոյ Իւրամ և յաջորդի՝ Քուհանեա. յիւր և ՝ի սկզբան ԺԱ. դարս՝ յարձանս Հայրատայ յամի 1210. յորում ասէ Զաքարիա ապատար՝ տաւել ՝ի տէրք Անին՝ զիւր « Հայրենի » գեղերն որ յԱշոցք՝ զՀաղարածին և զվանս. և զի այս « գեղերս հետ էին ՝ի Հաղրատայ », զայն զՀաղրատ գեղ փոխեալ ընդ նոսին՝ առնու ՝ի տէտանէն՝ ՝ի Գառ-Քայ Շաթոտկայ որգւոյ, և ընծայէ վանացն։

Այս երկոքին գեղք միայն ոչա գտանին յիշատակեալք ՝ի նախնեաց, ՝ի գաւառին Աշոցայ, և հետոկ յիշատակ՝ — ի առհասնս Գանձասոյ կամ Գուիշափերայ՝ որ կին է յԱշոց, նշանակի վանք գիւղ յարևմտահարաւն վերայ, և հատանելի է նոյն լինել ընդ յիշեցեալսն ՝ի Զաքարիայ. իսկ գՀաղրածին՝ փոխագիլի է գտանել ՝ի նոյն կողմանս՝ ՝ի հիւսիսոյ արևմտից Շիրակայ և Տայոց՝

1 Ի հին օրինակի անդ Գահնամակին, որպէս տեառնի՝ Գաղջեան գրեալ է, այլ Հատարեցւոյ ելիմ Աշոցեան էր գրելի։



Քառակաճեր եկեղեցւոյն Տիկորոյ ՝ի Շիրակ.

ԺԱ.

ԱՐԱԳԱԾՈՏՆ



ՌԶԱԿԱԴՈՑՆ և նշանափառքան գյուղս 'ի գաւառաց աշխարհս մերոյ՝ ԱՐՈՂԱԾՈՏՆ է, և ըստ բնութեանն հանգամանաց և ըստ քաղաքական տեսութեան. ըստ առաջնոյն՝ զերկրորդն 'ի բարձրութեան լերանց Հայոց աշխարհիս ունելով և զլայնանիստն բնաւից, գեղեցիկ բաւմանութեամբ յորդառատ ջրոց, զատճագեղ բուսաբերութեան և յառատութեան օդոց. և ըստ երկրորդին՝ զառաջինս 'ի մայրաքաղաքաց նորին՝ որ առ հնութեան ժամանակաւք և որ առ քրիստոնէութեամբ՝ ունելով յինքեան կամ առ երի առհմանացն. և մանն մի մեծ գոյով բնիկ Աղբատեան աշխարհին և գաւառին, և մի 'ի չորից կամ հնգից տէրականացն արքունի գաւառաց. առհմանակից անելով յարեւմտից՝ զարեւելեանն Շիրակ (զայժմեան Ալէքսանդրապոլ), 'ի հարաւոյ՝ զՃակատս և զՄաստացան, և զՈտանն Հայոց կամ գրուն Աղբատաց. յարեւելից՝ զկատաս, և 'ի հիւսիսոյ՝ զԱրից՝ եւ որպէս և անունն յայտ առնէ, նշանագրոյն 'ի նմին՝ լեառնէ է Արագած, որում յաւելուած կամ զուգորդ համարեալ է բանագիտ երկիր գաւառին, վասն այսորիկ և կոչի Ոտն Արագածու. զորոյ գրեմք է զկէս գրաւ, եւ չրջապիտս առաջին, գաւառն եւ զկէս գրաւ. եւ չրջապիտս ընդարձակութեան միջոցի գաղեւելիւք տարածեալ չրջագրականքեան մինչ ի ստացն Աղբատաց և Շիրակոյ, ոչ անելով կցորդութիւն անանջրպետ ընդ պարս իրիք լերանց, հանգոյն հակառակին իւրում և բարձրագունի Մասեաց՝ ինքնատրոյն մեծութիւն ամբառնոյ. բայց զի հիւսիսային արեւելեան ստացն մերձաւորք են Մասեաց կովկաս անուանեալ պարս լերանց, մերթ է 'ի նոցնս վերագրել և զԱրագած. և որպէս գաւառ իւր ըստ գրից ոչ[1] գոյ բնիկ գաւառացն Աղբատասոյ՝ և ինքն լեառնն յիւրում գաւառին 'ի հիւսիսային արեւմտեան մասին կայ, որով յայտ է զի Ոտքն՝ որ է բուն երկիրն՝ տարածանի յարեւելս կոյս և 'ի հարաւ, մասամբ և յարեւմտս հարաւոյ. Աստուած որ ժամանեցոյց 'ի տեղագրելս զարեւելեանն Շիրակ, արժան է սկսանել և զգաւառս. այլ զի ոչ առկայ տեղիք 'ի բուն լեռնաւորին գտանին՝ հարկ է ամենայնիւ նախ զլեառնն տարագրել և ապա զայլ տեղիս և զչէնս.

76. Արդ, երկրորդս այս կոթող հայկական բարձանց՝ գրեմք ընդ նոցին երկայնութեան տարհանաւ կայ՝ ընդ որով առաջինն և գերագոյնն, Մասիս. այսինքն է տաղ ինչ պակաս ընդ 42° միջօրէին Բարիզու, ընդ որով կրճս գտանի առ, և ընդ 40 տարհանաւ Հս. լայնութեան, որ է իբր 50 մղաւոյս 'ի Հս. Մասեաց. և գրեմք հաւատարիք հեռաւորութեամբ յարմանց Երասխայ, Մասիս 'ի հարաւոյ, Արագած 'ի հիւսիսոյ, առանձ մի հեռագոյն քան զնա. այլ 'ի հնումն ոչ նոցնպէս. զի Երասխոյ նահ. 'ի միջոցի 2000 ամաց պատմական ժամանակի՝ փոխեալ զընթացսն խառնելով է ընդ Հարաւ, հեռանալով յԱրագածոյ. զոր՝ ընդ մեծի գագաթին (Մասեաց) տարի և անտի՝ ունի պահակս իմն կամ աշտարակս յարեւելեան, զեղերք մեծագլուխ հոսին, ընդ որոց մէջ երագէ գյաւերժափոս ընթացան. կամ որպէս գեղեցիկս խնամատիրեաց գլուխ աշխարհագրացգարուս (Բիգդեր), իբրեւ ընդ երկուս բարւոքս մեծի գրան, ընդ որ անցանեն կարաւանք ազգաց յարեւելից յարեւմուտս. — Առաջին նշանակեալ տիպ լերինն՝ բարձրութիւնն է 'ի միջի լերանց և բարձանց աշխարհիս, և մանաւանդ որոց յեղեղս Աղբատեան գաւառին մեծի. վասն որոյ և Արագած կատար կոչէ զայն՝ ասի 'ի պատմչաց մերոց նախնեաց [1], վերացեալ գոյով յերեսաց ծովու 4100 Զ. կամ 12,606 ոտս [2], վասն որոյ և գոգք ինչ նորին մերձ 'ի կատարն՝ մշանջենաւոր առատանանեաք մատեալ Յոան. այլ քէպէտ և այսպան բարձր է և անձյառ և մեկին ևս կոյ, և իբր 10,000' վերագոյն է քան զդիրս Էջմիա-

1 Ասէին. կամ երեցագոյն ոչ քան զնա պատմաբան:

2 Ըստ այլոց 12,871 ոտից:

ծրնի (20 մղոնաւ ևւեթ 'ի բացէ), ակոյն ոչ ապդոպագոյն գործէ յաչս զվանմութիւն բարձրութեանն, որպէս այլք ամենք 'ի նմանեւեցն 'ի ակս մեծատարած լայնութեանն համօրէն սարատավքն և գագաստափք, որք ամենել քան զ25 մղոն լինի տրամագիծ յատակացն ընդ երկայնն և ընդ լայն, յայս ուրեմն զի և չրջագատն իրրև 85 մղոն, յայս ակս ոչ իրրև զՎեծն և ոչ իրրև զՓոքր Մասիս և ոչ զայլ բարձրաբերձ լերինս Հայոց՝ տեսիլ և տեսա-ցեալ ցուցանէ կերպարանս, այլ կատարեալ և աստիճանեալ լայնարձակ գագաստափք և սարատափք· բայց զի 'ի Հա·կազմանէ չեն ընդարձակ կողքն կամ գագաթն՝ քարձրագոյն յայնմ կազմանէ երևին և կատարքն· Չի են նոքա չորք կատարք, առաջ ինչ գանազանելոյք 'ի բարձրութեան· բարձրագոյնն է արևմտեան հարաւայինն չափաւոր տափարակաք· թէ և 'ի տարև տեսպականք երևին և իրրև քառահատուած ժայռք միոյ գագաթան, կամ հեռ-ձեալ չրթունք խառնարանի մեծի հրաբղխի· բայց զի են և այլ մերձաւոր կատարք լերինն՝ ասի 'ի վերջնոց գիտա-զոց եօթնականաւոր ասէ· իսկ զի եղեալ է և հզօր հրա-բուղխ 'ի հին դարս, յնութիւն քարանցն և կատարու-թիւնք անբաւ զազակի տարածելոյ ընդ բազում մղոնս, մանաւանդ ընդ կողմն Շիրակայ, յայս առնեն ակներեւ· Այս քառագագաթն ձև և յիշատակ հրաբղխի ներգործա-թեանց լերինն՝ այնպէս ծանօթ և ազգաւ էր 'ի յոյն և յերևակայութեան նախնեացն մերոց, զի ոչխարհագիր միջին գարուց (Վարդան), ասէ· « Մեծագոյնք լեառն



48· Կատարք Արագածոյ, 'ի Բարդոյ լեռնէ դիտելով.

» Արագածայ, որ առաջագն միոյ ցկատար լերինն ա-» ւերակէս ճանապարհ է, 'ի չորս բաժանի լերինք մե-» ծամեծք, և մէջ նոցա գոգ հովտաձև հարթայատակ, և » չորեքին ծայրք լերանցն՝ հանգէպ միմեանց խուչա-» նման » · յաւելու և զատանգութիւնն ասելական· « Ա-» սեն, թէ արշնեալ և օծեալ է նշան սէրաձևական՝ շնոր-» հաբոխս աջովն աստր Լուսաւորչին լերինդն այն, 'ի » փառս խաչելոյն Քրիստոսի[2]· և է 'ի մէջ հովտին քարա-» ծերպ այր մեծ· 'ի նմին այրի չինեալ տաճար փոքրիկ » խորան, և կախեալ կանթեղս առանց չառանի, և փո-» խանակ ջրոյ՝ արտասուաք լցեալ, և հրով երկնային վա-» ռեալ· և մեսյ մինչև 'ի գալուստն Քրիստոսի 'ի դա-» տաստան· որ բազում յարժանաւորացն տեսեալք են » և տեսանեն զհրաշն զայն 'ի փառս Քրիստոսի[3]· Կան-քիզքն հրաբուխք 'ի վաղուց չիջեալ են, այլ քերևս տակաւին ծխէին 'ի սկիզբն պատմական ժամանակաց մերոց, և առանգութեամբ հնութեան առասպելեալ հա-սեալ առ արդիս քրիստոնեայս՝ փոխեցան 'ի հրաշագոր-ծութիւնս Լուսաւորչի, որոյ փոխան արտասուաց՝ երևին ցարդ 'ի բարձունս և 'ի տարատափս լերինն լիք ուխտի քան զտան· ոմանց ուխտի քան զկէս մղոնեալի առնե-լով տրամագիծ, և յոյսնին խառնարանք գոլ հրաբղխից, և այժմ մատաւականք և 'ի հալից ձեռնց՝ չտեմութիւնք լինին բազմութիւն առատաց և ապրելոյ ընդ ձոյս և ընդ ծաղօպս, և գետս գործեն, որպէս յետ ակատուց տես-ցուք· Մեծագոյն 'ի լճակացն գագլիր և բարձրագոյն՝ յա-րեւելակողմն կոյ, և կոչի Գոգտ կէտ (Սեւս լիճ)· յա-րեւմտակողմն են երկու լճակք, որոց մեծագոյնն՝ Գրգռի կէտ (Կարմիր լիճ)· սյլոցն որ յարևմտեան հարաւակողմն և որ 'ի միջավայրն՝ ոչ նշանակին անուանք· — Քարեւ-ելեան կատարէ լերինն ծորի ծծումբ պղպջաշունն գոլ-րաժեռիթք, զոր երբեմն հրացան գնահակոք հարեալ և փրթուցեալ ժողովեն· իսկ քարինքն ամենայն սրատ-դրութիւնք են հրաբղխից, այլ 'ի յօդսմութենէ իջից և կա-յից ջրոյ և ներգործութեամբ օդոյ՝ ծակառեալք և փրխ-բեալք, վասն որոյ և ածանգակիշք բաւսաքերութեան· որ և քաջ բարգաւաճէ Արագած, ընդգիմակ և գերա-զանց Մասեաց, որպէս և համարէն վայելչութեամբ կեր-պարանացն· և թէպէտ չատք 'ի ջրոցն 'ի վերին եզեռս պպղին 'ի գիշերի, այլ ընդ սուրս քարանցն մղեալ խա-ղան գանթարար· Ոչ միայն ձորք և ծաղծորք են ջուրցն՝ այլ ուրեք և բացատ քարավէժ առնեն· առ որով 'ի մի փոքրիկ 'ի ներքոյ վիմի միոյ, յորում ամենասաքր կրկրոցու-թեան, և խոխոջ 'ի նմա գնանեն մի առանց առատանի, և ելից գնա իրովք սրատասարքն· և խնդրելոյ Արատածոյ, զի երկիցեավ լուսով վասնցեալ' անչէ Մատչէ մինչև 'ի կատարած այրերի· որ և ելեն իսկ բան խնդրոյն· որ կոչ մինչև ցայսոր 'ի փառս Աս-տուծոյ և 'ի պարծանս ծագողին իրոյ· Ջոր նման իսկ ոչոք յայս-նագէս Ս· Գրիգոր Աղուանից' յետ ժամանակաց... որ վասն սրնորիկ կոչեցաս Աղուանից»·

1 Տես Gillet, կոյսերական պրագիտ Հայոց' 150 վերստ ասէ·

2 Ըստ ստուգութեանց' գրսերին մատանս լերինն իրրս քա-ռասներս խաչ' որմնեալ երեի Լուսաւորչին· բայց գաստէր և սրոյն խաչ' Աբաքեան Ս·Նշան անուանեալ, և 'ի յետին գրս պատկեր 'ի Վաղարշապատ·

3 Չատս ընծայելով պատմիսոց' գրէ և Մխիթար Կոսնգոսիկս 'ի Ջամչո մատենին, (էջ 288)· « Որ և եւեալ 'ի ծայր լերին Արա-գածու և տանէր անդ գրատրս բազումս, սրբ և յորդիսոց գտաներ

սկիզբն կոյս գաբաս՝ Մօրիէ ուղեւոր անդրիացի ընդ սերտարին Պարսից (յայնժամ տիրոջաց) գրասդոյր և ճանչէր։ — Ի հիւսիսային արեւմտակողմն գագաթանցն՝ կոյս չրջաբոլոր անթերի խառնարան հրաբղխի՝ իբր 40՝ արամադծաւ, յորմէ հանելով են թեապղն զուլակը կուսակեալք ի տուրսան լերինն. և նշանական իմն կազմուած երևի ի քարինան արտաղեալս, զի անկեն ի մէջ հնագոյն քան զինքեանս հասարս կարծրակուռս. յոլովք ի ձորայատակաց և եզերք նոցին՝ սեաւ և խոյտ կնափայլ քարինք են, ընդ որս ուժգնակի սահին հոսանք չուրցն, որպէս և փառաղ իւրովք ժանգակոք, և սահառը գժպղհի կիրպաթանք և ամայութիւնք յոյսանին զնոքօք. այլ ի հարթ տեղիս և ի սարատափս կոյ և հող սեաւ մնացիչ լեռնարատոց։ Իբր ի կիսոյ մայիս ամոյ ցվերջ կոյս տեսմերիւ՝ յոյժ գեղեցիկ և զմայլական երևոյթս ընծայէ լեռանն՝ ժանգակութեամբ չուրց և օդոց յատակութեամբ, քաղցրահոտ բուրմունքք, և երանգ երանգ ծաղկաք, յորս գեղինն է յամախագոյն, այլ և կապուտագոյն Շուշանք վայրիք կամ Հիրիկք, չատափայլ Կակաչք, Բոգք կամ Հոռոմերնջանք (Gentiane), Կանթեղնիճք կամ Զանգակ-ծաղիկք, Զագախատ սառնորակ (Erysimum gelidum), Գոմաղորս խոշոր (Hypericum scabrum),



49. Արագած լեռան յԱշքառակրատպէն տեսեալ.

* Նապերիկ պարսկային (Hesperis Persica), և այլք պէս-պէս յարոց՝ զմայլմամբ քաղէր բնասէրն Վալնէր գերմանացի, յամի 1843. նա և բազում ազգս մինչառաց կամ ճճեաց հատաքաց անդ, և նշանաւոր քան զնուաս և միայն Հայաստան կազմնոցս սեփական՝ Ուժեղն առնանեայ (Callisthes), քաշափայլ կապոյտ և նորաձև իմն, որ ի բարձունս լերանց և մերձ ի սահմանս ձեռնոց գոտեաւ։ Այլ սաներն ծաղկանցս և պիտանեգործք մինչառաց, երամբ մեզաւոց, և ընծայեն մեզ պատառական, մանաւանդ ի սահմանս Կարբոյ։ Ցոյժ և անհամեմատ գեղեցիկ է Արագած ի չորեքին ամիսս ամարայնոյ, և գրախտանման իմն բնակութեամբ, զոր գերագոյն գտաք Վալնէր՝ քան զայլոց կազմնոց Հայոց՝ զոր եհաս, և քան զինաւոր կովկասեան գաւառաց. այլ երկարաբերձ ձմերայնոյ և յաճախութիւն ձեռն՝ անհամարոյր զօրծեն զմեզայորդ տարոյն, և ոչ ներեն պիտանի բաւոց հատանել, երբեմն և ոչ իսկ գարոյ. համայն և այնպէս ի սկզբանէ ասդգ պատմական ժամանակաց, յատուկ հաբրաստութեան նախնեաց մերոց, առ տիրապետութեամբ Պարսից, և առ մեզ իսկ՝ փափագելի զրօսավայր ամառանոցք են գարատափն և բարձունք Արագածու, և արօտավայրք մերձաբնակացն և եկոց Քրդաց և Թուրքաց։ — Լինին յԱրագած և վայրկ այծեմուկք և վիթք գեղեցիկք ոչորկ և սուր և երկայն եղջերաք, մինչև 0,70 Ը. երկայնի ամն յիշէ զոգ մի եղջերաց նոցին 39 հանգուցիւ կամ պատառածով, և համարի այնքան ամս կենդանւոյն, զոր կոչեն անդ այլազգի լեզուաւ Թուրիւ։

Առանձնակ անուամբ ասաք լերանց Արագածու հա-

Նաչին, յարեւմտից հիւսիսոյ՝ Գղզկար, յարեւելից հիւսիսոյ՝ Զանիկ, յարեւելակողմն՝ Ցալիքէր? , ի հարաւակողմն՝ Քարչարաց? , Ամիերդ, Տիքմէ գալ, Գաթա գօնաց? , յարեւմտակողմն՝ Գղզ-պուռուն, Գղզլ գիւղաքաղաք, և բացագոյն ի սահմանս Շիրակայ՝ բարձրն Զիյարէք տապ, իբր 10,000: Ա՛ն նախնիս մեր յեզակեան միայն յիշի լեառն Արագած և ոչ լերինք, և ոչ այլ անուն լերին ի սմին. ա՛ւր զատ զսրատն. բայ այսմ և յայլազգեաց եզարար Ալակիզ անուանի՝ Զկան և այլ լերինք ի գաւառի Արագածասան, բայց ցածունք ևեթ, և առապարք. իսկ որ յաբեւելից կուսէ յայն կոյս, որ է յահեկէ Քաղաղայ, Վանան Արայի՝ իբր 8050՝ բարձրութեամբ՝ սահման հասանէ ընդ սա և ընդ կասպից գաւառ, որպէս և որ բացագոյն ի հարաւոյ եղիվարդոյ ամբառնայ եռագագաթեանն և երկայնանիստ իւր բեհիւրիւ կոչեցեալ յայլազգեաց։

77. Ջուրք և գետք գաւառիս գրեաթէ բովանդակ ի մեծէ լեառէ սահ իջանեն և գնան ընդ ամենայն կողմանս, արբուցանելով զանդաստանս և զոյգիս . այլ շատք ի մանուանցն՝ ամպրանի նուազագոյնք ի սօթոյ արեգական և խաւարչ երկրին, և ի բազմաբաչիս ագուցոյից ոռոգմանէ, ոչ ժամանեն յասպնջականն հզօրագունիցն յիւրաքանչ. այսպիսիք են յաւէտ արեւմտակողման գետակքն որ ի Շիրակայ կողմն, յորս գլխաւոր է Մառատայ գետակն, և նուազագոյնքն՝ Թոռնայ և Ալուձայ։ — Եզանուրն անուամբ ի պատմութեան՝ այլ այժմ նուագեալ քան յորգութեան՝ է Մեծամօր կամ Շամբի ջուր, քան այլազգեայ Գայթ առ, որ ի հարաւային սահմանից լերինն բղխէ ի չամբառ վայրոյ, և ցրուեալ ի յարգամ առուս կամ հաւաքեալ ի բազում առուոյ՝ ի Մ. Հր. վաղարշապատ խառնի ի Քասաղ, և սակաւ մի ևս յառաջեալ՝ Թափի յԵրասխ, բայց յառաջին ժամանակսն երկոցունս ևս ոչա բնթացք այլազգ էին. Երասխ առաւել ևս ընդ Հա. բնթանայր, և Մեծամօրն ընդ արեւելս՝ զուգահեռական բնի նմին գնացիք մինչև յԱրաւստա մայրաքաղաք ժամանէր, և մերձ նմին անկանէր ի գետն մեծ։ Զայս յայտնապէս նշանակէ նախ Խորենացին ի յիշելն զհիմարկութիւն Երուանդաշատոյ՝ վասն հեռանալոյն էրասխայ յԱրմաւիրայ՝ յառաջնոյ քաղաքամերձ Հայոց, և յայտնագոյն ևս յաշխարհագրութեան խորհ, թէ և ի նորագունէ քան զնա հմուտ և հին գրէչ յաւելեալ իցէ, եթէ առ Ա՛ռաջաւառ էին « յառա. » ջին ժամանական խառնուրդք Մեծամօրի (Երասխ), » իսկ այժմ փոխեալ զդնացն Մեծամօրայ՝ խառնի ի » մոյ կուսէ » : Եւ Բագրեւանդ (Գ. ը) Դաշտ Մեծամօրն կոչէ զսահմանս Գառնոյ և Ա՛ռաջաւառ. և յերկոսին ևս ի առա՝ յիշին կամարք Մեծամօրի[1]։— Գլխաւոր գետ գաւառիս այժմ է Քասաղ կամ Քարսաղ որ և Քարսախ գրեալ, ի լեռնոյ կոչի Կարթոյ չորս յանուն մեծի գեղջն. Քէ և ապրերգն բան վերոյիշեալ հին աշխարհագրին՝ բղխեն ի Նիգ գաւառի, այլ ի հիւսիսային սահմանից մեծի լերինն Արագածու, զորմէ պատեալ բան ելից կուսէ՝ մտանէ Այրագածան և ուղղակի իջեալ ի հարաւ, ապա փոքր մի խառնեալ ընդ արեւելս՝ յե. Հր. վաղարշապատի, և խառնեալ ընդ Մեծամօրի՝ սակաւուք հեռի ի Մ. Հրազդան գետոյ, անկանի յԵրասխ. ի հնումն յայս է թէ այլազգ էին և ընթացք սորա, և հարկ է թէ բազում մտնեաք վերագոյն ի հիւսիսակողման անկանէր ի Մեծամօր, յետ քերելոյ զվաղարշապատաւա, որպէս հին երգն վ[illegible]պատանից Հայոց յիշէ, մինդեռ քաղքն այն կոչէր Վաղգէսի աւան։ — Իր և այլ գետ կամ գետակ մի բղխեալ յիյից կուսէ Իջմիածնէ, Անապատն անուն որ և Թոռմօր, որ խառնէր ի Մեծամօր. չերեւի արդ գետակ որիշ յիյից Վաղարշապատի. բայց զի ոչ սակաւ վկայք են ի Հր. Օշականի՝ մինչև յԻջմիածին՝ չիրար խառնեալք և առաւել քաֆեալք ի Քասաղ, ի գէպ է զմի յայնցանէ համարել զայդ։ Բարեմօրէ կոդմանէ՝ որ է յահեկէն՝ ընդունի Քասաղ ոչ սակաւ օժանդակս իջեալս յԱրագած լեռնէ . յարեւելեան կողմէն՝ գԱլնգարդս, Տուղս, և ի հարաւոյ՝ զՔերդու և զՇադվերայ գետակսն, որք չիրար անկեալ՝ ապա առ Օշականաւ խառնին ի Քասաղ. իսկ յահեկէն, որ է յարեւելից, վտակս մանուանս ընդունի քաղցի լերինք Նգայ և Կոտայից փակեն զահեկանն ի մտառատ. և զի և յայմէն պատապեն զնա ասք Արագածու, հաւն գետոյն զառ ի թաւ և գահավէժ է ընդ հերձակատր առատապս, քերեալ յանկագոյն բնութեանն՝ Քասաղ կոչեցաւ, և փոխեցաւ ի Քասաղ, և ճահոդապէս Զաքարիա պատմիչ (Բ. ԹՀ) կոչէ զայն « կորկոռաձեւս և ծիծաղագեաց » ։

78. Սկիզբն չինութեան և քաղաքական օրինաց գաւառիս՝ ըստ աւանդութեան պատմչաց մերոց՝ հրանէ և ի սկիզբն պատմութեան ազգիս, և յայժ հանդանական է հնութիւն բնակութեանն ի Հայկազանց, որպէս տեսաւ և մերձաւորին Շիրակոյ. իսկ ի սմա նոյն ինքն անգրանիկն Հայկայ Արմենակ, սահն, նախ եկեալ « չինէ ըզ- » մասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ գաշտին (Այրարատայ) » և զՈան լերինն ի նոյն կողմանէ, և զլեառն անուանէ » յանկագոյն յիւր անուն՝ Արագած , և զկալաւածան » Ոսն Արագածու » ։ Յանկագոյն եւս թաւ պատմութիւն բնակութեանն քան զկալաւան երկոցուն անուանցն (Արմենակ և Արագած) , ընդ որս խորհ ոչ փոքր լսելիք, թերեւս ի սկզբան այլազգ կոչէր մին կամ միւսն[2] , Ոչ է յայտ բնիկ գաւառակերտ կամ կենդրոն բնակութեան նորին, այլ թաւ ինձ ի գաշտակողմն լինել յիյից Քասաղոյ, զի այնպիսի տեղի գիպզագոյն է ի շինութիւն՝ քան լեռնավայրըն անհարթք. և զի ի գնացս Աղթամարայ՝ Դաւիթ կաթողիկոս կամ եպիսկոպոս վիճակին՝ ի սկիզբն կոյս ՃՀ դարու (923) ասի լինել յԱրագած գեղջէ և ազգակից Մաշտոցի կաթողիկոսի. սա ծանօթ է լինել հայրենեաց յեղիվարդ գեղջէ, և մարթ է փոքր ինչ հաւանութեամբ նոյն կամ հաւդ նմին համարել զԱրագածն չէնն։ — Բաս գրիցն՝ ընդարձակ գաւ ի վայր սփռման լերինն մեծի՝ կոչ երկիրն Ոսն Արագածու[3] և յանմէ յեառնս բարգութեամբ Արագածոսն, կամ գաւառցւոյն, որպէս յԱրագածէն կոչեցեալ Ոսն[4], և

1 Ագաթանգեղոս . Եւթիս . և այլք։
2 Օրինակ ինն . Աբգեզեսի ։
3 Նախէ . Ցովհ . կաթողիկոս . Թովմա Արծրունի և վարդան ։
4 Թովմա Արծրունի ։

երթեալ կողմն Արագածու. գոն ուրեք և՛ ի յետնոց առևտրէս Արագած կոչի. Չհետագոյն ուշմանս գաւառին կամ զոյլ մերձաւորմանն գաւառաց՝ թիւրումն Արագած լերին կոչեն պատմիչք. որպէս, Սերխոս ասէ զՓիլիպպոսէ Սիւնեաց տեառնէ և զօրավարէ Պարսից, գնացեալ ի Կիլիկ և պատեալ զՓիլիմոյիք լերինն Արագածայ՝ անցանէ ընդ Շիրակ. իսկ Խորենացի (Բ. ԽԶ), զՎաղն իսկ Գեղամայ ասէ զՓիլիմոյ Արագածն կոչեցեալ լերինն, եթէ ոչ յայս անուն կոչիցէ և զԱյրանկէզ լերինս որ՛ի հարաւոյ այնր ծովու ապառաղեալ ձգին։— Զընդարձակութիւն չրջափուռ գրից գաւառիս, միանգամայն և զամուրքիննն՝ յայս առնէ և եղիչէ, յիշելով զամուրս ինչ նորին և յաւելուլ, « և զամենայն Ոստ Արագածու »։ յորմէ բանէ վկայի յայտնապէս Նախնեաց մերոց տիրապետուց՝ ի բնական ամրութիւն երկրին յաւելեալ և զենագործն, և բազում արգանդ գաւառակերտս, բերդս և ձմերոցս չինեալ՝ ի սմա քան յայլ կողմանս. նշանակ արքունի սեփականութիւն լինելոյ գաւառիս՝ ի վաղնջուց հետէ և յառաջ քան զայլ ամենայն Այրարատեան երկիր. վասն որոյ և ոչ ուրեք յիշին առանձին իշխանք և նահապետք Արագածոտան կամ զօրաթաժին. բայց միայն՝ ի բարձ Գահնամակին՝ Տըրդատայ՝ ըստ Մեսրովպայ երիցու յիշին (Քիւ ղ) և Արագածեանք, յայտ է թէ սերունդք ազգապետին Արմենակայ, որպէս Շիրակացիքդ՝ ի Շարայէ։— Բայց յետ բազում ժամանակաց առ Բ Արտաշիսիս յետս Ա գարուս Քրիստոսի՝ զԵՒ մասն մի գաւառին (արևելակողմն) տուաւ օտար տէրմի, Ախատունեաց, զորոց ճառևսցի առաջիւ՝ ի տեղագրի Օշականայ, նոյնպէս և զեպիսկոպոսաց նոցին. յաշ արարեալ տասանօր միայն զնշանաւոր յոյժութիւն մեծամեծ վանօրայից գաւառիս, որպիսիք են Քուխանեվանքն, և որ մերձ նմին Սագմոսավանք, Ծաղկովանք, Ուչց վանք (Ս. Աստղիս), Լազրեվանք, Մաւնոյ Ս. Գէորգ, Եղիվարդայ վանք, և այլն. Նշանակ յոյժութեան և ճոխութեան ազնուականաց յերկրի սոսա և արքունի ձեռնասուքեան, զի յաւուրց Արշակունեաց վկայի սկզբնաւորութիւն հաչակաւորացն։ Եւ ոչ յերկրի սոսա իւրանց միայն, այլ և՛ ի Պաղեստին՝ վանս անուանիս չինեալ էր նոցա, յորոց յիշին երկուք՝ ի կողմն Սիոնի, մին սրանց և միւսն հաւատաւորաց։ Զիք կարծել եթէ զսա՛ ի միաբանակեցաց վանից՝ էին և միաչնանոցք և անապատք ճգնաւորաց, ՛ի զերծ և յանբոյս տեղիս խորից և ծերպից Արագածու. ապանօր և յետ ժԽ գարու տարտղ ամն եգեալ զմի՛ ի ճգնաւորացն՝ ՛ի բարձունս լերինն՝ ՛ի խոռոչս վիմացն նստեալ և զբաղեալ, վեզար՛ ի գլուխ և փիլոն գիւրեւ, և մեռեալ միայր անդ այնպէս անապական. զոր ապա քաղեալ Արտքի եպիսկոպոսի և առաջնորդի Սագմոսավանից, յայնմանէ ազգեցաւ՛ ի սիրա իւր հաստատել և վերանորոգել զկարգ միաձնական կենաց, որպէս մեր պատմէ Առաքել Պատմիչ (Գվ. ԽԱ)։

Ցանուն գաւառիս կոչ ցարդ առնեն մի Արագածու. նի, այլ ծանօթ նախահաւն չէ՛ նէ՛ մեր քան զերկուս գար, և է Մելիք Սեղում անն՝ յիշեալ յամի 1685, յորմէ և այսր տերունդքն պահեալ ունին վկայական կանգակս և հրովարտակս թագաւորաց։

Գանգի առանձինն գործք տերանց գաւառիս ոչ յիշատակին, քաղաքական անցք որ՛ ի սմա հանդիպեցան՝ ընդհանուր պատմութեան ազգիս և այրարատեան նահանգիս պատշաճին, անորիշք՛ ի նոցանէն. իսկ ըստ տեղեաւթեան երկրին՝ առ հինս մեր ոչ գտանեմք առանձնակ վիճակս տրահմանս յԱրագածոտն, այլ՛ ի միջին և՛ յետին գաւս յաճախ լսին. նախ, փոխանակ Նորին Աքերդ կոչի գաւառիս. զոր արիևակ Սահփանաս Օրպելեան յՈդրս վաղարշապատ երգէ

« Հաղթաս, Բջնի ս. Աստուածն
Որ յԱրագած եւ յԱքերդին ».

և պարզագոյն ևս Առաքէլ պատմիչ ասէ. « ի գաւառէն Աքերդոյ՝ որ է Արագածոտն »։ Ցետոյ ընդ նմին յիշի և կարբի իրրև յարակից կամ օրիշ վիճակ. որպէս ասէ վասն Զաքարիայ առաջնորդի Քաղհանովանից, « որ՛ ի » տատրատ Արագածոտ և՛ ի գաւառիս Կարբոյ և Աղ» թերդոյ »։ Ու իշխանութեամբ Պարսից՝ մեծի կուսակալութեան Երևանայ մասն գոլով գաւառիս, առանձին անուամբ կոչէր ընդ գլխաւոր չինին՝ Սարսարապատ. իսկ զարգիս ըստ նոր անտեսութեան Ռուսաց պետութեան՝ միոյ՛ ի հնգից գաւառաց Երևանեան կոմսութեան, այն է Էջմիածնի կամ Վաղարշապատ մասն է բովանդակ Արագածոտն։ Այլ տակաւին ամենայն մասն տրահմանք վիճակաց և գեհից նմանացին՛ ի սմա, որք և Թաւին՛ ի վաղ ժամանակաց և յայգպիսին տեղութեանէ տահմանեալք. և մեր գոյիր զհետ երթեալ՝ ՛ի վեց վիճակս նկատեմք, որպէս և ազգայինք մեր բնիկք տեղացն. ա. ՛ի Թալին, և բ. ՛ի Թալիշ, արևմտեան մասն՝ որ տահմանակից է և գրեթէ խառն ընդ Շիրակայ, և առ տերապետութեամբ Պարսից կոչէին Սէիտլի և Ախասլը. գ. ՛ի Սարսարապատ, հարաւայինն որ խառն էր ընդ Սարմաւոյ. իսկ դ. արևելեան չինաշատ մասն՝ Կարբի կամ Կարբի-պասար և ե. Աքերդ. ընդ յետնոյս յամանց երթեալ գոգի և Բիւրականն անուն վասն որ՛ ի նմա հաչակաւոր բերդին և գեղջ. է. Վաղարշապատ. յորս միանգամայն ասելի քան զՀարիւր և վաթսուն գեօղք են՝ ընդ չէն և ընդ ասեր, և քան և հինգ՛ ի նոցանէ՛ ի գարատափս մեծի լերինն, գաս յաւերակացն կամ յամայեաց յոյլ ևս այլ կոչմանս նորին. իսկ Հայոցմանէք՛ ի սոսա՝ կիսով չափ բովանդակ թուին,

Ա· Թ Ա Լ Ի Ն

79. Վիճակս այս յարեւմտակողմն Արագածոտն բարձր և լեռնավայր արեւելեայ մասամբն, գաշտանայ յարեւմտեանն և խառնի ընդ Շիրակ· ոչ է յայտ ասհմանագիծ երկոցուն, և մարթ է գիւղօրայիցն այսր կեռնոյ մասին՝ ի հնումն Շիրակայ գոլ բաժին։ Երկիր այնր կողման խառնի ընդ ամայութիւնս՝ զոր յիշեցաք ի սահմանս Ջաբընձեայ (114), այլ արեւելեանն՝ թէպէտ և բարձրէ՝ դալարագեղ է յոյժ, այգեւէտ և բարերոյս, առագեալ յաղբերաց Արագածու. ունելով գետ զՄաստարա, որ և Միւռոի կոչի, և իջեալ յարեւմտեայ կողից լերինն խազոյ յարեւմտս, և չրջան առեալ ընդ հարաւ և ընդ արեւելս կոյս՝ անցանէ ի Աթաթարապատ և խառնի ի Մեծամոր, բայց յամարանի՝ նուազի յոյժ և գրեթէ ցամաքի։ Քառասուն անտի լերինն մեծի իբրև աղխաղխեալ ձգին բլուրք ընդ բովանդակ վիճակին ընդ հարաւ և ընդ արեւմուտս, և յոյսմ կողման ոչ կարի հեռի յԱխուրեան գետոյ՝ ասարին ի լեառն Գաւդուրս 6336 բարձր։

Ի հիւսիսային սահմանադիծսդ վիճակիս՝ յարեւմտեայ խորչս լերին Արագածու և առ ի ներքոյ ապրերականց յիշեցեալ գետոյն, առաջին գիւղ է Աջոխաման, որոյ հին անուն ոչ յայտնեցաւ, այլ գհնութիւնն յայտնէ հոյակապ և հառաջադոյց եկեղեցիսն՝ անուն գմխիթարայ, ոչ ընդարձակ այլ վայելուչ, խաչաթոյր ձեւով, հեղիր մասամբ առաւելեալ յերկայնն քան ի լայնն[1], ոչ սակաւ նմանի Հռիփսիմեանց վկայարանին Կղմիածնի. այլ նորանման ունելով արանկիսն թեւս, ի միջոյ չորեցուն կիսապարս թեւոց խաչին՝ արձակեալս իբրև չառասիղս· ի բոլորակս մեծոց թեւոցն են խորանք. իսկ ի վերոյ ծայրից թեւոցն ամենեցուն և առագ սեղանոյն՝ յեղեալս գմխիթին՝ են խորշք կամ պահարանք սուրբ, յորս հանեն եւք ընդ միմեանս, և մուտք յիրեար միմեանց ընդ միմեանս պատուհանք չորք են եկեղեցւոյն և 12 գմխիթին, որոց վերին ծայրք կործանեալ՝ փայտածածուկ յարկեալ է սրդ ի բնակչացն։ Զգուստ արձանագիր ի սմա, այլ միայն ի կիսաթոյր կամարի պատուհանին ի վերոյ արեւմտեան գրանն՝ ի միջի քանդակաց գրուագեալ Գրիգորը անուն· թերեւս յաջորդն Ս· Լուսաւորչին, կամ Գրիգորի Մամիկոնենի՝ չինողի այսոց եկեղեցւոց ի կողմանեսս յայսոսիկ, և կամ այլոց ուրուք Պահպանեան։ — Գտեալ է կից Աբեւմտեանս ի Հր· Նորին կոյ Աղաքիւիք կամ Անահի գիւղ, Ս· Գէորգ եկեղեցեաւ. յորոյ յարեւմտից հարաւոյ երկամեղանս ի սուրբ սա գետեզերբն՝ կոյ Մհկարիչ՝ փոքր գիւղ Հայոց, գաղթելոց ի կողմանց Աշտարակայ ի միջոյ 1840–50 ամաց, որք նորագեցին գՀնութիւն բնակատանացն և զմի յերկոցուն եկեղեցեացն· միւսն Աչենա փրիկ կոչեցեալ՝ աւերեալ մնայ արտաքոյ չինին յարեւելից կուսէ, ի գերեզմանատեղւոջ, անհարթ քարամբք և սոգալէն· միայն կիսաթոյր կամար խորանին և հիւսասյին սրմն կանգուն կայ, և երեսին ի նմա սրմնսրնդք երկու և Ջնայուածք կամարայ ընդ հարաւակողմն ձգելոց, և գառանն յարեւելից կողմանէ· երեսին և սենեկաց իմն սեղմք· այլ սրձանագիր ոչ գտաւ։ Նորագեալ եկեղեցին՝ զոր Ս· Յովհաննէս կոչեն այժմ, քան Ս· Սարգիս կոչեցեալ յառաջն, և է ի Հա· գեղջն, փոքրիկ և խաշաձև գմխիթաւոր, առանց խորանի ունելով սեղան, և գառան յարեւմտից։ — Խրթև մղանաւ հեռի յարեւմտից հիւսիսոյ սորին և յաջմէ գետոյն՝ ի կողմն Շիրակայ կոյ փիլոփիլեան գիւղ սակաւաքնակ, ի սորուստ այլոց Գուղարս լեռնակի։ Իսկ յելից Հր· Մէզաթրզրդի՝ հոյակապ գեղեղեանն Գիւղ կամ Զաղ-սեղբիչ և Գրդմրզրդ կամ Խրմրզրդ, առ որով գաղթականաց Կարզռանայ (յամի 1828) հառաջաւեալ բնակութիւնս՝ կոչեցին Նոր Գրդմրզրդ, և զեկեղեցին՝ Ս· Աստուածածին։

80. Երկու մղանաւ հեռի ի փիլոփիքեանէ և ի Մէզաթրզրդէ ի Մո· Հր· նոցին և յաջմէ համանուն գետակէն՝ կոյ աւանագեղն Մաստարա, ի դոզ բլրոց սորա սից Արագածու, որք ի Հա· և յՀ· պատին զնովաս, արձակ թողլով զարեւմտակողմն՝ ընդ որ անցանէ արքունի համապարհն յԱլեքսանդրապոլ և ի Աթաթարապատ, վասն որոյ և բարգաւած է գիւղն, իրևանատասմբ և 100 Հայ գերդաստանաւք. այլ նշանաւոր ևս է հոյակապ եկեղեցեաւն՝ թխակարմիր քարամբք, որ և մի ի հնագունեցն է կանգուն Ջնայելոց ի Հայս, միջակ մեծութեամբ, բոլորաձև սեթանկիւնի, անհուն գմխիթաւորեալ ի վերոյ կամարաթեաց, և ըստ հին ոճոյ՝ լայնանիստ է գըմբէթն և ոչ պրակաւոր, բաժանեալ յոմն խորչս խորհնս և լուսամուտս· իսկ ի միջի եկեղեցւոյն չորք պատուհանք են միոյ միոյ մեծագոյն թեւոցն· երկաւաք սեղանայն են մատուռնք կամ աւանդատեաք փոքունք· չորք գաւանեաքն արտաքուստ դրուագք քանդակաց են բոլորիք· Արտաքուստ զեկեղեցեաւն ածեալ էր Պարսից պարիսպ՝ (այժմ քակեալ) և իբրև ամրոց յորդարեալ, որով և սակաւ մի խանգարեալ զորմանս նորին և խցեալ զարեւմտեայ դուռնն, յորոյ վերոյ ի կամարի լուսամուխն կոյ խաչքանդակ, և ի միջի գրուագացն նշմարի մասն ինչ կիսեզծ արձանագրութեան, որ է սյս·

1 Աբել հոգիակոպս 55 քայլ սաէ գերկայնութիւնն և. 40 գլայնութիւնն· այլ օր չոփ իցէ քայլիւ։

Աստուածոյ աջմէն ... Գրիգոր Թոռն Վասակա չինէցաւ ապաւէնս ..... վերկել զԳրիգոր ...

Այլ՝ի կամաբի լուսամոի հարաւային գրանն անեզդ Ջեայ տուղաբան արձանս այս.

Յամս տեառն Թէոդորոսի Գնունեաց եպիսկոպոսի չինեցաւ աստուածաչին տունս[1] քաւել զԳրիգորաս անարժան.



50. Մաստարա. Հին եկեղեցի.

տող մի ևս կամ այլ բանից եղծեալ անվերծանելի Ջեայ, յորում թերևս նշանակեալ էր փոխազելի թուական ժամանակի չինութեան տաճարիս. որում՝ անուն եպիսկոպոսին միայն մարթի երաշխաւորել. զի մերձ՝ի կէս Ի դարս (645) ՝ի ժողովին Դունայ առ Գ Ներսիսեա՝ ընդ առաջագահն կարգի և Թէոդորոս[2] եպիսկոպոս Գնունեաց. և որպէս անդ՝ նաև յարձանագրիս առնիքն Գնունի ընթեռնուն. այլ եթէ Գնունիք՝ի կողմանս Ալկոյ և Վանայ են, ՝ի գէպ էր Գնթունեաց եպիսկոպոս կոչեցեալ զԹէոդորոս, զի և այժմ կոչման՝ի հաւ գայ տահմէ այգւոյ. — Ի վերոյ պատուհանի արեւմտեան թևին՝ արտաքուստ գրեալ կայ միւս ևս կիսեղծ արձան.

Գոհանամ զԱստուծոյ որ ևս ինձ Գրիգորասոյ ըղձացեալդ որդւոյ եղբարւ Գրիգորի իշխանի ... առանց ևս սուաւ ... սահ աղաւ ... աղգս ... մեզ զաւորաց յիշատակարան ինձ ևս ... յիշեցէք:

1 Շահխաթունեան՝ Աբել եպիսկոպոսանէ՝ ընթեռնուն Աստուածածին ... Ջերէնց կամ Ջերէնէ՝

2 Ըստ միոց օրինակաց Թոպէս. այլ Շահխաթունեան ասէ յընտիր ձեռագրս գրեալ Թէոդորոս՝

— Ի ներքոյ սորին գրեալ կայ.

**Աբաց ամսոյ ԺԴ՝ նաւակատիք սրբոյ եկեղեցւոյս եւ յիշատակ եպիսկո-
պոսի.**

— Ի ներքոյ սորին կայ միւս եւս արձան Թուականաւ 1010 ամի [1].

**Ի ՆԺԹ թուականութեան եւ ի հայրապետութեան տեառն Սարգսի
Հայոց կաթողիկոսի չնորհիւն Աստուծոյ կամ եղեւ ինձ Գագկայ Շահին-
շահի որդոյ Աշոտոյ թողուլ զՄատաստի հարկին զաւելորդն գ՛Ի, եւ ածի ԵՒ
վասն կենաց անձին իմոյ եւ որդոց իմոց... կամ ի թուականէ եւ եթէ առնու զա-
րածաքն այն եղիցի նման որպէս զարածաքն Յուդայի մանչի խեղդեալ ի
կորուստ եւ յամենայն արժանաւոր սրբոց եւ ի սրբոյն Գրիգորէ նզովեալ
եղիցի եւ մեղաց (մերոց) պարտաւոր առաջի Աստուծոյ:**

Են՝ ի տարօն արձանիս յունական տառք ինչ, եթէ	ΠΘPLL
տապղ ընթերցան՝ ի գաղափարագէն, զի անիմաստ են.	ONTAK

— Իսկ՝ ի հարաւակողմն՝ յարեւմտից դրանն արձանագրեալ կայ այս բան, յամի 1015.

**Ի ՆԿԴ թուականութեանս Թորգոմեան եւ Վահրամ իշխանաց իշխան որդի
Համզէի թողի զՄատղարայի չարիսան վասն Գագկայ Շահանշահի կենդա-
նութեան եւ որդւոց եւ վասն հոգւոց իմոց փրկութեան. Արդ այս գրոյս
չունի որ իշխանութիւն ոչ ես ոչ Համզէ եւ ի մերոց որ եւ ոչ յիշխանաց. ա-
պա եթէ հակառակի որ այնպիսին... նզովեալ եղիցի:**

— Յարձանագիրսս ոչ նշանակի անուն եկեղեցւոյն. այլ արդ կոչի Ս. Յովհաննէս, և առանձին տեղացիքն՝ զման մի՝ ի նշխարաց Ս. Կարապետին եգեալ առ Արբոյ Լուսաւորչին, և վասն այն կոչեցեալ գեղջն Մանե-ատրայ: — Ի հարաւոյ կուսէ եկեղեցւոյն կայ ա-ձեռակ փոքրիկ մատրան, զոր Թուխ Մանուկ անուանեն, որպէս և այլ մատուռն ուր յարեւմտից Հա-՝ի բարձրա-նադպակ վայրի, Ս. Աստիածնոյ նախատիպ կոչեցեալ, և առ. նորոք ՇնորհաւոՀք մեծատանէի կամ երիցուան: — Դարձեալ և միւս ուերակ փոքր մատրան, գոանի յա-րեւելից հիւսեալ՝ ի Պոլիկ կոչեցեալ ձորակի, և երկուց անեկաց, ըստ աւանդութեան՝ բնակարանք քահանայի տեղւոյն, որում եղբայր նորա գեղջուացն տուեալ էր զահմանան՝ ի պահեստ եկեղեցւոյն, վասն որոյ և ՆՀՂ-խատուածոյ եւս անուանեն զձորակն զայն: Են և գերեզ-մանք յոլովք չորիք զգեօղիւն և առաւել յարեւելակողմն, ուր և մատուռն կիսաւեր ՆԿԶ (1017) թուականէ, և բազում խաչվէմք, ՝ի մէնն արձանագրեալ է այսպէս.

**Ի թուին ՈԿԲ եւս.. Քահանայ եւ եղբարք իմ՝ կանդնեցաք զսուրբ Նշանս
բարեխաւս յահեղ աւուրն մեր ծնողի....**

Ի նմին կողման՝ ի բարձրս և՝ ի դիտակ վայրի՝ ՝ի վե-բոյ մեծամեծ կոկոսաց վիմաց կանգնեալ կայ գեղեց-կաքանդակ խաչվէմ, երեքկանգնեալ բարձրութեամբ և կիսով չափ՝ ի լայն [3], և՝ ի վերայն այլ վէմ քառակուսի քանդակեալ և արձանագիր՝ ի նմա կանգնացին Թաղէա-տուր վարդապետի վասն ծնողաց իւրոց և եղբարց. Թուա-կանն եղծեալ է: — Մի՝ ի մեհեանն կուսուածոց անհա-ւոյն Աշմիածնի եղեալ էր Մատաստա, զորոյ զմեծ մասն մի՝ բնիկ ամի Թաթիանն անուն՝ գնեալ յայլազգեաց պարա-գնեաց Յակոբոյ կաթողիկոսի, յամի 1657, յետոյ այլք

1 Արեւ. հոդիկոպոս տպագրիր ընթերցան Աշոց սր Տէրոն ՑԱԻՒ Ի ՀԼՐԻՈՒ ԼՍԼԻՆԴՈՒՆ: — Աստրատ, Գ. 122:

2 Ըստ Արեւի հոդիկոպոսի, այլ ստուգութեան կարօտ ընթեր-ցուածն, որ ոչ միայն պետ այլ և պակաս գուշակի:

3 Երեք գաղ ասէ Շահխաթունեանն չչափն, այլ ոչ ընդունելի գործածագրեր:

երեւանեցիք գնեալ վաճառեցին Աքառայն գրամանդակ գեօղն. որոյ սահմանք գրին՝ Գառախաչ, Ուխտրոց փառահաճ, Դրզրլօրան և Ագարանաս ճանապարհն։

Ի Հր. Մատաղոյ կիսով փարախաս հետի կոյ կէօղլի գիւղ, յորոյ յարեւմտից հարաւոյ ամրառնոյ լեռնաբլուրն Օառխոյ ?, իսկ յարեւելից հարաւոյ՝ Ալապին գիւղ Թուրքմանաց, ՃԼից նորա՝ ի գարատափս Ագռագածու՝ Տատարս հոգեթակ, Շէյխնաճի Թուրքմենակ, որոց՝ ի հարաւոյ՝ ի նոյն լեռնոտս՝ Իրիմս կամ Ըռլինտ Թուրքմենակ. նոյնպէս և բարձրագիրն Մէհրիպան կամ Միհրեվան, որ ըստ անուանն գուշակի Մհէր գից տեղի պաշտամանն. Ամակձի՝ Դրդղոշտրզ, Ագձագալէ Վերին և Ստորին. Գարիպօղլնագ, Եէշիդ, Պախչեճիկ, Գարագալէ բերդ հուպ՝ ի Ստորին Ագճագալէ. խորագոյն Ագարակ՝ ի վերջոյս հարաւային արեւմտեան տոտրոտից Ագռագածու։

81. Յարեւմտահողմն յիշեցելոց գիւղերայիցդ և ի Հր.



81. Հին Թալին.

Օառխոյ լեռնակին, երկու մղոնաւ բացագոյն, և իբր չորս կամ հինգ մղոնաւ ի Հր. Մատաղոյ՝ ի սահմանս փի կոյ Թալինն, Հին վերածանեալ յարգեաց, յորոյմէ յայլմէ գեղջէ ժամու ի Հր. Նորին եզելոց, բնակեալ ի Հայոց 50 ? ամանց գաղթելոց ի Ղարսոյ, յերկրորդ Ռուսահամանեան պատերազմին. և վան զրեղն ի լեռնահին՝ կոյն ուրիք և Թալնոյ Ոան. Նշանաւոր է ոչ միայն հնութեամբ եկեղեցեացն այլ և յիշատակօքն, որք գրեաթէ զանգանեն զիրկրական Թուականսն. քանզի յիշի նախ յաւուրս Արշամայ նախարգին Արգարու, զի մինչ նա զեղեամս կամ զԱնիանս Հրեայ իշան բագրատունի՝ ի սահմանս մտանէր և ի կոխատան, վան գերծացանէլոյ նորա զՀիւրկանաս գերեալ քահանայապետն Հրէից, քաւթեամբ Ջօրայի նահապետին Գնթանեայ, և ի հանգանել նորա առ աճի մահուան որդւոյն և իւր՝ ի կամս արքայի՝ յարացութիւն, բարեխաս նորա Ջաշուա Արծրունի, «տիեր և ամենայն պատրաստ կամութեամբ » բնակեցուցանէ (գնա) ի կողմն Ագռագածոյ, ի գիւղն » Թալին կոչեցեալ։ Այս առաջին ի տանէն Բագրատունեաց » նեաց եկեալ կայանայ զայսու կողմամբ Աղբարատեան » նահանգի. և առնու Ջաշուա զգուստ ենթարեալ կը» նաքեան Սահակայ որդւոյ Իւրոյ, որում անուն կոչէր » Սմբատուհի »[2] : — Ցանօթ էր տեղիս և յՏ գրա՝ յոյն աշխարհագրին Պտղոմէոյ՝ որ Թալինս Θαλίνα

1 Ոչ նշանակի ի ոտս աշխարհացոյցս, այլ ի Շաւիթաթունէ։


2 Ի թուխմոյի Աբծրունւոց պատմութենէն ԱՆ այս բանք։

կոչէ. յետ այնր ոչ յիշի տեղիս մինչև յետ կիսոյ Ի դա-
րու. յորում՝ Ներսեհ Պատրիկ կամարակաև կանգ-
նեաց՝ ի հիւսիսակոյսն տաճարին՝ զփոքր եկեղեցի Տիրա-
մօրն, ի կոթողեալսյս քարանց անտիւն գիրեթաւորեալ,
որ և անկործան մնաց ցարդ վասն ամրակառոյց չինուա-
ծոյն, միով սեզանով և միով դրամբ ի հարաւոյ. և ար-
ձանագրեալ ատի և անտի արեւմտեան պատուհանին՝
այսու ձևով (թիւ 52), և ընթերցանի. « Ես Ներսեհ ապի-
» (հիւ)պատ Պատրիկ, Շիրակոյ եւ Աշտարենեաց Տէր,
» չինեցի զեկեղեցիս յանուն Սրբոյ Աստուածածնին՝ ի
» բարեխաւսութիւն ինձ եւ Շուշանայ տիկնոջ իմոյ եւ
» Հրահատոյ որդւոյ մերոյ »։ — Ներսեհ լինէր երբեմն՝ ի
Թալին՝ վասն չինութեան կամ վասն այլ իրիք՝ վկայէ և
ժամանակակիցն Անանիա Շիրակացի՝ ի թուտրանական
առնջութեան. « Ներսեհի Կամարականի Շիրակոյ
» և Աշտարենեաց Տեառն՝ բան կանգնէր առ առաջաւոյ
» լերինն՝ որում Արտին[1] կոչեն. և ի գիշերի միում մէջ
» սին երամակք ցուցց բազումք. և ոչ լեալ առակք որ-
» ոգացն՝ ընթացեալ պատմեցին նմա ի գեօղն Թալին.
» և նորա իւրովի եկեալ հանդերձ եղբարբքն և ազատօ-
» քըն՝ կոտորեցին զերեան », և այլն։ — Գրեալ է կից
եկեղեցւոյս՝ կան փլածք մեծազանի եկեղեցւոյ, իսկ
քարընկեցիւ բացագոյն՝ ի հիւսիսոյ կողմանէ՝ կիսական-
գուն կայ այլ եկեղեցի մեծ և հաստակառոյց, բայց գըմ-
բէքն երկաստանակոյսն որ՝ ի վերոյ չորից սեաւոր
սեանց և կամարաքեաց ամրարձեալ կոյր՝ անկեալ է արդ-
իսպառն և եկեղեցին, 33 կանգուն (գազ) պարսիկ ընդ
երկայնն և 23՝ ընդ լայն. յերկոսին կողմանան և (հարաւ
և հիւսիս) բնն բնն պատուհանք են, և երկու երկու
դրունք՝ ի նոյն կողմանս և սեազ գուռն յարեւմտից. ա-
բեւելեան թևն՝ կիսաթոյր՝ ի ներքուստ և բրգաձեւ ար-
տաքուստ՝ ունի պատուհանս երիս, և երկուս ևս՝ ի վե-
րոյ, և երկուս խորանաձև կամ մատրունս յաղիէ և յա-
հեկէ սեզանոյն. ի վերոյ արեւմտեան գրանն կան չորք
լուսանցոյցք, և ի վերոյ նոցին ծակք բոլորշիք հինգ հինգ
այսու ձևով ⁘. և երկուասունք յորմն ի մի ևս պա-
տուհանք, և ի վերոյ նոցին բոլորակք փակք։ Արեւմտեան
հարաւային մասն որմոյն ի մեծի սաստանութեան Մա-
սեաց (յամի 1840) անկաւ և չախչախեաց զի ներքոյ կա-
ցեալ բեռնաթարձ եզինս 25։ Զերեւի որպ որձանագիր և
Թուական չինութեան սորին, այլ ի միում ի սեանցն որ
յարեւելեան հարաւակողմն՝ գրեալ կայ հին արձան ՈՀԲ
Թուականաւ, այն է 783 ամ Փրկչին, զոյս ձեւ օրինակի,
(թիւ 53), զոր սակաւ ինչ երկայնութեամբ ընթեռնում
ոչագիս [2].

Ի ՈՀԲ Թուականութեան Հայոց ես Ոսխտայտուր
վանականս եւ Ցոտի եղբայրիկ իմ բերաք զաղբիւր-
սըն ի Յարկապանու. դաշտէն ? ի Թալին ։ Ձէ յիշ-
խանաց ոք խղէացէ իմ մեղացս պարտական եղիցի։

1 Թերևս Նուռիկու չհանկն ինչ, կամաք յարեւմտից կոյ երկու
փարսախաւ հեռի Պատկերաց լեառն։

2 Քէպներ գերմանացի ոչ հայագէտ՝ նմանագրեալ է զոյս որ-
ձան. փոփոխելի էր սասագէլ ուժգ՝ ի մերազնեայց, կամ լաս
ևս՝ լուսասպէլ։



53. Արձանագիր Ներսեհի կամարարականի, ի Հին Թալին.

Աս գրան արևելեան հարաւոյ նշմարի Ճաշցորդ արձանագրի ՃԹուականաւ, որ է կէս Թ դարու. նորագոյն այլ լրագոյն ևս արձանագիր (1040 ամի Փրկչին) կայ ի հակառակ սեան արևմտեան հարաւոյ, այսպէս.

Ի Ն ԵՒ ՁԹ թուականութեանս Հայոց ի հայրապետութեան Տեառն Դաւոսկորոսի Հայոց կաթողիկոսի կամ եղեւ իմ Ամրատայ Շահանշահի որդւո Գագկա որ եատու ի սուրբ կաթողիկէ ի Թա (լին) ընծա — յաւիտենից զկոստանդնեանց այգին. յաւաչնորդութեան հաւր Ստեփաննոսի եւ արարի արձանագիր անշնջելի ի սուրբ կաթողիկէս. եթէ որ այս գրոյս հակառակ լինի կամ յիմոց կամ յաւտարաց ի մեծաց կամ ի վոքունց պարտական լիցի . . . . Տեառն:

Երեքն առ եկեղեցեաւս և Ճաշցորդք բնակարանաց կոփածոյ քարամբք, որք Թաւին մնձառաւանի՝ որոյ առաջնորդ էր յիշեալդ յարձանին: ի գարս անդ շինութեան եկեղեցացդ՝ յոյժ հոխ և բազմամարդ աւանդի ի ամս կաց լինել Թալին, մինչեւ ի մեծամեծ ազգս զաակի և Աստուածպահպանութեան՝ 360 նորագտակ հարանց արծաթագամ կոչիցաք գնալ յեկեղեցի. այլ յամի 774 կառուած մեծ եղև բնակչացն և կողոպտեաց յԱրաբացւոց, որ-



83. Արձանագիր յեկեղեցւոջ Հին Թալնոյ.

պէս և ի Քաղին և յԱրնէի, զի՝ սպանան 700 ոգիք և գերեցան 1200. և այնպէս ազգի և ահագին եղեն իրքն՝ զի աւերեցան ժամանակագրիք և պատմիչք նշանակեն զգոն, կուորածն Թալնոյ անուանելով, առանց մանրապատում առնելոյ զարկածն: Բայց առ Թագաւորաքեամբ Բագրատունեաց երկրորդ անգամ բարգաւաճեաց Թալին, որպէս է ասանել և ի յետին արձանագրէդ Ամրատայ-Շահհանշա Թագաւորի: Սա ի սկզբան Թագաւորութեան իւրոյ՝ մեծի փոքձանաց հանդիպեցաւ ասա, ըմբռնելով յորոգայթ՝ զոր փորեալ էր նմա եղբայր իւր Աշոտ՝ ի մտերից մահճացն, ուր անկեալ դնէր կեզծեալ հիւանդութեամբ, և կալեալ մտանէր զերդոյքն երէց՝ ի ձեռն Ապիրատն իշխանի. բայց առ երկիւղած գոլով, « յաժոր կամաք յինքն առեալ՝ առանի դնէ յաթոռ

» իւր յԱնի, առեալ. Զիմիդ ձգեցից զձեռս իմ յոծեալ
» Տեառն, և խելագար մի եղից ՚ի տեղւոջ սորա »[1]. —
Ցիչին զայնու ժամանակաւ և Ագատն Աբուշայ և Թագ-
նայ, յորոյնէն զահմանս երկոցուն մեծամեծ վանո-
րէիցն՝ զՁովհաննավանից և զՄարմաշենս[2]: Ձեռ իրր
գաբռ և կիսոյ, յամի 1161 կամ 1162, Լլակուզ ամիրայ
Պարսից առ քէն Թագաւորին Վրաց Գեորգեայ, որոյ ա-
ռեալ էր զԱնի՝ յանկարծօրէն յարձակեալ, » զԱշնակ և
» զԹալին զառանազեղջեայսն առեալ, և այրեալ զամ-
» բոցն, և զբազում զարս և զկանայս և զմանկտի ընդ նա-
» ա, և զրազումս վարեալ ՚ի գերութիւն, վանաւակուբ
» եղեալ յագգս հեռաւորս »[3]: Երրորդ անգամ այսպիսի
դժնդակ անցք անցին ընդ Թալին յամին 1514, զի վասն
ընդդէմ կալոյ Օսմանեանց՝ Սէլիմ Բ ՚ի գառնալն յաղ-
Թութեամբ ՚ի պատերազմէն Պարսից՝ կատրեալ զընա-
կիչս նորին[4].

82. Ընդ մէջ Հնոյն և Նորոյն Թալնոյ հաւասար հե-
ռի յերկոցուն կոյ մեծ իջևան քարուէին բազմանենեակ,
կիսով կոնգուն և կիսով քարքայեալ, և քարինքն վա-
բեալք ՚ի պէս նորոց շինուածոց, կոչի Վերխանակոյ



54. Նոր Թալին.

Թալնոյ. — Նորն Թալին կոչմամբ՝ այլ ոչ պակաս հին
և սա, (Քէպէս յանուանէ ոչ յիշի ՚ի պատմութեան կամ
յարձանս՝ ոչ սյսու անուամբ և ոչ այլով), որպէս ՚ի վերդ
յիշեցաք ՚ի հարաւոյ կոյ Հնոյն և իջևանատանն, յ՚ըս-
պառազէն արևմտեան հարաւային գարեւանդից Աբա-
գաձոյ, և հայի ՚ի գաղան ընդ հարաւ. բնակեալ է արդ
յայլազգեաց, այլ ոչ սակաւ մնացուածս ունի հին և հայ-
կական շինութեանց. որպիսիք են, ՚ի միջավայր և ՚ի
բարձրաւանդակի շինին՝ գղեակ մի բրգաձեւ եռայարկ
սրբատաշ կարմրագոյն քարամբք, ունելով և ներքնայարկ
ընդարձակ մեծամեծ քարամբք և կրով զուգեալ. դուռն
նորա մեծ յարևմտից հարաւոյ վիմապրեան՝ անկեալ կոյ
՚ի գետնի. շրջք կիսաթոյր բրգունք են ՚ի շրթեանն ան-
կիւնն, առ որս գան երկնելիք ՚ի կամարացարկէ ներքս
նաւանն, և շրջք ևս բրգունք կամ աշտարակք ՚ի միջոցս
սմոյն. յարևմտեան հարաւային բրգան ՚ի բարձս կոյ
սրձանագիր մեծատառ, որպէս Թուի Թագր լեզուաւ և
սրբագրի նշանաւ նոցին, և Թևրևս Ֆերհատայ փառասի
իջէ գրեալ, զի ասի վասն սորա շինեալ յամին 1583 բերդ
՚ի Թալին[5] և կարգեալ պահապանս. այլ նորագիր կամ

1 Վեպգան պատմիչ. Ղ՚Ի:
2 Զաքարիա Սարկաւագ. Գ. Ե:
3 Մխիթար Գոշ:
4 Ի 11 Շաբան ամենան 920 ա՚ին Հիճրէթի:
5 Ըստ Հաճիէրի Պատմութեան Օսմանեանց:

յաւելոյ չինուածոյն համարելի է քան հիմնարկու. քանզի ՚ի բրգան միւսմ մեքնաւորի առաջնոյն՝ երեւի հոյ արձանագիր երկքհարիւր ամաց հնագոյն, այսինքն է յամի 1267, զայս օրինակ.

Թվին ՉԺԶ. ընդհովիւ ողորմածին Աստուծոյ այս իմ գիր է Պարոն Աղապուղայիս թոռն մեծին Շահանշահի, որդի Խվանէի, որ կամ եղեւ ինձ Աստուծոյ, եւ թողի զիմ հայրենիք գեղիս զԹալնայ գինոյ խալէյն վասն առեւչատութեան Ամիր Սպասալար Շահանշահի եղբարւ իմոյ եւ ինձ Աղապուղայիս եւ Սըմի խաթունիս եւ զաւակաց մեր եւ վասն մեր պատրոն նախնեացն յիշատակութեան. եթէ որ այս գրիս հակառակ կայ յիմոյ կամ յաւատարաց մարդն այն դատի Աստուծոյ, եւ մեր եւ մեր նախնեացն յանցանացն պարտական լիցին առաջի Քրիստոսի յահեղատենին. կատարողքն աւրհնին Աստուծոյ եւ յամենայն սրբոց. ամէն:

Թերեւս սորին Աղապուղայի կամ միոյ ՚ի պատգամացն Զաքարեանց իցէ փոքր պատկերքանգակն՝ ՚ի հարաւակողմն դիմի բրգանն, զորոյ զդէմս խորտակեալ է քէչ նամեաց, և երկու արծաւեաց քանգակք առ նմին: Շուրջ զզդեկաւս պատեն պարիսպք կոփածոյ կարմիր պորփիրեայ քարամբք, նման նմին անեղով աչագրակս ամէն յանկիւնան և ՚ի միջոցի սրմոյն, և գուռն մեծագոյն հանդէպ դրան միւսոյն, զոր նմին եւս ՚ի մատուռնի վիմէ, որպ տապալեալ ՚ի գետին. միջոց երկոցուն պարսպացն է քան կանգուն պարսիկ: Քանկեան արեւելեան հիւսիսոյ միջոցիս՝ կայ որոցաձև չիրիմ կամ մատուռն կիսակործան անգիր. և յայլում կողմանն՝ գուր մի խոր փորեալ ՚ի վիմի, նեզաբեանն և յայնոյաւսակ: Պարիսպ երրորդ և ընդարձակագոյն նայնպէս ամենքեամբք րդկամբք՝ եւս ածել ՚ի սկզբան գարուս (1812) պարսիկ կուսակալն Երեւանոյ, զգուանն գործեալ ՚ի Հռ. կողմանէ, և չինեալ ՚ի նմա ամրարանոցս և այլ ինչ. ուր ՚ի նուաճման երկրին ՚ի Քաւաց՝ հոյ գաղթականք կարաց տալք 50 եկեալ բնակեցան առ ժամանակ մի, և ապա չքեալ անցին ՚ի հին Թալին և ՚ի գիւղօրայս Շիրակայ: Ի միջոցի երկրորդի և երրորդի պարսպացն՝ կան երկու եկեղեցիք, մին փոքր և ՚ի ապառ քարայեալ, միւսն մեծագոյն յարեւելից կուսէ, կիսակործան, երկուց ևիթ ՚ի չորից սեանցն կազմ կանգուն, և ՚ի տորև կամարին այս արձանագիր.

ՆԿԻ թուականիս ես Մարիամ որ եւոս զիմ գիրս ի տուրբ Սարգիս ատ .... իմ հոգւոյս պարտական է տարոյն Բ տար ժամ.

—Շուրջ գարաքնով մեծաս պարսպան են աւերակք չինուածոց, շիրիմք պղտզկաց ՚ի հիւսիսակողմն. յաբեւելակողմն ՚ի վերոյ բարձրաւանդակ վիմաց՝ մատուռն արդաստ կարմիր քարամբք, չինեալ ՚ի Ջուղրդուր կամ Ջաջուռ անուն ումեք: Իսկ ՚ի հարաւակողմն և բացագոյն իրեւ քառորդաս ժամու ճանապարհի՝ ՚ի լանջս կողմն գարաւանդին՝ եկեղեցի մեծաւթեամբ ՚ի քարս կոփածոյից, կոփ անեալ գմբեթաս և մատաղ որմոյն. բայց յարեւմտակողմն առ գրանն գաւթի արձանագիր հին, (981 ամի Փրկչին) այսպէս.

Յանուն Աստուծոյ ի Ն եւ Ա թուականութեան Հայոց ի հայրապետութեան Ստեփանէի եւ ի թագաւորութեան Աշոտոյ որդոյ . . . կամ եղեւ Աստուծոյ ես Խոսրո (վանոյ) Հայոց թագուհի որ կարգեցի . . . :


Ա՛ն երի եկեղեցւոյն են Ծնողաւածք մեծաստանի և ընդարձակ տեղի այգեաց և հնձանաց, զոր ասեն տալ բնալ ՚ի սկիզբն գարուս յամի 1804՝ ճաշիար խանի տարաւնի պարսկի յարշաւանին Թաւսոյ, որոյ յետոյ հպատակեցաւ: — Ոչ գիտեմ յոյս Թալին կամ թէ ՚ի Հըռնաւն՝ գիչերաթեաց Հեմիլի խաչոյցի՝ ՚ի տան Հայոց միոյ, ՚ի 26 մայիսի, 1694, և յիչէ վերկոսին վայելուչ և

1 Un' ottima chiesa, per uso de christiani Armeni, che compongono la maggior parte degli abitanti; veggendosi nell'altar maggiore dipinti le figure dei 88. Apostoli: però è oggidì andata in rovina, non meno che un' altra contigua. – GEMELLI, Giro del mondo, II. I. I.

2 In queste campagne vidi un vago e pellegrino fiore, ch' ogni principe italiano forse pagarebbe molto per averlo nel suo giardino. Il gambo non è piu che mezzo palmo alto, in cima

զագաթան երիք սպիտակ ծաղիկք ցցունաձևք ուղղա-
թերեք, և երիք եռանկիւնաձև վայրահակք նանագոյնք,
փոքր նիշ սեաւ վարդաձև 'ի միջի անելով, և երիք ևս
յատակագոյնք յեռևալք 'ի ներքև, փափագելի էր առա-

գել զայդ բառարանից. զԱղբերայ արևան ընծայէ մա-
սամբ զոխաց, այլ գոյն սպիտակ յերկրայս կացուցանէ։
83. Իբր չորիք մրգոնք յարևելս հարաւոյ Հնդոյն Թալ-
նոյ և աւազ ինչ պակաս 'ի Հր. երից Նորդն' 'ի ապառաս-



Տե՛ս էջ 23. Տարեմուտ ցուցանէ զ'ի, զիմանալն ցուցանէ զ.

փի առորակից Արագածու կայ միւս ևս առան անուանի 'ի հնումն, Աշնակ, որ և ձմերոյ էր Թագաւորաց մերոց Արշակունեաց, զոր հանդերձ այլովքն որ յԱրագածոտն և յԱյրարատ ուխտեալ ապրացան վտակ, զի մի լիցին

ապաւէնք ախտապահիցն վարդանանց. այլ տակաւին չէն մեծ էր և երկու գաւառք զինի, և որպէս Թոմ Նահ գիտասր ամենայն չինից կոչմանցս, կամ թէ երկրին ևս այժմեան միանգին Թոխին և Թոխիշ' յիւր անուն կոչէին.

del quale sono tre fiori bianchi a guisa di cimiero, che stanno dritti, e tre altri che cadono all'ingiù in forma di triangolo di

color pavonazzo, con una piccola rosetta nera nel mezzo; ed altre tre di color più chiaro avvittichiate a medesimi fiori. Id.

քանզի Սերբիա ժամանակակից պատմիչ՝ զերկրորդիս գլխաւոր ասան զԱրուճ՝ կոչէ « Արուճն Աշնակի »։ Նոյն գլխաւորութիւն երևի և 'ի բանս պատմչաց 'ի յիշելն զարկածս 1162 ամին, զի նախագասեն քան զԹալիշ, և Սամուէլ Աշնեցի միայն զնա յիշէ. « Զմեծ ասանն զԱշ- » նակ՝ սպրեաց չարագլուխ Եկակուզն, զոր ՍՊ (2800) ա- » սեն զպրածան կամ Բ (5000) »։ — Ի հետքեանց՝ Շեայ ասէրակ եկեղեցի քարաշէն՝ ըստ նախագրելոյ և կեղեցեաց Թալնոյ, այլ ոչ զոր 'ի մերայոցս ասելի ինչ ևս չանակէ զնևոյն և զարձանաց. զի և լքեալ է յազգացնացս, բնակութիւն գոլով ասկաւաթիս տանց այլազգեաց. մինչ 'ի հետևել, ըստ աւանդութեան ասելին, 12 բնակուց մարդկան բնակեալ էր 'ի նմա. պատճառ այժմու նաւազութեան է և նաւազութիւն ջրոյ, յոր ասկս և ամպի են շուրջ սահմանքն և չիք այլ չէն մերձաւոր։

Ուղղակի 'ի Հր. Աշնակայ չորիք մղոնաք բացագոյն՝ ամրաձոյ լեռնակ մի 'ի նոյն անուն, 1307 Ջ. բարերաբերեամբ, և 'ի նորին հարաւոյ երկու մղոնաւ հեռագոյն՝ ապառաւնգակ մի կամ շարք խոտաւէտ բլրոց, որք ըստ ձևոյ կոչութեանն և ըստ գուեոյ՝ կոչին Գոպա-պուռանն (Սեաւ ապ կամ քիթ), և 'ի գոգոյ անտի ահգնագոյն կրկնին սրձագանգք ձայնից։ — են և 'ի Հր. արևմտից Նորոյն Թալնոյ՝ շորիք և հնգաք մղոնաք բացագոյն՝ բլուրք մեկնակք և ամուրք 'ի գաշտավայրի մերձ 'ի գետն Մառատոյ, Հիւռեհն բիփ և Իւսրջ-բիփ կոչեցեալք։

Ի նոր վիճակագրութիւնս յիշատակին բազմագոյն և քան զտեզագրեալքս գեղք ամայիք և անբնակք, որոց և ոչ տեղիք նշանակին յաշխարհացոյց տախտակս, բաց 'ի սակաւուց. յորոց սակի են հուպ 'ի տորոտս մեծի Պաղուքեա լերին՝ փիրիլիչք. յարևելից լերինն՝ Ալիքևու, յարևմտից՝ Կնայոց? . բացագոյն 'ի Հր. արևմտից տա. Մատատոյիս՝ 'ի սահմանս Շիրակայ՝ Զեղ տոդնագ. իսկ անյայտ գրիչք,

Ագրաւանկը.	Զօրքուի.
Միչանկը.	Պապիւրդիւ.
Նատիրխանկը.	Տատևկի.
Տու-տեօքիւչեն.	Ալտա Տիմիրձիլի.
Զիլիքլի.	Տատուճձիկեր.
Բիւսական.	Քիլիք եատաղ.
Զալ-բէփէ.	Գայրաչպկի գուչեսի.
Մատուրիգու.	Պաղդայլքևու.
Գօրուդ.	Գեօյիւք Գղղլգուլի.
փատաքևու.	Կեօկիրլին [1]։
Դաշդալէ.	

Հատանօրէն չատք 'ի ատանէ թէ ոչ ամենայնին՝ են 'ի Հտ. և 'ի Հր. տորոտս մեծի Պաղուքեա լերին, համատիպ և գրեաթէ համահասան գոլով ամպի երկրին արևելեան հարաւային Շիրակայ, որպէս ցուցան անդ։

Բ. ԹԱԼԻՇ = ԱՐՈՒԱՃ

84. Փոքրիկ վիճակ Թալիշոյ կամ Ալուձոյ, ունի զատորոտս և զգաշտագլուխ հարաւակողման Ախագատ, ընդ մէջ Թալնոյ՝ յարևմտից, Սարատարատատ՝ 'ի Ծտ., ընդ մէջ Թալնոյ՝ յարևմտից, Սարատարատատ՝ 'ի հարաւոյ, և Կարբոյ կամ Քասաղոյ յարևելից. Ցայսմ սահմանի ջուրք ոչք 'ի լճանէն իջանեն 'ի գաշտավայրն՝ խորատգին կամ ատատին 'ի Նմին՝ մինչև գետացեալ, բաց 'ի Մեծամորէ, որ դարեւէլեան սահման վիճակիս ձևէ։ Որպէս 'ի Թալին և 'ի ատրա գաշտագետնի ատրատնան բլուրք և լճանակք, յորս բարձրագոյն ('ի Ծտնոջ չափեալս) է Գղղլար 'ի հարաւակողմն, 'ի սահմանս Սարատարատատ, 3990' ատնուչափ։

Ալեւմտեան մասն վիճակիս՝ անձուկ հովիտ է միոյ 'ի վտակացն սուզելոյ ընդ երկրաս, զոր մարդ է յանուն Ալուձոյ կոչել, զի գետք գնովս. 'ի գլուխ կամ մերձ յայնբնակուս նորին՝ կան գեղք մանունք բնակչօք յայլազգեաց. որպէս, Գիւան, Մաղտա, բարերայս անգատագգեաց, և այլք. յորոց 'ի հարաւոյ և յաջմէ՝ որ է յարևմտից վտակին, կայ չինագլուխ վիճակին Թալիշ, 'ի հարթայատակ վայրի, բնակեալ 'ի ատկաւուց այլազգեաց. որ երբեմն մեծ և անուանի ատանագեղ էր Ալուճ կոչմամբ, ձմերոց զօրանիստ սրբոյն, ընդ Աշնակայ և ընդ այլոց՝ ատևալ և ատերեալ 'ի վաստականց. այլ, որպէս գլխաւոր չէն կոչմանցն՝ և յատուկ անիշխանութիւնն Հայոց և 'ի հարատութեան բագրատունեաց բարգատաձեալ, և բնակեալ ազատօրերօք ըստ Թալնոյ, որպէս 'ի վերդ յիշեցաք. մանատանդ յ'ի գարս յիշատակի մեծութիւն ատզոյն, և յայնմ ժամանակէ մնան նշանք նորին գատատկերաք հոյակապք. 'ի սկիզբն գարուն (տատ 606) 'ի ժողովի յորում նորընտիր կաթողիկոսն Աբրահամ՝ խնդրեաց ձեռնարկ միաբանութեան, ընդ գլխաւոր վանոց երիցունս յիշի և ատոցս՝ Գրիգորիս անուն. և յաջմէին ասն մտից Աբարացոց յաշխարհս մեր, յամի 654, նըստէր անդ զօրավար կամ կուսակալ մի նոցուն Հարիք ատնան, որում, « 'ի ձեռն նախանձու եղբօր իւրոյ մահնե- » ցուս երանելի սրբն ատատաժառէր Արտաւազդն Դի- » մաքսեանն, 'ի ձեռն անազորմ գահճի Հարիքն անուա- » նեալ զօրավարի, որ նատէր յԱրտան Աշնակի, և ըս- » պան զնա ատատկմամբ չարաչար մահուամբ »։ Այս-

1 Այսոքիկ ըստ Շաբէնի (ատատագիր) Հայկական յիշատակաց. էջ 153. ամանք յանատանցդ կոթողին ատատութեան։

չափ զժնդակ մահուն գժնդակագոյն պատճառ՝ ասաց, զե ժամանակակից պատմիչն (Անբիոս), և անյայտ մնան յարգ հետաքննելի ահիքք իրացն։ — Քեա ասկա ամուց (670) իբրև եհաս իշխանապետութեան տանս Հայոց՝ հառնեցաւ բանացելոյն Աբասից Գրիգոր Մամիկոնեան, որպ յԱրաւ չինութիւնս չքեղս յոյժ, մինչև ամենայն ժամանակագրաց և պատմչաց յիշել ի կարգի բանից իւրեանց. յորս երիցագոյնն և գործս միով յետոյ քան զչինոգն՝ Ղեւոնդ երէց ի Հոդոցմանց, ասէ. « Եի- » նեաց տան աղօթից ի յաւանն Արաւ, տաճար փա- » ռաց անուան Ցեան, գեղեցիկ վայելչութեամբ զար- » դարեալ, ի յիշատակ անուան իւրոյ »։ Ճոխագոյն եւս պերճասքանն Ցովհ. կաթողիկոս. « Խորհրդեալ իշխանն » Գրիգոր Մամիկոնեան՝ առաւելագոյն այցելութեամբ » հիմնագրեալ զքնաղագեղ եկեղեցին՝ որ ի մեծ գաւա- » ռակերտին Արաւ, չինէ զնա ասիպով, երկնային իմն » ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի։ Եւ ի հարաւոյ » կողմանէ գնէ գարքաւնիսն իւր՝ յեզր քարաժայռ ձո- » րակին, յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ » ընդ քարաժերպ վիմարդ քարանցն, որ զեզերս ունի » իբրև զպատկ պատարքի. և ապա հաստահզոյս քա- » րամբք և կրով պարսպեալ՝ կարպէ ասէն բնակութեան » իւրոյ »։ Եկեղեցին այն երկնաստաս որբատուչ քա- րամբք՝ կիսակամարագուն կայ ցարդ, և քան զյոլովս ի նմա նեացն ընդարձակագոյն է, երկայր քառակուսի գոլով, և պանդխտի ճարտարութեամբ առանց սեան յարկեալ որ- բոցաձև [1], ի վերոյ չորից կրկնակ սուսեր կամարաց՝ վերամբարձ անելով երդեամն զգմբէթն, որ արդ կործա- նեալ է մասամբ ձեղունեան։ Երկատակք խորանին մատ- րունք են կրկնայարիք. ի Հս. և ի Հր. կողմնական որ- մանն եօթն եօթն պատուհանք են ցածունք. և երկու երկու ի կողմանս թեմին, և երեք յարեւելեան կողմն ի թիկանց սեղանոյն. հինգ դրունք են, երկու երկու ի կող- մանց, և աւազ դուռնն յարեւմտից կուսէ. բայց սա միայն այժմ և մի ի հարաւայնոցն ճանապարհ ցած, զոյնն խցեալ է պղպզգեաց, և ի գամ կամ յապաւէն ձմերայնոյ ան- ամանց կարգելոյ՝ գերկնային իմն ձեմարանն այն, լցեալ աւազեղի փլածոցն և աւազադոյն եւս աղտեղութեամբ հիւսղացն. յորոց արժան էր սրբել և սանդագոյն եւս քննել զնարտարապետական արուեստն կիսոյ և գործ, որ անչուշտ գվեցերորդին թերէ զսիպտ. և երեսի պար- զութիւնն (ըստ սորագրութեան կիսամանեայ քննո- դացն), և ճարտարութիւն՝ յամբառնալ գհակայակերպ չինուածն առանց սեան. որպ և բարւոքեալ պատուհանիցն կարծեմ նմանք են Տիեզոյ կաթողիկէին [2] և ոչ Աշոյ և- կեղեցեաց։ Արձանագիր չինութեանն ցարդ ոչ երեւեցաւ, և կարծի ծածկեալ ի բրգաձեւ պարսպոյ զոր սղպզ- գեաց ածեալ է առ գրամիքն. այլ գոն յետնագոյն թէպէտ և հին արձանագիրք ինչ. մին (կարեւոր ի դէպս ժողո- վրդականս, թէպէտ և կարճ առ ամենայն ընթերցուած ծոյ), ի ներքս ի հարաւային որմունդն, յամի 869, մինչ- չեւ ակդնաւորեալ թագաւորութեան Բագրատունեաց.

ՅԺԲ Թուականին Հայոց յիշխանութեան Աշոտոյ եւ ի տէրութեան Արմ- բատայ Հայոց սպարապետի բագրատունւոց եւ ի կաթուղիկոսութեան Զա- քարիայի եղեւ կռիւ ընդ Աբուճ եւ ընդ Կոչ եւ ընդ Գաւառն . . է . . ճ . . ար Աբուճ զԿոչ եւ զԳաւարին, եւ կամաւ զԿոչա վանականն եւ ի Բբր- թամփարին ընդ անկին մին թաժի վառճառեցին . Եւ Գրիգոր որդի Վառամա ծառա Ամբատա եկի հրամանաւ Ամբատա եւ ես հաւատարեցի զՋուրն ընդ Կոչ եւ ընդ Աբուճ զինչ իւրեանց . . .

Գոյ անգ և այլ արձանագիր յիշատակի Բ Ամբատայ Բագաւորի Տիեզերակոչն մականուանելոյ, յամի 987.

Յանուն Աստուծոյ ի (Հայոց) Թուական(ի) ՆԼԶ ես Ամբատ Շահանշահ որդի Աշոտոյ Շահանշահի ազատեցի վանս իմ հարսն Հոգւոյն եւ իմ արեւ- շատութեան եւ մեղաց թողութեան զչալակաւոր (ի) բաժէ չնորհիւն Աստու- ծոյ . Եւ եթէ ոք իմ վճռիս դիմադարձ լինի նզովեսցի եւ ՅԺԸ հայրա- պետացն։

Նորագոյն արձանագիր է 1278 ամի առ պայազատութեամբ Զաքարեանց և յիշխանութեան Վրաց.

Ի թուին Հայոց ՉՀԴ ի փաթշայութեան Աղուն խանին ի թագաւորու- թեան Դամղտղէի (եւ ի) պարոնութեան մաարկրծելին եղբարն Խանէի

1 Ջոյս գուշակեմ յԱբել վերագոյնի սորագրութենէ։ 2 Ցեա ի Շիրակ (151–3), և տես յԷջ 128 գլխատակաձեւս։

որդոյն մեծին Շահնշահի եւ Մակիխոսեան Աղբսիս որդիս եկի ՀԱյրուճ, իմ հարս զանճագին գեղս եւ թոզի զհացին չարիատն հասուից . . . . . .

Իսկ արքունեաց Գրիգորի՝ չինողի մեծի եկեղեցւոյս, որ ի Հր·Ել· կոչ ընդ մէջ նորա և ձորակին յիշեցելոց ի պատմչէն, միայն գերբուկք նշմարին կոփածոյ քարանց· և գերիսաին եւս ոգրալ Թուի հաւատարիմ աղբիւրն այն, մերթ պղպջակեալ և մերթ ընդհատեալ ի ստէպզին աւուրս ամառոյիս· Զաս յայսցանէ կոչ ի չինին և կրաշաղախ քարաշէն բերդանման տեղի, յետին գարուց չինած, որպէս կարծի Յամանեանց, և յիշին իսկ անդք Սալդան Սէլիմի ընդ Ադամ, զոր Թուրք պատմիչք Որխան կոչեն, յամի 1514։ — ի Հա· կողմանէ գեղին կոչ այլ աւերակ չինուածոյ մեծի, զոր ասացեալ լինել իշխանաց եւ վաճառանոց, և շուրջանակի տապանաձեւին գերեզման անգամանաց, յորոց երեսին և հին արձանագրութեանց տեղիք՝ ձգեալք ընդ արեւելս մինչև ի Կուշ· ի սոցանէ Թուին յիշելքն յորձանս Աշոյ, Ողաղաս, Շլիկ, Կովրան, և Բլար Խաչկայ, և Հնձաձքն Նորագեալք յամի 1258, յորմէ Ի.ատի։ — Փոքր մի հեռի ի տեղւոյ ապարանիցն՝ նշանակի ամայի գեղ մի կամ հանգրուան Շամիրամ անուն։

Ադանգատան և ազուսկան իմն գէպք պատմին ՀԱյրուճ, ի Քարազդիս սարին գտաւ, ի յիշատակի Սբրոյ Լուսաւորչին, որոյ օրհնութեամբ սանն անհնձաս գորոյ ծեալ զագդ ճերատակար օձիցն՝ զոր ի գուբ վիրապի իւրոյ արկեալ էին, մինչև տղայոց խաղալ նոքօք, և կոչել Օձն Սրբոյն Գրիգորի։ « Վասն որոյ պատմի և այլ ինչ ականջալուր եղեալ ի տեղւոջ բնակչացն։ Է գիւղ մի յայրհին յայն՝ որում անուն կոչի Ադամ, յորում ազգ մանկունքն տրաճէին զխաչինս իւրեանց յանգատս նին։ և, որպէս ասացաք, ըստ սովորութեանն առեալ յօձիցն՝ խաղ տրտեալ գրասնոցին. և ընդ երեկս ի գառնալն ի չէնն՝ գտանեն օձիցն ընդ միմեանս կապեալ՝ կախէին գծառոյ ասոյ, զի ի միւս օրն պատրաստ գտանէն և գրասնուն։ Դէպ եղև զի գաւուրս ինչ ոչ եկին անդ, այլ յայլ կողմ գնացին. և յետ աւուրց գտձեալ եկին անդ, և՝գտին զձեռն ուր կախեալ էին, և կամեցան առնուլ և խաղալ. և մի ոմն կորացուցեալ զքիկունս, և այլ ոմն ի վեր երեալ առեալ զձեռն, և նոքա գառնացեալք ի չարչարանս կախաղանին, եհար մի ի նոցանէ զձեռն մանկանն. և ի սաստիկ կսկծանս նոցն չար հեղաւ ի նմանէ ի վերայ ներքոյ կացելոյն. և հարեալն իսկոյն փչեաց զոգին, և միւսն յետ երկուց աւուրց մեռաւ։ Եւ այս նոցա պատահումն՝ որ անդորմ զանձնասպանութեան չարչարեցին, այլ և յանդիմանութիւն նոցա՝ որք ոչ ի պանդխտեալս այլ ի բնաւ քնեալ զանձնասպանս լինել սողոցն համարբերն »։

85. Ջուգահեռական գետակին կամ ձորակին Ադամայ կայ ժամաւ հեռի այլ ձորակ փոքրագոյն, և վերագոյն քան զայն, սպիտակ ի հիւսիսակողմն. յորոյ ի գլուխ է Ադամ գեղ, զոր ոչ գտանեմ յիշեալ ի նախնեաց, որպէս զիւրսն որ ի Կատաղ, բայց Թերևս զայն նշանակիցէ բան մի յարձանագրի Կուշ գեղոյ, զորմէ ընդ հետս։ — Իբր քառորդաւ ժամու հեռի յարեւմտից Հր· Ադանայ՝ կայ Գարատաղար կամ Գարատիրար գեղ, Գարնեալ, փարախաւ ոգրակի ի Հր· Ադանայ՝ առ նովին ձորակաւ և չորիք մղոնաք ի Հա· արեւելից Ադանայ՝ կայ Կուշ, սեւանշան աւան, վան սերական դիպաց անագդակ քագաւորացն՝ Տիրանայ և որդւոյ Նորին Ադրշակայ Բ· այլ յատուկն հարկ է Թէ նշանաւոր էր տեղին չինութեամբ, զի ի նմա բնակէր կուրացեալն այն և ծեծացեալ Թագաւորացուն Տիրան, որ լուեալ զպանծալի սիրելւոյ որդւոյ իւրոյ Տրդատայ՝ ի վաղեակ կսկծերէ, և գթոյժեալ ի Նորին որդի ի մանկահասակն և բարեմտին Գնել, եւս սակս « զամենայն ինչս իւր և զկալւածս » գիւղից և գառատկերաց, և ի նմին աւանի Կուշ » հրամայէ բնակել »· իսկ ի հալածել գնա անտի Ադշակայ իբրու զի ոչ ներէին օրէնք Հայոց բնակել Ադրբատ՝ բայ յարքայէ և ի ժառանգէ Թագին, զյաբեալ տարաբազդին Տիրանայ « պատգամս խոստս յղեաց առ » որդի իւր Ադշակ· վասն որոյ հեղձամուճ եղեալ յիւրոյ » անեղկապատաց ի հրամանէ տղբօյի՝ ի գալանիս, և » ի նմին աւանի Կուշ Թագեցաւ, ոչ արժանի եղեալ » հարցն գերեզմանաց· Թէ արդեօք զիսոխարէնն Գաբրիէլի առնն Աստուծոյ հասոյց· որով չսխալ չսիրեաց՝ չսիրեալ եղև, ըստ Գրոց »[1]։ Եւ Թէ առաջ իջեալ աւանգեալն ի վարդանայ ոչխարհագրէ, արդարաշուի իրաւանցն՝ զգերեզման սպանելոյն յանդիման կարգելոյն սպանելոյն յիւրմէ, զի առէ· « ի կող՝ կան աւրր գերեզմանքն Յուսկոյ և Գաբրիէլի[2] Թուանց Ս· Լուսաւորչին »։ — Նոյն ոչխարհագիր յաւելու· « Եւ կողապատ վանսըն, ուր գերեզմանն է Պետրոս Առաքառետս սուրբ վարդապետին »։ Ո՛ իցէ Պետրոսդ և իրր ակնառեալ՝ ոչ գիտեմ[3]։ Բայց վանքն կոչայ, (զի բազում աւրեք կոշ գրի Կուշն, և Գոշ ևս), ծանօթ է այժմ, քառորդաւ ժամու յարեւմտից կալով գեղջն և ձորակին, փոքր խոչաձեւ եկեղեցեաւ, որոյ գմբէթ անկեալ կայր, այլ արմունքն տակաւին կանգուն, Թէ և ոչ անապատուր. յոր սակս և անվերծանելի ձեաց մեծատաւ արձանագիրն յարեւմտակողմանն, որ և յայս աւանէ լինել յանուն Ս· Աստվածածնի Նախավկայի. նշանաւոր և յարեւելեան կան մասին է և այս, զի ի ներքին արմունսն երեին հետք նկարչի պատկերաց Աբրոյ, որպէս և յեկեղեցւոջ Հնոյն Թաղնայ։ Բայն Հարաւային առ գրամբն՝ կայ արձանս այս գրեալ յ'981 ամի փրկչին, ի ժամանակի տիրապետութեան Բագրատունեաց.

Եվ Թուականին ի կաթողիկոսութեան Տեառն Յովհաննու եւ ի Թագաւորու-

1 Մ· Խորհնաքէ Գ· ԻԲ· Իսկ ժամանակիցքն Նուագեղ չառնէ բնաւ յիշատակ գժգոհ գիպացս, որպէս ապացոյց նմանեցաց։

2 Ուր ոչ անգիտանայ զի Գաբրիէլ չէ Թուան Լուսաւորչի։

3 Մի՛ գուցէ և սա տեսոյ կաթողիկոն ի ծոց Աբգարեցւոյ (էջ 130)։

թեան Ամբատա եւ ի յասպարապետութեան Գրիգորի, յիշխանութեան Աչոտո որ երեւս Աչոտ Ամվանէ զՋաղացայն եւ զԿարն եւ զՀողն Կովեղձ ի սուրբ եկեղեցիս վանն Շահանշահի սրուշտաւութեան եւ մեզայ թողութեան. եւ որ որ սպասաւորեցան ի սուրբ եկեղեցիս Աստուած (Քրիստոս) յիւր ի միւսանգամ գալստա....:

Երեւին առ եկեղեցեաւն և հետք մեծաստանին քայքայից, և քարաշէն կամարայարկ գըբանման տեղիք. որպէս և ի վերոյ ազբեր մեզ առ գիւղին՝ յարեւելից կուսէ կոյ կամարաձև շինուած հին՝ տաշածոյ մանր քարամբք։ Ցիշեալդ այդ յարձանագրին Ամվանէ՝ ցուցանէ ինձ վերոյգրեալ գիւղն Աչան, իսկ Ջաղացք՝ արգարեւ գոն և այժմ առ ձորակին, կայ և գաղտ իմն ջրամբար ի կուաչ. այն է քարայր մի ի հարաւակողմն գեղջն, յորում ի յատակէն լսին դղրիւնք և խոխոջունք յորդութեան ջրոյ, որոց ելք և գնացք ոչ յայտնեցան։ — Ի վաղեմի չինուածոց Կուաչոյ երեւին ասերակք մեծի եկեղեցւոյ, և միւսոյ ևս փոքու, որոյ խորան կանգուն կայ, իսկ այլ երեք կողմունքն կործանեալք, և փայտայարկ ձեղուն չինեալ արդ բնակչացն Չայոյ իբր 15 կամ 20 ատեց, Նաիբեալ յանուն Ս. Գրիգորի. որոյ վեմ ատպանի կարծեն գեղեցուն առաջի սեղանոյն, իբր թէ անդ հանգուցեալ իցեն գիշեր մի նշխարք Սրբոյն՝ ի ժամանակի փոխադրութեանն։ Իսկ և այլ մատուռն քարաշէն՝ ի գերեզմանս գեղջն յարեւմտից կուսէ։ — Շինութեան և բարգաւաճութեան տեղոյս՝ զէր ց՛ՃԳ գար, վկայէ և մատեան մի պատմութեանց Եղիշէի և այլոց, գրեալ առա յամի 1172 ի Դաւիթ ումնմէ, որ պահի յԱրմիածին։ — Ասէր Կուաչոյ՝ յարեւմտից հիւսիսոյ՝ ի բարձրադիտակ վայրի կան քառակողմն չինուածոյ հիմունք կամ անկատար քաղաքորմն, գործ յետին գարուց, Պարսից կամ Օսմանեանց, զորոց ընդդիմամարտութիւն ի կռգանս յայսոսիկ Կուաչոյ և Վժանու՝ յառաջին կէս ԺԷ դարու, յիշէ և Չաքարիա պատմիչ։

86. Յետին յիշեցեալ գիւղն Վժան, զոր այլազգիք այժմ Ուշան կոչեն, իբրև կիսաժամու հանապարհի հեռի կոյ ի Կուաչոյ՝ յարեւելից հարաւոյ Նորին, ի խոնարհագոյն ատրասս Արագածոտ, առ փոքու ձորակու, ընդ որ խոխոջանաք իջանէ վտակն, այլ ոչ բաւէ գետատեղ. բայց առհասարակ ընդ արեւելս և ընդ հարաւ՝ բարգաւաճ են մշակութեամբ. ասկայն բնակիչք ասկաք, իբրև 10 տուն այլազգիք։ Ի հնութենից՝ ունի եկեղեցի քարաշէն, քայքայեալ և լքեալ։ — Չայոյ վայր ապատաւանի ընդ արեւմս Ամբատա Ա. արքայ Բագրատունի յետ Թ դարու, յատկապէս Ագիւնայ, և անդ գումարեալ զգօրս իւր և Նիգակակիցս՝ ի հիւսիսակողմանց, ապղեալսօքս և տգաւառս. յորոյ վերայ եկեն այլազգին մինչև ի գետոյն Դաղա. և « յետ երից աւուրց գոնդ կազմեալ գումարտակ և « գնալ՝ ի կոխ ընդ արքայի կոքարէր. անդ ապա՝ ի « քաջազանց սուսերակցաց և՝ ի լայնալիճ ազնիւսատրաց « նետից՝ ահագին ահափեակ սրհատք մահու հասուցա- « նէին խանդեղեան գնդին, և այր զոխոյեան իւր հա- « րուածեալ յերկիր կործանէր, տապատ գաշտիցն տր- « կեալ, և գիմացեալսն ցանեալ ցրուեալ և փախստեայս « զրանակատն այլազգեաց արկեալ, հազիւ պահնակել « պաշտպանել կարէին միայն գունդ կացոյի կոքարա- « նին իւրեանց »[1]։ Ապիպեալ զԱնաէր Աբէին՝ ի հաշտութիւն, և չառացեալ հարկաւորութեամբ՝ ի բաց գնայր։ — Ի գեղջ ատի էր Մկրտիչ վարդապետ՝ ի սկիզբն ԺԸ դարու, աշակերտ Ներսիսի վարդապետի Մոկացւոյ՝ Բնդլու[2] կոչեցելոյ, որ հնգետասան ամ մնացեալ Ջանիւ և աքեաթեամբ պարապեալ հմուտ իմաստասիրական մակացութեանց և ասմունական արուեստի, և ուսոյց նախ ի Լիմն անապատի և ապա յԷջմիածին, և վախճանեցաւ յերեսն, յամի 1631, որպէս երկար ճառէ Առաքել պատմիչ (Գլ. ԽԲ)։ — Մղձաւ հետ յարեւելակողմն Վժանոյ կոյ ամայի գիւղն կամ հանգրուան Գայլամ Ալի։

Յարեւելից ձորակին Վժանոյ ժամու հետ այլ ձորակ մեծագոյն կոյ, որոյ ջուրք իջանեն ի մնարից Գայրոյ լերին ի հարաւոյ Արագածու, իբրև 6000՝ բարձու, ի հիւսիսոյ ունելով զՀամանան հանգրուանն կամ գետ ամայի։ Իսկ ջուր ձորակին՝ ոչ գիտեմ ժամանակ իցէ Անբերդոյ գետոյն, որպէս գրեն ոմանք[3], եթէ սկզբնաւրութիւն կամ ժամանակ Մեծամորի, որպէս մեծ աշխարհագոյոց տախտակին Ռուսաց ցուցանէ. բայց զի և գգեղեանն՝ որ առ նովաւ նշանակին յայսմ տախտակի՝ Թալիչոյ վիճակագրեն և Նոքա, այսպէս և մեր համարեալ՝ յիշեցուք նախ, զի երկու առաջք նշանակին վտակին կամ երկու ձորակք մանուք ի սկզբան. առ արեւմտեան՝ փարախաւ հետ յարեւելից Աւանոյ՝ կոյ Ցեղերք գետոյ, առ արեւելայեանն՝ հանդիպ Ցեղերոյ և մղեան միոյն հետ՝ Էրկոտ գետ փոքր, Թարքարնակ, յորում չերեւի ինչ նշանաւոր. իսկ ի միւսն՝ զոր այլազգիք բնակք անդայն առնուք առաւաւորք՝ Դրղոր կոչեն, և ի բարձրաւանդակի կոյ, գոյ եկեղեցի մեծ և հասարակաւոյ չինեալ ի Մամախանեան կնոջէ Վաչէի, միոյ յիշխանացն՝ որ ընդ ձեռամբ մեծին Զաքարիայ Պռաստաբի, և ձեռնէ որոյ յայսոց նախ յիշեցելոյ հին եկեղեցւոյս Աբրագամեան. զի ունի առ գրիչ կամ ժամատուն ի վերայ չորից միաստանի տեառնց. տաճարն անբաւ է կամարակապ գմբէթաւոր, երկու գմբէթք կամ կաթուղիկէք ևս կան ի վերայ գաւթին, և երկու մատուռք. երկու ևս մատուռանաձև տեղիք՝ ի ներքոյ երկոցուն գմբէթից գաւթին՝ ի տանիս նորան. Քէպէտեւ ի տեղիս տեղիս

1 Յովհաննէս կաթողիկոս պատմէ։

2 Այսպէս կոչեցեալ Թարգ թատ. Պշտէռէ, վասն Թուսմաց մատուցան կամ Մարգ բնչոցին։

3 Շահխաթունեանն և Աբել եպիսկոպոսունք։

խարխափել և հերձել՝ այլ տախտին կանգուն կայ և կեղեցին չքեալ ի քրիստոնէից, զորով այլազգեաց ածել էր պարիսպ յամուր ապատնի, որ արդ կիսակործան է։ Իսկ վանից Տեղերու՝ զոր Զաքարիայի Սպասալարի կամ նորին հրամանաւ առեն չինեալ, հազիւ թէ նշանարիցին հետք. որպէս և Ս. Խաչ վանից, զոր աւանդեն լինել յանկեան խառնըրդոց երկոցուն ձորակաց մանանց. և այս զարմանք են և ցաւ, զի երկոքին ևս մինաստանդք յիշեալք յաշխարհագրէն վարդանայ և յայլոց, և մանաւանդ Տեղերք՝ որոյ առաջնորդ Մկրտիչ վարդապետ յիշատակի և ի սկիզբն նախորդ ԺԸ դարու, ի ձեռնարկի կաւակի Աղեքսանդր կաթողիկոսի, բնակիչ Թաւին։ Զեւս կիսոյ ԺԼ դարու առաջնորդ էր վանացս Տէր Կիրակոս եպիսկոպոս, հայրենեաք ի Խոտավիր գեղջէ Նգոյ։ Ընդ եպիսկոպոսութիւնս սքանչ գործ Տեղեր և յՈսկան վարդապետէ։ Իսկ յեկեղեցւոջն ի վերայ մեծի դրան գաւիթն՝ միայ արձանագիր կանգնոցին յամի 1231, որ և յայս առնէ ոչ մի այլ երկաս չինեալ եկեղեցիս.

ՈՉԱ. Շնորհաւքն Աստուծոյ ես Ամենախաժուն չինեցի զեկեղեցիկս զմեծ եւ զփոքր, եւ զժամատունս, — յիշատակ ինձ եւ առն իմոյ Վաչէի. իսկ ըստ նակիչք սուրբ Ուխտիս հատուսանեցին մեզ ի տարին պատարագ ի տանէն Վարագայ սուրբ խաչին զամենայն եկեղեցիքս մատաղով եւ սիրով. իսկ որ զգրեալս խափանէ՝ Աստուծոյ տայ պատասխանի առաջի Յիսուսի Քրիստոսի. — Ամիմար գրիչ։

Ի Յիսուսոյ այլոց արձանագրութենանց և ի յիշատակաց գրոց՝ առաջի անուն եկեղեցւոյն քերեա և վանացն՝ լինել Ս. Աստուածածնի. իսկ միւսոյ եկեղեցւոյն, որ արդ ոչ յիշի, անուն էր Ս. Յովհան, ըստ յիշատակարանի գրոց, յամի 1467։ — Թովմա Մեծոփեցի յիշէ առ խրեա, յամի 1431, զՋաքարիա ասն արեղայ Տեղերցի հոգեւոր եղբայր իւր կոչելով, որ ի ասոյ Աբրահամեան գաւառաց խոյս առեալ՝ եկեալ էր առ նա։ Յամի 1467 «չինեցաւ պարիսպ Տեղերոյ Ս. Աստուածածնին ձեռամբ Սարգիս վարդապետի Բերբականացւոյ», ըստ յիշատակագրի Գիտաւ Որդի գրոց, որ և ասէ զարձեալ. «Ընդ հանգեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Լուսաւորիչն և Սուրբ Թովհաննէսիս», զկնի որոյ չէնս կամ խորանս յայտ առնելով, այսինքն զմեծ և զփոքր եկեղեցիս և գաւիթ վանս, զոր յիշէ ազխարհագիրն վարգան։ Իսկ Մեծն Վարգան վարդապետ՝ զրէ այսպիսի ինչ առ Հեթում որդոյ Ա. ի գրոցս Լատմանց գրոց. «Զայս ես գիտեմ. ի մեր ժամանակս իմ հասակակից » արեղայ մի յԱրներդոյ երկրէն՝ ի վանքն որ Տեղեր » կոչեն, Սարկաւագ անուն, որոյ ինձ ասէր » յԱստուծոյ. կիւրակէի մի առաջ երէց էր, և գնաց ի » մայրին որ առընթեր վանացն կայ, և յարեւակեցաւ » միոջն յԱստուած. և մինչ ի միւս յայլ կիրակին յառն » կայր յաղօթս. և վանքն գիտացին թէ գնաց առեք. ա- » պա յետ աթ աւուր եկն ի տան, և զ(ն)չխարփարչն » էառ որ գնայր ջուր բերէր և ժամ առնէր. գիտէր թէ » էառ որ գնայր ջուր բերէր և ժամ առնէր. գիտէր թէ » այսօր եմ գնացել. և տեսողքն սկսան ասել. Ուստի » գաս, այս աթ օր է, և մեզագրէին. և խնդացաւ գիրքն. » և գիտէր ի վայր եդեալ գնաց ի խուցն, և գայր » գնաց ի վանիցն յԵրուսաղէմ. և ի ճանապարհին ըն- » կեր մի պատահեաց իւր. գնացին ի Գեղամանի... » և եկեալ յԵրուսաղէմ վախճանեցաւ, և լուաւ երկ- » նաւոր վկայեաց Աստուած իւր. և բժշկութիւն եղև. և » բնակիչն եկեալ պատմեաց առ գայէս»։ Ապրոգութեան Ս. Աստուածածնին եկեղեցւոյ կամ վանացն, հանգոյն Մեծոփեցւոյն՝ վկայէ և Մկրտիչ քահանայ ընդօրինակող վերոյիշեալ մատենին, գրելով այսպէս (Թ. 57)։

87. Սուղ ինչ ի տարեւ կցուածոյ երկուց ձորակացն վերոյիշեցելոյ՝ Տեղերոյ և Լրկովի, երկու մյանաս ի հարաւոյ ագանն, յարեւմտից կուսէ, որ է յալմէ ջրոյն, կոյ գեղ մի եւս հին՝ ագոյիշատակ. այն է Աղցն կամ Աղնք, և ըստ այլազգեաց արդի բնակչացն (իբր 10 կամ 15 տանց) Աղիս. զոր՝ գեղ և մինդամանցն Աղցից աւանն կոչէ Սերբիս. իսկ հնագոյն եւս պատմիչ՝ Ռուսդեզ կամ Քարգմանիչ նորին՝ այսպէս կրկնապատութեամբ առաքագրէ զդիրան և զհանգամանան ի յոյնականն Քաւէլոյ. «յամար ի գիւղն որ Աղձն անուանեն, Աղբատ » բան գաւառին, որ կոչ ի խինձս, ի գոգս, ի ծոցս, » յանձուկս, ի գժուարս լերինն մեծի՝ զոր Աբուգածն » կոչեն»։ — Աստանօր, յետ կիսոյ դ դարու, յարժամ զօրավարք Շապհոյ Բագրատունւոյ Պարսից ոչ կարացին ըմբռնել զԲագարատն Հայոց Աշոտ, ասկայլի վրէժխընդրութեամբ՝ ընդ արքունի գանձուց ամրոցին Անոյ՝ որ ի Գաբառնագիր, յասարաքիւն վարէին «և զանկերս Քաղաքացն, ոչ գիտեմ թէ վասն նախասինն առնելոյ Աշոտոյ, և թէ վասն հմտից ինչ հնութեանցն (որպէս համարի Ռուսդեզ). զոր ապա մտոքեալ նախարարացն՝ թափեալ քաղեցին յատանին Աղցոյ, որ յՈսին Աբուգած կոչեցեալ լերինն. քանզի ոչ գիտացին ընտրել զանկերս հնութեանցդ և հատուածելոյ, զի ընդ միանգամ էր խառնակեալ գերազանցն. յայտագս այնր ոչ արժանի համարեցան ի գիրս արկանն քաղել՝ ի վաղ զարշապատ փայտից»։ — Յարեւելակողմն Աղցոյ ի քարափան ձորոյն՝ կան ատրակք մեծի եկեղեցւոյ, և առ նմին ի հս. կողմանէ գետնափոր մատուռն իմն կամարաձեւարկ մանր քարամբք հիւսեալ, փոքր և ցածուն գրամբ յարեւմտից կուսէ, $3\frac{1}{2}$ կանգուն պարսիկ ընդ երկայնն, կիսով չափ ընդ լայնն և $2\frac{1}{2}$ բարձրութեամբ. արեւելեալ կողմն կիսաքարոյր և սուղ ինչ բարձր իրրեւ խորան, և ի ներքն սեղանոյ սիւնակ մի, իսկ յերկսին կողմանան (Հս. և Հր.) խորշք կամարակապք՝ թզուկ լայն քարեզէն վանդակօք ընդ բովանդակ երկայնութիւն սրմանն. յոր


քանդակեալ են, 'ի հիւսիսակողմանն՝ այր մի բազկատարած, 'ի միջի երկուց առիւծուց յարձակողաց (իբրև 'ի Ս. Խզնատիոս Աստուածագեաց կամ 'ի Դանիէլ մարգարէ), և փաթաթածեալ գիծք կամ զարդք. թուի հեթա-



56. Քանդակապատկեր 'ի տաճարին Էջմնայ.

նոսական Յիացուած, զոր արժան էր քննութեամբ ընդօրինակել. և զոր համարիմ նման այլոյ քանդակի գտեալ յԷջմնէս, որոյ օրինակ երեւի 'ի տաճարագծիդ. իսկ յորմէ հարաւային 'ի միջի զարգուց՝ թռչուն և աղուէս որ զծաղկունս և զպիղոյզ խաղողոյ ուտիճեն, և որպէս՝ չամբ օրականաւ՝ Նիդակաշար տանելով գազան մի և կամ երէց. այլազգի բնակիչքն մխճահար բացեալ երկուս ծակս 'ի լուսամուտ՝ պատուհան զտեղին որպէս զսրբոյ խրեանց առաջնորդի. և Հայք մերձաւանակք՝ ատանդեն երբեմն քառն և չորս ուղտուց բնաւ նշխարս բերելով անդ, որ հարկ իմն առնէ կարծել զսակերատի Քագաւորացն Հայոց՝ են և այլ չինուածոց Յիացուածք ընդ հողով, սալայատակք և խաչարձանք. 'ի յետնոց ատի (խաչվիմաց) գտանին չատ և 'ի գերեզմանս գեղջն՝ որ յարեւմտակողմն, կէաք կանգուն և այլք ատպակեալք։

Տեսանեմ գիւղս այս ընծայեալ 'ի վիճակ գաւառիս մերոյ և 'ի գահ եկեղեցւոյ՝ 'ի Զ դարու, զկոմիտաս, որ եկացն կաթողիկոս (յամս 615–623), և նորոգ չինեալ զվկայարան սրբոց Հռիփսիմեանց 'ի վաղարշապատ, երգեաց քերդողն զքաջածանօթ գեղեցիկ չարականն Ահաւիկք եւս իրեալք։ – Ա. Նախորդաց Տարին Աբրահամու՝ յամի 606, վանացուցեց Ազգիկ էր Մխիթարէ անուն։ Ի սկիզբն ԺԵ դարու Գիդան կամ Աղիդան անի յիշի սերեալ յազատացն Հայոց, զոր բռնաւորն Խամէր Քառն Լենկթիմուրի՝ չրջեաց 'ի դեն իւր, այլ 'ի խաղալել երկրին՝ որբեաց նա զգաստօրէն զկեցս ուրացութեանն։



57. Քիչատակարան Քառս որդւոյ դպիրոյ 'ի Բիւրական 'ի թուին ՊՀԷ. (1428).

(Տես յէջ 147)

Գ· ՍԱՐՏԱՐԱՊԱՏ = ԱՐՄԱԻԻՐԱՑ ԴԱՇՏ

88. Յաթեւմեան հարաւակողմն Աղագածոտան՝ կայ վիճակս այս, ընդ մէջ Թալնայ՝ ըստ հիւսիսոյ կուսէ, Սուրմառւոյ՝ ի Մ· հիւսիսոյ, երեսաւ գետոյ՝ ի հարաւոյ, վազարշապատ վիճակին՝ յարեւելից, և Անբերդոյ՝ ի հիւսիսոյ արեւելից. անձման այլոց մասանց գաւառին՝ որ լեռնայինք են, սա գաշտավայր է բովանդակ, գուն արեւք բլուրս ինչ կամ բարձրաւանդակս ունելով. և ի բնակչաց կոչմանեցն Աղմաւու–դիւզ (Աղեաւոյ գաշտ) կոչեցեալ մնասմբ. և ոչ միայն նուագեալ է ի բարձանց, այլ և ի կարևորագունէն՝ ի ջրոյ. ոչ մի յայրերաց Աբաւգածու շարքացանէ գերկիրս այս, և եթէ գուցեն ինչ դոյզն վտակք, յետ սակաւ ընթացից՝ խորասուզեալ ի



58. Աբաւիր Բիւրս.

Աշոտ ամն Գառնացի առացող գրոյն (ընդօրինակութեամբ
Մանկիկին կոչեցելոյ Գէորգեայ)[3], ձեռն արկ նորագել
« զՍ. կարապետս մեծահռչակ, փառաւոր պատուա-
» կանաք, քանզի յառաջ փայտիւ էր ծածկեալ գլուխ
» սորա. զոր այս այր Աշոտ՝ բազում աշխատութիւն
» յանձն առեալ, կիսաւ քիակքն զկիրն ՚ի վեր հանե-
» լով՝ առյր ՚ի չորակս եղրարցն տանել. արդ ընդ հովա-
» նեաւ սորին Սրբոյ կարապետիս գծագրեալ եղև այս
» քաղցրահաշակ պատմութիւնս, ՚ի մէջ բազմսխատան
» միանձնացեալ եղբայրութեանս, և տաւս ՚ի այն եղ-
» բայրանոցս՝ սուրբ, յիշատակ հոգւոյ իւրոյ. և յետոյ և-
» զեւ հայր վանացս, յամի Թուականութեանս Հայոց
» Նոր եդելոյ ԻՐ ամի (573-4), յաւուրս Տէառն Մովսէ-
» սի կաթողիկոսի որ ՚ի Վաղարշապատ » : — Յառաջին
ամն Ն գարու ՚ի ժամանակի պարապոյ կաթողիկոսա-
կան աթոռոյն, Մովսէս Պարտաւոյ եպիսկոպոս ամբառ-
ատն աթոռոյն, Մովսէս Պարտաւոյ եպիսկոպոս ամբառ-
ատն Վիրոյ կաթողիկոսի Վրաց, գրէր ՚ի վանից ասոի
առ Աշոտ մարզպան Վրաց. « Վասն խաւսիքեան
» ձմերցնեաց և գնդայոզ լինելոյ՝ արգելեալ եղէ ՚ի
» Արբոյ Մկրտչի ՚ի Բազհանենւ վանս՝ որ յԱրագածու-
» ատն, և ընկալեալ եմ ՚ի ձեռն երանելոյ Տէառն Բա-
» բիւասեայ վանից երիցս » : Յամն 130 յետ այդր
Թուականի ոչ յիշի տեղիս, յայնմ հետէ գտանեալ յայտնի

1 Զայսոսիկ յիշէ Զաքարիա Սարկաւագ պատմիչ ՚ի կռնգակի Բազհանենւոյ, զոր ինքն հաւաքեաց:

2 Զաքարիա Սարկաւագ (կռնգակ, ԺԲ.) քան Աստքէլի առաջ զՂազար կոչգնել հրամանաւ Ս. Յովհաննու Ս. Մաշտոց և Մեսրովբայ. այլ այդմ ոչ ՚ի նոքանն տեսի զի մանուկ էր առ այդր:

3 Գէորգ քան գաղափարին և քան ապագրին զոր ունիմք՝ կոս-
կած է յիշատակարանիդ. զի գԳէորգ Մանկիկ ՚ի մայրաքաղ-
քեն Աղուանից առաջ. մինչ չի ևս էր Ներ քաղաքացեալ, այլ ՚ի գեղ ե
Դաւնոյ բնակեալ և Թուականն Հայոց զոր յիշէրդ
ամի (553) յաւուրս Տէառն Մովսէսի. Հայլն. յորմէ Թուականի
Մովսէս չէր կաթողիկոսացեալ. վասն որոյ համարիմ ՚ի ՔԵ յարձան-
կին գրեալ էր ին. և բնագրօրակոյն բնիկերքս. ՚ի Ն:

'ի գալ անգր վաշճանայ Գողթնացւոյ, որում ընկերակից և գուշացող կարգեաց առաքելոցդ անգւոյն Յուլիանննէս՝ զոմն 'ի մխթանիցն։ Պարձեալ յետ 200 եւ ամաց (933) յիշատակի Մխիթար առաքելոցդ, առ որ եկն Երեմիա Հայրն Մարմաշենաւ, և որշեցին զսահմանս թեմիցդ երկոցունց վանացն։ Յետ առելի եւս երկուց դարուց՝ յայտնի թուխկ անուն առաքելոցդ՝ յամի 1171, 'ի խաչվիմի գերեզմանատանն [1]։ — Յառաջ քան զայն 'ի կէս ԺԲ դարու կացեալ էր 'ի վանքս՝ հաշակեալն Գրիգոր Յաւէտորդի, զի գրէ 'ի կողս հին մատենի միոյ. « Ես Գրիգոր » Նաւասա 'ի մանկ քահանայութենէս ուսումնական, ար» ատարութենէս, յազատ տանէ, առացս զմարգարիտս




65. Քոհանեվանից.

» հաւատոյ, յաւերժ ցնծութիւն անձին, եւ յիշատակ » հոգոյ։ Ի ՈԳ թուոյ, կազմեցի ձեռամբ իմով, յաշ» խարհս Աստուածեան 'ի վանս Քոհանեաց, 'ի գաւա» ռըոյ Կարապետիս. ազաչեմ որք ուսոքք յիշել ազա» քիս, եւ զենմամբ մարդեղոյն Քրիստոսի »։ Եւ յաւելու եւս կէս ծածկագրութեամբ սյլաձև տառիւք կարմիր և դեղին օրակաւ գրել զանունն, « Գրիգոր վարդապետ որ» դի Յաւետոյ » որչէս երեւիլ (Թիւ 66)։ — Ի սկիզբն ԺԳ դարու 'ի Վերին Աստուածածնի Աստուածաշնչի 'ի Զաքարեանց, յետ կամ առ ժամանակաւ չինութեան Սազմոսաւանից, ձեռն արկ Նորպոզն վաչէ իշխան և 'ի Քոհանեվանս, և փակեալ զփայտաշէն գաւիթ եկե-

[1] Զայս յիշատակէ Զաքարիա պատմիչ 'ի պատմութեան կամ 'ի կնդակի վանացն, բայց զարձանագիրն ոչ ընծայէ։

» մի սեաւ. և ի սիրտ բեմին ատազանման փորածու
» նկարեալ. և յարեւմտեան թևն և առաստաղն կարգ
» մի սեաւ և կարգ մի կարմիր կոճկէն գեղեցիկ յարմա-
» բեալ: Զորս յուսամուտս ի հարաւակողմն, և բոլոր և մի
» երկայն, մին ատազ խորանին, և յարեւմտեան կողմն,
» մէկ բոլոր և երկուան երկայն. չորս ի կաթողիկէն.
» երկու խորան ատազ խորանին յաջմէ և յահեկէ, յոր



66. Ձեռագիր Գրիգորի Նոսիակոսոյ Տաւտեցւոյ.

» սեաւ քար. և ի ներքոյ նորա որպէս կլիուս, լուծն և
» Թաթն միաչափ: Եւ ի Հր. կողմն խաչ ի վերայ լու-
» սամտին, և յարեւմտեանն նոյնպէս: Սալաթոզքն փո-
» րածու նկար, թէ չորս թևքն թէ չորս փուզէքն (և-
» զերք), թէ ներքոյ գոտիքն: Իսկ զամենայն գոնեն տա-
» փակ. և պատուոց կաթողիկէին մեռուան սիւնք, նոյն.
» պէս գոտին մեռուան եղեւէղ. և խաչաթոռն նման
» չորից կերպից կնդապնեացն. և ի վերայ նորա խաչն
» աստուածընկալ ի փրկութիւն հոգւոց մերոց: Եւ ա-
» տրտեցաւ ՈԿԶ թուին (1217), և օրհնեալ անուանե-

» զեցոյն ի հարաւոյ կուսէ, չինեաց ըստ նկարագրու-
» թեան Զաքարիայ «Հասո և երկայն քարիւ, կարմիր և
» սեաւ կոփածոյ, և սիւնք չորք ի չորեսին կողմանս,
» յորոց վերայ կամարքն չորք, սեաւ և երկայն մուքա-
» տրոյ և գոնեք, և կամարք ի վերայ նոցա սեաւ և կար-
» միր. և ի կողմն հարաւոյ գրաքեմայ գեղեցկաչէնս, և
» ի գլուխ ատազ խորանին կարգ մի կարմիր քար և կարգ

» ցաւ Ա. կաթողիկէ. գեղեցիկ և զարմացուցիչ տեսո-
» զացն, և խօսան և տաճար բնակարան փառաց Որ-
» դւոյն Աստուծոյ, յորում պատարագի Քրիստոս զան-
» Աստուծոյ: Եւ ինքն իշխանն վաչէ վախճանեալ դնի
» ի մէջ եկեղեցւոյն, առաջի գրաբեմբին գրան խորա-
» Նին ի հարաւոյ կողմն, որպ հանգիստ և արքայութիւն
» պարգեւեցի ի Քրիստոսէ օրհնելոյն, յաւիտեանս ա-
» մէն »: — Չյիշատակ չինուածոյ իրոյ վաչէչապէս
արձանագրեաց ինքն իսկ Վաչէ՝ ի հիւսիսակողմն, յորմն
ի վերոյ տաճարին, այսու օրինակաւ.

ՈԿԶ. Ի ծագմանէ շնորհացն Աստուծոյ, ի հիմնարկել և ի լուսաւորել եկեղեցեացս գաւառիս Այրարատու ի ձեռն երկուց եղբարց հարազատաց Զաքարիայի և Իւանէի, և արդարածնունդ զաւակաց նոցա Շահանշահի և Աւագի, ես Վաչէ իշխանացս իշխան որդի Սարգսի Վաչուտանց, սկսեցեալ ի սոցանէ մեծաւ պատուով, վասն հաւատարիմ ծառայութեան իմոյ կոչեցայ ի վերակացութիւն գաւառիս, միաբանեցայ հանդերձ զուգակցաւ իմով Մամախաթունեաւ սուրբ ուխտիս վանացս Յովհաննու, բաղում տրամբ և ընծայիւք աւգնական եղեալ ի շինութիւն մեծափառ ձեռակերտիս. Եւ առաջնորդք սուրբ ուխտիս հաստատեցին յամենայն ամի պատարագել ՔՐԻՍՏՈՍ յանուն իմ, զաւուն Պաղարա, զամենայն եկեղեցիքս՝ զհին և զնոր, և զաւր Թաչդիւտին՝ Մամախաթունին պատարագել ՔՐԻՍՏՈՍ, զհին և զնոր եկեղեցիքս անխափան մինչեւ ի գալուստ Որդւոյն Աստուծոյ. և որք չառնեն զաւուն ի ՔՐԻՍՏՈՍԷ:

Գրեաթէ ի նմին ամի արձանագրեալ կայ և յհետագայս՝ յաւանդատան տաճարին՝ ի բարձս.

ՈԿԷ թուին. Շնորհաւք բարերարին Աստուծոյ ես Վահրամ որդի Եղբայրքան [1] և զուգակից իմ Թոսիկ ի սկիզբն շինութեան եկեղեցւոյս տեսաք զամենայն ստացուածս մեր ի ծախ սորա և զՊալրատանաց սղդին. Եւ առաջնորդք սուրբ ուխտիս տահմանեցին յամենայն ամի չրջադայութեան՝ երեք աւր ժամ զնոր եկեղեցիքս, զՔրտագալոցդ, զՉատիկն և զԳալուստ Հոգւոյն յանուն մեր պատարագել ՔՐԻՍՏՈՍ. Ա. աւր ինձ, Ա. աւր Թոսիկեանն, մի աւր բոլոր ազգին մերոյ. Կատարիչք գրոցս աւրհնին ի ՔՐԻՍՏՈՍԷ. եւ որք խափանեն զհին եկեղեցիս գաւիթն յԱստուծոյ եւ յամենայն Սրբոց նորա. ամէն:

Քերկոսին ևս զուգաժամանակ արձանիք՝ արժանի է նկատողութեան յիշատակ Հին եւ Նոր, ապ և ինն եկեղեցեաց վանատեղւոյս. զոր արձան կատանգնի կաթողիկոսի ինն խորան գրէ, որպէս ընթերցցի ի տորեւ:

Ջժամանաւնն կամ գաւիթ եկեղեցւոյն չինեաց որդի և պայազատն Վաչէի՝ Քուրդ մեծ իշխան, յամին 1250. որպէս գրէ Զաքարիա ի Կանդակի անդ վանացն, « հրաշափառ և մեծաժախ ինն խորակք ի վերայ չորից սեանց, սպիտակ յօրինուածովք, սեաւ քարիւ և զարմանալի լուսանցօք խաչաձեւիւք. և ի վերայ տանեացն երկոտասան օրէն, և ի վերայ սեանցն զգմբէն, գունքն բոլոր. և ի գլուխ գմբէին խաչաթոռն, և խաչ երկաթեայ ի վերայ մարգարտիւք. և ի մէջ սեանցն կախեալ զանգակ զարթուցիչ, և տատրակեաւ ամի մի ի Չ (1251) թուին »: Արձանագրեաց ինքն Քուրդ այսպէս՝ ի հիւսիսակողման գաւթին.

Յամի ՈՂԹ, ի տէրութեան Շահանշահի որդւոյ մեծին Զաքարիայի ես Քուրդ որդի Վաչէի եւ ամուսնի իմ Խորիշահ դուստր Մարծպանա եւ Մամբ քանայ, խնամեալքն Աստուծոյ հաճոյ եղեալ սյլազգի զաւրացն Նետոլաց, զան-

[1] Սա՝ ինչ տիպագր նկարագ կամ կանգնագ խաչքիմին Հաւսմսեր վանաց, գործ տես տառ յԷջ 112. և ի Շիրակ յԷջ 29:

ձըն իմ եդի ի վերայ եկեղեցեացն Հայոց. եւ վասն առ Աստուած սիրոյն կըրկին հաստատեցար զմիաբանութիւն մեր առ Սուրբ Կարապետաս, եւ եղար սկիզբն մեծ ախտաս տանս, եւ բազում արդեամբք հաստացար ի կառար: Եւ ապաստաւորք Արեգս հաստատեցին ի տարուընջն քան աւր ժամ. տասն ինձ Քըրդիս, եւ տասն Խորիշահին. որչափ կենդանի ենք՝ տասն Վաչէի եւ տասն Մամախաթունի, եւ յետ եղից մերոց՝ մեզ. ի Նոր կիւրակէին սկսանին, եւ անպակաս առնեն: Որ խափանէ մեր մեղացն պարտական է: Կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ. ամէն:

Ձակատ մեծի արեւմտեան դրան եկեղեցւոյն յանգիման կացուցանէ զնշանաւոր գոյս քանդակ պատկերակերպ, վայելուչ մանր և նուրբ գրուագօք, զոր արժան էր նչդրտագոյնս քննել և ստուգրել. այլ միայն զուբատիճս գոյս գոտւոյ՝ ի հաւաքման աւրէնք (Կրիմայ Ռոսի) տեսանելոց եկեղեցւոյ վրայ և Հայոց: Իսկ խորհուրդ պատկերիս է առակ խնամոյն և յիմար կուսանացն, յորմէ և յահեկէ Փրկչին, որպէս և նչմարիդ:



67. Քանդակ դրան եկեղեցւոյ Յովհաննավանից.

Յառաջ քան զչնութիւն ժամատանս՝ Կոստանդին կաթուղիկոս հաստատեաց զեկեղեցին յանուն եպիսկոպոսական (եթէ չէր և յառաչագոյն իրրև յաչխրդ Ամմատենաց եպիսկոպոսաց), տաւեալ՝ ի թեմ գերիքն Աբեղոմ. զորոյ և զսահման նչանակէ, այսպէս տալով որձանագրել՝ ի վերայ արեւմտեան դրան տաճարին.

Շնորհաւք բարերարին Աստուծոյ, ակն Կոստանդին կաթուղիկոս Հայոց ի թուին ՈՂԲ յիշխանութեան Շահանշահի որդւոյ Զաքարիայի, եւ ի մերում նահանգիս՝ Քրդին որդւոյ Վաչէի, միաբանեցայ սուրբ ուխտիս Յաւհաննու, եւ եառ Աղբերդու երկիրս սեպհական վիճակ Սուրբ Կարապետիս, ի յԱպահանոց ընդ որ բաժանի գետն Քասաղ մինչեւ յԱշնակ: Եւ ապաստաւորք տր բս Մկրտիչ եպիսկոպոս եւ եղբարքս խոստացան կատարել զյիշատակս մեր յետ եղից մեր՝ երկու քառասունք, զամենայն ի կարգին, եւ սուրբ Կաթուղի-

կէն ինն խորանաւ՝ յամենայն ամի պատարագել զՔրիստոս ի տաճարի Տեառընընդառաջին. եթէ որ յաղտառաց կամ յիչխանաց հանել ջանայ զվիճակս ի Սուրբ Կարապետէս, անէծս առցեն յԱստուծոյ եւ յերից սուրբ Ժողովոյն, ի սուրբ Գրիգորի Լուսաւորչի աչէս եւ ի մէնջ. ամէն։

Մկրտիչ եպիսկոպոս՝ յանուանէ յիչեալ առաջնորդ, մի է 'ի տոհմագրողաց Շրջնբերականի կաթողիկոսին, զոր երեք վարդան մեծ վարդապետան՝ սակաւ ամաք յետոյ։ Շինողք տեղւոյս իչխանքն Վաչուտեանք՝ քանզի ըստ ձեռանէ Զաքարեանց էին, պատճառ տոհմին Շահանշահ՝ որդի մեծին Զաքարիայ, եւս արձանագրել 'ի վերոյ գրան գաւթին, յամին 1258, յիչելով զառաջ հօր իւրոյ, յորս յաւելոյր ինքն զգեցան Շալուաչէն.

Ի թուին ՉԼ. ի կամս Աստուծոյ հզաւրին. Ա յս իմ հրամանս եւ արձան տահմանի Շահնշահի Մանուագրթա[1] Թուգէսի որդւոյ Զաքարիայի Ամիր ըստ պատալարի Հայոց Մեծաց եւ Վրաց, զոր գրեցի (յ)իմ չինած ժամատունս. առի զգեղն Շաղուաչէն ի Սուրբ Կարապետս յիչատակ հոգւոյ իմոյ եւ Թոչաքին եւ յարեւշատութիւն որդւոց մերոց. եւ կրկին հաստատեցի զիմ հաւրն հրամանքն գիրն որ գրած են. եւ ի ժամատունս որ տուեալ էր զգեղջն Որդկան եւ զՏաձկաւանարգն. եւ ազատ էր արարեալ զամենայն հայրենիք սոցա որ ի գաւառիս. եւ հաստատեցի որ սեղայ որ այրուվ լինի եւ աղմուկ հանէ, գիչերաւթ չտան առնել. առացուածն տէրունի լիցի. Արդ եթէ որ ի թագաւորաց կամ յիչխանաց հանել ջանայ՝ մեր մեղացն պարտական եղիցի. ամէն։

Հասան որդի և պատգամ Քրդին և կին նորա Արուս խաչատուն յաւիրին 'ի կալուածս եկեղեցւոյն, յամի 1283, զվաճրամագեղ գիպ և զՂամազանցն, պյուվք մատամբք, որպէս ցուցանէ արձան նոցա գրեալ 'ի հարաւային որմն տաճարին[2]. յորում ժամանակի առաջնորդ էր Տէր Համազասպ, որ յիչի և յայլում արձանի՝ չորիք ամաք յառաջ (1279) գրելոյ 'ի հարաւային որմն գաւթին, 'ի վարդան վարդապետէ և 'ի Մխիթարչէ, որք եռան 'ի կալուած գկոնձեղուան (հող) և չինեցին հնձանս մեծ ժամատիս, որպէս ասեն[3]։ Ցիչի նաեւ յամի 1300, յար-

1 Զաքարիա կամ բերդիկեցի՝ Հեռատես ոչ գրէ, ոչ խնամալով գվրացի պատմանեան հրամանատարութեան պաշտամն։

2 Թուին ՉԼՌ. կամու. բարերարին Աստուծոյ Հասան իչխան՝ որդի Քրդին իչխանաց իչխանի՝ եւ մաւր Թորիշահի, յազգէ Մամիկոնեանց, Թոռն Մեծին վաչէի, եւ բարեպաշտ ամուսին իմ Արուս խաչեան, յազգէ Ուքանանց, տարաժամ եւ կէս ատուրց ելաք յաշխարհէ, աւանդեցաք զհոգիս մեր եւ զամենայն հայրենիսն եւ զզաւակն մեր՝ Դաւթի եղբաւր մեր հարազատի եւ աստուածասիրի. վասն սիրոյն Աստուծոյ եւ փրկութեան հոգւոց մեր տուաք ի սուրբ կարապետս, ես եւ եղբայր իմ Դաւիթ զմեր գանձագին գեղն զվաճրամագեղ եւ ըզՂամազանցն՝ իւրեանց ամէն հողուջրով եւ բնորդի մարդկօք. (ի) կարբի զմեր գնած եւ զմեր ձեռատունկ այգին, եւ զՔարկենց փոսն, եւ զՈրդկան որ սեպհական հայրենիք էր եկեղեցւոյն, եւ ի չար եւ ի դառն բերմանց ժամանակիս ելեալ էր ի վանացս, բազում աշխատութեամբ եւ յոլով ծախիւք դարձուցաք ի սուրբ ուխտս. ընծայեցաք եւ սպասարան զարդարեալ ոսկւով եւ արծաթով. եւ առաջնորդ սուրբ ուխտիս Տէր Համազասպ եւ եղբարքս սահմանեցին կատարել գյիչատակս մեր, մին քառատունք պատարագել զՔրիստոս յանուն մեր. քանի՝ Հասանայ, քանի՝ Արուս խաչատունին Արդ եթէ ոք ետգաւորաց կամ յիչխանաց ի մերոց կամ յաւտարաց՝ զինչ եւ իցէ պատճառանաւք հանել ջանայ զմեր յիչատակն ի սուրբ Կարապետէս զվերոյ գրեալս բովանդակ, մարդն այն նզովեսցի յամենասուրբ երրորդութենէն, յերից սուրբ Ժողովոյն եւ յամենայն սրբոց։

3 Ի թվին ՉԻՀ. Շնորհաւք բարերարին Աստուծոյ ի տէրութեանն Հասանայ, մեր վարդան վարդապետ եւ Մխիթարիչ ծառայք Քրիստոսի սարքեցաք արդիւնս բազումս ի փրկութիւն հոգւոց մերոց. տուաք եկեղեցւոյս զկոնձեղուան, որ էր հայրենիք սուրբ կարապետիս. շինեցաք ճնձանս մեծաձախս, արարաք քշոցս արծաթիս պատեալ ոսկւով եւ սպասաւորք Սրբոյս՝ Տէր Համազասպ եւ այլ եղբարք խոստացան ի տարին երկոտասան

ձանագրի Հէնուց Դաւթի որդւոյ Հոնայի՝ գրելոյ ի տա-
ճարին ի վերոյ ասացանին, որ ետ ի ապաստան զինու-
թեան Զորագեղի՝ չինական մի Աչեփս կռնկիկ անուն[1],
Այլ ամն պայազատ առհմին՝ Թէոդորոս Զրքին որդի
Անբերդցի Քրդին՝ քառին վերոյգրեալ Քրդին, յաստա-
ղին կէս ԺԴ դարու յաւել ի կալատածան հանդ մի ի Վեր-
կուլ՝ հանդերձ առհմանցն, որպէս արձանագրեալ է
առանց քառականի ի հարաւային որմի տաճարին, այլ
առաքելական կարօտի ընծայեցուածն[2]։ — Քոյր Զըր-

քին Թէոդորի՝ Թայիկ՝ առեալ է վանացն զոյգին իւր
Աթարկենց, արձանագրելով ի վերոյ ասացեալսն[3]։
Յառաջ վերոյիշեալ առաջնորդին Համազասպայ՝ Զան-
խաճուն նախքէ գկէս այգւոյ իւրոյ որ ի Թուճուխի,
որպէս արձանագրէ ի հարաւային որմի տաճարին[4],
են և այլ արձանագիրք անհատականք, որպէս քառ ի
ԺԴ դարու գրեալք, զորս կարգացաք ի տարեւ (ռ-ե)[5],
յորս նշանակին պէսպէս նուէրք կալատածոց և արդեանց
նախրատուացն։

ժամ՝ ի տաւնի Աղբէի առաքելոյ, վնց ինձ վար-
դապետիս, վնց աւր Մխիթարչին։ Արդ եթէ որ յա-
ռաջնորդաց կամ պարոնաց հանել ջանայ զընծայս
մեր յեկեղեցւոյս, նզովեսցի մարդն այն յԱստուծոյ
եւ յերից սուրբ Ժողովոյն, եւ մեր եւ բովանդակ
ազգի մերոյ մեղացն պարտական եղիցի յաճեղ հրա-
պարակին. կատարիչք գրոյս աւրինին յԱստուծոյ.
եւ որ խափանէ դատի ի Ցեառնէ։

1 Թուին ՋԽԹ. Շնորհիւ բարերարին Աստուծոյ
ես ՀէՃուպ Դաւիթ որդի Հոնային, Թոռն Ալուե-
ցոյն, եւ ամուսին իմ Նանա՝ դուստր Տուտկան,
վասն առ Աստուած սիրոյն վերստին հաստատեցաք
զմիաբանութիւն հարցն մեր ի Սուրբ Կարապետս.
վասն փրկութեան հոգւոց մեր տուաք շինական ի
շինութիւն Զորագեղին՝ Աչեփս մականուն Կռնկիկ,
արարաք եւ այլ արդիւնս։ Առաջնորդ վանացս Տէր
Համազասպ եւ այլ եղբարքս խոստացան պատա-
րագել յանուն մեր ի տարին վնց պատարագ՝ ի
տաւնի Կոստանդիանոսի Թագաւորի, յորս՝ ՀէՃու-
պին, երկու՝ Նանային. որչափ կենդանի եմք՝ հար-
ցըս առնեն Թոնային եւ Գէլին. եւ յետ ելից մեր
յաշխարհէ՝ ի մեր անուն կատարեն անխափան։
Կատարիչք գրոյս աւրինին յԱստուծոյ, եւ խափա-
նաւղքն դատին ի Քրիստոսէ. ամէն։

2 Կամաւն բարերարին Աստուծոյ Հաւր եւ Որ-
դւոյ եւ Սուրբ Հոգւոյն. ես Թէոդոս՝ մականուն
Զրքին, իշխանաց իշխան, որդի Աբերդեցի Քրդին
իշխանաց իշխանին, որդւոյ Տայիրին, Թոռն մեծ
Քրդին, որդի արի եւ քաջին Վաչէի, զայս հաստատ
արձան գրեցաք, եւ տուաք ի մեր պապանց հալալ
գանձագին հայրենիք, ի հանդէն Սերկեւելոյ ի
Սուրբ Կարապետս եւ ի Սուրբ Կաթուղիկէն, որ
եդեալ էր շիրիմ պարոն հայրն իմ, այր Ամատունի,
Տէրնխոռն կայծակով Լնգուճանաւի գլխովն, որ
Ճանապարհն Գուրձայ? ի Սերկեւելոյ ծովն, ու չա-
յի ըղեղ? եւ կաւանոցն հայրենիք է Սուրբ Կարա-
պետիս. Այս իմ տուած հանդս ի Սերկեւելոյ հան-
դէն էլ հինց հաստատ հայրենիք է Սուրբ Կարապե-
տիս. Եւ ես թուանդ խաճուն՝ ամուսին Աբերդեցի
Քրդին, մայր Զրքնին եւ Թայիկին, կրկին հաստա-
տեցի զվերոյգրեալս. Եւ եղբարքս խոստացան մի քա-
ռասուն պատարագել զՔրիստոս ամն ամի. Արդ
եթէ որ յիմից կամ յաւտարաց հանել ջանայ զմեր
ընծայն ի Սուրբ Կարապետէս, մարդն այն նզովես-
ցի յԱստուծոյ, եւ յերից սուրբ Ժողովոցն. մասն ցու-

դայի եւ կայենի առցէ, եւ մեր մեղացն պարտական
եղիցի. կատարողք գրոյս աւրինին յԱստուծոյ եւ ի
Սրբոց։

3 Ես Թայիկս հաւտ զիմ այգին որ է Աթարկենց
ի Սուրբքս. եւ սոքա կարգեցին ի տարին ուխ աւր
ժամ ի տաւնի Բարսղի, ր ինձ, ր կիմաճին, ր Մը-
խիթարայ, ր Աթարկան. ով չառնէ դատի ի Քրիս-
տոսէ։

4 Ցուսով անմահին Աստուծոյ ես Զանխաճունս
դուստր Աւագ Պարոնին եւ Թաքան խաճունին.
միաբանեցայ Սուրբ Կարապետիս. ետու զիմ կէս
այգին որ ի Թուճուխի է գնեալ ի Զուսփանց
փոխ. եւ տէր Համազասպ եւ եղբարքս խոստացան
տարին ԺԴ աւր ժամ ի տաւնի Թեկղի. որչափ կեն-
դանի ենք իմ մարմն առնեն եւ յետ ելից իմ՝ ինձ.
Որ խափանէ դատի ի Ցեառնէ։

5 ԱՒ. Յաթեւիչեան որմի գաւթին.

Ողորմութեամբն Աստուծոյ ես Զաքարիա որդի
Վախթանկայ, եղբայր Զալալին, եւ ամուսին իմ
Խորիշան դուստր Վասակայ, միաբանեցաք սուրբ
ուխտիս. եւ գնեցաք զԱշտարակոյ Ղորքն. եւ
տուաք ի սուրբքս. եւ սոքա խոստացան ՁԱՒ աւր
ժամ ի տաւնի Թէոդոսի Թագաւորին. Ով խա-
փանէ դատի ի Ցեառնէ։

6. Յաթեւիչեան որմի գաւթին.

Ցանուն Աստուծոյ ես Տէր Ցուսիկ Երեւանայ?,
եւ ամուսին իմ Սաւկան խանում, միաբանեցանք
տուինք մեր հալալ գանձագին հայրենի այգին ի
դուռն Սուրբ Կարապետիս. Եւ սպասաւորքն խոս-
տացան ի տարւոջն դ պատարագ. ր ինձ, ր կողա-
կըցին իմոյ. Ով խափանէ՝ վարձս կայենի առցէ. ա-
մէն։

7. ի հիւսիսային որմի տաճարին.

Աւգնութեամբն Աստուծոյ, ես Մխիթար քահա-
նայ, աշակերտ մեծին Ռուփինայ քահանայի, ե-
տու զիմ այգին ի սուրբ ուխտս, որ է Ցանձուտ,
եւ սպասաւորք սորա սահմանեցին ի տարին դ աւր
ժամ ի տաւնի սրբոյն Յակովբայ. ա ինձ, ա Թաչ-
կայ, ա Ռատինկայ, ա Գինէվարդին. Որ չառնէ՝
ՁԺԲ հայրապետացն նզովի։

8. ի հարաւային որմի տաճարին.

Կամաւն անմահին Աստուծոյ ես Մխիթար եւ
Պետրոս քահանայք միաբանեցաք սուրբ ուխտիս,
եւ տուաք կորնկանին մեր բաժինն, եւ այլ արդիւնք
ի շինութիւն եկեղեցւոյս. եւ սոքա հաստատեցին

Ի կարգի առաջնորդաց՝ յետ Չամչապատպ յիշին Վասիլ, յամի 1311, որոյ կոչ յիշատակարան՝ ի խոշարձանի. – Ներսէս, ի 1318, ազգական Չամչապատպ. առ է հաւանօրէն ներքազնայն յառաջ քան զառաջնորդութիւնն՝ ի յիշատակարանի մեծադիր գրոց Սարգսի մեկնութեան Կաթողիկեաց Քերթ՝ գրելոց յամս 1317–20 (որ կոչ առ մեզ), և առեալ է գրել նոյն ինքն առ ի Ցովհաննավանս և պարգեւեալ այլում եկեղեցւոյ. « Աստանաւր երեւեալ՝ ի ընորհաց Աստուծոյ հզնաւոր սին » միաղնակեաց առաւաւծասիրաց վարուք, պանծացեալ » կառավարան կարգաւորութեամբ, ընդդէմ հանապազ » աւրեան թշնամանն հանդիսացեալ՝ ի մանկութենէ, » ժիր և հպատակ յամենայն աստուածային աւրէնսն. և » տարաշխարհիկ լինելով յամենայն ամի՝ ի հետաւոր քա » զաքս յարուցս վաճառաշահութեան, և զմարգիաւորն » առեալ՝ հոգեւորին փոխանակէր, ՝Ներսես անուն. որ » և մանկունս գնաց առացեալ՝ վարժէր աստուածասէր » հոյ վարուք, և՝ ի չափ հասուցեալ՝ տայր յաւտանն բանի » սպասաւորութեան. և այլոյ բազմոյ կարելիոյ և որ » դիւնարար լինէր, յաշխարհականս և՝ ի վանականս. և » զամենայն ժամանակս իւր՝ այսպէս անցուցանէր »։ Ցիչի անգ հարազատ եղբայր Նորին Գրիգոր, և ծնողք Նոցին Շիրինշահ և Ցաւնիա, և « ձեռամանն հոգեւոր որդեակն իւր Յակոբոս, որ է սպասաւոր բանի ». յիշէ անդ գրիչն Աթիկաւագ մանզոն՝ և զերբասաւորս իւր ամանս, զՀերաւմ քահանայ որդի Թարխ և Յակոբիկնոյ, և « զՀայր Թոգհան զրակիկ հզնաւորն Զագամանեցի »։ և այլն։ Վկայէ և Զաքարիա պատմիչ բազում գիրս գրել առեալ Ներսեհ, որք և յաւտանս իւր (՝ի կէս ԺԴ դարս) կային՝ ի վանսն։ — Ի կէս ԺԲ դարս (1352) յիշէ Զաքարիա զԱբրահամ առաջնորդ, և յարձանագրութենանց (զորս ոչ ընծայէ) ասէ՝ ի վերայ հասեալ, Եթէ յաւտանս Նորա ուղիղ կանոնաք վարէին միաբանքն, զամէնայն ինչ հաստատակաց ունելով և ոչ առանձինն։ – Ջկնի սորա գրեսթէ գար մի ոչինչ ոչ յիշին առաջնորդք վանացս, այլ յամի 1425 արձանագրէ՝ ի գաւիթն Զաքարիա անն քառն Գամրիկէի և պարգեւէ վանիցն զՄօղնի գիւղ[1]. և յամի 1427 Միմոնն վարդապետ ընծայէ զՑայսմաւուրս իւր, արձանագրելով նոցա յորմն խորանին[2]։

Ջկիսով ԺԵ դարս յիշի կարապետ առաջնորդ յաւտրըս հաստատութեան կաթողիկոսական աթոռոյն Ս. Էջմիածին (1441), որում աթոռակալ հաստատեցաւ լինել յայնմհետէ վանահայրն Ցովհաննավանից. այլ ձեռնհրեց գտանել յանկարգ նորա Գաբրիէլ վարդապետ՝ միաբանեցաւ՝ ի փոխել զկաթողիկոսական Կիրակոս և կարգել զԴրիգոր Մահուեցի։ Սա հաւատար էր՝ ի գրչութիւն, և բազում եկեղեցական մատեանք գտանին ձեռնագիրք իւր. և որպէս երեւի՝ ի յիշատակարանսն՝ փոքր մեծ էր յայնժամ՝ ի հայթայթանս այնպիսի գրոց։ Սակաւ ամաք գնին (1464) յիշատակի Մանգասէ ամն գրաբէր, որ ընծայեաց վանիցն Քնամաշոյց մի հատուածով ՝ներսիսի ուրուն վարդապետի, և վայելողն կոչին « Տէր » Կարապետ, Տէր Մանփանաս, Տէր Մկրտիչ, Տէր Ցովհաննէս, Տէր Գաբրիէլ, Տէր Մելքիսեդեկ և Տէր Գաւրատ, Կարապետ և Թաշատուր և Սարգիս »։ Ցիշատակի յայսմ մատենի համառօտիւ Նորագրիչն եկեղեցւոյն. « Սուրբ Կարապետն որ Նոր չինեցաւ Թվ. ՉԻԵ », 1476. այլուր ամաւ կանխէ. « Սուրբ Կարապետին վիրջին չինաւմն Թվ. ՉԻԴ », 1475։ — Յետ սորա յընթացս ժամանակի գտանի մոյ ոչ յիշին առագ Թառկանաւ առաջնորդք, յետոյ ըստ համարման Զաքարիայ՝ կարգին, Գրիգոր Բջնեցի, որ և առաջնորդ Քջնոյ, և առ բազում գիրս առ գրել և ինքն իսկ գրէ[3]. – Թաչատուր Գասաղեցի Ալբի դոյաձ (վերկանգնեալ), որ յինեաց՝ ի գեղջ իւրում և ընծայեալ վանացն երկաս ձիթաշանս և չաղացս մի խորխորնաման անուն, – Նահապետ Նգացի, որ և Սպիտակավանից էր առաջնորդ, և եդ անդ բազում գիրս։ – Մինասյել, Գրիգոր Կարբեցի. առ սոքօք յամի 1584 Գովթար բեկ սին ընծայէ վանացն հոգ, արձանագրելով՝ ի գաւիթն[4]. — Մատթէոս սրբակոփակոպաս, որդի Ոնփրոսի, « այր խոհեմ և երկիւղած », ըստ Զաքարիայ, յամի 1592, որ եառ նորոգել զվիրայրեալ Մաշտոց գիրս, ընդ հովանեաւ Յ. Աստուածածնին և Յ. Կարապետին. և կանգնեալ խաչ մի՝ ի գաւիթ եկեղեցւոյն. յիշին առնավաս « վանիցս միաբանքն Տէր Ցովհաննէսն, Տէր Աթա » նաս Ժամտարան, Ովսաոր քահանայն, միակեց խոհա » կըն, Թաշատուր Հարսն, որ բազում ուխատէին՝ ի գրան Ս. Կարապետին », և Ցովհան կազմող գրոցն։

երեք աւր ժամ. երկու մեզ. եւ մի Ցովհաննէս սարկաւագին կենդանութեան, ի տաւնի Դաւթի եւ Յակովբայ։ Ով չառնէ՝ նզովի ի Քրիստոսէ։

ե. ի ՌՀԲ հաթաւորէն որմն առաջնորդ սրբազնաւոր.

Շնորհաւքն Քրիստոսի ես Աղբայդն երէց Յարեւնայ, որդի Մնդարայ, միաբանեցայ սուրբ ուխտիս. գնեցի զայգին Խառարեանց. եւ ետու ի Սուրբքս. եւ սպասաւորք սորա սահմանեցին ի տարին չորս ժամ՝ ի տաւնի Կիւրղի։ Ով չառնէ, նզովեսցի ի Քրիստոսէ։

1 Թուին ՊՀԴ. կամաւն անմահին Աստուծոյ ես Զաքարիա Թոռն Գամրիկէզին եւ որդի Պարոն Ագիզ բէկին, գնեցի զգեղջն Մաւնի հալալ արդեանց իմոց։ Սուրբ Գէորգայ մուտքն՝ Սուրբ Կարապետիս էր. զիմ բաժինն էլ Կարապետիս տուի

Ցիշատակ լինի եւ ծնողաց իմոց. եթէ որ խափանել ջանայ, մեր մեղացն պարտական լինի։

2 Թուին ՊՀՉ. Շնորհաւք բարերարին Աստուծոյ ես սիրտակ վարդապետ Միմէոն ընծայեցի զիմ Նորընծայ Ցայսմաւուրքս Սուրբ Կարապետիս վանս փրկութեան հոգւոյ իմոյ եւ բաւութեան յանցանաց իմոց. որքան իմ գիրքս կայ հանապազ զայս կարդան ի յատնինս, զմեզ յիշեն ի Քրիստոս ի յոյսն իմ ի սուրբ աղաւթս իւրեանց։

3 Սորա Թուի Մաշտոցն՝ ի Թուին ՉԻԶ (1477) որդ յիշխեցաւն։

4 Ցամի ՌԼԴ Թուին. ես Դաւրլաթ բէկ, Թոռն Մալխասէնին, գնեցի հալալ արդեանց իմոց ոսկով հող, տուի ի դուռն Սուրբ Կարապետին՝ յիշատակ լինի. եւ սպասաւորքն խոստացան ի տարին մի պատարագ կարմիր կիրակի օրն։

— Ղուկաս Ցովհաննավանեցի, որ և Ցեղերայ և Վիճակայ առաջնորդ կոչի, յելս ԺԶ դարու. Իսկ ի սկիզբն ԺԼ՞, յամին 1603 միաբանեալ հայրենակիցք նորին՝ Շահվելի, Զաքարէ, Մխրէ, Աբրամ, Քէշի, Զաքարի ազգ Մխրէ, Աբեթա, Հաբաս ազգ Հանէս, Ղոչի և Մկրտիչ, ընծայեն վանացն «զԽիպանձա Աբրամի այգին», և ապաստարք ուխտին խոստանան նոցա «բժամ ի տանի Վարգավառին և Ս. Խաչին»։ — Ցովասափ ի 1616, որ Քաւի վերոյիշեալն (յամի 1592), բնիկ Ցովհաննավանեցի ի Սկեհանց առհվէ, — Ցովհաննէս Կարբեցի մականուն Գայլ, հմուտ ուսմանական արուեստի և հաբատոյ ի գործ։ — Աւ ոգբօք բազում անձք անցին ընդ գաւառս Աբրատայ, յաւուրս Շահաբասայ, ի մարտս Օսմանեանց և Պարսից, որոց կառավար գոյաւ Թահմազ՝ յետ հօր իւրոյ (Աբիրգունայ), էառ և ի գեղջէ Ցովհաննավանից սրս կոթողիս ի զինաւորութիւն. այլ ի խառնուածեան ժամանակի հէնց (Ջալալիք) Օսմանեանց կղզանէ ընդ այլսն յաւուրն սահն և զՑովհաննավանս։ — Ղուկաս վարդապետ գիտնական (1620), զոր կարգեաց Աթոռոյս կաթողիկոս, ընդ նմին և գոյրոց հաստատեաց ի Ցովհաննավանս, զոր և յաղերդ նորս փիլիպոս կաթողիկոս խնամով գործացոյց։ — Զաքարիա վարդապետ շապատեցի մեծահամբաւ վարդապետ (1637), որ նորոգեաց վերոյիշն գեղեցիկն և գմբանն, որպէս գրէ ինքնին ի յիշատակարանի սրեշն. « Ցուսացեալ ի յաւուրին ահ» մեռից յԱստուածէ երկրորդութիւնն, որ նա կարողութիւն նորոգել զսուրբ սահարքս զայսոսիկ աստուածածարնակք, որ և ամենայն զորդիւք շնորհաբն Քրիստոս» ոմ զարդարեցի զսուրբ եկեղեցիքս, ամենայն գոյակա» նօք՝ չարժուն և անշարժուն, հագեւոր և մարմնաւոր » չքեզութեամբ»։ Իսկ աչակերտ նորա համանուն՝ Սարկաւագն՝ ներբողելով նա գրէ յերկարբերն. « Եի» Նեաց ի մէջ հին պարտին պարիսպ ի հարաւոյ կողմն » եկեղեցւոյն, գանահատանն, գանգնատունն, գիցիրն » և գշոյակաց ազիւաշէն հրաշագործն. և ժազովեաց » բազում անապատս ... և գհոգս և գոյգիս, զվեց սահակ » մարք Ցովհաննավանից, զ սահակ մարք Որդկանայ, և » սահակ և կէս Սերկեւիլոյ, և սահակ Փարպի, և և սահակ » Բրնձոպայ ... նաեւ ժազովեաց զրազում գրեանս, և » սահացաւ բազում աչակերտս [1], որ և են սրտով Ջա» քէոս ընդ նոսա. հաստատեաց և գպրատունս, և ըզ» նաստաւածիւն իմ կարգեաց ուսուցիչ մանկանցն։ Ե» » երեր Ջուղայեցի Սիմէոն վարդապետն, որ ուսոյց մեզ » արհեստ արատքնոց. և Խոլացի Նիկողայոս վարդա» պետն բերեալ, որ ուսոյց գերաժշտութիւնն. և այլ ա» մենայն բարեկարգութիւն եմոյծ նա անդ, (և այլն) ... » Ես ի Թուին ՌՂԵ (1646) սարեալ գձեռնասուն աշա» կերտն իւր Ցովհաննէս վարդապետ Կարբեցի [2]. նա » ձեռնադրել եպիսկոպոս և կարգեաց ի տեղի իւր, և » ինքն գնաց յերկիրն Պարսից ... և գարձաւ անդրէն ի » ՌՂԼ Թուին. և ի ՌՃ (1651) ձեռն էարկ ի նորոգել » զեկեղեցիան, և զրազում քարաշատս բերեալ, և վեց » ամեան աւարտեցաւ չարեսին եկեղեցիան»։ յետոյ գնաց գեալ յԱրմիածին, անդ վախճանի (1659). Սակաւ ամենք յառաջ քան զվախճանելն կատարէն գրէր (ի 1 յունիսի) և Թազոյր զամենայն ինչս իւր՝ վանացն զոր ուղղեաց և նորոգեաց. « Ես իմ կամաբս և սրտի յաժարութեամբն » և իմ ձիւռն բարգաւ, զիմ գոյքն ամենայն նուա Սուրբ » Կարապետի լոյս գերեզմանին վախմ և Սուրբ Կաթո» ղիկէին. ի յեկեղեցւոյ գլխի խաչէն հետ, թէ ոսկեզէն, » թէ արծաթեղէն, թէ գիրք, թէ ուեւտրան ... մինչեւ » ցմէկ թուղթ ... թէ զարբանիզէն, թէ ապրիշիմեղէն, » թէ բրդեղէն, թէ պղնձեղէն, թէ երկաթեղէն, թէ շի» նի, թէ փայտեղէն, թէ ձի, թէ ջրի, թէ գոմէշ, նգն. » կով, ոչխար, թէ շարժուն և թէ անշարժուն ... մինչեւ » ց՝ուել և արնառուկսն նա»։ Ցիշէ ի նմին բանի. « Եւ » զերախտաւոր սրբոյ Կարապետին՝ զՏերունի Տէր Պե» տրոսի, և զՏերունի Տէր Թուումչ ... և զօրհոդ մանկ» կունսն՝ զեր Յովաննէսն և զեր Ցովհաննէս, զՓա» քրիկ սէր Դրիգորն, և զեր Ղազարն, Նահս զսարկա» ւագանն՝ Զաքարիայն (Պատմիչն), զեր Պետրոսն, և » զՎարդանն, և զերեքեան մեկն երախտաւոր բազմա» մեայ Աբրահամն՝ ազօթասէր կենդանի Նահատակն. գի » քան և վեց ամ է որ ատա ի գրան Սրբոյս ասխատի » անխանչելի երկամբք, և զմիաբանիցս բովանդակ վար» ուցան և արտաքսեցին՝ անձամբ իւրով ի Հալ ածեալ՝ » ժազովէ գյորհան առատապէս»։ Սակաւուք յառաջ յիշէր և զքեռն իւր « զկարապետ եպիսկոպոսն, զՑով» հաննէս Պարսամէրն (գկարբեցին՝ գյաջորդ իւր), Հայր» պետ Մկրտիչն, քաղերիկ և քաղցրաձայն Բազտիկն, » Դանագան Ղազարն»։ Իսկ Ցովհաննէս վարդապետ » որ էր փոխանորդ նորա (զոր ի չինաբնեանց Աճա» պատին Սերկեւիլոյ), բազմացոյց գմիաբանան ուսեալ » քան գքառասան արք, ամենեքեան միաբեր և միա» կամ դասերաց հանել ջանայ զսեր տուեալ տասանորդն, դատի յԱստուծոյ եւ յամենայն ընտրելոց նորա։ Որք հակառակին, հարիւր ոսկի տուգանս սացեն. Իսկ կատարողին աւրհնին ի Տեառնէ. ամէն։

[1] Ել միայն աչակերտացն այլ և միաբանիցն բազմութեան վկայ է արձանագրին յարեմտեան արեմ տաճարին սրոյ. յամի 1659.

[2] Բազում գործով յիշէ զսա՝ ինքն Զաքարիա վարդապետ ի յիշատակարանի սրբիկ գրոյ՝ ասէ. յառաջ քան զվախճան իւր գրեալ, կոչելով « զնոյն ծերութեանս խնամ, ձեռնասուն ցանկալին Հո» գւոյս զաչակերտեալն ի մանկութենէ, զորոյ էի իմ գնովհան» նէս վարդապետ կարբեցի, որ ունի զանուն իմ. որ և ինքն աչքն » մեր ընդաս գրիսաս զսա զնգ երկոյն ատուրս պահեցէ սահս » որոյ սքնատոյս և խնդս ծերութեան »։

» կամ էին. այլ և չինեաց գաւիթ մի 'ի վերոյ Տապա-
» ճատանճ յարեւմտեան կողմն կից ընդ մեծ գաւիթն 'ի
» Հս. կողմն, կոփածոյ վիմաք. և մինչեւ էր եղեալ ա-
» սպառ՝ կարգեաց 'ի տեղի իւր զՄարգիս վարդապետան՝
» որ էր Ձեռասուն աշակերտ իւր 'ի ՌՃԻԲ թուին (1679),
» և ինքն վախճանեալ ... եդաւ 'ի գաւիթն զոր ինքն շի-
» նեաց » : — Յաջորդն նորա Սարգիս յետ հալածանաց
'ի հակառակորդաց՝ Ձեռնադրի եպիսկոպոս յամի 1682։
— Ա՛ռ առաւ եկեալ 'ի տեսութիւն այրատասեան կոզ-
մանցս՝ հանդիպեցաւ և վանացս բանասէրն Երեմիա Չե-
լէպի՝ եղբայր երանելոյ Նահապետին Ցեռան Կոմիտա-
սոյ, և գրէր.

» Էր ընդ իմ և որդին իմ որ Մատաքիա անուանեալ,
» Զաստուածայուն ծագկէր սուրբ Յովհաննեսիւքս
հաչակեալ » :

— Գտանեալ, առ առաւ՝ ասանդող յոլովագոյն մասին յի-
շատակաց այսոցիկ՝ գրէր ասէն, Զակարէոս կամ Զա-
քարիա Աբիսաւագ Քանաքեռցի, որդի Մկրտչի, վեցե-
րորդ 'ի Ղազարէ ազատորդւոյ Վրաց՝ պատանդ առա-
քեալ 'ի վանեն. երեքտասանամեայ եկեալ այսր, յամի
1640, աշակերտեալ Զաքարիայի վարդապետութեան և
ձեռնադրեալ սարկաւագ, ոչ յառաջեաց 'ի բարձրագոյն
աստիճան՝ վասն ոտին կաղութեան։ Երբեմն պարտ
յոյժ գտանի առ քան զյոգոնս 'ի գրչաց և պատճէնս,
պատմագրութեամբ ժամանակին ցամե 1688, իբր շա-
բաթաբերութիւն գրելոյն ՅԱ։ տաքելէ վարդապետէ Դաւիթ-
ժեցւոյ, յորմէ բազում ինչ հարցանէր և հմտանայր. և
առաւել ևս վասն մանրակրկիտ քննութեանցն զՅով-
հաննեմանից, ուր եկաց իրրև ամս չիւոտն, և 'ի գրոց և
յարձանաց, և 'ի գիտաց և 'ի ոգիաց՝ հարցուփորձ ա-
բարեալ տեզեկացաւ և գրեաց յամի 1686 զԿանգակ վա-
նացն, առանգելով գկարգ առաջնորդացն, ընդօրինա-
կելով զարձանագիրս եկեղեցացն և զտանս 'ի մատեա-
նանաց, և առաքգրելով զորպէսն առաքելացն և գկո-
չուածս նոցին։ Այսու մատեամբ այժմեան գտանի գաւառ
կրցութեան Սահմանաց Օրդեւեանց՝ պատմի տանն
Սիւնեաց և Տաթեւոյ վանաց։

Ետ չիշատակելոցն 'ի Զաքարիայ՝ առաջնորդս վա-
նացն գտանեմք յամի 1708, զԳրիգոր վարդապետ, և
հուսկ զՅակովբ վարդապետ յամի 1734, որ « հրաւի-
» բեաց զվեհն (Աբրահամ Բ ընդ յաշխարհն Նարա Գ Աբ-
» բահամեան) վասն օժանդակութեան նորաշէն խորանին և սեղա-
» նոյն՝ որ էր նորոգեալ 'ի հիւսիսակողմն մեծի տաճարին,
» 'ի վերոյ սրբոյ գերեզմանին Սրբոյ Կարապետին, որ էր
» չինեալ և նա 'ի սրբոյն Գրիգորէ մեր Լուսաւորչին, և
» ամփոփեալ անդ մասանց և նշխարաց սրբոյ Աթոր-
» գւոյն. որ և մեծաւ հանդիսիւ օծեցաք զսուրբ սեղանն
» 'ի մխաին » : Այն ինքն պատմիչ դիպացս Աբրահամ
Գ՝ յետ երկուց ամաց, ասէ. « Բայց խօթացեալ կայի
» վասն չպատշաճ տենդիս՝ 'ի Յովհաննեմանքն, 'ի վերոյ
» չինուիեան » . յորում ժամանակի եհաս նմա հրաւէր
Այպրահիմ խանէ յեզդոբէ Շահին 'ի Դաւրէժ, ետասէ-
քան զՅակովբ՝ յամի 1718 յիչի Մեսրովպ վարդապետ
Յովհաննեմանեցի, որ եւս անդ ընդօրինակել մատեաց մի,
այլ չտաւ լինել առաջնորդ տեզւոյն։ Ետ այսորիկ ոչ
գտանեմ 'ի գիրս յիշատակ զՅովհաննեմանեաց, բայց
միայն ցկերջ կոյս անցեալ գարու փոքր 'ի չատէ չէն և
բնակեալ էր. 'ի սկզբան մերոյ գարուս լքեալ ամայացաւ
և խանգարեցան բնակարանքն. իսկ եկեղեցին՝ Քէպէս
կանգուն՝ այլ խարխափեալ և քօթափեալ 'ի փարանց,
ընդ որս և 'ի յոլովից արձանաց, զոր ըստ օրինակու-
թեան պատմին Զաքարիայ գազափարեցաք։

Այդ ըստ յիշատակաց Զաքարիայ Սարկաւագի և այլոց՝
այս կարգ է Ծանօթ վանահարց և առաջնորդաց վիճակին
Յովհաննեմանից.

Սիւնոս	'ի սկիզբն Դ գարու.
Ղազար փարպեցի	'ի վերջ Ե գարու.
Յովհաննէս աշակերտ Նարա	յետ Ե գարու.
Ա. Ա. որդի սրբոյն	'ի սկիզբն Զ գարու.
Աշոտ Գունացի,	յիչեալ յամի 573.
Բարիւլաս	'ի սկիզբն Է գարու.
Յովհաննէս	'ի կէս Ը գարու.
Մխիթար,	յիչեալ յամի 933.
Թաչիկ	1171
Մկրտիչ եպիսկոպոս	'ի կէս ԺԳ գարու.
Համազասպ	1279
Վասիլ	1311
Ներսէս	1318
Աբրահամ	1352
Կարապետ	1441
Գաբրիէլ	1443
Գրիգոր Բջնեցի	
Թաչատուր Քասաղեցի	
Նահապետ Նգացի	
Միքայէլ	
Գրիգոր Կարբեցի	1584
Մատթէոս †	1592
Ղուկաս Յովհաննավանեցի	յետ ԺԶ գարու.
Յովասափ Սեթեանց	1616
Յովհաննէս Գայլ Կարբեցի	
Ղուկաս Գիտնական	1629
Զաքարիա Վաղարշապատեցի	1637 † 1639
Յովհաննէս Կարբեցի	1639 † 1679
Սարգիս	1679–93
Գրիգոր	1708
Յակովբ	1734

Ի բանից ինչ Զաքարիայ պատմի գաւչիի Տապանա-
տուն մեծ ունել վանացս և բազում մահարձանս, յորոց
միչ ցամանս, այլ երկուս և երիս միայն արձանագիրս
ընծայեմ. յորս միանգամայն նշանաւոր և գեղեցիկ և ե-
րիցպագոյն գրեաթէ ամենայն արձանագրութեանց տե-
ղւոյս, թէ և անթուական (այլ յայտ է թէ յետ ԺԲ գա-
րու կամ 'ի սկիզբն ԺԳին), յետագոյս է, 'ի վերոյ Մա-
տուռի խալխի, որպէս գրէ Զաքարիա, և թուի ինձ չինել
չիրիմ մատրանաձեւ խաչվիմաս մեծաս.

Զաստուածարնակս զայս խորանս եւ զնաւս սէրունական ես Նահապետ դուստր մեծ հաղարապետին Սարգսի որդւոյ Զաքարէի որդւոյ Աւագ Սարգսի կանգնեցի ի վերայ նորահերս վարդապետիս Մարգարէի, որ ի սկիզբն աշակերտութեան իւրոյ որդիացաւ ինձ, եւ առաւել եղեւ քան զծնունդ յոբովայնի, եւ հոգւոյր զուգուան հոգւոյ իմոյ. եւ իմ տեսեալ զյաւժարութիւն սրտի նորա անկայ ի չինութիւն պարապին, նորա առաջնորդութեամբ. եւ մինչ նա յայս բարւոյ գործոյս վերակացութեան էր՝ մերձեցաւ կատարած կենաց նորա եւ ի հող էջ մանկահասակ, եւ մեզ սուգ անմխիթար եղեւ փոխումն նորա. եւ ես Նահապետ աղէխարշեալ զայս գոհ հնար սփոփանաց անձին իմոյ, զիորր յիշատակս զայս ի դիպս նորա հաստատել, զի անմոռացելի լիցի առաջի Աստուծոյ յիշատակ նորա եւ անվախճան առ ի սէր [1] որդիութեան նորա. Աղ ով մանկունք նոր Սիովնի, սիրով ցաւակցութեամբ յիշեսջիք զառաջամ փոխեցեալն զամենասնորհն զՄարգարէ. զի պայծառ եւ զուարթ երեսաւք տեսցէ զՔրիստոս. եւ մերս անչարժ միասցէ միաբանութիւն ի դուռն Սուրբ Կարապետիս եւ ի հանդերձեալն առաջի Աստուծոյ:

Դիւցազնացելոյն յետ բարձման Թագաւորութեանց Հայոց՝ ի Մեծ Հայս՝ Սարգսի Պատասլարի, հօրեղբօրն զաւստր է դիւցազնուհի՝ մեծագիտ այս Նանա, որոյ եւ յայլեւայլ խաժառաքեղ եւ վեհմտական վայրի, ի վերայ սահանահաս ալեաց Ջորագետայն, գերագոյն եւ յիշատակ անմոռանալի լարեալ է, յարգահատոյց կսկծագոյն եւ ազէխարշելոյ սրտին, զԱւագ կամուրջն միակամար, նշանակ անվախճան սիրոյ վաղամեռիկ անմահիս իւրոյ Աբրահամ Թագաւորի Տաւուշոյ Աղուանահայոց:

Երկրորդ արձան՝ ի հարաւային արեմ տապանատանն.

Ես Աստ որդի Երծաթաչ տարաժամ ելոյ յաշխարհէ. տուի զիմ այգին ի Սուրբ Կարապետս եւ սոքա խոստացան ի տարին Դ. պատարագ. Բ ինձ, Ա. իմ հարսն, Ա մուրն. եւ ես Ռոզոզիան մայր Աստոյ իմ հայրենիք թէ ինչք տուի Սուրբ Կարապետիս յետ ելից իմ. Կատարաւղն աւրհնին յԱստուծոյ:

Ի խաչվիմի արձանագրեալ էր և յիշատակ վասի առաջնորդի, յամի 1311.

Զվասիլ հայր Յովհաննու վանից՝ առաջնորդ Շիրակայ եւ ամենայն Աբեղրդու՝ յիշեցէք ի Քրիստոս. Թուին ՉԿ:

Կայր և տապանագիր խաչկոյ վանացերիցու՝ ի խաչվիմի յամի 1171, զոր չէ ընդօրինակեալ Զաքարիա, այլ յիշէ միայն, որպէս և զայլս ուրեք ուրեք: — Գոյ և յեկեղեցւոջն առ դրան մատրանն՝ որ ի Լուսաւորչէ ասի հիմնարկեալ, տապան Յովհաննու Կարբեցւոյն, այսու արձանագրութեամբ.


Այս է տապան գերեզմանի
Կարբեցի Օվան սուրբ վարդապետին,
Որ վախճանեցաւ Ռձ [2] թուին:

Մխոյ ի խաչքանգակ մնհարձանաց անտի Յովհաննու-

վանից է հաւանօրէն և պատկերեալս այս (Թիւ 68), որ

1 Թուի գրելի առ ի՝ սէր որպիութեան:
2 Ի կարգի վանաւորց երիս կարբեցիք են Յովհաննէս անուն,

և ոչ մեկ պատշաճի Թուականիդ 1652. զի երկրորդն վկայի † յամի 1679–80. առաջինն կեսով դարու յառաջ քան զնա յիշի:



68. Խաչքարն Սարգսի (?) ի Թոխմախեատիս.

պատճառ թաւ՝ բարձեալ ի բնիկ տեղւոջէ ուր կանգնեալն էր՝ և ագուցեալ ի կամարակապ, և ունի վերնագիր համառօտ և ազդու ի վերայն, որպէս երեւիդ [1]։

Դիմաւոր պատճառ պայծառութեան և հաչակի Ցովհաննավանից անդաման ի սկզբանէ՝ նշխարաց սրբոց վերկայից հանգիստն էր, յորս առաջին Ս. Կաթուղիկոսն, որպէս և արձանքն ծանուցին լիովին. և վանահօրեղբն Թովմաս ի տաղերգութեան Նախատեղեաց՝ յիչէ զայն, և զայլս ևս.

» Ցովհաննավանք եղեն հաստատ,
Ջկաթուղիկոսին նշխարք տեղեալ,
Աայլ և ձկոյթ Մատթէոսեան
Աեսարանչին մարգեղութեան » ։

Երկրորդ պանծալի նշխար վկայական, քան առանցաքեան, էր մասին Ս. Գևորգայ Ջօրափորի, բերեալ ի Կապպադովկիոյ ի ձեռն Մեծին Ներսիսի, և դնելով առ արթեալ ուխտաւորի սխամաժեստաց, ուրկաց և նմանեցաց. այլ յետ բարձման թագաւորութեանց Հայոց և ի նուաճել վրաց զկողմանքս, ըստ խնդրոյ Թագաւորին Վրաց (միոյ ի Դաւթեանց) պայմանաւ առաքեցան նշխարքն ի Տփղիս՝ ի բժշկութիւն սրտից նորա ընժոյ, և փոխանակ առան ի պատանդ երկտասան (կամ առաւել) ազգատոհմիկ վրաց. մինչեւ հասեալ նշխարացն՝ մեռաւ մանուկն, և հայրն սրտմտեալ՝ ի բաց արձակեաց զբերդատունն, և զնշխարան առաքեաց ի Կաժաբէթ. վասն որոյ և պատանդքն արգելեալ մնացին ի Հայս և ազգախառնեցան ընդ մերազնեայս. յորոց՝ որպէս յիչեցաքս, սերեալ էր պատմիչ իրացս Ջօրափրիս։ Բայց մասն ինչ ի նշխարացն մնայր ի վանեն, և զի ի յանախել անդր խառն բազմութեան ուխտաւորաց աղմուկ լինէր և վրատանդ վասն գժատպաղնաց քարուց երկրին, փոխադրեցան անտի ի Մոզնի, ուր և տեսցաք ի մեզ։

Միւս ևս ջնորհ և հոգեւոր ի Ցովհաննավանից էր հաստատեալ գրենիլ, որպէս եցոյց և բանս գաւաշնորհացս տեղւոյս, որոց տնանց խնդրոյ իսկ են մատեանքն, և այլք ժողովեալ ուսանէք ուսանէք, և կային մինչեւ ի սկիզբն ԺԷ դարու. յորում ի ժամանակի պատերազմից Պարսից և Օսմանեանց՝ բռնագրոն քան զնասս գոհալ ձէլալի անուանեալ հինից Թուրքաց, յապստամբելն և ԱՀԱրապաետան գաւառս՝ եկին տունք և ի Ցովհաննավանս. « յորոց տեսանէք բնակիչք վանիցն տխնդեքան » փախեան. բայց զակար և զհիւանդ արեզոյ մի կան, և խնդրէին ցուցանել գարան և պահարան. և » յաւուրս երիս կախեալ զարեզոյն ծեծէին ... և չարաչար տանջէին. նա անձամբ ծեացեալ եցոյց նոցա » զգարանն. և մտեալ ի ներքս ի գարանն՝ կողոպտեալ » յափշտակեցին զամենայն ինչսն. և զինի զարեզոյն և » պատին և արկին ի խոր մի վանիցն. և անտի ի գա » րանէն հանին բազում ինչս, եթէ չարեղէն, եթէ պղնձ » ձեղէն, եթէ անօթք, խաչ, սկիհ, չարչիսա և բաբխա, » և գիրեանք որք էին ամենեքեան պատաւական գրեանք » վարդապետականք։ Աայլ և էին ի գարանի սաս Սբր » բաթիւնք վանիցն, որ էր վաթսուն երեսան Գրիգոր » տաթ, և մեան ինչ ի փառ Պահին Գրիգորի, և Ա » որոյն Ստեփանոսի Նախավկային, և այլ ևս սրբա » թիւնք և սուրբ նշանք։ Զորս առեալ զամենեսեան Ջա » լալին և տարեալ կորուսին. և զանձն գլխաւորի սո » ցա Աբգուզմար Մուսալմ ասէին » ։ Բայց և յետ ապաստակիս Ջանք կաթողիկոսացն Մովսէսի և Փիլիպպոսի և երկայնաց Ջաքարեանց, գտանէալ հաւաքեցին ոչ սակաւ գիրս վասն աչակերտաց և գրասիրաց, որպէս յիչէ բազում անգամ Սարկաւագն պատմիչ, սգաւեալ ի նոցանէ, և ինքն իսկ գրիչ. որոյ ընդօրինակեալ մատեանք գտանին յԷջմիածին և այլուր. ի միում (որ առ մեզ) և է ձառից գիրք հնագիր՝ նորագեալ ինքեան ձեռամբ, յամի 1670, գրէ այսպէս՝ յայլևայլ լեզուս զտեան Աստուածոյ կրկնելով. (Թիւ 69)։


Աչապատուց մեծի և հռչակաւոր վանացս՝ հարկ էր մեծամեծ լինել և չատահարատս. և սակաւք զի անդաման ի ժ դարէ՝ ի Քասաղ գեայ մինչեւ ցԱխաւրեան՝ քեմ ասհմանեցաս Ցովհաննավանից, և Կատանգին կաթողիկոս ի կէս ԺԴ դարու եան նմա զգատառն Աբերդու, և չեայ առաջնորդ տեղւոյն կոչէր յանուն սորին և Շիրակայ. և ևս չեայ՝ յանուն Կարբոյ, զի սա եղեւ չինագլուխ կոչմանցս. և ի նմին վիճակի էին յայնժամ ի կալատածոյն, որոց գլխաւոր երկրին գեօղքն, բնիկն Ցովհաննաւանքն, յորում բնակէն ոչ մեկ իրր 30 առն Հայոց, և Որդիան գիւղ (161). այլ և այլ ոչդիք յանուանէ յիշեալք ի Զաքարիայէ, ի Կարբի, ի Ցովհաննավանս, ի Սերկեւլի, յՈւչի, ի փարպի, յայս և ի բնիծախանի մի և ի քէք ջրազացք, երեք ձիթահանք, հանգերձ այլովք։ Եւ յառաջ քան զդար մի՝ Սիմէոն կաթողիկոս գրէր ի Զամբարն վասն վանացս, եթէ « ունի վիճակս զկարփի, զիր » փոքր գիւղն (Ցովհաննավանք), զփարպի, ու զկէան » Շարաւխանայ կոչեցեալ նահանգին ... այլ և զՂօրաւր » պոյտայ կոչեցեալ » ։ Եւ յաւելու, զի հասք Շիրակայ և Աչպարանից՝ խառն հասոյթք և վայելք էին Ցովհաննավանից, Ստեփաննավանից և Մարմաշենս. և այս արգասացուանէ զհին գրառած կոնդակին Սանահնի վանից ի ժ դարս, եթէ վիճակեալ թեմք երկուց վանացն՝ Ցովհաննու և Մարմաշենու « ի միասին լինին, և մի » հարստահարեսցին զմիմեանս. ի գեօղն Քասաղայ » մինչեւ ցգաւառ Կարսոյ և Ջաղկոցոյ. և Հայրն Ցով. » հաննու վանից իշխող լինի Մարմաշենու » [2]։

Ի փոքուէ գեղջէ սասի Ցովհաննավանից ընծայեցան առաջնորդք սանք և միաբանք սխարհ, նախայիշեալք. և յառաջ քան զնասս յիչի ի ԺԴ դարս » Կոստանդին Ցովհաննավանեցի յաղգէ Գնեցկանն », ի ի Մխարա նոյ անուանեալ եղբարց ժամանակին։

98. Քառասդաս ժամս կամ իրր կէս մղանաս հեռի յաբեւմտից Ցովհաննավանից՝ ի գիր տեղւոջ կայ Կարբի, որ գրի և Կարփի, գաւ ուրեք և Քարբի, առանագեղ, գլխաւոր չէն վիճակիս և մերձակայիցն ևս՝ ի միջին գաբէ և այսր, յորմէ սկսաս Կարբոյ երկիր կամ

1 Նշանագ Աշ աւգնեա Աարգսի յաւուրն մեծի։
2 Ցաչ լիցին նախագրեալքն յաբեանս՝ գեօղք և պատարագ, Շորատչէն, Զօրագիղ, Վաչրամագիղ, Տուկամարգ, Կանթիգաւա, Տանծաւա, Կատանոց, և այլն։

գաւառ. կոչիլ մեծ մեան Ալագածոտան. իսկ չրխակաքը կոչին՝ Կաբրոյ դաշտ, և լեռնակոզին՝ Կաբրու դարեր։ Չարկ է թէ՝ ի հնումն չէն մեծ և նշանաւոր էր, քեպէտ և ոչ յիւր յաւել քան զ՝ԺԴ. դար, և ոչ արձան



69. Քանդակիր Ջաքարիայ Աբրիաւոցի.

կամ չինուած հին երեւի՝ ի նմա. սակայն զգիտաւորութիւնն ոչ միայն անաւանակրութիւն վիճակին յայտ առնէ, այլ և ընդարձակութիւն աւերակացն, որք գեռ յանդելուտ դարս յայն վիճակ ամայութեան հասին, և առ մեզ եկեալ պատերազմաց Թաւրեց ընդ Պարս և Թաւրքս՝ վերատին ակաւն բնականալ՝ ի մերազգեաց, ի գաղթականաց Պարսկաստան, որոց են արդ անդ իբր 100 տունք։ Ընդոյն յայտնէ և աւանդութիւն մի, թէպէտ և ոչ ապագ, եթէ վարդապ Պարսից չինողի 1000 եկեղեցեաց, չինեալ էր՝» և նոյն թուով Ջիթահանս ի Կարբի, վասն տալոյ ձէթ՝ նիւթ լուսոյ այնմ եկեղեցեացն[2]». յորում բանի գէթ վկայի յոլովութիւն Ջիթահանոց (իրոյ չուչմայի), զոր և արձանք վանորէից վիճակիս հաւաստեն։ Ցարձանս յայսոսիկ նախ ասացք յիշատակ լինի կարբոյ, որպէս և Սարգսաւանիցն, ուր գինի կիսոյ ԺԴ դարու. Ցունն Տորոզնունց՝ ի Կարբի՝ տուեալ՝ ի հասոյթ վանացն. ի նմին ժամանակի գրեալ կայ և մանանան[3], յամի 1278 ՝ի գեղաշատոյն Կարբի, յերիցսուէ մոյ Մկրտիչ անուն։ Զեւ կիսոյ ԺԴ դարուն՝ վարդապետութիւն Մխոանոյ կոչեցելոյն ընկալեալ եղեւ և ասա » ՝ի Կարբի և յամենայն սահմանս նորա », բան Մխիթարայ Ապարանեցւոյ, որ ՀՀմարտի և՝ի վերոյիշեալ Յովհաննուվանեցւոյն Գնձակայ։ Բայց յելս այնր գրոյ՝ յարչաւանս Լենկթիմուրի սիրգն լինի անշքութեան կողմանցս, որպէս և այլոյ բազմոց. վասն որոյ Նոյն Ապարանեցի գրէր յայնժամ։ » ի Կարբոյ մինչեւ ցվկայ » տան՝ եօթն աւուր ճանապարհ և յոյլ բազում անգիս, » բազում արբագործ եկեղեցիք են իրրեւ զձմերան տա- » զաւոր մրգապահաց »։ — Յաւելու վասնզ կողմանցս՝ ի սիրգն Ձէ գարու, ՝ի ժամանակի պատերազմաց Շահ-արասոյ ընդ Օսմանեանս, յորում՝ ՝ի գալ տանել պատքեանցն՝ ՝ի վեր երեւեցան ինքնագլուխ բանաւորք, որպիսի որ էր Ջանապէտու Մամմասան կոչեցեալ, զոր հալածեալ Թոփալ Օսման ոմն փաշայ ՝ի ձէլալի հինից, ժողովեալ էր հազարս սրիկայից, » և կալեալ իւր կայան » զգիւղն Կարփի, և անդ նստէր. և զձմեռն գոյն անդ » ձմերեաց. ուստի առաքէր զզօրս իւր ՝ի շրջակայ գա- » տառս և՝ի գիւղս, բերել ինքեանց և անասնոց խրտնեց » կերակուր. և գնացեալ սրքն՝ յոր չէն և մտանէին՝ ոչ » չառանային բառականաւն ... և գյատակս ասնց և » զոյլ չինուածոց փրթեալ զրկանէին վասն գիւտի ընչից, » և փլուցեալ զորմն և գծածկոյթս յորկաց՝ յուզէին և » որոնէին ինչս. և յայսմ պատճառէ աւերութիւնս բա- » զումս գործէին։ Եւ Նոյն զգիւղն Կարփի այսպէս ա- » բարին. և գայր մի ՝ի նոյն գեղջէն վասն պահանջելոյ » ընչից՝ բազում աւուրս ՝ի բանտի և ՝ի կապանս պահե- » ցին, յոլով օրինակաւ տանջեցին և չետոյ սպանին, և » ընդ մէջն չերկուս հերձեալ կախեցին գորմով ՝ի վերայ » ճանապարհին, յոհ և չերկիւղ անցորդաց գաւառակա- » նացն »։ Ընդոյն ապաւառակք գերիսկայ և գերեալ գՆ. զամոյ կողմանս ՝ի կարեձմեան ժամանակի, զաւ և զաւար բարձեալ ՝ի չալակս » գերեացն՝ արանց և կանանց և » տղայոց, և այսպէս անցուցեալ զամսն՝ հասուցին ՝ի » Կարփի գիւղն ... զամսոս վաճառէին արծաթով, և » զամսոս պահէին ՝ի ծառայութիւն գործոց իւրեանց։

1 Ցարձանս Մարմարիոնս և Ջնարանոյ։
2 Ըստ Մխիթարայ Ապարանեցւոյ։
3 Գրէ Մամեռնս ՝ի գրոսոս Լիմիտոնէ։
4 Առաքել պատմիչ. Գլ. Ե։

» Եւ Ջալալիքն կացին այսպէս մինչ ի գարունն, և հա-
» սին մերձ յաւուրս Հոգեգալստեանն, և ապա եկեալք ան-
» ի գնացին յերկիրն Ախլցխա. և անդ ևս զոյն գործ
» կատարէին »։ Ցետ սակնելոյ նոցա ասի և Օսմա-
նեանց, Պարոյք Նաւածեալ զերկիրն՝ հանգուցին, և սկը-
սան առ ինքեանս զիրկիրն՝ յորմէ զկնէզսէլ
բէկ ումն ընդարեաց Ամիրգունէ խանն Երեւանայ՝ խորհրդ-
գական Դաւթի-Բանաքեռցոյ գաւառատեառչ կարգեցեալ
լոյ Կասպից և Աքսերդոյ. Յորմ ժամանակի զարգա-
նալ անդ Ցովհաննէս Թումբնց հզնազգեաց եպիսկո-
պոս, որ եղև յետոյ և առաջնորդ Ցովհաննեանցից։
Բայց յետ տասներեակ ինչ ամաց (1635) ի խաղալ Օս-
մանեանց մեռանդամ ի վերայ Պարսից և յառնալ զե-
րեւեան, ընդ այլոց եկին և Կաբրեցիքդերկրէ իբրեանց, ի
վարդապետի բարեկենդանի չարաթի օրն, » և դիմեցին
» զէպ յերկիրն Քաշթաղա, և հասին մինչ ի գիւղն Հո-
» չէս. և անդ բնակեալ էին սեաւ վրանօք բազում առնք
» Քրդաց. իբրև տեսին զնոսա՝ ասացին. Սոքա փոխըս-
» տականք են, եկայք կատրեցուք զոսոսա և կողոպտես-
» ցուք զինեանս. իսկ Կարբեցիքն խնդացան զխորհուրդս
» Քրդացն. զինեցան և նոքա ընդդէմ նոցա ի պատե-
» րազմ. և անկան Քուրդքն ի վերայ Կարբեցւոյն սուր-
» տիկ բախտիւք, և սպանին հինգ այր, զՏէր Մխիթարն,
» զՏարսու-բարն, զԴաւիթն, զԳիրասն և զԱվագն. զի
» Քէպէտ և Կարբեցիքն ևս սպանին ի նոցանէ՝ սակայն
» չարիեցան ... կային մերկ և կողոպուտ. քանզի գիւ-
» ղականքն ևս ձեռնտու եղեն Քրդացն ... Եւ էր այր
» մի ի Կարբւոյ՝ արուեստ ունէին Ջանանց Մխրզոյ, և էր
» նա չայնմ աւուր ի Թաւրէզ վաճառականութեան ա-
» զգակս »[1]. սա մնացեալ ազերազգիր ի դիմաց հայրե-
նակցացն սա Շահն, որ առաքեաց գունդ զորաց պա-
տուհասել զՔուրդսն, զորս ձոդեալ և կողոպտեալ,
« ապա կոչեցին գԿարբեցիսն, և բաժանեցին սա նոսա
» գինչս Քրդացն, և գգերեալ մանկունս չետս գարձու-
» ցին, և զարեան գինս ապահովացն առին ինքեանք ...
» Եւ մնացին անդ Կարբեցիք, մինչեւ էսա Շահն զե-
» բեան, և ապա գարձան և եկին և բնակեցան ի գիւ-
» ղն իբրեանց Կարբի »։

Ջայնս ժամանակս երեւելի էր ի Կարբի ցանկոր-
ջան ումն մեծատուն վաճառական, որ մեռաւ ի Պատաս,
որպէս և որդի նորա անդրանիկ Տէօվլէթ բէկ, որ ա-
ռաւել մեծացեալ զառն իւր և գարմանէր զվաճառսյս և
զանապատս, և գնացեալ ի Գանձակ վասն մեռածին,
» անդ վախճանեցաւ. և բերեալ զմարմին նորա ի գետն
» իբրեանց ի Կարբի, և թաղեցին մերձ ի Ս. Կիրակոս
» եկեղեցին, ի գերեզման՝ զոր ինքն գնեալ էր, ի թուին
» Ռձիե (1676) ի յունուարի 5։ ... Եւ առաջ որդի
» Տօվլաթ բէկին Պարոն Ալվազ ... եղեւ հետեւող քա-
» րի գործոց առաւել քան զհայր իւր. նախ սկսաւ շէ-
» տանն կարգաւորել ... զինի նորա չինաւածոց և ընդիս
» հետեւեցաւ. և բազմացոյց զինչն և զարաբս և զան-
» առնս և զխաչինս, զձիս և զկիսաէշս, և անկեաց
» զսգգիս և զթուրաստանս. չինեաց և ղրամ մի մեծ ի
» տեղին որ կոչի Կարրոյ գաշտ, և յեզանակս գարնան
» ընայր ուղեւից ղրամ, զի յամառան եղանակին բաւ-
» կանք լիցին անգամառանաց գեղջին ... Սիրող էր նա
» վանականաց և անապատաւորաց, և զամենայն պի-
» տոյս նոցա կատարէր ... իսկ կաթողիկոսն Ցակոպոս
» առաւել սէր ունէր ընդ նա, և զոր ինչ ասէր Ալվազն՝
» նա սիրով ընդունէր զամենայն և ոչ երկրորդէր։ ...
» Եւ ի վերայ այսր ամենայնի յաւել ևս մեծ բարութիւն.
» զի չինեաց ի մէջ գեղջն եկեղեցի մեծ հոյակապ, կո-
» փածոյ քարամբք, չորեք սեամբք, կաթուղիկէ ազնիւ,
» և բազմացոյց զանօթին և զգեստան, և չորքանակի
» պարապետաց ապառաժ քարամբք։ Այլ և երեք ջուր
» յՈրդկան գեղջէ փողրակաւ և գնեալ 2 մինչեւ ի գաւն
» եկեղեցւոյն, զի ի ձմերան եղանակին մի պակասեցի
» ջուր ի գեղջէն, Եւ յետ այսմ ամենայնի ... առեալ
» գանձս բազումս ի բաժին Ս. Լրամատչին և գնաց ի
» Թաւրէզ »։ 1693. ապրիլ չեւ ևս էր գարձեալ՝
յորժամ պատմիչս Ջաքարիա գրէր զայսոսիկ, ի Ծերա-
քեան խրամ, ամաց գոլով եօթանասուն և երկուս։

Այս եկեղեցի միայն կանգնուն կայ ցարդ ի միջի հի-
ւանդասակ աւերակաց այլոց հնագոյ եկեղեցեաց, յորոց մի
է վերոյիշեալ Ս. Կիրակոս, և միւս յանուն Ս. Հրեշտա-
կապետաց[3]. քաղաքացիք են և ասեա պարիսպքն ապառա-
ժեայք, զոր յիշէ պատմիչդ. այլ որմունք եկեղեցւոյն և
տանիքն ապաչէն կան ի կայ, ունելով և երիւս մատ-
բունս երկաւաքեայ սեղանոյն. և արտաքոյ յարեւելից կող-
մանէ գանգակատուն խարտեալ քարամբք և սիմնադրօք,
հանդերձ կամարակապ ներքնայարկաւ։ Այժմեան
գաւն եկեղեցւոյն խցեալ է արգ[4]. իսկ առ հարաւա-
յնովն արտաքուստ յարմն արձանագրեալ է այսպէս յա-
մին 1693, ի վերոյիշեալն Ալվազայ.

*Կամաւքն մարդասիրեալ Բանին Աստուծոյ եւ բարեխօսութեամբ եւ օժան-
դակութեամբ մաքուր ծնողին իւրոյ Կուսին Մարիամու, սկիզբն եղեւ շինու-
թեան սրբոյ եկեղեցւոյս՝ որ յանուն Սուրբ Աստուածածնին, ի գիւղաքաղա-
քին ի Կարբի՝ արդեամբք եւ գոյիւք Խոջազատայ Պարոն Ալվազի, ի թուա-
կանին Հայոց ՌՃԽ ամին, ի թագաւորութեանն Պարսից Շահ Աւտուլլային,
եւ ի բռնակալութեան երկրիս Ադրբատական՝ Ջուհրայ խանին, եւ ի հայրա-*

1 Ջաքարիա Սարկաւագ պատմիչ, Բ. ե՝
2 Ինչ, խոզմոկ. քան Թուրք լեզուի։
3 Ըստ յիշատակարանի ձեռագրի միոյ անկնաբերի։
4 Ա յորիկ քան Շահխաթունի, Բ. 116-7։

պետութեանն սրբոյ Ամենայն Էջմիածնի Տեառն Նահապետ Կաթուղիկոսին, եւ խրոխտի եւ պերճի յաւուրսն յաւուրսնորդութեան սրբոյ ուխտին մերոյ Յաւհաննու վանք տեառն Սարգսի հեզահոգի վարդապետին. Իսկ կառավարումն սորին եղեւ Ռձիոր թուին, յաւուրս նոյն հայրապետի եւ նոյն առաջնորդի, բայց ոչ նոյն թագաւորին եւ իշխանին: Որք պատահիք այսմ արձանի կարդալով կամ լսելով յիշեսջիք միով ողորմեալիս զՊարան Այվազն հանդերձ ծնողաւք իւրովք եւ ամենայն արեանակցաւ մերձաւորաւք, զի եւ դուք յիշեալ լինիք առաջի անմահ գահին Աստուծոյ: — ՁՄարկոս յիշեսջիք[1]:

Որպէս այլոց գիւղօրայից կողմանս՝ զաս 'ի վանաց միաբանակեցից՝ էր և Կարբոյ Աճարպատ, այլ և կուսաստան, որպէս յայտ առնեն ասեաշափեալ բանք Չէչէսի երեմիայի, եղբօր վկային Ֆրխատոսի Կամխատայ, յամի 1686, յորժամ յայց եկ կողմանցս և նոքիբեաց կուսանացն գրառած իւր Պատմութիւն նորոց նահատակաց.

« Երեմիայէ այս գրուատ Սրբուհեաց անձանց ընծայեալ,
Որ յաշխարհն Աղթամարեան մերձ 'ի գիւղ Կարբոյ մեր անտեալ.
Բահկերտին հանեցեալք և ազնուհատացք են եղեալ,
Հոգեկեցոյց հաւատովք և յուսովք 'ի վանքս ժողովեալ.
Ի և Աճարպատ անուամբ, ուր յայսմ միաբան կանխեալ,
Աղթայաթեան Տեառն յաւով երկնաւոր կենացն ակնարկեալ ». և այլն:

Ի կոակ-կնգակի Աղէքսանդր կաթողիկոսի, յամի 1708, առանց անուան յիշեն Այվազ կամ եղբարք նորա, ասորագրողք. « Մեզ Կարբեցի Պարան Տօխարցկին որ- » գւոցս, և մեր գիւղի քահանայիցս և քէթխուդացս՝ Թա- » թռախս, Պետրոսիս, Խաչատիս, Մարտիրոսիս », ընդ- առնելի է: — Ամբ իբր քառասնեամեան յետ այսր Թուա- կանի, 'ի չրխագոյութեան իւրեանց՝ երկրորդին Աբրահամ կաթողիկոսանալ ոգան « 'ի Կարբի 'ի առն Պարան խու- չատուրին և Պր. Դաւթին, Յուզով անդ գիշեր մի »[2]: — Կաթողիկոսն Թրակացի (Աբրահամ Գ.) յետին յիշատակ առանգէ Կարբոյ, ակնառուս գոլով, պատերազմի 1735 ամի՝ Թահմազ Ղուլի խանի ընդ Օսմանեանց, զոր 'ի գաշտէն Երիվարդոյ մինչեւ ցԱխուրեան վարեցին կո- տորելով, և զԲէօփրիւլիւ օղլու Աղտալլահ փաշայ սպա- րապետ նոցա՝ գանկեան և գլխատուեալ՝ 'ի վերոյ քար- ափանց Վասպուրական, « 'ի դիմաց Ցուխանձոափանից Կար- » բա և Մուղնա (գլխաւորեալ) եւս առնել 'ի Կարբի, և » դիպարդելել եղեն 'ի դաշտն և Հասացին 'ի Ղարս, » և անդ Թազեցին »: Բայց մեռուսան ամաւ յառաջ քան զայս, յորժամ Հարին Օսմանեանք զՊարսս 'ի սահ- մանս Երիվարդոյ և եկին 'ի վերոյ Կարբոյ, Կարբեցի Հայք ամրացուցին գղիւղ իւրեանց պատնիշք, և զառաջս քառասուն գդէմ կային. և 'ի յորդորել զնոսա Այտուլ- լահ փաշայի 'ի նահանջել, խնդրեցին պայման ժամանա- կի տասն օր, և ծանուցին զիրան խանին Երեւանու. իբրև ոչ կամեցաւ սա առաջել նոցա օգնութիւն, առիպեցան Հնազանդել պարտագետին Թուրքաց, յանձնեալ 'ի նա զՀարգէնս և զառաջս իւրեանց՝ ըստ պահանջմանց նո- քին, և ընծայել պակ ասկիզէն ակառակուս, և զեր- ծան 'ի վտանգէն: Գլխաւորք կարբեցւոց էին յայնժամ Պարոնտէրք՝ Աղաւպուղ, Մոկիսան, Յարդիս, Աւագ, Մը- կրտուտմ, Պօղոս, և Մանուկ որդի Քաւմանենիսի. խակ բը- նակիչք գեղացանէն էին 6000 ոգիք, որպէս ասաց Աղա- պուղ առ պարտագետն[3], — Ի գեղջսանէ սասի ընդ- հատցեալ առ մեզ 'ի կաթողիկոսութիւն Էջմիածնի Յով- հաննէս Ը, առ կենդանութեամն Տէրունւոյն Երիցեմի ընտրեալ յամի 1831, և վախճանեալ յամի 1842:

99. Մերձ 'ի Կարբի էր Յարենի կամ Աղենի գիւղ, որպէս հաւատաւ Ստեփէ Պատմիչ (ԽՈ), միանգամայն ծանուցանելով զի « այժմ է աւերակ և անմարդաբնակ. » բայց 'ի ժամանակս Հարց մերոց էր չէն գիւղ այս Յա- » րենի. ուստի էր այս Սարգիս եպիսկոպոս », առաջնորդ Սպտռատվանից (էջ 163): — Ընթերցեալ յարձանս Յով- հաննաւանից գնուիրատուութիւն Աղայդնոյի երիցու Յարենոյ, որ Թուի 'ի ԺԴ դարու. սակայն կանխագոյն եւս յԼ դարու յիշի գեղջս այս, և իբրեւ գուգակիցս սերական դիպաց կատարածին յԱբաթացւոց յամի 774, ընդ Թալեայ և Ղազնոյ (էջ 118). գուշակի և հանգոյն նոցին չէն մեծ և բազմաբնակ լինել:

Յարեւմտից Կարբոյ՝ իբր մղոնաւ հեռի, 'ի յետին գա- բեւանգաւ Աբագածու կոչ Քիլիկքենա, գեղ Թուրքա- բնակ, և 'ի Հս. արեւմտից սորին՝ նոյնքան հեռի այլ գեղ Քիւնիա-քոյրի (քէօփրի?) նշանակեալ:

Մղոնաչափ մի եւեթ տարակոյս յարեւմտից հիւսիսոյ Կարբոյ՝ կոչ գեղն Ուշի, անուանի վանն միրձակոյ մե- նաստանին ուխտաւորելոյ, զի ինքն գեղն անչքեցեալ է, եթեպէտ չափ տունս պղպզեալ ունելով այժմ, և միա- ցորդ որմոց հին եկեղեցւոյն, — իսկ հաւակատար վանքն

1 Աստուած 'ի վերջ արձանագրութեանդ գլուխգործոց նոցին կամ գթածագործս 'ի վիմի նշանակեսցէ:

2 Աբրահամ կրեացոյ (Պ. կաթողիկոս). Պատմ. ԺԴ:

3 Ձայսոսիկ ասացեալ Աբրահամ Երեսունչի ամ գրիչ:

Ուշոյ Ս. Սարգիս սակաւոք հեռի՛ ի գիղէն յարեւմտից Հա. Նորին կայ, ՚ի բարձու սարատափի սարտաից Աբագածու։ Ըստ աւանդութեան Յայսմաւուրց՝ մեծին Մեսրովպայ բերեալ « գմարմին Ս. Սարգսի (՚ի Համիան » քաղաքէ Պարսից) տարաւ ՚ի Կարբի և եհ պատուով ՚ի » Յուշի, և արար զեղէգն վանք հաշակաւոր, որ է մինչև » ցայսօր »։ այսպէս պատմի և առ յետին յիշատակողս զըս- խաւոր վանցէից կոչմանցս, ընդ որս և զառ եհ նորոգել սպասարն Զաքարիա. բայց ոչ որպէս զՍաղմոսաւանս և զՅովհաննաւանս հաշակեալ է յառաջին գարս, և ոչ նշանակեալ ՚ի պատմագրոց. աւուրքն կարօտի և աւանդութիւն Յայսմաւուրց. այն զի և չիք արձանա- գիր երաշխաւոր հնութեանն, և ոչ չէնքն ՚ի կոյր կան, այլ բնակարանքն խափա քաքցեալ և աւերեալ են. միայն պարիսպքն հաստատակ քարամբք չինեալ երկար քաւականս ձեւով՝ կանգուն կան, Ճայսաւածով երից յարակից եկեղեցեաց. մին ՚ի Հիւսիսոյ՝ փոքր և հնագոյն, և ՚ի վերոյ գրեանն՝ յարեւմտից կուսէ կիսեղծ արձանա- գիր անվերծանելի. Մէջն և մեծագոյն եկեղեցին վայե- լուչ՝ անսխալ գմեքենաւորեալ էր, այլ ՚ի աւաւանութենէ երկրի, յամին 1827, կործանեցաւ գմբէթն մեսամբ տա- նեցոյն և արեւմտեան որմոյն. և ընդ փլածոյն, ասեն, ծածկեցաւ հանգիստ նշխարաց Ս. Սարգսի։ Երրորդն է ժամատունն ՚ի հարաւոյ կուսէ տաճարին, չորիւք սեամբք ամարձեալ. այլ և նորա մեռ ի կամարաց և տանեաց խարխլեալ է։ ի վերոյ հարաւոյն դրան տաճարին կայ արձանագիրս այս, որպէս թուի կամաւ անկատար թո- ղեալ, յամի 1329.

Թվ. ՉՀԸ. Կամաւ անմահին Աստուծոյ եւ ողորմութեամբ Պարոն Քըր- դին խաւ . . .

Լրագոյն եւս է արձանագիրն որ ՚ի ներքին հարաւոյն որմի գաւթին, ՚ի նմին ամի գրեալ.

Թվ. ՉՀԸ. Կամաւ անմահին Աստուծոյ եւ ողորմութեամբ Պարոն Քուրդին եւ խաւտ ? խաթունին, ես Հռոմ երեց որդի Մաւրեւհամոյ ? եւ ամուսին իմ Ուլու խաթուն միաբանեցաք Սուրբ Զաւրավարիս, տուաք մեր Հազարմանին այգին . . .


Ճախագոյն և հնագոյն եւս արձանագիր (1264 ամի) կայ ՚ի վերոյ արեւմտեան դրան ժամատանն, զոյս օրինակ.

Զայնք հնչեցին Սանդարամետք անդընդոց », և այլն։ Աստի յատկացաւ տեղոյն անունն Էջմիածին. այլ Ներքս, և ո՞ նախ այսպէս մեկնականաբար ասաց, արժան էր հետաքննութեամբ ստուգել. բնձ Թուի թէ չէ կարի հին այսպիսի կոչումն կամ կիրառութիւն. և յետ յիշեալ չարականիդ՝ առաջին նմանաբան ասացուած է Սահակ Հօրեղբեան, ’ի վերոյիշեալ ՅՈդոս Վաղարշապատի, ’ի գլխոց նորին.

« Այս են, այս են Էջէ Միածինն
Իմ կաւածին Քաղաւորն » ։

Բայց օրշակի Էջմիածին կոչումն տեղոյն ոչ գտանեմ յառաջ քան զՓե դար. և գրեաթէ նախ առ վերանորո-



80. Էջմիածին.

գութեամբ Աթոռոյն և առ յորգորոյի նորոգմանն՝ առ Թեոփիլոսի Մեծաւորեցւոյ լսի անուն, գոլիքս և ’ի Յոյսս. ւսւրս ’ի Նմին ժամանակի. իսկ ’ի յիշատակարանս գրոց այնոր գտաս զոյգ գրին անուանք երկոցուն առ Վաղարշապատ և Էջմիածին ։

Քեա պատմէոյ Լուսաւորչին առ նորաշաւաս ժողովուրդն զտեսիլ իւր և զմեկնութիւն, և ձեռն ’ի գործ արկեալ չինելոյ զվկայարանն երից և Թագելոյ զմարմինս կուսանացն յիւրաքանչիւր գիպս նահատակութեան նոցին, գՀոխիմեանս յաբեւելից կուսէ քաղաքին, գՈսյիանեանս ’ի Հարսաւոյ, և զկոյսն մինասար ’ի հիւսիսոյ, ապա ասէր, ըստ պատմին. « Եկայք, զնկատ անալ տեղին սէրունական սանն և մեզ հրամայեսցէ՝ ’ի մէջ առեալ փակեսցուք։ Թագաւորսն և ամենայն ժողովրդովքն երթեալ հասանէր ’ի տեղին ցուցեալ հրեշտէն սեամն ոսկիակալ խաչախին, և անդէն բարձր քարայարմամբ փակեալ զտեղին ’ի պատիւ, և գրամիք և գանասիակք ամրացուցեալ, և կանգնեալ և անդ զնշան փրկական խաչին. զի առ հասարակ հասեալ ոք յոյն տեղի, տարաբին Աստուծոյ երկրպագեալ ծունր կրկնեացեն » ։

Քեա ձեռնադրութեանն ’ի քահանայապետութիւն

1 Զոր օրինակ, յամի 1445. * ’ի հայրապետութեան Տեառն „ Գրիգորի վարդապետաւ Էջմիածնի. — 1447. * ’ի հայրապե„ տութեան Տեառն Գրիգորի ’ի յաթոռ Ա. Էջմիածնի վարդապե„ տաւ Աստուածատուրեանց հաւանեցի „. — 1454. * ’ի կաթողիկոսու„ թեան Տէր Զաքարիոյ, ’ի յաթոռ Ա. Էջմիածնին վարդապե„ տաւ „ ։ — Գաւանի և առանձինն գրեալ յամի 1455. * ’ի հայրա„ պետութեան Գրիգորի սիմեոնական Սուրբ Էջմիածնին՝ վերոյիշեալ „ հորոգելոյ „ ։

Հայոց, և յետ մկրտելոյ գյաժպռակաւն՝ 'ի Բագրեւանդ, գարձ արարեալ Ս. Գրիգորի 'ի վաղարշապատ հանդերձ Թագաւորաւն, « զնկարեալ տեղի տանն Աստուծոյ յիշ- » նեաց, զյուշեալն նմա 'ի տեսլեանն, գյառաջադոյն » գրուեալն իւր, և կանգնեաց անդ զտեղւոյն Քրիստոս- » ի » : — Այսպէս համառօտիւ նշանակէ պատմիչ ժա- մանակին զչինութիւն կաթողիկէին, զոր եկեղեցւոյ Հայոց, և զհայրապետականն աթոռոյ. որ թէ որպիսի ինչ էր, 'ի յետագայ նորոգութեանց յայնմ՝ ոչ համակ քաջաչէն եղեալ, այլ և փոյթայարկ, ներքին զարդուքն հմայացեալ ակուռ և արծաթաձև և պէսպէս ազնիւ. նիւ- թովք, զոր ոչ միայն տանն արքունի՝ այլ և հասարակ ժողովուրդն անխնայ մատուցանէր 'ի սպաս տանն Աս- տուծոյ: Այ որով յայտ է թէ կառուցաւ հայրապետա- նացն և կարեւոր վայրք 'ի պէտս սպասուրաց եկեղե- ցւոյն. որք թէ որքան ընդարձակ էին յայնժամ՝ չէ մեզ յայտ. այլ յետ այնր, մանաւանդ յ'ԺԻ դարէ և այսր՝ յաւելեալ չինութեամբք՝ ձեւացաւ շուրջ զկաթողիկէ և- կեղեցւոյն ընդարձակ վանատեղին պարսպապատ, յոր- մէ արտաքոյ մնան երեքին վկայարանքն. ասկոյն նոքօք հանդերձ բովանդակեն յայլազգեաց իւր-գիւիսէ կոչի, (որ է Երեք եկեղեցիք). այլ մեք նախ զմնծէն զբան կաթո- ղիկէին և ցվանացն ճառեսցուք, ապա և զայլոցն:

Որպէս 'ի տեզապրի վաղարշապատու ծանուցաք՝



81. Կաթողիկէն Էջմիածնի.

վանքն Էջմիածնի 'ի դարէ հետէ զասացեալ անշրպե- տեալ է 'ի քաղաքագիղէն, թէպէտ ասկա միջոցաւ, և տեալ է 'ի քաղաքագիղէն, թէպէտ ասկա միջոցաւ, և մեալ յ'ի Ներսէ. Եղ. նորին. և է բովանդակ պարսպապատ, մեալ 'ի Ներսէ. Եղ. նորին. և է բովանդակ պարսպապատ, քառակուսի, իբր 275 Ձափ ընդ երկայնն յարեւմտից քառակուսի, իբր 275 Ձափ ընդ երկայնն յարեւմտից յարեւելս, և 235 Ձ. ընդ լայն 'ի Հս. ընդ Հր. չինուած յարեւելս, և 235 Ձ. ընդ լայն 'ի Հս. ընդ Հր. չինուած Սիմէոնի կաթողիկոսի յամի, 1763. Հիմանքն կոփածոյ Սիմէոնի կաթողիկոսի յամի, 1763. Հիմանքն կոփածոյ քարամբք, վերին մասն ապիւտակիւտ, իրգունս ունե- քարամբք, վերին մասն ապիւտակիւտ, իրգունս ունե- լով բոլորիս վեցասան՝ 'ի կողմանն և 'ի գլուխս ան- լով բոլորիս վեցասան՝ 'ի կողմանն և 'ի գլուխս ան- կեանց՝ մեծ և փոքր, որով զամրացի բերէ կերպարանս կեանց՝ մեծ և փոքր, որով զամրացի բերէ կերպարանս Բայց է և ներքին պարիսպ բուն բնակութեան վանացն, Բայց է և ներքին պարիսպ բուն բնակութեան վանացն, որ գործէ հաւատարակոյսն քառանկիւն, որոյ երկայնու- որ գործէ հաւատարակոյսն քառանկիւն, որոյ երկայնու- թիւն կողման միոյ է իրր կիսով չափ բովանդակ երկայ- թիւն կողման միոյ է իրր կիսով չափ բովանդակ երկայ- նութեանն վերոյնշանակելոյ. շուրջանակի չէնք են վա- նութեանն վերոյնշանակելոյ. շուրջանակի չէնք են վա- նացն, 'ի միջի բակ ընդարձակ, և 'ի կենդրանի՝ եկեղե- նացն, 'ի միջի բակ ընդարձակ, և 'ի կենդրանի՝ եկեղե- ցին կաթողիկէ: Ի միջի երկոցուն քառանկիւնացն, կամ ցին կաթողիկէ: Ի միջի երկոցուն քառանկիւնացն, կամ բան վանացն և արտաքին պարսպին՝ են այլեայլ կա- բան վանացն և արտաքին պարսպին՝ են այլեայլ կա- բուր չինուածք և արձակ վայրք, որպէս ասեմք 'ի յա- բուր չինուածք և արձակ վայրք, որպէս ասեմք 'ի յա- տակագիւրն. յարեւմտակողմն պարսիզք և աւազան, 'ի տակագիւրն. յարեւմտակողմն պարսիզք և աւազան, 'ի Հարաւակողմն արեւմտից՝ Հիւրատուն կամ բնակարան Հարաւակողմն արեւմտից՝ Հիւրատուն կամ բնակարան Ի- թատուորաց. յարեւելս Հարաւոյ՝ Դպրատունն. յա- Ի- թատուորաց. յարեւելս Հարաւոյ՝ Դպրատունն. յա- րեւելակողմն՝ գոմք անասնոց. նոյնպէս և 'ի Հս. Եղ. որ րեւելակողմն՝ գոմք անասնոց. նոյնպէս և 'ի Հս. Եղ. որ և յարեւմտս հիւսիսոյ՝ էին երբեմն կրպակք:

Զորք դրանք են արտաքոյ պարսպին մեծամեծք և կամարակապք. մին ի ծայր արեւմտեան հիւսիսակողման որ հայի ի Վաղարշապատ, և կոչի Դիւղի Դարպաս կամ Շուկայի Դուռն, զի է յայնմ մասին Շուկայ եաթանաւան կրպակաք և խանուաք, վասն որոյ կոչէր և Քէրվանսէրայ (Կարաւանատուն), ուր գան չինականք ի գնել և վաճառել, և միաբանք ի պէտս վանացն. և առ նոքօք յեկից կուսէ բնակութիւն ապառաւորաց և պահապանաց։ Երկրորդ դուռն Ղազարապատի կոչեցեալ յարեւմտից հարաւոյ, որ մեծանէ ի թակ մեծ, յորոյ միջի աւազան, և շուրջ բնակարանք ուխտաւորաց կամ հիւրոց, և ամբարանոցք. յելից սորին կայ Դուռն Մօրի անուանեալ, որ հանէ յընդարձակ հրապարակ Ղազարապատի. ի նմին մեծանէ և յարեւելեան ծայրէ հարաւակողմանն միւս դուռն կայի, զի ընդ այն ածէն զարգիւնք բերոց կարասեաց Աթոռոյն. կայ և այլ փոքրիկ դուռն ի հարաւային ծայր արեւմտակողմանն՝ Բաղանեաց դուռն կոչեցեալ։ — Միջին պարսպին կամ վանացն են գրունք հինգ. յորս գլխաւոր արեւմտեանն հանդիպ մտից կաթողիկէին, և կոչի յանուն Ջրցատոյ. զի յայնմ կողմանն հանաւրին լինել արգանի ապարանիցն։ Բարեւելային հարաւակողմանն է Քշուհի անուանեալ մեծ դուռն, որ մեծանէ ի Հա. Մ. անկանէ Ղազարապատի։ — Քիչատակ չինութեան մեծի արտաքին պարսպացն արձանագրեալ է ի վերայ Կալի գրանն՝ յանուն չինարար կաթողիկոսին, համառօտ բանիւս.

Շինեցաւ բոլոր շրջապատ պարիսպս սրբոյ Աթոռոյս ի հիմանէ, ի վաւառ Աստուծոյ եւ ի պարծանս ազգիս Հայոց, հրամանաւ Տեառն Սիմէոն կաթողիկոսին. ի ՌՄԺԻ թուականէ մերմէ։

Ի վերայ ամանց՝ ի բրգանցն կան արձանագիրք, որպէս ի միում, ի հիւսիսակողմանն.

Ա. Քիչատակ է բուրգս Գալիանեցի մնհատեսի Գրիգորին եւ որդւոյն Յոհաննէսին եւ Եղիսային. Թվ. ՌՄԺԹ։

Բ. Շինեցաւ մեծ բուրգս արդեամբք ի յԱստրանոյ Սառաքի մնհատեսի Զաքարիային եւ հանգուցեալ եղբօրն իւրոյ մնհատեսի Գրիգորին. ի քիչատակ ամենից կենդանեացն եւ ննջեցելոցն իւրեանց. Թվին ՌՄԺԵ։

Գ. Շինեցաւ բուրգս այս արդեամբ սրբոյ Աղիմոյ Պատրիարգ Տեառն Կարապետի առաուաժարան վարդապետին, ի քիչատակ իւրեան եւ հոգեւոր եւ մարմնաւոր ծնողաց իւրոց, ի ՌՄԺԶ։

Յայսմ վայրի ի վերայ պարսպին արձանագրեալ է քիչատակ առաջնոյ ուրաք.

Քիչատակ է հօթնագաւազանի տեղ ի պարտսպէն Ագուլեցի Ոսկանի որդի Յովսեփենւոյ եւ իւր կենակցին, եւ որդւոյն Դանիէլին եւ այլոցն. Թվ. ՌՄԺԵ։

112. Դառնն Տրդատայ մտնեալ ի գաւիթ, նախ ընդ հարաւ և ապա ուղիղ ընդ արեւելս հանէ ի մեծ գաւիթ կամ ի բակ վանացն, կլանակի դէմ յանդիման դրան մեծի տաճարին, ի կոչեցեալն Կաթողիկէ և մայր եկեղեցիս Հայոց, ոչ այնքան առաջնութեամբ չինութեանն, որքան աթառակալութեամբ Հայրապետի ազգին, և հիմնարկութեամբ Գրիգորի և Տրդատայ, որոց ձեռակերտ մարթ է անուանել զէթ զայժմեան հիմանդն, և նոցա ձեռագ գտեցին. զի անեղկմա ուանդութիւն է ազգիս՝ անփոփոխ մնալ ձեւոյ և չափոյ եկեղեցւոյն՝ յամենայն նորոգութիւնս և վերաշինութիւնս. և է քառակուսի խաչաձեւ, այլ կարճ թեւօք, մեծագործեամբ միջակ, մանաւանդ թէ փոքր՝ ըստ այժմեան գաղափարոց, առ ի լինել հայրապետական և արքունական եկեղեցի. և զի ի հաստաբակի փոքր են ամենայն հին եկեղեցիք Հայոց, տատկաւին մի ի մեծագանձից համարելի է սա, գոլով ընդ երկայնն իբր 35 Ձ. ընդ լայնն 33 ½. այլ հանդերձ անդաստակաւն մինչեւ ի դառնն (արեւմտեան) լինի 42 Ձ. բարձրութիւնն իբրեւ 23 կամ աւելի [1]։ Զորք սիւնք խաչաձեւ խարսխաք ի միջավայր տաճարին ամրանան զգմբէթն, ընդ որով կշռակի ի կենդրան եկեղեցւոյն կայ իջանել տեղին։ Որոյհետ ինչ էին նեղք չինութեանն և ներքին բաժանմունք կամ չինուածք յատկացեալ անդ ի սկիզբն Դ դարու (իբր յամի 303), ոչ կարեմք հաւաստել. բայց զի սեպհական սուրբ էր յարեւելեան ճակատն կամ ի թեւն անդ. իսկ նեղքն ոչ համակ փոքրագոյն թուի, այլ և վայտակերտ, որպիսի էր և երկրորդ անգամ շինեալն կամ նորոգեալ յետ կոյս այնր դարու. զի հաւանեալ

[1] Շահաթաճանան 32 և կէս գազ (պարսիկ կանգուն) առ պերկոյեաթիւնն, 30 և կէս գազուեաթիւն, 21 գաթեթաթիւն։

բէն աւերեցաւ կաթողիկէն ի չարանախանձ ուրացողէն Մեհրաժանոյ և ի Պարսից, որք ի հնումն քանդեցին զվաղարշապատ, և նորոգեցաւ ի Մամիկոնեանց։ Ի հին չինութենանց անտի՝ յատակին կամ յերկրորդէն՝ քառն յատակ քան զգիւտ հայ առաքէ՝ Յեացեալ երկու քանդակք յանուտաւ, ազուցեալք այժմ ի հիւսախային որմն արտաքուստ. մին զՊաղոսի առաքելոյ և զՔրիկէթոս կուսէ պատկերս առնելով հանդերձ անուամբն. միւսն խա-



82. Հին քանդակ յորմէ կաթողիկին Էջմիածնի.

չաձեւ. Հաւատարակոմ ի բոլորակի, յորում շուրջանակի գրեալ է յանարէն բանս այս. « Օգնեա ամենայն ազգաց կամ ազօթարար (որպէս թարգմանի) յիսկզբանէ »։ յանկիւնս խաչին՝ Քերեա մաղթանք ազօրմէլոյ Զաքարեայ ? . որպէս և արտաքոյ յաջմէն գրի, « Տէր, ազօրմա ծառայի քում Աբգարու » ... յահեկէն՝ անառարկ բառք, վերջինն Լոյիսոին, գուցէ Յոյս կամ Յուսիկ նշանակիցէ. իսկ ի տապեւ երկք անուանք են Դանիէլ, Տիրէր (Տիրայր) և Գաբռիէլ։

Վահան Մամիկոնեան հասեալ յիշխանութիւն մարզպանութեան, « հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ չքնաղութեամբ գՀնացեալ գործ նախնեացն իւրոց » . որպէս ասէ ժամանակակիցն Ղազար, այլ ոչ նշանակէ ըզնիւթ չինուածոյն. բայց հիմնարկութենանն բառ երևիցի գուցանէ փարակերտ՝ ոչ միայն գհիմանան այլ և զորմանա, այլ ոչ և զառանին. քանզի ասէ Սեբէոս՝ յետ իրր հարիւր քառասան ամաց, վասն կամակատոյ կաթողիկոսի, եթէ յետ չինութեան եկեղեցւոյ Ս. Հռիփսիմեայ, մեծ, « վերացոյց և գփայտակերտս որբոց կաթուղիկէին, նորոգեաց և գխոստաս որմոյն, չինեաց գքարայարկան. իսկ պատմիչ կաթողիկոսան Յովհաննէս՝ գամենեքեան ասէ. « Եղեն գնա գեղեցկայարմար և չքնաղատես կոթողք փառացն քրիստոսի » : Քարինք չինուածոյն հաստղղեալք են, անառ և կամարք, և որմունքն քանձր և հաստակաւն, որպէս գի, ասէ Անգղիացին Մարիէ, միայն ատաղոյց.

» կամ յերախայրիաց՝ մինչեւ ցդրամ մի՝ յանձն իմ ոչ է » յարեալ ... այլ երրիք և յաւելորդացն (անփական » ասացուածոց խրոց) ՚ի պէտս անդրգդ ծախեր յի- » մոցն » . յիշէ և զվաստակս իւր ՚ի չինութիւն և ՚ի զարդ տեղւոյն, չհամարձակ յետանալ քան զայլս. « զի ամենայն » կամիս և կազմածոյ եթէ ասիցս մի երեւելի նուազեալ » քան զայնոսիկ որք յերկերիցս ամէ չինեալ վանորայքն, » չհամարէի զանձնս արժանի կալոյց՝ Զի թէպէտ միանձ » գամ և երկիցս ջարդեցաւ բոլոր կաշի՝ յանհաստատա- » թենէ չինուածոյն » , այլ՝ ձգնի ցուցանել զի ինքն և նորոգեաց և չինեաց. և մինդեռ ՚ի չինել էր, յաշա- կոտքն՝ « զիս Հանրին (ասէ) մերկ և թշնամանօք, յամե- » նայն արարելոց իմոց՝ զոր ՚ի մանկութենէ արարեալ » էի ... (և բամբասէին) թէ մանուկ մի հոգաքարձու » տեղւոյն չկարէ առնել » . — Քեռ Ղազարս մինչեւ ցկիս- բիմն՝ ոչ յիշի ոք վանահայր. իսկ Կիւրիոնդ առ Մովսէ- սէս մերով կաթողիկոսէ՝ եկաց յոյնմ տեղւոյն զամս եօթն, և ապա ընտրեցաւ ՚ի կաթողիկոսութիւն



84. Հին ձեւ կաթողիկէին Էջմիածնի.

աշխարհին Վրաց։ Ի սկիզբն Է զաբա Աբրահամ անն էր վանաց երէց կաթողիկէին, որ գաւա ՚ի Ժողովի համ- անառան կաթողիկոսին ՚ի Դաւին. յետ նորա կացեալ է Յովհան կամ Յովհաննիկ առ Կամխատառա կաթողիկո- սէ՝ յամի 618, ՚ի ժամանակի Նորոգութեան եկեղեցեաց վաղարշապատ։ Քեռ սորա յիշի Եզր՝ իբրեւ փակա- կալ կաթողիկէին, որ ապա եղեւ կաթողիկոս, և առ իւ- բեւ առ ժամանակ մի ՚ի Նմին պաշտամանն եկաց Յով- հաննէս Մայրավանեցի (յետոյ Մայրագամեցի)։ Յոր- մէ յետոյ ոչ գտանեմ զանուն յայնմդրդի. Քեռեւս և ան- գէն չփոթք և խանգարումն Հասին տեղւոյն յԱրաբաց՝ յարշաւանս իւրեանց յՅոսաման Հայոց յամս 637–46. և Քեռեւս զաւերածս նոցա կարկառեալ, որպէս և զայլսն, Շինողն Ներսէս։ — ի Պատմութեան Խոյին Կանեալ ըստ Քոյամաւարաց, ասէ վասն Ափի տանիկանի առեալ « զմեծ կաթուղիկէն զվաղարշապատ՝ որ ասէ Էջմիա- ծին » . այլ առ պատմիչս ոչ գտանեմ զայս յիշատակ-

յիշի Սափի ամն ՚ի կաղմանս վանայ յետ Թ դարու, և Աբոց ասացիսն ՚ի Դաւին՝ առ Երկաթն Աշտամ, որ է յառաջին քառորդի Ը դարուն. և զի սորա բարեմտիք երեւին ՚ի պատմութեան, թուի Սափեայ արարեալ զա- ւերն, եթէ ասոյգ իցէ յիշատակն։ — Ի տեղագրութեան վաղարշապատու նշանակեցաք և զԳագկայ վերջնոյ գա- լուստ անդր, որ ցուցանէ և ՚ի չինութեան լինել կաթո- ղիկէին և յայնժամ. և յետ այնորիկ անկիշատակութիւն և ամայութիւն, մինչեւ Ոդրոյ արժանի լինել յեպիսկո- պոսէն Սիւնեաց յետ Ը դարու. (՚ի ինդրոյ Խաչատրոյ Կեչառեցւոյ). և կերպարանել իրրեւ ՚ի Ձայն մեծի գու- ժի դիմել ազգին Հայոց ՚ի քաղքն. որք և

» Տեսին ՚ի նմա զարքայահին
Զայն երկնաւոր թագաւորին,
Զխաթան փառաց Տեառն Քիստոսին,
Զմայրըն լուսոյ Հայկայ զարմին,
Մերկ խաչատակ ՚ի թագրանին.
Զանձամբ արկեալ զգեստ խաւարին,
Հերքըն ճաղեալ որպէս կընդին,
Սաինքըն ցամաք զերգ սիրեդկին » , և այլն։

Ասոյէս նկարագրէ յերիար որպէս գինի մի այրի չրջա- պատեալ յեզերամարդ, յորոց Հարցեալ՝ պատմէ գա- զէտս իւր.

» Երբեմն էի որպէս գինին,
Հիմ՝ Հաւատոյ եմ գրաւհին.
Երբեմն արեւ արփիածին,
Ասիքըմ խաւար անհրաժարին ...
Երբեմըն Հարան յառագաստին՝
Մածեալ գրկաքն իմ փեսային,
Ասիքըմ սեղեխ սատրատին,
Անպէտ նըման Հաճեալ ըզրին,
Իսկ այս որ չարըչ գինեւ պարին՝
Են իմ դաւերքն՝ որ նախ եկին,
Զարս սատ և անդ Հարմնացուցին,
Եկեղեցիք Հայաստանին » ։

Եւ զայս վասն վկայարանաց կատանացն ասէ, և այլոց մերձակայից եկեղեցեաց. և յետ յերկար ազգաց վասն անաէրունչ մնալոյ երկրիս ՚ի բնիկ տէրանց, գառնայ յինքն իսկ ՚ի կաթողիկէն՝ դիմառնարար.

» Մինդն այրի գիս սատ Թագին,
Որպէս զդինիչ ՚ի բաց լըքին.
Աղդ մենացեալ յանվայր գաղտիս՝
Չերդ ըզդագան անապատիս,
Զաչերս ածեմ կոդիզագին
Թ՝ անր էք որդիքդ իմ արբածին.
Եկայք առ մայրըս ձեր նախկին՝ —
Ամենեւին բինչ չերեւին.
Բայց թէ ազնիք ընդ ճաղարին,
Կամ Աիւթացի հօրանք...
Կամ խայտառակ մանկունք նոցին.
Որք միւս կոխան գիս առնէին,
Ցնդիք չարեացն որ գործէին ...
Ցերկնից յերկիր գիս իջուցին,
Խորք անդընդոց գիս պատեցին ; ...
Ո՞ր են փեսայքն իմ առաչին,

» պիսկոպոսք. Յովհաննէս վարժապետն և ուսուցիչ ի
» սուրբ սխաէն Հիրմնի վանից, և աշակերտք իւր Գաւ-
» ւիթ վարդապետ և Ստեփանոս վարդապետ, ի տա-
» ղէն Սիւնեաց, բազում քահանայիք. – Շմաւոն վար-
» դապետ շնորհալից աթոռոյն Սաթէի առաքելոյ. –
» Գրիգոր վարդապետ և եպիսկոպոս Ս. Աստիկոյն
» Թադէոսի. և միւս Գրիգոր վարդապետն և եպիսկո-
» պոս հռչակաւոր սխաին Հաղբատու. Իսկ ի Այրարա-
» տեան գաւառէն, Կիրակոս վարդապետ Ըռշտունե-
» ցի. – Սարգիս վարդապետ Զագուվանից. – Տիրացու
» վարդապետ Վանանդեցի ի Սիւնեաց. – և ի կողմանէ
» վասպուրական գաւառին՝ Թումայ վարդապետ (ինքն
» Պատմիչն) և Մկրտիչ վարդապետ ի Ս. սխաէն Մե-
» ծոփոյ վանից. – Կարապետ վարդապետ և Յովսէփ
» վարդապետ ի մայրաքաղաք վանաբէիցն, ի սուրբ
» սխաէն Առաքածածնին Թառաբատու. – Ղազար
» վարդապետ ամենայն կողման Բաղիշու. – Սարգիս
» (կամ Ստեփանոս) վարդապետ և Յովհան վարդա-
» պետ Աղձկու. — Զաքարիա վարդապետ Վարագայ
» մայրաքաղաք վանաբէիցն, և Տէր Յոհաննէս, ի երկո-
» տասան եպիսկոպոսք ասեմ և անեմ. Տէր Զաքարէ ի
» Հաւուցքառաջ, ի յազատարգեաց. Տէր Գաբրիէլ Ս-
» ՀՄԻԱԾՆԻՆ. Տէր Կարապետ Յոհաննաւվանից. Տէր
» Յովհաննէս Բշնու. Տէր Աստուա ի Իրապին. Տէր Յո-
» հաննէս Աբրիշում Մեծոփայ վանից. Տէր Յակոբ Կող-
» բայ. Տէր Կիրակոս Բագրատու. Տէր Մարտիրոս Հազ-
» բատու. Տէր Ազարիա Գանձասարցի. Տէր Զաքարիէ
» Ներսեհանից. Տէր Ստեփանոս տեղապահ Սիւնեաց
» աթոռոյն, ի յազատաց. Տէր Կիրակոս Սալնապատից,
» և այլ բազում վանորայք և կրօնաւոր սուրբ հարք, և
» պատուական երիցունք՝ աւելի քան զ300 անձինս, և
» բազում միաբանակեացք, և ազատք և որդիք ազատաց,
» ձեռնադրք և տանուտէրք, և անթիւ և անհամար
» բազմութիւն ժողովրդեան, որանց և կանանց. Եւ ի
» հնուստր վարդապետաց և եպիսկոպոսաց՝ քրիստ
» միաբանեալ ընդ մեզ, Աետիս վարդապետ Ս. Խաչ-
» ի. Յովսէփ վարդապետ Աղպատենցի. Յովհաննէս
» վարդապետ Գամաղիելու. Կարապետ վարդապետ
» Հիղնայ. Յոհաննէս վարդապետ Բարխէորայ. և միւս
» Յոհաննէս վարդապետ Գամաղիելայ. և Գաւիթ և-
» պիսկոպոս, և Սահակ. Տէր Ստեփանոս եպիսկոպոս
» Բագիշու, և Տէր Բարսեղ, և Տէր Աետիս եպիսկո-
» պոս. Տէր Յովսէփ, Տէր Գրիգոր, Տէր Թորոս գե-
» րապատիւ սխաին Ս. Կարապետին. Տէր Պօղոս և Տէր
» Զաքարէ սուրբ սխաին Աստաքեաց. Տէր Կիրակոս
» Վանագրին. Տէր Յովհաննէս Սանոյ (կամ Սալնոյն),
» և Տէր Յոհաննէս մեծապատիւ սխաին Վարագայ,
» Տէր Կիրակոս Ս. սխաին Սալնապատից, ...
» եկաք ի գեղաքաղաքն Երուսաղէմ մեծա-
» գալաւեան փրկչին՝ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ մեծա-
» ւրախանքեամբ ընդ առաջ եկին, նոյնպէս և այսոր
» Հայոց եղև. զի ի վազուց հետէ անտեղուն կոյին, և
» ոչ էր տեսեալ այսպիսի ժողովել վարդապետք և ե-
» պիսկոպոսք ի մի միաբանութիւն. և սիրով ընկալան
» զմեզ և ժողովուրդս մեր և զամենայն եղբարքս մեր,

Հայրապետաց ջանք որ անցին ...
Որ բարեներքն որ յիս կոչին
Դաւաք երիցանց կղերիկոսին.
Որ սարկաւագանքն իմ բազդանին.
Որ են զպիրք ի տաճարին,
Որ ընթերցողք անագանին,
Որ են փառաւոք որ երգէին, ...
Որ ձայնք երգոց պաշտօնէին.
Որ և բարձունքն անուշ հոտին.
Որ կանթեղանք լուցեալ ջահին՝
Նման աստեղացն որ ի յերկին.
Որ են զնմանութք սուրբ խորհրդին՝
Որ միշտ առ իս կատարէին.
Որ հաղորդիքն տուն Աբրշին
Որոյ փրկեալ աշխարհք լինին » ։

Աչապիսեաք յերկարեալ զՈդբան՝ ուսարէ յուսագրութեամբ խնամոց Աստուծոյ. և մեք հարկ իմն համարեցաք կարգել առաջնոր ի վկայութիւն ամենայնի անդուն և ի բաց բարձման բարեաց կարգաց, յոր սուեալ թուի և աւելի քան զդոյս մի եւս, մինչեւ ի վերանորոգութիւնն կամ վերահաստատութիւն կաթողիկոսաց։ Բայց զի աշ ի ապառ ամսոյ և անվերակացու էր տեղին և յայնժամ, յայտ է յաբեռուսրաց ևկեղց անդր. որպէս ի նմին ժամանակի Ողբասացին և առաջ եւս յառաջ եկն Մխիթար վարդապետ Կերմանեցին, « ի Ս. Ութեան յորմէէ Որ-
» գին Մխածին, և ասի ուսամին բանեաց զԱնդաբա-
» մեռս անդնդոց. և անդ ոչընչանալ սուրբ տեղացն » ։ գնաց այլուր. եւս և յընտրութենէ տեղւոյն ի գումարանն ժողովոյ, և ի միոյ ի ժողովականացն՝ որ կոչի Եպիսկոպոս Էջմիածնի՝ Գաբրիէլ անուն։

Թուականութեան Մեծոփեցի պատմիչ հարուստ ժողովոյ Լենկթիմուրի ի Հայս, մի յանուանի վարդապետաց ժամանակին, գչարեալ ընդ գործս կաթողիկոսաց Սիոյ, և մանաւանդ՝ որպէս թուի՝ ընդ դէմ հակառակել միաբանութիւն նոցին ընդ մեծի գահոյն Հաւվնոյ, ի ժողովի փլորենոյից (1439), ջնջեալ մեծաւ նախանձու և ոչ փոքր առելութեամբ, յերկրորդում ամի՝ գլուխ եկաց գումարել ժողովով ի Մեծ Հայս, և կարգել քահանայապետ ի բնաշխարհն անդ և ի նախնական աթոռն, և յաջողեցաւ բանն ի միոյ կողմանէ. զի թէպէտ կանգնեաց անդ զաթոռն՝ յետ մանանեայ. զի թէպէտ և ոչ վաղվաղակի վաստակոցն վաստակեան, այլ ոչ կարաց և միաւորեալ զի կացին ընդ միմեանս և յայնմ օրէ մինչեւ ցայսօր պահել. զի կացին միաբանք և յայնմ օրէ մինչեւ ցայսօր կաթողիկոսութիւն կիլիկիոյ՝ կամ Տանն Սիոյ, թէպէտ յայժ նուազելոյ. այլ բայ յայնմ ատեն և ի փոքուէ մնալ Աղթամարայ վիճակի, ամենայն Հայք որ յերկրի իւրեանց և որք ի սիրեաս աշխարհաց՝ հնազանդին աթոռոյն Էջմիածնի։

Պարագրեալ ժողովոյն Թովմայ՝ գայս օրինակ պատմէ (յետ բազում երազաբանութեանց), գհանգամանս ժողովոյն և գժողովելոցն և գընտրութիւն կաթողիկոսին. « Իմ սիկիրն արարեալ ազգիս նմանակաց՝ առ ամենայն » ազգս (իմոյ կողմանս հայոցն կամ), գայ ամենայն միա-
» բանութեամբ ի յարհնութիւն Էջմիածնին և ի ձեռնադ-
» րութիւն կաթողիկոսութեան ամենայն հայկազեան
» սեռից ... Եւ այս են ժողովեալ վարդապետք և ե-

» իրրև զառաքեալս և զՔրիստոսակ Աստուծոյ, մեծամեծք
» և փոքունք, կարգաւորք և ուխտաւորականք։ Իսկ ի միւս
» այն եկն հրաման ի բանս արէն Աղուպ—բիկ անուն, և
» հասաք առ նա, և նա իրրև զիագաւոր քրիստոնէից
» մեծարեալ՝ մեծաւ սիրով և պատուով ընկալաւ զմեզ.
» և այգուցն առեալ զգոբս իւր և զմեզ զամենեսեան,
» փառօք և բմբկով, գոչմամբ բարձրագունիս մտաք ի
» Ս. քաղաքն Վաղարշապատ և հաւատացեալք և հա-
» ւատարիմ ժողովուրդն ի Քրիստոս և անհաւատքն՝
» ընդ առաջ ելեալ գարմանային։ ... Եւ մեք ամենե-
» քեան միաբան օրհնեցաք զԱստուած ի ձայն ցնծու-
» թեան, փառաք քեզ, Աստուած, յաղագս ամենայնի։
» Եւ հրաման եղև ի բանաւորէն օրհնել կաթողիկոս՝
» առանց հակառակութեան. և բազումք ի յեղբարցն
» յառաջ կոչեցան գալ ի յառաջնորդութիւն Թորգոմա-
» կան գրահեա. և ոչ կամեցան բառնալ գծանրութիւն
» գառնութեան բարձրագոյն առաքնանին. ապա յետ
» այնորիկ ապաւինեցաք յԱստուած, և միաբանութեամբ
» սկսաք աղօթիւք և պաղատանօք խնդրել յԱստուծոյ,
» առ մեզ առաջնորդ ըստ կամաց իւրոց[1]։ ... Եւ մեք
» ուրախացեալ օրհնեցաք զԱստուած. և գտրձեալ ի
» նոյն օրհնութեան ձեռնադրութեանն, արկին վիճակ ի
» աւրբ աւետարանն. և ել վիճակն Կիրակոս հայրապե-
» տին. և առանց հակառակութեան նկալ կանգնեցաւ
» ի մէջ աշխարհին առնելոյ. և մեք հիացեալ գարմացաք
» ընդ հնազանդութիւն առնն Աստուծոյ, և զիագոյզ
» կամաց իւրոց. զի կարի անշնազանդ բարս ունէր, և
» առէր զիաւառս երկրաւորս. և յիշեցաք զԱստուած, և
» սկիզբն արարչագործ ձեռնադրութեան. և ահա եկն ի ժա-
» մուն յայնմիկ արժան մի աւետարանել Քեւոք աստիկ
» գոչմամբ, նստաւ ի վերոյ գլխոյ Եղմիածնին. և Թա-
» գին բազուկք զհզաւոր խրոխտութիւնն, եղեալ տեսին
» և նկուել պատկեցին. և մեք ձեռս ի վեր ամբարձեալ՝
» օրհնութիւն և փառս տուաք օրհնելոյն յամենայն ա-
» րարածոց՝ ամենասուրբ Երրորդութեանն »։

Յառաջի է, զի յետ այսոցիկ գոհացուցական բանից անընդ-
մէջ յարէ պատմիչն, եթէ իցէ նոյն ինքն Թովմաս և եթէ
հետեւող Նորին, եթէ « Եւ այս գիտելի է ամենայն սըր-
» բազան և իմաստուն մանկանց եկեղեցւոյ, զի այս եր-
» ջանիկ և երանելի աւուրս հայրապետս մեր Կիրակոս,
» երկուս ամ նստաւ յաթոռ պատրիարգութեանն ի կո-
» թուղիկէն Ս. Էջմիածնի վաղարշապատ քաղաքի[2]։...
» Բայց անգիտութիւն մեծ սրտին կաթուղիկոսն և վե-
» րակացուք նորին. Գայրիել եպիսկոպոս սին ի սուրբ
» սեռէն Յովհաննուվանից և վարդապետ մի կիրակոս
» անուն ի գազանէն Ախշատենից », տղրանօք Մար-
կահի եպիսկոպոսի և Աստուածատրոյ կրօնաւորի Աղ-
մասավանից, անվաւեր համարեալ զընտրութիւնն, և
ձեռնէրիցութեամբ կոչտին Յովհաննու՝ կոչուցին փո-
խանակ Նորա զԳրիգոր Մակուեցի. ընդ որ ի խոր խո-
տեալ Թովմայի՝ մեղադրական ազգանուամբ և տղրալով ա-
տարեկ զպատմութիւնն[3]։


Գրիգոր Մակուեցի ի Նորագաւեան աթոռոյն՝ փոյթ
կալաւ և յապահովել զանձնաւորութիւն միաբանից և զըս-
պասաւորաց, ուստի որպէս (որպէս վերագրեցաք ժանուցաք)
գնեաց զառանն Վաղարշապատ կամ գՀասն Նորին, որ-
պէս և յաջորդք իւր զայլ եւս գհասն. բայց ոչ յիշի ոչ Նո-
րա և ոչ առաջնոց յաջորդացն՝ չինութիւնս առնել եկե-
ղեցւոյն կամ վանացն. Քերեւս զի և ըստ բաւականին
չէն էին. այլ յետ այնր ի կիսոյ ԺԷ դարու ցՀԺ դար,
(յորում նախ երկու առնվք Թուրքաց՝ Սնա և Սպահան
Ոչխարաց անասնակեղք, որոց մարզ էր անդին, յետոյ
Պարոք և Յամանեանք), հարկ է քէ ոչ սակաւ անչքեցին
և ապականեցուցին զաթոռն և զչինուածս Նորին. բայց
զի յաւուրս անտի Թովմայի Մեծափեցւոյ ցԱրաքել Դաւ-
բիժեցի՝ զամս 200՝ չհկաց կամ շինոյ մեզ պատմիչ ազ-
գային, անգիտանամք և զանցս անդուստ, որպէս և զոյ-
ղոյ բազմաց, մինչեւ ի սկիզբն ԺԷ դարու՝ յաւուրս աշ-
խարհակալութեան Շահաբասայ, որ Հանգերձ սպրդիք՝
և զնահանգն Աղբարասայ՝ կաթողիկոսական աթոռոյն՝
Էարկ ընդ իշխանութեամբ իւրով, մինչ ընդ ծանր ծանր
պարաւք ընկճեալն էր. և յայն սակս կաթողիկոսունք
օգնականս իւրեանց կացուցանէին Համատարած և Հա-
մակիրս, և երբեմն և Հակառակորդս, որպէս յայս է
յամենից վիրջին զոր կաթողիկոսացն Դաւթի և Մելքի-
սեդեկի, զոր պատմէ Ալաքել. որք և (որպէս և յաջորդ
իւրեանց Սահակ) ստիպեցան Հրաժարել յաթոռոյն կամ
յաստարութեան զնգերել և վախճանել. մինչեւ կացու-
ցաւ Հաւատարկաց Հաւատութեամբ Մովսէս Գ Սիւնե-
ցին, յամի 1629, որոյ խնդրական. որ ի սակաւ ամս
հայրապետութեանն (իբր $3\frac{1}{2}$) գերծոյց զաթոռն ի
պարտացն, և ոչատ և որոյ բազում Նորագաւթիւնս և
չինութիւնս յիկեզեցւոջն և ի վանսն. նմին արժանա-
ւոր Հետեւողք գտան և անմիջական յաջորդքն Փիլիպ-
պոս Ա. և Յակովբ Դ. գրեաթէ նոր ի նորոյ կանգնե-
լով գամենայն չինուածսն, և գքերին լցին կամ փոխե-
ցին յետագայք նոցին՝ Եղիազար, Ղազարոս, և յա-
ւէտս Ղազար և Սիմէոն. և գրեաթէ Հարիւր յետոյ
ամ տեւեալ (1629–1789) բաւանդակ և կարեւոր չինու-
թիւն Էջմիածնի. ոտ որովք յաւելուածս եւեթ Համա-
րելի են յետագոյիցն չինածք՝ զոր մի եւս յաւուրս մեր,
յորում այժմեան կաթողիկոս Տէր Մակար ձեռն արկ
նոր Նորագաւեան կաթողիկէին և մատչին ինչ վանացն։

113. Յառաջ քան զընտրութիւն Մովսէսի՝ ի ժամա-
նակի Հակառակութեան կաթողիկոսացն Դաւթի և Մել-
քիսեդեկի, յամի 1614, Շահաբաս՝ խորամանկ խորհըր-
դով և բանի փոխադրեալ էր Էջմիածնէ ի Սպահան,
ընդ Աչս Լուսաւորչին և Հնգետասան քարինս ի տա-
հարէն, գԱրեան տեղւոյն և գՍիզանոյն, գերիս մեծ աշ-
տանակս քարեշէնս, և այլն. կամեալ Նոր իմն Էջմիածին

[1] Աստանօր գտնեմք երազ և տեսիլք պատմին։

[2] Երկու ամս գհին և գաւազանադիրք. այլ տեսիլք քան գերկու
ամ է կացեալ Նորա յաթոռն. քանզի ընտրութիւն Նորա վկայի լի-
նել ի ՁՂ թուի. (որ սկսանի ի 1 դեկտեմբերի, 1551)։ իսկ կո-
թուղիկոսն Կիրակոս գամսէ յետոյ տեսիլ ունի ի գերս Նոյ ի
ՁՂՅ թուի. (որ սկսանի ի 30 նոյեմբերի, 1555 տի)։


[3] « Զի մանկունքն (տես. տնին) զսիզիրն պատուհասն և գո-
» գումեան. և հզաւոր Տէրս՝ կամապատուհասեան։ Իս ամ մի չէմն
» ի գուան Էջմիածնիս գնգերեցայ. աշակերտաբ և վարդապետաբ-
» ն և վտան տասցիակ պատուասիրս՝ Թոպ և փախեալ »։



Հատակագիծ ԵՋՄԻԱՆԻՆ վանից.

1. Կամարակիր հիմնէքար. – 2. Քառակոյտ. – 3. Շիրիմ Մակառատղի. – 4, 5. Շիրիմք Գաթիճէ և Կերակ ի կամարիկաց. 6, 7. Շէք. Յամհանիէս Ը և Գէորգ ի կամարիկաց. – 8. Աղբիւր. – 9. Դուռն (Դարպաս) Տղայոց. – 10. Դա. Վիճաթաք. – 11. Դա. Աբեղայաթ. – 12. Գերքնայարկ վիճաթաք. – 13. Գանձատուն. – 14. Արկղայարկ թեակապուտք Լուսակապաց. – 15. Լատիք. – 16. Անհնաձք Աթաթաից. – 17. Դուռն Մուտատն. – 18. Մատուռն, Գաթուկ և Ընտիպուտք. – 19. Հին վաքմաբան. Անհնաձք Աթաթաից. – 20. Նոր ատյան Հիմնարք. – 21. Անհնաձք Տեառն և Պատատրաց. – 22. փուռն. – 23. Գրքոյճն Տօպակատուն. – 24. Մուտն (Շիրիմաքարայ). – 25. Շաքատն և Շահճարուպք. – 26. Դարպաս Քշուկք. – 27. Տեառնատուն և Խուհաճոցք. – 28. Անգամատան տնարան. – 29. Սիկ. Հիճարան. – 30. Դուռն Վաղարշապատ. – 31. Վաղարշապատ. – 32. Աւազան. – 33. Դարպաս Վաղարշապատի. – 34. Լիճ և փոքրիկ Աւազան Ղեբախեան. – 35. Դարպաս Արքի. – 36. Դարպաս Կոյի. – 37. Աւազան կնճայ. – 38. Գաթուկ Վիճաթաք. – 39. Հին վիճաթան (Քառնագի). – 40. Ժողովարան (Արեւելեան) և Գիւտից. – 41, 42. Բազանիք և Դուռն. – 43. Դարպաս Շուկայի. — Վիճաթան, հատատուկ ի վերայ 9, 10, 11, 12, 13 թուոց. – Գրատունն ի վերայ 28, 30 թուոց.

» մանեանց և Պաբոյ, կրկին պաշարանց և առնուց եբեւանայ, » բայ յեկեղեցւոյն և գմբեթաչէն տանցն' ա-
» մենեքեան բնաւին ասէրեցան. զի ար ինչ փայտակերտ
» առեաք և չէնք կային' քանդեցան. վասն որոյ Տէր Փի-
» լիպպոս կաթողիկոս բազմաւերկ վճռակօք գամենայն
» չինուածան վերատին չինեաց » ... Նոյնպէս և « ի մէջ
» Սեզանատանն ... քարիւ չինեաց զսեղան հաղկերու-
» թիւն, և զսեղի նաւելոյն և զսալայարկ յատակս նորին,
» զի մի գիւրաւ ասէրեսցի 'ի ժամանակս հեծելոյսար-
» ժաւթեան, եւ արեւելեայ կողման խաւցան բովանդակ
» նոր չինեցաւ ... այլով ձեւով. նաեւ զեկեղեցւոյ տա-
» նիան' զառ 'ի գմբեթի գդակէն, զբովանդակն նորո-
» գեաց » . և զի և ոչ Մովսէսի ձեռն արկեալ էր 'ի զբա-



85. Յատակաձեւ կաթողիկեին Էջմիածնի.

քէդ, այսինքն 'ի կամաձեւ գագաթին, և ոչ յատակաց ասէրէ յիւր նորոգութեան, 'ի դէպ գայ կարծել զնոյն հա-
զարամեայ չինած Կամիաստայ կաթողիկոսի: — « Եւ
» քարակաղ ֆարչն որ շուրջ զեկեղեցւոյն է, և միւս
» ֆարչն որ առաջի խցացն և այլ տանցն է. և արտաքոյ
» պարսպին մերձ հարաւային գրանն' երկու գմբեթա-
» չէն ձիթահանք նոր չինեցան » : — Աստ չինարար և
զգան կաթողիկոսն բազում և այլ յիշատակաց արժանի
գործս. որպէս, գարձն Աջոյ Լուսաւորչին 'ի Սպահանայ,
փոխադրութիւն Էջմիածին վարժարանին Հաւատատեղոյ
'ի Մովսէս 'ի Ցամհանեանսանս, բերութիւն առաքին Ջէն-
կեայ 'ի Ծովէն Սեւանայ 'ի Հայզզան գետ, և գետակի
միոյ բղխելոյ Աստաղած լեռնէ' 'ի Քասաղ գետ. և հուսկ
ամենայնի' սկիզբն և կէս չինուածոյ (յամս 1654–5)
գեղեցիկ սրագմբէթ Ջանգակատան եկեղեցւոյն 'ի վե-
րոյ գաւթի արեւմտեան գրանն, ծախիւք Աստու Ջուլ-


» Ծաղ » [1].

Այլ այս ամենայն չինուածք յետ երից կամ չորից ա-
մաց (յամս 1635–6) 'ի ժամանակի պատերազմացն Օս-

[1] Մեծ բանիւ բամբակեայ Ջուգարիա վարդապետ առաջնորդն Ցամհանեանցն և աշակերտ Մովսէսի' զոր վեհ չինուածոց նո-

պոյ Աչդոյեան. զոր՝ վասն վերահաս մահուան ոչ կարաց աւարտել, այլ յաջորդ նորա Յակոբ կաթողիկոս յրատոյց վայելուչ քանդակաք, և անուանեաց Հրեշտակապետ, ի պատիւ Գաբրիէլի (և Միքայէլի), ուր և յետոյ խորան և սեղան Հաստատեցաւ ի միջնայարկին, զի եռայարկ է. երկրքին տորինքն մէն չորիւք սեամբք, վերինն՝ որ է պատայր գմբէթն՝ ութեքսամբք, և գտակն ութերեսեան, ի ներքուստ արձանագրեալ.

Ի թագաւորութեան Պարսից Շահապասի, նաեւ ի Հայրապետութեան Տեառն Փիլիպպոսի, թուին ՌՃԳ հիմնարկեցաւ. (եւ ի ձեռն) Տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, ՌՃՉ, աւարտեցաւ Ջանգակատունս. ծախիւք Աստուծոյ Պարոն Չէլէպիին. ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ[1]:



86. Ջանգակատուն Կաթողիկէին Էջմիածնի.

1 Միւս եւս արձան է սոցա ի քարտարի գրան եկեղեցւոյն.

Շնորհիւ Աստուծոյ եւ օժանդակութեամբ սրբազան կաթուղիկոսաց Փիլիպպոսի եւ Յակոբայ հրաշակերտեցաւ Ջանգակատունս եւ ծաղկեցաւ ի թվ ՌՃԳ. (1664):

Ի 4 Աստուածատոյ կաթողիկոսի չիշատակ սահմռկալ ի հնդրքին չրշտապատ մեծի գմբէթի եկեղեցւոյն, այսպէս.

Ի Յուսկանութեան հայկական ՌՃԿԹ. ես Տէր Աստուածատուր Համատանցի կաթուղիկոս ամենից Հայոց ետու նորոգել զդրեսին խաչատեալ սիւնքըն սրբոյ եկեղեցւոյս, եւ զրոլոր եկեղեցին նորոգեալ եւ ծաղկեալ հանդերձ մարմարոնեայ շինուածովք որ ի մէջ սրբոյ եկեղեցւոյս են. յիշատակ հոգւոյ իմոյ, ի վայելումն տառապեալ ազգի Հայոց, եւ աստ ի սուրբ աթոռս զետեղեալ միաբանից. եւ որք ընծեռնուք զարձանս զայս յիշեցէք զիս ի մաքրափայլ յաղաւնս ձեր. եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի. ամէն.

— Բայց ի պէսպէս մանրագրուած քանդակաց՝ ի գլուխ կամարի միջնայարկին կան և երեք պատկերքանդակք.

յարեւմտակոյսն՝ Քրիստոս, օրհնելով զաւազանն, ի հա-
յաւակոյսն՝ Ս. Գրիգոր, և՝ ի հիւսիսակոյսն՝ Տրդատ



87. Հին Դաւիթ խորանին.

արքայ։ — Նման իմն ամին՝ այլ պարզագոյն եւս է մեծ

տրհնելով սեամբք, և շուրջ վանդակապատ առնելով, և
սուրբն՝ ի վերայ չորեցուն հատարանաց և բոր-

կարուղիկին կամ գմբէթ սաւարին, յ'12 յատակատա

ձըր անանցն Նորոգելոց յԱստուածատուր, ՚ի Սիմէոն և ՚ի Պօղոս կաթողիկոսաց[1] : Ընդ մեծաւ կաթողիկէ իւս կայ հրամայի փոքր կաթողիկէ քառասիւն, զոր նախ յամի 1684 շինեաց Եղիազար կաթողիկոս, հանդերձ սեզանով պատարագի, ՚ի վերայ սրբոցն Խմման տեզին՝ զորոյ գլխին բարձեալ էր Շահաբասայ. և շուրջ զայր բարձրաւանդակ քարաշէն՝ զի համարձակ տեսանէ

զի յիւր ազթօղացդ՝ անգամն. յետոյ Աստուածատուր կաթողիկոս վերահին պատրաստեաց վայելչագոյն եւս զկաթողիկէն. իսկ Աբրահամ Բ կաթողիկոս պղծեցելն դրաւագեալ վանդակաւք պատեաց շուրջանակի զանգամն, երկրացիկ դրամբք յարեւմտեան և ՚ի հարաւային կողմանց, արձանագրելով ՚ի վերոյ արեւմտեայն գոյս բան.

Ի թուին ՌՃՁԱ. ի հայրապետութեան Աբրահամ կաթուղիկոսի եւ հոգաբարձութեամբ Նորին չինեցաւ շրջապատ ճաղերս Խմման տեղւոյն Քրիստոսի գեղեցիկ չինմամբ. Յիշեցէք ի Տէր :

— Իսկ ՚ի վերայ երկրորդին՝ ճարտար պղնձագործն Մխայէլ կարնեցի գրեալ է զիւր յիշատակ: Նման կաթողիկէի զանգակատանն, այլ փոքրագոյնս եւս յերեսին միւս Քեւս եկեղեցւոյն կաղապ եղիազար կաթողիկոս յամի 1683, որպէս և տեսանի ՚ի պատկերին (Թիւ. 81):

Զատ Խմման տեզանցն մեզ այլ տեզունք պատարագի են յեկեղեցւոջս. որոց առաջին և ասագ, և միակ ՚ի հնումն՝ է ՚ի բեմին յարեւելակողմն Շղթակար Ս. Աստուածածնին, յոր անուն կոչէր և համարէին տանարն, որոյ և նաւակատիքն կատարին յատուր նախատանաւի Վերափոխման Տիրամօր. ՚ի նախնումն միայն կարգողիկ կոչէր. և սա ճանաչի հիմնեալն ՚ի Լուսաւորչէն՝ ուր և պատարագէրն. զորս վճիռ եւս բառնալ Շահաբաս, և կայ այժմ ՚ի Նոր Ջուղա: Խաչկոյ տեզանցս տակէզած պատկերաւ Խմման Միածնին, փայտաշէն քանդակեալ և նըշխրեալ է ՚ի Նախատաց Ջմիւռնացւոց, զրութեամբ.

Յիշատակ է Խմման տեղւոյս Իզմիրցի Աբրահամ ամիրայիս. Շնորհատու ամենազաւրին Աստուծոյ, որ ի հայրապետութեան Տեառն Աստուածատուր կաթողիկոսի ամենայն Հայոց կազմեցաւ եւ ծաղկեցաւ Խաչկալս ի մայրաքաղքին Իզմիր. արդեամբք քահանայից եւ ժողովրդոց արեւելականաց եւ արեւեմտեայ կանաց, մեծ եւ փոքր վաճառականաց. եւ եդաւ յիշատակ ի մեծ տեղանն Սուրբ Էջմիածնի. հոգաբարձութեամբ Իզմիրու առաջնորդ Սիմէոն վարդապետին Երեւանցւոյ :

— Ամբով օրհնեալ և նիւթով պատուեալ էր և հին գաւառ խոտանին, գրեաթէ ՚ի նմին ժամանակի. (Տես Թիւ. 87), — ի հակառակ խոտանին կայ մեծ լուսամուտ. որպէս և յայլ կողմանս օրհնեցն են երեսունիւ չափ պատուհանք, այլ շատք յայնցանէ խցեալք այժմ՝ վասն այնորիկ և ազատ տալոյս է եկեղեցին: — Երրորդ և չորրորդ տեզանքն են յամէն և յահեկէ Խմման տեզւոյն՝ յերկոսին Քեւս լայնութեան տանարին, զորս կանգնեաց Եղիազար կաթողիկոս, բարձրացուցեալ գլխատին. Հարաւայինն յանուն Ս. Կարապետին Յովհաննու, սյսու արձանագրութեամբ.

Յիշատակ է Սուրբ Յովհաննէս խոտանս Տէր Եղիազար կաթողիկոսին. Թուին ՌՃԿ :

[1] Սիմէոն Նորոգելոյ գրեաց ՚ի մեամ տեանց Հարաւակողմանն.

Նորոգեցաւ սիւնս մինչեւ ի վերին կամարն հոգաբարձութեամբ Տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց. արդեամբք երեւանու Բըջնի ի Քրիստոս հանգուցեալ Եաղուբի որդի Մխիթար Մխիտարին, ի յիշատակ իւրեանց եւ իւրայնոցն. ի ՌՄԻԶ Թուին:

— ի մեամ գրեալ է.

Նորոգեցաւ սիւնս ... արդեամբ Ջուղայեցի եւ ի վան քնակեալ ի Քրիստոս հանգուցեալ Տէր Յովհաննէսի որդի Տիրացու Մանիսացւոյն, ի յիշատակ իւրեանց. ի ՌՄԻԶ:

Ղուկաս Նորոգեալ գրեաւ սիւնսս. ՚ի մեամ գրեալ.

Նորոգեցաւ սիւնս մինչեւ ի վերին կամարն հոգաբարձութեամբ Տեառն Պօղոսի սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց. արդեամբ Այտղեցի Պապայեան մանտեսի Կոստանդնի, ի յիշատակ իւր, եւ կենակցին մանտեսի Եղիսաբեթին, եւ որդւոյն մանտեսի Հայրապետին, եւ համայն կենդանեաց եւ ննջեցելոցն. ի ՌՄԼԵ Թուին:

— Եւ ՚ի մեամ.

Նորոգեցաւ սիւնս մինչ ի վերին կամարն հոգաբարձութեամբ Տեառն Պօղոսի սրբազան կաթողիկոսին, արդեամբ Կոստանդի մանտեսի Խորոխի, ի յիշատակ ինքեան եւ ծնողացն՝ Աբրահամին եւ Ալնազին, եւ եղբօրն մանտեսի Պետրոսին, եւ որդւոցն՝ Պօղոսին, Սկրտչին, Յակոբին եւ Աբրահամին, եւ այլ կենդանեաց եւ ննջեցելոցն. ի ՌՄԼԵ Թուին:

Հիւսիսային խաչանն է յանուն Ս. Յակոբեանոսի, նման հարաւային կաթուղիկէին և արձանագրութեամբ.

Յիշատակ է Սուրբ Յակոբեանոսի սեղանս Տէր Եղիազար կաթուղիկոսին. թուին ՌՃԼԹ։

Եօթն սափճանք են բեմի սեղանոյս. զի անդ բազմի կաթուղիկոսն՝ ի ձեռնադրութեան եպիսկոպոսաց և քննէ, և ձեռնադրէ յատագ բեմին։ — Հինգերորդ և վեցերորդ սեղանքն են յայնմէ և յահեկէ աւագ սեղանոյն. մին յանուն Սրբոց Յակովբայ և Յարքի, միւսն Ս. Գրիգորի Լու-

սաւորչի. բարձր է և բեմ սորա քան զհասարակ յատակ եկեղեցւոյն. ձեղունքն կամարակապք փայտակերպք են, դրուագելք և նկարչեալք, կանգնեալք յԱբրահամէ Բ, որոյ և արձանագրեալ է՝ ի հարաւոյ կողմանէ սեղանոյ Ս. Յակոբեանց.


Աբրահամու վեհին արդեանց,
ի վայելումն Հայոց ազանց.
ի ներ թուոջ մերում՝ ազանց
ՌՃ ութսուն եւ երկուց.
Թուին ՌՃՁԲ։

Հրաշակերտեալ տաճար վսեմաց
Վանն զենման Գառնի կենաց,
ի փրկութիւն մարդկան մեղաց,
Յանուն երկուցըն Յակոբեանց,
Եղբօր Տեառն եւ Որոտմանց.

Ընդ մէջ երկոցուն սեղանոցս և աւագ բեմին կան երկու աւանգաւանք, զորոց տանիս նորոգ չինեալ Միէն կաթուղիկոս՝ ի նորագիւն գրամանդակ յարկ տաճարին, գրեաց՝ ի ներքոյ մեծի պատուհանին արտաքուստ.

Աստուծով նորոգեցաւ բոլոր տանիքս սրբոյ տաճարիս[1] եւ երկուց խորանացըն իսկ ի ներքուստ եւ արտաքուստ, հոգաբարձութեամբ Տեառն Միէոնի սրբազան կաթողիկոսին Երեւանցւոյ. եւ աշխատասիրութեամբ լուսաւոր Գրիգոր վարդապետի Եղվարդեցւոյ. ի ՌՄԻԹ թուին մերոյ։ — Վարպետ Գասպար։

Եօթներորդ սեղանն է՝ ի միջնայարկի գանգակատան յանուն Հրեշտակապետաց, որպէս վերագոյնգ ասացաւ. ներքնայարկն է մատուռ գրանն, վերնայարկին բան տեղի գանգակաց, յորս նշանաւոր է մին գիպէթացի գրութեամբ, սրբազան ասաուածածինս բանիս նոցին. և համարի ձուլեալ յերկրի նոցա։ — Մի յերկոցուն աւանգաւանացն է սպասաւորութեան տեղին. միւսն Նախատաւն և գանձարան սրբոց մասանց և սպասուց[2]։ Ի սոսին նշանաւորք են Գիպէրդի աստուածամբս, որ յաւագն պատհիւ յԱպրի վանս, որ և յայն տակս կոչեցաւ Գեղարդայ վանք. ուրանօր և տեսայ։ — Աննախընթաց պատկերն փայտեայ, զորմէ ասի՝ ի Հայոց Քառ և՝ ի Պարսից. — Մասն փայտի Նոյեան տապանին, որպէս համարի, յարծաթի տապանակի, զոր ետ չինել Դաւիթ վանահայր Գեղարդայ վանից յամի 1698, ՝ի ձեռն Աւետաց ուրբանի ոսկերչի, քանդակեալ՝ ի վերոյ գիշատակարանն[3]



88. Գիպէրդացի գրուած գանգակի.

1 Ի սկիզբն գրուած՝ ի ժամանակի պատերազմաց խոխանցան և խանգարեցան տանիքն. և Եփրեմ կաթողիկոս նա վերստին նորոգել կոփածոյ քարամբք. գրեալ և գյիշատակս տասագրողացն՝ ի տարբ. կաթողիկէ և՝ ի գմբէթին, ոգագէս.

Այս ներքին դասուն տանեաց նորոգութիւնն է արդեամբ ի Զգլար բնակեալ ազնիւ Աղայ Յակոբի Գալստեան ի յիշատակ կենդանեացն եւ ննջեցելոցն. ի ՌՄԿԵ թուին։

Այս վերին դասուն նորոգութիւնն է արդեամբ ազնիւ Աղայ Մարկոսին Թաւուժեան, ի յիշատակ կենդանեաց եւ ննջեցելոցն. ի ՌՄԿԵ.

2 Փոփոխութիւնք մանրազասնում եւ տեղեկութեան կարգանէ՝ գրոց յն՝ յ՛Ա. Հատոր Շահխաթունեի գրոց։

3 կամաւն Աստուծոյ եւ մեղսամաճ եւ գծուծ Գաւիթ անարժան ճարեղէս Գուշեցի, տեղապահ վանիցս Սուրբ Գեղարդայ, շինել եւտու եւ գոյզգոյն

— Բազում և այլ տապանակք արծաթեայք, խաչք ոսկեզնիք և արծաթեղէնք, և նշխարատուփք կամ կաղամածք, յորս ամփոփեալ են Աչք Սրբոյ Լուսաւորչին, Աչք Սրբոյ Հռիփսիմեայ Մծբնայ, բերեալ ի Սպահանեալանից· Աչք Թադէի Առաքելոյ, բերեալ յԱլինաթիրլի վանից· Աչք Մատթէի, բերեալ ի Քաշհանեալանից· Աչք Թովմայի, Աչք Սրբոյ



89. Մուտքն դուռն գանգակատան, կամ Աւագ դուռն.

օրինված՝ զարդարեցի զպահարանս Նոյեան տապանիս փրկագործ սուրբ տախտակիս, որ այժմ կոչի Սուրբ Ցակոբ· յիշատակ լինի եւ իմ ծնողացն եւ ամենայն արեանատուս մերձաւորաց· եւ որ շատ եւ որ սակաւ արդիւնք ունիցին այսմ պահարանիս՝ տէրն Քրիստոս հատուսցէ ի միւսանգամ գալուստեանն· ամէն· Եւ որ ոք կամեսցի հանել վանիցս սուրբ Գեղարդայ, կամ ծախել, կամ գրաւ դնել ազգայնոցս եւ այլոց, զանէծս Կայենայ եւ Դադաթայ եւ խաչահանվացն առցէ, եւ սեւերես առ իս գտցի· ամէն· Շինեցաւ ձեռամբ Քանաքեռցի մեղսապարտ ոսկերիչ Աւետին· Թվ· ՌՃԽԲ·

Աբիստակիսի, Տատեաւիք և քերիք չորչրանաց Ս· Լուսաւորչին, Գագարի Ս· Հռիփսիմեայ, և այլ բազում նշխարք պէսպէս արկեղօք և տփոք արծաթեղինօք· Մինիր մի՝ որ համարի առաքեսն ի Լուկիոսէ Գ· քահանայապետէ Հռոմայ առ Գրիգոր Տգոյ, յամի 1184։

Երկու գահաւորակք են կաթողիկոսաց ի տաճարին ի հիւսիսակողմն, մին առ արեւելեան սեամբ ի գլուխ աւազին դասուն, փայտաշէն, պէսպէս գրուագօք և պատկերօք, և չորիւք փոքր կաթողիկէիւք և բոլորչի գմբեթաձեւ ի միջի, կիսով չափ ասկեզօծ, արձանագրեալ. « Շինեցաւ Պատրիարգարանս ի յիշատակ մահուսի » Մինասի որդի Սեդրոսին, և Կարմրակի Նազարի որ» դւոց՝ մահուսի Աւագելին, Մարտիրոսին և Քարտ» Քիանին, և ամենայն զարմից նոցին. Թուին ՌՃՀ· ի հայ» րապետութեան Տեառն Աստուածատրոյ արքեպս կա» թուղիկոսին ամենայն Հայոց, և հոգեարթութեամբ » Տէր Յովհաննէս և Տէր Պետրոս վարդապետաց »։ Միւսն առ արեւմտեան սեամբ ի գլուխ վերին դասուն, յընկուզինոյ, չորիւք սիւնակօք և շրջանաձեւ քանդակօք, և հնգկանաւք կաթուղիկէիւք· գահ որա է չորժամեան աթոռ Թեւսւոր՝ հարուստ քանդակօք։

Բովանդակ ներքին որմունք և առաստաղ տաճարին նկարեալ են յաւուրս Ղուկասու կաթողիկոսի ի ձեռն հարտարին Յովհաննու, պատկերօք Սրբոց և պէսպէս արարիկ գարդուք, ծաղկամիք, հաւոք, և այլն· զոր և յիշատակէ այսպէս կաթողիկոսն յարձանագրութեան խրամ գրչագրէալ ի տարին շրջապատի խորանի մեծի կաթողիկէին·

Ի թուին ՌՃԼԵ· Շնորհիւն Աստուծոյ Տէր Ղուկաս կաթողիկոս վերատին նորոգել եւսւ զխաչատեալ երկուս սիւնս սրբոյ տաճարիս, ապա եւ զբոլոր մէջս տարին որ անչքացեալ էր՝ նորապէս բռնեալ ծաղկեցուցի հանդերձ խոր հրգաւոր պատկերօք, իմն գոյնիք ստացելովք ի յօրհնեալ ժողովրդոց վերոց· ի յիշատակ ինձ եւ իմոցն, ի վայելս ազգի Հայոց եւ միաբանից սրբոյ աթոռոյս· Աղոթ խնդրեմ ի վայելողացդ յիշել զիս յարժանահայց յաղօթս ձեր առ Աստուած· յորմէ եւ դուք յիշեալ լինիք· ամէն։

Կան և ի կաւսի նկարեալ պատկերք Սրբոց, ոչ սակաւք, շատք ի Սահմանսւկ Լինացւոյ և ի Նազարէ Յովնաթանէ· և մին առաքեալ ի Քէր Բորդըր Անգլիացի ուզուսրէ հիւրասիրելոյ Լեփրեմոյ կաթողիկոսէ, յամի 1817, և կիրպասանէ գՔիւսւս՝ արշնելով գմանկանս, և համարի նորին ազնուականի ձեռանկար։

Երիք գրուանք են տաճարին· առաջն յարեւմտից կողմանէ, յորոյ վերայ տեսանք զանգակատունն, երկրորդն այլք ի հիւսիսոյ և ի հարաւոյ, ոչ ինչ կարի հեռի յարեւելս դրանէն· կայ և այլոյ դրան տեղի խցեալ առ սեղանով Ս· Լուսաւորչին, զոր աւանդութեամբ ասեն արքայամուտ դուռն լինել։

Աբտաքին կողմունք կամ երեսք եկեղեցւոյն պարզ և անպաճոյճ են· առ հիմամբքն չորի պատեն սանդաձեւ երիք սասխանք, (որպէս և ի հին եկեղեցիս Շիրակոյ)· ի վերոյ նոցին քարաշար սառոյս պսակն՝ նորոգեալ է ի Ղուկասայ կաթողիկոսէ, որոյ և արձանագրեալ է ըզյիշատակ իւր յարեւելեան հակասսւ անդ·

Օգնականութեամբն Աստուծոյ նորոգեցան ներքնաշարեալ չորս կարգ քարինքս բոլոր որմոց լուսանկար սրբոյ տաճարիս, հոգեարարձութեամբ Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, արդեամբ Ակնայ Աստղեխցի եւ ի Կոստանդնուպոլիս բնակեալ ի Քրիստոս հանգուցեալ մահտեսի Յովհաննէսին եւ այլ ամէն իւրայնոցն· Թուին ՌՄԼԹ։

Դարձեալ, վերագոյն ի վերոյ խաչվիմի միոյ արձանագրեալ է այս բան չափաւ·

Սուրբ Խաչս աստէն արձան դնի
Մինոորդ առ աէրն համայնի,
Վասն Ղուկասու հայրապետի

Սուրբ տաճարիս բաղմախաստի,
Զոր ի ներքուստ եւ արտաքուստ
Շքեղաշուք նորոգողի։

Բազում անգամ նորոգեալ են տարին կողմունք սրմոցն, քանզի և բազում անգամ խանգարեալք, և այն յամախ յաղմուկս մարտից և հնձից, վասն որոյ հնագոյն են վերին կողմունքն· և ի տակս կամսւոր ատերանաց՝ ընկեալ են և հին յիշատակարանքն։

Ընդարձակ բակք քառակուսի որ շուրջ զտաճարսն՝ նախ ապարիսպեցան յաւուրս Յակովբոյ կաթողիկոսի, յամի 1658, արդեամբք Զաքարիայ Վաղարշապատեցւոյ ազատնորդի Յովհաննեսվանից և յոյժ նախանձաւորի չինութեանն Էջմիածնի, որ և մեծաւ խնդութեամբ գրէ ի

յիշատակարանի ուրեք գրոց. « Գիտելեաւ Հօրն գը-
» թածի՝ է Հաճատրեալ գերազարդապէս փառաք միոյս
» միաբանից ըստ հոգւոյ և առնս փափկութեան, հար-
» սն փեսային Քրիստոսի, որպ և Իմման տեղին. ար և
» հարանածու գոլով սմին Տէր ցանկր սրբազան պետս
» ամենայն Հայոց », և այլն։ Եւ ինքն Ջուաքրիա յետ
սակաւուց ատենից սուրբ Էջմիածնի՝ վախճանեալ (յ'30
յունիսի — 10 յլ. 1659) ի նոյն յԷջմիածին, « անդէն թա-

ղեցաւ առաջի զանգակատանն յարեւմտից կուսէ », յի-
րակերպ գերեզմանի, զորոյ և գկափարիչ նշոյեցէս պատ-
րաստեալ էր։ Ցետ ամաց հարիւր և քան եւթանց Ղու-
կաս կաթողիկոս եւս նորոգել զսուրբ սակայսական, և զը-
րեաց արձան յիշատակի՝ ի հիւսիսակողմն ատագ գրանն ։
— Ի հարաւակողմն նորին ատագ գրան արձանագրեալ
կայ յիշատակ Տփղիսեցի կրպակատուր նուիրատուաց,
յամի 1682, զոյս արձնակ.

*Կամաւն Աստուծոյ մեք Թէոփիլոս ամենայն աւետի և դուքանատար խոս-
տացաք տարէնն ամէն դուքան մէկմէկ չարէք մոմ տալ Սուրբ Էջմիածնայ.
եւ միաբանք Սուրբ Աթոռոյս խոստացան հինգ նաւակատեացն զմեզ պաշ-
տամամբ եւ պատարագօք յիշատակել. Ի թուին ՌՃԼԱ., ի հայրապետու-
թեան Տեառն Եղիազարու։*

Առաջի գրանս մեծի և երկաւտէք՝ ի բակի աստ քա-
զեալ են յաւրջն ասպանս՝ կաթողիկոսունք ո-
մանք. որպէս, Աղէքսանդր Ա.[2] և Աղէքսանդր Բ., Դա-
նիէլ, Յովհաննէս Ը., Ներսէս Ե։ Որոց մերձ կայ և շի-
րիմ Մաքոնալտ (John Macdonald) Անգղիացի դեսպա-

նին՝ ի Պարսս, մեռելոյ՝ ի Դաւրէժ՝ յամի 1830, երկար
հաւնգուեան արձանագրութեամբ (անգղիարէն, պարս-
կերէն և յունարէն)։ Իսկ գերեզմանատան միաբանիցն՝
արտաքոյ կայ յկից հարաւոյ վանացն, մերձ՝ ի Պաղա-
բատան։ — Տապանագիր Բ Աղէքսանդրի այս է.

*Քրիստոս որդի Հաւր Միածին Յարքայութիւնդ մոյծ երկնային.
Դատող բնութեանս մարդկային, Որ սրդ հանդեաւ ըստ քում բանին,
Յորժամ փառօք գայցես կրկին՝ Առէն եղաւ մարմին նորին.
Ձիշտս ողորմութեամբ քոյին Հաղար եւ երկերիւր ամին,
Չհայրապետան մեր գհոգելին՝ Զորրորդ եւս ընդ սմս բարգին,
Զաէր Աղէքսանդր Բիւզանդացին. Նոյեմբերի մեռաւ ամսին։
Աւրժանաւոր սրբոյ գնդին,*

114. Ցետ կաթողիկէ եկեղեցւոյն՝ ազնուագոյն տեղի է կաթողիկոսարանն, զոր առաջին շինողքն Պատրիար-քարան կոչեն, այժմուքս վնասրան, և կայ՝ ի հարաւ կոյս արեւմտեան կողման ներքին քառակուսոյ վանացն, յայ-մէ Ջրգաւոյ դրանն. զառաջինն՝ ի նմին կողման՝ այլ՝ ի հիւսիսային մասին չինեալ էր Մովսէսի կաթողիկոսի՝ առաջին նորոգողի Էջմիածնի, ըստ փութոյ ժամանա-կին. յետոյ յաջորդ իւր Փիլիպպոս վարչապետն յօրինեաց

՝ի վերայ ներքնայարկին, որոյ միացուածք ինչ կային և յետ իրր երկերիւր ամաց առ մեզ. իսկ Ղազար կաթո-ղիկոս վերասին չինեաց յայժմեան դիրս, ընդարձակ և չքնազագոյն, առան սենեկաց. ՝ի հարաւային ծայրի կա-մարայարկ մեծ քառակուսի գահիճ իմն գործեալ, որոյ հիւսիսակողմն երեսաքաց պատշգամ է. յաբեւելակողմն՝ գուռն մեծ սեղանատան. ՝ի հարաւակողմն գուռն՝ որ հանէ ՝ի Պաղարատատ, և ՝ի վերայն արձանագրեալ.

*Հաստիչն հանուրց ի ներկայումն զմեզ սիրեաց.
Զաէր Ղազարոս զիւր սիրելին մեզ պարգեւեաց.
Որ զսուրբ Աթոռս տաճիմբ ձեռամբ նորոգեաց,*

1 Կամաւն Աստուծոյ նորոգեցաւ սրբոյ տաճարիս շուրջանակի սակայսատակքն, հոգաբարձութեամբ Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, ճա-խիւք ի Սուրբքան բնակեալ Գաբրիէլեանց բարեպաշտ Յոհաննէսեան Աղային վասն հոգւոյ իւրոյ և իւրայոցն, ոտքն ցակոբին և մօրն Մարիամայ, և նոցին ճնողացն Գեղաք աղային և Թագուհւոյն, Աղամա-լին և Վալիտային, և եղբարցն Աւետիքին, Գերա-քին և Աբրահամին. և քերցն՝ Ագիպին, Թագու-հւոյն և Խանճունին. և կնոջն Կիւլիստանին, և դստերացն Վալիտային և Թիրվանտային, և այլ կենդանեաց և ննջեցելոցն. որոց յիշատակն օրի-նութեամբ եղիցի. ՌՄԼԴ Թուին։

2 Որոյ առաջնագիր է.

Հազար հարիւր կԴ Թուին վախճանեցաւ Տէր Ա-ղեքսանդր կաթողիկոս ամենայն Հայոց, եւ եղաւ յայսմ դամբարանի. միով Տէր ողորմեայիս յիշել զնեզ աղաչէ, ով հանդիպողք բարի։

Եւ հիահրաշ կերտեցելովք յոյժ զարդարեաց.
Եւ ի պատիւ վայելչութեան Մօրըս փառաց
Եւ ի պարծանս մերոց ազգաց Հայոց Մեծաց:

Իսկ յարեւելակողմն գահկէին միւս ևս գաւառ բացաւ, զի ընդ այն ելանիցէ կաթողիկոսն ՚ի հանդիսի աւուրս՝ մըտանել ՚ի սեղանատունն. և ՚ի վերայ այսր դրան արձանագրեալ է յանուն Նորին Ղազարու.

Շնորհօք Աստուծոյ չքնաղ յօրինմամբ՝
Կառուցեալ կանգնեցաւ բազմածախս արդեամբ
Պատրիարգարանս այս գեղեցիկ տեսլեամբ,
Մեծին Ղազարու սրբազան վեհին ձեռամբ. 1490.

որ է 1741 թիւ Քրիստի: Սիմէան կաթողիկոս յաւել և զձմերային բնակարան կաթողիկոսի, ՚ի միջոցի՝ որ ՚ի Դրանէն Տղատայ մինչեւ ցարդն մեծ արեւմտեան սրահին պատին, մեծ և փոքր սենեկօք:

Հիւսիսային մասն արեւմտակողման և բովանդակ հիւսիսակողմն և մասն մի արեւելակողման ներքին պատըսպին՝ երկայարկ բնակարանք են միաբանից, իրրեւ յիսուն սենեկօք - սաղրիճն աւագ սատիճանաւորաց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, և այլոց: Աբեւմտակողման սոյն կից էր չուկայն կամ կրպակքն՝ զոր ՚ի սկզբանդ նշանակեցաք: — Յարեւելեան ծայր հիւսիսակողմանն են բնակարանք սպասաւորաց և այլոց:

Թիւ միաբանիցն աւագաց և կրօնաւոր՝ մերթ յաւելու և մերթ նուազէ. յամին 1687 առ երջանկաբաւ կաթողիկոսիս, յիշատակագիր սմա անդ յԷջմիածին՝ առէ վասն նորա. « Ես Աստուած տացէ սմա յերկար կեանս. զոր » (ի Էջմիածին) վայելչագործ վայելչացոյց, և գեղեցկա- » զարդ պարծանացոյց զսուրբ աթոռս, միաբանիք մինչեւ » աւելի քան զհարիւր յիսուն այր, մեծ և փոքր, սեւա- » գլուխք և եկեղեցւոյ մանկունք »: Են և արդ այսչափ ընդ մեծ և ընդ փոքր հարիւրիւ չափ:

Արեւելեան կոյսն քառակուսւոյ վանացն՝ սեփականեալ է մեծաւ մասամբ յիւսումնարան. նորոգողն Էջմիածնի Մովսէս կաթողիկոս՝ ոչ ասացանոր այլ ՚ի Յովհաննէս վանական յԱթոռն, ոչ գիտեմ յոր կոյսն. և ոչ ասկս բարգաւաճեցին անդ գպրութիւնք լիզուիս և խնամասիրութիւնք յերս ԺԷ և ՚ի սկիզբն ԺԸ գարս. անդ ուսան գՀայկազեան գպրութիւն և Վարդան Քաղնանեան, յետոյ եպիսկոպոս Հայոց ՚ի Լեհս: Յետ կիսոյ գարուն մեծ վերանորոգող տեղւոյն Սիմէան կաթողիկոս՝ չինեաց նոր վարժարանս երկուս՝ ամառան և ձմերան, ՚ի միջի կրկին պարապային՝ ՚ի հիւսիսակողմն, յելից Մանուկան. ուր ուսուցիչ կարգեցաւ անուանի գիտնական եպիսկոպոս սրն Պետրոս Բերիացւոյ կամ Աղուանիանն: Վասն խնամատարութեան տեղւոյն լքաւ վարժատունն սոյն, և փոխադրեցաւ ՚ի սկիզբն գարուս՝ յարեւմտակողմն ՚ի վերնայարկ Դրանն Տղատայ. և յետ ամաց (1813) առ Եփրեմեան կաթողիկոսիս կատարեաց նոր վարժարան յարեւելակողման վանացն, ուր երբեմն կաթողիկոսարանն էր Փիլիպպոսի: Բարգաւառանք մերոյ ժամանակիս պահանջէին բարձրագոյն կամ կանոնագոյն եւս ուսմունս, որպէս և ուսուցիչս. զերկուսեան եւս հոգացեալ երկաւեր կաթողիկոսն Տէր Գէորգ Դ, բազմածախ գանձս իւրով և ազգայնոց սատարութեամբ, հիմնեաց գկուսեցեալն յիւր անուն Գէորգեան Շինարան Հայոցիակ, յայսմ կողման, այլ արտաքոյ, մեծահանդէս նուագակատար առնելով յամի 1874 յամսեան սեպտեմբերի. այլ յետ գրեաթէ ամաց միոյ (՚ի 16-28 հոկտեմբ.) ըստ դիպոյ հաւանիկալ՝ ժամն տասն ծախեաց զմեծ կէս շինուածոյն. զոր խոյզն արիաբար և առատաձեռնօրէն վերաշինեալ, կարգեաց ՚ի նմա գիտնական վարժապետս պէսպէս ուսմանց և լեզուաց, կանոնեալ կարգաւ, աշակերտաց իւր ուխտիցն. ապա ձեռն արկ կառուցանել վասն նոցա և նոր ննջարան և հիւանդանոց բացագոյն ՚ի վարժանոցէն:

Ի հարաւային ծայր արեւելակողմանն՝ անդաւթն առ Մովսիսէ չինեալ էր փառն Հայի, զոր փոխառեալ կայնէն, և նորոգեալ յԱբրահամէ Բ յամի 1731: Ի հարաւոյ նորին Սիմէան կաթողիկոս ևս չինել Հանգրանոց, որ և ցարդ կոչի Օշականոյ ամբար, զի գոյնք գեղջ բերս մերթ ընդ մերթ առնէ: Յետ նորա և Ղուկաս կաթողիկոս յաւել չինել այլ ամբարանոցս արմատից կրկնայարկս, միոյն ներմին յարեւելեան ծայր հարաւակողմանն, առ ինչուիկ առնուանեալ գրամբ, յորոյ կամարի վերայ և արձանագրեաց այսպէս.

Շնորհիւն Աստուծոյ չինեցան կամարակապ դառնս եւ արեւելակողմանն ներքնայարկքս, որք են վից խուցք եւ ի Հանգրանոց բրիւնոյ, հանդերձ կցորդ չինուածովքն. հոգածութեամբ Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, արդեամբք Ջուղայեցի Էմինիազեան Թաչիկ աղային, ի

բարի յիշատակ իւր եւ կենակցին իւրոյ **Մարիամ** *խաթունին, եւ որդւոյն իւրեանց* **Մովսէս աղային**, *եւ այլ ամէն կենդանեաց եւ նոյնիցելոց իւրեանց* **'ի ՌՄԿԴ** *թուին։*

Կից սոցին յարեւելեան մասին Հարաւակողման թէ- ւոյն էր խոնամնոց մեծ, վերաշինեալ 'ի Ղուկասէ կաթո- ղիկոսէ. զի յառաջագոյն յամի 1718 չինեալ էր զայն Աստուածատուր կաթողիկոսի, Տնտեսատուն կոչելով, որ- պէս ցուցանէ արձանագրութիւնն որ 'ի հիւսիսային որմն պատուհան.

ՌՃԿԷ *թուին ես Համատանցի Տէր Աստուածատուր Կաթողիկոս եւոս չինել Տնտեսատունս ի վայելումն Սուրբ Էջմիածնիս միաբանից։*

Այլ ես մեզք տեղի ես խոհանոցն Տպագրատան, որ փո- խագրեցաւ այսր՝ յարեւմտեան կողմանէ պատուհնոյ պարսպին ես ձմերոցամբ կաթողիկոսին, ուր հաստա- տեալն էր 'ի Սիմէոնէ կաթողիկոսէ [1] յամի 1771. ընդ



90. *Գ. Սորց Դ. կաթողիկոս.*

[1] Որոյ էր սրճանագիրս 'ի վերոյ գրեան. Աստուածով հաստատեցաւ Տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիւքն, հոգաբարձութեամբ Տեառն Սիմէոնի սրբազան կա- թողիկոսին երեւանցւոյ, արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտաւն *Դրիգոր Աղային խո- ջայանեան* որ մականուամբ *Ջաքիկենց*. ի յիշատակ իւրեան, եւ իւր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն՝ Միքայէլին եւ Մամ խանթունին, իւր կենակից Մատ- լինային, եւ վաղաժամ Միքայէլ որդւոյն, եւ քերցն Աւամարիային եւ Զիպիտային. հօրեղբարցն՝ Եղիազարին, Սահարին եւ Աղեքսանդրին. պապուն Գրիգորին եւ կենակից Թագուհւոյն, եւ հօրաքեռն Զիժազատային, եւ մեծ պապ Յակոբջանին, եւ հաւր- եղբօր դստերացն՝ Գէկզատային եւ Գիւլնազա- Թին, եւ այլ ամենայն հին եւ նոր նոյնիցելոցն նո-

նոմին և Թղթատուն՝ յամի 1776, գրաւիակ կնիքով Էջմիածին անուամբ։ Նոր Տպագրատունն ջանիւ վերջին կաթողիկոսաց և վարդապետաց՝ բարգաւաճեալ ընծայէ, հանդերձ այլովք ինչ գրովք (յորս նշանակելի է ճաշոցն մեծագիրք) զԱրարատ ամսագիր՝ ի 1869 ամէ և այսր։ Այժմեան կաթողիկոս Տէր Մակար՝ ընդ այլոց նորոգուբիեանց՝ տայ յարդարել և նոր Տպագրատուն։

Զթովանդակ Մատենիս մինչեւ և արեւմտեան մասն հաբատոյին Թուոյ վանացն՝ գրաւեն երկայն Աղանատունք՝ Ալմոսան և Զմերան կոչեցեալք, կիրք յիրեար, ընդարձակութեամբն և քաղաչէն ամրութեամբն նշանաւորք, զի կարեն ընդունել երկերիւր բազմականս. ի վաղուց



31. Ձակատ Թանգարանին Էջմիածնի.

ըմն ։ Այսու պայմանաւ՝ զի ի տարին ե անգամ ի տաւնի Լուսաւորչին եւ Հրեշտակապետացն ի սուրբ Աթոռոջս պատարագ մատչիցի հանդիսաւորութեամբ, յիշելով զնոսա. որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի. ամէն. Թ. ՌՄԻ։

Ի Ղոմի իակ ամի (1771–2) տպագրեցան անդ գիրք քիչ։

իակ կառուցեալ էր Սեղանատունն և յերկուս տրահեալ. զամաթային Սիմէան կաթողիկոս եւս վերստին չհնել կոփածոյ քարամբք. այլ Ղուկաս կաթողիկոս և եւս ընդարձակեաց նորագ չինութեամբ, զսեղանան և գնատունն հանեակ ի մեծահասոյ քարանց յարգարեալ, և յարեւմտեան գլուխն զգաւ կաթողիկոսին՝ ընդ կաթողիկէից ի վերոյ չորից սեանց, որ յետոյ փոխագրեցաւ յարեւելեան ծայրն. միայն ի հանդիսի ատեան բազմի անդ կաթողիկոսն ընդ միաբանից։ Գրունք երկու մեծանեն ասի ի Զմյրան սեղանատունն, զոր նորագնել էր Ալեքսանդրի կաթողիկոսի, խարտեալ քարամբք, և եղեալ արձան յիշատակի ի միջակի օրմոյն ի ներքուստ.

Ի թուին ՌՃԿԲ (1713) եւ Ջուղայեցի Ալէքսանդր կաթողիկոս ամենայն Հայոց չինեցի սեղանատունս ի վայելումն սրբոյ Էջմիածնի միաբանից վասն ձմեռան։

Նոր խանութ է ի հարաւոյ կուսէ ամարան սեղանատանն՝ գրեալք է ի միջամասի հարաւակողման թեւոյն։ Աբընթեր նորին են և Մատանի, Գիլնատան և Մատնատուն. յորոց ամենեցուն վերայ կայ ընդարձակ Ակերտաց կամ Մրեղանց, չինեալ յաւուրս նորին Ղուկասու, յամի 1788, ծախիւք Մարգարայ Թալդարեանց Ջուղայեցւոյ[1]։ Ամբարանոցն կարէ առնել՝ ըստ ասելոյն հաշուի, 3000 խորվար (իշարան), որ է 1,440,000 հազարկրամ։ — Եպիսկոպոսաց սեղանատուն առանձին է յանկեան արեւմտեան և հիւսիսային թեւոց միջի ի հին Շուկայն։

Ի հարաւակողման՝ ի վերոյ ամարային Սեղանատան և Գրանն Ղազարապատի, ոչ հեռի ի կաթողիկոսարանէն, ուր երբեմն համբարանոցն էր եհատմբէք, այժմ յորդարեալ չինեցաւ Գրատունն, մի ի կարեւոր և պատուական մասանց վանաց Էջմիածնի, վասն Ջեռուցիչ մասանէից հայերէն գպրութեանս, որոց՝ առաջին հռիսգոյն հատորոյն է անդ. ի ցուցակին զոր յամի 1863 տպագրեաց Բակոր վարժապետ Կարինեան ի Տփղիս՝ 2340 մատեանք են նշանակեալ, յորս եւս ոչ ամենայն յաւելան։ Ամենայն երասպետք բանասէր ուղեւորք մեծաւ անձկանաք խնդրեալ են տեսանել և քննել զմատեանսն, այլ ասկաւուց հանդիպեալ է տեսութիւնն, և եւս ասկաւուց պիտանի և մտադիր քննութիւն, ըստ յաւուց նորս ինչ և ցանկալի գրուածս նախնեաց գտանելոյ։ Յամի 1837 յընդարձակելն զգրատունն՝ գտաւ տեղին զգրեանն ըստ նիւթոց՝ ի մեսասան դասս, բաս Շահխաթունեան Յուլիանոս։ Յամի 1879 Գէորգ կաթողիկոս եւս յարգարել սենեակ մի յԸնթերցողաց ասացի գրատանն։ Ջուգակից գրատանն գտանի է և Թամգատանն Նորաշէն՝ ի թիկանց արեւելակողման տանցն, որում կից է և Պահարան պատուական սպասուց և նշխարաց սրբոց, և այլ սենեակ մի ի պէս ասոյն Նմանեցաց։ Ի թանգարանի անդ ոչ սակաւ հնութիւնք հաւաքեալ պահին. և որոյ չինուածոյն սկզբիւր է արտաքին հակատ (թիւ. 91)։

առեալ զանուն, յորմէ և վանքն Թեղենեաց, մի՛ ի Հնագունից և հաչակաւորաց՝ պահեցողութեամբ նախնական աւանդութեանդ եկեղեցւոյ մերոյ · վասն որոյ և Շնորհալի հայրապետ մեր Ղևրսէս՝ խնդրեաց և նա բերել անտի զօրէնս Ժամասացութեան, զի զանազանէր կարգ սուգ յայլոցն, մանաւանդ ի կանոնի երեկոյին ժամու աղօթից · և յայս ասաի է՝ զի կարի հին կամ հնագոյ համարէր նա զվանդ · թէպէտ և որչափ աշ գտանեմ յիշատակել առ հնագոյն հեղինակս · և որ գտաքինն ասի զվաշտանայ Գաղթենեցւոյ՝ ի սկիզբն Ը գարու՝ երթալ յաթոռ կամ յաւանձաւորին՝ ի Թեղենիս, որպէս և ի Յովհաննավանս և ի Մաքենոց, աշ ընթեռնումք զայն ի հնագիր վկայաբանութեան նորին, այլ ի Գանձասարան · ծանօթ ինձ հնագոյն յիշատակող է Ասողիկն (Գ · Ե), որ զի աշ ընդ վանորայս հաստատելոյս և պայծառացեալս յառաջին կէս Ժ գարու թէ զա, այլ զանձն մի նշանաւոր յայժ գիտութեամբ և առաքինութեամբ առ իւրս · յիշէ ՝ի նմին, — այն է, « Կիւրա-
» կոս գծծակերպ վիանականն, որ վարուք առաւել քան
» քէ բանիւք վարդապետէր · որ բնակէր յոլովակի յա-
» ւուպահն որ Թեղենիսն կոչի ՝ի Կիպ գաւառի առ Լօր
» երեմիայի հգնաւորի Քրիստոսի և ընկերակցի իմոյ », — յայտ առնէ զի վաղուչէն էր տեղիս այս քան զմիս վանորայն հաստատեալս առ Թագաւորութեամբ Աբասայ, և աշ ըստ նոցին տարազս, այլ ըստ նախնեաց առանձնակեացս, վասն որոյ և անապատ կոչի · և է իսկ փոքր մի յանապատանաւէ վայրի · իբր կիսով մղոնաւ հեռաւ ՝ի Թղուտ գեղջէ յարեւելից կուսէ՝ ՝ի լանջակոյնն լերին, ՝ի վերոյ խորաձորոյ Հրազդան գետոյ · այժմ ՝ի սպառ ամայացեալ · և հազիւ հնոս ինչ Թուղեալ, որմն մի փոքու խաչաձեւ եկեղեցւոյ ՝ի կարմիր քարանց չինեցեալ, որ առ կոթծանեալ ՝ի առաւելութենէ, յամի 1827. այլ արձանագիր կամ այլ ինչ նշան աշ գտաս ամենեւին ՝ի նմա, բայց միայն Ձեացուածք ինչ առանց ՝ի Հր · և ՝ի Մ · եկեղեցւոյն · վասն որոյ արդ լոկ անուն գեղջն երեսխաւորէ անգանար լինել զմնաւանաւնս զոյս Կիպ գաւառի · — Գաւառս Շնորհալւոյն միւսանգամ եւս յիշատակ լինի Թեղենեաց՝ գալստեամբ անդր Նորոց վկային Ցովհաննէսի Դաւնեցւոյ առհիկ ազգաւ, հաստատելոյ ՝ի Քրիստոս, որ գանակած լեալ ՝ի Հարէն, « եւ եկեալ գազա ՝ի Ծնողացն
» գնաց առ Սարգիս ճգնաւորն ՝ի Թեղենիսն · և նա քա-
» ջալերեալ յորդորեաց զնա ՝ի հաստատ Քրիստոսի · և
» ասաց շրջել ընդ վանորայսն · և նա առեալ զազօխս
» արբոյն՝ եկ և գնաց ՝ի Հազրատ » · և գարձ արարեալ ՝ի Դաւին՝ նահատակեցաւ, յամի 1170 : — Ընդօրինակող սմն գրոց գոյնաւ Ժամանակաւ (1178), յայտ տեղւոջ Ծանուցանէ մեզ զանուն եկեղեցւոյն, և զմանց ՝ի միա-

քանիցն · « Գրեցաւ ձեռամբ Թադեոսի և վարդանայ ···
» ՝ի Թառականիս Հայոց ՈԻԼ · ՝ի աւուրս յանապատիս
» Թեղենեաց, ՝ի ՈՀուրբ կաթողիկէ դրանս ··· և տուաք զա-
» հագեստ եղբօր մերոյ Աչտեանց, որ տառապէր առա-
» ջխարհիկ ՝ի գիւտս մակացութեան գրոց » : Եւ այս քաջ յայտ առնէ զի ոչ միայն ազօթից դադարք էին Թեղենիք՝ այլ և գպրութեանց, ըստ չնորհի այնր գաւառս, որ մի ՝ի բարգաւաճելոցն է առ մերայնս : — Սակաւուք զինի, այն է ՝ի սկիզբն ԺԴ գարու ընդ երեւելի վարգապետս ժամանակին և ընդ ժողովեալսն ՝ի Լօռի, վասն ինդրոց Ջաքարիայ Սպասալարի, յիչէ Կիրակոս պատմիչ և « զՍուրբինն [1] ՝ի Թեղենեաց, որ բարեբոյ կարգաւորեաց գվանքն, գամենայն ինչ հաստատակաց լինել » և առանձին ոչ ինչ առանալ » : Ցետ այսր ոչ եւս առնք լսեմ գյիշատակ վանացս, և համարիմ վաղ քան զայլս բազումս ամայացեալ · միայն յետին պատմիչ մեր Ջաքարիա՝ առէ վասն Թակաւորի Դ կաթողիկոսի, ընդ այլս և գտաւանորդս Թեղենեաց գեղջ գնեալ ՝ի տաւյտած սթռազն Լիմիածնի · և այսպէս կոչելով զդիւղն յանուն վանացն և ոչ Թեղուտ՝ յաւելու վաւաս նոյն լինել երկոցուն ·

128 · Միւս գեառին՝ զոր յիշեցաք՝ ընթանալ յարեւմտից կուսէ բարձու լերինն Ջինջիրլի կամ Մխոանձը, զոր մարթ է Բջնոյ լեառն կոչել՝ մինչեւ գոցի սեփական անունն հայկական, խաղալով ընդ խորաձոր՝ ուղղակի իջանէ ՝ի հարաւ ՝ի Հրազդան, անդ ար սա յարեւմտից գառնայ ՝ի հարաւ · ի բարձրաւանդակի աղբերակացն յարեւմտից կողմանէ կան հանգրուանք վրանաբնակ անդեորդաց, և լքեալ կապարանանք, ար ՝ի սկիզբն գաբուս՝ առ իշխանութեամբ Պարսից՝ փոքձեցին հանել · — Ցերի նոցին յարեւմտակողմն ՝ի մօրեւր և առապար վայրի՝ կայ մենաստան մի անծանօթ անայցելու Ճանապարհին · — Սուղ ինչ ՝ի առաբեւ կայ Ալիվրան գիւղ փոքր 15 տամբք այլազգեաց · ոչ րոց են և ՝ի ձախմէ գեառն՝ այն է յարեւելից, յարեւմտեան հարաւային առորոտս լերինն՝ հանգրուանք կամ գեօղավայրք կեսպէր-Ալի ? , Լիլլի-խարապա, Մորրուզ · մերձ ՝ի սաս և Զորուտ՝ ՝ի խորաձոր լեռնամիջի, յորոյ հարաւային լանջս ՝ի գիտակ վայրի՝ կայ աւերակ վանից՝ ՝ի միջի պողտաւս և անպտուղ ծառոց [2], զորս արբուցանէ վտակ ակնաւիկս իջեալ ՝ի բարձանց · Ցեկեղեցւոյնն կոթծանելոց, միջակ մեծութեամբ և երկու մատրամբք առ արեւմուտս, յորմն հիւսիսային՝ որ միայն կանգուն կայ, ՝ի ներքուստ գրեալ կան արձանք, յորս և Թուական սկզբան ԺԴ գարու, 1207. յորոց յայտնի անուն եկեղեցւոյն Ս · Աստուածածնին, չինողն՝ մանաւանդ Քէ նոթոգոյ՝ Սարգիս սմն վարդապետ · [3] Ազգան սորա և միւս

1 Աւագէս գրէ յբեսբր օրինակի · յոյսր՝ Տ···էն՝

2 Յորոց քաղեցաք տալոր, առէ Շահխաթունեան (Բ· 178) ՝ի վերջին աւուրս 1842 ամի ·

3 ը· կամաւն Աստուծոյ մեղաւորս Սարգիս վարդապետ որ առաջնորդ եղէ եւ շինեցի զսուրբ Աստուածածինս, եւ ետու զդրաճ այգին եւ հնձան ի Շէնգաւիթ եւ յերեւ· զիմ բաժինն այգին ի Զիթենիս եւ հնձան ··· շալն գիմ բաժինն· Հայրս եւ եղբարքս· հաստատեցին ի տարին ՌՃԱԼԲ ժամ· ով խափանէ···

ը· կամաւն Աստուծոյ ես Քահանայապետս ? եւ Դասապետս միաբանեցաք ի սուրբ ուխտիս ··· Աշտարա ··· ու այուն ? դրաւք զնծանս շինեցաք եւ այլ ինչս տվաք· եւ միաբանքս հաստատեցին ի տարին ը· պատարագ մեզ· ի Թուիս ՈՈՉ·

արձանն այն՝ որ ՈՒՉԶ թուականաւ է՝ ազատեալք են , բայց անազատս մնայր միւս այս արձանագիր անթուական.

Կամուրջն Աստուծոյ եւ Մեսրոպ երէց գնեցի զՇատրդևանց այգոյն չարէքն, զԱնձրեւին բաժինն ի Խ դահեկան, եւ եառ Սուրբ Աստուածածնիս. եւ սպասաւորքս եառնն Բ պատարագ ի տարւոջն . ով խափանէ իմ մեզացն պարտական է :

Չէ անգէտ, ըստ Շահխաթունեան տեզագրողի՝ հանդիպել զայս տեղիս՝ Ղորաձոր անուանեալն ի Կիրակոսէ պատմչէ, որ ասէ մերձ լինել ի Բջնի, և ի Զաքարիանց կալուած տուեալ Գեղակայ վանաց. այլ զի անսովոր է ի մեզ Ղ տառիս սկզբնատութիւն անուան, հանդիպելի է վրիպել գրչաց, փոխանակ գրելոյ Զորաձոր, նա զի յաբրինակս ինչ պատմչին գրի եւս Շորաձոր: — Վայելչագեղ ձորակիս է և պատշաճաւոր բազմազան բուսաբերութիւն լեռնային, արժանի քննութեան. յորոց յիշէ վերոյիշեալ եպիսկոպոսն տեզագրող՝ զհատուկս Ւրպղիկն Մարիամու կամ զԲրաբիան, և զկոչեցեալն ի Թուրքաց Ջանթափ, որ է գնառատ ծաղիկ ի ծայր երկկանգնեայ բարձր ցօղոյ, և ջրով եռացեալ՝ լինի ազգու գեղ կղզացոյ:

Կիսով փարախաւ ի Հր. Զորաւոյ՝ երկու գիւղք կան՝ Վերին և Յորին Ջելիլէր անուանեալք, մին ի վերոյ գետակին, միւսն յԵլ. Նորին, իբր 20 ոտիք միանգամայն: — Կիսով եւս փարախաւ ի Հր. Ջելիլէր գեղէ ի ձախմէ գետակին և մերձ ի խառնուրդս Նորին ի Հրազդան՝ կայ Ույրպաքան գիւղ մեծ, 35 ոտիք Հայոց, 15 ոտիք Թուրքաց· երկու եկեղեցիք են ի նմին, մին ի միջի գերեզմանաց, յարեւելեան հիւսիսային ծայր գեղջն, խարտեալ քարամբք չինեալ ի վաղուց, և նորոգեալ առ մեզ՝ հասարակ քարամբք և փայտիւ, և Ս. Գէորգ կոչեցեալ. միւսն նորաչէն ի չինամիջին, յանուն Ս. Յովհաննսի: — Խրբեւ քառորդու ժամու ի Հս. գեղջս՝ ի ծործորս լերանց կայ մենաստան մի եւս Ս. Աստուածածնին Նեղուսի կոչեցեալ, զի Նեղուս կոչի աւերակ չինի որ ընդ միջ գեղջն և վանացն. իսկ այժմ յանուն Աստուածընկալ գեղջն է՝ քարաչէն փոքրիկ և անշուք գմբեթաւոր, երկրաւոք մատոյցքն՝ չաքմէ և չահկէ սեզանոյն, և գրամբ յարեւմտից, յոր հանէ ժամատուն ընդարձակ կամարակապ ի վերոյ չորից միաստանի սեանց. յանկիւնս արեւելակողմանն առ ատեանբուն են երկու մատուռք կրկնայարկք. գուռնն յարեւմտեան հարաւային անկեան, որոյ կամար պատրաստեալ քանդակեալ և գոգացեալ յոյնի՝ վայելուչ և հարատար արուեստիւ՝ ունէր արձանագրութիւն, այլ ի խափանելոյ քարանցն ի տապանութենէ՝ որդ անխմաստ մեայ[1]: Կայ և ի վերոյ գրան տապարին արձանագիր թերակտոր 1271 ամի.

Յուսոյն Աստուծոյ ես Հայրապետ միաբանեցա սուրբ ուխտիս եւ եառ ձ... գինն. սորա չնորհեցին ի սուր ժամ ինձ Գորգ... թվ. ՉԻ:

Գան և այլ արձանագիրք նուիրատուաց յարմանս տապարին[2]: — Քարընկէցիս միով ի բացեայ յարեւմտից տաճարին՝ կայ աւերակ մատուռն գեղեցկաչէն, և գեղեցիկ և խաչվէմք անկեալք առ նովաս· ի միում թեզրատ արձանագիրս յորմէ թուի թէ բազում հնութեանց և արձանագրութեանց ակնառելի էր ի տեզոյ տաճ.

Կամակցութեամբ սուրբ եւ արժանաւոր վարդապետի Մարգարէի կանգնեցի:

Իսկ բնակարանք միաբանից ի ապառ աւերեալք են:— Ի հարաւոյ կողմանէ գեղջս կամարջ փայտեայ արկեալ է ի վերոյ գետակին, առ ինչ ի վերոյ խառնըրդոյն ընդ Հրազդանոյ:

Յայս վայր տեզագրեալքս են յերկոսին փոքրիկ ձորաւովիտս, յարեւմտեան մասին վիճակիս. մատիցաք արդ ի բուն ձորաւովիտ Հրազդան գետոյ, կամ յարեւելեան մասն վիճակին:

129. Որպէս յարեւմտակողմն Բջնոյ լերին յայտնեցան կապարահանք, նոյնպէս և ի հիւսիսային արեւելեայ կողման ճանապարհն Պղնձահանից անգործ, և աւերակ բնակութեանց առ նոքաք՝ թերեւս գործաւորաց նոցին, ի ձորամիջի. ընդ որ վտակ մի խաղացեալ յարեւելեան կոյս՝ վարարէ զՀրազդան գետ, հանդէպ Ընտամալ գեղջ Վարաժնաձորոյ, և համարի մի յակղբեաց Նորին: Սակաւուք ի ստորև ի Հր. եղ. Պղնձահանիցն և ի հնաւոյ գետակին՝ յառապար լանջակողմանն լերին՝ կայ հին և լքեալ մենաստան, որոցառեւ անուն բարձրակամար եկեղեցեաւ, չափաւոր մեծութեամբ, զորոյ ստորոտս քանց տանեացն չորջ առեալ պատէ մեծաստաւ արձանագիր վրացի· իսկ ի ստորև զեկեղեցեաւն ածեալ կայ պարիսպ քառակուսի, և անեռակք բնակութեան, այլ ծածկեալ վայրենամոլ թփովք և մացառաւք: Նման իմն է տեղիս հնչակաւոր Պղնձահանիցն Ցաշոյց, անփակաձորեան և գերեզմանի խառնէի Ակթաբէկի, վասն որոյ և արժանի քննութեան չինուածքն և երկիրն, գեղեցիկ

1 Ըստ Շահխաթունեանի, որ ընթերցաւ միայն " Աստուածոյին չնորհեաւ ի յաշխարհակալութեան ,.... :

2 Զորս չէ ընդօրինակեալ վերոյիշեալ քննողն, որպէս է գոչակել, վասն խանգարեալ գոլոյ և ասցա՝ հանդոյն առաջնոցն :

դրիցն և այլեան զանազան բառաբերութեամբն. ուր յառաջի է հմուտ բառագիտաց գտանել նոր ինչ տեսակս ծագմանց, որպիսիք իցեն արդեօք և յիշատակելոցքն ի քննաբէր Շահխաթունեան եպիսկոպոսէ. Զատկար արմատն [1], և յագիլ խոտոց՝ ցօղուն մի չիկագոյն կանգնաչափ բարձր քառարծիլ, ողկուզաձեւ գլխովն ծագկամբ ի գագաթան. տերեւքն զուգաչարք գոյղնովին նմանք տերեւոց ձիթենւոց կամ ուռենւոց, զորս եռացուցեալ ի ջուր՝ առնուն ի կիր արգէս զիէշ, առ ի քրտնիլ. — Մոր կամ էյակիսթի ապխակ և կարմիր. և ի մայրիս ընդ վայրենի ծառոց գտանին և ընկուզենիք, տանձենիք և սոցին նմանիք: Զայսպիսի գերեզկութիւն վայրաց և ըզգուշութիւն ամսոյն նկատել Իւսաց՝ հաստատեալ են անդ հանգրուանս ամսոյն՝ յառնն կատարելոյն, իբրեւ ժամս հանապարհի՝ ի տարին յարեւելից հարաւոյ Պղնձահանիցն, մերձ յակունս վտակին՝ զոր առաջս ունի մի լինել Հրազդանայ:

Ընդ ամենայն ամսոյն հանգրուանաց՝ յարեւելից կուսէ, և առ յիշեցեալ գետակաւն՝ հանդիպ Ընտամալ գիղջ վարաժնանոց, կայ անտանեաւն յայժմուս Տաբաչիչակ (Մողիաձոր) և Ջինիթրի, որ է հաշակաւորն Կեչառուք կամ Կէչառուս Նահանգ մերոց. գետ անհետացեալ և մեռեալ հոսակապ, մի՛ ի պանծալի գետակերպաց Պահչաւանից, որ և պահէ ցորդ ըստ բազդի՝ Նշան ինչ կամ մնան ի նախկին բազմապատիկ շնորհացն, այս ինքն պէսպէս սրբազան չինուածոց: — Անծանօթ է ծագումն անուան և սկիզբն բնակութեան տեզոյն, և ոչ յիշի յառաջ քան զԺԱ. դար. յորոյ ի սկզբան՝ ի բարգաւաճագոյն ժամանակի տոհմին Պահլաւունեաց, (որք յԱբի և ի Շիրակ ոչ սակաւ հոյակապ եկեղեցիս և վանորայս կանգնեցին), յոլովս և յայսմ վիճակի ի սեփհական կալուածի և ի նստոյտ իւրեանց. ի նմին տոհմէ էր, այլ յանուագ չառաւիղէ՝ և Ապիրատ որդի Հասանայ [2], զորմէ «ասէն (ըստ Վարդանայ, կգ) » յանդնդանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձե» ռասն՝ մինչ լինէր աէր երկոտասան հազար հեծելոց. » որ և չինեաց գաւրս ուխտն Կեչառաց», ի գիտակ վայրի լանջակոյտիան լերանց յարեւմտից, որք ի Հա. և ի Հր. պատին զնովսս, խառնարշեալ յարեւելից կուսէ ի Հրազդան գետ: Գլխաւոր եկեղեցեացն՝ յանուն Ս. Գրիգորի չոփաւոր քառակուսի ձեւով, իբր 24 Զ. ընդ երկայնն և 13 ընդ լայն [3], ամենայն մեստամբ կանգնած կայր յամին 1827, յորում (յամենայն նոյեմբերի) ի առաւաւտինէ երկրի անկաւ գմբէթն գերաւնակ՝ ամենաձեալ երթեալ առանց սեան կամարնաձեւ կամարաց. գմբեթաւոր է և վայելչակերտ և ժամատունն քառակուսի հաւասարակողմ իբր 18 Զ. ամբարձեալ ի վերոյ չորից միջատանի սեանց. բայ ի միջնադրանէն է տաճարն գոան և ի հարաւոյ կողմանէ, յորոյ վերոյ արձանագրեալ է բանս այս.

ՆԶՐ Թ. Հ(այոց) ի թագաւորութեան Գագկայ եւ ի հայրապետութեան Տեառն Սարգսի եւ Գրիգոր Մագիստռոս որդի Հասանայ չինեցի զեկեղեցիս ի բարեխաւսութիւն եւ իմ պատրոնին եւ իմ որդեացն. որք ընթերցանք զիս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ:

Պատմիչք (Վարդան և Մխիթար Այրիվանեցի) ասեն Ապիրատայ չինեալ գաւրս ուխտն Կեչառաւս, այլ ոչ յայտնապէս ասեն զեկեղեցւոյն. իսկ երկրորդ պատմիչն ի յիշելն յետոյ յամի 1044 զքահանայութիւնն զԳրիգոր Մագիստրոս յաւելու. » Որ չինեաց զեկեղեցին Կեչա» ռւաց. ապ է որդին Հայոց Վասակայ չինողին Բջնի» նոյ». ըստ այսմ ապ Հասանայ եկեղեցւոյս և ամս կարծիս արձանագ. սակայն Հարկ է սխալ լինել կամ թուականիդ կամ գրուածոյն, զի ի ՆԶՐ 1033 թուին թագաւորն Հայոց էր Յովհան-Սմբատ, և կաթողիկոս՝ Պետրոս, և ծանօթն Գր. Մագիստրոս՝ ոչ է Հասանայ որդի՝ այլ Վասակայ. ապա թուի ինձ ևթէ թուականդ սխալ ՆՈՐ (1003), յորում ժամանակի կէին որդւոցն թագաւորն Գագիկ (Ա) և Սարգիս (Ա) կաթողիկոս. իսկ Գրիգոր որդի Հասանայ կամ նոյն ինքն Ապիրատն է՝ իբրու կրկին անելով անուանս, ըստ այնր ժամանակի սովորութեան, այն զի և թոռն իւր Գրիգոր կոչի, կամ թէ եղբայր իւր իցէ, և ինքն՝ Պատրոնն յիշեալ ի նմանէ, իսկ ծանօթ հեղինակն Գրիգոր Մագիստրոս է յիշեալն յ'երկար արձանագրի՝ ի ներքոյ պատուհանաց Հարաւային սրմոյ ժամատանն, յորում յիշէ գՀասան, այլ չասէ Հայր իւր. և կարեւոր է գրուածն, որ է այս ինձ.

1 Զոովէր կամ Զոովէր կոչի ի Բիւկպատս մեր՝ Zedoar, և բացարի Ես լինել արմատ կամ ասկ խոտոյ, որ արտերայ չրով լինի ծխատեզոյն կամ մանուշակագոյն, և ունի կարմիր, և սեփական է Հնդկաց և Ճինաց: Բայց յատկաբս բժշկապատ մի մեր (Ակիրատվաթ). « Գիտացեր, եղբայր, որ բոյս մի կայ և իր անուն Քուրք » բառով փիլոսոփոսն սկսէն ասեն. և ինքն ի չիրատկն կու բուսանի, » և ի գարս տեղեր այլ կու բուսանի. ծագիկն սպիտակ է և անու» շահոտ, և մանր է, և տերեւն այլ մանր է և քիչ է. և ասկն անո» ւոր ի սոս կու նմանի, և այլ մեծ, և մէկմէկի կից է բարակ մազ» մզիկով. և մէջն կարմիրժոս է, և ի գրսի գիէն կեղեւն սեւ է և սպինդ. և քան զսոան մեծ կու լինի իր բոլոր, և փոքր այլ կու լինի իր բոլոր կապտագոյս գեղս Ընդալոյն-սովսոյ կ'սանն. և ասոր են Քէ ինչ քրէ Զոովէրն ասրիալ է. և զհամարիան զգործն ասի՝ ինչն ի Հասանայ երկիր կու բուսանի, որ է Պասրայ ոստիարն, և ի Մա» կենդոնիա, և ի Կ. Պոլսին եկերքն և ի թուրքն, և ի Սեւ ծո» վան եկերքն: Եւ Ասքլուպիոն և բժիշկն, Քէ նա պահասաւոր » (խանարհ) ծառայ գտայ գինքն ի յայն տեղատեղին, և ի գործ » շատ տրկի, որպէս Հնդի Զոովարն. և ի յայն տեղն (և գտաի) » որ Հասանի Թեզլոսկ'սան: փառք Աստուծոյ: Թեզկապն է Դեր» ճոս (Dercos) ասան ի Քուսմիկ: — Ըստ սրաքացի անուան (Մա» հու-փոթվի) Թոսի լոսնի կոչի և ի մեզ Զոովարն. որ բուս նկարագրի բժշկապետին մերոյ՝ ի գէզ է Քէ իցէ ըստ բուսաբանից Curcuma Zedoaria, նոյն և գանազն ասատեսր յերկրի մերում՝ ի սահմանս Կեչառաւից:

2 Ապիրատայ որդի էր Վասակ, փեսայ Գրիգորի Մագիստրոսի, և Վասակայ որդիք՝ Գրիգոր և Բարսեղ կաթողիկոս, յիչ ժԲ գլուխ:

3 Չափն · 8, 50 ասժէն Քառասուն ասէ Գրառէ: (Ասժէն 2, 15 Զ.):

Ի հինգհարիւրերորդի ամի թուականութեանս Թորգոմեան ի թագաւորութեան սորը եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեա Մաւնուսախին բերաւ ոսկի մատանիս, զոր հզաւրին եւ առաքինոյն բարեպաշտին Գրիգորի Մագիստռոսին Կիսաւնաին եւ Տուկին Վասպուրականի եւ Տարաւնս Աղշակունոյն եւ Հայկազնոյն, մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծ եւ զհռչակաւոր եկեղեցիքս իւր. եւ ոչ այլ ինչ հայցէ բայց միայն ազատիս առնել սորը եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեայ, ընդ նմին ծառային Քրիստոսի Գրիգորոյ եւ որդւոց իւրոց. եւ յիշատակ կարգեալ յեկեղեցիքս Կեչառուաց. ուր Մագիստռոս կենդանի է՝ ամենայն չարաթէ սուր պժաւին Հասանայ արասցին անխափան եւ յետ երիցն Մագիստռոսին արասցին անխափան: Արդ որ որ այսմ վճռի հասուսանոյ խափանել չանայ թէ յաւաշնորդաց որ իցէ կամ յիշխանաց կամ ի քահանայից, այնպիսին Յ եւ ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի եւ բաժինն ընդ Յուդայի եղիցի եւ ընդ սիրասպան քահանայիցն: Եւ այս գիր մեր է Յովաննիսի շնորհիւն Աստուծոյ Բջնոյ եպիսկոպոսիս եւ սորը եւ մեծի հաւր Բարսղիս է. թէ որ այս գրոյս խափանել չանայ, այնպիսին նզովս չարաչարս ընկալցի ի Սրբոյ Լուսաւորչէն Գրիգորոյ եւ յամենայն Սրբոց եւ ի մէնջ. Կատարիչք գրոյս աւրհնեալ եղիցի(ն)...:

Որպէս՝ ի գիմոյ բանիցն երեւի, արձանագիրդ ոչ ուղղակի՝ ի Մագիստռոսէ գրեալ է, այլ՝ ի համար Նորին. սակայն ակն ունելի է գոանել և գինքնագիր կամ գինքնագէմ Նորին յիշատակագրութիւն. և ահա տեսրինակ իմն բազմիւ՝ յանանկնակ տեղոջ, ՝ի գիւանս Հաւատատփեաց Ժողովոյն Հաւմնոյ, գտեալ է խաղերէն Թորգոմեան Նահապետին արձանին, նման իմն նախագրելոյն, ոչ գիտեմ հիմք և սյր Թարգմանեալ. զոր ՝ի փոխադրութենան գիւտնացն առ Ա. Նարսէսեան ՝ի Բարիզ, գտեալ հայագիտին Սէն Մարդէնի՝ յետոյ է յիւր Ճիշատակարանս Հայոց (Բ. 287). զոյդ յօտարացեալ Թարգմանութենէ անտի (խաղանէ) յետոյմք տատեսր ՝ի բնիկ մեր բարբառ, յաւելով գի կամ Թարգմանն խաղացի կամ Սէն Մարդէն ՝ի բաց Թողեալ է գանազան 25 գիւղից զոր յիշէ արձանն՝ տատեալ ՝ի կալուածս վանացն. « Ի Ե Թուականին (1051)
» ՝ի ժամանակս Կոստանդեայ Մոնոմախի Թագաւորի
» Հայոց (Յունաց) Գուքաս վասպուրականի[1] (և տէր)
» գաւառիս Ծաղկոտից, ես Գրիգոր Մագիստրոս որդի
» Վասակայ, հրամանաւ և հրամանաւ վերոյգրեալ
» ցեալ Թագաւորիս՝ հիմնադրեալ չինեցի զեկեղեցիս ՝ի
» տեղւոջն որ կոչի Կեչառուաց[2], ՝ի նախագոյեալ գաւա-
» ռի Ծաղկոտից, հանդերձ մատրամբս և նուիրեցի զտա-
» ճարս և զեկեղեցիս՝ յանուն Սրբոյն Գրիգորի Լուսա-
» ւորչի մերոյ. և զարդարեցի զսա պատուական արծաթեղէ-
» նօք և ոսկեղինօք, գրօք և պլուզք պիտոյիք, որպէս
» վայել էր տաճարիս. Գարձեալ եւաս եկեղեցւոյս գեղոյս
» երկուս և սպղի մի. — (Եւ) մեք շնորհիւն Աստուծոյ և-
» պիսկոպոսութեան Բջնոյ Վանական և Համամաւար[3],
» ահմանեցաք և հաստատեցաք ՝ի Թեմ և կալուած վա-
» րդրեալ եկեղեցւոյս՝ գեղոյ գոան և հինդ և գաղաք
» մի, որք են Բաժան[4], Շակոթ (?)[5], և այլն: Եւ հաս-
» տատեցաք զվճիռս մերով ձեռնադրեալս և կնքեալս: Արդ
» եթէ որ յետ մեր կամ յեկեղեցականաց կամ յաշխար-
» հականաց իշխեսցէ հակառակ կալ վճռոյս մերոյ, նը-
» գոյս առցէ ՝ի Սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ և
» ՃԺԸ Հայրապետացն Նիկիոյ Ժողովոյն, և մնան և բա-
» ժին նորա ընդ Յուդայի մատնչի և ընդ խաչահանաց-
» ցըն Քրիստոսի եղիցի. իսկ որ հաստատուն պահէ՝
» աւրհնեալ եղիցի ՝ի Տեառնէ Աստուծոյ »: Կարգեցք ՝ի
տորեւ և գիտալական այն Թարգմանութիւն[6]:

1 Խալիբէնն գկոստանդին կոչէր Թէ յաւելանել և գուքա վասպուրականի:

2 Խալիբէնն՝ Կեչառիս:

3 Անհանաթ անուն, լմի տրեք Հանավար:

4 Թէ Բաժիկան յիշեալ ՝ի անդագրութենան՝ յէջ 256:

5 Միայ հանարիմք գդրեալն խալիբէն Շոկոթն, որ յիչեցուցանէ գՇոգոթ-ցն անուն:

6 L'anno 500, in tempo di Costantino Mon(om)aco re d'Armenia e del duca di Vaspuracano, nella provincia di Zachunuc, io Gregorio Magistro, figlio di Vasacha, pigliando il Privilegio e licenza dal sopradetto re, ho fondato e costrutto una chiesa in luogo detto *Checcianer*, nella provincia sopradetta di Zachunuc e questo oratorio; ho dedicato questo tempio e chiesa al nostro Illuminatore S. Gregorio; e l'ho ornato di paramenti d'argento, oro, libri, e d'altre cose necessarie, che aspettavano al detto tempio: e di piu ho donato alla detta chiesa due ville e una vigna. — Noi per Dio grazia vescovi Picinense, *Vanacan* e *Hamavar*, habbiamo dec-

Եթէ յարձանացդ՝ երկոցուն տանց Պահլաւունեանց տեփական լինել տեսցուս, զի գարձեալ որդին Վասակայ և Աղբրատայ Քաջն Գրիգոր՝ նահատակեալն ի Կազզուան, ասա բերեալ Թաղեցաւ, յելս ԺԱ. գարու։

Են և այլ քանի մնչ արձանագիրք եկեղեցւոյս, յորս հետգոյն յետ նախագրելոցն՝ (թէպէտ և քառականն անկեալ), է յելս կոյս ԺԲ գարու, որպէս գուշակի յանուանց կաթողիկոսացն և թագաւորին Վրաց.

. . . . . Թուականութեանս Հայոց ի հայրապետութեան Տեառն Գրիգորիս եւ ի թագաւորութեանն Վրաց Գէորգէ եւ մերոյ իշխանին (. . .) ես Հայր Պետրոս եւ եղբայր իմ Տէր Յովսէփ եւ Սարգիս կրաւնաւոր եւ միաբանք ուխտս հաստատեցաք Ստեփաննոսի Աղուանից կաթուղիկոսի ի տարին ՀՔԲ[ի]ատոս (պատարագել) ի տանէ առաքելոցն Դաւթի, ? Պետրոսի, Յովհաննու ամէն եկեղեցիքս. Եթէ որ խափանէ ՅԺԲիցն նզովեալ եղիցի (1). . . :

Կաթողիկոսդ Գրիգորիս՝ Տզոյն է, և Ստեփաննոս Աղուանից այն է՝ որ զգուեալ ի Պարսից՝ «սպոր անգր » կացեալ լինէր, ըստ պատմչին Կիրակոսի, մինչեւ մե» ռաւ» : — Իսկ Հայրն Պետրոս որիշ և երիցագոյն է քան զՀամամանեան՝ որ յայլ արձանս յիշի, որպէս փոքր մի յետոյ տեսցի յայտնագոյն[2]: — Ի վերոյ միոյ ի լուսամուխ ժամատանն՝ արձանագրէ Վաչուտեանն Վաչէ յամի 1213 (տես յէջ 253).

Ի ՈԿԲ թու. Կամաւն Աստուծոյ ես Վաչէ որդի Սարգսի որդւոյ Վաչուտի եւ ամուսին իմ Մամախաթուն եւ որդիքն իմ Գուրգս եւ Վաչուտ միաբանեցաք ի սուրբ ուխտս Կեչառուս եւ տուաք ի գանձագին գեղն մեր Շէնգաւիթ՝ այգի . . . սպասք եկեղեցւոյ. եւ Տէր Գրիգորիս եւ Գրիգոր վարդապետ (սահմանեցին) զԹառզարդարն ինձ Վաչէի եւ զՂազարոյն Մամախաթունին եւ զՆոր կիւրակէն Գրգին ամէն եկեղեցիքս. եւ ով առաջնորդ (որ լինի) զսէրն առնէ Նոր կիրակէին անխափան :

Ի վերոյ արձանեան գրան ժամատանն արտաքուստ արձանագրէ յամի 1244 Գուրգ սին, ոչ յագգէ Վաչու- տեանց, այլ յայլմէ անծանօթէ, և որպէս ասէ՝ որդի Կախայրերի, կրօնաւորեալ ի Կեչառուս.

Ի թու. ՈՂԳ. Կամաւն Աստուծոյ ես Գուրգս որդի Կախայրերին զմտաւածի ի սէրն Աստուծոյ եւ եկի ի սուրբ ուխտս ի Կեչառուս եւ կրաւնաւորեցայ ի գրան Սուրբ Լուսաւորչիս, եւ անուանեցայ Յովհաննէս, եւ տարի պահարան Սուրբ Յովհաննիսի . . . անիս, որք ընթեռնոյք յիշէք յաղաւթս . . . :

Յանկալի էր գիտել զինչ էր պահարանն և ուր Ս. Յովհաննէս: Այժ եկեալ են և եպիսկոպոսանք Աղթամայ Սար- գիս և Վրթանէս, Թերեւս ընդ կաթողիկոսին իւրեանց Ստեփաննոսի գաղթեալք, զի պակասէ թուականն.

Աւգնութեամբն Աստուծոյ մեր Մարտասյ եպիսկոպոսներս Տէր Սարգիս եւ Տէր Վրթանէս միաբանեցաք Կեչառուսայ Սուրբ Լուսաւորչիս եւ տվաք ի մեր հալալ արդեանց Մ դահեկան յառաջնորդութեան Մես: Վդ. Վդերս եւ

retato e costituito per la sopradetta chiesa possessioni per entrata 25 ville e una città: le quali sono queste: *Puschan*, *Schaeaten*, etc. Habbiamo confermato il nostro decreto di nostra propria mano e nostri sigili. Se alcun uomo pel l'avenire, tanto ecclesiastico quanto secolare, averà l'ardire di distruere il nostro decreto, riceva la maledittione dal nostro S. Illuminatore Gregorio e da 318 vescovi del Concilio Niceuse, e sia fatto partecipe e compagno con Giuda traditore e delli crucifissori del Nostro Signor Giesu Christo. Chi poi servirà il detto nostro decreto, sia benedetto dal nostro Signore Iddio.

1 ի սարկ սպոր արձանի կոպ միւս եւս անթուական:

Ես Միմէաեան քահանայ գնացի (?) յեկեղեցիս որ առնեն ինձ ի տարին ՌՔԲ ամ. որ խափանէ դատի ՅԱստուծոյ.

2 Շահխաթունեանն ոչ հանուչէ զերիցագոյնն Պետրոս:

միաբանքս ընկալաք · Ձ ի Չաղացն անցուցաք, Ձ (ի) ժամատունն. սահմանեցաք ամեն ամի Զ աւր պատարագ ի տաւնի Ընտանեկիսի եւ Վ֊ի (Վ֊րիանիսի)։ Գրգգ (՝) Վ֊ի(?) · որ խափանէ նոցա մեղացն պարտական է · Կատարիչք աւրհնին Աստուծոյ։

Ի վերոյ կամարի միոյ՝ ի ժամատանն՝ արձանագրեալ է յամի 1248 պայազատ մի յերեւելի տանէմից ժամանակին, յիչխանաց Վերին Խաչենոյ, յորոց՝ որպէս տեսայ և ՚ի տօրեւդ՚ եղեալ եկին ամենք և ընակեցան յայսմ վիճակի, որպէս է գուշակել և ՚ի բանէս, քան օրինակի մերձաւորաց իւրեանց նախայիչեալ եկացն յԱղուանից։

Ակնուխեամբն ամենասուրբ Երրորդուխեան . . . (ես) Հասան որդի Վախխանգայ որդւոյ մեծին Հասանայ տէր Խոյախան բերդոյ Խաչենոյ եւ ամուսին իմ Մամբան դուստր Բալայ Թագաւորին, միաբանեցաք մեծ եւ հռչակաւոր սուրբ ուխտիս Կեչառուաց եւ . . . յաւերման Նիտոզայ բազում գանձիւք . . . . նորոգեցաք . . . թվին ՈՂԷ, յառաջնորդուխեան Մխիթար (՚) վրդ · Դէ · վարդապետիս եւ այլ միաբանքս ընկալան եւ սահմանեցին մեզ Բ աւր պատարագ ամէն եկեղեցիքս · զաւագ Զատիկն ինձ եւ Գչաբաթ աւրն Մամպռանայ · Կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ · իսկ որ խափանէ ի մերոց կամ յաւտարաց կամ յիչխանաց եւ յառաջնորդաց՝ մեր մեղացըս պարտական է եւ ՅԺԲ հայրապետացն նզոված է · Կատարիչքն աւրհ։

Են և այլ ոչ սակաւ արձանագիրք ՚ի ժամատան անդ, այլ զի կիսեղծք էին, զանց արար գնորգք ընդօրինակողն [3]. վերջին ընդօրինակեալն Թուականաւ է յամին 1272, ՚ի Ներքոյ արձանին Վչխէի Վչխատանց, յորում յիչէ Ս · Նշան և առաջնորդն Աթանաս [4]։ — Հուպ ՚ի Հարաւային որմն ատենդատան տաճարի Ս · Լուսաւորչին, և անդր քան զերկոսին մնացեալս փոքրկուն՝ կայ մնատուն մի մեծագոյն գմբեթաւոր, իբրեւ չորս Զ · ընդ երկայն, և գրեաթէ նոյնչափ և ընդ լայնն, արձանագրաւ Վչխէի յամի 1223, ՚ի վերոյ արեւմտեան դրանն ·

Յիշեսջիք յաղաւթս զաստուածասէր Պարոն զՎչէ որ նորոգեաց վերըստին զեկեղեցիս · Թիւն ՈՀԲ էր։

Ա֊յլ հնագոյն եւս արձանագիր երեւանեցաւ ապրանի մեծատան՝ նշանակի ՚ի հիւսիսակողմն փոքու եկեղեցւոյս, իբրու ՈՇԳ Թուականաւ (1204), այլ ես կարծեմ ՈՉԳ գրեալ և այնպէս ընթանալի էր, 1234 ·

Ի ՈՇԳ · Կամաւ բարերարին Աստուծոյ ես Վարդ ըմբել՞ որ նորոգեցի ի յԵրեւան զՄեղիտոնոյ էգոյն չարեկն եւ եռաւ ի սուրբ Գրիգորս. Սպասաւորք սորա աւանդեցին տարին Բ ժամ. Որ խափանէ իմ մեղացս տէր է առաջի Աստուծոյ · ամէն։

Սորին պոր արձանագրոյի Թոխ տաբագրեալ և զիւս զոյս արձան անթուական ·

Կամաւն Աստուծոյ ես Պատրոն Վարդ Երեւանոյ եռաւ զիմ հայրենի այգին որ Զուիկա կոչի ի Հայր Պետրոս, եւ արարի ինձ որդի · եւ ես Հայր Պետրոս եռաւ ի սուրբ Լուսաւորիչս, որ առնեն ի տարին Ը ժամ. Դ. Վար֊

1 Թերեւս Գրէդ֊ջէ֊է · իսկ միւսն (Վ֊ի) իցէ Յուսկան ·

2 Թուի յառաջնորդութեան Մխիթարայ և Վարդան և Գէորգ գիտաւոր վարդապետաց գրեալ ·

3 Մի յայնցանէ էր Աորգոյ ուրուք յաւուրս Նէրսէհ առաջնորդի ասեմն ·

4 Թուին մերոյ ՉԻԳ · Կամաւն Աստուծոյ ես Վիրապաշտի միաբանեցայ Սրբոյ Նշանիս յառաջնորդութեան Տէառն Աթանասի, եւ տվի ի հալալ արդեանց իմոց · եւ եռուն ինձ Դ աւր ժամ ի տաւնի Աստուածնոյ · Կատարիչք աւրինին ի Քրիստոսէ ·

դին, Դ Աննարին. Որ հակառ կայ կամ այգոյն կամ ժամին ՅԺԲիցն եւ յայս Արբոյս նզովեալ եղիցի:

Միւս եւս արձանագիր գոյ անթառական, յորում յիշին առաջնորդն Համազասպ և վարդապետք ոմանք, այլ խանդաթ է և թերատ[1].

Սակաւ քայլիւք սարակաց յեկեղեցւոյս Լուսաւորչի ՚ի հարաւոյ կուսէ՝ միւս եւս եկեղեցի է փոքր, իբր 13 Զ. երկայն, 9 լայն. անախուն գմբեթաւոր և վայելչագեղ յոյժ, կանգնեալ յառաջին քառորդի ԺԴ դարու, ՚ի վասակայ հօրէ քաջին Պռոշի, որպէս ցուցանէ արձանագիրն որ ՚ի վերոյ արեւմտեան դրանն, յորում համաշխ և անուն եկեղեցւոյն լինել Ս. Կարապետի.

Եւ վասակ որդի Խաղբակա չինեցի զտուրբ Կարապետիկս յաւգնութիւն կենաց իմ պատրոնացն Իսանէ Աթաբակի եւ արեան հարազատի իւրոյ Շահանշահի եւ Աւագին եւ իւր մաւրն պատրոն Խոշաբին եւ իմ եղբարցն եւ որդեացն յարեւչատութիւն, ինձ եւ ամուսնոյ իմոյ Մամային մեղաց թողութիւն. Որք երկրպագէք յիշեսջիք ի Քրիստոս աղաչեմ. Գրիս ընծա Ա. լաւ չինակ(ա)ն Ա. տուն ի Նորաշէնքն երեսս եւ Ա. ի Կարենիսն:

Միւս եւս երկաթաթան արձանագիր կայր ՚ի հարաւային արմն եկեղեցւոյս, այլ զի քարինք ինչ ՚ի չարածոյն անկեալ էին, զանց արար քննողն ընդօրինակել և ըստացեալն:

Յարեւմտից երեցուն յիշեցելոցս եկեղեցեաց քարընկեցիկ տարակաց կոյ չորրորդ մի գեղեցկագեղ և անվթար ստացեալ մատուռն փոքր, որոյ ժայր կաթուղիկէիւ և ժամատեղ, և կոչի Ս. Յարութիւն, ՚ի յիշատակ մեռելոց չինեալ, քանզի ՚ի միջի գերեզմանաց կայ, և ունի արձանագիր 1220 թուականաւ.

Թիւ ՈԿԹ. Շինեցաւ Սուրբ Յարութիւնս առ ի յիշատակ համարիչն ննջեցելոց ի Քրիստոս, եւ ծնողաց իւրոց Հասանայ եւ Ռուզուքանայ եւ զաւակաց . . . Արձանս ապրհնութեան սիրոյն որ առ Աստուած եւ առ Սուրբս նորա. ամէն:

— Ըղձալի է գիւս անուան չինողին և գրողի գեղեցիկ յիշատակարանիս, որ ըստ յառաջ իսկ Յարութիւնանն՝ յաւերժացեալ մնայ անխափան:


Այս քառեակ եկեղեցիք են մեծ և փոքր որ մեռ առաւել կամ նուազ չէնք, որոց կոչումն յայս է գլխաւորին և առաջնոյն Ս. Գրիգոր կամ Ս. Լուսաւորիչ, երկրորդին Ս. Կարապետիկ, չորրորդին Ս. Յարութիւն. իսկ երկրորդին ոչ նշանակի յիւր արձանս, այլ Թուխ Սուրբ Նշան՝ յիշեալն ՚ի վերինսւմ արձանագրի մեծի եկեղեցւոյն յամի 1272: Զսա յայտնանէ յարձանագրի Գրգի կրօնաւորեցելոյ՝ յիշի և Ս. Յովհաննիս, որում սրտր նա պահպանի, որ թէ և նչխարաց Արբոյն Յակոբայ համբեաց՝ տայ գուշակել գէթ և զառանձնակ մատուռն նորին, այն զի վկայի և այսուա, որպէս տեսցի ընդ հուպ.

— Քիւսակագիր ոմն կնշառեցի (փիլիպպոս երէց որդի տեառն Յահակայ) յամի 1641, յիշէ ընդ երից եկեղեցեացն « Ս. Լուսաւորչին և Ս. Նշանին և Ս. Յարու- » թեան (միւս եւս) և Ս. Հռիփսիմին, ուր է հանգա- » ցեալ Պռոշ իշխանն »: Սակաւ ամբ գնի՝ վանանդե-

1 Կամաւն Աստուծոյ ես Մխիթարիչ որդի Գրիգորի եռու գիմ ակն ... այգին յերանելի սուրբ ուխտս կեչառուս, հրամանաւ Տեառն Գրիգորիսի եւ Գրիգոր վարդապետացն *, եւ յառաջնորդութեան Համազասպ (....) գրեցաւ ժամանակն (?). Ե-

ինձ Մխիթարչիս, Գ. Տիկնակոկորին եւ Տեառն Գրիգորոյ մամայ: Հաստատ է գիրս կամաւն Աստուծոյ. Ով խափանէ՝ է մեղացս տէր առաջի Քրիստոսի»

* Գրիգորիս և Գրիգոր վարդապետք յիշեալքն յէջ 261.



103. Եկեղեցիք Կէյառուց


յետին ապիւն ծանուցանելով գի ընդ բնաւ քառասուն տեղիք կամ խորանք պատարագի էին ի Կէյառուս. յորոց ևթէ ոմանք ի միում եկեղեցւոջ էին յատանձնակ մատուռնան կամ յատեղատունս, հարկ է թէ գոյին և այլ առանձնակ սրբարանք, և ի կէս ձէն դարուն յայտնիք, գէթ անուամբ. և ցարդ երեքին բազում չինուածոց ատերակք, է որ սրբատաշ վիմաք և է որ աղնդապէս, հանդերձ բնակարանաք միանձանցն, և հիմամբք շրջափակ պարսպի նոցին՝ յարեւելից կուսէ այժմեան եկեղեցեացն. նշմարին և արեւմտակողմեան արմացն հիմունք, և յայսմէնէ գիրեգմանաց գնդեք, մեծամեծ խաչարձանաք. այլ շատք անկեալք և կիսաթաղք, և կէաք մանաւանդ՝ քարգեանեն զարձանագիրն, և այլք խորտակեալք և ցրուեալք. նշանաւորքն ի նոցանէ են ի քիկանց խորանի մեծի եկեղեցւոյն. յորոց մին է քառակուսի սեղանաձեւ, տապան անգիր, և խաչվէմ բարձր ի վերոյ սեղանոյն՝ ի տապան ունելով գոյս գիր.

Զվեցիկ վարդապետս յաղագս յիշատակի ի Վրիաստս ազգէն։

Ոմանք և այլ երկար գրուած յարեւելեան դիմի խաչին՝ այլ մանաւանդ անվերծանելի Հայոցեալ, զոր՝ ի շնորհս վայելուչ կերպաւորման՝ արժան էր խնամով մաքրել և քննել զգիրն և գժամանակն, գի ոչ աննշան ոք քարի է գեալ Վեցիկդ՝ այդ վարդապետս։ — Աղբիւրք նմին՝ ի հարաւոյ կուսէ կոյ այլ գամբարան մեծ, որոյ նոյնպէս անվերծանելի Հայոց արձանագիրք, այլ քառականն յայտնի. « Թիւ ՈԿԹ », 1220։ Իշրջափակի անդ մնացասացն երեւի և հին ուրագան մեծ՝ յոր ագուցեալք գոյր ջուր՝ ի ձորակէն, ի պէտս վանացն, և այժմ ընդ նոյն հանապարհ գնայ՝ ի պէտս պարտէզին Ուռասաց, յամարանոյն Կատանդինաւ։

130. Աշխափ ինչ Հայոցեաք և հետք հանգչին մեծահռչակ վանից և եկեղեցւոյ Կէյառուց. մանր քննութիւն քերեւս յայտնեսցէ ընդ արձանագրութեանց և զհետս այլոց եւս եկեղեցւոց կամ մատրանց՝ ի վեր անգրնջնակելոց, որք և առանց անուան յարձանն յայտնին թագմաթիւ լինել, ամեն կամ ամենայն եկեղեցիք գրելով. անյայտ են և չինողք նոցին, բայց ի տակուտց՝ զոր ուսանիմք յարձանացն։ Այլ հին ամն յիշատակագիր յամի 1184, տայ մեզ կարեւոր ծանօթս գնորոգութեան հնագանին և գվայելչութեան տեղւոյն և գնորոգողէն, որ է Հայրն Պետրոս յիշեալ յարձանին Աղուանից կաթողիկոսին։ « Իմանալ հաչակաւոր և հրաշագան հանգիստարանիս Կէյառուս, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, որ և պայծառացուէս ճոխացեալ ի սկզբանն՝ և գաղեալ խրթնացեալ՝ ըստ յաճախելոյ մեզոց քրիստոնէից, զոր նորոգեցաք սուրբ Հայրս Պետրոս հանգերձ հարապատաւն

1 Ի ճոխագոյն եկեղեցւոյն Ջրագիպեի՝ ի ԺԶ դարս՝ յիշատակի Վիշէ Խաչատուր անուն անի՝ ընդ հարիւրաւոցս։



104. Էջմիածնի Կիչառուաց (Ս. Կարապետի կամ Ս. Քառափեան).




105. Մաճարձան վիմիկ վարդապետի (տես յէջ 264).

» իբով Ջեռան Յովսեփաւ. Բայց զերանա-
» էջս անձին հար Պետրոսի արձակ բարեաց
» եղեալ՝ ամ ոք բաւականացի պատմել զա-
» ապիենութիւնս. զի որպէս հնմարիտ է ասել,
» վայել իսկ է խնամոյն Աստուծոյ՝ այսպի-
» սում քաւարանի լինել այսպիսի նորոգիչ. զի
» բնաւ զպատկեր կենաց առաքինութեան,
» մանաւանդ զհեզութեան և զխոնարհու-
» թեան, հանդերձ բնաւ առաքինութեանցն
» անդամոք յօրինեալ, ապար զմարգն Աստու-
» ծոյ՝ կատարեալ տիպ մարդկութեան և
» պատկեր առաքինութեան. ինքն՝ առաջին
» ունող բարեաց մտքրափայլ բազմալոյս. զի
» որ զկնի նորա էաք՝ 'ի նա ամենևքեան նը-
» կրակաք. և թէպէտ անհասանելի էր այն՝
» ակայն պատճառ բարեաց հանդիսաւոր
» չնարհի սուրբ Լուսաւորչացի լինէր. և այն
» քան՝ մինչ զի զամենեսեան զգեաւաւորեալ
» կրկին պատմուճանաք, և ինքն զժամանակս
» ձմերայնոյ միով սաւառնա՝ դաժան և գա-
» ռն առատանեաց սեւէր. և 'ի թախան-
» ձել եղբարցն՝ հազիւ հնով յետնոյն թէ
» յանձն առնոյր չառանալ. իսկ վասն ա-
» կընառութեան ազեան ընառանութեան և
» կամ կողմնառոր սիրոյ՝ այսպիսի էր որպէս
» Տէրն վկայէր, թէ Իմ եղբարք և մարք ոտա
» են որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն.
» Իսկ վասն արժանաբերութեան, որպէս կա-
» տակ և սեռոյժ է գոյս [1] փափկառուն ա-
» բանց, այսպէս գրեալիր և ոտոյս բարե-
» սնուեղ հոգի առ երկրաւորս առնեացն. Իսկ
» աղօթիւք՝ անչէջ լուսից նմանեալ էր. Իսկ
» ատաբսիրութեամբ և հիւրընկալութեամբ՝
» յաւէտ գերազանց էր, եթէ ոչ յանդգնու-
» թեան է ասել՝ ըստ Աբրահամու արիացն.
» ըստ Յորդան հոյր որբոց և հանգուցիչ պան-
» դխտացելոց. ըստ Մամբռէի՝ հեզ. ըստ
» Դաւթի՝ ողորմած. ըստ Յոգամնի՝ հանճա-
» րեղ քան զամենայն նմանիսն. ըստ Երե-
» միայի՝ գիտած, և ամենեցուն փարելի. և
» ըստ Պաւղոսի՝ ընդ ամենայնի ամենայն,
» մինչեւ զամենեսին շահել. ըստ Քրիստոսի՝
» վասն ամենեցուն չարչարեալ և բնաւից
» հանգուցիչ: Եւ այս փոքր 'ի շատէ գրեցաւ.
» զի բազումն 'ի ասկաւարացն հանդիպի. Եւ որդ
» զի յիշատակ արժանոյն ասրհնաբերեսցի յի
» է, ըստ խնամոյնն, զի օրք ընթերնեսոք և
» կամ օգտիք և ընդօրինակիք, նախ զՀայր
» Պետրոս բարի յոյսիւ մեր՝ յիշեսջիք յա-
» զօթս. և ապա զԱղէ (կամ Աղդէ) գծող
» և զնեռասուն մանուկ մեր, և ապա զԲ-
» շուսա Աստուածատուր պատրաստիչ նիւ-
» թոց, և զԱստրեալ հմմտակ քահանայ, զի

1 Հնդկաբերէն ասէ. գնակատուկն իմա, գժկամակ և գչարչի գոլ. նման վիրկրատար բարիս. որպէս գչարչի է գոյս՝ փափկասէր սրանց:

« յոլովս աշխատեցաւ 'ի պատասխանութեան գրոցս։ Բայց « գրեցաւ 'ի Քառականիս Հայոց ՈԼԴ »[1]։

Ցետ դրուատելոյս Հօր Պետրոսի՝ առաջնորդ Կեչառուաց 'ի սկզբան ԺԴ դարու՝ եկաց Գրիգոր Մոնոնիկն, որ գոյր 'ի ժողովի Լաւոյ գումարելոյ 'ի Զաքարիայ Սպասալարէ, որ և առաջ զանձնաւանն իւր զԳրիգոր եպիսկոպոս Հաղբատայ « ըմբռնեաց 'ի Կեչառուս, եղ զնա 'ի բանտի »։ Պատմիչ իրացս յիշէ և « զվարդապետն « որն կերսէս, զոյր առաքինի և զուարխուն, որ յետոյ « առաջնորդ եկաց Կեչառուացն, զկնի մահուան Գրիգորի « գոբի վարդապետին որ Մոնանիկն կոչիւր »։ զոր և վասն խոհականութեանն պատգամաւոր ընտրեցին Հարքն՝ երկրորդ անգամ կոչեցեալ 'ի Զաքարիայէ յԱնի, առաջի վարդապետան Մխիթար Գոշ, զի նախ քան զերքահն առ Զաքարիա՝ եկեալ 'ի Ժողով Իրեանց։ Ցիշատակի առ և յարձանագրի տրեալ ժամանան Ս. Լուսաւորչին որ չէ ընդարձակեալ, այլ թուի առկոյս ամս կացեալ յառաջնորդութեան, զի յամին 1223՝ առաջնորդ Կեչառուաց յիշի յարձանն՝ Պետրոս (Բ)։ — Ցետ առաքն Թառականաւ յիշին Մխիթար յամի 1248, և Աթանաս



106. Կոմմն եկեղեցւոյն Ծորակայ (տես յէջ 270).

յամի 1272. իսկ Համազասպ անթառական, թուի յաւելել գէթ քան զԱթանաս։ — Ցետ ասացս և յետ դարու միոյ, 'ի յիշատակարանս գրոց գտանի « Տէր Ցովհաննէս Կեչառաց Ս. Լուսաւորչին, յամի 1364 »։ Գարձեալ յետ դարու միոյ և աւելի, յամի 1491 գրեամն « 'ի Ս. ուխտն Կեչառուս, 'ի դրան Սուրբ Աստուա « ծածնի և Ս. Գրիգոր կաթուղիկէին, և առ Ս. Նշա « նիս, որ իմով անարժանութեամբ կոչիմ առաջնորդ « սուրբ ուխտիս »... և պահաէ անուանն, կամ եղծեալ է, և փոխանակ այնր գրի անուն եղբօր նորա Ցովասափ և որդւոյ Նորին[2], և այլն։ — Գարձեալ յետ իրր գարու միոյ ևս յիշի Փիլիպպոս վերագիտող Կեչառուաց և քաջ փիլիսոփայ, յամի 1578. յայտ է զի առ եպիսկոպոս էր, որպէս և երկու դարուք երիցագոյնն Ցովհաննէս, այլ ոչ է յայտ երբ ուրոյն 'ի Բջնոյ սկիզբն եղեւ կալոյ եպիսկոպոսաց և 'ի Կեչառուս. բայց զի և 'ի կէս ԺԷ դարու կայր անդ եպիսկոպոս՝ վկայէ Ոսկան վարդապետ 'ի ցուցակի եպիսկոպոսական Թեմից։ — Ցայս վայր ժամանեն և այլ յիշատակք չինութեան և պայծառութեան տեղւոյն, որպէս ցուցաս 'ի վերջ՝ բանիւք փիլիպպոսի երիցս և Թովմայի Վանանդեցւոյ. և Թուի 'ի վերջ կոյս գտանն անյայտեալ տեղւոյն, զի ոչ եւս գըտանեմ յետ այնր յիշատակ Կեչառուաց։

Ցանուն տեղւոյս ծանօթ է խաչատուր Կեչառեցի յետս ԺԴ դարու և 'ի սկիզբն ԺԵ, բառասնական վիպասանութեամբն, կամ արձակ և չափական վարկեալ բանիւք 'ի կեանս և 'ի մահ Մեծին Գրիգորի. զորոյ գՊատմութիւն՝ զերկաբերեալն կամ զԹարգմանեալ 'ի քաշոյ Նախնեաց՝ ըստ իւրոյ խելամտութեան յարդարեալ կամ խանգարեալ է։ « զի հեթանոսական « գրեալքն (ասէ) անհնարան են և անվայելուչ, 'ի վերոյ՝ « չարկեալ բանիւք արակացեալ, և 'ի ներքոյ չի անասի « կարծիւք և խաբէութեամբ. որպէս և առ Գրաբերան « Պապիաս անպատուեցաւ. իսկ զոյս Պատմութիւնս « աչխարհակալին Աղեքսանդրու՝ զոր գրեցի իմով ձեռամբս, 'ի մեծ քաղաքն Հռոմ առ Պապն Ցուանդաց՝

[1] Գրագ բանիս ինքն Աստուածատուր է, որ անպիտան հոգեպոյծ կոչէ զանձն, և զընկերքինկոն " որպէս իմ անգրանիկ քան հոգւոյս " Ագռէ, որ և նա առաքեալն ակար զոլով մարմնով և անշնուա " գրչութեան արհեստի, առկոյն անառակ աբաքեալ զանձնայն զան-

" գապանքս ակարութեան, քան սիրոյ սրինի, սկիզբն սրար ։ " Աստանին է Մխիթարի Գոշի և Ցովհաննու 'ի կուռն Սարգիս վարդապետի, յաշակերտաց Ցովհաննու Սարկաւագի։

[2] Աւարկ քան սրձանագրին' որ առ Աբգար Զալալ. Բ. 126։

» ’ի յաթոռ նստեալ Գեղարսի և Պաւղոսի առաքելոյն, » որպագրեալ ’ի գրոց հնոցն, առկս օգտի. և զարգարե- » ցի ոսկով և անօրինակաւով և առանձաւորով, ’ի փառս » Փրկչին. և բերեալ ’ի Հայս՝ պարգեւս մեծ վարդապե- » տին և քաղ վարպետին իմոյ Եղիայեայ (Նչնցւոյ), և Պա- » րան եղբարցն իմոց և Հարցն՝ Պաւղոսին առաքելոյն », և այլն։ Կարեւոր մեզ տեսանելոր քան զգրատուր վաստակն՝ զորմէ յերկարէ գրանան, — « զի յընթեռնուլն իմասցին » պատմիկոսք և քարտուղարք և ապա գիտասցեն դիմ » աշխատանս ’ի սմա, զոր յիապէս վաստակեցի », — է՛ յիշատակ Պաւղոսից տանմին, յորմէ վկայէ և գինքն յի- նել. յայս կարծիս հաստատել և ճանաչել նորա ’ի բանս գովեստի առնէին ’ի կարգի Ղեղոց իւրոց վասն ատենսի տանս Զաքարեանց, յորում լսելով ’ի յուշ ածէ.

« Զպարան Պաւղոսն զորդ հեծելի,
Որ զերկոթիլ դուռն առնէր փոշի,
Այլոց բազուկըն նոր Սիոնի,
Հիմն հաստատ Հայոց ազգի.
Կամ գիւր որդիքըն զարմանալի,
Զմկրէմ, վասակ, կորիւնքն առիւծի.
Զայն զօրաւորն ’ի պատերազմի
ԶԱմիր–Հասան բազուկըն քաջի »։

են խաչատրոց այսպիսեաց ոսկեղէն խօսից և այլ ինչ քերդուածոց, յաւէտ սղաւորեալք, յորս և յանախագրեալն՝ սկզբնաւորեալ. « Ես եմ մեղաւորեալ ոչխար՝ կորուսեալ ’ի սուրբ քո հօտէն », և « Ա՛յս կեանքս է յիրաց նըման », այրուբենական կարգաւ ասեց։ Դարձեալ միւս, « Թէ մարդ ես ու միտ ունիս՝ ես տամ քեզ խրատ մի քանի »։ Ոչ ’ի վերնագիրս ասէին և ոչ յիւր ուրոյն յիշատակա- բանս՝ չկոչի ոչ վարդապետ և ոչ այլով նշանակաւ ա- սէճանի. այլ բուռ կրօնաւէր բանիցն և ’ի Հառիմ գնա- լոյն՝ ճանաչելի է գէթ աշխարհիկ երէց լինել. այն զի և խորագիր գանձի միոյ յԱնտիս կուսին՝ վկայէ այսպէս,

« Երգեալ ըզսա կնչուեցին,
Հայր՝ Մկրտիչ վարդապետին »։

— ի Գանձասարեա գտանին քառատունք չափ գանձք, որոց տնօրէնս տասք կապեն խաչատուր անուն. այլ չտոք յայնցանէ վկայելոցն՝ Տարանեցւոյն խաչատրոյ ’ի հառ գան քան կնչուեցեալս։ Երկարագոյն քերդուածն է նո- վին տնով « Սիսեալ յաչխարհարար ներաժմանց, կարճ ’ի կարճոյ հանդուստ պատմութիւն », Հին և Նոր կտակա- բանաց, յորարշաւիւնէ մինչեւ ’ի Գալուստ Ս. Հոգւոյն։

Տեսաք յարձանագրիս մեծի եկեղեցւոյն Ս. Լուսաւոր- չի՝ նորոգող զՀասան խաչենեցի սէր խոսիան բերդի, միաբանեալ՝ այսոցիկն նուիրատուս ուխտին կնչուսաւոց, յերկրորդ քառորդի ԺԴ. դարու. ’ի սկիզբն գարուն (’ի մէջ 1210–1220 ամաց ըստ Մխիթ. Աւրիվանեցւոյ), այլ ասն իշխան այլոց մտոին խաչենոյ՝ յազգի վարդանանց վը- կայեալ, « վասակ որդի Հազրակայ և երեք որդիք իւր » Պապաքն, Մկրէմ և Քաջն Պաւղ եկեալ ’ի խաչենոյ, » բազում արութիւնս ցուցին յայսոսիկս, և բազում բա- » րութիւնս առ ազգն քրիստոնէից »։ Եւ երկրագոյն քան զնա պատմիչ կնչուսիս՝ ասէ. « Ապա գաւառս » խաչենեցիք էին, յերեւելի ազգէ, հաւատով քրիստո- » նեայք ուղղափառք և ազգաս Հայք։ Երեք որդիք էին » վասակայ, Պապաքն, Մկրէմ և Հասան՝ զոր Պաւղ » կոչէին, արք քաջք և անուանիք, որ յահէ նոցա գո- » ղայր ամենայն զօրն Ջանկայ »։ Արդ այս վասակ կամ ’ի միացորդաց առհմին Պահլաւունեաց, կամ բա. եւս ’ի Զաքարեանց՝ (արք հանուրց գրեթէ Աւթոռառեան կոչ- մանցս տիրապետեցին), առացաւ զանփափանութիւն նա- չառաց, որպէս վկայի և ’ի բանէ Օրպելեան պատ- մչին. զի յիշելով գնպիսկոպոսն Եղուարդայ Սիւնեաց և զվանս Օծոպոյ ’ի Շահապոնս, կոչէ զնա « կոզմնակալ այսմ կոզմանց »։ և բանաբեմեալ ասէ նորա ’ի վանսդ անտի՝ գերիս նշանաւոր խաչս, զաւառաժո- ղովս Ազաց նշանի, զեպիսկոպոսական և գկաւարտական. զորս Աանփանաս եպիսկոպոս Սիւնեաց եդեալ էր անդ ’ի գրաւ՝ առ եպիսկոպոսի միոյ. և վասակ « առնու բրա- » նարար գերիս զայս առաւաժողեալ առաք նշանաք- » և տարեալ՝ գԱզագ խաչն ընծայէ Աքարեկին Խա- » նէի, և գերկաւն գեպիսկոպոսական և գկամարակապն » տարեալ գնէ յիւրում վանսն ’ի Կնչառաւս ուխտի »։ խաչն Ազագ գտնեցաւ անդրէն ’ի Նորավանս յամի 1218, « իսկ եպիսկոպոսական ձեռաց անդէն ’ի Կնչա- ռաւս »։ — Յառաջ քան զայս գէպս՝ ’ի յիշեալ կոզմանս Սիւնեաց՝ նոյն վասակ օգնութեամբ այլոց իշխանի և « հրամանաւ և ուժով Լատնէի », հալածեալ էր զՊար- սիկս, և գրեթէ մի յԱպատոսի վանից առեալ և գար- ձուցեալ յաթոռ Սիւնեաց. զոյնս ժամանակաւ չինեալ էր անշուշտ և զկարուղիկն եկեղեցին սուտ ’ի Կնչառաւս, և բազում կալուածովք յաստատեալ, որպէս ընթեր- ցաք յանդնատական արձանագրէն։ Ի միջոցի 1221–30 ա- մաց, ասէ Ցարէգիրն, « փախեցաւ ’ի Քրիստոս վասակ իշխանաց իշխան, և էառ զգաւոյն որդի նորա Պաւղ». քանզի երէց եղեալ նորա Պապաք « արիական և քաջ նահատակն », ըստ վարդանայ, յամի 1222, մեռեալ էր ’ի պատերազմի վասց և Հանաց կամ Դվինայ, առ Գանձակու, ուր « ըմբռնեցաւ ընդ այլսն և Գրիգոր որ- » դի Հազրակայ, եղբայր քաջին վասակայ, և Պապաք » նորան եղբօրորդի... զՊապաքն սպանին (Պարսիկք) » ’ի պատերազմի. իսկ զԳրիգոր՝ ձերբակալ արարեալ » նեղեցին բազում խոշտանգանաք՝ մի ուրասցի զՔրիս- » տոս. և նա ոչ առ յանձն... մինչեւ ’ի գանձն նոցա » առանձնաց զհոգին »։ — Պաւղի հանճար քաջութեան և մեծաբեմեան գերազանցեաց զհօրն և զմինոցն ժա- մանակակիցսդն, և որպէս տեսաք՝ յանձնոյն գրչոյ ժա- մանակին մեծաւ գովութեամբ հռչակի, ’ի վարգանայ, ’ի Կիրակոսէ, ’ի Մխիթարայ, ’ի Օտեփանոսէ Օրպե- լեան, (որ և բարեյաջող և մեծարգի իշխան կոչէ զնա), ’ի խաչատրոյ, և յայլ յիշատակագրաց։ Տարէգրո- ղըն (Մխիթար) յետ ասելոյ սանց մեռեալ վասակայ հօրն՝ առէ վասն նորա « մնանէ Պաւղ ’ի Դվին և կուռ- էէ գերազոյն և զՏանին »։ Ընդ յիշատակաց արու- քեան նորա յանախեն և չինութիւնք կամ ժանդակու- թիւնք յուխտատեղիս և յեկեղեցիս, որպէս ’ի Խոզներ- քաղ եկեղեցի Գանձ գեղի, յորոյ չինութիւն ասց քա- ռատուն և հինգ գահնկան (սակի) յամի 1247. և որպէս ’ի Գեղարդայ վանս ’ի սա եւս առատացաւ տրովք, յեր- կարութեամբ կենացն. քանզի յետ 1281 թուականի և

յառաջ քան զ1289 կարգէ Տարէգիրն, « մեռան իշխանքըն՝ Պաւլ Հայկազնի և Սպասն Արծրունի »· և օրպէս տեսաք վերագոյնդ՝ Թագեցաւ ի միում ի մատրանց և կեղեցեացն Կնէաառւոց, ի Ս· Հռիփսիմէ կամ ի Ս· Սիան, թերեւս երկոքին եւս միով եկեղեցւոյ մատրունք կամ խորանք. և իրրեւ նշանաւոր ինչ յիշեն զգերեզման նորա՝ որք գԿնէաառւոց բան առնեն յետ այնր։ Հռչակ անուանն, օրպէս ի ճահ էր ասմին, առեալ յառաջագիտական չափ, և եթէ ոչ խակ գրեցաւ՝ այլ արժանաւոր էր վիպասանական բանից. և ահա առիմսյինն խաչատուր յիշեաց զերկաթի գրանց փչրելն ի զօրաթինէ Նահրին։ — Բնակիչք կողմանց յշին խաչեաի՝ որ ի սահմանս Մանազկերտոյ, թագաւոր կոչմանի ասանգին բրնակեալ գնա ի մերձաւոր Պլենան լերին, և զիւր իւր կոչեցեալ՝ ծանաքիք իցեն մեզ՝ այսոքիկ են.

Հաղրակ կամ Խաղրակ Ա.

Ջաջուռ

Վանենի 1222 — Հաղրակ Բ

Վասակ — Գրիգոր † 1222

Պապաք † 1222 — Հասան-Գոշ † = Կին՝ Խուդու Խաթուն — Մկրտէմ

Մկրտէմ — Վասակ — Ամիր-Հասան, [2] 1307 = Կին՝ Թամար, դուստր Իվանայ — Պապաք

Պապաք — Էսայի, 1331 – 9 = Կին՝ Մանիախաթուն — Վասակ, 1332 [3]

Ամիր Հասան — Ջումի = Կին՝ Խանիշին

Արղուն (4) — Զարխիկ (4)

Ցետ գալոյ միոյ՝ յամի 1473, յիշի Ջումի, ոչ կողմանց Արկղանից, և Թուի՝ իբրեւ վերոյիշեալ Ջումայ, Թէ և չասի՝ ի Պաշխանց գոլ. իսկ Ա. Ջումի կոչի Թառն մեծի Պաշի։ Ցետ երկուց գալոյ յիշին՝ ի սահմէս,

. . . . . .

Գաւիթ Հայկազուն — Ինանիկ — Ստեփանոս Վրդապետ

Կիրակոս — Բէկումէ — Գաւիթ Վ. Ալաշկոյ Ալբիվանից — Մարիամ

Ի գալոյ Լաշոյ ասի սերեալ և սիժմեան ազգատոհմն Խուրամեանց որ ի Նաւասիոյս [5]։

1 Ասպետ վկայէ պատմչատ իւր Լաշի։


2 Երեքին եւս հղբարքն Վասակ, Պապաք և Ամիրհասան բան արձանագրի Պաշտարանին Ս· Գիգորգան, մեռեալ են նախ քան զ1268 ամն։ Ի գոյէ Պապաքոյ ասէ սերեալ գտանի իւր Պետրոս Գոչեան, վիպասան յաւուրս մեր (փորձ Օրագրի, Գ· ժ· 18)։

3 Թուի Է և սա Պաշոյ, այլ չէ յայտ յորմէ պատոյ նորին։

4 Երեքին եւս մեռեալք էին յամի 1585։

5 Փորձ Օրագրի, Գ· ժ· 18։

131. Կիսով փարախաւ ՚ի մոխ հարաւոյ կէսյառուստ, անջրպետեալ ՚ի նմանէ երկաթաձիգ քարաքիւթով, մերձ ՚ի Հրազդան գետ՝ կոչ Մարրավանք գիւղ հայաբնակ, 30 տաճիք. եկեղեցին համանուն հին և քա-



107. Յատակագիծ եկեղեցւոյն Յօրակայ.

րաշէն, որ անտիւն բարձր կամարաք բառնայր գլխոգիկէն, որդ կործանեալ և փայտիւ ծածկեալ է։ Աջանգին Թագաւորի ասուամբ Պարսից կամեցեալ քակել զեկեղեցին և չինել քարամբքն կամարչ ՚ի վերայ գետոյն, այլ յանկարծաբէն մղեալ կարկտի, վասն որոյ և կոչել զանդին Շահ դադարանաւ, զոր յետոյ փոխեալ այլազգեացն՝ առին Էշկի-դադարանաւ։ — Մղոնաւ ՚ի Հր. Մոքրաձորէն ուռ. գետեզերքն կայ Ագիթարա գիւղ հայաբնակ, 30 տաճիք և Ց. Յովհաննու եկեղեցեաւ։ — Ճամբու կամ փարախաւ ՚ի Մ. Հր. ասրին՝ նոյնպէս ուռ. գետափն կայ Գաղսի գիւղ մեծ հայաբնակ, 50 և աւելի տաճիք, ՚ի խոր ձորակիր Հրազդանայ. հին և քարաշէն եկեղեցին Ց. Աստուածածնի քայքայեալ առաձեռ և մնասեր սրմայն՝ կարկառեալ է փայտիւ։ Սուղ ինչ ՚ի վերոյ գեղջըն կամարչ փայտակոյ արկեալ է ՚ի վերոյ գետոյն, ՚ի պէտս գնացողաց յամարանոց Զինէրլիկայ։ — Ճամբու եւս ՚ի տարեւ խաղալով ընդ գետն, ՚ի միջավայր արեւմտեայնոյ ընթացիցն և յահեակ կոպմանէ (որ է ՚ի հարաւոյ), ՚ի տափակ վայրի կայ Սօլակ գեղ մեծ, և կամարչ փայտակոյ արկեալ ՚ի նմին։ — Սակաւուք հեռի ՚ի չինէն յարեւմտեան հիւսիսակողմն ՚ի բարձրութեան գժուարամատոյց խորհրդոյ լերանց՝ կայ եկեղեցեակ մի փոքրիկ հնաշէն արրատաշ քարամբք, յորում արձանագիր 1224 ամի՝ յայտնէ զկոչումն տեղւոյն Տափակմայրի, և զեկեղեցւոյն Ց. Աստուածածնի.

Եւ Յովաննէս ծառայ Քրիստոսի եւու զիմ հոգոյ արդիւնս(որ)քան զոր ըստա(ցայ) ի յարդար վաստակոց ի Սուրբ Աստուածածինս ի Տափակ—մայրոյ. եւ սպասաւորք սուրբ եկեղեցւոյս խոստացան ի տարւոջն Բ(աւր ժամ). Ա. Աստուածածնին տաւնին, եւ Ա. Սուրբ Սարգսին. որ խափանէ դատի յԱստուծոյ եւ իմ մեղացն պարտական է. Ա. մատուռն ? Յովհաննիսի է. Թ. ՈՀԳ։

Կայ միւս եւս արձանագիր, այլ ուրեք եղծեալ և ոչ աւելի ինչ ցուցանէ [1] ։ — Աւանն և մերձաւորութիւնն ՚ի Բջնի և բնութիւն տեղւոյն մայրեւր և ծառախիտ, յայտ նեն զսա լինել Մայրոյ վանս կամ Մայրավանս. հիմ նեալ յառաջ քան զ՚Ի դար, և անուանի եղեալ յաւէտ ՚ի առկ բնակութեան անդ Յովհաննու փակակոյի մեծի եկեղեցւոյ Ս. Գրիգորի, կամ կաթողիկոսարանին. որ՝ ըստ պատմչաց մերոց՝ յայնմ ժամանակի փիլիսոփայ կոտաբեալ և բանիբուն ճանաչիւր. և զի ոչ տարաւգնա ընդ իւր էզր կաթողիկոս՝ ՚ի գնալն ՚ի Ժողովն Կարնոյ և մխթանել ընդ Հերակլի կայսեր, ՚ի գառնալն նորա ոչ ել ընդ առաջ ընդ ուխտ եկեղեցւոյն, գլխեալ ընդ արհամարհանս իւր, կամ ընդ մխթանութիւն կաթողիկոսին, մինչեւ կշտամբել իսկ զոա և բան անուանն բանբել յեզր հաւատոյ ասելով զՀայս վարեալ. և խոստացեալ եւս ինքն կշտամբել ՚ի կաթողիկոսէն՝ « երթեալ « առկայանայր ՚ի Մայրոյ վանս, որ ՚ի Ժողովոյս լերինն « ասրոցին Բջնոյ. և ասկս ՚ի նմա բնակելոյն Յովհաննոյ՝ « փոխեալ եղիր զանուն տեղւոյն Մայրոյ վանից՝ Մայ- « րագոմեցի. « բայց վասն զի յոյնմանէ եւս տեղւոջէ հրամայէր զնա « հալածել՝ ասաց չտէ գնալ ՚ի գաւառն Գաբդմանոյ » [2],

132. Փարախաւ հանապարհի ՚ի ասրեւ յարեւմտից Յօրակոյ և ասր ինչ պակաս նոյնչափ յեզից Ղեզուս գեղջ, ՚ի հիւսիսային ձորակիր Հրազդանայ (յորոյ վերայ և արկեալ է կամարչ փայտակոյ), կայ գլխաւոր տեղի վիճակիս ՚ի հնամեայ և յայժմուս, անուանատու նորին՝ Բջնի ասան, 30 տաճիք Հայոց, նոյնքան և Թուրքաց, հրնագոյն և յիշատակաւ քան զայլ չէնս կողմանեցս. զի յիշի ՚ի Պատմութեան Խորենացւոյ յերրորդ գառագրի և գարու՝ Բջնի կոչմամբ և երեւելի գեղ. յորմէ էր յայնժամ արքեպիսկոպոս Աթիկ, « այր բանիբուն բանիւ և խորհրդապահ սրտիւ », որ մատոյց զաւետարանն և ընկալաւ գերգաստն միաբանելոցն ընդ Վահանայ Մամիկոնենի՝ ՚ի պաշտպանութիւն հաւատոյ և հայրենեացս, Թէպ վազուց կատարեալ անդ և ամրոցի, զի յայս աճառատանեցին ի տարին ՃՀ պատարագ զտան Սուրբ Յակոբայ. ով չտնէ դատի յԱստուծոյ.

1 Կամաւ ամենակալին Աստուծոյ եւս Աստուածատուր ի հալալ արդեանց ստացայ զմին ... (մ)Աստուն եկեղեցւոյս եւ առաջնորդ ուխտ (իս) բան ...

2 Յովհաննէս Կաթողիկոս. Առաքել. և այլ պատմչք։

Նաեւ կոչէ ցամէ. կաթողիկոս զտեղին, ’ի յիշելն զդէպս Մայրագաղեցւոյն, որպէս ’ի վերդ նշանակեցաք. և ե-բեւի ցորդ յարեւելից ասանին՝ բերդ կիսաւեր զժուա-բամատոյց, ’ի բարձու քարաքիւր, որ յարեւելից և ’ի հա-րաւոյ խոպան անմատչելի է, յոյլոց կազմանց սակաւ ինչ դիւր, և այնք պարագաք բարձամբք և աչառակաւք ամ-բացեալք, և գառն յարեւմտից կուսէ. ’ի գագաթանն սփակալ կան գերբուկք չինուածոց, յորս երկունք կոփա-ծոյ քարամբք Թաւին եկեղեցիք. բայց արձանագիր ցարդ ոչ յայտնեցաւ։ Աւ պայազատաւթեամբ Պահլաւունեաց՝ որոց առան եղեւ Բջնի, ոչ գիտեմ առագիւ Երր, այլ ’ի ժ դարս յայտնագոյս, չինեալ քաղաքացւոց, և յայնմ հետէ պատմիչք կոչեն զայն՝ քաղաք [1] և բերդաքաղաք [2], և ’ի սկիզբն ԺԱ դարս եղեւ և եպիսկոպոսանիստ, որ-պէս տեսցի յարձանագրի մեծի եկեղեցւոյն։

Առաջին յիշատակ լինի առաջի սոցա առ յառաջնում կամ յերկրորդ քառորդի ժ դարս, յարձակման Գելմե-կաց մինչեւ ’ի սահմանս ասրոցին, մինչ սէր Նորին քաղն վասակ՝ Հոլում մականուանեալ (հայր Գր. Մագիստ-բոսի), ազատանեւան բազմեալ կայր ’ի խորխոռնս. յոր-մէ յարուցեալ փութացաւ եհար վանեցոց զաստատանն, և ինքն ’ի գարանակալէ ապանաւ ’ի Սերկեւիլ, որպէս նշանակեցաւ անդէն [3]։ — Բնա ոչ բազում ամաց և որդի նորա խնամատարէր՝ Գրիգոր Մագիստրոս, առ. Թագա-ւորութեամբ Գագկայ Վերջնոյ յամի 1043, նոյնպէս ա-ռաքինացաւ ’ի վերայ այլոց ազգատակի Թուրքաց, որ-պէս յիշէ Մատթ. Ուռհայեցի. « Եւ երթեալ զօրքն » բանակս հարկանէր ’ի վերայ գետոյն Հուրաստանի » մերձ ’ի Բջնի՝ մեծի ամրոցին. յայնժամ զօրք ազգ-» գեացն գան ’ի վերայ զօրացն Հայոց. և եղեւ պատե-» րազմ առատիկ. և զօրքն Հայոց յաղթեցին զզօրսն » Պարսից, և արարին կոտորած մեծ ’ի վերայ գետոյն » Հուրաստանայ, և զիշխանս թուրք զօրացն արարին » ձերբակալս. և մնացեալքն փախուստական գնացին ’ի » Պարսիկս »։

Մեծահռչակ և մեծահամբաւս այս Մագիստրոս, որ և յառաջ Բջնեցի կոչի՝ արթաթեամբ տեզոյն, ’ի վե-րայ բանաւոր յիշատակացն՝ եթող և գրատակերտս հա-ւատակատոյց հոգւոյ մեծ եկեղեցի. զոր Շահխաթուն. յերկոյնութիւնն 21 քայլ հատարակ, ’ի լայնութիւն 17. Ս. Աստուածածին անուն, որ և բազդիւ ցարգ կանգուն կայ, առանց սեան կամարաք վերամարձեալ գեղաքանդակ. երկուսեակք լայնագիր սիւներն՝ են ա-ւանդաւանք. արեւմտեան ասոյ գաւազն խցեալ էր ’ի յետնոց, և ընդ հարուածսին էին մուտք. առ սակաւ ար-ագագուստ արձանագրեալ է յամի 1031.

Թ. ՆԶ. Շնորհիւն Աստուծոյ այս հրամանք է իմ տեառն Պետրոսի եւ Սմբատա Շահանշահի որ հաստատեաց Եպիսկոպոսարան ի Բջնի քաղաքս զՍուրբ Աստուածածինս. հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան որդի Վասակայ. եւ տուաւ վիճակ ի սուրբ Աստուածածինս ի Փոչհանիից մինչեւ ի Նիգ եւ Դիւռա(տ)ուն . . . զառակս? եւ յԱզատեւ. ամբք գաւազան եւ սուրբ նշան եւ աթոռ. Արդ եթէ ոք խափանել չանա զաթոռս կամ յայլ տեղիս փոխել կամ զՀողն յապշտակել կամ զաւանդ եկեղեցոյս գողանալ,

1 վաթգան։ — 2 կիրակոս։

3 Ըստ կարգի ատենագրութեանց Մատթէի Ուռհայեցւոյ, յամի առնուն վաթգան, Սմբատ, և պղջր, որս գերեզ նշանակին յամի 972։ յորում և մեռ վասակայ, որ թուղթ ամենայնի քահանի իբրև 75 ամաւ յառաջ քան զմահ նորոյ վաչրատոյ, որ նոյն-պէս ’ի մարտի մեռաւ յամի 1046, թերեւս և անցեալ զութիւնս մեծիք. Ի. Գրիգոր Մագիստրոս որդի նորա որ յայնժամ չափահաս էր և պատէր զԲջնի՝ լինի և յետ այնր կեղեալ տէրութեան տաճ. և։ — Մատթէոսեան պատմէ զդէպս Մատթ. Ուռհայեցի. « Յայսմ » ժամանակի զօրաժողով արարեալ Թագաւորն Դեկոսեաց և յան-» կարծ գայր հասանէր ’ի Նիգա գաւառին Հայոց մերձ ’ի յամուրն » Բջնի։ Եւ վասակ ասպատակեան Հայոց՝ սիրելեալ որգւովն Գր-» իգորիւ և այլ փառաւոր ազատաքն հասեալ կայր ’ի մեծ » ուրախութեան. և Հայեցաւ վասակ ’ի յանդարձս հանապատս » հին, և անդ գայր այր մի ’ի չուառս բնդ հնահագեալացս հանապատս » հին, և տեսեալ վասակայ ասէր. Գուժարերք է այրն այն։ Եւ հասա-» նէր ’ի գառն բերդին Բջնոյ, յորն ազատացի բազմեալ ասէր. » Գնեցաւ. ամենայն գաւառն Նիգոյ։ Յայնժամ որպէս գառիւծ » գոչիւոյ քաջզօրավարն վասակ, և յարուցեալ զգինեալ զգեաւ զե-» կաճապարեաց, և զնեն նոքա եօթն ազատ, և քան պատանիսդ մա-» մուն այլ հեծելազօրս գնեն հոգալ էր կազմեցան ազատքն գնեն վա-» ռակայ. և որանդայր քաջ և ազնիւ առնն Փչնդզէ և Գուրգ Զո-» ռաւորդիք և այլք ոմանք. և այս ասէր քաջիք և յայնմիսոյք ի պատե-» բազմեաց. և ոչ կարաց վասակ համրերել որանի, մինչեւ զօրքն » ժողովեցան. վասն զի կային բնդ մեռամբ ճորս որս իբրև հինգ » հազարս. և ոս հպարտութեան զօրութեան իւր, և մինդ հարիւր » որամբ յառաջեալ որպէս գառիւծ ’ի նիգոյ գաւառին, և յանձն » որարեալ գաւառն և գամուրն Բջնի՝ որդւոյ իւրում Գրիգորի։ Էր » հասանէր վասակ ’ի վտիք մի. հազարգունս ինքն և ամենայն զօր-» քըն և խառնաւանեցան զինեալ իւրեանց բարի խառնաւանութեամբ » որ ’ի Գիւռասս Ցխաւս։ Էր ’ի հանապարհին հանդիպեալ ’ի գիւղ մի, և անտի զի ապրզդիքն ոս հասարակ կոտորեալ էին գամենայն գիւղն, և զորք ապրզդեացն պատեալ էին շուրջ գեղիւ. գեղեաւն, և գնաւասպնեալսն որ ’ի ներսն կային, և կոտորե-ցին անթնով որով։ Էր անտի զայն քաջին վասակայ, յոյնիս գոչեաց որպէս գառիւծ, և յարձակեցաւ ’ի վերայ զօրաց ապրզդ-գեացն. և կոտորելքն գնասս որս երկոք հարիւր, և մնացեալքն փախստականք լինել անկանէին ’ի զորսն ապրզդեացն։ Էր շար-ժեալ գայն թագաւորութիւնք բանակին ’ի վերայ զօրաց քրիստոնէից և իբրև անբոյժ անթիւ անասնէին բազմութիւնն զօրացն ապրզդ-գեացն, և յայնժամ մխրճան գնալ առան և սկսան ապաքի-նանալ ’ի պատերազմին. և որպէս զդպրէր ’ի մէջ այծեաց, և կամ որպէս գորթիւս ’ի յերամս ձագուց, այնպէս արբաքանչ-իմանային ’ի մէջ պատերազմին. և զրագումս խոցեալ գիմեա-ւոյ յերկիր ձգէին։ Յայնժամ ահագնան մի ելեալ ’ի զօրացն ապրզդեացն, անուս խափչիկ և ապր քաջ, որ և Երեն-գալ կոչէին

թէ յեպիսկոպոսաց կամ յիշխանաց կամ ով որ հակառակի նզովեսցի Աստուծոյ եւ ի մէնջ եւ ի ՅԺԸ հայրապետաց . արմատաքի ջնջեսցի յիշատակ նորա յերկրէ եւ անլոյծ կապեսցի ։ Եւ արդ այս է բնական եւ առաջին սահմանահատ վիճակ եւ սիմ(ոռ. զոր) հատատեցաք արձանագրով եւ չրջաբերականով զսահմանահատ վիճակին սորա . որ է . Յարեւելից ի Ծար գետոյ մինչև ի գետն Ախուրեան, յԱնւոյ եւ ի հիւսիսային ս.. պետս խո ? . . . . . եւ հատանել չանա յայսմանէ ի միջոյ կամ յեզերաց աւելի կամ մանն ինչ, զվերասացեալ զանէծս եւ զգատիժս կրեսցէ աստ եւ ի հանդերձելումն . ամէն ։

թեամբք յերկրի իւրում և յաշխարհս գրոցիս, անդէն և ինքնուին լուծեալ անկանէին աշխարհական գործիք երկաթամեայ հաշտութեանն՝ ընդ կայսերական Դրանց. արագ արագ հասանէր ի սոսա հանիւս մեծի յեզութեան Հայոց, և նիզակակիցն իւրեանց հաւատարմի՝ հաւատարմագոյն գլուխ կալոյ քրիստոնէից, և պաշտպան՝ որոց երբեմն միտրան ինքեանց հալածիչն էր։ Ա՛ռաջեալ առ վայր մի զգաստաձիգ հնարս նախանձաբեկ բարձաձգութեան իւրեանց, սոսկացեալ սրամտեալ յիւրաքանչիւր աշխարհամուտ ապարանիցն կարկառեալ հաչէին ընդ արեւելս՝ յոտսան Աշտակունւոյն, տեսիլ իմն՝ Ջինն կամիցի այս լինել՝։ Հայէր և ինքն Տրդատ ընդ արեւմուտս՝ խոժոռ և անցոդդոդ բրդոք։ երկուտակ հայեցուածք կատաղոյ։ Կայսերականքն իրրեւ ապատակ կոծք ամօթալիցք լքեալք ի Տրդատայ, առաստանային ի խորհուրդս պէսպէս. կամէին իմն և կարէին իսկ ազգովիկ լեզուանքն հորդան տալ հնդեղել զՀայս. այլ ոչ անդէպ է կարծել, նաեւ ասոյգ, եթէ գոյր նոցա խէթ ի խորագոյն արեւելից. իրրեւ զի՝ եթէ յայտնապէս հակառակ ամբառնային ի վերայ Տրդատայ, գուցէ և սա ձեռն կառկառէր առ հառաբակաց սիւերիսն իւրեանց՝ առ Աստուածն, ընդ որում դեռ այն ինչ կռնակ էր նոցա զգաշն 40ամեայ հաշտութեան. և ի յուզել պատերազմին՝ գուցէ վեր ի վայր խախտէր նորագիւտ քաղաքավարութիւն իշխանակից կայսերացն, և թողեալ զօտարս՝ զմիմեանս յաղթահարել և միապետել կըրթէին։ Ա՛նուստ և Տրդատ ի միմի կռնակ հին և նոր առնելոց, կարէր նոցնայէս զանգիտել յերկոցուն նոցին գաշնակցութիւնէն և զրգռելոյ յիւր վերայ։ Բամբռնդակ ուժոյ պնդութեան մտաց և սրտի պէտք էին նմա ի ժամուն, և գերագանի իմն գործոյ. զոր և կատարեաց ի փառս իւր և իրացոյն և եկեղեցւոյ սրբոյ։ Ապատագիր նեալ ամենայն զօրութեամբ, և ամրացուցեալ զչորեսին ծագս երկրի տէրութեանն՝ սահմանակալ բգեղեաք և իշխանաք, միանգամայն ընդդէմ արեւելից և արեւմտից և հրատակացն հիւսիսի, ինքն իրրեւ հակոյ յարեւելեան՝ նախ առեալ ի միջնաբարին՝ չրքնաւակէր տիգոքաչոյց ընդ ամենայն կողմանս, զի ուսոի և երեւեսցի նշան թշնամութեան՝ արագ արագ անդր ի վերայ հասցէ յաոլիանոսեան գնդակն, վառահացեալ յաղօթս Գրիգորի և յիւր հաւատս, որով դեռ այն ինչ ջեռեալ էր, և զօր անչէջ պահեաց և անեղծոյն միշնէ իսպառ։ Եւ միշ այսպէս պատրաստէր զանձն ընդդէմ որոգեցոյն՝ զէն ի ձեռին, ոչ թաւալացուցանէր զմիւս ձեռն ի չինութենէ տաճարաց և ի յարդարելոյ զամենայն օրէնս քրիստոս.

Նէսթեան՝ առաջնորդութեամբ Արրդ Լուսաւորչին։

Ա՛յսոցիկ ամենայնի իրագոյց լեալ կայսերացն, – քանզի և անհնար էր մեզն թագաւն, – ի խորհուրդ մտաՆէին, և զաւուրս երիս առնչեալ զգեցեալ գլուխս իւրեանց, ոչ իսկոյն պատերազմ յարել ընդ Տրդատայ, և ոչ իսկ վիճել ընդ նմա, այլ զհրդեհ քրիստոնէութեանն՝ որ պոյծառանայր յերկրի անդ նորա, սահմանափակ առնել, և չտալ թոյլ հարակիցդ յաշխարհս գրոցիս, մնասուանդ ի փոքր Հայս, որ ընդ իւրեանց էր իշխանութեամբ՝ ըստ գոյանցն պայմանի, և որ զրակցութեամբ և ազգակցութեամբ յարեալ էր ընդ Մեծին, գոգիր և կրանիւք. զի և յառաջ քան ի սմա՝ անդ ի փոքր Հայս՝ առաւել տարածեալ էր սերմն աւետարանին, որպէս և ի բաղում կողմանս Գամրաց, Կապպադովկիոյ և Պանտոսի։ Ա՛րդ ի վերայ սոցին յամառեցան օգոստոսքն, և Թագաւորս գտեալ զայնժամս ասիկանս կողմանցն, փոխանակ նոցին կորգեցին երկուս սմանս խորամանկս և անագորոյնս, ըստ մտի իւրեանց. զամն Լիւսիաս՝ ի Սատազոյց քաղաքի՝ ի սահմանակն երկոցուն Հայոց, և զամն Ագրիկողա՝ ի Սերաստիա՝ ի մեր քաղաքաց Բ Հայոց. որոց հրամանաւ և գաւառասանաւս՝ զոյն տասն ամս որպէս և յետոյ երբեմն՝ քաղաւմ Սուրբք վկայեցին ի Փրիսաոս՝ պատմեմ իւրեանց, և պաշտին յեկեղեցւոջ մերում[2]։

Ա՛յլ որպէս յառաջին նուագան ի շնչել հողմոյ հալածանացն՝ առաւել եւս բորբոքէր հուր քրիստոնէութեան, այսպէս և յոյժմուս՝ մեծամեծք և բազմաթիւք եղեն հանդէսք և հանդիսացեալք ի նահատակութեան. իսկ անզգաստիցն առաւել եւս խելացեղեալ՝ եւս քան զեւս առատացուցին զիշամն գառնութեանն, երիցս և չորիցս կրկնելով զմահաշրաւէր հրովարտակն ի սկզբանէ 313 ամի ցսկիզբն երկրորդ ամին[3], այլ այն որ գլխաւորն էր կայսերաց, և թէ կամաւ և թէ ակամայ զիւր անուանն վերագրէր ի մահաշռնել հրովարտակն, ըստ գեղեցիկ խորհրդածութեան մերոյ Ագաթանգեղեայ, թէպէտ « ասս եղեալ համառնոյր հարկանէր ընդ վիմին հաստա» առթեան՝ ընդ հաւատոցն եկեղեցւոյ, վիմին ինչ ոչ » առնանել կարացեալ՝ ինքն առ վիմին խորտակեցաս »։ և ջախջախեալ պրծ՝ լքեալ զքառնամեայ զրահատակ ջանան և զդիրանիան, տեղի առեալ գնացր ապրէր առհասոյր ի հայրենի Գալիլատական ագարակս իւր. անհանդարից և վտասց քան զինքն թողեալ զապաւէնն զոր երաց. յորում մի ասն ի նոցանէ՝ որ յաւակնեալ մոլեգնոյն յառաջ խաղացե[4] մինչ մղել զկարծեցեալ խաղ և խէթ քրիստոսատեաց կամացն, զգոնն Տրդատ, առ.

1 Վկայեն ժամանակակից արձագրք զսպացեալ կայսերացդ ի համբաւոյ քրիստոնէութեան Հայոց. օրինակ իմն, Վկայաբանութիւն Ս. Լուսաւորափառին. » Ի նոյն ժամանակի համբաւ իմն հասա» եր ի լսելիս տեառնէն իշխանին (Խոսկ.) իրրեւ թէ «Դեռևս աշ» խարհն Հայաստանեայց և կապզագովկիա զպերճասքառ եկեղե» ցիագաւորական հրամանին, և միաբանութեամբ յապատաստա» ւին իմն քրիստոնէին. և զկնի գնալով քրիստոնէական հաւա» տոյն, անփոփոխ ունելով զմիաս իւրեանց ի Քրիստոս աստ, զոր և » Աստուած քաջգոն »։

2 Ի համար վկայիցս էն, յամի 302–3. Ս. Ալեքսանդրիոյ եպիսկոպոս. յամի 304. Ս. Յուլիոս և Կիրակոս ի Կեսարիա. Ս. Փիլիքոսի. գոգոնմանն Հռիփսիմեայ. Ս. Գայիանէ. —յ՝ 305. Ս. Լուսաւորափառին. — 306. Լուդիա, Մարտիր և Զենան, այլովք հանգիսիւ. — 307. Ալբինա և փառակ ի Մեհիրնէ. Մինաս, Եղմոգինէս, Լուդրատս յԱլեքսանդրիա. — 311. Գեորգիա Հայրապետ և Աբիսոզոմ. անդ. Ս. Պղտնկիանոս Աստիքատոսի. Ս. Դիմքրոնիկէ կոյս. և այլն։

3 Առաջին հրովարտակն հրապարակեցաւ ի 23 փետրուար ամին 303 ամին. յորում գնաց ոչ քազում ժամանք յառաջ նոր մկրտեալ էր Տրդատ և ազնաւոր իւր. յետ այնր հրապարակեցան և և գ հրովարտակք. իսկ առաջինգոյն և վերջին ի սկիզբն կրկո 304 ամուս։

4 Որոց երկիր իշխանութեանն սահմանակից էր Տրդատայ։

Նմին և ինքն ընթագրեալ խոտակեցաւ անարգաբար։

Բայց առաւնօր կամ է ինձ զդալն ինչ Թոզայուցեալ զայս ձեւ ընթացս բանիս, յայտնել զարմանս մի մեծ 'ի գէպ ամին։ Ձանաչէ ամենայն բանասէր՝ հայր եկեղեցւոյ կան պատմութեան գէւսերթս, գանուանեալն Կեսարացի (Պաղեստինոյ), ոչ միայն բազմահմուտ և բազմաշնորհ այր, քաւ յարիստական կաղ 'ի կաղ կաթեցեալն, այլ և ժամանակաւ հպատակ իշոց և աշխարհին՝ զորոց մեր խնդիրս է. մի ըստ միոջէ պատմելով սորա զդէպս քրիստոնէական կրօնից երեցուն դարուց և քաւորդի չորրորդին, ոչ բաւեմ ասել, զիարդ լուի զմեծահանդէս և զաշկարայ հաւատոյն Հայոց 'ի Քրիստոս, 'ի ձեռն Գրիգորի և Տրդատայ, զոր յետագայ պատմիչք եկեղեցւոյ յիշեն, և ասի (Սոզոմէն) յանուանէ իսկ Թագաւորին։ Ահագնատաւ իմն է ինձ լսանիլն Եւսեբեայ, զոր ոչ կամիմ քրքրել առաւնօր, բանասիրաց կամեցողաց Թողեալ զգննութիւնն. այլ թէ կամաւ և թէ ակամայ լեալ էր մոռացութիւնն, անհնարին համարիմ, եթէ չէր նորա այլ ինչ յիշատակ Թողեալ մեզ՝ յոյժ պատուական և հաճոյալ կարգի բանիցս՝ զոր ընդհատեցի. յիշատակ՝ զոր ահեղինեաք փափագէի դրոշմել առաւիք 'ի հիւսուած հաւատս որ զՏրդատայ. որ զի և ըստ ինքեան գործ մի է նշանաւոր, և առաւել եւս փափագասիրիս հետաքննութեանց սրեւելեայ պատմութեան խաչակրաց. գործ երկատեաւակ՝ 'ի դէմս աշխարհի և եկեղեցւոյ, առ 'ի բազմաց զանհաւալ մեացեալ, կամ ոչ ըստ արժանւոյն կշռադատեալ. գործ՝ որոյ ոչ զանգիտեմ սկզբնաւրէն խաչակրաց զՀայս ասել, և առաջնորդ առաջնոյ խաչակիր գնդի՝ զհայազգին Տրդատ, որ առանաւնեաւ յառաջ ծանեալ զզօրութիւն խաչի, և գրեթէ 'ի նմին ժամանակի՝ յորում յերկնից ցուցեալ առ Կոստանդիանոս նըշանն ահռելի, ինքն եցոյց զայն և երկինի և երկրի. ձագարաձի յառաջեցուցեալ 'ի միջի բազմազան դիւոյց և նշանաց հայագունդ բանակին, յիւր 312 կամ 'ի սկիզբն 313 ամին, խաղալով արեւաբար 'ի վերայ չամբուշ և արբշիռ չահատակին՝ ինքնընծայ օգտասուին լուրիկեցւոյ, ըստ բարւոյն յարմարեալ մանաւանդ Դաժանն Մաքսիմինոս, քեռորդւոյ Գալերիոս կայսեր. որոյ՝ ոչ ածեալ ակն յառագագոյն կայսերացն Թուլատրութենէ հալածանաց, յանդգնեցեալ պղնձագիր հրամարտակաւք և եւս առակացուցանել զնոյն՝ յիւրում վիճակի. և անուսում 'ի ասհմանակիցն իւր գիմագրաւել՝ 'ի սեփականութիւն մերոյս Աշխարհին, զոր 'ի բազում ամաց գիտէր ա խոյեան հաւատացելոց, և բարձր 'ի գլուխ Թագաւոր քրիստոնեայ. և գումարեալ զանչարտելի կարծեցեալ լիգէոնս Հառանց՝ արշաւէր 'ի վերայ սորա և ազատցոյն Հայոց. որք, ըստ գրաւոր բանի Եւսեբեայ, « 'ի սկզբ » բանէ բաբեկամք և սգնականք Հառանց էին. նորա » քրիստոնեայք էին, և վերկրպագութիւն Աստուծոյ » փառաբանէս սնդութեամբ կատարէին. իսկ ազն այս » առնչի Աստուծոյ՝ կամէր նեղել զնոսա, զի զոհեացեն » կաց և դիւաց Թշնամեաց. և փոխանակ բարեկամաց՝ » 'ի մարտ պատերազմի յարոյց զնոսա ընդդէմ իւր. ... » Արդ նա հանդերձ զօրօք իւրովք 'ի պատերազմի » անդ որ 'ի Հայսն էր՝ կռւիսիալ լինէր »[1]։

Զպատահեալսդ զարմանացս որ ընդ Եւսեբիոս, Թուիցին արդեօք և մերոցս բնիկ հին պատմչաց՝ մոռացօնք այսպիսւոյ պանծալի յիշատակի. ապայն հնոս իմն ընդ ազատ նշմարեմ զիրացս՝ առ Զենովիոյ ժամանակակցի, յասելն, եթէ 'ի ժամանակի արշաւանաց հիւսիսայնոցն 'ի Հայս, և մինչ խարհրդ 'ի մոր էր Տրդատայ երթալ յազկայն Կասանդիանոսի, « ոմանք » սեպհական զզօրսն Քառնոց, համարեցին թէ իշխանք հիւ » սիսոյ Թագաւորին ժամր զօրօք գան 'ի վերայ... իրբեւ » սեղեկացաւ թէ Քառնոց զօրքն էին, գարձաւ 'ի գա » ւառն Հայոց, և ինքն բանակեցաւ 'ի գլուխ Արձա » նին, վասն ընդարձակութեան վայրացն »։ Ոչ երկբայիմ զի Մաքսիմինոս գառնդքն էին զօրքդ այդ Քառնոց, իսկ զինչ արարին ընդ Հայս, կամ որպէս կոփեցան 'ի ապանէ. զայն ոչ իրեւ պատմիչ Զենովիոս, արգել հրամանի ունելով 'ի մեծէն Գրիգորէ, որպէս ասեն, մի զայլոց երկրի՝ այլ միայն զիւրն զՏարօնոյ անցս իրացն եղելոց գրել։ Բայց մեզ շատ լիցին և սակաւ նիւթ բանիցս՝ 'ի հաստատութիւն առաջնոյս խաչագէն ընդդիմամարտութեան առ հեթանոս բանասրս, և յաղթանակի Տրդատայ՝ իրօվք արարատեան գաղանաւարտիկ զօրօքն, որք գկորսս նախնեաց իրեանց 'ի լուկուլեան և պամպէտեան լեգէոնաց՝ սատ սրեալ լսծին, հրաշափառապէս փետրաթափ առնելով զարծաթս նոցին առ սոս նշանին Քրիստոսի։ Հաստատութեան է թէ և սրման մեծ նմին տուր նշանաւ կանգնեաց առ հետ Յաղթողն Հաւմմոյեցւոց՝ Յաղթողին աշխարհի և գժոխոց, որպէս 'ի նոյն ամ և ոչ 'ի հեռագոյն վայրի՝ յաղթահարեալ գթշնամեաղով խաժանն՝ զրէր 'ի մեծի խաչարձանի, առեալ զայն պատերազմն վասն Քրիստոսի ընդ դիցն Գիսանեաց։ 'ի գէպ էր գրել և սատաւար, Պատերազմեալ վասն Քրիստոսի ընդ հաւմմէական դիցախառն Պանթէոնին՝ և հերքեալ։ — Կատարեալն 'ի Տրդատայ և 'ի Հայոց, յետ և 'ի կայսերացեն իւրմէ Լիկինիոսէ, իսպառ հատաւ Ջախջախեցաւ (Մաքսիմինոս) Աստուածակալին ձեռամբ, զորմէն և վճռակերպ բաժնի ազգաւթեան իւրոց, մահապարտ սակաւ և սրտմտութեամբ, քան զոր չարագոյն եւս՝ ինքն գլխովին գժնդակ սխորհ. որոց « գերեզման ընդ էր մարմին նորա, ըստ Եւսեբեայ հա » տատարանեան, ... զի զօրեղագոյն ազգին ընդ » իրրեւ 'ի խոր ուզոյ նորա սպրէր զնա, և սչք նորա

1 Եւսեբեայ առեալ յիշեն և սպրք սմանք յիկեկեղեցական պատմչաց զայս գէպս. եթէ առաի և եթէ պլլուսա՝ ոչ վիտեմ, յիշէ և եվեվոյոյի եպիսկոպոսն Նիկիոս յն գործս։ — Բան Տարսուծոյ Հաւմմոյեցւոց՝ զոր մերս Թարգման կոչաս առել, ցուցանէ կամ չարաչար խորտակումն, կամ ուելի քան վի անգամ խորտակել և վատթարել. և է այս ըստ բնագրին ենսեբեան յն Գերմանեան։

Τούτοις προσεπανίζεται τῶ τυράννῳ ὁ πρὸς Ἀρμενίους πόλεμος, ἀνδρας ἐξ ἀρχαίου φίλους τε καὶ συμμάχους Ῥωμαίων, οὓς καὶ αὐτοὺς χριστιανοὺς ὄντας καὶ τὴν εἰς τὸ θεῖον εὐσέβειαν διὰ σπουδῆς ποιουμένους ὁ θεομισὴς εἰδώλοις θύειν καὶ δαίμοσιν ἀναγκάσαι πειραμένος ἐχθροὺς ἀντὶ φίλων καὶ πολεμίους ἀντὶ συμμάχων κατεστήσατο. ..... Αὐτός μὲν οὖν περὶ τὸν πρὸς Ἀρμενίους πόλεμον εἶχε τοῖς αὐτοῦ στρατοπέδοις κατεπονεῖτο.

» ասեան և ելին 'ի գուբս 'ի տեղւոջէ իւրեանց ... մինչ » եթող զնա չունչ իւր, և այսպէս ել յաշխարհէ Մաք- » սիմիանա, այն որ նա միայն մնացեալ էր 'ի թշնամեաց » անտի ասատւածպաշտութեանն, և չար էր քան զա- » մենեսեան » : Ընդ նմին վախճան առնոյր տասնա- մեակն հալածանաց քրիստոնէից 'ի հռովմէական ինք- նակալութեան . գազարբէ և խեթ Տրդատայ յաշնմ մարզէ . ուր տասնեակ մի եւս ամաց գայթ 'ի գայթի կային վիճակք որ ընդ կայսերութեամբ Լիկինիոս , առ որում զինուորէրն կրթեալ Տրդատ , և որդ զգառանցեալ ալիան թէպետ և « ներկուածոյ ունելով զհերս » , ժպըր- հէր թաթաւել հառակ անգամ յանպարտ արիւն նորոց նահատակաց. որպիսիք, Ս . Վլաս 'ի Սեբաստիա, ուր յետոյ և Ջառատունքն հռչակաւորք , Ս . Թէոդոր Անա- կղիացի , և այլք . այլ զիարձ Մաքսիմինոս ունելով 'ի մտի, թէ և « ցրուացեալ 'ի սիրոյն Տրդատայ մեր քաղաքաւրի, » անկն ածէր ('ի նմանէ) որպէս արդարեւ 'ի քշնա- » մուց » [1]. այսպէս նախ յահէ հակայիս մերոյ սանձեալ, և յետոյ վաթսարեալ մարտիս պատերազմաց 'ի Մեծէն Կոստանդիանոսէ, իւրովք ձեռօք խեղդ անձին արկեալ սատակէր, և ինքեամբ անհետանայր նօթնագլուխ վի- շապն կայսերակոյս, որ երից գրեթեան գժոխալունչս ընդդէմ եկեղեցւոյ :

Ո՛րքան մեծ փոփոխութիւն եղեւ յաշխարհի և սիրգն նորոյ ամանակի, 'ի միապետել Կոստանդիանոսի և 'ի յուծանել զկապանս հարիւր Փրկաւոյ, համարձակե- ցուցանելով զդպրոցն նորին [2]. զայն ոչ ոք անգիտանայ. այլ թերեւս ոչ և զայն' զի զոր նա յընդարձակագոյն թատեր աշխարհի գործեաց, 'ի վերին տեղւոյն ինքեան կարգեալ, զնոյն բազում ամաք յառաջ յիւրումն ահմա- նեալ վիճակի գործեր Տրդատ արքայ 'ի Հայս . և ոչ մի- այն իրրեւ հանճարոտ պատկեր նախադասափայր լինէր մեծագունին, այլ վազագոյն և լիագոյն կատարէր զնոր նկարակերտութիւնն քան զկայսրն . որ՝ ոչ միայն վասն մեծի տարածութեան երկրին և բազմացեալ ազանց՝ եր- կարագոյն կարօտանայր ժամանակի, այլ իշխեմ ասել թէ և առ գանդուղելոյն կամ յերկուս հետս կազալոյ երբեմն, գէթ ոչ համարձակ և դէպ ուղիղ դիմելոյ ան- դըր՝ ուր գերեւան հառատաւել ցուցանէր , և մինչեւ ցմահ իսկ յապաղելով առնուլ զկնիկն քրիստոնէու- թեան : Ոչ է ինձ առատաւոր քննել և գտանել, առ զգա- շութեան և ըստ աշխարհի ինչ խոհեմութեան, եթէ առ տարտամութեան այնպէս վարեցաւ Կոստանդիանոս. այլ յորժամ կարգ բանից և պատմութեան հրամայեն յառաջ մատուցանել և զէմ ընդդէմ կացուցանել զեր- կոսին նահատակն, զմեծագոյն յեղափոխիչս կարգաց և կրօնից յարեւելս և յարեւմուտս, – մանաւանդ մինչ իսկապէս հանդերձեալ էր մին 'ի նոցանէ երթալ յանդի- ման լինել մեւացն, 'ի տիեզերական մայրաքաղաքին, – անհրաժեշտ հարկ 'ի վերայ հասանէ՝ կալ և անկարկել առ վայր մի յերկոսին միանգամայն, և զտգակռել՝ ըստ ներելի շափոյ իշխանութեան նոցին : Այլ միշ իցեն շափք տարածութեան երկրի իշխանաց, առ գործովք և արդեամբք . – և յայսմ՝ ըստ աստուածային իմն տեսչու- թեան՝ բազում մասամբք նմանք և համեմատք գտան՝ Հռովմայեցին և Արշակունին, և յառաջնմէ կինաց իւ- րեանց : Ըստ ուժոյ և պէսպէս մրցմանց քաղաքեանց Տրդատայ՝ պատմի և Կոստանդեայ ցուցեալ զեր հատա- րակաց կորով զօրութեան . մինամարտեալ ընդ Սարմա- տացւոց ասեմ, 'ի դիմի հարեալ ահաւոր, անցեալ երկ- վարս ընդ Հայհիս . և հանդոյն իմն տարաբաղդ և բազ- մագէմ պանդխտութեանն Տրդատայ , ամս ոչ սակաւս պանդխտել յիւրոյ ծննդեան վայրէն, և 'ի հօրն գրկաց, և կալ իրրեւ 'ի պատանդի և 'ի գիսպահոլ 'ի դրան Դիո- կղետիանոս, և ապա չար եւս՝ Գալերիանոս, ուսանի և զանձուկ փախստեամբ եկն առ հայր իւր, և 'ի զօրակա- նէն կարգեցաւ փոխանակ նորա : Քարիական գործս պա- տերազմից՝ ո՞ քան զո՞ տառապեալ զայն ոչ անիմ ա- սել, առ 'ի չգոյէ մանրապատում պատմից առ մեզ, մինչ գազափարի նորուն բազում են կենդանագրք, քրիս- տոնէից և հեթանոս. և յայսմ բարերարգ և բարեփառ է Կոստանդիանոս, զի մի ըստ միոջէ վանեալ զերբեմն գահակիցն՝ միահեծան տէր եղեւ հռովմէական ինքնա- կալութեան, և զբուն զգլխաւորն զօրինաւոր հին կայս- րըն (Դիոկղետ) 'ի կամաւոր արձականին ընկալեալ. այլ սքան արգարութեամբ. – ոչ կարծեմ անտագիտ լինել յոյսոսիկ. բայց անեպեր և յոյժ գովելի 'ի մարտն և 'ի յաղթանակս 'ի վերայ բարբարոս ազանց. ընդ որոց նը- մանիս՝ հնոյս բազում անգամ մարտնչել և մերոյս քա- գաւորի և յաղթողանալ. և ոչ 'ի վերայ նոցին միայն, այլ և 'ի վերայ Սասանեանց զօրաւորաց, երբեմն ագնա- կանութեամբ կայսերակալանաց և այլ երբեմն միաշնակ, և հռովմ ընդ հզօրագունիցն ընդ նոցին իսկ Հռովմայեցւոց բազխելով, յանհնանար արշաւանին Մաքսիմինոս , և չարաչար հարկանելով զնոսա : Քարիականն ասպարիզի՝ երկարագոյն ամաք գտանի վաստակել մերս արքայ քան զկայսրն, զի ութ 32 ամք եղեն իշխանութեան, իսկ մերոյս հաշուին իրրեւ 36 : – Օրինագիրք Թէոդոսեանց և

1 խորենացի , (Բ . 21 .) յոյժ երգիծանօք հառէ զամանէ , յետ յիշելոյ զմեծարիւն և զփիսաչանալ Կոստանդիանոսի , որ և « ոչ » քոյ ամենայն աբելից կոյսից (գնա) . բայց զոր ստատուածպին քանն » առ նշրպետեցոյն անհնարին համարեալ՝ չարաչարեան փոփոխումն » նոյն և ստատուած պատահէր . Ընդու անկարելի է զնայոցյան » փոխել , և նշիսվպոյոց՝ գիմաբերին , նոյնպէս մարդոյ ստատ- » ըոյսի գրաբան : Քանգի նախ ստ . 'ի հաւատան գասեի գրեալ , և » երկրորդ ստ . բարեգործեին իւր՝ ապաստամբ . յորոյց հալածանս » հնկեցուց , և . Նշնագործեին գազանի ընդդէմ կոստանդիանոսի . » նաև չարիս բռնութեանս ամենեցուն հատոյց՝ որ ընդ իւրով իշխա- » նութեամբն էին , ջանկասէրս ստ և գարշելի ոչեւոր , ներկուա- » ծոյ ունելով զհերս « հայելս վխճանեալ նորա» յետ պատերազմեան 'ի կոստանդիանոսի՝ ոչ որպէս պատմէ յետ այոց բանից՝ թոռն նոցի՛ եղեւ , « թնդալ (՝ի նա կոստանդիանոսի) որպէս 'ի ծո- » բանի և . 'ի քիսապր , նա ասեն՝ 'ի Գալլիսս հանգերձ երկաթի » կապանօք գնիլ 'ի մնասս , զի ապրեցեալ ստ Աստուած՝ որում » մեղան , թերեւս երկայնամիտ լիսի ստ նա ց . այլ զկնի ստանչոց պատմութեանցն 'ի Պանեգիսս և 'ի Թիսկիս , յամի 313 , և . գա- չանց հաստութեան , յետ իսն ամաց (323) միւսանգամ յաղթե- հարեալ 'ի Թրիւսիոպոլիս , ստ ամի ձառայանաց կամ գժոգակագոյն եւս մանուտն՝ անձամբ անձին խեղդ արկ 'ի Թեսաղոնիկէ . (16 մայիսի , 324) :

2 Շրջմաբանակն արգելման հալածանաց և ապաստութեան քրիս- տոնէից՝ ստատ . 'ի Մեդիոլան ց'12 մարտի , 313 ամի :

որ ըստ նոցանէ՝ պահին մասամբ և զգաստական օրէնս առնմանեալս ՚ի Կոստանդիանոսէ, որպէս և զեկեղեցս կանս ինչ զրուցեն պատմիչք. զՏրդատայ՝ սակաւ ինչ ասացեն պատմիչք մեր. այլ և ՚ի սակաւուն նշմարի ՚ի նմա հանճար և չան մեծ ՚ի պահպանութիւն աշխարհին և յապահովութիւն, զինուորական բաժանմունքն և վիճակք. և ըստ քաղաքական հրահանգաց՝ դասաւորութեամբք՝ ոչ պատուհէից միայն և զրանկաց, այլ և համ. օրէն Հայոսանանեայց առմից՝ ՚ի բարձս և ՚ի կացս՝ յարքունի ռաճաթին և յոշխարհսխաւմս ասեն, զորոց թիւ յիշեցաք ՚ի 400 կամ յ՚900 աթոռ. համարել. խակ ասէ ՚ի փոյթ մեծաւոր և հզեւոր հրահանգաց աշխարհին և անձին՝ անհամեմատ առաւելեալ երեւի ինձ թագաւորն քան զկայսրն. չասի զամանէ մակացութեանց պարապելով ՚ի չ՚ասլ և յոխերիմ արքունիս կայսերաց, և չորս մութեան թուին բանք կ՚ասերեալ ՚ի գրաւոսան զնմանէ. այլ զՏրդատ ասէ պատմիչ իւր՝ զեզերեալ և յոստումն հեղինական գոլոթեան և փիլիսոփայութեան, և ՚ի հաւատալն ՚ի Քրիստոս՝ առաջին զինքն ըղերձեալ յաչակերտութիւն Լուսաւորչին։ Քայամ մասին՝ հաւատոց և ՚ևերաշխարհն հաւատոց և քրիստոսակիր հոգւոց, ոչ ինու դանդաղեմ զերագոյն համարել զՏրդատ, որ՝ եթէ ՚ի հեթանոսութեանն բրտագոյն և գազանագոյն էր քան զկոստանդիանոս, ՚ի քրիստոնէութենէն ազնուագոյն և հեզագոյն ցուցաւ. ՚ի սրբարար ականց Եփրատայ՝ ել նա որպէս առն մի համակ պայծառափայլ, մինչ ՚ի Կոստանդիանոս ժամագ հին մարդոյն՝ երեւէին, անլուայ մնալով ՚ի սուրբ յաւազանէն. այլ և խայտուքն ընծաւ. որովք՝ թերեւս ոչ պակաս քան զհին գահակիցսն, գուշէ և աւելի եւս՝ անգթացեալ և անկրկնացեալ՝ ՚ի պէսպէս մահաւոր մահանաց զվերծաւորագոյնս բնութեան իւրոց, գկին, զփեսայ, զաներ, և գլուխ ամենայն ոգոյնաց՝ զանդրանիկն առաքինի, գկորովին Կրիսպոս, որ գերազանցել գուշակիւբ քան զկայրն. Քաղ գկոտորած կարծեցեալ կուսակցաց սպին։ Ցորս ակն արկեալ անեաշտ քննիչ բարուց և զգացմանց սրտի՝ ոչ կարէ օրինել զկոստանդիանոս, որքան և գործք մեծամեծք կատարեալք իցեն ՚ի նմանէ. և հարկ է անագանեալ մկրտութեամբն և կանխեալ երախտեաքն առ եկեղեցի՝ ծածկել զսխալս կան և զարիւնարբուշ տեսարանն, և յանձն առնել գնա յանառաքման գթութիւն Աբարչին, որպ անքնին են կըշիռք և անքիւ օրէնսք ՚ի խորանս իւր։ Այլ ներհակաբար ամին՝ որքան գորովով և խնամով ստածէր Տրդատ զընտանիս իւր, վկայէ պատմիչ նորա, որ ամենայն ուրեք զՏիկին նորա Աչխէն և գգայրն գագլիր գործակից նմին ցուցանէ, ՚ի բրածոյ հիմանց ստէարապ վկայութեացն՝ մինչեւ ՚ի ձեռնարկս արքունի հրովարտակաց.— վկայ է յաղագ նորա և անդրանիկ խոսրով, զոր՝ թէ պէտ տեսանէր հայրն՝ սակաւ մարմնով և ոչ նմանեալ՝ ոչ հսկայական հասակի իւրում և ոչ արիական պտոյն, այլ ոչ զրկեալ յաթոռոյն, զոյլ ոք յորդւոցն կարգելով ժառանգ. — վկայ է և կացեալ արտաստէն Հաւանոյ Գաւանոյ՝ ՚ի հանար քեան իւրոյ Խոսրովիդխտոյ. որոյ գերբակք անգամ առասել սպգեն խանգս սերոյինս, քան փառս փոքրիկս մարդացածոյ և կարկառեալ կամար յաղթից Կոստանդիանու[1]։

Բայց արդ դառնալ մեզ պիտի յոճ նախագրելոցս, և հանդիպեցուցանել իրերաց երես առ երես՝ զերկոսին պատկառանս՝ զոր ՚ի կիլիս փորձեաք։ Որպէս համարս քրիստոնէութեան Տրդատայ հնչեցեալ՝ գղրդեցոյց զզբունս կացսերացն, նոյն և հաչակ հատատոյ Կոստանդիանոս՝ հրճուեցուցիչ հանուրց հաւատացելոց՝ զվեհագոյն նոցին վէրս արջոյ՝ լոյոյ ըստ մեծութեան ոգւոյն և ըստ բազձանացն. երկրորդ իսն արտաքին պարիսպ ամրութեան համարեցաւ ածել զիւրով Հայաստան աշխարհս. և փութայր դիմել երթալ կարկառել ազ խնդութեան և գաշնակցութեան՝ առ վաղեմի մեներիսն իւր և նժգնհակից։

Մի յերեւելի դէպսց պատմութեան մերոյ և նշանաւոր գործոց յամենայնի քաջնչանն Տրդատայ, է երթ նորա ՚ի Հռոմ, որ և աներկայ մնայ մտագիւբ քննութեան, ՚ի թօթափելն զանհնգնեզ կարծիս և զրանս ՚ի նոյն յաբեալս և գչաղփատիանս ատեղծ թզիծն գաշանց. որ ոչ միայն զրպարտս մղզրեցոյց երբեմն, այլ թերեւս յաղագ համիան եւս անկեալ հաւատս՝ ոչ լոկ քաղաքական գաշնակցութեան ազդաւ լինել զերթն այն Տրդատայ, այլ և եկեղեցական սահմանագրութեանց եպիսկոպատապետին Հայոց ընդ քահանայապետին Հռոմայ. և զի վազ ուրեմն բարձաւ ՚ի մէնչ քաղաքական գլխաւորութիւն. խակ կրօնականն մնաց և մնայ, ՚ի սա ընթանան յաւէտ միաբ և բանք. այլ տատգութեամբ՝ Գրիգոր՝ յոյժ երկրորդական դէմս ունէր յայսպիսում ուղեւորութեան և գործառնութեան, որոյ՝ խոկապէս քաղաքական էր նպատակ. թէպէտ և ոչ է անտեղի՝ վարկանել, նա մնատանդ և պատճառ խակ, եթէ յարժամ երկրքին քաղաքակ գլուխքն խորհրդակցէին ընդ միմեանս, և նուիրապետքն կրօնականք զեկեղեցւոյ հոգոյեալ իցեն. բայց ոչ ըստ անոխապատասխան հակառակաբանութեանց՝ մեծացուցանելոյ զմիոյն տիեզերական և զմիւսոյն ընդգծականաժառալ իշխանութիւն հոգեւոր։ Բանք ինչ Ձենովբոյ զեպիսկոպոսաց հրաւիրելոց ՚ի Հայս (զոր վերագոյն տրեք յիշեցաք), պատահելոց Ս. Գրիգորի ՚ի ցարձի նորա ՚ի Հռոմ, և առանգութիւն թերելոյ սորա անտի պաշտօնեայս եկեղեցւոյ[2], վկայութիւն Ագաթանգեղեայ և համարեն պատմչաց, հաւատալք են ընկերբելոյ նորա արքային Հայոց. որ, որպէս տեսաք յառաջագոյն, յամենայն կարեւոր դէպս և ՚ի տեղիս առ իւր առնէր զԳրիգոր[3]. հաւատագոյն թերեւս ՚ի գրաւոր յիշատակաց երթի սորա ՚ի Հռոմ՝ է իւրով խակ ձեռամբ զբռնալեալ առմնանագիր Աւաքելոյ վանաց Տարօնոյ, ՚ի

1 Քանզի յառաջագոյն կամարն այն կանգնեալ և նուիրեալ էր յաղթանակի պղոյ կայսեր։

2 Գերա կաթողիկոս (ըստ Մովս. կաղանկատ. Ա. ԺԱ) ՚ի Քրիստն առ վաչէ Թագաւոր Աղուանից, յիշեցուցանէր նմա զնախնիսպատն նկեալ ՚ի Հռոմի ընդ Տրդատայ, որ առաւ առաքնորդ սրբոյն Գրեգ։

3 Ցայն ներբողէ Լուսաւորչի Ոսկիբերանն, կամ Թէոփիլոս, և Թէ այլ ոք՝ ի՝ ՚ի վկայից է, առելով. 4 Որ և ՚ի նոյն խակ ՚ի մայ-

յոյն բարբառոյ գտեալ և յեղեալ ՚ի հայ, ՚ի ԺԱ. դարս. Ձեռամբ կամ հրամանաւ Զաքառանելի Մամիկոնոյ [1], — Որքան աներկբայ է գնալն առ կայսր և դաշնակցութիւն Տրդատայ, զոր առեալ յիշեն քաշանայապետք մեր և նախարարք ՚ի գրէն առ յաղթող Կոստանդիանոս [2], այնքան անաւգոյ և կամամտածական մեզ պայմանիք գաշանցեն. այլ չատ է հաւատալ, եթէ նորոգեցան որ ինչ իբր 20 ամս յառաջագոյն ասհմանեալք էին յաւուրս չորրորդապետութեան կայսերաց՝ ՚ի գաղնագրութենէն Մծբնայ ընդ Պարսից, և վերահին գծեցան ասհմանք ազգութեան Տրդատայ, թերևս ընդարձակեալք յայսմ կամ յայն կուսէ [3]: — Ցետ այսր կարեւոր խնդրոյ՝ առեղծուած համարիմ քննել, եթէ արդարեւ այնքան բազմադունդ բանակաւ 70,000 զօրաց, և չորեքտասն գահերէց իշխանաք ասահարին և ասագազանն պատահեցեալ գրաւեն, և եկեղեցւոյն [4], յորմէ անկաւ Տրդատ, կամ ցոր վայր նոքա զօր, և որովք միացեալով հանդիպեցաւ կայսեր, և ձրպէս գիտող պատահեցաւ և պատահաց: Այս յայտ է, զի յա-

[1] Ոմանք թերևս պլշղլնել բանք ինչ յաջմանոյիլսատակ ասէմանագրիս, և այնչափ ՚ի թարգմանութենեն, այլ ատաղութեան հաւատարիմ բնծայէ. յորում և այս է բանն որ խնդրոյս մերոյ ՚ի հարց, և չէ հնար յԱգաթանգեղոսէ ատանգութենէն. " Խնամքն " Աստուծոյ և ասաջնորդութեամբ կամ հզօր ինձ և ատաստածա- " սէր և քրիստոսասէր արքային Հայոց Տրդատայ, գիտալ ՚ի տես " ՚ի սէր և ՚ի միաբանութիւն մեծ քրիստոսասէրն և բարեպաշտ ա- " խորհակալ կայսերն Հռոմէական Կոստանդիանոսի, հանդերձ " բազում ազատագունդ զորաւք Հայոց, ուր հաղաբաս. որով հա- " սեալ ՚ի մեծ մայրաքաղաքն և յարքայանիստ գահն Հռոմ մեծամեծ " պատուով և ամենայառատ սիրով ընկալեալ եղեալ յատաստածասէր և " բարեպաշտ արքային Կոստանդիանոսէ, և ՚ի սուրբ ատաքելահաման " հայրապետէն Սիլվեստրոսէ: Կացեալ ժամանակս ինչ առ նոսին, " գայն սիրոյ և միաբանութեան եղեալ առ միմեանս, Քրիստոսի ա- " րեամբն կիզել և մխիթարել, զի անէրելի լիցի ուխտ և միաբանու- " թիւն Հայոց և Յունաց, մինչեւ ՚ի կատարած աշխարհի " [2] — Թարգմանութիւն գրոցս եգեալ է իբրև յամի 1080, և բնագիրք իսկ թարգմանութենեն է որ պահի ցսոց ՚ի Նդի վանս Աստղիոց, ասկաս ամեն յատալ քան զդիմումն Ա Խոշակրաց յարեւելս. այլ բան կանխելոյ համարատս արքային ազգին Յերանից, զոյս տեսուն փոխանակ Հռոմէականոց մտածեալ է թարգմանն ՚ի բանից զոր ոչ է տեղւոյս երկարաբէն ՚ի քեն տատուցանել:

[3] Արդէս Վ.բմանէս Հայրապետ առ Կոստանդ կայսր. (Խորեն. Գ. Գ.), և նախաբարք յաւուրս Վաթպանայ առ ԽԷզոգոս Փոյր. (Ագաթ. Գ. Գ.):

[3] Հաւանաբէն անփոփոխ պահելոցն ասհմանքն եգեալք հաստատեալք Պարսից յամի 297. քառղի Ագաթանգեղոս յետ ուղեւորութեան ՚ի Հռոմ գրելով, պատճառ ասհմանագրէ վերինքն Հայոց որ ընդ իշխանութեամբ Տրդատայ և հովանաւորութեամբ Գրիգորի. " Ի Աստուածոյ քաղաքէն' առ աշխարհն Խոզտանդ, մինչեւ " առ Կապաբիտը, մինչ ՚ի սահմանս Մարքիայ (գրէի' " Մհխթայ), մինչև ՚ի գրաւս Աշտանդ, մինչև ՚ի սահմանս Կաս- " պից, ՚ի Փոյտակարան քաղաք արքայութենեն Հայոց. և Աշ- " գոյտդ քաղաքէն (յարեւմտից հարաւոյ) մինչեւ առ Մծբին քա- " ղաքաս, քերէր առ սահմանաւքն Աղուանից, առ Կոր-չիրական երկրաւն և առ Կորչոյք, մինչեւ յառեալ երկիրն Մարսոյ, մինչեւ " առ սահմանս Մարքիոյան խրամին, մինչեւ Ա.Ա.արդասահման ". Որպէս անասնիք' յերեսաց կուշտանդ' հեռանալոյ, յաթենէից և ՚ի հարաւոյ գանգանեն սահմանքն քան գսովորեալ ծանուցեալ չափ Հայոց Մեծոց. իսկ յարեւմտից' ՚ի մերձաւոր մարզէ կոյսեբաթենեան անչխատակ ՚ի ասաջորդին' ՚ի Աստուածոյ քաղաքէն մինչև Ա.Ա.դասոյցն, որ է ասել մինչ Մծբին և փոքուն Հայոց և երեք լեռնոյս բոլորովին ՚ի կողմանէ քառասի, (Մծբնոյս քաղ ՚ի կողմանէ ինչ Գ Հայոց), և սահմանին թագաւոր կարգեալ Նմին ՚ի Կոստանդիանոսէ' եղբօրորդի նորին Աննէքաթիանոս:

Յամենայնի մեծապատ հնգիկակ Պատմչդ Թղթոյն' սահմանեալ ասէ Կոստանդիանոս զվան Տրդատայ, " Զգեցուցանել Արմենիան (Ա " Հայս), գկապազովիկա' զոր հանեալ էր ՚ի Հայոց Պահպէն, կե- " սարեա. և այս է բան հայրենիք Տրդատայ, ՚ի լեռնէն Արձայ " (Արգէսատ) մինչև ՚ի լեռան Աբրատատայ, ՚ի Գողլ գետոյն Եփ- " լեսացեաց (Հելենոպոլեսացոց) մինչեւ. ՚ի հզոր գետն Տի- " գրիս մեծ. իսկ ՚ի կողմանց յոս Հայաստանեայց' արշաւի բացուկն " իւր բանեցնէ և Թուրն Թաւթեացէ' Նմա հպիպէ ":

[4] Ակատարիչ և յայսմ մասին պերճաբանութիւն վերոյիշեալ Թղթոյն. " Պատկերացք զմեծ արքայս Տրդատ' կոչնեբական թագիս " մերով, լուսաւոր ակամբք յորինեալ և մեծամեծ մարգարտով " չրջապատեալ, և զարգարեցուք զսկայաճաղդն հաւատն' ծավալին " ծերանալոյ և պատնական մեծ աչքուք մարգարտամաքուք. և զան- " կին գոսթ հոր իմոյ հզօրի սեծի ընդ մէջ Տրդատայ քաջի. և զի- " նաւորական զարդուք և գինուք մերովք, արքունադրոշմ նշանաւոր " կատար, ծավալին պատնէշ հրեղինաւոր ասկեայրք, սատակը- " հաւաշնեակք. և հրկայիք վիշապամարք, գոմարատակք սեղան " գոնեարք, և գունագեղ գինուք պատրաստեալ սիրելոյդ(նշանագ) " խոխտակելիապէս (ասկեղէնովք), զրատրեցուսս անհպատոյ չհեփ- " բալոք, հրգնեակս յարգանաւոք, և միաձագանգն իսկ ամենայն " զարգարեալ և ամենայն պատրաստութեամբ պատահի իմոյ պատա- " սիրելի գաբերելոյս իմ' Ըստ զոր և մեծապատիւ դիւրոյս մեր Պատ- " սեհէս(Պաքոսիմեան Փաստոս) և քոյրս սրանդիչագեղ Կոստան- " սիա' պատրաստեալն բնծայս զարմանագանս, որովք պատկանիլ " բանիցն արեւելեան վայելչափայլ թագաւորն Պահն Պարթեն, և " չքնաղագեղ արիարդն Հայոց Մեծոց Խոսրովիդուխտ գավթհսայն " (duchessa), զրաց ատանելոյն թագս և պատիս յատկութիւնս և " յատկիս ամբարելատնտեսութիւն, ոսկեմանեայս բազմապարտս, և " բանաստեղս բիւրապատս և վարսակալս վայելչազարդս, և այլ " գարգս բազում անանց, և յայրբէմեղիկոս' գործք հարատարագ ան- " պիտոյ և անգինք, գոզենս գազմատակաս. Նորիւբ և յատն " բարձեալ ՚ի ուրուք ասանց ասանց ասանց

մինային մեծ և հակայագործ տեսաւ Տրդատ, և անդէպ է պլղագ տալ և յայսմ հանդիսի[1]. և թէ ոչ բիւրաւորս՝ այլ հազարաւորս հաշուելի է զոյղկիցսն՝ ի ըստ միոջէ յայնեւայլ հանգոյս թագեալս՝ ի պահ և՝ի սպասդարձին. և՝ի թաթափելն իսկ զմեծապանծութիւնս պատմչաց, զպղպեալսն իսկ յԱգաթանգեղեայ մատենին, միարբ է ընդունել զայս բան նորին, եթէ երթեալքն՝ « մեծա-» րեալ լինէին գործունէիւք, մեծապատիւ չքեղութեանն » կարգիւք, յարգանաց և յեկեղեցւոյն, և՝ի պա-» տուական իշխանաց քաղաքին, և մեծամեծ պատուա-» գիւ և երեւելի պարգեւօքն պատուել սիրով. և ամե-» նայն իրաք աշողելովք երանելին յոսխիապատ կառս ար-» քունատուրս, և մեծաւ չքուն և բազում վայելչութեամբ » ունէին զնանապարհս արքունականս ... ըստ արժա-» նաւորութեան արքայութեանն մեծապէս պատուել». — և՝ի գործին՝ առաքելով զպարգեւել « զոսկին և » զարծաթ և զպատուական կապուտն ... և զոսկի սպասս » կայսերն ...՝ի նաէբս սպասս Աստուծոյ եկեղեցւոյն, » և՝ի տունս նաէիրաց արդ վկայիցն » (Ագաթանգեղոս)։

Զկայսերականան յիշելով զառաս՝ միտք մերազնեից անժոյժ ընթանան և՝ի թագաւորականն, ոչ շատացեալ լոկ վայելուչ համարել զՏրդատայ ընծայաբերութիւն, այլ գիտել ինչ և զոյգէան, զորմէ լռեն պատմիչք. բայց յատուկագիտելն ունին խոստացիք, և առանձինն պատմութիւնք քաղաքին՝ (Վենետկոյ) յորմէ գրեմս, եթէ Տրդատ թագաւոր Հայոց (զոր համարին զՊարթեւն որ առ Ներսեհս), տարեալ իւր ընծայ առ կայսր զչորեսին գերահռչակ պղնձագործ ոսկիագործ երկուորս, զոր նկատեմս յառաջ՝ ի բարերաւանդակ ճանապարհ աննման առանցի Սրբոյ Մարկոսի՝ յանմնման հրապարակի Ադրիական մայրաքաղաքին. և պատշաճագոյն համարիմ՝ ի հակակշռ մերմէ և՝ի Սրբոյ Տրդատայ՝ առաքերեալ զնուագուած առաջ քանոյ նախնեացն իւրոց յարշաւանին Եգիպտոս (յԱլեքսանդրիէ կամ՝ ի Տիգրանայ), զձեռագործս գերազոյն ճարտարացն Յունաց, զՊրաքսիտեղեայ և Լիւսիպպոսի[2], և առյարձակել կառուցեալ զնոսին յաղթանակ՝ ի վերայ յաղթականն կամարի Կառանդիանոս. յորմէ յետոյ փոխադրեցան՝ ի Նորաչէն և յիւրանուն Նորին՝ ի քաղաք, և անուանս յաւուրս թագաւորելեան մեծագործին մերոյ Լեւոնի՝ այսր՝ ի վենետիկ, ՝ի յաւերժական փառս Տրդատայ՝ ի յոչ գիտացեալ իրացս, որամ փոքր՝ ի չուտ վկայեն և հին տեզագրողք Հռովմայ՝ առ ինչ կրեալք ժամանակաւ քան զՏրդատ[3]։

Թողացուք զայս առնդութեան, որ եթէ ոչ թուիցի հաճոյ, կամ անառի պարծելութիւն մեզ համարեացի զայսպիսի չքնաղ անգրիս թագացանել ձեռամբ Տրդատայ՝ ի նշանակեալդ փառացական կառաւ, մասաւորին արեւմն՝ ի նմանէ արժանիք լեգէոնացն կռփելոց ընդ Մաքսիմինու՝ ի խաչագծեցիկ գնդից Հայոց իւրոց, որպէս երբեմն յեռագարձին առ Օգոստոս՝ կապուտեալքն՝ ի Պարթեւաց՝ ի պատուհան Կրաստոսի։ Իսկ ինձ քոյլ ասացի՝ ի հաստատութիւն կարեւորագունի խնդրոյս, որ է երթալն Տրդատայ՝ ի Հռոմ, յուզել և զժամանակին։ — Գիտելիք առաւել զյաղթական մեծաս Կառանդիանոսի՝ յետ պատերազմին և գնացմանն կորառեան Մաքսենտեայ՝ ՝ի կայսերական մայրաքաղաքն, յետս կայս 312 առմին (29 հոկտ.), առ քաշանայապետութեամբ Սրբոյն Մելքիադեայ. առ որով ասէ և պատմիչ մեր՝ կամեցեալ Տրդատայ գալ այսր՝ այլ արշաւանք հիւսիսականացն և Մաքսիմինու՝ յերկիր իւր, և յետ այնր պատերազմանք յետնոյս ընդ Լիկիանոս (313), և յետոյ եւս տարեաքն ընդ Կառանդիանոս (314), խոտան եղեն ուղեւ թագաւորին մերոյ՝ ցամս երկուս, մինչեւ հաշտութեան դաշինս եղեն երկոքին միացեալ հակառակորդ կայսերքն, և բաժանեցին յերկուս զաշխարհս ինքնակալութեանն, յայնժամ պարապ գտեալ Կառանդիանոս՝ գարձ արար՝ ի Հռոմ, և կատարեաց անդ մեծաս հանդիսիս զասնամեակ կայսերութեան իւրոյ, յամսեանի 315 ամին (յամենան օգոստոսի). այն ամ՝ որպէս ըստ դիպաց մեծի հանդիսին՝ ի ճահ գալը և գալառեան Տրդատայ, առաւգապէս և այնպէս եղելով համարիմ, կամ ըստ բանս բաղդի, կամ յառաջագոյն գիտելով Տրդատայ գժամանակ նաւակատեացն Կառանդիանոսի՝ վկայութիւն ունիմ առ այս վեսերական, կտրեմ զանխուլ՝ ի յոլովից և կամ յամենեցուն ձեռացեալ, զհրովարտակն կամ զպատուէր Կառանդեայ կայսեր՝ որդւոյ և յաջորդի Մեծին Կառանդիանոս, առ ամն՝ ի նախաթարաց իւրոց

1 Ըստ Ագաթանգեղեայ. « Ականջք ընդ իւր զմեծ արքունիսկս » պատ Գրիգոր, և զեորան որդին կընծայէր, և զեպիսկոպոսն » Աքրիանոս (գերբեցպոյն յաստիճանականքն). և՝ի գինւորական » կոչմանէն՝ գչորեսին գանձերքեան իւրոյ առաքին. առաքին, զԱ-» ռաքմանակալն՝ ի Նոր Շիրական կոչմանէն, և Արիրորդ՝ Սահ-» մանակալն յԱորձառաստենոց կոչմանէն, և Արերորդն՝ յԱրտա-» տական կոչմանէն, չորրորդն՝ ի Մաքքիաց կոչմանէն, զմեծ իշ-» խանն Աղձից առն, և զԹագադերն Ասպետ, և զՎաղարշապատ » մեծ, և զիշխանն Մոկաց, և զիշխանն Արշուսենից, և զիշխանն » Ռշտունեաց, և զիշխանն Վասպուրականաց առնն, և զՇահապ » Շահապիվանի, և զիշխանն Ապահունեաց առնն, և այլ բա-» զում մեծամեծից, և համառաստն հազարաւ բնակք զորուն հան-» գերձ »։ — Ընդ որս էր և ինքն զորագործն արքունի, որ գործս-» սին հասէ. բան կարծեաց հնդկական թղթոյն Դաշտոց՝ երեւի և թագաժառանգին խոստով երթեալ ընդ հօր իւրում։

2 Ըստ կարծեաց ոմանց Հռոմանից, յորոց մին՝ Փիղիքասյ իսկ ընծայէ զնուագան, գերազոյնն յանդգնագոյնս Հելլենաց։

3. Մի յառաջոց յիշատակ պղնձեայ երկուորցս՝ յանուն Տրդատայ, է վիկտոր Պոլլիոս, ՝ի տեզագրութեան Լ թագի Հռովմայ. մեռ ասի անուանն՝ ժամանակակից Վեսպեսիանոս կայսեր կամ Տիտոսի, որ է ՝ի կնս Լ գարու, յաւուրս վերագանձին Տրդատայ ՝ի նմին թագի յիշէ. Equum Tiridatis Regis Armeniorum. Բայց պիտի է զի ոչ միայն վենետկեան երկուորս այլ և որք յորդ ՝ի Հռովմ կան Յանն Նորին նմանիք՝ յաւուրսիմ առ այս վեսերական, կտրեմ զանխուլ՝ ի յոլովից և կամ յամենեցուն Յունաց Տրդատայ գժամանակ Նաւակատեացն Կառանդիանոսի։ Վկայութիւն ուն

'ի փոքր Ասիա, առ 'ի տալ Արշակայ Թագաւորի Հայոց' առաքանդակս կայսերականաս' յերթեւեկութեանն։ Դէպք իրացն և ժամանակն' յայտ է թէ յետոյ են քան զկընդրոյս մերոյ. այլ' բաւս հաստատութեան արքին կայ Ասոյ 'ի առաջագրութեան հրամարտակին, իբրու տուեալ 'ի հինգերորդ հիւպատոսին Կոստանդիանոսի և Լիկինիոս. գիտեմք առաջս զի երկոքին ոչ կայսերակից էին զհինգերորդ հնուագն հիւպատոս կոչին 'ի վերոյ նշանակեալ 315 ամին։ Արդ հաւատոյ արեալն այսու' զի և 'ի ամին իսկ ամի առեալ էր հրամարտակ մի կայսերական' վասն Թագաւորին Հայոց, որ էր ինքն Տրդատ, և թէ 'ի սակս երթեւեկութեան նորա սահմանաւոր արքունատուր կոչեցին' զոր ցուցանէր մեզ Ագաթանգեղոս, և եթէ յայլ ինչ սակս. եթէ առաքինին, յայտ առագիկ լինի' զի վազագոյն ազդեցեալ էր Կոստանդիանոսի եկն Տրդատայ, և հրամայեալ հանդերձել հիւրոյն մեծի' կոչս կայսերականս. և եթէ երկրորդն, 'ի դէպ է ասել դարձեալ' եթէ յայնմ ամի եղեւ և կինքեցաւ ընդ նոսա հաւանութիւնն, կամ բաս մերայոցս' Թուղրն դալոց, ոչ առեղծաւանեալն որ արդ գոանի, այլ կորուսեալ և բնագրաւ և թարգմանութեամբ։ Արդ այսպէս լիցին հաւատք և երթալոյն և դաշնակցութեան Տրդատայ, և ժամանակին, յորում արգէն զՄելքիսեդէս յաջորդեալ էր Ս. Սեղբեստրոս, ընդ որում զրուցին և մերայս Լուսաւորչի' ոչ միայն տեսաւորեալ այլ և դաշնաւորեալ։ – Դարձցի արդ Տրդատ, անարիւն' այլ մեծաշուք եւս յաղթանակաւ' միաբանութեան մեծագոր ինքնակալին' յաթոռ իւր անկրկեան, եկեղեցագործ Գրիգորիս իւրով. և եթէ հաճոյ Քրիստոսի' զօրէն տաճամիկի դաշնակցին, կատարեսցէ և ինքն զերեսնամեակ Թագաւորութեան իւրոյ, որ ընդ յայնմ ժամանակի, և անմարթ էր չառնել աչխարհախառն հանդէս Հայոց 'ի վերագառնալ մեծի Թագաւորի իւրեանց յայնքան հեռաւոր և յերկար ճանապարհէ, և այնքան չքով և առատաձեռ։

Քնա երեսնամեակ բազմագիմի պատահարաց և քաղաքավարութեան ըստ կամս և ըստ ոչ կամս հռոմէական ինքնակալացն, արդ անգրաբացեալ Տրդատայ' հաստատութեամբ քան նիզակակցութեամբ Կոստանդիանոս, գոն գործէր այնուհետեւ ոչ յաչխարհակալել, այլ զաչխարհ իւր բարգաւաճ կացուցանել նոքագիտ յատուկ կրթութիւն, և 'ի ձեռն Լուսաւորչին իւրոյ սիրել զնոյն նաեւ 'ի սահմանակից աչխարհս վրաց, Աղուանից և Կովկասացոց խաժադաժ ազգաց, և եւս առաւել 'ի սեփական ժողովուրդ իւր 'ի Հայս. որոց միապետել տիրաբար' ոչ էր գործ դիւրին առն աննմանելոյ Նմին. իսկ զբաւութիւն բարեացն կակղել և արմատախիլ առնել դհեթանոսական աւանդութիւնս և բժժանս' բազում ջանից և յոլով ժամանակի պէտք էին, մանաւանդ յորդորգոյն երկնապարգեւ շնորհաց. որ է զի 'ի վսեմականն ներգործէ և կատարէ, և է զի յաչխիկ և ընդերկար ազդեցութեամբ. և է իսկ երբեք տեսանել դէմս շնորհաց, այլ ոչ գոանել սիրտս շնորհընկալս, 'ի վերին և բնաս միայն ունելով զսերմն աւետարանին և ոչ թափ 'ի խորս անցեալ։ – Զէ զարմանաց' եթէ գոյին և յերկրի տէրութեան Տրդատայ առաքեալք քրիստոնեայք ուսանք, առ ականէ կամ առ ուի ընդունոգք զձեռ կինգոյն, այլ ոչ զսիպան վասն որոց, որպէս խորհրդածէ ոմն 'ի պատմութենից, « Աւասիկ էր երկիր Թագաւորին 'ի վերոյ նոյ նոցա որք գոյին 'ի մկրտութիւն, քան զինքնակամ » յաժարութիւնն »։ Այլ որպէս Գրիգոր' զամենայն ժամանակս հայրապետութեան իւրոյ, նոյն և Տրդատ զկերկարեալ Թագաւորութեանն' ոչ կասէր յերկրորդ Լուսաւորչին լինելոյ. վերածնութեամն յաւասանէն Թուէր վերածնեալ և 'ի տիս. հոլովք ամոյ' զոլեսն այլ ոչ գկորուլն ձաղէին. հակայանայր և 'ի ծերութեանն, և եռայր երիտասարդօրէն. և որքան հարկաւ հասակին մերձագոյնս մտէր յ'ելիցն ժամագրութիւն, այնքան լրջմտագոյն առաքինանայր 'ի քաջընթացն ասպարիզի։ Տեսանէր զաչխարհ բովանդակ կերպարանափոխ եղեալ, մանաւանդ Թէ աչխարհ նոր 'ի վերոյ հնոյն կանդնեալ, յորմէ մի ըստ միոջէ խոյս եառն անհետացան' կայսերքն և կայսերակերպք իրր երկտասանք, ընդ որս կենդանիոյ և գործակից էր եղեալ, նա և նոյն ինքն Կոստանդիանոս մեծն այն' յետ ամենեցուն. յայնքան փարագանց և 'ի հզօրաց' որք պէտս գործոյ բարեաւ և չարաւ' և համբաւով լցին զաչխարհ, և աչխարհս ոչ լցաւ, ինքն միայն մենաշնորհ ալեւորեալ կայր կանգուն, որպէս 'ի փլատակս մեծի ապարանից սիւն մի բարձր և խոյացեղ 'ի միջի տանդ խորտակելոց և անխիլրա տապաստ անկելոց. – յարակիրթ 'ի մանկութենէ իւրմէ 'ի մարտս և մենամարտս, ըմբիշ, սխոլեան յաղթող յագտնի, 'ի կըռկիսի 'ի դաշտի, վանիչ Պարսից և հիւսիսականաց, Հոնաց և Գթաց, և անդամ հռոմէական կառաւուց, հրաչակալ յարեւելս և յարեւմտս, պահպանիչ բանաւորաց, պատկառելի հայրապետաց, սիրելի աղքատաց, ահարկու խոթամտաց, ոչ եւս էր նմա այնուհետեւ փոյթ ինչ զաչխարհէ, զհամոյ և զչքոյ նորին. յամենեցուն հանդէս, 'ի վայելս և 'ի փառս նորին վեհ և հակակ երեւեալ, հակայանալ իմն և հոգւոյն մեծի նմա այնուհետեւ, և 'ի նոյն փափագէր։ – Այլ ոչ գիտեմ' իրոյ հոգւոյն առաւել ուշ անէր' եթէ իրացոյն ամենեցուն, զոր խաղացուցեալ յահէ հինից, և ամրացուցեալ քաղաքական կարգագ, երկնապաղաքացիս կամէր յարտարել։ Ոչ կարէր զամենեսեան իւր պէս Թագաւոր կարգել, այլ ըստ ձոյր և նկրտէր հաւատոյ աստուածապաշտս և քրիստոսաբերս առնել. զինքն իսկ առ այս տալով օրինակ'. և սիրազագոյն Քերեւս յայտ գերազնակ մասին' քան յամենայն սիրազուածս իւր առաքինս. և որքան երբեմն յախորժացեալ ամբարհաւաճեալ 'ի նոյնս' գերագոյն ամենքան գհաւատոյ մարդիկ կարծէր զինքն' նաբուգոդնոսորեան մուգ, նոյնքան և խոնարհեալ ընդ լծոյ Քրիստոսի, գհաւատս, զպաշտօն և զիրաս սորին ջանայր խորհրդոյս խորսխել յերկրի իւրում, և ընդարձակել ցորվոյր և կարիցն. և սիր ոչ այլոյ իրք ժամանել մարթէր, առաւաւտուր պարգեւաք հիմնեցուցանէր եկեղեցիս և

1 Զոր բազում անգամ յեղյեղեցաք' ըստ խոնարհագոյն' երկրորդ Լուսաւորիչ լինել գՏրդատ, կամ զդէպ 'ի գործ հոգեւոր

վանօթայս, մանաւանդ ի անօրինական տեղիան Պաղեստինու. ուր՝ և բարւոյ նորին նախանձաւոր նախաթարգէն և իշխանք՝ բազմացուցին զնմանօրինակ ձեռակերտս՝ ի Քիւ բազում տաճեռկաց. իսկ ի սեփականին իւրում աշխարհի՝ յամենայն մատունս երկրին՝ ի դէպ է տառապիւ ասել, զնշանս կենարարին իրրեւ ի պրակս վայրի խիտ առ խիտ Քուէ առ Քուէ անկեալ և ածեցեալ. և ոչ բնաւ երկայնել, զի ըստ բազմաքեանն տեղեաց պաշտամանն և պաշտաւնէից՝ բազմացոյց Քագաւորն և զառաքիկ նոցին ըստ իւրում մեծագի առատաձեռնութեանն, այլ և լիացոյց. որպէս զի անհոգացեալք առ արտաքինն՝ հոգացանն յրիմնաւթեամբ զներքինն և զհոգեւոր [1]։

Սակայն որպէս խոսն մի վերագոյնդ յիշեցաւ, ոչ ամենայն ատագանին այսու ագւով վարէր, զոր և զգեցեալ իակ չէր, այլ ըստ առակի Ս. Գրոց՝ ցանկալի էր նոցա տակաւին օձն եգիպտական, հնչասլիքն հեթանոսականք և հայրենի անաճապատաստաստ սեթեւեթք պաշտամանց և յիշատակաց. անտանելի Քուէր նոցա քաղցր լուծն Քհատւոյ, մանաւանդ պարտք պահոց ըստ այնր ժամանակի խառակրնութեան, յոր՝ բանագաւեալ լինէին ի պահեցող Քագաւորէն. որ և ասեն՝ երիս քառասառնս կամ յիսնեակս բոլանդակ պահէր ի տարւոջ, զոս յերկօրէիցն յեթնեկի [2]. – անպատակաբ ի պաշտելոյն Գրիստոսէ, ան ամէնն յերկիւղէ Տրդատայ, որոյ ծանրացեալ ծերութիւն՝ Քուէր զալարանալ սմ ըստ ամէ, և նորոգել զարութեանն որպէս արծուոյ և առիծու. և եթէ անկաս երբեմն յոխոս մահացաս, որպէս կարծի, հաւատարիմն Գրիգոր վերակոչէր զնա ի կեանս, և ըստ առանդութեան՝ երգէր և մաղթէր նմա. « Ըստ երկ-
» կիացին քեզ՝ սիրն գարձեալ ի վերջս՝ տացի նշան,
» երկարելով զժամանակս. և ըստ քաջին Քհատւոյ՝ ա-
» րեգական ի քեզ ատկոյացի, մինչեւ ի վախճան պա-
» հանջեցեալ զվրէժս ... եւ զանվախճան գիազգատու-
» թիւն աշխարհս Հայոց ընձեռեացես ... Հատանող
» տապարն ի բաց դիցի, և անկոգոբծականին մաղ-
» թանք ժամանեացեն ի կենդանական քկենիդ. զի
» պղտղից արդարութեամբ խաղաղացի կենցաղավա-
» րութիւն քո, հանդերձ զատակք (կամ զօրք) և համ-
» բաւով բարեաց։ — Ի վերին ի յոգնականութենէն
» ծագեցաւ քեզ հանդէս բարեպաշտութեան. որ առա-
» տապարգեւ բնաւորաբար զքաղաքավարութեան անիս
» զիշխանութիւն, առ ի յանդիմանել զվատթարա-
» ցեալսն, և ի փառաւորել զլաւագոյնն »[3]։ — Այս-
պիսի էր և այսպէս առնէր Տրդատ՝ ահեղն և համբոյր, մինչեւ ի բուն. ցոր վայր ներբէին օրէնք ժամանակի և բնութեան, որոց չիք անձեր սահման, և հաւասարակաց է սեղի տալ յանկայուն երկրէ, որ վազ և որ անագան, որպէս ամենեցուն է յայտ։

Բոլորեալ էր և անցեալ յիսներեակ ամաց Քագաւորութեան Տրդատայ. ի մահուն Կոստանդիանոսի լրացեալ էր և 40ամեայ սահման հաշուոյ Քհատւոյ Պարթից և Հառմից, ընդ որս և միրոյս Տրդատայ. զոր վազ եւս բազձալր սրդեաք լուծանել երկարակեացն կամ երկարխնեցոյն Շապուհ, յայնժամ ի տես երիտասարդաքեան, յոգուս իւր կրթելով զեռապետութիւն որդւոց Կոստանդիանու՝ փոխանակ միահեծան նորին տէրութեան, և զծերութիւն Արշակունեացս միոյ. և մանաւանդ զընդդէմ սորին մխոանս և մեղմեխանս ամանց ի նախաթարացն, յորս գլխաւոր՝ Աիւնեացն. և ընդ որս գաղտ բանագնացութիւնք լինէին, և զանխաւ իմն խոր-

1 Ագաթանգեղ (ձեռ) ի յիւրն գրատրութիւն լուսաւորչին, և եթէ որպէս « ի վերոյ ամենայն երկրին տաճեռկացն Հայոց « մեծաքեան աշխարհին՝ չինելով հեղեղիկս յամենայն աշխարհս, « ի կոչմանս, յատուա, ի չէնս, ի գեղս, յագարակս »։ յաւելու. « Այնուհետ և Քագաւորն յամենայն իշխանութեան իւրում « առ հասարակ՝ զրնոց չորս հազս յամենայն ագարակ տեղիս, « իակ յատուած՝ եօթն եօթն երջոյ հազ, ի ծառայութիւն ագաստ « տրութեան եկեղեցւոյ նուէր պաղող Տեառն մատուցանէր։ » Նոյն (ձեռ) և վասն հրամանագրոց տաճեռկաց Քագաւորն « Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն՝ յոյժարեաց և ի գաւառագ բազ- « մութիւն մանկտւոյ ածել յաստուածս գպրութեան, և կարգել « ի վերոյ հաստատութիւ գպրագիտս. և գործան տանկոյց կարգել »։ — Վկայէ Մեծն Մաշտոց վհատոյ նորին Գրիգորի, եթէ « Ստանալով Քագաւորն և պատճառեալ հաստատ Տրդատ, « ոչ տակաւ ապրէ ածեալ մեղմակոյիւ իւրոյ պատաւորոյ, և որ- « դւոյն քրոջ պարգեւէր բազում պարգեաս, տանելով, եթէ որպէս « հարբեցողական տանեցւոյ ինչս և տաղարտիս և երեսպրիս « և պատւոյ ի տարբ եկեղեցւոյ Աստուծոյ »։

2 Ի տանեամեայ հետ ի հատ Քհատւոնորդւոց պահոց տարի. « կս երկու լուսաւորչիցն Հայոց՝ բանիսք միայն ուտէին, և ոչ այլ « ինչ ի տերմանաց. Տրդատ որդւոց Հայոց Մեծաց քառասուն « քառասուն ձգէր անառապատեամբ. վասն որսորիկ զորքն ոչ « ժամիկին »։ և այլն։

3 Ի հին տագաբանս և. ի կարգի Արշեւութեան Քագաւորի՝ այս երեք տունք երգոյ՝ ընծային Գրիգորի լուսաւորչի, յորմէնել վասն Տրդատայ, և. խնամս բանին ցուցանէ զոր նշանակեցաք ի քնա- գրին. եթէ տաղդ Գրիգորի և եթէ խորհնացոյ կամ տալոյ, կամ վասն պղոյ, տակոյն քալ պատւոյն Տրդատայ։

լուսաւորութեան ագգիս՝ գնա և գՔրիգոր, զնոյն հին տագաչափ ամն պատէս բացատրէ, զտգիլով ընդ նոսին և գՔագաւորն և զբերդն Հայոց։

« Լոյսն անեղական՝ որ ի Հօրէ և ի Հոգւոյն
Ի՞պագեցաւ Բանըն ծագածին,
Երկուս Լուսաւոր՝ առ աբեղական և բան լուսեղ
Պարգեւեաց մեզ Հոգեառաքեալդ։
ԸզՄարդըդն Գրիգոր բան իշխանականին արբընչեան
Մեծ լուսով ծագեաց մեզ ի ծագս.
Զքաջ արքայն Տրդատ՝ լուսագոյծաս յորեգակնէն
Բան լուսեղ ի լոյս գիշերի։
Ամենք հաւատաց՝ բզքանաւոր երկրի Հայոց
Ընչխատութիւն հերկեցին բանիւ.
Տապարըդ Հոգւոյն առագնեցին մեհենապարկ
Տաճարս գիքն մեռեալ պատկերացն։
Ձոհարարական բանիւ սէրտ հնամենի՝
Շինեցին տաճարս Աստուծոյ.
Հոտմանման երկինք գործարութիւն գեհեգեցիս,
Հիւսեալ պարծանս աստգունք.
Աղքն համհատաս գործով լուսոյ մեծ քհագուհին
Ասխէն, կոյս խոստովիգուհի.
Սիրգք Գրիստոսի, գասերք վերինըն Սիոնի.
Ի լուսագործ մշտին յաստգատաս։
Որով արդիքս մեզ հորհոմեալ հարցըդ լուսոյ՝
Հայցեմք, ընդ մեր քարեխոսեիքք.
Զմեզ խրմնաստեսակ պատեալ բպմեզք հնքնահաս՝
Զայն հալածել հոգմով Սուրբ Հոգւոյն »։.
Վերջ տագիս պահատէր յորմնակի գրչագրիս մերոյ։

2 Ի հին տագաբանս և. ի կարգի Արշեւութեան Քագաւորի՝ այս երեք տունք երգոյ՝ ընծային Գրիգորի լուսաւորչի, յորմէնել վասն Տրդատայ, և. խնամս բանին ցուցանէ զոր նշանակեցաք ի քնագրին. եթէ տաղդ Գրիգորի և եթէ խորհնացոյ կամ տալոյ, կամ վասն պղոյ, տակոյն քալ պատւոյն Տրդատայ։

տաւմն և սարսուռ ընդհանայր ընդ երեսաց աշխարհիս մեբոյ[1]. յորմէ վաղ սրեցեալ հրաժարեալ էր Լուսաւորիչ նոքին, երթեալ ամփոփել զնշոյլս իւր յարեւմտեան, ի խինձս քարանձաւացն, ուր տակաւին հզնասուն լինէր կոյսն Մանի, մի յընկերաց Հռիփսիմեայ և Գայիանեայ, ոչ անզգոյ եղելոյն կամ լինելեաց, այլ և քաջ գիտակ բնութեան մարդկութեանս և բարւոյ իւրոյնոյն, և հզօր հարկի փոփոխութեան կենաց ի կեանս, զնգնգոյնս այնուհետեւ ի հանդիպելեացն յառէբ և ինքն ա-ւագահայեացն Տրդատ. և գիտելով զի տակաւին նշուլէ հրագն Հոգւոյն Հայաստանեայց և իւրոյ հագոյն վառիչ և սիրով ջահակցեալ, իղձ լինէր մերձենալ նմա, և որպէս նոյն զհայրապետականն՝ քոզել և ինքն զքաղաքականն գաւազան, և զպանծախտ առեալ ցուց՝ իբրեւ զմի յաշխարհացոյց մարգկանէ, յետ ամենայն հանգիպեցի՝ փորձել բանալ և զնգնաւորական կենաց հետս, երկրորդ անգամ աշակերտիլ Գրիգորի ի միանձնական կեանս, և յանմարդամարտ լռութիւնս խորոց և խոխոջից Դասարաց՝ լուցուցանել զամենայն ազմուկ և չչուկ աշխարհի և զաւտի կենցաղոյս. և հզօրագոյնս լսել յանվայրն վայրի՝ զհրաւէրս հրեշտակայինս, և զանմառելի հառաչս երկնից։ Ամենայն նահատակութեանց անդիմադարձ ախոյեան, մտանէր և յանձկագոյնն չափով երկնից, ընթացս հանապարհին, ոչ զոք ունելով առ այս օրինակ ի համալիճակ թագակցաց, այլ ինքնին ուսուհօրդ գոլով յետագային. ընդ որ իրաւամբք զարմացեալ գանձասաց երգչին՝ բացառելոյն « Ի՞նչ հիւսիսոյ քո գործ վիպական, » երանելի Ս. Տրդատիոս. զի յետ հրաւիրոյ և զարմանալոց և մեծագոյն հանգիպից լրման զանազան գործոց, » և արութեան անհամեմատ բնաւից քոյնքեան, ա-» հագնաւոր և զաւրանատքանչ, որով պահեաւն լսողք » ամենայն. քոզեալ զերկրաւոր քոյին ճոխութիւն և ըզ-» բաղումն կենցաղական, աղքատեիր զվարս երկնայինս » և զհատամբեր քաղաքավարութեամբ. ճշմարտապէս ասե, » Քրիք, երկար և սրատատաքոր միշտ պատասխանք. » որով յաչս ցուցար քաղաւոր երանելի և արքայ քաղ » Տրդատ »։ Թուէր իմն և երկնից յատպարիզէ յատպարեզ ձգել զմեծ զայն նահատակ, և զերբեմն յաղթող յերկրատարս, յաղթական և յերկնայինն կատարել հանգիստագործութիւնս. ապա և ի վերջոյն եւս քան ըզնգնաւորականն վերառնել յատենան, ի խոստովանողական ասեմ, գոզիր և ի մարտիրոսականն հաղորդեալ։

Քանզի, թէպէտ և չկայր ինչ նմա այնուհետեւ ցանկալի՝ քան ընդ Գրիգորի կամ ըստ Գրիգորի՝ անտեսանբար փոխել յաշխարհէ, և վերանալ ուր իղձք հոգւոյն վերացուցանէին, այլ նորին իսկ Գրիգորի խրատս և խրոյ իսկ խզճի ազգասէր, եթէ ոչ էր օգուտս աշխարհին քոզոյն զայն՝ առանց յաշխրդ կարգելոյ զայլ ոմն Տրդատ, որ, առաջ, ոչ երեւէր, պարտաւորէր զնա վերադառնալ յատեանն և ի գահ լքեալ, և խոպան լքեալ ի սրաբեսս որ և յաշխարհէն և ի բարեսէր մարդկանէ հատանէին նմա հրաւէրք հարկեցուցիչք։ Ասաց Տրդատ այսքանեաց քեզագրութեանց՝ որպէս աստուածահրամանն ձայնի, մեծագոյն եւս գործ առաքինութեան կատարելոյ ի գաբեի անդ՝ քան ի քաղալն զգահն և զթագ. գերագոյն եւս գորովով փարեալ զհայրենեաքն յանկամ թագաւորութեանն, քան երբեմն չերիտասարդութեանն՝ ի խնդիր նմին լինելով. — Որքան մեծ և սուրբ է յատաքինի միտս՝ պարտուցն պատկառ կալ. այլ որքան եւս սիրալի՝ զհատութեամբ յանձն առնալ զնահատչափ պարտըս. որքան վեհագոյն նաւթրաւն՝ զանգորրատէս վախճանն փոխանակիլ ընդ կատածեալ և գժնդակ մահու, յոգուստ սիրելեաց և ատելեաց։ — Անմահութեան փառաց է սկիզբն մահ այնպիսի. ոչ ողորմի, այլ երից գրատուելի՝ որ այսպիսում վիճակեցաւ կատարածի, որպէս և մերս Տրդատ. զոր և ազնական նահատակ արժան էր ճառագրել, եթէ ոչ յետին այն լոյս պատճառութեան նորին՝ նշուակէր գրիծ ատթի մահուանն, և հարկ առնէր ըստ պահանջի պատմութեանս, ընդ սկզբնաւորըդին հրաշափառագոյն բանիւ զնաս Տրդատայ՝ երկրորդել ինձ և զսրատաւոչ ոգրատանդութիւնսնորին. « Ա-» մենչեմ ասել զչչմարտութիւն, մանաւանդ թէ զանե-» բէնութիւն և զանդաբշտութիւն (պակասամասայ) ազ-» գիս մերոյ, և զմեծի ոգրոյ և սրատատաւոյ պատանի » ասցս գործս։ Քանզի գՀետ առաքեալ կոչեն զնս » (զՏրդատ յառանձնութենէն, խոստանալով) լինել ըստ » կամաց Նորա, և առնել զքաղաւորութիւնն »[2]. բարեքաջոյքն յաժարութեամբ և անձկաւ, յաշագնոցքն՝ առ ահի վրեժխնդրութեան Նոցին։

Որպէս ի կարճառել երեկոյի՝ յետկարծ ամն ի հներ-քոյս գիշերագէմ ամպոց ծագէ գամ մի եւս արեգակն խանարհեալ ի մուտս, այնգունակ երեւեցաւ միւսանգամ Տրդատ ի գահս իւրում, ահեղակերպ գիմաքն, և պակեան առելիքն և ուրացողք. հնձաս հարեալ ի Տիգքան. վարանեցաւ և Շապուհ կաշառատուն մտանըշաց. որոց ոչ յաղթելոյք ի լոյս առնչեան գործել, ի խառաբային գաղանութիւն լինէին ապատուն. նենգաւ գտաճանել գահաւորթատուրն։ Ի զրատնս որոց հրաւիրեն զքաչխակորով ծերունին. և մինչ նա հայկաբար մտաներէր ընդ ազգն լայնալիճ, վիթն սիրագրաւժ քինախընդրացն հասանէր ի թիկանց, որալ զզորդրն հակայազօր[3]. այլ որպէս ձեռն ապանի գազգ ի վերացուցանել զզէն մահուն, Թաւէր այնպէս գազգալով հատակ մահաՆիթ նեաին. հարկանէր, այլ ոչ ի մահ։ Գառնայր Տրդատ վիրաւոր, յոգի քան ի մարմին, և ի մահիճս անկանէր. այլ ատկաւին հեռի կայր տատարն հատանող՝ պատկառելով ի կենդանական թզնեւոյն, ըստ մաղթա-

1 վկայ. ուրեմն հրեի յարատն Սիւնեաց ի Սատահեանս. քանզի և ի ժամանակին՝ յորում կնռմիսոյ հայրապետեան պայմանք գնէին ընդ Նիբսեսի թագաւորի ասյս, մի յերկոց ատաց գրանց նմա հղելոց՝ կոչի ի պատմչէն (Պետրոս Պատրիարքն), Barsaborsus, և երկիր խրհրդութեան նորա Symium. որ է ըստ ին վկայաբանութեան Սիւնեաց աեր կամ Նախարար։

2 Խորենացի. Բ. ՂՀ։

3 Ցոյժ գժգին և անհատատակ է կարծիս հեկինակի մերոյ Տրդատ. եթէ և խոսրով որդի և յաջորդ Տրդատոյ՝ համախոհ հղեալ իցէ գատահանութեանն. իրրու թէ « Անհատատ և գազանիս » հնդատար խրհանքի՝ կամեք սրդոյն խրոյ խոսրովու՝ խոցեցին » զնս յոտս երկոց »։

Նաց Գրիգորի։ Ողանակեցաւ գաւառանաւթիւնն - կամեցաւ առաքել արքայ զդաւառանան ի ձեռն սենեկապետին, որպ արժան էր քան զամենայն մարդ հաւատարիմ լինել տեառն իւրում, և այնպիսւոյ տեառն, և նա գտաւ վատթար քան զամենայն մարդ։ Ջամ ահաւոր և ծանրակիր, յորում մարթ էր չաւառականին գնել գերեզման հարմաւ, փախանակելով զկեանս իւր ի վերայ կենաց որ նմանն հաւատացաւ։ այլ նա խելացեղեալ խառնեաց ի բաժակ դեղոյն զնիւթն մահաբեր, զրգեալ յահել նենգ, գաժառ համախահիցն։ և այսպէս « Ջան նմա աբբումն, « քան պատճին, որպէս անդ ուրեմն ի հինն Աթենա- « յիցն՝ Սոկրատայ՝ զմտելխինգն, և կատարեալ Երրայե- « յիցն՝ ըմպելի լեղեաւ խառնեալ՝ Աստուծոյ մերոյ, եւ « զայս արարեալ՝ շիշուցին յիմքնանց գրագմափայլ ձա- « ռագայթն առաւաւոտայաղաւրեան »։ Արդարեւ յինքեանց չիշուցին և խառնեցան, և խառնեցուցին ըզփառս աշխարհիս մերոյ և զմեր։ այլ չիշուցանել զԶրգաս աշ բաւէին և առնգաթամուրք անգամ։ Վասն որոյ յաղթաբեր Թագեալ զկրկնաթիւն աղէկաւոր մեզադրանաց և աւազանաց լերգախոց Խաչնաց, սիրելի է ինձ վեհմեկնաւս նորին արգահատութեամբ կնքել զգրուագըս։ « Այլ նորա անձն ցնծացեալ Տէրամբ, և ուրախա- « ցի ի փրկութեան իւրում. և ամենայնիւ ինքեամբ ա- « սացէ, Տէր, ով նման է քեզ »։ Ով նման և Տրդատայ։

Ոչ կարեմ արգարեւ արգելուլ զսարսուռ բնութեան և չեմ հնազանդ գտանել ժամանակիդ, յակնարկելն մտաց աչաց՝ ի մահիճս ահաւոր հակային, առ որ մահ ինքնին թուէր թանգագնելով մատուցեալ, և ապրշանալ զի ոչ ի չաղթական գաշտս պատերազմաց պատահեցաւ նմա, այլ այգոյն անաթգաթար գձձելով զմիծն այն, յորոյ և յանկինգան կերգաբանան ոչ իշխէին հայել կաշառակուրքն կաթամիաք։ Այլ մխիթար մեծ լիցի մեզ գոբով հաւատարմոց և չարգոյց անձնան թագաւորին իւրեանց, հզօրի և առաքինւոյ, ամենեւքիմ մեծ և հակաչակերտ երեւցելոյ. որում և հանապաշտաճ գիւռացին առնել յուզարկաւորութիւն չքեղ, որպիսի ոչ այլոյ ումեք պատիւ արարեալ յատաչագին, բաց ի վիշապատնեալն չԱրտաշիսէ Ա՛. և կարծեմ նորին ինքեան Խորենացւոյ է և այս նշխար բանի չեսին հանգիսի գրառուածլոյն իւրոյ Տրդատայ. զոր ոչ հանգուժեալ տագել զհետ ոգոյն ի կարգի բուն պատմութեանն, չեսոյ ուրեմն այլուր առնգելոյ է [1], գլուխ նահատակգրեաց հակայական մարմնոյն, և գաւրան « ի Թոզդան, որ- « ծաքնապատ գիակիր գաւգաւգը, յորում լծեալ ջորիք « ասկէսանձք, և գաճեակ գաճեակ հանգերձիւք զդագաղ « սրտն գաղգաբելով. և վերջք գոգոյն ատի և անտի « վառեալք գինուք և նշանակաք. իսկ առաջի գաղա- « զանն՝ ձայնիք ատաւածաբհնութեան, և բարմանիք « խնկոց. իսկ ատի և անտի բարեկամք և սիրելիք, ըն- « տանիք, և բազումք յորդւոյն նորա հետեւակ անկեալ. « և գինի գագաղայն փողք և տաւիղք ողբոց, և կատանիք « ողբատաղք. Քող գալ տամիկն որ երթային գհետ « անթիւ բազմութեամբ։ Եւ այսպէս հատուկք ի տե- « դին, արարեալ տապան Թագաւորական ի քարանց « կհետոյց, և ի վերայ տապկի արկեալ. յորում եդեալ « զգաւնեն պատառական, զանուշահոտ գսպատպոգն, գմիծ « վատահատորն, և տաքեալ Թագնցին գնա ի տեղոջ « զրօսանաց մեծին Գրիգորի, զոր պարգեալ անտա- « նեաց իւր Պարսից »։

Պարտ՚էր կենդանատունկ. զորոյ տահմանս՝ զանխաւ տեառնքեամբ տատուածպնով՝ անճառիս յանձնէ արքին. առագ յարգարեալ կակղելոյ էր, ճնշմամբ հակառակորդ հակացին։ Ինդն ի վայր՝ յետ իրր յիմնից և հնգից ամաց, յետ ոչնգանեաց զարմանալեաց գործոց և գործակցութեանց՝ երկոքին միանգամայն կատն առ կատն եգեալ հանգուցան։ — ամենք հրաշալիք, զորս ոչ սրժէ աշխարհ, և զորս Աստուծոյ անբաս իմաստութեանն և զօրութեան միայն մարթ էր այսպէս յծակցել[2]։ Ոչ հատանէին թերեւս միտք յուզարկատացն՝ ի վերայ այսպիսւոյ հիացուցիչ զուգաթիւ հանգիպման, այլ քաղ քաղ հատանեալ էին՝ զի զԱստր առ Աստր հանգուցանեն, և գործանին առ արժանատր. վասն որոյ և անդէն երախտաճառոյց բառեբանելի վճռով՝ « Կանանեցին զօր կատարմանն (Տրդա- « տայ) առնել առ յամէ. զոր յանձն արարեալ եպիսկո- « պոսի գեղին՝ գնացին »[3]. — Աւանդ նախանձելի, պարտատանութիւն զգուշալի։

1 Ils appellent cette ville Ardascht... Ils disent encore, qu'on voit parmi ces ruines celle du *Palais de Tiridate*... Ils disent de plus, qu'il y a une face du palais qui n'est qu'à demi ruinée, qu'il y reste quatre rangs de colonnes de marbre noir de neuf chacun: que ces colonnes entourent un grand monceau de marbres ouvragés, et que les colonnes sont si grosses que trois hommes ne les sauroient embrasser. On appelle tout le lieu où est cet amas de ruines *Tacti-Terdat*, c'est à-dire Le *Trône de Tiridate*. – *CHARDIN.*

2 Թուի Բղտխդ Ալտաճա մակաբառեալ գեղջ։

3 The towers, indeed, stand so close together as to be hardly twenty feet separate. — KER PORTER, II, 620.

4 Je ne sache pas qu'on ait trouvé nulle part de la poterie ainsi vernissée plus ancienne que celle-ci; car ni Panticapée, ni la Grande Grèce, ni le nord de l'Allemagne si riches en urnes de tous genres, n'en ont offert d'exemples.— DUBOIS, III. 409.

սիսոյ կալով Հնոյ քաղաքին. այլ և ինքն Դաւիթ յերկիւղ առհասել է գիւղս, գրեաթէ կիսով փարատեալ բացակայս յիւրեանց. Յաորինն և մերձագոյն յԱրտաշատ՝ կոչի Հայց-Դուխն. վերինն և մերձագոյն յԱզատ գետ՝ ի հիւսիսոյ սահմանին՝ Ասորի-Դուխն։ — Ցիչեցաք ի վեր անդրըզժամանակ չինութեան Դաւնոյ, ի թոռոմայ արգաւոյ Մեծին Տրդատայ, որ « և զարքունիսն փոխէ վերոյ » անտառին (զոր անկեաց զԱզատ գետով) յուստ մի, ա» պարանս ճոխանաւորս չինեալ, որ ըստ պարսկական լե» զուին Դաւին կոչի, որ Թարգմանի բլուր »։ Ցետս և պատճառն՝ պղտրանեալ իմն ի քերդողէն, իբրեւ վաղն ջերմային օգոյ անժուժելի լեալ բնակութեան Արտաշատայ. սակայն ոչ եթէ յաւուրս թոսրովու զօրանայր սահն առնել քան յառաջն երբեմն, այլ հարկ էր ասել եթէ երբեմն ոչ սակաւ հեռացեալ ի քաղաքէն մեծէ, ոչ միայն ոչ զովացուցանէր զայն, այլ և ճախճախուտս գործեալ զառաջին հանձն՝ ժանտացուցանէր զօդս։ Այլ որպէս և բան չինութեանն ազգէ, եթէ քանի միտ դիցի, ոչ նոր քաղաք չինեաց թոսրով, այլ ապարանս ըզԴաւին, և փախադրելոցքն անդ էին գրանիկք իւր և ոչ հասարակ բազմութիւն բնակչաց։ Եւ զի կայր և յառաջ քան զթոսրով չէն կամ առն, և բլուրն նոքին անհամեմատ ճանաչիւր, ցուցանեն երիցագոյն պատմիչք, թէ և յետոյ Թարգմանեալք ի հայ. որպէս, Բուզանդ ասէ վասն Տաճար-Մայրի անտառին անկելոյ ի նմանէ՝ հասանել ի Գառնոյ մինչև ի գաւառն Մեծամօրի, ի բլուրն՝ որ առնուանեալ կոչի Դաւին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու։ Եւ Ջենոբ ասէ վասն Մեծին Տրդատայ. « վաթսուն հազար արս (ի հիւսիսոյնոյ) ի գերութիւն իջուցեալ ի Դաւին ». և յառաջ կամ ի նոյն ժամանակս՝ Ս. Գրիգոր զԱղեքսանդրացին Դիմեոսիոս կամ Դիմեոսիոս՝ « Դաւնոյ գաւառին եպիսկոպոս ձեռնադրեաց »։ Արդարեւ բանիցդ բլուր և գաւառ վիճակ կամ գաւառակ իմն ցուցանեն զկոչեցեալն Դաւին, այլ ի դէպ է յանուն չինի այնպէս կոչել տեղեացն՝ քան վարկապարագի փորձիկ բլրոյ միոյ, մանաւանդ եթէ և գրնակութիւն գերեացն ի չէնս իմասցուք։ Այլ այս գիւրդ և է՝ յայտ է եթէ չինութեամբք ի թոսրովու ընդարձակեցաւ և պայծառացաւ տեղին. և թերևս այն գաւառակիս ապարանք են զոր Տիկնուհի անուանէ Բուզանդ, և ցուցանէ ի հարաւոյ կողմանէ Դաւնոյ չինել, ուր սրդ Հայ գիւղըն է. բայց անձամբ է առացուած պատմչին Սիւնեաց, եթէ Բարգոսիանոյ առաքելոյ եկեալ իցէ ի Դաւին մեծ բաղաղաք Հայոց. չիսթեալ թերևս յաւանդութենէ որ ի Յայտնութենէ, եթէ Բարգոսիանէ և Յուդա առաքելոյք հանդիպին իրերաց ի Բյուրն Արտաշատու և կանգնեն զՕթեաց խաչ. զի եթէ ասոյգ ևս իցէ հանդիպումն, ոչ սա՝ այլ ի սորին Հայս ի կողմանս Աղբակոյ եղեալ է։ — Ասոյգ անձամբ և պայծառութիւն Դաւնոյ, որպէս տեսաք ի տեղագրին Արտաշատու, յետ խոպան նաւագրութեան սորին եղեւ, յետ կոյս ե գարու, յաւերանաց Վաղարշապատոյ. զի ցոյն վայր և Թագաւորք և որ զհետ նոցա տեղապահք և մարզպանք՝ նստէին յԱրտաշատ, կամ անդ զմեծամեծ հանդէսան կատարէին, և ի խոթաթախակերտ ապարանսն հանդչէին. իսկ յայնմ հետէ Դաւին եղեւ և կոչեցաւ Ոստան և Բուն Ոստան Հայոց. այլ յայն միջոց ժամանակի, (երբեմն և յետ այնր իսկ), չիսթին անաւանք երկոցան քաղաքացն և մին փոխանակ միոյ լսի. Նա և մի և նոյն պատմիչ և ի միում բանի՝ զերկոսին անաւանան խառն վարէ. օրինակ իմն, Թովմա Արծրունի ասէ վասն Շաւարշոյ Արծրունոյ ապստիչոյ՝ ի հալածանս Յազկերտի, բերեալ մարզպան զՆերսէհ պետ, « և հասեալ յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն » չինեն ի դաւն քաղաքին զՔրմզդական մեհեան, և » զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա ». զոր իրազեկ լեալ քաջին Վարդանայ՝ եւանէ յառաջ ձեռնէն (ի Զարեհաւան բերդէ), և օգնութեամբ իխանացն Ուտունեաց և Աղձնացեաց հաղար երկերիւր արամբք, « յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վե» րայ Շաւարշոյ և մարզպանին Վրկոյն. և քանդի էին » բանակեալ ի խառնուրդս եւրասխոյ և Արծրին-Արծի, » պատահի յառաջ Շաւարշոյ Արծրունի... (զոր Վար» դան) երագութեամբ ձեռին ի վերայ ձգեալ զմեհենին » յերկուս կարկ... (և նիզակակիցքն) զմարզպանն և » և զորդի նորա գերիրոյ ձերբակալ արարեալ՝ ածեն ի » Դաւին, և զհար կրակարանին բորբոքեալ ածխակէզ » արարին զնա յՈրմզդական մեհենին, և գերիրոյ կախեն » զփայտ ի վերայ կրակարանին. և զայլս գնաւոքժս և » արախտիսող արարեալ՝ վատնեն », և այլն։ — Նոյնպէս և հետևող կամ շարայար պատմութեան նորին հեղինակի՝ ասէ ուրեմն. « Ի դաւն Դվինոյ, յեզր գետոյն Երասխայ, հանդէպ վիրապին որոյ »։

Ասէպ յիշի Դաւին յաւուրս վաճառոյ Մամիկոնոյ՝ իբրև միակ և բուն Ոստան Հայոց, ուր գիմէին, յաղթահանակք ի փառատրութիւն, և Պարսք ի բռնակալութիւն. ի միում նոցանգի « հասեալք մեռ ի քաղաքն Դաւին՝ յո» րիներէր Հայարատեան (զորավար Պարսից) զնակատն » ըստ սրինի գործոյ պատերազմին, կարգեալ զառաջին ի » միջոցէ մայրուղւոյ՝ որում խոտրովանիլսան ասեն, անցու» ցանէր ի վերայ դաստակերտին, մինչև ի լեռնակոզմն » զոր Ջրվէժն կոչեն, եւ տեսեալ ապարատիսին Հայոց » վաճառոյ... ծովացեալ գնդատն Պարսից զդաշտն առ » հասարակ... և առեալ քաշաորաբար մատն ի գնդէն » Պարսից՝ բաղում արս ընտիրս դիտեալ յերկիր կոր» ծանէին. և իրեանց զարձուցեալ զերատանակս երի» վարացն՝ գնացին ի բաց քաշաբար. վասն զի և քաշա» բար փախուստ առն հզօրի՝ սատակ ահ երկիւղի գա» շակ առ միառանգամ գործ թշնամեացն գնդի »։ Պատճագոյն քան զամենայն մեաս վաճառոյ եղեւ երկրորդ գարձն ի Պարսից յետ բազմամեայ պատերազմաց, առութեանց և յաղթանակաց առնուաւորութեամբ տեհմին իւրոյ և ապարատեսութեամբ ազգին Հայոց, հաճութեամբ վաղարշու Սասանեանց Թագաւորի. այլ եւս պանծագոյն անդ ընդունելն զհրովարտակ արքունի մարզպանութեան իւրոյ. զոր առեալ՝ « խնդրեր վաղա» զակի անդրադարձ՝ երթալ ի տունն Ասուածոյ. և լը» ւեալ զայս մարդկանն որ ի քաղաքին՝ գրոհ առեալ առ » հասարակ ամենայն մարդոյ՝ նախարարսդ և ազատաց, » ասատանից և ասմկաց, արանց և կանանց, ծերոց և » տղայոց.. դիմեալ ընդառաջին յեկեղեցին. և ոչ քա-

» ւեալ ընդունել զամենեսեան՝ ասեն Աստուծոյ՝ ընդ-
» արտաքս արտաքս եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տե-
» ղիք հրապարակացն չլրջանակի. և էր այն օր անչափ
» խնդութիւն և անասելի ուրախութիւն առաւաւտուան
» բարեխրատցն և ողջախոհութիւն մտաց լաւահայեցուց, և
» սուգ քահանայիցն և արտմութիւն անմխիթար՝ խո-
» հանացն և խարդախաց։ Եւ որպէս կաթողիկոսին
» Հայոց Յովհաննու (Մանդակունւոյ)... բերկրեալ ցնծա-
» լից սրտիւ՝ տայր սաղմոսել ի ժամուն, եկեղեցիս
» օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղերսեցն խոստովի-
» և եկեալ ինքն ի տեղի լսողութեանն ասպիճանին, և
» առեալ զիաղաղութեան աղերսն, և ասէր » բանս գո-
հացողականս Աստուծոյ և յորդորականս առ հօտ իւր,
զոր սրժան իրացն. որովք հնչէ և հաստատ պատմիչն
Ղազար՝ զբանս պատմութեան իւրոյ։— Եկեղեցին՝ ան-
շուշտ կաթողիկէն է՝ յիշեալ ի պատմչէն, յորմէ զա-
տրաշանն և զաւետ նորին յիշեցուք ի վեր անդր։ « Ուրա-
» գին աւերեն զմեհեանն, և յատակեալ զանգին՝ չինեն
» նորին քառամբք զմեծ եկեղեցին զՍուրբն Գրիգոր ի
» բլուրն տեզուջ. և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց
» զԳիւտ. և չինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պա-
» տառ արքունականս և պատուակերտս ականատուս, և
» զքաղաքն որմոփակեալ պարսպեն »։ Զփոխագրութիւն
աթոռոյն ի վաղարշապատ ասէ ի Դուին՝ յիշեն և այլ
պատմիչք, որպէս և կաթողիկոսն Յովհաննէս. և Մնծին
Վարդանայ ասեն հաստատեալ զայս, և զԳիւտ յաթո-
ռըն. և Քէչէտ Գիւտ յետ նահատակութեան նորա և
Ղեւոնդեանց համարի ի կարգ կաթողիկոսաց, այլ ասեն
ոմանք և առ կենդանեաս Ս. Յովսէփայ՝ և նորին հրա-
մանաւ (զի ինքն չէր եւս էր ձեռնադրեալ եպիսկոպոս),
կարգեալ յաթոռն իրրեւ տեզակալ[1]։ Իսկ եկեղեցին այն
վարդանաշէն (որպէս և այլքն նշանաւորք՝ քակեալք ի
Պարսից) վերաբերն նորոգեցաւ յարժանաւոր ժառանգէ
նորին վաճառաց, որպէս վկայէ Ներսէս պատմիչ. « Եհ-
» նեաց զեկեղեցիս մեծամեծս՝ զորս աւերեալ էր Պար-
» սից՝ ի վաղարշապատ քաղաքէ և ի Դուինի և ի Մըզ-
» բայս և ի բազում տեղիս աշխարհիս Հայոց »։ Այլ ոչ
նոր ի նորոյ չինեալ, զի և յետս Զ դարու՝ չինածն այն
ընծայի վարդանայ՝ փայտաշէն և ագիւսակերտ. և յայն-
ժամ Սմբատ վրկան մարզպան՝ առաքին յետ վարդա-
նայ և վաճառայ ի Հայս այլ քաջ, մեծատաւթ և մեծա-
գործ, « արկանէ հիմն եկեղեցւոյն սրբոյ՝ կոփածոյ քա-
րամբք, գեղեցկագործ չինուածով, կրկեղ ձուելով ի մէ»։

Ի Դաւին նստէին և մարզպանք Պարսից, կէաք խնամ-
արկաք աշխարհին և ազգին, այլք օխակաք և նեղիչք·
առ որովք ի կէս Զ դարու (553) եղև նահատակութիւն Յո-
ՀԻԳՍԻՒՈՒՓՈՒՀ, որ էր ազգաւ Պարսիկ՝ Մահակ անուամբ·
« և եկեալ յԱյրարատ գաւառ՝ բնակէր յԱստանին Հա-
» յոց ի Դաւին, յաթեալ ի մեզս ուրումն Հայոց հաճա-
» կաբ՝ որում անուն էր Խոսրով Պիւռակ և արհամարհա-
» նօք զմեզսութիւնն անցուցանէր։ Դէպ եղև երբեմն ի
» զհաւզոյժութիւնն նոցա յատուչանին յազարանս հա-
» մակարին, բարձրացեալ բոյն ի հարպղին՝ հասանէր
» ի դաւառանդակ տանն և բորբոքէր··· փութացան
» (մոգքն) չիշուցանել և ոչ կարացին »։ կոչեցան սպասա-
ւորք եկեղեցւոյն Հայոց, և հասեալ նշանաւ սրբոյ խաչին՝
անդէն ցաժուցին գՀարն. զոր տեսեալ Մահոչի, « զու-
արն՝ որովք հրամայէր՝ ջարդեալ ի բաց ընկենոյր,
» նոյնպէս և զբերանակապն. և մատուցեալ առնոյր
» զբուրվառն ի ձեռաց սարկաւագին և սրկանէր խունկ
» կըս առաջի սրբոյ խաչին, և յայտնէր զհաւատան զոր
» ունէր ի Քրիստոս · ապա սրոյ և սրկաւ ի բանս և
սրգելոյս զամս երիս, սր և մկրտեալ կոչեցաւ Յոհան-
Բաւզիտ, սր է յԱստուծոյ փրկեալ, կամ Աստուածա-
տուր. և յետ այլ ևս սրգելոյն և բազում տանջանաց՝
պրկեալ ի փայտի և նետահարեալ՝ վկայեաց ի Քրիս-
տոս։ « Եւ բարձեալ զսուրբ մարմինն սրբոյ մարտիրոսին՝
» մեծի հայրապետին Ներսիսի, բովանդակ եպիսկոպոսաք
» և գերիւք եկեղեցւոյ, եդին մերձ ի սուրբ եկեղեցին
» կաթողիկոսարանի, յարևելից կողմանէ չինեալ ի վերայ
» վկայարան սուրբ՝ կոփածոյ քարամբք »։

Յիշեալդ Ներսէս Բ կաթողիկոս՝ ի նմին ամի կամ
յերկրորդումն (554) սրար ի քաղաքի սուտ ժողով մեծ
բազում եպիսկոպոսաք, յորոց քանի յիշին յանուանէ, և
իշխանաք՝ յորոց իրրև քառասան յանուանէ, վասն խըն-
դրոյ խաժկաց և Աստուց նետասրականաց, զորս հերքե-
ցին, որպէս զրի ի գիրս Թղթոց, Քէչէտ և այլք սրկազ
ասեն։ Նովին դիտաւթ ցուցանեն յիշեալ գիրքդ (յորում
պահին պատճէնք ժողովոյն) սրար կիսով դարու յառաջ
յամի (506), և Բարգէն կաթողիկոս 32 եպիսկոպոսաք,
յորոց քանիք չափ յիշին յանուանէ։ Եղեն յետոյ և այլ
ժողովք եկեղեցականք՝ որ ըստ կարգի Ա. Բ. և այլն,
ժողովք Դաւնոյ կոչին. այլ Բ Ներսիսեան հաշակեալ է
քան զբնաւս, և հաշակելի ևս վասն այլ ինչ իրաց որ
միաբանականն եկեղեցական է և քաղաքական և ուսու-
մնական, և գլխովին ազգային. այն ինքն է Ղորդութիւն
տաճարին և հաստատութիւն Թուականիս Հայոց, սկըզ-
բնաւորեալ ի 11 յուլիսի 552 ամին Քրիստոսի, — ի
քան ամ նորոյ Թուականին այն է յամի 572 յ'3 փե-
բրուար ամսոյ, վարդան Մամիկոնէից իշխան՝ որդի
Վասակայ՝ պայազատ մեծացն Վարդանայ և Վահանայ,
ոչ ևս հանդուրժեալ զդուխ գործոց մարզպանացն Պարսից
» ի բաց եկաց ի ծառայութենէ Թագաւորութեան Պար-
» սից, հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստա-
» նեաք, պատանեալ զՍուրբն մարզպան յանկարծօրէն ի
» Դվին քաղաքի. առին աւար բազում և գնացին ի
» ծառայութիւն Յունաց·· Եւ նոցա առեալ զզօրն (կայ-
սերական) դիմեցին ի վերայ քաղաքին Դաւնոյ, և
պաշարեալ կարծանեցին ի վերուստ մինչեւ ի վայր, և
հալածեցին զզօրն Պարսից որ ի նմա կային, բայց և
հաս ի վերայ նոցին յանկարծակի խառնութիւն մեծ·
զի զեկեղեցին Սրբոյն Գրիգորի որ չինեալ էր մերձ ի

1 Զոյն բառս առնուն ի Օրպէլեանն ասէ ի դէմս վաղար-
շապատ՝ յԱրթան.

» Պատրաստութիւք Հայոց ազգին՝
Որք մինչ Յովսէփ Հայոցմեցին
Յիմ անհնիկս հանգչեալ կային,
Ապա ի Դաւին չուեալ գնացին »։

Յիշէ և Պատկոչ (Պատերազմ Պարս. Բ. 1ե) ի կէս Զ դարու,
ի Դաւին լինել կաթուղիկոսին Հայոց։

» քաղաքն՝ էին արաբեալ համբարանոցս՝ Պարսիկքն,
» հարին հաւթ և սպրեցին. վասն որոյ եղև նոցա խռովու-
» թիւն մեծ։ Գայ ապա ՚ի վերայ նորա Միհրան Միհրա-
» ւանգակ քան հազարաւ զօրու, և փղօք բազմօք, և եղև
» պատերազմն մեծ ՚ի Դաշտին Խաղամխեաց, և հա-
» րեալ զզօրան Պարսից անհնարին հարուածովք՝ մտէին
» ՚ի սուր առաբերաց, զփիղսն զամենայն Թափէին, և Մհհ-
» բեանքն անկաւոք սրծեալ գնային յերկիրն իւրեանց։
Ցետ նորա եկն զօրապետ Հոյ ՚ի ծառայութեան Պարսից
« Փիլիպպոս Միւնեաց տէր, արար կռիւ մի ընդ Քաղաք
» և ընդ Խաղամախիս, և կռիւ մի ՚ի Վանանդ ՚ի յՈՒթ-
» մրաւ գիւղ, և յերկուսեան պատահեցաւ... և գնաց » —
Ցիշեցաք զայսոսիկ և վասն Խաղամախեանցն տեղւոյ, որ
չգիտի այլոյր, և Թուի ՚ի սահմանս Դաւնոյ լինել, ընդ մէջ
Նորա և Վաղարշապատու, զի զոյն կարծեմ պարզապէս
Քաղաք կոչեցեալ՝ որ սովորաբար յայն ժամանակս կո-
չէր Նոր Քաղաք։ Ցետ ասկաւոյ ՚ի վերայ հասանել յր-
փոթից աշխարհին Պարսից, ապանման Ըրմզդոյ և բռնա-
կալութեան Վահրամայ, « Ցովհան Պասրիկ և զօրք
» Ցունաց պատեալ պաշարեալ պահէին զքաղաքն Դըւ-
» նոյ, մարտուցեալ ընդ նմա մինչեւնոյնիւք՝ մերձ էին ՚ի
» կործանել զպարիսպն ». այլ լուեալ զչիթան՝ դիմեցին
ասպատակել ՚ի սահմանս Պարսից։ — Թէպէտ բազում
գործս քաջութեան ցուցին Հայք յայս ձեռնս, այլ և
յոյալ ազիսից խռովութեանց և հերձմանց եղեն պատ-
ճառք. զի բաժանումն երկրին և ազգին ընդ Ցոյնս և ընդ
Պարս՝ չարաշար ևս ընդարձակեցաւ. ընդ Վարդանայ՝
փախստական գնաց Մամիկոն կաթողիկոս ՚ի Կ. Պոլիս,
և առանձին առաջնորդ եկաց Հայոց բաժնին Ցունաց, ո-
րոց աթոռ յետոյ եղաւ մերթ յԱշան գեղ (283), մերթ
՚ի Կարնոյ քաղաք, ուր փախուցեալն և սպաք եկեղե-
ցւոյ Ս. Գրիգորի Դաւնոյ. իսկ Պարսից մասին կացին
տեղապահք, Վրմանէս և այլք, և ունէի քան զերեսուն
ամ տեւեալ հերձուածն. յորում ժամանակի անթիւ ա-
րեանց հեղութիւնք եղեն ՚ի Հայս, ՚ի մարտս պատերազ-
մաց երկոցուն աշխարհակալ ազանց, և Դաւին մերթ միոյ
և մերթ միւսոյ պատուանդան կամ գահ լինէր. որոց բա-
զում անգամ զօրավարքն և գործավարք ազգաս Հայք է-
ին. որպէս ՚ի վերջ կոյս գործոյն (Ջ) ՚ի Ցունաց կողմա-
նէն էր Սորմէն տարաւելեալ, որ կշտամբանօք գրեալ
առ Վրթանէս վարդապետ և Քիւրիղոն Նորին օգնական
հաւատոց, մեզադրէր ևս զի Նոսին ՚ի Դաւնոյ աւերա-
ծին. իսկ Նոքա զմեղադրանն ՚ի վարգան հանէին, զի և
Թէ « ի Դաւնոյ յորբեցեալ ՚ի յաւերակ եկեղեցւոջ (կան,
« չարեացապարս) զնա պարտ է ասել՝ որ ազգի միոյ ազ-
» ընտանութեան եղեալ պատճառ, և զարս ՚ի կանանց
» վարաւելոյ և զկանայս ՚ի յարանց, յորոց բազումք
» Թափառական կենօք ՚ի տար աշխարհ վախճանեցան..
» և (ինքն) արձանագրով է փախուցեալ ». և վասն աւերա-
ծոյ եկեղեցւոյ Ս. Գրիգորի՝ ասէն, Եթէ ցաւէ ձեզ՝
« զընծայ սրբեցմանս այսորիկ և աւերածիւ՝ գոք մատա-
ցեք նմա ». Այլ Եթէ Սորմէն ոչ՝ Բազմայարքն Սմբատ՝
որպէս ՚ի վերդ յիշեցաւ՝ ՚ի հինանց քարակերտ վեր-
կանգնեաց (յամի 606) զվարդանաշէն եկեղեցին, հրա-
մանաւ արքային Պարսից. « Ցողովեաց ճարտարապետս

» քարի և կացոյց ՚ի վերայ նոցա հաւատարիմ գործակա-
» լըս, և հրամայեաց փութանակի հատուցանել ՚ի կա-
» տարումն։ Եւ գրեալ ամբաստանութիւն բերդակալին
» և մարզպանին առ արքայ, Եթէ կարի մերձ է առ բեր-
» դըն, միաւսակար է ՚ի թշնամին. և հրաման հասեալ
» յարքայէ՝ Եթէ յերդի քակեսցի, եկեղեցին անգրէն ՚ի
» նմին տեղւոջ չինեսցի ». Ընդ չինութեան եկեղեցւոյն
և զմիաբնին ազգին հոգացաւ Նա, ժողով երկոց կող-
մանց եպիսկոպոսացն պարեալ, և կաթողիկոս յետ եր-
կարաւոյ պարապոյն կարգեալ զԱբրահամ ՚ի Դաւին.
և Թագուհին Պարսից ՚ի տան առ Մորիկ կայր վասն
երախտեացն՝ զմեծ մասն Հայոց, միայն զՔաոանն այն
պահել էր ինքեան՝ ասկաս գաւառաք մերձաւորաք. Ցետ
քան ասաց նոյն Թագուհի զօրին Վրատայ զվարազ-
տիրոց՝ (որ մեծի պատուոյ անուամբ Ջաւիտան կոչէր),
առաքեաց մարզպան ՚ի Դաւին, « զի զաշխարհն ՚ի
» չինութեան պահեսցէ. և իրրև եկն նա ՚ի Հայս՝ խըն-
» դութեամբ ընկալաւ զնա ամենայն աշխարհն Հայոց.
» առաներոյց »։ Այլ մխաթեալ ընդ նմա ոմանց՝ գրգռե-
ցին զկոզմիակոսն Աղրպատականի, որ առաքեաց զեղ-
բայր իւր ձմերել ՚ի Դաւին և գալ գնա. այլ զի վա-
րագահրոյ սիրելի էր Պարսից՝ զդաց ՚ի նոցանէ գրգռն,
և խոյս առեալ գնաց ՚ի Ցոյնս։ — Սակաս ամաց յառաջ
(622–3) ՚ի մեծի արշաւանի իւրում ՚ի Պարս՝ Հերակլ
կայսր եկեալ ՚ի Դաւին աւերեալ էր զոյն, այլ սրպէս
Թուի՝ ոչ չար։

171. Իսկ յետ ոչ բազմից՝ ՚ի վերայ հասանել համուշ-
խարհական յեղափոխութեան արեւելից՝ ծագմամբ և զօ-
րութեամբ նոր կրօնից և տիրութեան Ալրաբացւոց, հարկ
հասանէր և Դաւնոյ նորանոր կրել անցս և նորահնձ իշ-
խանութեան լինել գահակալութ ՚ի Հայս։ Ցամի 640 յան-
կարծակի գունդ մի Ալրաբաց յԱսորեստան աշխարհէ դի-
մեալ երագ երագ և ընդ մէջ անցեալ Հայոց՝ « Թափեցան
» յԱլբարան. և ոչ ոք կարաց ՚ի զօրացն Հայոց արկա-
» նել գոյժ ՚ի Դաւին. բայց արքերքն յիշխանացն որք ժո-
» ղովեալ զզօրան Հոգապահական, Թէոդորոս Ռշտունի,
» և Խաչիկ Աբաւեղեան և Շապուհ Գնունեաց, որք գը-
» նացեալ փախստական ՚ի Դաւին և հասեալ ՚ի կամարջն
» Մեծամորի՝ ՚ի բաց աւերեցին, և ինքեանք անցեալ
» գոյժ արկանել ՚ի յաւանին, և ՚ի բերդն Ժողովեցին
» զամենայն մարդիկ, որք եկեալ էին ՚ի կութս այգե-
» սանի։ Եւ հասեալ Թշնամին անցեալ ընդ կամարջն
» Մեծամորի՝ հարին սպատակս զամենայն երկիրն.
» և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ՝ և-
» կեալ բանակեցան ՚ի յեղը մեղբոյն Խոսրովակերտի. և
» եղեւ յաւուրն հինգերորդի (՚ի 6. հոկտեմբ.) դիմեցին
» ՚ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ՚ի ձեռն նոցա
» քանզի արկին մեխ չորքանակի, մերժեցին ծխանին և
» նետաձգութեամբ զպահապանս պարսպին, և կան-
» գնեալ սանդուխս ՚ի պարիսպն և անկեալ ՚ի ներքս՝
» բացին զդուռն քաղաքին. և դիմեալ ՚ի ներքս զօրք
» Թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղա-
» քին, և առեալ զաւար և զկապուտ բանակին՝ եկին և
» բանակեցան ՚ի Նմին բանակեստեղն, որ (օր) քան էր
» սրէ ամսոյն յաւուր ուրբաթի. և գազրեալ աւուրս

» ինչ եկին և գնացին ընդ նմին ձանապարհ ընդ որ եկեալ
» էին, և խաղացուցին զրազմութիւն գերւոյն երեսուն
» և հինգ հազար ոգի »։ Միւս անգամ յետ ամից վիցից
կամ եօթանից յարձակեցան մինչ Աբտաթիք ի Դաւին,
և արարին ոչ սակաւ կտտութիւն, այլ պատմիչք մեր չիմ-
քին զերիտասան զէպան. և թուի թէ յերկրորդումն կա-
թողիկոսն Ներսէս Գ Շինող « հաւաքեալ զրազմութիւն
» զինականց՝ թաղեր, և ի նմին տեղւոջ չիներ զհրդե-
» հեալ վկայարան Սրբոյն Սարգսի »։ Իրրև նուաճեցան
Հայք ընդ իշխանութեամբ Աբտաթ կամք և ակամայ,
կոտանդին կայսր փութայ թափել ի նոցանէ զաշխար-
հըն, անցեալ ընդ Կարին (յամի 651–3), « Գնաց յԱյ-
» բատատ քան հազարաւ, և երթեալ ի Դաւին նստաւ
» ի տան կաթողիկոսին »։ որ և միաբանեցաւ ընդ կայ-
սերն ի գաւառութեան Հաւատոյ, յորմէ ոչ սակաւ չփոթք
յազգին։ Ի մեկնել նորա եթող զօրավար և պահապան
աշխարհին զՄաւրիանոս ոմն, որոյ տեսեալ զվերսինն
գալուստ Աբտաթ, « աւարեաց զերկրն Դաւնոյ և գնաց »,
ի Նախճաւան. և անդ հարեալ յԱբտաթ փախստական
անկաւ ի վիրս։ Իսկ Հայք մի անգամ ևս փորձեալ ապ-
ըստամբել յԱբտաթ (յամի 656–7), ապա անբաւականք ի
տակալ՝ նուաճեցան ընդ իշխանութեամբ նոցին. մանա-
ւանդ ի կարգել Մաւեայ ամիրապետի զԳրիգոր Մամի-
կոնեան՝ իշխան նոցա (661–2)։ և թէպէտ յետ մահու ա-
րտ գարձեալ խլրտեցան, հարին և հարան, այլ յետս կոյս
էգ գարձ. խայտառակ նուաճեցան, և Աբտաթք կուսակալ
Հայոց ևկն Ռուսիկան կոչմամբ և նստաւ ի Դաւին, իրրև
երկու և կէս գար. և կոչեցաւ քաղաքն ի նոցանէ արդէս
և ի Թուրքաց Ջուին جبين, կամ Ջևկիւ اليبة, որ
և գրամք հատանէին յանուն Աժիրպետաց, որպիսիք են
վ[illegible]իկոյ Ա յամի 712, և այլոց յաւել քան զ735 ամեաւ,
Նախ Մրուան եկաց ոստիկան, ապա Աղդրլա իսկ Հա-
բեմ, որ եկն յամի իրր 693. և էր, ըստ ժամանակակից
գրչի, « գառն և չարաբարոյ, որ միշտ հեզմամբ տրեամբ
» անմեզաց զաւարձանսդր յազգմանէ չարին. յայնմ ժա-
» մանակի ըմբռնեալ լինէր երանելին Դաւիթ »։ Սա
ինքն է Դուինցին յատկապէս կոչեցեալ վկայ, ազգա-
Աբար՝ Մարդաև անուն, որ ընկալեալ էր ի Հայս գթրիս-
տոսական կրօնս և մկրտեալ յԱնաստասիոս կաթողիկոսէ
և բնակէր ի Զագ գիւղ երեսանոյ, ամուսնացեալ և
Հաւեալ ի ծերութիւն. զոր կոչեալ յազարանն և տես-
պեալ առ ասն կոխել զիրաչ՝ իրրև չառնդր նա յանձն,
» բարկացեալ սա զասրն՝ զի անդէն ի ներքս ի սենեա-
» կին սպանցէ զերանելին. իսկ հարն ճիշ բարձեալ յա-
» փշտակեաց զասրն ի ձեռանէ նորա, և ասէ. ընդէր
» ի սենեկիս սպանանես. եթէ պատասխան ինչ մահու
» իցէ՝ արասքս ելեալ մեռցի »։ և եղեւ այնպէս. զի ի
փայտ պրկեալ ի հրապարակի և գեղարդեամբ խոցեալ
ի սիրտ՝ մեռաւ, մինչ գերարիական հաւատով՝ « կայր
» մեռ առ փայտին կին նորա, քաջալերէր զնա և յորդո-
» բէր բանիւք բազմօք անչարժ կալ ի հաւատս որ ի Քր-
» իստոս »։... Եւ փայտն՝ որ էր ընդ հարսն (կանգնեալ)
» յարևելս գառնայր· այս հրաշալի նշան ցուցաս հաւա-
» ստացելոց և անհաւատից։ Զետ այնորիկ փութով ի տե-
» ղին հասանէր Սարգսակ՝ Աշխատանեաց եպիսկոպոսն
» քահանայիւք և ուխտիւ եկեղեցւոյ, և Մուշեղ Մամի-
» կոնեան տպարապետն Հայոց, և Արտաւազդ նորին
» եղբայր, բազում ազատաք. և իջուցեալ ի փայտէն
» տարան ի Սուրբն Գրիգոր զնչխարս երանելոյն Դաւ-
» թի վկայի Քրիստոսի. և բերեալ պատուական հանդեր-
» ձըս պատեցին զՍուրբն Հանդերձիւ իւրով զգեստուն, և
» կազմեցին խնկովք և իւղովք անուշիք, և տարան ի
» գերեզման հանդերձ ապմօսիւք և օրհնութեամբ և եր-
» գք հոգեւորաք և պսծատ լուցմամբք, և եդին ի յար-
» կըս սրբոյն Գիզոհրուզտի. և գիայս սրբոյ վկային յս-
» բինեալ խաչ՝ կանգնեցին ի վերայ գերեզմանին։ Իսկ
» գեղարդն որով խոցեցաւ՝ ընդ քաան գահկանի յին-
» քըն Հայցեաց Մուշեղ տպարապետն որդի Մամիկոնենի
» և Մարգիսի, զի խաչ ձևացուցեալ պատուեսցի յազ-
» գաց յազգս տաճմի իւրոց, ի փառս Աստուծոյ »։ —
Աբիսկան և գեղեցիկ խորհուրդք համազգեաց Նահատա-
կութիւն սրբոյն եղև յամին 693 ի 24 ամենան յանուարի.
իսկ յիշատակ նորա զոր ամ ըստ ամէ պատուէ եկեղեցիս
մեր, անմահացեալ ընդ իւր և զքաղաքին, որ այլով ամ-
նայնիւ ընդ մեռեալս է[1],

Զետ արիւնահեղն Աբդլայ (և նմանոյն իւրոյ Մամմե-
տի իսկ-Օդրայ) եկն եղբայր նորին Աբդլազիզ ոստիկան,
» որ էր խօթ լսելեաք, այլ խորագետ լի երկրաւոր իմաս-
» տութեամբ, առատապէսխօս և առակարկու ... խա-
» զազացոյց զամենայն յարձակմունս անիրաւութեամբ՝
» յաշխարհս ... Շինէր վիրտին զքաղաքն Դաւին,
» ազօրագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան զա-
» ռաջինն, և ամրացուցանէր գրամբք և գռնափակօք.
» անցուցանէր չուրջ զպարսպովն պարիսպս փոսից, լցեալ
» ջուր, ապատան ամրոցին։ Քանզի ասէր զիրմէ Աբ-
» դըլազիզ՝ յառաջուստ աւերածին Դվինոյ, եթէ ի ձեռն
» իմ եղեւ կործանումն քաղաքին, և ես կանգնեցից
» զսա. զի էի ես, ասէ, մանուկ երկտասանամեայ, և
» ունէի սփոփանելիս կարմիր. և յորժամ զօրն Տանկից
» մտանէին ընդ քաղաքիս, մահ ես ընդ խոզուակ մի և
» ելի ի պարիսպն. և ի բարձր իմ ի ձայնէ ահագին
» ազազակեցի առ զօրն մեր, որք անդէն վազվազակի
» թօթափեցան պսպիկքն նախամարտիկք և որք պահէին
» զպարիսպն, և ի փախուստ գարձան, և յագթութիւն
» խանգնելի զօրացաւ. և կործանեցաւք գքաղաքս։ Զայս
» բերանով իւրով ասի պատմել զինքենէ »[2], — Քա-
ղաքդն չեզնն նմանողք նմին, այլ առաւել կամ նուազ
նեղէին զՀայս, մանաւանդ յաւուրս Հասան իսկ կամ-

1 ժամանակակից սրբոյ թուի երգեալ զշարականն ի պատիւ
Աբրդոն, որ և երգի յարգ. 2 Լցեալ սասսածպին չարչին հրամանաւ
մի սուրբ հզնասուր։ Տէրդ Դաւիթ. և անուն քաղքիանն քո եղ
չերիկին՝ յաւրհնութիւն հրեշտակաց. և ընդ աչխարհս ամենայն
ցնծութիւն մարգկան։ — Ասացաւք քեզ անուն քաղքիանն՝ յաս-
պարիզի հզնութեան, ամ Տէրդ Դաւիթ. յաղթհայեր թշնամւոյն՝
խաչին Քրիստոսի. լցայեր ուրախութեամբ գոհիգերս ամե-
նայն. և ապրեցաք առ Աստուած՝ եղեր մեզ զօրավիգն։ — Ե-
ւս առ գմարմինդ ընդ հզոյդդ քամ փրկանս, և սրեամբ գնեցեր
զպզոյսդ քեզ. առեր իշխանութիւն բարեխառնութեան. ապա-
չեռ գԱստուած. զի փրկեսցէ զմեզ ի հարատևին կործանմանէն»։
2 Իսկ մեզ ասացեալ զպատմիչ՝ Ղևոնդ պատմիչ։

դարձ, որ եկն Թոփասանիկ գնդաւ յամի իրր (769), « որք առաւել դաձնութեամբ յանախ գործէին զպղատ- » գործութիւն, և բազմացուցանէին զպղեստս և զհնծա- » թիներս ազխարհիս ». Մինչեւ խորհեցան նախարարք մեր յապատամբութիւն. « և սկիզբն բանից սկսցին լի- » նել ՚ի ձեռն Աբտաւազդայ որ ՚ի տանէն Մամիկո- » նէից. որոյ երթեալ ՚ի մայրաքաղաքն Դվին՝ կալուա- » ծին մեծ առնէր զօրաց իւրոց, և առանցայր անդ զինս » և անթիս պատերազմի, և վաձէր զինքն զրահիւք և » սաղաւարտիւք և ամենայն սպառազինութեամբք »[1]. և այս յայս առնէ կամ գործարանս կամ մերձենայր զինուց լինել ՚ի Դաւին, որպէս և անկ էր սահանին; իսկ յաղմկի անդ ժամանակին և ՚ի վտարանդութեան անցոյց ՚ի քաջոյ նախարարաց Հայոց և հարկանել սրիւք սրիւք զԱրտաշիս (770–1), « լոր ազետ հասանէր ՚ի քա- » զաքն Դաւին առ զօրավարն Խոսրէլի Մահվէտ. յա- » մինեայն կողմանց սպանող մեծ յառնէր ՚ի վերայ նո- » ցա. և գումարեալ զզօրս քաղաքին Դվինայ », առաքէր ՚ի վերոյ ասացեալսդ զԱշոտ Ողիպ սմին չորս հազար արամբք. որ բախեալ ընդ Հայոց ՚ի Բագաւան՝ ՚ի պար- սաւթիւն մատնեցաւ և սպանաւ, և սպրեալքն յիւրոցն « փախստեաց անկան ՚ի քաղաքն Դվին, սակաւք ՚ի » բազմաց. ապա ընդ առաջ լինէին նոցա համազգիքն » աք և կանայք, վայիւք և հնչք, հաղ ՚ի գլուխ լինելով » զնահատ հարկանէին և զօձիս պատառէին, և սղոյ » և աչխարանաք լնոյր ամենայն փողոցք յայնմհիւտ քա- » ղաքին. և ահ մեծ անկանէր ՚ի վերայ տառապելոցն զին- » դին, և ոչ լինէր նոցա համարձակ ելանել ՚ի քաղա- » քէն, այլ անձնապահ լինէին յամրութեան քաղա- » քին »[2]. մինչեւ առաքեաց նոցա ամիրապետն յագնա- կանութիւն երեսուն հազար խոստանիկ զրաց, և ար ուրեմն նուաճեաց զՀայս։ Յետ տասն ամաց (785) եկն տասիկան խուզիստոյ կամ « խազմ ամն, որ արգարեւ ըստ » անուանն խոր խազմաբար և գժոխառեւ. որ իրրեւ ե- » հաս ՚ի քաղաքն Դվին՝ ընդ առաջ եղեն նմա ամենայն » նախարարք Հայոց. ընդ առաջ լինէին նմա և իշխանք » տանն Արծրունեաց՝ Համազասպ և Սահակ և Մեհ- » րուժան »[3]. և զի յառաջագոյն մարտս ցեղալ և հա- րեալ էր ասա զԱրտաշիս՝ արգելան ՚ի բանսի. և տասիկան խուզիստոյ՝ տակաւանայր Մերձաւանս, ըստ կանխագուշակութեան Մոսէսի Խորենացւոյ. իսկ երկրին երից եղբարցն՝ արիւարար նահատակութեամբ հետեւողք եղեալ Դաւթի, նախ յերկինս փոյթս պըն- դեալ ընդ անաւթ և ջայլատիւք գանեալ, ապա սրոյ վճիռ ընկալեալ, անդրանիկին Համազասպ՝ գեղեցիկ հոգւով՝ հրաւէր կարգաց Սահակայ. ՚ի մարմնական բազմականի, սակս, ևս նախ ըմպէի զբաժակն խորհանանի, « այժմ » զա առաջին արբցես զբաժակ փրկութեան Քրիստո- » սի, և փառաւոր լիցի անուն Ցեառն ՚ի քում նահատա- » կութեանդ. իսկ սուրբն Սահակ իրրեւ ՚ի հրահանգողա- » նէ վարժող զաստիարակէ՝ յառաջեալ ընդդէմ սրոյն, » և հնձեալ զամենայն զգայարանսն նշանաւ սուրբ խա- » չին, առաջի սրոյն զգայարանացն խոնարհեցուցեալ, և » գահիճն ձգեալ զառնն՝ եհատ զգլուխ երանելոյն ». ընդ որ մեծապէս և յերկար գոհութիւնս Ցեառն մա- տուցեալ Համազասպայ, զնոյն օրինակ և ինքն կատա- րեցաւ։ Իսկ քինախնդիր խաղմարն՝ և զմարմինս նո- ցա ետ սպրել հրով և զմոխիրն ՚ի գետ ամել. և այս լի- նէր յառաջ ամին քսանութեան Ցեառն — Զթագմ յաջորդեաց (787) խժդժագոյնն քերեւս քան զնա « ամե » նաբերն և վատթարագոյն՝ որդի ապստենոց միոյ, որ էր « Հառամ յազգէ, փեսայ Մուէմնայ (ասպիետն) զրամ « անուն էր Խոլ-Դոկէ. որ եկեալ ՚ի քաղաքն Դաւին՝ « տասիկ գժնդակութեամբ խաշտանգէր զբնակիչս հար- « կապահանջութեամբ. առ որժագոլեալ ամենայն նախ- « արարք և ասմիկք, հանգերձ եկեղեցականաք և կա- « թողիկոսին՝ որոյ անուն էր Եսայիա, ազատէին քե- « քեւացուցանել զանուր ծանրութեան սակին՝ զոր պա- « հանջէր, և ոչինչ ազատէին ». ...Նա մանաւանգ « կնիք « կապարեայ սպրդ գնել յամենեցուն պարանոցն, և « առ մի կնիք պահանջէր զրազում զուզոյս[4], մինչեւ հա- « սանել մարդկան ՚ի յետին անտանութիւն ». և բազ- մաց քաղել հեռանալ ՚ի տանէ և յոչխարհէ իւրեանց՝ յօտարութիւն, իսկ անչափն այն կորստեամբ և զառա- ցուածս և զընծիր ընծիր գանձուց և սպասուց կաթողի- կէ եկեղեցւոյն։ — Աչուանն և բարուց զոչ գոհ որդին խոսրովայ, որ չարակնեալ ՚ի գառատակերս կաթողիկո- սարանին, յԱրտաչատ, ՚ի Կաւակերտ և ՚ի Հառանց- մարդ, խնդրէր ՚ի ցուվանիայ կաթողիկոսէ իրրեւ զը- նոց առնուլ, և սրդեկեալ զնա ՚ի քառն (801) յաչխատա- կէր. յորոց զերկոսին բազում ջանիւ յետս դարձոյց հայ- բատեան. այլ « տարապարտ զրկեալ գառնէր յԱրտա- չատէն՝ յայնմանէ և առ յառս »։

Ցետ ամոյ ինչ (818–9) յառաջնութեան Հոլոյ՝ Մեսրոպ Ջահապետն « ՚ի կայսրիկ առնէ որ առաւել էր « իւր կին զԱրտաւանակ ՚ի Բագրատունի տանէ, – և ՚ի « ձեռն այնորիկ զմեծ մասն երկրիս բառնակալեալ սեփ- « հականաբար իմն տիրէր », – մխարանեաց ընդ իւր զՄմբատ ոստրապետ Հայոց և զՍահակ Միհրանեաց տէր, հարաւ ընդ Հոլոյ ՚ի Կաւակերտ, առ Հրազդան գետով (820), պատեցաւ և փախաւ. այլ տէրն Միհրանեաց ազանաւ անդ, զորոյ « զմարմինն բարձեալ տանէր մեծ « հոլրապետն Դաւիթ ՚ի հոլրապետանոցն տուրբ և անդ « դնէր ՚ի քնարանի մերձ ՚ի տուրբ քառասնն ». — Ցետ այսպիսեաց և նմանեանց ազգին ասիկանց՝ ՚ի կէս թ դարու (852) վաթսարագոյն թնաւիցն եհաս, և ըստ ա- նուանն (ցուլ) մլեհգին Բուղա, խաբէութեամբ և բռնու- թեամբ ըմբռնելով և կարուանելով զնախարարս Հայոց. « և գնաց եհաս ՚ի ջերմագոյն տեղիս ՚ի քաղաքն Դաւին՝ « ձմերել անդ ... ունելով ընդ իւր կապեալս բազումս, « և գերեալս՝ որոց ոչ գոյր թիւ, զորս վաճառակուր ա- « բարեալ յօտար ազգս վարել ՚ի ծառայութիւն, գնալ « հեռանալ մերժել ՚ի տանց ՚ի հայրենի ժառանգութե- « նէ իւրեանց ». և ամենք յազատացն և յազնուաց հրապուրեալք յօտարացութիւն, իրրեւ ոչ սահն յանձն՝ « նահատակեալ կատարեցան վկայութեամբ ՚ի փառս

1. 2. 3 Նոյն պատմիչ Ղևոնդ։

4 Տես. 1/4 սկիզ սրծաթոյ. իսկ զուս զուգոյն՝ կրկին սկիզ։

» Աստուածոյ ... սոցա անուանք հանապին, Աստմ Աշնե-
» ւացի, և Մլեհաճ վարաժնունի, և Գէորգ Բողկա-
» ցի, և վասակ, և այլք բազումք, որոց անուանք գը-
» բեալ են յերկինս։ Բայց երանելին այն Գէորգ մինչ
» կայր ընդդէմ սրոյն, և գահիճն ծեծէր իրրեւ զան-
» զգոյ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ՚ի
» մարմին սրբոյն զհոգւոյն սրոյն. դարձաւ ՚ի գահիճն
» կոյս պատճառաւ ազատելութեան, տեսանել թէ ըն-
» դէր ոչ հատանիցէ սուսերն. և առեալ ՚ի ձեռանէ
» նորա զսուսերն, հայեցաւ յոյսկոյս յայնկոյս, և ասէ.
» Ո՛վ անարի վատ արանց, և կանացի այր, թշուառա-
» կան գինւոր, չուն անպիտան տեառն իւրոյ. և հարեալ
» զպարանոց գահճին ՚ի բաց առ զգլուխ նորա. և զար-
» մանք կալան զամենայն բազմութիւնն՝ ՚ի վերոյ պըն-
» դութեան սրտին և զօրութեան ուժոյն, և քաջութեան
» նահատակութեանն՝ զոր գործեաց երանելին Գէորգ.
» և բազմութեան քրիստոնէիցն որ էին ՚ի տեղւոյն
» յայնմիկ՝ զհաւատեալ միաբան եւսն փառս Աստուծոյ,
» որ զօրացոյց զսուրբան և արար յամօթ զաստանայ,
» հանդերձ գործակցօքն իւրեանց։ Յայնժամ հրամայեաց
» զօրավարն քարկել զմարմինս սրբոյն արտաքոյ քաղա-
» քին, լինել կերակուր շանց և թռչնոց երկնից. և կա-
» ցեալ զաւուրս բազումս անթաղ, և ոչ ինչ ամենեւին
» արատեցան մարմինք սրբոյն, և ոչ գոյր հոտ ժահաւ ՚ի
» վերայ նոցա։ Զորս առեալ քրիստոնէից զպատաս-
» կան մարմինս նոցա, ծածկեցին փառաւորապէս քաղ-
» մամբ, ամ ըստ ամէ ուրախութիւն զօր կատարմանն յիշա-
» տակել, որք են արք քաջ Քաւղ նօթին, և կատարեցան
» աւուրք վկայքն յերեքշաբիւր և երկու քառասնիցն (853)։
— (Իսկ) իրրեւ ձմեռն փոքրկացաւ ... և հարաւային
» ջերմագոյն օդն ընդնաց ՚ի խորագոյն դաշտն Դաունոյ...
» (սկսաւ Բաւղ) առնառուփ լինել, փակեցոյր իրրեւ
» զձի խառնարան, մերթ տապալէր իրրեւ զօձ, մերթ զօ-
» չէր իրրեւ զառիւծ և իրրեւ զկոզ վայրենի կինչէր կռնչ-
» չէր, փրփուր ՚ի վեր բերելով, զատամունս կրճտելով...
» հրաման տայր փութով ամենեցուն պատրաստական
» գտանել ՚ի դաշտն քաղաքին... և գումարեալ այնու-
» հետեւ զանհուն բազմութիւն զօրացն՝ բարձրագոյն
» քան զառաջինն, և եկ խաղաց հասանել ՚ի վերոյ ա-
» բեւելից աշխարհին »[1]։ — Յետ մեկնելոյ նորա ՚ի Հա-
յոց, վարելով ընդ իւր ՚ի Սամսատ դիշխանն ըմբըռ-
նեալս, ընդ որս և զերեսփոխաւոր իւր Սմբատ Բագրատու-
նի զսպասպետեան խաստովանող, եՀաղ ՚ի նոյն գործ
զորդի նորա զՇուտ. զոր վերին տեսութիւնն պահէր
՚ի կանգնումն Հայոց. որում յետ սակաւ ամաց տուաւ
պատիւ իշխանաց իշխան կոչիլ Հայոց. վասն որոյ և ա-
տիկանք ոչ այնքան համարձակ՝ որքան գաւանաբար հնա-
զէին վարել. այլ նա խոհականութեամբ և արութեամբ
քաջութեան զգուշացոյր անձին և քաղաքին և աշխար-
հին. որպէս ՚ի գալ Աղնամայ կամ իսկ Հայրի ասպիկանի
՚ի Դաւին, « եկն առ նա մեծաշուք պատուագրութեամբ,
» և պարգեւս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբե-
» բեաց. այլ նա ՚ի նոյն միտս չարախորհրդութեան յա-
» ռաւել պնդեալ կայր ... բայց իշխանաց իշխանն Ա-
» շոտ անհանդուրժելի միաբով խորհրդոց չարին ՚ի
» գլուխ ելանել », զեղբայր իւր Աբաս պարտադեաւ՝
գաղտ վառեալ զօրաբազում առ նա և մատոյց ըզ-
քաղաք մատնութեանն զոր գրեալ էր նորա առ այլ զօ-
րավար առ ՚ի դաւել զՀայս, և անարգօրէն հեծուցեալ
զնա « ՚ի ջորւոյն զոր պատրաստեալ անէին անդէն առ
դրան վրանին, և հանին արագիչ զաշիկ բանակին
» գարձուցեալ՝ գառնալ ընդ նոյն ուղիղ ճանն »[2]։

Բայց զայդ ոչինչ և ոճիրս սասիկանացն՝ Գաւին ա-
քառ նոցա և ամբաւթիւն գոլով ՚ի չինութեան կոյր. այլ
յետ հարուածոց Բաղոյի և յաւել քան զՀմսատայ
դէպսն՝ յամի 862 ՚ի Ամերային եզանակի, « ահագին իմն
» չարժմանց եղելոց ՚ի Գաւին քաղաքի՝ բազում առա-
» նաւթիւնս և փլուզմունս առնոյ և պարապոյ և պա-
» րանից լինէր, և առ հասարակ քանդումն և դղրդումն
» առնոյր քաղաքն. այլ և մահ յոլովից մարդկան ՚ի վե-
» բոյ հասանէր. և այնպէս ահագին իմն լինէր վտանգ
» տագնապին՝ մինչեւ ոչ ոք միայ ընդ յարկաւ, այլ ՚ի
» հրապարակս և ՚ի փողոցս եղեալ՝ հաչեալ հառաչէին.
» իսկ ցրտացուն առատամունիք ձմերայնոյն առաւել բե-
» րէր զկնճռումն հեծութեանն, զի յոլովք մեռանէք և ծայ-
» րատունք լինէին »[3]։ — Սասակագոյն և բազմամահ
քան զայս եղեւ միւսանգամ ժամն և կործանումն Դըւ-
նոյ յետ ամոյ երեսնից (893), զոր յիշեն երկոքեան և ե-
րեք ՚ի ժամանակակից պատմչաց, յորոց սմին (Թովմաս) և
զբնական պատճառն ըստ իւրում գիտութեան տայ՝
ասելով. « Բարկութեան հաղոյն ընդեալ ընդ ջրոյն խա-
» ւարոյնոց ՚ի կոխակս անդնդոցական, զմանձրայատակ
» երկրի գկարծր և գծանրակիր անեղիս անթաւութիւնն
» տատանեալ, մինչ յերեսս երկրի ՚ի վեր հրեալ, հան-
» դէպ քաղաքին Ադամշատու որ Բլուրն ասի. յորում
» Շահատանն Դաւին մարզաւախտ, պարսպապատ պատ-
» նիշոք պատուարեալ, և տարեւաւրկ վաճառականաւ-
» թեամբ, և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ ըզղ-
» փացեալ. գնա ՚ի հիմանց տապալեալ, բերանաբաց ըզ-
» ժոխարար լայնեալ զբերան իւր, յորմէ քան զէ տա-
» կաւուց սրաբ վիժել յանդունդս. որոց ամանց և տանք
» նոցա գերեզմանք նոցին եղեն... նաեւ տեղիք սրբու-
» թեանց տանք ազօթից՝ զչարժմանն կիրս կրեալ՝ պա-
» տառմամբ սրմնչարժ լինելով... և ասի լինել թէ
» մարգկանն ապականելոցն ՚ի չարժմանէն՝ ոգիս առա-
» ւել քան եօթանասուն հազար ։։ Այդ հանդիպեալ
» լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Իշտուենաց
» վասն ?, ոչ կարաց իւրոյնոցն զերծանել... և նո-
» րայքն անուք ՚ի նմին չարժմանէ գերեզմանացան ՚ի
» նմին։ Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ ... թո-
» ղեալ զբնակիչն ՚ի Գաւին՝ եկեալ բնակեցաւ ՚ի Նոր-
» քաղաքն » (Վաղարշապատ)։ Կսկծագոյնս եւս նկա-
բագրէ Ցովհաննէս կաթողիկոս՝ նոյնպէս ժամանակակից
քերեւս և ականատես իրացն, և ՚ի մէջ մատուցանէ
զոդս միքիթարականս, զպատասուէ և գեղեցկագոյն
Քաղք Մաշտոցի վանականի Անանեայ (յետոյ կաթո-

1. 2 Թովմա Աբծրունի պատմիչ։

3 Ցովհաննէս կաթողիկոս։

զիկոսի), վարդապետին իւրոյ և ազգակցի, զգրեալսն առ զերծեալսն 'ի մահաւանէ. « Իսկ զրազմութիւնս » զիականցն ոչ բաւեալ տալ զերեզմանաց՝ զրազումս » 'ի վիհս և 'ի խորափիսս և 'ի զարափրակս ընկենուլ » Ծածկէին » ։ — Քայքանչ մեծ սասանութենէ ոչ անշնաս 'ի հարկէ և սահմանք Դաւնոյ մնացին. այլ զոյս ոչ յիշեն պատմիչք, վարակեալք սգով մեծի քաղաքին, և կաթողիկոսն պատմիչ շատ համարի մեզ և զիւր գրածըն, « զի մի առաւելն քան զոյս՝ պատերազմող լսելոցս անցցէ » ։ Կամ վասն առաչնոյ չարժմանն և ահաբեկութեան, և կամ զի ամիրապետացն երևափոխանք և հարկահանք չեն եւս էին վերացեալ յաչխարհէս. Մեծն Աշոտ յորժամ եհաս արքունական պատուոյ (887) ՝ ոչ 'ի Դաւին՝ այլ Բերդաւսրս եդ զաթոռն. բայց և անդէն նստեալ՝ որդի նորա Ամբռա Ա. յետ երկրորդի և մեծի ժամին, թէպէտ « զիմագարձ եղեւ Դաւին, ընդ որ պատերազմեալ թագաւորին՝ առնու զքաղաքն, յաւուր » մեծի սրբութիւն » (894). բայց յայնմ ժամանակի չըկայր սահման, այլ տեղակալք ամանք և ամիրայք. և այսպէս կառավրի (եթէ վաւերական իցէ Թուղին) գրածըն Խորենացւոյ առ Սահակ Բագրատունի, եթէ 'ի զարմէ նորա նստին թագաւորք 'ի Դաւին. զոր և ամանք մեկնեն յերկնաւոր թագաւորութիւն որդւոյ նորին Սրմբատայ, զի ատ 'ի Դաւին զփայտէ կախեցաւ մարմին նորա, յետ շարչար լլկանաց խոտանեղական մահաւանն՝ յանդգնեալ և յարատամբ ատիկանէն Յուսիայ (յամի 913-4), որ և անդ 'ի բանտ արկեալ էր զարքայազան տիկնայն. յորոց Շուշան Սիւնեաց տիկին 'ի նմին վախճանեցաւ, « և հանեալ 'ի բանտէն պահապանացն՝ » ընկենցին արտաքս. զոր առեալ քահանայիցն և ժողովրդականացն՝ իբր պանդխտի ուրուք, տարեալ հանդուցին 'ի գրան սուրբ եկեղեցւոյն որ 'ի քաղաքին՝ յանուն Սերգեայ վկային կանգնեալ (էր)՝ Ներսեհի Շինողի » ։ — Ի նմին ժամանակի՝ նորին բանաւորի հրամանաւ նահատակեցան 'ի Դաւին և այլ ոչ սակաս վկայք, յորոց յանուանէ յիշին, « տատեաք մանկութեան ծաղկեալն Միքայէլ անուն, յաչխարհէն Գուգարաց. (և) եղբարք երկու Գնունիք ազգաւ, մեծք և պատուականք, Գուրգէն և Դաւիթ. (որոց 'ի ժամ կատարմանն) ուղղէր երէց եղբայրն նախ գիրսեր եղբայրն զնալ, զանգիտեալ 'ի մանկական տիոցն, և ասէր. « Եղբայր ցանկալի, նախ դու պատարագեա Քրիստոսի յաւսոյն մերոյ զնալոյն բանաւոր ... և այսպէս յատեալ ջնալ նորա, գինի ապա և երէց եղբայրն, պատկեցան արեամբ » ։ — Քետ մեկնելոց 'ի Հայոց՝ արիւնահեղին Յուսիայ՝ տեղակալք նորա նստան գործեալ 'ի Դաւին, Ամատ, Նչոր (Նասր) և Բչր (Պէչիր), այլ գինջեալ յաղերս իշխանացն Սիւնեաց և առեալ փրկանս՝ արձակեցին զկապեալսն։ Ի նմին ժամանակի եկն և Աշոտ Քաջ որդի Ամբռայ՝ Քաւի հաշտեալ ընդ նոսա. քանզի ըստ պատմութեան Ասողկայ՝ յորժամ Իսմայէլ Ա կայսր յամի իբր 919, « գումարեաց զոր բազում և դիմսիկոս (domesticus) առաքեաց 'ի Դաւին քաղաք, » յորում էր Ապքի ամիրայ, որ զԱշոտ Շահնշահ ոգնական իւր սակ 'ի քաղաքն. և եկեալ զօրսն Յունաց » պաշարեցին զԴաւին, և ոչ կարացին առնուլ՝ զարձան անդրէն » ։ — Ա. եղբարբ Աշոտոյ՝ Աբասա՝ (յերկրորդ քառորդի ժ. դարու), այլ ամի ինքնագլուխ արարեալ՝ բռնութեամբ կալաւ զԴաւին և զԱբրահամեան գաւառ, ընդ որում մարտուցեալ Աբասայ՝ պարտեցաւ և փախեաւ. իսկ Գագիկ Արծրունի հօրաքեղբօրն Աբասայ, եհար զզօրս Աբրաքացւոյն 'ի սահմանս Գինոյ ըլեր, և էանց « ընդ գետն Երասխ, կամելով հերձել » ձիգ առնել զքաղաքն 'ի ծագէ 'ի ծագ և զշինարհն » չորջանակի. մինչև ծերք քաղաքին անկեալ առ ոտս » Նորա՝ խնդրեն զհաշտութիւն, տալով հարկս և պատանգս, զոր առեալ արքայի՝ դառնայ խաղաղութեամբ յամառն Դարիւնս » , ուր յղեալ էր զգերեալսն։ — Քետ ասացս ոչ եւս յիշին ասիկանք ամիրապետացդ 'ի Հայս, զի տկարացաւ միահեծան տիրապետութիւն Նոցա, և ինքնիշխան տէրք բազմացան 'ի տեղիս տեղիս, յորոց ասի առ փոքր փոքր և Հայք առանձինն թագաւորութիւնս կանգնէին, որպէս յայտ է 'ի պատմութենէ։ Բայց այլազգի իշխանքն կամ ամիրայք որ տիրէին 'ի կողմանս կողմանս աշխարհիս մերոյ, նուաճէին և գԴաւին, երբեմն առանձին ինքնագլուխ տէր կալով նմին և երբեմն այլոյ հնազանդեալ հզօրագունի տեառն. յորոց ասի յիշի 'ի վերջ կոյս ժ. դարու, (մինչ Բագրատունի թագաւորք մեր բարգաւաճէին 'ի Շիրակ և 'ի Վանանդ, և այլք այլոյր), Աղիճան, յորմէ կորզեաց զոյն Աղուանից (էջմ. Թումէպ) ամիրայն Գագիկ Քան, յամի 982, և 'ի տանէ եհան յամի 987 Աղիճանս որդի Ռոփսայ՝ մեծ ամիրայն Աղրպատականի, եկեալ հարիւր հազար Պարսիկ զօրու. որ և « խնդրէ հարկս զանցեալ ամացն 'ի Հայոց. զոր ընդդէմ յարձակեալ զՀարկան՝ թագաւորն Ամբռա (Բ) մեծամեծ ընծիւք՝ զարձոյց » ։ Այլ 'ի միւսում ամին 'ի մեռանիլ Աղբլհաճայ՝ Աղուանից դարձեալ նուաճեաց զԴաւին. յայնժամ « երդմունս դաշանց հաստատէ թագաւորն Հայոց Ամբռա ընդ նմա, միջնորդութեամբ Տէր Խաչկայ, « խաղաղութեամբ կեալ առ միմեանս » ։

Ի սկիզբն կոյս ԺԱ. դարու էանց Դաւին 'ի ձեռս ամիրային Շէտատանան կամ Շուտանան պարսիկ ոտհմի, այն որ յետ սակաւուց տիրացաւ և Անւոյ. և նախ քան զայսոսիկ խարէութեամբ զրկելով զիշխանս Հայոց և այլազգեաց՝ տիրեալ էին Գանձակայ. որոց տոհմական փառասէր Ա. յորժամ « տիրաց և Դաւնոյ, եգ հարկս 'ի վերայ Հայոց երեք հարիւր հազար դրամ »[1], և 'ի սկիզբն թագաւորութեան Գ. Ամբռատայ (Յովհաննու) Ա. պիրառ իշխան՝ որ կուսակից էր եղբօր նորա Աշոտոյ՝ ապստամբեցաւ առ (առ կամ առ որդի սորա) Աղուղուար տէր Դաւնոյ, և գաւեցաւ 'ի նմանէ[2]. Նոյն յամի 1041 կամելով տիրել երկրի Դաւթի Անհողնի (Հայ-Աղուանից) և զԱրծրունեաց, զկատարն Անւոյ « խորհեցան երբեմն

1 Վարդան պատմիչ, ՃՀ։

2 Մատթէոս Ուռհայեցի, ժ։

» ՚ի Դաւիթ տալ զքաղաքն ՚ի Դաւնայեն, քանզի քոյրն » Դաւթի կին էր նորա »։ զոյս ասէ ժամանակակից պատմիչն Լաստիվարացի, ոչ բացայայտեալ ո՛ իցէ Դա. ւիթդ, եթէ չիցէ վրիպեալ գրչին յանուն, զոյժ ինքն Ապուլասար Տաւթաթ անուանէր. քանզի և այլոյր նոյն պատմիչ ասէ վասն սորա փեսայ լինել Աշոտոյ՝ հարն Գագկայ վերջնոյ. և զոր ետուել պատմէ անընդմէջ նախ յիշեալ խորհրդածութեան գլխաւորացն Անւոյ, և գրեա. թէ ՚ի նմին ժամանակի, եթէ, Աբխա տեղակալ Անւոյ եկեալ ՚ի դրանէ կոյսեր, » բազում զօրաք խաղայ ՚ի վե. » րայ քաղաքին Դաւնոյ. իսկ Ապուլասար տէր քաղա. » քին պատերազմ տուեալ ընդ նմա՝ անչափ կոտորած » առնէ ՚ի զուռն քաղաքին. յորում տեղոյ մեռաւ մեծ » իշխանն Հայոց վաճրամ՝ հանդերձ որդւովն (Գրիգո. » րիս), որ մեծ սուգ հասոյց Հայոց »։ Ի վրէժ պատաս. քեանն և սրեանցն՝ առաքեցաւ ՚ի կայսերէ (1046-7) այլ զօրավար ներքինի, զոր Տէլիսրիս կոչէ Ուռհայեցի պատմիչ մեր. որ » գոյր աշագին բաղմութեամբ և ան. » թիւ զօրաք ՚ի վերայ քաղաքին Դաւնոյ, և բանակ հար. » կանէր ՚ի զուռն քաղաքին, և էր ձմեռնային ժամա. » նակ, և ՚ի սառակութենէ սառամանեացն և ՚ի բախ. » մանէ յորդաբուղխ անձրեւացն՝ ոչ ինչ կարաց առնել, » այլ զառնոյր անյաղթելի, խաղայր գնայր ՚ի Հաւսոց » աշխարհն. իսկ յորժամ փոխեցաւ թուականն Հայոց » ՆԿԶ (1047-8) ամին, դարձեալ գոյ Տէլիսրեան զօրաք » բազմիք և ինանէ ՚ի վերայ քաղաքին Դաւնոյ. և բա. » զում չարչարանս և ստգնաւոր գործեաց այնմ գաւա. » ռին, սրով և գերութեամբ ազգականեաց զամենայն » ազգն Տաճկաց, և գործաւ յաչխարհն Բասենոյ խաղա. » ղութեամբ »։ — ԶԱպուլասար յիշէ Լաստիվարացի և յամի 1055, » այն որ զԴաւին և զԴանձակ առնէր »։ ա. ռելով. Սորա որդի է Մանուչէ որ գնեաց յԱբուխալանոյ զԱնի, և պայազատք իւր կարան զոյն ցկերջ ԺԲ դարու. — ՚ի սկիզբն դարուն (յամի 1105) » ՚ի չմռնել իշխա. » նութեանն Պարսից, յարեաւ ամիրայ մի Ղոյրլ անուն » սկսեաց, էառ զաւանն Լօռէ, և գոյ մնալէ ՚ի Դը. » ւին բռնութեամբ ուժոյ, տպանեալ զԱբուսասար զեղ. » բոյրն Մանուչէի. և գնացեալ Մանուչէի առնու զոր » ՚ի դրանէ արքային Պարսից, և գոյ տպանալէ զԳրիկն » ՚ի վերայ գերեզմանի եղբօր իւրոյ, և զԴաւին տայ ՚ի » ձեռս Պարսից »[1]։ Բնա քան ասոյ իրրեւ վերստին Քաղաւ Անի ՚ի վրաց ՚ի ձեռս Շէհատտատեանց, փառուն (ը) էառ և զԴաւին, ուրանօր յիշէ պատմիչն՝ » ահագին ժողով Թուրքաց յաթնախառն բանակին »[2]։ Ի վերայ ա. րա նկնեալ Թուրք ամի Թուրք ՚ի Ղօզ առհմէ, յամի 1130, աթրէ քաղաքին Դաւնոյ, » վիրաւորեալ ՚ի պատերազ. » մին զՓաւլուն, զոր ննդիկք ամենք գոյա խնդրեցին » պատճառելով զվէրն՝ որ չէր մնաւոյ. և առ (յետոյ) զա. » միրայութիւնն կրասեր եղբարցն Փաւլոնի Խաչէրեն. » և զկնի սակաւու՝ սուգ Մանուելա »[3]։ Բարբարոսն այն Թուրք հարեալ և զվիրս ՚ի Գառնի, » կարեաց » զգլուխն՝ եփեաց քանով, և գտանկն գներ ՚ի բարձ. » բանեան Ախրային (Դաւնայ) ՚ի չարս քարոզեցան »[4], Այլ յորժամ յաղթող Թագաւորն Վրաց Դէորգի ա. ռեալ զԱնի (1161) » կուտէ առ ինքն զկամկաւային զօր. » սըն, և գոյ առնու զԴուին (1163), խոտագոյն խայտա. » ռակեալ զնոսա ՚ի սուր և ՚ի հուր, բաց ՚ի քրիստոնէ. » իսն որ անգ. և զգագաթունեան քանեփեացս՝ առեալ » ՚ի Ախրայէն, զարգարէ ասկեթել հանդերձիւք, և ե. » դեալ ՚ի գագաղս՝ բառնոյ ՚ի յուսս մատրեաց, և բակ » ոտիք սոց առնել մինչեւ ՚ի Տփխիս. ... Զոր լսեալ » Ելտկուզն՝ գոյ յայրեցեալն և ՚ի քանդեալն Դուին, և » խոցառեալ սրտիւ » ՚ի բաց գնայ[5]։ Յայնմհետէ ասէպ մերթ ՚ի վրաց և մերթ յայլազգեաց անտի բնաբարեր քաղաքն. զոր յամի 1184 ՚ի սկիզբն պայազատութեան Թամարայ Թագուհոյ՝ առին վիրք. յետ երկուց ամաց (1186) յիշի Ալիխէր ամիրայ Դաւնոյ, — ի սկիզբն ՃԳ գարու քաղաքի ապատպատն Զաքարիա և եղբայր իւր Ի. ւանէ՝ յետ այլոց քաղաքաց և գաւառաց՝ առին և զԲը. ւին (յամի 1203), երկիցս հարեալ զայլազգիս և առեալ առաջ բազում. յորում ժամանակի իշխող տեղոյն կոչէր Ապուսիքր. և Ձեռաց ՚ի ձեռս նոցա մինչեւ ցՆէն Թաթա. բաց. յորոց փախուցեալ Ճէլալէտտին (որպէս յիշեցաս ՚ի տեղագրին Դաւնոյ), ապստամբ սիրեաց և յաստանն (1225), և պաշարեմբ էառ զԴուին, և կողոպտեալ գնաց բազում առաջս։ Ցիշի յայնժամ զաւուն Դաւնոյ, որպէս գլխաւոր Մահմէտականաց ։ Յայմ պահս, Թուի, մինչեւ մեռնել ամենայն բազմութեան զորաց առյտանին՝ հասեալ անդր քաջին Պաղտչոյ, և կոտորեալ « գԹորգումն և զՏաճիկն » միանգամայն, որպէս ասէ ժամանակագիր պատմիչն Մխիթար Անյրվանեցի։

172. Աչապիսի քաղաքական տեղապահ յիշատակաւ՝ որ պիտեաւ սկսաւն (յաղթանակաւ Տրգուասոյ ՚ի վերայ Հի. սրասպանոյ) կնքի պատմութիւն մեծի քաղաքիս, իրր գոյս չորս կամ հինգ եղելոյ բնական սահման Հայոց. քանզի յետ այնր ոչ ևս գտանեմք առ պատմիչս գանուն նորին. և որ զարմանալին է՝ ՚ի գոլ յետ սակաւ ամաց հրասին Թաթարաց և յաստկանել զաշխարհն մեր, մի ըստ միոջէ յիշատակին ազէտք և ահերք ամենայն նշանաւոր քաղա. քաց ժամանակին, և սրտաց միայն լուէ, և լուէ խոպան. գի ոչ ոք գիտաց կամ ծանոյց մեզ՝ գիարդ եգեալ վախճանն, լքումն, աւեր և ամայութիւնն, քշնամեաց ձեռամբ, և. թէ երկրի սահմանութեամբ և փութմամբ, յարաթունգ սրտին ազնուրիկ Հայասահմանեացց, խառնեմբոխ հրապա. բանի վճռաւակատաց և աշխարհամատ գրան եկաց յաչխարհսդ հեռատեաց։ Զայս յոյս առնէ և հին հա. մատատ, այլ կարեւոր ցանկ մի Մրգուսափութենաց, որ ըս. կըսեալ ՚ի Դաւնոյ՝ իրրեւ ՚ի մեծէ արձակարանէ կամ կենդրան աշխարհիս՝ ձգի ՚ի զանազան քաղաք և աշ. խարհս, նշանակելով զհետաւորութիւն նոցին անտի՝ քառ մղանից [6]։ Զէ դժուարին գուշակել զի ցուցանեն չափք գնանապարհս և զմեծ հանգրուանս կարաւանաց և վաճառականաց, որոց կենդրան էր Դաւին և շա. հասան, ոչ լոկ սեփականի իւրում աշխարհի, այլ և

1 Կիրակոս, և վարդան, կե։
2–3 Վարդան, կթ։ Հ. ՀԱ։ ՀԳ։
6 Հնգիսակն՝ թուի Ասատիս Շիրակացին, եթէ չիցէ հնագոյն

քան զնա որ զի գրի և բնդ գործս սորա և բնդ աշխարհագրութեան նորին ածէ, և բնծայի ՚ի հնգիսակէն առ երկաթիրակ ասի ՚ի գործս Պաղտչ Ագիքանդրացւոյ և Պորփիրի և նմանեաց. ինքն միայն

չուրջակայ աշխարհացն, և մրցող ընդ վիհագունից շահասանաց ժամանակին յար և է աշխարհս։ Պաւկոպիոս որ ՚ի կէս Զ դարու գրէր հմուտքեամբ, յիս յիշելոց ըզխիտ առ խիտ և զմարգաշատ գետս կամ ուանս Դրնեայ, վկայէ արժանակրիս բանիւք, զի բազում գոծատուանք էին ՚ի նոսին և գործակատարք, բնակեալք վաճառականութեան ազգաւ։ « զի ասա ՚ի Հնդկաց և ՚ի մերձ » ձուար վրաց, և գրեթէ յամենայն ազգաց Պարսից, » այլ և ՚ի Հռոմոյ գան վաճառարերք և փոխանակին » վաճառս »[1]. որ է ասել երկոքին ծագք վաճառականութեան աշխարհի ընդ արեւելս և արեւմուտս. զի զարեւելեանն նշանակին եկք Հնդկաց, որք բերէին և զճենացն պատուականագոյն վաճառս, զՄետաքս. իսկ զարեւմտեանն նշանակին Հռոմք, որոց մայր քաղաքաց Բիւզանդիան՝ շահասատն և շուկայարան էր բերոց արեւմտագոյն աշխարհաց երթալից։ Մղձաւոիր մեր հնդեակ գիծըս կամ ուղղութիւնս ճանապարհաց ՚ի Դաւնոյ ցուցանէ. Ա. ընդ արեւմուտս, որ ծգեալ ընդ կարնոյ քաղաք (200 մղոն տարակաց)[2], անտի ընդ մէջ սահմանաց Մծոց և Փարսն Հայոց, ընդ Կոզոնիա (Գաբաւհիտար), Նիկոպատրիս, Ամմոխա և այլն, յանդէր ՚ի Կ. Պոլիս, յորմէ՝ որպէս յայտ է և որպէս նշանակէ, երիք կիսագիտ և յայլ կողմանս երթային։ — Բ. ընդ հարաւ-արեւմտից՝ նախ ՚ի խոտոր առ եզերք ծովուն Բզնունեաց (170 մղոն), անտի ընդ Քղիմար (Ալզէնիս), Յուանա, Եմեսիա (Հեմս) ՚ի Դամասկոս, յորմէ և յերուսաղէմ, Աղեքսանդրիա Եգիպտոսի, և ՚ի ծանօթ քաղաքս Ափրիկեայ։ — Գ. ընդ արեւելս կոյս, ՚ի Բնրդ-կունս (60 մղոն) որ Քաւ ՚ի Ալինիս կամ Յայցաիս, և անտի ընդ Պարսս մայրաքաղաք Ազատանից՝ ՚ի Կտեսիփոն ծով, որ նաւուք տանէր յեզերս Թուրքաստանի և Ակիթայ։ — Դ. ընդ հարաւ-արեւելից, ՚ի Նախճաւան (60 կամ 70 մղոն), անտի ընդ Դաւրէժ, Տիգրան (մայրաքաղաք Պարսից), Աղուան (Գանձա), Պարսկայիկ ծով, յորմէ նաւք տանէին ՚ի Հնդիկս։ Ի Դաւրիժէ (Գանձակ Շահաստան կոչեցելոյ) գոտանէր և այլ գիծ տանելով ՚ի Նինուէ, ՚ի Մծբին, Յուանա և այլն։ Գարձեալ և ՚ի Նախճաւանէ մեռ այլ գիծ տանէր Յիւստափ, ՚ի վարդանակերտ, Փայտակարան և Հանէր ՚ի ծով Կապրից։ — Ե. ընդ հիւսիս, ՚ի Կայր (50 մղ.). յայտ է թէ ոչ ձգտաւոյց գտաւոն այլ Կողբտարոյ Դաւգարաց, յորմէ երիքայր ընդ կոտոր դիւղ, Տիգիս մայրաքաղաք Վրաց, Հռեսարակերտ (Կոտրած կամուրջն), և յանդէր ՚ի Պարտաւ, ուր միանայր ընդ Գ գծին։ — Ոչ է տեղւոյս առաւել եւս յերկարել զիրացս. շատ լիցի ասացեալս ՚ի գուշակութիւն ուժի շարժման և խառնիճաղանճի Դրնեայ, ՚ի ասկս շահաստան լինելոյ, զոր ՚ի գլխաւորութենէն ըստ քաղաքային և եկեղեցական վարչութեան, և այս յատէ ՚ի Ե=Ը դարս. և ՚ի նշանակ հանճարոյ և ոգւոյ ազգիս՝ որ զայնպիսի խոր և անծանօթ վայր՝ որպէս կենդրան մի աշխարհախուզս. ուր հարկ է թէ և ՚ի սահմանեալ եղանակս առնալոցառաց՝ բիւրք բիւրուց գային ՚ի չորից ծագաց, և ուժգուժ իշխանք էին։ Վկայեն և արտաքոյ աշխարհագիրք զրազմութիւն բնակչաց Դրնեայ, քրիստոնէից և Հրէից, զեկեղեցեաց և գմզկիցաց, որոց գլխաւորքն մերձ էին յիւրար։ Տակաւին յետ ԺԶ դարու պատմիչն Բրդոց Շերէֆէտտինն՝ յիշէ զրազմութիւն քրիստոնէից բնակչաց, (անշուշտ զրանս նախնեանց կրկնելով), և զնեստորիս աննման գեղեցկութեամբ, և գվանս ընտիր Որսոյ կարմրոյ։

Իսկ արդ զինչ յայնքան աշխարհաժողով տեղւոյ ասացեալ։ — Երկու կէտք առաւերակերպք. նախապիտեալ գեղքն Հայ և Ասորի Դաւին. յետինս ՚ի հիւսիսակողմն կայ և ոչ հեռի յԱղուան գետոյ, ՚ի միջի առաւոց նորին բաժանելոց. բնակիչքն իրր 45 տուն, ոչ գիտեմ սերունդք իցեն Ասորւոց բնակելոց անդ ՚ի ժամանակի բարգաւաճանաց Դաւնոյ, եթէ եկք յետին գործուց. շատք այգեգործք են յայտնեաւէ, ասկաւատպէտք և աղքատք. եկեղեցին յաղնուն Ս. Յակոբոյ։ Ի կէս Զ դարու՝ յաւուրս Ժողովոյն Դաւնոյ, յիշէ Ղևրսէս Ը կաթողիկոս ՚ի Թուղթս իւր և զԺողիկս Ղևոտրականս, « որք եկեալ բնակեցան, ասէ, » յաշխարհիս մերում, պատճառաւ վաճառապաճուռեան. » և այժմ չարաշնար պղծալից անիծարեր սրտեաթս » իւրեանց՝ յոգիս մեր ազգիցին. մինչև իւրեանց պղծու » թեան հաւատոյ առաջնորդ չեպիսկոպոս ածեալ »։ Եւ յայլում գրի. « Յեսքի եւտաներորդի ամի Թեոդոսի սրբ » քոյիդ արքայի (547-8 ամ Քրիստի), ՚ի մերզպանաւ » թեան Ղհհայական, սրարին իմն չիուսած յանուն » Մանաձրհի Ղաժ՚ի, որ հաւատացեալ ՚ի Քրիստոս և մե » կրաեալ անուանեցաւ Գրիգոր, և սպանաւ վասն Նորին » հաւատոց. և ապա անաւանեցին գնա տեղի ժողովոյ » պղծութեան իւրեանց. (յոր հրապարեալ սրտային և » զանուն ՚ի էոյսց)... Զոյս աղէտ հոգեւոր տեսանելով » հաւատք, թէպէտեւ անագան, ՚ի վերոյ պատճառաց » տաւթեան նոցա... Իսկ մեր ոչ կարացեալ համիտրել

գլուխ մղոնից հեռու է. յետոյ Ռուբէն ասի յաւելու է և գտապարբէզն, որ է $\frac{1}{3}$ մղոնի, և վերստին որ է $\frac{1}{30}$ ասպարէզի. իսկ մղոն համարեալ է 1000 քայլ. քայլն 6 ոտն, ոտն՝ 6 մատն, և այլն։ կամ քան այլ օրինակի՝ մղոն (ասպարէզն) 167 գերկ. գերկն 8 թիկ, թիկն 8 կրճ, կրճն 2 բդունգն. ՚ և. յերկրագործն վերայ Բ գործ գագաթ »։

1 Κόμαι δὲ πολλαὶ πολυανθρωπότατοι ἵδρυνται ἀγχωτάτω ἀλλήλαις, καὶ πολλοὶ ἐμποροι κατ' ἀργασίαν ἐν ταύταις οἰκοῦσιν. ἐκ τε γὰρ Ἰνδῶν καὶ τῶν πλησιοχώρων Ἤδρων πάντων τὰ ὤνια εἰσάγ τῶν ἐν Πέρσαις ἀνῶν καὶ Ῥωμαίων τινῶν τὰ φορτία ἐσκομιζόμενοι ἐνταῦθα ἀλλήλοις ξυμβάλλουσι — Procopii, De Bello persico, II. 25.

Պաւկոպիոս ժամանակակից Համարեմ զՀիշատակարանն կամ զպատմիչ մերոյին՝ յորմէ առեալ Յովհ. Օրդեն. (Գլ. Ե.) զպատմութիւն Հեռագրութեան Լրիցակաց հպատակաւթ Պարսից, յաւաշխ քառասնի Զ դարու. յորում շահապատ մանկունի Դաւին։

2 Ա. Կէսդրէ վարկաց նշանակել գամենայն քաղաքաց մղոնաչափս, զի ՚ի թիւս վերոգրեալ տղոցն յոմանս, և Հարկ լինի քննութեանց և ուղղութեանց։

3 Տեղիս այս որ քան զայլեալ օրինակաց կոչի Կոտ, Կոտա, Կոտա, Կոտա, չմարթի լինել ուղղակի ընդ մէջ կոչել և. Տիգիսոյ, զի 103 կամ 107 մղոն նշանակի ընդ մէջ կոչել և. կոտայ, և. 140 ընդ ասս և. ընդ Տիգիս. որպ հետագրութիւն Տիգիսոյ ՚ի կոչել՝ չէ տեղի քան զոտոյն ՚ի Դաւնոյ՝ որ էր 50 մղոն. Քաւ ասս եթէ Հանապարհն ՚ի կոչել գտանեալ ընդ Մ. Հռ. և. կոտայն կամ կոտասան էր պիժնանս գետիցիս, և անտի գտանեալ ընդ Եր. ՚ի Տիգիս. որոց յանկոգոյն գան մղոնաչափքն։

» այսպիսի չար գործոց նոցա ... քանզեալ աւերեցաք » զտեղի ապաւինի անօրէնութեան նոցա, և բարձաք ի » միջոյ գիւղերացին զայն խաւար »։ — Իսկ Դաւին Հայոց կամ Քրդաց, զի և Քուրդ–քէհա կոչի, հուպ Աղտամար՝ ունի աւելի կամ պակաս 100 երդս Հայոց, Ո. Աստուածածնի եկեղեցեաւ, և 10 Պարսից կամ Քրդաց տուն. որք ըստ սովորական ձոյ այոց գիւղօրայից՝ կէս գետնափորք են, թէ և բնակքն փոքր ինչ բարեկեցիկք իցեն քան զԱսորիս։ Զերեւին տատանօր հետք անգամ հնութեանց. իսկ ի վերին Դաւին յայտնի է բարձրաւանդակ մի, անշուշտ բնութիւն յորմէ այնպէս կոչեցաւ քաղաքն. և երեւին անդ կառուցուածքիւք ապրուստ, հետք տանց և եկեղեցեաց. այլ չէ ուրուք խնամով քննելով զտեղին, որպէս արժանն պահանջէր. բազմախոյզն Տիւպուա որ քննեաց զվայրքս յամի 1834 (մարտ 21–2), խնդրէր տեսանել և խուզել, այլ առաջնորդքն ի Մարտինն Դաւին ածին զնա, ուր չեգիտ ինչ։ Հարիւր վաթսուն տուն յառաջ քան զնա՝ Շարաէն հաշուակալ ճանապարհորդ ազատ տասանոր (յ'8 ապրիլի 1673), և գիւղ կարի մեծ և յոյժ գեղեցիկ կոչէ [1]։ — Քիշտաւիի գիւղս Դաւին և ի սիփրն ժէ դարու Յաւուէլ պատմէ. ի վարս առաքինակրօն Պօղոս վարդապետի Մոկացւոյ, որ ազատ անդ գիշեր մի, ի վարիչ իրում Յիերեւան, և բժշկեաց առէ անդ զգօսացեալ ձեռն մանկան միոյ։ — Գրեաթէ առ նովին ժամանակաւ գրելով աշխարհագիրն Օտմանեանց (Հաճի Գալֆա), վկայէ ի հնումն ամուր և ընդարձակ պարիսպս ունել Դաւնոյ քան զԱրտաւիլսյն, և տեղիս եկեղեցեաց և մկրթաց, և գրաւակիչն քալ այգեգործս, և դարմանատուն Որդան կոչմոյ։

Յաճախեցեալ և յանճանաթացեալ մայրաքաղաքէս ընծայեցաւ վեհմոգոն հանճար կամ բանահիւս և հոգերգաւ եկեղեցւոյս Հայոց, Ստեփանոս, յետ կիսոյ Է դարու, որդի աւագ երիցու քաղաքին, և կոչեցաւ Սիւնեցի վասն եպիսկոպոս այնր աշխարհի կարգելոյ։ Ի սկիզբն այնր դարու ատաւ էր և Եպիփան Հայր վանից Գլակայ, և յԸ դարու՝ Ստեփանոս կաթողիկոս որ կոչաւ զանձն ամ մի (787), և խոտեալ եղեւ իրրեւ կաշառակերծ։ Ընդ երեւելի վարդապետս ի սկիզբն ԺԴ դարու գտանի Գրիգոր Դաւնեցի, որ գաւառ ի ժողովի Լօռաւոյ։ Դաւնեցւոյ ուրումն Քուրդի Հայր կամ Էյիւոյ կոչեցելոյ՝ որդւոյ Շաուեայ ի Նաւատիէ տոհմէ Հասանիէ ցեղի՝ որդի էր Սալահէտտին, մեծ աշխարհակալն Քուրդաց յ'ԺԲ դարու, առաջն երեսաղեմի ի ձեռաց Խաչակրաց, Քէպէտ ինքն ծնաւ ի Տիգրիս, իսկ հայր իւր ասա. և յատկացոյն ևս յԱյիւանականի, որ էր ասան կամ արաւարձան մի Դաւնոյ, ըստ արաբացի պատմչի (Խան Խալիլ)։ Ցոյժ կարեւոր յիշատակ տեղւոյ, զոր միայն եսքն կամ ուք գարուք յառաջ ի Խրենացւոյ լսեաք և ոչ գիտեաք այսքան մերձ Յատանն Հայոց լինել. և գրէ զայն (Ա. Ւ.)լմնել ի գլուխ գաշտին Երասխայ, յորմէ մինչև ցՆախճաւան՝ Հայկազեան Տիգրան առնմանեաց տեղի բնակութեան Մարաց գերելոց յետ ապանմանն Ազգահակայ։ Արաբացի պատմիչն՝ Լէտաուեքքան գրէ զանուն اجدانقان

Դ Ր Ո Ի Ա. Գ (Դ)

ԴՈՒԻՆ ՀԱՑՈՑ ԱՐՔՈՒՆԵԱՑ

Ղանաւոր երեւոյթ մի և չարչն է կեղեւանալն կամ քարանալ, որով ոչ միայն ձեւանան (կէս՝ի քեզ և կէս ձեռնարուեսու.) այլեւայլ սեւակարմիրք և պղծառք, հաշակեալք՝ի կոզմանս յայտոսիկ, և ապիտակք՝ գոյացեալք յատագ կամ՝ի փխրուն քարանց արկելոց՝ի ջուրն, այլ և մերձ՝ի Տիւրմէն բովանդակ երկու բնական կամարջք են՝ի վերայ գետոյ՝ի ցայտից հանգիպակաց ջերմկացն, առ սակաւ յատաջեալք երկաւոտք և կցեալք յիրեար. մին չորնարձակ իրրեւ քառասուն քայլ, միւսն քարընկէցիւ՝ի բացեայ՝ անձկագոյն և անհարթ, վասն որոյ և ոչ որպէս զառաջինն անցանելի սոյնից: Են և՝ի վերայ բնակամրջիդ հօմն կամ ութ ծծմպղբերք, որք հասեն՝ի գետն, և՝ի հարաւային զառէյան թողուն ազատ ծծմբայինս, խառնելով՝ի քար կակուղ և կորեւ. առ որով և այլ ազբերք ջերմիկք կազմին պպզակս և քարացմունս պէսպէս ձեւոք և գոնձիք. բայց յոյժ գտանհատ են անդ ջուրքն ծծմբայինք՝ի կամրջէ անտի ծոբեւոք՝ի պայծառ ալիսն Մաւրաւոյ, իրր՝ի 45՝ բարձուէ: Բառասնագոն գլխաւոր ծծմբային ջերմկացն էր խանարհագոն՝ի գաշտակոզմն, այլ՝ի մեծի առաւաւթեան երկրի յամին 1859 տեղափոխեալ տղեցաւ այսր, և այլք՝ի նորա տեղին փոխեցան. — Աջոյեալ ընդ քնակամրջս այս՝ Արածանի մտանէ՝ի խարահվիտ կամ՝ի գոգ պատաւանն, առ որոյ եզերք ամրառնան ուղղորդ մեծամեծ կոկոսք համանիւթ քարանց, փրթատածք մերձակայ լերանց, իրրեւ ձեռագործ պատաւարք ահմանեալ Տիւրմէնոյ: Ի յեզափոխութեան անդ գրից ջերմկացն՝ի ժամանակի տատանութեանն՝ Թաւի նուազեալ և քարացուցիչ բնութեան ջուրցն. և ուրանցն Տիւրմէնոյ վերոյ նոյնպէս նուազեալ է արդ, քանզի տեսաք զի փոքրեալ՝ի հար՝ ոչ հանդարժեն, այլ վազ լուծանին. — Մի՝ի հանքայք ջերմկացս յիւրմէ՝ի նախնեաց մերոց՝ վարշակի ջերմուկ անուամբ, առ որով երբեմն զորք քաջի Մամիկոնենանն վահանայ հանգիստ առնուին, յետ նահատակութեան եղբարն վստահոյ, յորժամ հասին անդր զրաքսու գաւժկանք վախտանգոյ վրաց Թագաւորի՝ իրրեւ նեղելոյ՝ի հինից, և փութացան յգնութիւն նմա մինչեւ՝ի լերինս Կանգարաց, ՝ի Գուգարս. — Պատմիչն Փիլոքսոց յիշէ այլ և այլ ջերմուկս՝ի Տիւրէն, զմին հզօր և չարժիչ ազօրեաց, և չարչանակի ցայտելով որպէս շաչրատան. և միւս՝ որպէս յետագան կատասի, և միւս ևս յոյժ սխորժահամ, ասէ, որպէս ազբիւր կենաց:

Զատ՝ի վերոյիշեալ հրաբղխի նիւթից և ուլունից, գըտանին և այլ ազգք կակուղ քարանց՝ի սահրատս Գայանտար լերին որ մերձ՝ի Կապատ, սպիտակ և գեղեցկագոյն, զորոց զմին՝ արծաթախառն կարծէ ամիկն, և զմիւս ասկէիսառն, և առեալ՝ի յետնոյս՝ ածանեն զանօթս բրանոցս և փայլուն յոյժ գործեն: — Ի սահրատս լերին Ծաղկոյ են և փայտանիք երկաթի՝ի վաղ ժամանակաց մինչեւ ցարդ հատուածք, և կոյրն այժմ Զէյնապի քերհատեն, ոչ կարի հեռիք՝ի նախայիշեալ ջերմկաց:

Ընդառ մերկ և լերկք են երեսք կրային և պատառիկ հրակուզմ լերանց կազմանց Տիւրմէնոյ և որք ընդ արեւելս՝ի Կոգովիտ կոյս, այնքան քաղաքատակ և ծաղկաւէտ է լեառն ազբերակունց Արածանւոյ, վասն որոյ և զիրաղկի անուն անփականեաց, և ՀՀաղկազարդ վոյնշրարիւնք կոչեցան կողք նորին. յորս ասկս ասի և յայլազգեաց Աշտատ կոչեցեալ, իրր գեղեցիկ կամ խայտաբղետ լեառն. և զայս ասեն Հայոցդ զանի Թաթարաց նախ այսպէս անուանեալ, սքանչանալով ընդ գեղեցկութիւն վայրացն, ընդ յատակութիւն և ընդ զովութիւն օդոյն, վասն որոյ և անդադար՝ի մերմեռ ասհմանս Դասանի լեռնագաւառին վաստատիանի՝ հաստատեալ իւր աճմարանոցս, որպէս և յաջորդք նորա, մանաւանդ Աջապատն. որոյ յատկեալ՝ի չինածան, տղոյն իսկ սահմանքն այնու հետեւ յանուն Նորին կոչեցան Աչապաղա: Յուէ զի չէ քաջի բուսարանի լուռ արժանացն քննեալ զայսպիսի ծաղկընծայ տեղի, ուր յատակի էր գտանել և ազգս կամ տեսակս անծանօթ բուսոց կամ սակաւածանաքիկ. յորոց սակի կարծեմ լինել գՀրաշալի բուսոգոյնն լերկածագին (Anoplanthus), որ գտանի և յԱնիկ և՝ի Շաղրաւ. քանզի ասի՝ի մերայոց յիշէ ասու բոյս մի անտերեւ Թգաշափ բարձրութեամբ և կարմրատիպ գեղեցիկ ինձիւ ծաղկան, որ ծղրտէ զնկարագիր լերկածագկին՝ ըստ բուսարանից: Ցիշէ մերազգին այն ընդ նմին և գՆիւրատամ ծաղիկ: — ԵՔէ ծաղկունք և բոյսք պիտանիք Ծաղկատան չեն մեզ քաջ ծանօթ, ոչ նոյնպէս և ընդարձակ յատաքի արտաքն՝ հարակք բազմահոյլ հօտից Ցրդոց, որք առատել ևս հաղագրեալ սխալեցան ընդ գաւառս այս յետ գալստելոյ Հայոց՝ի հիւսիսային կողմանս, յամի 1829: Ցետ Թաթարաց և այլ իշխողք՝ի վերայ աշխարհս մերոյ զնոյն օրինակ՝ի գեղեցիկ բարձրաւանդակս անդ բանակէին յամարանի. յորոց սակի գՇահ Իսմայէլ նահապետ Սոֆեան չահից Պարսից՝ յիշելով իսալացի ամն բժիշկ յամի 1504, ընդ նմին յիշէ և զառատաւթիւն

կենդանաբար ջուրցն և զպտրտաւթիւն մարգացն։[1]

Առաւել քան զրուսականն՝ հաչակել է ՚ի նախնեաց մերոց հարստութիւն կենդանական սեռից գառաթռչնոց, սոսկալի բազմութիւն և զանազանութիւն որսականացն երեց վայրենեաց, մանաւանդ յերկոսին ծանօթագոյն լերինն՝ ՚ի Ծոզկոց և ՚ի Շահապիվան. ապա՝ որպէս յայժմուս միավ անառատ Ագռաւազ կոչին, փոխան մեծաց երեխն և առ նախնիս մեր կոչեցեալ, որպէս է կարծել ՚ի բանից Խորենացւոյ (Գ. ԽԹ)։ Ցերեկոյ անտի նախանձաբեկ առնուզոց զԱրշակ Բ՝ ծանօթ են կարմրագեղմն վայրի Աղիճ, Այծիմանք՝ երկար և ձիգ ոզորկագեղ եղջերաք, էրէներուք և նմանիք. ընդ որս գոսին և վարազք։

207. Գառատի կամ տեղւոյ այսպան բարեմասնութեամբք ճոխացելոյ և յարդարելոյ ՚ի բնութենէ՝ հարկ էր ամենայնիւ ակնախոհ եղանել ՚ի սկզբանց անտի, որովհետև ՚ի նահապետութեան Հայկազանց մերոց, զէր յառաջ Զարեհի Թագաւորի՝ միոյ ՚ի յաշերդաց Տիգրանայ Ա. և նախորդաց Վահէի՝ զի գլխաւոր չէն գառատիս Զարեհաւան կոչի. ապա նախնիս մեր յիշի և առհասի Զարեհաւանեան՝ ՚ի նմին Զարեհէ Հայկազանէ սկսեալ, և ՚ի վազարշակայ վերապատուական նախարարութեամբ, և կարգեալ ՚ի համանուն տանի. որոյ թէպէտ վիճակ փոքր՝ այլ բարձ ոչ յեռագաս. զի յիշի ՚ի Գահնամակին Սահակայ ՚ի թէ կարգի, և ՚ի Մեսրովբայն (ՁԸ)։ և յեռաբաժանեալ վանք մի էր արտաքոյ քաղաքին՝ յանուն տաճարիս, բան արիւնակի վանորայիցն չինելոց ՚ի մեծամեծ տանուտերացն Հայոց։ Իսկ յարքունական բանակին զօրաթափումն իւր էր 300 այր, որով յայտնի սակաւամասութիւնն, թէպէտ և ոչ ընդ նուազագոյնս. վասն որոյ և գրեմք ոչ յիշի ՚ի պատմութեան գործ ինչ տաճարին, և ոչ մի իշխան կամ նախարար յանուանէ. իսկ էջմիածնոյն Զարեհաւանի որ գառի ընդ վերջինս յերեսանից աթոռընկալ ուստ եպիսկոպոսաց Հայոց, ոչ այսր ասանի է, այլ հասանուն գառատին Պարսկահայոց։ Թուի եւս վաղ ուրեմն նուազեալ ուսումնութեան կամ զօրութեան տաճարին, և երկրին մնասմբ յարքունիս գրաւեալ և յագեալ ՚ի սեփականն Նոցին յԱրտաշատ աշխարհ, և մնասմբ այլոց մերձակաց տաճարաց և նախարարաց վիճակեալ. յորոց բաժինս յիշին և գլխաւոր չէնք Ծոզկոտան, մերձաւորմնիք իսկ գոլով. որպէս, Շահապիվանն՝ Գընունեաց եղեալ կալուած, յորոց զարմէ գոլով մեր Գընունեայ Արշակունւոց՝ սա ժառանգեաց զայն։ – Բայց վաղ իսկ ուրեմն, որպէս ասաղ յառաջ յիշեցաք, վայրկն գեղեցկիք և տափքն ընդարձակք գաւառաւէտք, լրաբերիք և երէսաւոյք՝ ընտրեալ էին ՚ի թագաւորէն և յազգէն Հայոց՝ ՚ի հանգիստուան աշխարհախուզմբ տաճից Ղաւառարդոց, ուր և ընդ Ամենայնոյ կանաչէին, որպէս ասի, և յիշատակք Լրհեղեգին, ՚ի Շահապիվան. զոր հին պատմիչ Խորենոյ կամ Կանոնագիրք՝ կոչէ, «Բանակ-

« եալ Թագաւորացն Հայոց ՚ի ժամանակս Ամենայնա-
« բեր տանին »։ և յառաջ քան զայլս Բուզանդն (Գ. ԺԵ.) « Բան բանակի տեղի Արշակունեացն »։ յանլեայն իմն գնոյն վկայէ և Ղազար, յաներկուսն նոյնպէս տարբացեալոց յատկութենէն. « Զաւ որարեալ ա-
« մենայն բազմութիւնն Հայոց՝ ՚ի տեղիս հովոց, գայլին
« հասանէին ՚ի գառատն որ կոչի Ծղաղկաւան, մերձ ՚ի
« բերդն ամուր՝ զոր Անգղն անառանն. գայն տեղոջ ա-
« րարեալ բանակատեղւս իւրեանց, գագաթին անդ զա-
« տուրս տաճգն »։ Հարկ է քէ բազում և բազմապատիկ էին տեղիք զրաստանաց ՚ի բնակել բարձրատունգակ գառատիս, արժանաւորք Թագաւորի և հասքէն Հայութեան, որ գէթ երեսփոխանաբն գայր գումարէր անդ որպէս յաշխարհախուզմբ Թաւոր. յորոց սակի էր նախ բան Բանակատեղն արքունի. Բերէաս սատ գումարեալ բան օրինի և կարգի գնդիցն, ՚ի չորս Քեւս յարեւելեան, յարեւմտեան, և այլն, և բոլորաձեւ իմն բանակեալ, միով միով դրանն Թաղովք ՚ի չորից կողմանց, զորոց ձեւ և գաւակարգ ընծայեցաք ՚ի Դրուագի Դրան արքունեացն Հայոց։ — Սիւնն կամ Միհրքն արքունի, զոր Բուզանդ յիշէ[2], և Թուի չինուած իմն գրաստանաց կամ հովանոց. — Առպարկգ, զոր նոյն պատմիչ յիշէ անդ ՚ի բանակատեղ Շահապիվանի, և Թուին կրկէզք և խաղղ տեղիք. ընդ որս հարկ է անհրաժեշտ համարել և զսփականեալ և յարդարեալ ինչ տեղիս որոց, կամ գոմս և փակս. որպիսի է յիշեալն ՚ի Բուզանդայ, « մատ ՚ի
« Սիւան արքունի ... և ՚ի սարակ լերինն՝ որում տե-
« ղւոյն Լսնին անուանեալ է, մատ յարմատս արգելոցացն
« որոյն երէոցն, ընդդէմ Մարտասանեին Ագռերացն՝
« Բազմացացն արքունի, յանդիման բանակատեղ բնին »։
Ագռիսի իմն երեւի արդ տեղի ՚ի Պագիրկիան չոյի կո-
չեցեալ հովտի ՚ի հիւսիսոյ Ցխասիենոյ, ընդ մէջ Նորին և Եղնիքք լերին և Ձիրատոյ գաշտին. ամենատատ պատեալ հին պարսպիք ձիգ ժամուչափ երկարութեամբ, իբրեւ քաղաքատեղի մեծ. և զի չէք ՚ի միջի նշոյր չինատծոց, ՚ի գէպ է քէ կամ որսման էր, կամ մի ՚ի յիշեալ ապարիսպաց անտի, որ ոչ միայն ՚ի Շահապիվանեն այլ և ՚ի Զարեհաւանի ասին գոլ։ — Գխաւոր պատճառ տանիցն էր Ագռաւորն, այսինքն տարէգլուխ, նախրեալ յատուկ դիպ՝ վանատուր կոչնցելոյ, որպէս հիւրընկալ և տապնչական բոլորից, որում ձանձին զերաթռչունս տարեցն, որպէս վկայէ Ագաթանգեղոս՝ ապատնասես հանդիսից երկոցուն կրօնից Հայոց, դիւցականին և փոխանակողին գնոյն՝ քրիստոսականին. « յառաջա-
« գոյն կարծեալ անառատացն պատճառանն, ՚ի ժամանակի
« դիցն Ամենայնոյ՝ ամենայնիւ նորոց պաղոց տանից հիւր-
« րընկալ դիցն վանատուր, զոր յառաջագոյն իսկ ՚ի նմին
« տեղւոջ պաշտէին, յատուկ նշանաւորեալ ագ-
« տուր »։ ի Թագաւորութեան հանդիսատեր որդւոց Ար. տաշիսի Բն հասատատեցան կամ մանատանդ եւս յատկան

[1] Ցովհան Ռոթա (Joanne Rotha) գրէլով ՚ի Հռլոզ ՚ի 26 պատասի. Al presente se atrova in uno locho dicto *Aladach* che è de qua de Tauris in 4 jornate, amenissimo et commodo al tempo estivo a ristorar un exercito stracho, si per le aque, si etiam per l'herba abondante et bella; se trova sempre l'estade in dicto locho. – SANUDO MARINO, *Diar*, *VI*. 4

[2] Բուզ. Գ. ԺԵ. Ցայլում օրինակի պատգ գրի տատ բառգ. « ի Ներքոյ Աւոնդն և. ՚ի վերոյ ատպարիսացն »։ ապ գինի յորմ Աւոնդ և գտանեալ Աւոն արձանի։ Հարկ է քէ յատուկ ինչ նշանակութիւն ինչ բառիս՝ զոր անգիտանամ։

տանքս. զի Տիգրան Բ որպէ նորա չինեաց բազին 'ի վերոյ գերեզմանի եղբօր իւրոյ Մաժանայ քրմապետի 'ի Բագաւան (Իշ գիւխէ), « զի 'ի գոհիցն ամենայն ան-
» ցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հարք երկն-
» ային » : որ նշանակէ Վաստատար դից բագին լինել. իսկ որդի նորա « վաղարշ՝ ասեն ազատհաստատ կար-
» գեաց 'ի սկզբան ամի նորոյ 'ի մուտն Կաւատարդի » . յայտ է թէ ըստ անշարժ տումարի Հայկին էր ասե տա-
րեմտիս, որ է ըստ նորոյ տումարիս յամսեան սկզբամ-
սի 'ի 11. որպէս զի կատարեցին միշտ 'ի նմին պայ-
ծառ եղանակի և 'ի բարգաւաճանս բնութեան յայնպի-
սում բարձրագիր, հովասուն և յընդարձակ տափարա-
կի, մինչ տակ ամպրայնոց ուշորէր խումբեր զդալան Այրարատեան և ցամաքեցուցանէր զվտակս ջուրց, իսկ աստանօր անպակաս յորդէին քաղաքաղ սկուռքն Արա-
ծանւոյ: Ցամիկն խառնեալ 'ի տաճս Վաղարշու և Վա-
ժանայ' և զնդրօտ սորին արտախելակն Արտաւազդայ յիշատակ, զցնորեալ գահավիժումն 'ի վիհն Մասեաց, ուր չունք նորին երկու անաւ և ապիտակ' տիւ և գիշեր կրծիցեն զղեթայս նորին, և յայն ինչ հասանել նոցին 'ի նրբաքիւն մազի և մերձել 'ի կտրատմն յեւս ատրուցն, վերստին զոդիլ պնդիլ հաստանալ' 'ի լուր ձայնի կաս-
նահարութեանց և որպիսի և է հնչողական բաղխանց. որպէս առնէին ամիկքն և անտիրհասատք, և մինչեւ 'ի քրիստոնէութեան իսկ յատուրս Թարգմանչաց մերոց, « թագաւք 'ի գարնանայ գհետ երթալով առատկիրն'
» յատուր միաբաթաւջ երից կամ չորից բանեն ըզ-
» ատղն, զի զօրացին, ասեն, չղթայքն Արտաւազդայ »: Ցետինք փախանակ Արտաւազդայ զորդի սմն նորա Շի-
դասր անուն ասեն խնչագործ, և 'ի նա յոգեն գղրոյցն, — փոխանակ այսպիսեաց անտի և գիշատիչ առան-
զութեանց' Լուսաւորիչն մեր Ս. Գրիգոր 'ի բերէն 'ի Կեսարիոյ գնդիսեր Յովհ. Կաթողիկոսն և զԱթանագի-
նես եպիսկոպոսին 'ի Սերաստիոյ, զմասն մի նոցուն եղ առա 'ի Բագաւան, 'ի կենդրան պաշտամանց և հան-
դիսից աշխարհագումար Հայաստանեայց, « զի ժողո-
» վեալ, ասէ ժամանակակից պատմիչն Ագաթանգեղ, 'ի
» յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու և սուրբ վը-
» կային Աստուծոյ Ագաթանգեղի, յայնմ ատեր խմբեա-
» ցեն 'ի Նմին յատանի »[1]:

208. Վաղու իսկ սրբեալ էին մերձակայ սահմանքն և գիւղատունք բնաւից Ականց Արտաւանոյ, բնակութեամբ և նահատակութեամբ Սրբոյ Ոսկեանց, յորոց տեսաք Ոսկիս կոչել տեղւոյն, որ է իբր կիսով մեռեալ կամ տա-
կաւուք 'ի վերոյ մխուրութեան երկրացուն ակնատրե-
բացն, 'ի ծործոր կրծոյ լերինն, զոր հին պատմիչն Յով-
սէփ Փաւստոս Բուզանդ կոչեաց, և քան նմանէ Շմաւկ լեառն անուա-
նեցին, անդ սրսրեալ իբրեանց վանս: Ոսկեան կոչի ցարդ (ըստ առս աշխարհագրաց) վտակ մի յարեւելից վերոյի-
շեալ բարձու Աստատ լերին բղխեալ: Ըստ առնգուա-
ծեան պատմչաց մերոց՝ Ոսկեանքդ՝ ազգաս Ցունք էին, զնապատութեամբ եկեալք 'ի գրանէ կայսերաց՝ յայրար-
հրս մեր, և պատահեալք առաքելոյն Թադէի և քարո-
զութեամբ նորին հաւատացեալք 'ի Քրիստոս, և առաս-
նոր գաղարեալք. ապա յետ ժամանակաց (որ չատ յեր-
կարեալ թուի) երթեալ հաշակեցին զնոյն հաւատս յար-
քունիս Աբգարայ, և համարձակութիւն առեալ' « ան-
» հրաժեշտ դաւանութեամբ քարոզեցին զՔրիստոս 'ի
» գրունս Թագուհւոյն » Ասթիճեան, ըստ հոգեւոր եր-
գոյն. և մերձաւորք անուք սորա յԱշանայ ազգէ, որոց գլխաւորին անուն Բանադրաս՝ յետոյ Սուքիաս կոչե-
ցեալ, հաւանեալ գնացին գհետ նոցա. իսկ սորա առեալ զնոյն գլխաւորն

« Եւ զընկերսըն, մկրտեցին
Ի սուրբ լերինն, յակունս Եփրատին,
Ի ծագկազարդ խառնուրդըս ջրերն ...
Բնակելով Արրոցն 'ի տեղին
Ի ծերպ վիմացըն գագաթէին »[2]:

Ընդ որ խանդացեալ արքայորդեացն՝ վնասն և վրոյ՝ սոխակէին զմկրտազան շրջել զմիտս աշակերտելոցն. և իրրեւ « անպարտելի մնացին 'ի հրապարանաց որդւոց
» Թագաւորին, չարշարեալք վասն Քրիստոսի' արագա-
» պէս խողխողեցան 'ի նոցանէ », մինչեւ ժամանեալ մնալ 'ի խրճիթս իրեանց, մինչ գահանային 'ի ան-
տառենէն Սուքիասանց: Իսկ 'ի լուսաւորութեան ազգիս եկեալ մեծին Գրիգորի, « յիւրաքանչիւր տեղի վկայա-
» քեանց Ոսկեանցն և Սուքիասանցն, չինեալ եկեղեցի
» և կարգեալ կրօնաւորս 'ի պաշտօն. և մինչեւ ցայսօր
» հոգ տեղեացն, ուր հնգան արիւնք նոցա' բժշկութիւն
» լինի ամենայն ցաւոց »: Եւ ինքն իսկ Ս. Գրիգոր առ ժամանակ մի կալաւ անգէն վանս, ըստ վկայութեան Բուզանդայ (Զ. ԺԶ) որ յիշէ զայս « Աճատատ (վանս) ուս-
» տի հաստել բղխեն ակունք կիսիատ գետոյն.. (և զ) ժա-
» կրս վիմացն, ուր յաճախ կայանէր էին Մեծին Գրիգո-
» րի առաջնոյ, որոմ տեղեացն Ոսկիք կոչեն»: Զայս տեղի ընտրեալ յիւր բնիկ մենարան և Ս. Գինդ' աշակերտ Գանիէլի ծերոյ, յատուրս Մեծին Ներսիսի, 'ի վեր քան զայլ մենաստանս, ինքնին հաստատեալ և վերակացու գտեալ նոցին, լցեալ « զամենայն անապատս մենակեցոց
» և զամենայն չինս վանեցոյս... բայց սակայն ինքն առեալ
» վիճակ բնակութեան ունէր զանապատն » (այն): Աղգ աշակերտէր նմա և մանկահասակն Ս. Մուշէ ձեռնասուն

[1] Զոր պարզէս ասեն Յայսմաւուրքս. « Աւուրնեւնայ սմ յամէ
» աշխարհաժողով և Թագաւորական ասն լինել, որ ար մնաս է
» Նահատակի ամոյ, որ է ապրասոյ ԺԱ և ատ (ամիս սասրի)
» Ինչ Եւ զի յայն ար ասն էր 'ի Հայս' 'ի կռապաշտութենան' Ա-
» բանդոյ և Աթոռոյ »:

[2] Ագաթանգել. Գահն Ոսկեանց:— Միւս գահնասոց (Գրիգոր) հաւատացեալն նոյն ամով ասղէ.

« Յանապատ նոցին
Լրացուածս լերինն
Ի խոր ձորուին
Խառնուրդըս ջրերն
Ականց Եփրատին.
Ցոր մկրտեցին
Տասն և ինն ազին
Ընդ Սուքիասին »:

Վկայէլոցդին քան զասատ ասղասոց սմն հրգէ.

« Նկեալ հասեալ մՅսրն Լրացեալ.
Մերձ 'ի յակուն սրն Եփրատայ.
Տեղ վկայելոյ Ս. գերակայ »:

խր։ Ցայնմ են ցայսօր տեղիք վանացն ՚ի մուտս ձորա-
կին և ՚ի ստորոտս ապառաժի լերինն, միացորդք եկեղե-
ցւոյ և խրճից, և այլոց ինչ շինուածոց, և գերեզմանք.
յարեւելակողմն խանարհագոյն կոյ ակաւաշաւր գոբ
կամ ուազան, ուր համարին տեղացիք միանալ զՈ-
կեանոս փոխանակ ասելոյ Ատքիանոս։ ի կարծս ապա-
ւաժին փորելով է եկեղեցեակ մի, յորոյ վերայ ասան-
դեն Ադաքելոյն Թագէոսի կանգնեալ զԱխտակաց խաչ-
վանն օրոյ Գանձասացն յիշէ.

« Ոտք միշրաէին՝
ՉՔրիստոս տեսանէին
ՅԱխտակաց խաչին »։

Թէպէտ և անժանօթ են մեզ այլ ինչ հանգամանք վա-
նացս, և ոչ յիշին ոչ ասաչնորդք և ոչ այլ ինչ դէպք,
բայց երեւի երբեմն կարի նշանաւոր լեալ և միաբանակե-
ցաց տեղի. քանզի յիշի ընդ եպիսկոպոսի և ընդ Մարթ-
նացաց, Սուրբ Ասկի անուանելով. յորս՝ խրատ տայր
ծեր հղնաւորն բնակեալ ՚ի Սուրբ Ցակոբ Մասեաց՝ իշ-
խանի միոյ կրօնաւորիլ բազձացելոյ, երթալ ՚ի միաբա-
նակեացս և կալ ՚ի հնազանդութիւն. ուստի գուշակի իյր
յ՚Ը դարս չէն և բարեկարգ գոլ։ Գանձասացն Ադաքէլ,
զորոյ զուարզ ինչ գրեցաք ՚ի վերոյ, յետ ասկաւարդ ասէ
Դրախտ կոչիլ լերինն, կամ այնր մասին՝ ուր Ոսկեանք
հղնէին.

« Եւ բառաչեա եկեալ եւ հասեալ
Ի սուրբ լերինն՝ որ Դրախտ անուանեալ,
Եւ սուր եղեալ զՈսկեանքն սպանեալ..
Ի ծերպ վիմաց նոքա մեացեալ »։

Գեղեցիկ և ուանահանդէս վայրք Ծագկոտան՝ ագաւե-
ակ և ազնիւգական ևս տեսարան եղեն յաւուրս վա-
անձանն Ադրակոյ Բ՝, որ պարծէր ընդ օրակաս քա-
ղաքիանս իւր ՚ի Կոգովիտ, և լուեալ ՚ի չարաչեաս չըն-
քոզէն եթէ Գնել եղբօրորդի իւր բազմոգոն և օրասցէ
երէս ՚ի Շահապիվանն լերին, յաչագելով գրէր առ նա.
« Տեսցես տեղիս քաղքերս ՚ի լերինդ Ծագկոյ զՊարկա-
« ցիր չրով (որ Քաւի մի ՚ի վտակաց Ագածանոյ). զի ե-
« կեալ մեր բան արժանեսցէ՝ Քաղաքականաց հանգի-
« պեսցուք օրոց... իրրեւ եաեւ, զոր չէր երբէք տե-
« սեալ, զայնպիսի պատրաստութիւն օրոց և բազմու-
« թիւն երէից, խացեալ խորշոմք նախանձու և կա-
« կածանաց, հրամայեաց... ՚ի նոյն օրսին սպանանել
զԳնէլ »։ Եւ գործն եղելական ՚ի նոյն իսկ ՚ի ժամուկան
առաւս Նաւասարդեայ կատարեցաւ, ըստ Բուզանդայ. և
« աշխարհաբնակք մարդկան ժողովեալ էին և քազաւ
« եպիսկոպոսք, ընդ որս և Խադ աթոռակալ Մեծին
« Ներսիսի և Մուրիկ արկաւազապետ իւր, զոր ա-
« ւաքեաց յաշխարհախումբ ժողովն կատարել զաձն,
« և ինքն անդէն մնաց յարքունական բանակին, զի ըզ-
« նոյն հաղորդութիւնն և անդ կատարեսցին. և յայնմ
« գիշերի ցայգապաշտաձն մեծ եղեւ. ՚ի բանակին առ կա-
« Քաղիկոսին »։ Եկաս անդր և Գնէլ յաւուրսն՝ ի-
րով վաշտաւ. և մինդեռ միջամուխ լերինք յարքունական
բանակն, ՚ի պահաւ՝ յորում քահանայք զպատարագն կա-
տարէին, զօրականն և ամիրին ՚ի պէսպէս հանդէսս և
խաղս մասնէին, փոխանակ արքունական և ընտանեկան
հրաւիրանաց՝ ընդ առաջ ելանէին նմա « բազում ապաւա-
« ւորք վաճառաք... բազն Հարեալ ընկենուին յերիվարէ
« անտի զպատանեանն Գնել և ձեռն յետս կապէին զնա,
« և առեալ գնացին ՚ի տեղի կառափելոյն։ Եւ քանզի կին
« նորա (Փառանձեմ) եկեալ էր ընդ նմա ժամուս...
« վաղվաղակի ընթացաւ յեկեղեցւոյ տանդն, ուր պատան
« մարդկան բանակին առ Աստուած կառարէր.. և անդ
« Ղերսէս մեծ եպիսկոպոսապետն... զոյժ արկանէր
« նմա զիւրոյ ազին ապրուպարս կորուսան ելեալ մեծա-
« ձոցն. Ձոյն. վաղ հասիր, ասէ, գնա զամուսինն իմ՝ զոր ա-
« ռանց վնասու և յանցանաց խողխողեն, իսկ նորա խա-
« փանեալ զպատանն՝ ընթանայր ՚ի խորանն արքունի..
« առ Քագաւորն անկանէր... (որ) զամբոյրան զղխամբն
« ածեալ.. զիւր գեմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ
« եղեալ, զի զնորա բանն մի լուիցէ... և չարժել ան-
« զամ ոչ տպէր. (մինչեւ) գոյր արտաքուստ գահճապե-
« տըն Եղազմակ, մատներ ՚ի խորանն արքունի, ակը-
« ատներ պատմել... Ահ գնացի զԳնէլ, տարաչ մինչեւ
« յօրմ Միսին, պատնի և անդէն քաղեցի, (՚ի վերոյի-
« չեալ տարակ Լմին լերինն։)... Պատ... ինքն Քագա-
« ւորն գնացեալ ՚ի լոյիսն Նաւասարդեայ չոյր զնդրօրորդին իւր,
« զոր ինքն նապատ. երթեալ նստեր մատ առ գին, չոյր ին-
« քըն, և տայր հրաման կոծ և ուխտար մեծ գնել զպատանե-
« լով գնաւ։ Իսկ կինն պատանելոյն Փառանձեմն՝ ըզ-
« հանդերձան պատառեալ, զգեաս սրձակեալ, մերկատիս
« ՚ի մէջ աշխարհին կոծէր, ձայն սրձակելով հչէր,
« յորում արտասուաց յաղիզորմ գոհի առ հասարակ
« զամենեսեան լացուցանէր։ (Ցետ այնարիկ) Ադրակոյ
« հանդերձ նախարարօքն ինչուելով ՚ի գաշտ Ագիովտի
« գրին Գնելոյ, Քագեաց յարքունական քաղաքին Զա-
« րիշատ »։

Ցետ բարձման Քագաւորութեան Ադրակունեաց՝ հա-
ւանօրէն ընդ Կոգովտի և Ծագկոտն վիճակեալ էր Բա-
գրատունեաց, և օրպէս տեսաք անդ՝ երկոքին գաւառ-
քըն անբաժանք ընդ միմեանս իշխանութեամբ էին և ՚ի Գ և
՚ի ՃԱ դարս. յետ որոյ ոչ ևս յիշի Ծագկոտն իբրեւ ան-
փոփոխն վիճակ, և ոչ տակաւ չէնքն յիշեցեալք ՅԶ գար-
նա և յայժմուս ՚ի Նորատուս՝ տակաւ տեղիք չէնք և ասերք
ճանաչին ՚ի նմին, վասն անձամբ տեսչութեան, և նուա-
գութեան Հայ բնակութեան[1], մանաւանդ յետ երկիցս
գաղթելոյ սոցին, ՚ի 1829 և ՚ի 1878. միայն գերեզմանքն
մեծ տապանին և վերինն նշանակք երբեմն բնակցաց. իսկ
յընդարձակ արտատվոյսն Ճարակին որդ Հայաբանքը
և Ջիլանքը Ծուրդք հասիք իւրեանց։

209. Աչժմեան գլխաւոր չէն վիճակին է Համամատ
տանն, և տակաւ ՚ի բացեայ ՚ի չինէն՝ անպիտան
քերդն Ցիատին, ՚ի Հարաւոյ Ջարայ-Հրի, այսինքն կցոր-
գութեան չորից վտակաց Ագածանոյ, որք գետ գործեն
՚ի միջոցի կրկին գլխաւոր Ջերմկացն ՚ի պատուհասն Հրա-

[1] Ցանգան (էՀ 184) մեռաւան գեղս միայն գրէ վիճակին Ցիա-
տինոյ և տասն իրրեւ 120 ընդ բնա։ և պատճառ տակաւտարա-
գութեան համարէն գաւառի Պայէզիտոյ, որոյ մասն էր Ցիատին,
գործութիւն, և գաղթատեղն Պարսից յամի 1822։

կազմ Ձորահովիտին, իբրեւ ՝ի 6000՝ (5957) բարձու, ՝ի հարաւոյ դաշտին Ջիրաւոյ, և երիւք կամ չորիւք մղոնաք լերին եղջերաց։ Ըստ նախագրելոցս կարծի ՝ի դէպ գալ հին հանդիսավայրաց Շահապիվանի և մեծի տրապանին, և յամանդ կարծի Զարեհաւանն հին չինագլուխ Ցաղկոտան. բայց ինձ ոչ թւի ոչ միայն և ոչ միւս, այլ Տատեոնս կամ Տատեոնս ասեն՝, զոր Տիրան Ա. Արշակունի տուեալ էր Դրուատպայ Պարսկի մտերմի իւրոյ խնամեցելոյ ընդ նախարարս վաստակականի, հանդերձ ագարակօք. զի ոչ միայն անուն՝ այլ և մերձաւորութիւն մեծի այգւոյն յոր մնացեր Աշոն գետ Գողտասպ Ծովակին՝ (որ և զդդ ընդ նմին տալու նմա), երկայնաւորէ ինձ զկարծիս։ — ի նուաճել Գառնայ զՊայէզիտ՝ յամի 1828, գլուխ ամ բարձին Հայք Տիտրնայ և տիրացան բերդին. քանդի և Քուրդք կողմանցն վտարանձնեալ ՝ի Թուրքաց՝ նուաճեցան կամովին ընդ իշխանութեամբ Գառնայ, որոց որպէս և Հայք զօրավիգն եղեն, առաջնորդութեամբ պատանւոյ Հասան-Աղայի որդւոյ Գասիմ Աղայի գլխաւորի Զիլանլի Քրդաց, հալածելով զԱջոհիւ-բիւրակ պէկ զեղբայր Պէհլիւլ Փաշայի Պայէզիտայ՝ ի գադարել մարտիցն՝ խոյս տալով Հայոց՝ գաղթեցին ՝ի Գառնայ բաժին, որով խափան անչքեցաւ ասեն, յորում յառաջն էին քառասուն կրպակք, և յետ երկեմտից ՝ի գիշերօթիկ անդ Սմիր էրկայ ամերիկացի քարոզչի՝ եգիտ երիս տասն միայն Հայոց և 20 կամ 30 Քրդաց (1831, ապրիլ 15)։ Յետ նորա անդրկացի Հիւպսան Պրէնց ընդ Տիատրին (1838, մեպտ. 12), և ՝ի միւսում ամի փառանդն Դեսիէ, որք ոչ ասելի ինչ գոհն ՝ի նմա. և ոչ վկայեր որ յետ ասաց ինչ ագան ՝ի միւս ՝ի չորից տանց Հայոց (1843), և եգիտ հիւրընկալութիւն ՝ի վերոյիշեալն Ապտիւր-Բիզագ պէկէ. միայն վկայէ զի չինուած բերդին բարւոք էր երբեմն և հզօր պարիսպքն, բաւականք առ ՝ի զդէմ ունել Քրդաց. և այլ ոմն (Մէքինթոշ անգղիացի) գովէ զվայելուչ ձեւ և զգանգակ գրանն։ Բայց միւս նոյ ուղեւոր գերմանացի (Պլաս) յետ նորա եկեալ, համարի ՝ի Տիատին 72 տունս Քրդաց, 2 միայն Հայոց։ — Ի ձմեռանի յանցս կարաւանաց՝ արծաթափոր մի տեղին, վանահովք անցորդաց և գրասուց նոցին՝ զկարեւոր պարէնն. բայց խիթալի են անցք կարաւանաց առանց բազմութեան հրազինաց, առ ամէն հազկաւոր Քրդաց։ — Կանգուն կայ եկեղեցին Հայոց Ս. Աստուածածնի, վայելչակերտ և երկթեղան, այլ յարկն փայտակերտ ծածկեալ։

Զարեհաւան հին չինագլուխ գաւառիս Ցաղկոտան, եթէ չէր Տատեոնս, սակայն մերձ նմին ՝ի դէպ էր լինել և յարեւմտահարսն, ՝ի սահմանակցութեան Բագրեւանդայ, որոյ և յաւուրն քաղաքն ասէ զայն լինել Բազանդ, առ որով ժամանակաւ Թուի Ցաղկոտան չլինել ՝ի համարի առանձնակ գաւառաց. և յիշատակէ զայն յանդարձի գէպս առաջն նորին ՝ի Պարսից՝ ընդ այլ երեւելի քաղաքաւոց աչխարհիս մերոյ, յետ կոչանալ և վտարանդութեան Արշակայ Բ. «Առնուին, ասէ, և » գքաղաքն Բագրեւանդայ Զարեհաւան, և խաղացուցա» Նէին անտի հինգ հազար երդ Հայ և ութ հազար երդ » Հրեայ. և գքաղաքն ՝ի հիմանց ապականէին յատակէին։» Որ յետ սակաւուց ինքնին եկեալ Շապհոյ «յանդր» քաղաքին Զարեհաւանի,... հրաման տայր զամենայն » այր ՝ի չափ հասեալ (՝ի գերեվարեցն) կոխան առնել փը» դոց, և զամենայն կին և զմանուկ հանել ընդ ցից սպա» լից. հազարք հազարաց և բիւրք բիւրոց սպանան... և » զկանայս ազատացն և նախարարացն զփախուցելոցն՝ » հրաման տայր ածել յապարիզն որ էր ՝ի Զարեհաւան » քաղաքի... գործել զանօրէնութիւն»։ Եթէ արգարեւ մինչեւ ՝ի յատակս ապականել էր տեղին՝ չկայր մեզ յոյս և հետացն գնոտի. այլ որպէս յամենայնի՝ և յայսմ բանի առաւելագանց է պատմիչն և սիժգալի, և ոչ անխոր



198. Շապուհ Բ (յամս 310–80).

հաւատալի. զի և յետ ոչ միոյ գարու ժամանակի անցելոյ (յամի 450) յիշի Զարեհաւան իբրեւ գիւղ, ուր միաբանեալքն ընդ վարդանայ յընդդիմութիւն Պարսից և ՝ի հերքումն կրակապաշտութեան, կատարեցին զումանս ՝ի մոգուցն եկելոց ՝ի Պարսից առ ՝ի մարթեցուցանել զՀայս և վտակ կամակից առ այն ցուցանէր զանձն. վասն ա» րոյ և յետոյ, հանդերձ այլովք, և վասն այնր իսկ պարտաւորեցաւ յատենին Ցաղկեբաւ Գիչի Զարեհաւան և յետ երկերիւր ևս ամաց (իբր ՝ի 635), յաւուրս առաջնոց արշաւանաց Ա֊րաբացւոց, որոց գամ մի նեղեալ ՝ի զօրացըն Քաւաց՝ ապաստանեցան այսր, յորմէ երեւի և ամար չինել անգոյն։ — Ի գեղջ ոստ էր Հայրենեաց յելս վիպ Թ գարու Ամբատ առաջնորդն Թոնդրակեաց Զքրաւոյ. յաղագս հայաբաստիանեան հոգւոյն. և վասն այսր բանի՝ նչանակել գիակաց առն և անգի. և յեղյեղ բառին փոխել ՝ի Տ֊ՈՒ։

1 Թաւ թէ ոչ յիչելով զայս անուն՝ աւանդեցին անունք ՝ի միաբանիչ Ս. Յովհաննու. Դիւցազն կոչի աւանին, ՝ի պատճառս թագելոյ անդ զդիակունս Յունաց կառաւելոց ՝ի Հայոց, յետ մարտի Զքրաւոյ. յաղագս հայաբաստիանեան հոգւոյն. և վասն այսր բանի՝ նչանակել գիակաց առն և անգի. և յեղյեղ բառին փոխել ՝ի Տ֊ՈՒ։

ցաց ազանդաւորաց, որպէս վկայեն Աւագիկն և Գր. Մագիստրոս կոփիչ Նոցին, ի կէս ԺԱ դարու։ Ազնաւհետեւ անհետ լինի ի գիրս նախնեաց մերոց անուն Զարեհաւանի. և որպէս կարծի ի դիտաց՝ յաւագ քան ի մերայոցս չկի ի Պաղտմոյ ոչխարհագրէ այն, որ գրեր յաւուրս Թագաւորութեան արքայ Արտաշէսի Բ, ի կէս Բ դարու, և գրի (Ζαρούανα, Zaruana)։ և յայտ է ասել և յատպարիզէն, և ի բազմաթիւնէ Հրէիցն բնակելոց ի նմա, զի քաղաք բարգաւաճ էր վաճառականութեամբ և պյլովք հրահանգօք։

Մերձ ի Զարեհաւան ցուցանեն բանք Վազարշապ Փարպեցոյ լինել և « զբերդն ամուր զոր Ազդն անուանեն։ » (ուր Վարդանանք) զոյն տեղոք արարեալ բանակ։ » եւեթս իբրեանց՝ զազաբէին անդ զաւուրս ոսքիոյն »։ ուր և յետ ապատգրութեան իբրեանց Քոյլ եռաւն ապա նանել զամանս ի մոգուն ի Զարեհաւան, զի մերձ աբեմն էր յԱնգղ- զոր միւս պատմիչ Եղիշէ՝ կոչէ Գիւղա- քաղաք մեծ. և ի բանակելոյ անդ բազմութեան զօրաց՝ յայտ է զի չէր հեռի ի սահմանաց Հօղոյն Հանդիսարա- նաց Աղուանիանաց։ Էր յատիպայ լեռնավայրի և ի կիր- ճոյ լերանց, որպէս վկայէ Պաւստոսիոս [1], Անկոն կոչ- լով զայն, Ἀνγλών, և 120 ասպարէզ հեռի ասէ ի Պարնայ- ըստ Ակրիսոի էր առ Արաժանի գետով [2], որ պատմէ ի ժամանակի պատերազմաց Խոսրովու Աշրուէգի ընդ Բռնաց՝ յամի 605, զգալուստ Ներսեհաւ Խորով զօրա- վարի Պարսից ի կողմանեաս։ « Եւ զօրն Բռնաց գումա- » րեալ Նոտան ի Ջրաշտոտան, մերձ ի գիւղն որ կոչի » Անգղ, ընդ որ անցանէ գետն Արաժանի. և ի միւս » կողմանէ փակեալ զդեղն՝ ածին ամրութիւն չուրջ » զինքեանս։ Եւ զօրագլուխն Նոցա Թէոդոս Խորխոռ- » ունի, և զօրն Պարսից եկեալ բանակեցան մերձ առ- » նոսա ի քիչունց կողմանէ. և Նոքա զօրշուրեալ խո- » սեցան ընդ Նոսա ի խաղաղութիւն, ասացին ոչ ունել » պատերազմ, այլ Քոզալ զբերդն և երթալ խաղաղու- » թեամբ. ապա անմիտանք եղեալ՝ ոչ հաստատեցաւ » բանն, այլ վատահացեալ յամրութիւն իբրեանց՝ կար- » ծէին առնել ինչ։... Եւ եկեալ զօրն Պարսից ճակա- » տեցան մերձ առ նոսա գէմ յանդիման ի գաշտին կող- » մանէ. և ձգեալ բազմութեան զօրու ապեղանուրացն՝ » և թափեցին ի Նոսա զկապարճս իբրեանց. և ծակո- » տէին նետիւք իբրեանց առ հասարակ զամենայն արս և » զերիվարս. և ընդաստուցեալ ամենայն երիվարք որ » կապեալ էին առ մուրս առ իբրաքանչիւր դրան խո- » բանաց, ընթռչեալ առաքուր հարկանէին զիարանն » և զրանեան ամենայն. և ընդմէջն հառեալ զամրա- » քիւնն՝ անկաւ ի բանակն, և սկսաւ սատակել. և ան- » հնարին լինէր կատարածն։ Եւ նոցա հառեալ զտեղի » մի՝ ամանք հեռեւանք և ամանք հետեւանք յանկամոզի? » ձի, երիվն և գնացին փախստական։ Եւ Թէոդոս Խոր- » խառնիի անկեալ ի բերդն ամրանոյր »։ Այսպէս պիտի ի պատման գործն՝ էզ առ զօրավարն Պարսից և առաքեցաւ պատառով առ Խոսրով, յորմէ և մեծապէսցան.

« իսկ ի բերդին Անգղ Նոաւցեալ բերդակալ », մեկ- նեցաւ Սեբէոսեան զօրավար։ — Վաթառն և առեալ ի- մաք յաւագ քան զոյն՝ (542–3) այլ զօրավար Պարսից հրամանատար ի Հայս առաքեալ յԱծուշէտանն Խոս- րովոյ արքայէ՝ նոյնպէս յաղթութիւն մեծ գործեաց ի վերոյ ցուցեալ, զօրավարաց կոչեալ Յաւոխինեանս, ո- րոց գլխաւորք էին վայրերիանաւ զօրագլուխն Հայոց, Մուսինի՝ ազարապետ Արեւելից, և այլք, ընդ որս և կամսարականքն քաջք Ներսէս և Սահակ, Հայկական և Հերուլացի գնդաց, միաշանաւ երիք բիւր զօրաց. ընդ- գէմ որոց՝ զօրավարին Պարսից որ կոչէր Նապետ (կամ Նամապետ) չորս հազար ոչ միայն էին. վասն որոյ քաջ ամրացոյց զբերդն Անգղ, և կոչնագոչ միմոյն և կռճեղրգ ծառոց անմատոյց գործեաց զսահմանն, եգեալ եւս ի գարանի ի տաճա տանին՝ զնան մի ի զօրացն, և ի ձեռն լրտեաւ (զոր խաբէութեամբ արկ ի ձեռս Քառնոց) համրաւեալով խոյս տալ ի բերդէն. յոր իրրեւ մատեան Քոյնք անպատրաստք՝ գարանակալքն սկսան սեղալ ի նոսա նետս. հասին և այլ գունդքն. ի խուճապել Քառնոց՝ քաշն Ներսէս յաւագ մատուցեալ վանեաց զնոսին. այլ ի գումարել բանդագ զօրուն Պարսից՝ տագնապէին Քոյնք յանձուկս լերանցն, և բազմութիւնն միասէր քան օգտէր ինքեանց. բայց մեծագոյն միաս եղեւ կարեվէր խոցումն Ներսեհի՝ ընդ բիր սկանն. զոր եղեալ իր Սա- հակ եհան ի սազմէն, այլ ոչ բաւեալ ընդ երկար՝ մե- ռաւ. այսն ընդեր և երեւելի, որպէս ասէ պատմիչն Խո- զանացի (Ղազար)[3]. որպ և յաւագն բազում գործս ա- բութեան կատարեալ էր յայլեւայլ պատերազմանս Ի- սալիոյ. ընդ նմա անկան և շատք քան զսակաւս ի Հե- բրայց, և սմենայն բանակն Քառնոց ի փախուստ գար- ձաւ, ոչ փոքր կատարած։ Ի փախուստն անդ սպանաւ և Աղտ սմն զօրավար յանցանելն սաղնեակ բերդի միոյ՝ քարամբ հարեալ։

210. Հաչակաւորն քան զԱնգղ ի հնումն Շահապի- վանն, բազում անգամ յիշեալ և առ ի մէնջ, ըստ նկա- բագրի նախնեաց՝ եթէ ոչ զառաջին՝ զերկրորդական տեղի ունէր ի չէնս Ջաղկոտան (յետ Զարեհաւանի), և ոչ հեռի ի Տիտաւնոյ Թուխ. ասկոյն բան Մեսրոպայ երիցս որ ի Գաւառի գաւառի առ զոյն, ըստ յոյժվից ձեռագրաց, և ըստ իս պիտի ընթեռնուլ Գաւառի, (որ է գաւառ վաղապետականի և կոչ ի կաս լերանց անդրը- պետաց Հաւոխին Արաժանոյ և պարատափին Վանայ), Թուեցուցանէ ի սմին սահմանի լինել զաւանն, և ըն- դարձակ տափարակի լերանցն հաղորդս գալ երկոցուն գաւառաց, վասն որոյ մերթ ի միոյ և մերթ ի միւսոյ ա- նուան կոչին։ Որ գիարդ և է, այն էր գլխաւոր գրասաւե- զի և հանդիսարան հայկական պերճանաց և ուրախու- թեանց, պէսպէս ասելիքն զոր ի վերդ յիշեցաք, հան- գերձ տեղական պատահարօք գաւանաց գնելոյ. որոց սպանչաց մտքինք, ըստ վարդանայ պատմչի, յետ իրր ութհարիւր ամաց յոյանեցան ի կէս ԺԲ դարու, ան- փառք և արիւնազանգք, որպէս թէ յանիծից Ս. Ղեր-

1 Ի Պատմութեան Պաւստոսիոյ Պարսից. Բ. ԽԵ։

2 Յետ որք (չէ՛ 512) հին Թարգմանչի Մերոյ տղկցի քան զա- սաս կոչել զԱնգղ։

3 Ἀνὴρ ἀγαθὸς ἐν τῷ πόνῳ τότῳ γενόμενος.

սիսի. Թէպէտեւ ըստ հին պատմչաց՝ գլխաւոր գաւառաձեռն Ցիրիր և վարդան այլոց սպանան։ — Ա. Ջըրդասաւ՝ ի սկիզբն Դ դարու՝ ի լուսաւորութեան ազգիս, ընդ առաջ նախաբարս և պատուհասեալ թագաւորութեան Հայոց կարգի և Շահասին Շահապիվանի, ըստ Ագաթանգեղոսի, որ այսու իշխանական պատուանուամբ յիշէ այլոց միայն զիշխանն Հերի և Ջարաւանդ գաւառի, և Թուի նշանակել գկողմնակալ՝ սահմին կարգաւ քան զնախարար. այլ զինչ առանձինն պաշտօն էր Շահապին՝ ոչ գիտեմ. կամ թէ էր ինչ համանշանակ մերձաւոր հաւասին բնիկ Պարսից աշխարհի (Ֆարս) Շապհվան شعبان կոչեցեալ, զոր բազում անգամ տեղեաց և աշխարհագիրք Պարսից և Արաբաց գրաւանն, և համարին մի՝ ի չորից կամ հնգից դրախտանման տեղեացն երկրի, (այսպէս առելով կոչեցեալ յանուն Պեվանայ կամ Բևանայ Թագաւորացն Սկնոյ)։ Ներկրայապէս՝ ի ճահ գոյ այսպիսի վայելչութիւն և մերոյ Շահապիվանի, զոր նախ բնիկք մեր Թագաւորք և նախահարք՝ այնպէս ծաւալեալ ընտրեցին և ապա առաւ աշխարհս կալչն և վայրագասուն Թաթարք անգամ. — Ցնոտ բարձման Արշակունեաց մերոյ Թագաւորութեան՝ այլազգ իմն համախմբութեամբ հանդիսացաւ Շահապիվան, յամի 446, ի նոյն իսկ « ի ժամ Ամենաբարեր ասենին (Դասաւորացդ, յորում) գոյին ժողովէին ի հրամանէ » միաբանութեան՝ յեգեալ կէսն ի Շահապիվանի ի » բանակեղոց Թագաւորացն Հայոց ... եպիսկոպոսք քա- » հանայք և երիցունք բազումք ... և համարէն ուխտ » աւուրբ եկեղեցւոյ, և իշխանք ամենայն, գաւառա- » պետք, պետք և բանաւորք, զօրագլուխք, ազատք, կու- » սակաւք կաղմանց կողմանց աշխարհիս Հայոց, նահա- » պարք ամենայն », որոց գլխաւորք Վասակ Մարզպան, Վահէ Վարդան Մամիկոնեան, Վահան Ամատունի Հազարապետ, Վրվայր կամ Վրիւ Խորխոռունի՝ Թագազապետ, Աղշաւիր Կամսարական և Մանաեհիր Ռշտունի սպարապետ, Ջնկ Դիմոքսեան. իսկ գլուխք եպիսկոպոսական դասուն, յետ Ս. Ցովսեփոյ ընտրեալ կաթողիկոսի, նախ Ղեւոնդ[1], ապա, Տաճատ, Արտակ, Գադ, Եփրեմ. գլխաւորք երիցանց, Ս. Ղեւոնդ, Ցովհաննէս (Մանդակունի), Մելիտէ, Երեմիա, Եղիշէ, Ասպուրակէս և Գանիէլ. և ամենայն թագաւորութեանն միաբանեալ եդին հաստատեցին զզօրութեամբ կանոնս քան՝ յուղղութիւն եկեղեցական և աշխարհական կարգաց. « և ընթերցեալ առաջի ամենեցուն (իշխանաց), » հաճէին հաւանութեամբ, ասելով միաբան զօրացն և » զօրագլխացն և իշխանացն, Այո, այո, կարգ և օրէնք » այդ կացցեն, ինչ որ վասն մեր օգտի ի փրկութիւն » հոգւոց և մարմնոց մերոց, ի շինութիւն եկեղեցւոյ և » ամէն փրկութեան մերոյ ի կեանս յաւիտենից »։

Մերձ էր ի Շահապիվան Աւաւիւտից գիւղ, ուր գազարեաց գնել ի գնացն առ Արշակ, և յաւուրսն յանդիման եղեւ նմա։ — Ոչ հեռի կարծեմ ի վայրացս և գկոստանաք գիւղ, ուր յետս կոչ ժ գարու (իբրեւ ժամի 984) Մահան Ամիրայ Աղրպատականի և ամենայն գլխաւոր ամիրայք Տաճկաց և Պարսկաց գումարեցան բազում զօրաք. « և առաքեն դեսպանս պատգամաւ » առ Դաւիթ կիւրապաղատն, դարձուցանել ի նոսա » զքաղաքն (Մանազկերտ), ապա թէ ոչ պատերազմաւ » պատահեսցին նմա »։ Այլ ի գալ ժողովել և Հայոց առաջնորդութեամբ Դաւթի ի Բագրեւանդ, զարհուրեալ այլազգեացն՝ ապականեցին գչէնս ինչ հրով և կըրկնեալ գնացին յերկիր իւրեանց.

Զարդիս ոչ ի վիճակագրութիւնս և ոչ ի հանապարհագրութիւնս նշանակին անուանք սակաւ գիւղօրայից Տագկաստան, այլ յարխարհացոյց քարտս, ընդ մէջ բան Տագկաց յերին և Ջիաթնոյ, ի հարաւոյ ընդ հիւսիս խազալով ըստ հասանաց գետոյն, այսոքիկ. Ալաւգաստ?, Այուքլնս (Մեծ գիւղ), Կերան-քլնս, Ճանգիս, Գաչքլնէն (Քարկատար), Ցառար կամ Ցառոտ, Ալաքլնս (Կղզիագիւղ) իբր կիսով փարսախաս ի հարաւոյ Ցիսմինոյ- ի Մ-Հս. մերձ ի վանս Բագրեւանդայ Ճուձան։ Ցառոտի գետոյն որ իբր փարսախաս ի Հր-կոյ Ցիսմինոյ՝ կարծի հինն Աղդ՝ զոր վերագոյնդ յիշեցաք, ունելով սակաւուք ի բացեայ ի յերին ընդ հին, որպ պրիսպք երկաւուք խոնարհեալ ինձանէն ըստ հակման լերինն։ — Կայ և այլ բերդ ի Հս. Մ-սորին՝ Թոխլուճա անուանեալ, որպէս և ամայի գիւղն առ նովաս։ — Կայ միւս եւս այլ բերդ ի նոյն սահմանս, Մայա՝ հանուանն քրդարնակ գիւղիս, ընդ մէջ Ցառոտոյ և Ճուճանոյ. բերդն սակաւուք հեռի է ի յինէն, յափսխոյ և յանմատոյց քարաժեռի, յոր և սահմանք ելից հասեալ են ի վիմին, որպէս և ջրամբար ի վերոյ. և սոի ընդարձակ լինել տեղւոյն այլ և այլ ոմարանոք կամ անձնիկք. առ որովք են արտաքոյ և քարայրք բնականք և ձեռագործք բարձր գրամբք, առնդգոք ելանելիք, զորս և բնակարանս ճգնաւորաց կոչեն լինել. և մատուռնք նոյնպէս վիմափորք, հանգերձ արձանագրութեամբք։ Ի բերդի և յաւերակս անդ նորին սահն գտեալ և գտանել ոչ սակաւ դրամոց և այլոց հնութեանց.

Իսկ Ճուճան որ իբր ժամաւ հեռի ի Հր-կոյ Մ-Ցովհաննու վանայ Բագրեւանդայ՝ ընդարձակ գիւղ է բըրդամբք և պարտիզք, և յառաջ քան զմեծ գաղթականն ասի 500 տանց Հայոց բնակել անդ, զորոց թերեւս առանգամանի և առելի նուազ՝ մանաւանդ յետ վերջին ազէտսալի անցից (1877–8). շորք եկեղեցիք էին ի նմին, մին Ս. Աստուածածնին կոչեցեալ հին և մեծ, և կիսաւեր, ձեւով նման Ս. Ցովհաննու, և ունէր գմրէք ի վերոյ շորից սեանց, երկգումբք աւանդաւորմամբ ասաի և անսի խարանին։ Ներագոյն քան զսա են միւս եկեղեցիքն։ — Կիսով մղձաւ ի բացեայ կոյ ի բարձու վանք քարաշէն, այլ աւերակ և լքեալ, որպէս և սգուգոյ շրոյ նորին զոր ի բարձանց սեէնին փողրակաք։ Ընդարձակութիւն սեզոյն, պարիսպքն և եկեղեցիք և մերձաւորութիւն ի Բագրեւանդ՝ սան ինձ զսա կարծել Զարեհաւան, զոր վերագոյնդ խնդրէաք։

1 Օտարազգի խմն է անուանդ ի լուր մեր, եթէ չիցէ Ղազար. այլ թերեւս նոյն անուն է որ ի վերջին գարս լսի՝ յաւէտ առ Աբծրունիս. Աւետ եւ Աւետիկ. թայց թէ լսկ փաղաքշական ձայն է եթէ նշանական, ոչ գիտեմ։

Ցելից ձաճանայ և մեծի վանայ Ս. Յակոբեանց՝ ձգեալ տաղաւոտի Ջիրաւ գաշտ մինչեւ մերձ ի սահմանս Տմաորինոյ, ընդ հիւսիսի, որպէս և յառաջ նշանակեցաք, հաշակեալ վասն մեծի ճակատամարտին, զոր Հայք՝ յետ գերութեան Արշակայ Բ՝ ի զաւթին Պապայ՝ ի դրանէ կայսեր, ոգեւորեցեալք Ցունաց մղեցին ընդ Պարսս, որոց առաջնորդէր վաչուէր ուրացող Մերուժան, անց ցեալ ընդ սահմանս Եղկերց լերին, այսր՝ ի Կոգովտէ հզօր բանակաւ, ի բազում ազգաց և ցեղից նուաճելոց ընդ իշխանութեամբ Սասանեանց, ընդ որս և Ոստանայր արքայ Ազուանից և Շերգիր արքայ Լեկաց. իսկ մերոյ կողմանն առաջնորդք էին ի Ցունաց՝ Տիրենոյ և Ազգի կոմսք, Գորգենոս՝ հետեւակազօրաց վարիչ, և ի Հայոց՝ Պապ թագաւոր, Մուշեղ Մամիկոնեան, Սմբատ Աղբակեան բագրատունի, Սպանդարատ կամսարական, և բազումք ի նախարարաց. և բնաւից վիճագոյն՝ Մանճն Ներսէս, մանաւանդ ի գլուխ Նպաստական լերինն առաջնորդէր բազիւք հաւանաւորեալ և զյաղթութիւնն բառնագտեալ, « մինչեւ պատեցաւ երկրորդն Ամազէկ », ըստ իմաստասիրութեան Խորենացւոյ. որ զի և գեղեցիկ ոճով և ախտաժիր նկարագրէ զպատերազմն և յերկար, ըստ աշ սովորութեան իւրում, հանդ հանդիպմ ընթերցանութեամբ բանից նորին՝ ինքել զանզգրուքիւն ցաղկասան։ « Խնդեցաւ պատերազմն ի դաշտին՝ որ կոչի Ձիրաւ, և մատեան հակառակ առ հակառակս։ Եւ մանկունքն քաջ նախարարացն Հայոց ինքնակամ նահատակեալք՝ մնին ի մէջ հակառակաց, առաջնորդութեամբ պատերազմաւորին իւրեանց Ամրատայ տպատի, որպէս բագրատունոյ, որ յազգէն Բագրատունեաց։ Եւ լին և ի զօրացն Պարսից հանդիպք նոցա, և խաչացին ի մէջ հակառակաց. և ցիր ընդ ցիր լինէր։ Եւ ի գառնացեալ մանկունքն Պարսից՝ ընդ հուպ գտանէալ մերոցն զնա նոցա, արիւնակ իմն որպէս փոթորիկ յանդառնալ սերեւութիւն, այնպէս երագ յերիվարացն առնել նիզակաց, զի ցուրա յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա յիւրեանց հակառակ մնանել։ Իսկ յորժամ Պարսիկքն զմերն չրջէին, նոքա ի վանահարսին Ցունաց իբր յամուր փղոյք մնանէին՝ առ ոչ ինչ ճշտասելոյ։ Քանզի այնպէս արար Գորգենոս իշխան հետեւակ զօրացն, իբր պատուաստ պատեալ վահանաք զնակատ Պապայ։

Քանզի զօրքն Ցունաց վառեալ էին ի գէնս ահագին և արծաթոյ, և երիվարք նոցա նոյնպէս զարդու։ Եւ էր տեսանել իբրեւ զպարիսպ ինչ, յորոյ յոլովք ի ըզ-

» զնայ և ի կուսեայ պահպանակաց զգեստուն՝ գիւտ
» բանիեան վիճաց բերէին երեւոյթս։ և ի վերայ նոցա
» անթափառ գէպք նշանք արձակելոյք իբր զառագաթ ինչ
» հանդարտ ծառոյ։ Բայց զվիշապացն մանուած ահա-
» գին բերանաթոյթեամբ ատելագնալ ի փշանել օ-
» դոյն, ոչ ինչ ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ միայն
» իրրեւ զլեառն ինչ ոգեմանդեալ խանարհել ի ծով՝
» զրահազարդ հակառակ Ցունաց ի պարսկական զօրաց։
» Քանզի և զնաա էր տեսանել իրրեւ զհզօր ինչ գետ
» առ ի կոզմն ի լոյն ծագելոյ. արգարեւ զլոյս զոյն
» զրահազգեստացն բերէր տեսութիւն։

» Այլ իրրեւ տեսաւ մեծն Ներսէս զոյն ամենայն, եւ
» նա ի կատար լերինն Կոգովտայ, և ամբարձ զձեռս իւր
» յերկինս, անթանարհելի պահելով ի խնդրուածս, հան-
» գոյն նախանարգարեին Մովսէսի, մինչեւ պատեցաւ
» երկրորդն Ամազէկ։

» Իսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն,
» ի պղնձապատ վահանացն նշոյլք գլերամրքն փայլա-
» տակէին իրրեւ յանկոյս մեծէ, և ի նոցանէ ի գուբս
» ասղէին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որ-
» պէս փայլատականց հառագայթք. յորոց միոյն ի տե-
» սութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ
» ինչ ի մերն վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգա-
» կանն ծագման։ Իսկ ի բախելն զմիմեանս՝ եղեւ ի
» վերայ հանդիպ ամպոյ, և հոգի աստիկ ի մերոցն կա-
» ռ ընդդէմ պարսկականին փչել։ Եւ ի խառնակել
» մարթին՝ պատահէ կամաքարականն Սպանդարատ խմբի
» մեծի, յորում էր քաջն Շերգիր Ազկաց արքայ, զգլուխ
» միոյ գնդին պեղութեամբ զտեղի հակառակն կալեալ,
» Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն,
» որպէս չանթահաս յերկիր կործանէր զքաջն, և զխումբ
» բըն պատառեալ՝ ի փախուստ դարձուցանէր։ Եւ այս-
» պէս ի վերին պղնձակապութենէն զօրացեալ հառաչակ
» զօրքն Ցունաց և Հայոց, գիտակաւքը Քաջամեաց լցին
» զդաշտն ամենայն, և զմեացորդսն ամենայն ի փա-
» խուստ շրջեալ հալածեցին։ Ընդ որս և զԱւանայր Ա-
» զուանից արքայ, խոցոտեալ ի Մուշեղայ արքայ Վա-
» ակայ մամիկոնենի, հանին ի պատերազմէն։

» Բայց ամբարշտին Մերուժանայ վիրաւորեալ ձին,
» ոչ կարաց երագել ընդ փախուստեան. որում անագան-
» բեալ հասանէ պարսկական Հայոց Սմբատ ... ձերբա-
» կալ առնէ զմեծապետն յետին Շամքին Կոգովտի ».
և առաջիկ չամբրաւ պատկէ ի մահ գառնութեան, որ-
պէս նշանակեցաւ այլուր յառաջագոյն (յէջ 494)։

1 Թէ և ոչ սակաւ տարբեր ի Խուզաձոյ մեքենասանակէ, որ յերկուս ժամանակս և գէպս զոտանէ զմիակ պատմելն ի

խոբենացւոյ. իսկ սա և բազում մեծ գէպս յէջէ. որք ոչ գտանին սա Խուզաձոյ, և սուտզագոյն թուի յոյսմ մեծին պատմութեան

ԻԱ.

ԲԱԳՐԵՒԱՆԴ-ԱԼԱՇԿԵՐՏ



ԱԳՐԵՒԱՆԴ վերջին գաւառ Այրարատ աշխարհի և մի յերկուց եփրատականաց ցրն, ընդարձակագոյն իջէ Թերեւս քան զբնաւս, սահմանել յարեւելից յարեւմուտս ընդ մէջ գաւառաց՝ Մագհատան՝ որ յելից կուսէ, Ճակառոց, Գաբեղենից, Հանունեանց և Բասենոյ՝ որք ի հիւսիսոյ. իսկ ի հարաւոյ ունելով զգաւառս Տարաբերան աշխարհի՝ զՏարաժառոյի, զԴաւղա և զպլղս, յորս խազացուցանէ զԱրածանի միահեծեալ ի բազում վտակաց և գետակաց իւրոց, ընծայելոց ԱՅրարատեան կամ Այգրի լերանց՝ յարեւելից հիւսիսոյ ընդ արեւմուտս կոյս մանեկամբ պարապեալ պատկոյց գնաւս. որք ձգին ի Սիւնեաց լերանց որ ի Մ. Գողչատաղ Ծաղան, ընդ լերինս Գղղզ-գիւղի, Ագ պուղաղ, Գաշտեղրդ, Գող տաղ, Քեօսէ տաղ (Սուկաւէտ), զլերինս խաչի եզափ և Շէխանաղ, որ համնանան վիհակաւն առհասն հատանէ յարեւմտից կուսէ և խառնի ընդ այլ լերինս, զհարաւային եզերս մեծի գաշտանդ. հավասին ձնելով զլերինս Ծաղկեղ, և զոր անուանք և հանգամանք չեն մեզ քաջածանօթ. բայց զի հեռագոյն լեալ ի միջնակաղմանս հարաւոյնոց գծի առհասնացս, անդի ասի խառնելոցն հատանել Արածանւոյ՝ թափիլ ի Տարօնագերան, և արբուցանել հանգերձ զլերկիր Տարանոյ՝ — Ամենայն վտակք և քամիք Այրարատեան լերանց ի հիւսիսոյ կողմանց կամ առաջի Արածանւոյ, որք յարեւելից և յարեւմտից առաջնոյ ժողովին զնաին. արեւելեանն ինքն իսկ Արածանի է կամ Մուրատ առ, զոր տեղիք բղխեալ և հեկեալ ի Ծաղկառատէ. արեւմտեանն ի Շէխանի լերանց գայ և յայն անուն կոչի. և երկոքին եւս գրեթէ հաւասարք երկարութեամբ և ուղղութեամբ դիմեալ՝ հանդիպին և խառնին ի միջակաղման գաւառիս, առ Տարմուս կամ Տարագերան? գիւղիս, իբր երկու փարախաւ ի Հա. Թամուր բերդաւանին՝ — Օժանդակք բնիկն Արածանւոյ կամ արեւելեան առաջիցն՝ են՝ ըստ նշանակելոցն յաշխարհագրողացս, ի կողմանց Տիտաւնոյ խազալով յարեւմուտս, անդր քան զՍ. Յովհաննէս, Դաշղ-չայ, Մանկասար, Աիւդ՝ որ առաջս կոչի Զէդի և խառնի ի Տառապի, որպէս և Թորնա ի նոյնի թափեալ, ապա միասնան ընդ Մանկասարայ և իջանեն ԱՅրածանի մէրձ ի կցուածս Շէխանայ գետոյն. իսկ առաջ օժանդակք են, յարեւելից՝ ի գետակցութենէն՝ ընդ արեւմտս յազբերս կոյս նորա երթալով, Ալմէտ չայ, Տիւռէ-Մագուտա, Խաչու չայ, Զանչանու?, Խոփաս, Ղազի, Զէյտիլեան որ ի սկզբան կոչի Ջամ. Այսոքիկ են որ արբուցանեն զգեղեցիկ գաշտն կամ զհալիս Բագրեւանդայ հարթաժուռալ երկայնանիստ ընդ մէջ երկաբ լերանցն որ ի Հա. և ի Հր. — Ցետ միութեան երկուցն առաջիցն և իջից Արածանւոյ ի Թամուր, ընդունի ի միհակի առ յաղեկէն՝ որ է յարեւելից՝ գետոյն Ուզունվալի, Մանատպէդ. իսկ յաղիէն՝ յարեւմտից՝ նուազագոյն ածանս վտակս.

Ցոլովութիւն գետակաց յայտ առնէ և զհակառակութիւն բնութեան երկրի հիւսիսակողմանն, որ ի բարձանց անտի Այրարատեան պարան՝ յօրասցսեալ խանարհի գաշտանդայ ի միջակաղմն գաւառին, գեղեցիկ արտասխրս գործելով, յայտ է թէ և նոյնպիսի բնաւարերութիւն ապետան կամ առաջպետան. և լեռնակս յոլով և պէսպէս ունելով, որք ի քննութենէ և ի գիտութենէ մերմէ վրէպ գտանին, կամ թէ մեք ի նոցունս. այլ հատատ զկարծիս մեր հարեւանցի ակնարկութիւն վաւերի բնագիտի, որ ի վերջ կոյս ամենան յուխիսի (1843 ամի) էանց ընդ գաշտս Բագրեւանդայ, և ի առհասնս Գաբա-

գիլխէի եգիտ նոր տեսակ մի միջատ յազդէ Saperda և Juladis կոչեցելոց։ — Հեղինակ Նոր Հայաստանի (Հ. Ինճիճեան) յիշէ զկավրիճիր երկայնանիստ լեռան յաբեւելակողմն գտանել, որպէս Թուի՝ ի Հա. Գարապլիլեի, ըստ բնութեանն որձաքար նշանակելով՝ ի լեզու Քրդաց, կարկառեալ գագաթամբ ընդ արեւելս, կարմրերանգ գունով. յորում նշմարին, ասէ, և երակք նիւթոց ոսկւոյ և արծաթոյ, անգործ թողեալք. բայց միայն՝ ի հողոյ անտի չինեն անօթս։ — Ի Բժշկարանս մեր յիշի բագրեւանդայ Հող, և համանիշ նմին կարգի յանուանեն Բորեն, որ և Թուի կոչեցեալն՝ ի Փռանկաց Bore, սկզբնատարր բարակային նիւթոց. այլ քննութեան կարօտ։ — Ընդ միջ լերինս և սահմանայ կազմուանայ՝ տարածանի լեռնադաշտն Մրկէզար, որ Թարգմանի՝ ի լեզու Քրդաց՝ Դեղին Մարգ, ըստ գունոյ բուսաբերութեան սրտիցն, և համարի փոքրիկ առանձնակ վիճակ մի Քրդաց։

Քանզի առ կարի ընդարձակութեան դաշտագաւառս, (որ յարեւելից յարեւմուտս ընդ բովանդակ հովիտ երկոցուն Թեւոց Ալաճանոյ ձգի ընդ մղոնս աթսուն, աւելի կամ պակաս, և միջին լայնութեամբ իրրեւ 30, տարածութիւնն աւելի քան զ'700 մղոն), հարկ է Թէ և՝ ի սկզբանց անտի արուհալ էր յարբոյն վիճակս, ընդ միահաւուռս անուամբ Վալաշկերտ գաւառի, յորում պարագրիւր և Ջիւտին իսկ, որպէս տեսաք, ըստ նախնեաց՝ առանձին գաւառ Ծազկոտն, այլ Թուի Թէ՝ ի քաջ հնութեան անանձնացա՝ ի բագրեւանդայ։ Այժմեան վիճակքն են բուն Վալաշկերտ և Թօփրագգալէ (Հազարերդ ըստ նիւթոյ չինուածոյն), և կայ յարեւմտից գաւառին՝ ի Հա. գեաղն. յելից նորա է վերոյիշեալ գեհն Մրկէզար, և յելից սորա ցաւհմանս Ծաղկոտան ձգի մեծ վիճակն Կանիէ, որ և յանուն գլխաւոր աւանին կոչի Գասրագիլիսէ։ Հարաւակողմն սորին և գեաղն է Խամուր վիճակ, յորոյ յարեւմտից հարաւախառն Ալճապ կամ Էնճապ վիճակ սակաւածանօթ, և՝ ի մտից սորա՝ ի սոսրաս Շեռխան լերանց՝ Խալի-նազի, բարձրաւանդակ երկիր պարարտաբոյս. ուր ոչ միայն տաւարածք յաճախեն, այլ և ազատաւան ամենք վայրի և այծեմանք. և Թերեւս՝ ի սոցին սակս մերձաւոր լեռանն Սուկաւ՝ կոչիւր Քօյից լեռան նախ քան զտանգաթիւն այնպիսի կոչման՝ ի պատճառս Մոքիսանց հզնաւորաց քաշնման Թաւանողից։ Իջեն Թերեւս այլ եւս մանր գետք յընդարձակութեան Բագրեւանդայ, բայց ոչ նոքին միայն՝ այլ և յիշեցեալքս չեն մեզ քաջածանօթք ի՛ւ ըստ սահմանաց անշրջաւութեան եւ ըստ գիւղօրայից։ Զի Քրդաց կալեալ է զմեծ մասն երկրին բազմաշէն հարուստ և հարանոք իւրեանց, և անդադարացուցեալ զանաւանս չինից լեռնաստանցն. սակաւուց ասմանց՝ ի միջավայրս գաշտագետնին ծանօթ գոլով, միոյ անկ էր գէթ իրրեւ երից հարիւրից և աւելի եւս գիւղօրայից լինել անգ. քանզի և հինգ հարիւր գեօղք համարէին երբեմն՝ ի գաւառին Ալաշկերտաւ. յորում՝ ի գան յիշեցեալ վիճակաց՝ գրիւր և Բադնոց, որ Ագաշանենաց գաւառի Տարօնագեղանի՝ ի հակ գաց, և չէ ինչ մեծ և գեղաշէնս. մասն գոլով Աբարաւոյ և՝ ի կառն ասաւանիկ նահանգին, հարկ իսկ էր Բագրեւանդայ բազմամարգ և բազմաչէն գալ։ Նոր վիճակագրութիւն ըստ Թուոյ (1889) համարի գեղս՝ ՝ի Նահիճ կամ Գարապլիսէ 58, յԱլաշկերտ (փոքր վիճակքն) 115, յԱղթամայ 79. յորս միանգամայն ասուն 5,266, ազիս 23,200[1]։ — Ալյազդ բաժանմամբ կամ կշռմամբ նշանակէ ամն՝ ի մերազգեաց[2], յերթս վիճակս գաւառիս Բագրեւանդայ՝ զհայաբնակ գիւղս և զքիւ տանց նոցին, ըստ երկուց ժամանակաց, մի՝ ի սկիզբն յետին Թուս-Օսմանեան մարտին, և միւս յետ այնր, այսպէս.

Գեօղք	Ա՛ 1877 Տուն		Ա՛ 1882 Տուն	
Իչ գիլիսէ	31		9	
Գուլիուպուճագ	27		1	
Գարաբազար	30		10	
Ջուջան (Ճուճան)	35		20	
Բօսի կամ Պոդի	13			
Մէյրէմ-անա	18		9	
Բադնոց	25		25	
Գզըլ գայա	22		22	
		201		96
Գարագիլիսէ	102		81	
Երանոս	18		11	
Մանկասար	52		27	
Ծօնճալու	55		47	
Քիւփգրան	34		12	
Ջիրոյ	20		10	
Ղազու գիւղ	21		18	
Սօֆիան	5		3	
Մազրայ	15		19	
Խոզր	20		15	
Երիցու գիւղ	43		32	
		385		275
Թօփրագ գալէ	151		123	
Ջէսկան	66		30	
Խաստուր	91		76	
Եաննի Թէփէ	63		63	
Խոշան	13		7	
Ջլվաննի	38		31	
Գարաաու	11		11	
Մօլլա Միւլէյման	83		82	
Եամար	98		67	
Ղայաբէգ	25		16	
Ֆրանկ Երիցու գիւղ	34		20	
Հաճի Սաֆար	13		2	
Խաչու	72		63	
Եաշխալի	14		9	
Ֆէրան	4		1	
		776		601
	1362		972	

1 Ըստ այսմ վիճակագրութեան (Աւշկերթայ, Գարագիլիսէի և Էնճապոյ) երկրի 6000 քառակուսի վերստ է տարածութեան։

2 Առաւել տարբեր խոչտութեան, հրատարակեալ յԱմստերդամ տպագրի, Ա. 593–4։

212. Բագրեւանդ՝ի միջի կալով երկոցան հնագոյն կայից Հայկազանց մերոց նախնեաց, Աբրաամեան նահանգին՝ ի հիւսիսոյ, և Հարքայ և Աղահունեաց Տարօնեցոյ՝ ի հարաւոյ, չիք երկրագիւղ զի բնակեցաւ և՝ ի նոցան զարմից՝ ի սկզբան տարածման սերնդոցն Հայկայ, վասն որոյ և Աբրահամայ ազխարհին յարակից մնան եկաց մեծ, քէպէս և արտաքոյ երեսփեան հալածի. և անուանն իսկ ցուցանէ զի չէ այլոց ինչ տունմի կամ ազգի սեփականեալ՝ ի սկզբանէ, որպէս անուանակիրք նոցին գաւառքն (այսինքն, Տայք, Մոփք, Աղձնեանք, Բասենիք, և այլն). այլ զանազական անի նշանակ՝ անդ մանաւանդ, որպէս Վանանդ, Հաբանդ, Զարեւանդ, Մարանդ. այլ խնամ բնիկ անուանն Բագր կամ Բագրեւ զանխալ մնայ[1], եթէ արգարեւ հայկական իցէ, որպէս Թաւ, և ոչ պարթեւական՝ ի Բագ (գիք) անուանէ. որգամ և՝ ի հաճ գոյ վասն Բագաւան կամ Բագնեաց աւան գոլոյ և կոչելոյ գլխաւոր ինին իւրոյ: Եւ է մի՝ ի սակաւուց անտի անուանց ազխարհիս մերոյ ծանուցելոց առ առաքս՝ յառաջ քան զդպրութիւն սգրիա. զի յիշատակի յաշխարհագրէն Պտղոմէոսի (Ե. ՃԳ) Բագրաւանդեան կոչմամբ Βαγραβανδηνή, և ըստ այսմցանէ գրչութեան ձեռագրոց Բագրաւցանեան Βαγραυδαυηνή. առ մերան իսկ բազում անգամ ա առաթե Բագրաւանդ գրի: — Մասն գոլով արքունի սեփականութեան՝ ոչ ունի առանձինն տէրմնջին պատմութիւն, կամ գունդ զօրաց յաշխարհախումբ բանակին, և ոչ նախարար և իշխան՝ ի հնումն. այլ յառաջ քան՝ ի քաղաքականին՝ յեկեղեցականին նշանաւոր հանգիսանայ, կամ պարտ ասել՝ ի կրօնականին. քանզի և կանխէ քան զքրիստոնէութիւն՝ հանդէս կրօնական պաշտամանց՝ ի սմա, և առաջնորդ լինի մեծահանդէս պայծառութեան նորին, Ոչ է յայտ ևրբ եղեւ սմա սկիզբն կրօնականս յառաջադրութեան, հաստատութեամբ մեհենից՝ ի գլխաւոր չինին, որ և յայն ատեն կոչեցաւ Բագնեաց աւան կամ Համատոհմ Բագաւանն պարթեւարէն, որ է հայերէն Դիցաւան. յայտ է զի այսպէս ճանապարհ և կոչիւր տեղիս անգամին յ՚Ա. դարէ, և վասն այնորիկ անգ Թագեցին «զՄաժան ... իբր զքրմապետս», զորդի Արտաչիսի Բ, սպանիչք նորա և եղբորք նահանգապ. Արտաւազդն և Տիրան. իսկ յետոյ միւս եղբայր նոցին Տիգրան Գ «պատուել զգերեզման եղբօրն իւրոյ Մա» ժանայ քրմապետի ... բայցի՝ ի վերայ գերեզմանին «չինել, զի՝ ի գոհիցն ամենայն անցաւորք վայելեսցին, «և ընդունելոյն հիւրք երեկոքիւք. Ցորում և զկնի վա» ղարշ (որդի նորա) ածն աշխարհախումբ կարգեաց՝ ի «սկզբան ամի նորոյ՝ ի մուտն Նաւասարդի»: Ցայտ է ամենեցուն մերազնեայց, զի խափանելով զկենք անասնական ածանն, այլ զաշխարհական հանդէսն ոչ կարելով կամ ոչ կամելով Ս. Լուսաւորչին մեր, զաւազինն փոխեաց՝ ի քրիստոսական ածն, և զերկրորդն՝ ի նոյն յաթեալ՝ սրբեաց, զՍ. կարապետին յիշատակ հաստատեալ յատուրս նահատարգաց, և մեծագոյն անեցուցեալ զպաշտօնն. և որպէս մեծ էր պատիւ տեղւոյս յառաջն, նոյն եղեւ և՝ ի կարգի քրիստոնէութեան, սքոտ մեծապատիւ եպիսկոպոսի հաստատեալ անդ, որ ՃԳ դասի՝ ի թիւս երեսանից բարձրնկալ եպիսկոպոսաց կարգելոց՝ ի Լուսաւորչէն. և՝ ի գաւազանագիրս ասի, «՝ի Արբոյն «Գրիգորէ Բագրեւանդ և Արշաուիր միոյ եպիսկո» պոսի վիճակ կարգեալ էին մինչեւ ցվախճան Քերքո» զահօրն երանելոյն Մովսէսի եպիսկոպոսի. ապա զա» տուցեալ, Աբրահամեանց և տան Կամսարականացն» եկաց առանձին եպիսկոպոս: Ի նոյն Կանանագիրս ասի քան զահմանեալն պատիւ և բարձ՝ ի վերագոյն եւս նկրտիլ փառասիրութեամբ՝ առաջնոյ յանուանէ յիշեցելոյ եպիսկոպոսի վիճակին, այն է Տարբ, որ զդէղ ընդ ամին էր և Բասենոյ եպիսկոպոս, և յետ փոխման Ս. Լուսաւորչին պինդացեալ թիւն իմն կամ զհամատարածութեան եպիսկոպոսապետին թեկն ածէր. և ոչ միայն՝ ի բարեն, այլ և՝ ի հաստատ խոստացեալ համարիւն, իբրեւ «սակաւուք ընդ Աբրահամ միաբերել». վասն որոյ խրատէր Մահար հայրապետն Երուսաղէմի «զոյնպիսին «սին, քաղցրաբեմբ՝ի հնազանդութիւն կոչել. և թէ «՝ի նոյնս (՝ի մոլորութենէն) միացէ, խոբչել իբրեւ «յատարէ»[2]. — Մեծապատուութեան եպիսկոպոսի վիճակիս փառ իմն է և սքոտակալութիւն Ս. Խաղայ, որ սարկաւագապետ գոլով Մեծին Գրիգորի, ի գնալն նորա «՝ի Բոյնս՝ էր ձեռնադրեալ... յեպիսկոպոսա» թիւն Բագրեւանդայ և Աշարունեաց, և հաստատ՝ի «նա զամենայն գործ վիրակացութեան աշխարհին, «մինչեւ ցժամանակ իւրոյ գարձին»: Բուզանդ՝ որ համառօտ խորենացւոյ գաւազինն յիշէ զոյս, ծանուցանէ և զյաջորդն Խազոյ յայսմ վիճակի. Ապրիկ անուն, որ և փեսայացեալ էր յառաջագոյն՝ ի գաւառ նորին, ի կէս և գարուս առ Վարդանամբք՝ ի ժողովին Աղուաձոր եպիսկոպոս Բագրեւանդայ անաւանի Եղնիկ կամ Եղնակ, որպէս Թաւ քաղ գրէշն Կողբացի. և անս Թաւ յաղերգեալ Քերքազահայրն մեր Մովսէս: Ցետ որոյ ցգար մի ոչ գտանիմք զանուանս յաջորդացն, այլ յամի 525 զՏիրիկ, և յետ սակաւ ամաց զՄարկոս. ապա՝ի սկիզբն Ը գարու զԱտեփանոս. յետ որոյ ոչ եւս գտանեմ եպիսկոպոս յանուն գաւառիս. այլ այսոքիսի հանգրեալ է Զարարիա՝ի սկիզբն ԺԱ. դարու (1022) վաղարշակերտու եպիսկոպոս կոչեցեալ: Ցետ երիցհարիւր ամաց (1321) Թաւ գտանեմ յանուն Բագաւանայ կոչեցեալ եպիսկոպոս վիճակիս Թադէոս, ի Քղթի ցավհաննու Իր քահանայապետի Հռոմայ, յորում Pacevan գրի անուն վիճակին: Իսկ յետ այսորիկ չեն ինձ ծանօթ յաջորդք սքոտացն՝ մինչեւ ցհին ԺԷ. դարս, յորում առաջնորդք

[1] Բագրեւան անուն (գնայ) լսի յառաջ աչխարհս, ոչ միայն՝ ի Պարսս, (յորոյ ծագմանց Թագէր Հռոմեաւն ՀՀրէն), այլ և ՀՀՎերիկի իսկ. գիտելոց գնան կարդեցողք:

[2] Ի Կանանագիրս մեր յետ կանանայ Ս. Լուսաւորչին և Ս. Աթանաս, կարգի յանուն Ս. Մահակայ Եբուսաղէմի հայրապետի

